Հ. Մ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

1850-1900


ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

А. М. ПОГОСЯН

ИЗ ИСТОРИИ ВАСПУРАКАНА (1850—1900)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1988

ԳՄԴ 63.3(2Հ)5
Պ 797

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
պատմական գիտությունների դոկտոր Վ. Ա. Պարսամյան

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝
պատմական գիտությունների դոկտոր Ա. Ս. Համբարյանը
և պատմական գիտությունների թեկնածու Դ. Ս. Մուրադյանը

Պողոսյան Հ. Մ.
Պ 797 *Վասպուրականի պատմությունից (1850—1900) [Պատ. խմբ.՝ Վ. Ա. Պարսամյան]; ՀՍՍՀ ԳԱ. Պատմ. ին-տ.—Եր.: ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1988. 352 էջ։*

Աշխատության մեջ արխիվային վավերագրերի և հրատարակված նյութերի հիման վրա լուսաբանվում է Վասպուրականի հայության սոցիալ-տնտեսական և քաղաքական վիճակը, ժողովրդի զբաղմունքը, գոյություն ունեցող հակամարտությունները XIX դարի երկրորդ կեսերին։ Առանձնակի ուշադրություն է դարձվում թուրքական բռնակալության դեմ Վասպուրականի հայության ազգային-ազատագրական պայքարին և 1896 թվականի ինքնապաշտպանական կռիվներին։

Հասցեագրված է ընթերցող լայն հասարակությանը։

0505040000
———————25—87
703(02)—88

ԳՄԴ 63.3(2Հ)5

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1988

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Վասպուրականը (Վանի վիլայեթի տարածքը՝ մոտ 40 հազ. քառ. կմ) XIX դարի երկրորդ կեսին համարվում էր Թուրքիայի ամենաընդարձակ և մարդաշատ նահանգներից մեկը: Հայերն այնտեղ միշտ էլ մեծամասնություն են կազմել: Նախահեղափոխական շրջանում Վասպուրականի այդ շրջանի պատմությանը, մշակույթին և այլ հարցերի նվիրված իրենց աշխատություններում անդրադարձել են Ա–Դոն, Ե. Լալայանը, Գ. Շերենցը, Մ. Ավետիսյանը (Թերլեմեզյան), Ղ. Փիրղալեմյանը, Մ. Խրիմյանը, Գ. Սրվանձտյանցը, Խ. Խրիմյանը, Տևկանց եղբայրները (Արիստակես, Երեմիա, Սեդրակ) և ուրիշներ: Վերջին 50—60 տարիների ընթացքում սփյուռքում հրատարակվել են մի շարք հուշագրություններ և աշխատություններ (Հ. Երամյան, Ա.ր. Եկարյան, Մալխաս, Վ. Փափազյան, Ա. Դարբինյան, Ա. Մանուկյան, Լ. Գազանճյան և ուրիշներ):

Սովետահայ պատմաբանները, հատկապես Հայրենական մեծ պատերազմից հետո, իրենց մի շարք աշխատություններում անդրադարձել են Վասպուրականի XIX դարի երկրորդ կեսի պատմությանը և ազատագրական շարժումներին (Աշ. Հովհաննիսյան, Մ. Ներսիսյան, Վ. Պարսամյան, Ա.. Համբարյան, Հ. Ղազարյան, Ռ. Հովհաննիսյան, Ե. Սարգսյան, Վ. Ավետիսյան, Է. Կոստանդյան և ուրիշներ): Վասպուրականի այդ շրջանի պատմությունը և ազատագրական շարժումներն իրենց արտացոլումն են գտել «Հայ ժողովրդի պատմության» բազմահատորյակի վեցերորդ հատորում:

Սակայն մինչև այժմ Վասպուրականի 1850—1900 թթ. պատմության մասին չկա ամփոփ մի աշխատություն: Սույն աշխատությունն այդ ուղղությամբ կատարված առաջին փորձն է: Գիրքը շարադրելիս օգտվել ենք մարքսիզմի դասականների՝ Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Ի. Լենինի աշխատություններից, բազմաթիվ գրքերից, պարբերական մամուլից: Օգտագործել ենք ՀՍՍՀ Կենտրոնական պետական պատմական արխիվի, Մաշտոցյան մատենադարանի, Ջարենցի անվ. գրականության և արվեստի թանգարանի, Հայաստանի պետական պատկերասրահի, ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվային նյութերը: Ուսումնասիրել ենք նաև Վրացական ՍՍՀ Կենտրոնական պետական պատմական և Մոսկվայի ռազմապատմական արխիվների վավերագրերը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ, ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Վասպուրականը պատմական Հայաստանի ամենամեծ նահանգներից է, որը հնում հանդիսացել է Արծրունյաց նախարարության կալվածքը։ 1550-ական թվականներից սկսվեց հինգ դար տևող թուրքական տիրապետությունը, որի ընթացքում նրա երբեմնի հայկական անվանումներին փոխարինեց թուրքականը. այսպես՝ Աղբակը կոչվեց Ալպաք կամ Հեքիարի, Անձևացյաց գավառը կոչվեց Նորդուզ, Արծկեն՝ Ադիլջևազ, Արճեշը՝ Էրճիշ, Բերկրին՝ Պարկիրի, Բուժունիքը՝ Խոշաբ, Կառկառը՝ Կես-կես-գալեսի, Գավաշը՝ Քեավաշ, Հադամակերտ քաղաքը՝ Հեքիարի-Պաշկալե, Մոկքը՝ Մոքուս, Սիփան լեռը՝ Սուփհան դաղ, Սպարկերտ գավառը՝ Իսպեր կամ Սպարկիր, Վարագի վանքը՝ Նոտրիքիլիսե, Սև կամ Թուխ գետը՝ Դարա սու և այլն[1]։

Վան քաղաքը և նրա բերդը թուրքերի կողմից գրավվեց 1533 թ. և «Օսմանյանք արյունռուշտ ահեղ պատերազմով կրկին անգամ առին այս քաղաքը Պարսից ձեռքեն»[2]։

XIX դարի սկզբներին Վասպուրականը գտնվում էր թուրքական պետության կազմում, սակայն այնտեղ տիրապետող էին քրդական բեկերը. «Փաշայութիւն Վանայ,— գրում է Ղ. Ինճիճյանը,— այժմ է ի ձեռս ցեղի ինչ քրդաց՝ որ է ի քաղաքեն Վանայ»[3]։ *Քաղվածքից անշուշտ երևում է, որ Վան-Վասպուրականում այդ ժամանակ ավելի մեծ ազդեցություն ունեին քրդական բեկերը, քան մայրաքաղաքից պաշտոնի նշանակված թուրքական փաշաները։ Օսմանյան պետության արքունի դիվանի վավերագրերի*

---

1 Ջիրունի, *Հուշեկք Հայաստանի, Ա Տարի, Կ. Պոլիս, 1919, էջ 61։*

2 «*Արծուի Վասպուրական*», *1858, № 6, էջ 181։*

3 *Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, աշխատասիրութեամբ հայր Ղուկաս վարդապետի Ինճիճեան, առաջին, Ասիա, հատ. Ա, ի Վենետիկ, 1806, էջ 136—137։*

ուսումնասիրություններից ելնելով Ղ. Ինճիճյանը գտնում է, որ Վանի վիլայեթում XIX դարի սկզբին կային 17 գավառ և շրջան[4]։

1850-ական թվականներին Վանի թուրք կուսակալի իշխանության ներքո գտնվում էին 12 «մեծամեծ գավառներ», որոնք ղեկավարվում էին 12 մյուդիրների կողմից։ Քաղաքը այդ ժամանակ իր Այգեստան արվարձանով ուներ 26 հազար բնակիչ, որից 13780-ը հայեր էին, իսկ մնացածը՝ թուրքեր և գնչուներ։ Քաղաքի բոլոր արհեստավորները հայեր էին, այնտեղ կար «ոսկերիչ, երկաթագործ, խաղախորդ, կոշկակար, դերձակ, հյուսըն, ճարտար կտավագործ և այլն»[5]։

Թուրքական տիրապետության հաստատումից հետո Գագիկ Արծրունու կառուցած ս. Սիոն եկեղեցին վերածվեց մզկիթի։ Թե ե՞րբ և ո՞ր թվականից այն մզկիթ դարձավ, տեղեկություններ չկան։ Ականատեսների վկայությամբ XIX դարի 50-ական թվականներին այդ եկեղեցի-մզկիթը շատ անշուք վիճակում էր և նրա «թե՛ ներսի և թե՛ դրսի տեսքն բոլոր եղծված. միայն արևմտյան փառավոր դուռն և հարեվելյա դարձած գեղանի տեսքն դույզ կուտա յուր նախնի ինչ փառավորություն ունենալն»[6]։ Վան քաղաքում մինչև 1850-ական թվականները թուրքական իշխանությունների կողմից արգելված էր եկեղեցիներից կոչնակներ զարկել և միայն քաղաքի վերնախավի և ժողովրդի անունից սուլթանական արքունիք ուղղված մի շարք խնդրագրերից հետո թույլատրվեց միայն Այգեստան թաղամասում հնչեցնել եկեղեցիների կոչնակները[7]։

Ըստ Ղ. Ինճիճյանի մի այլ վկայության XIX դարի սկզբին Վասպուրականի գավառների թիվը հասնում էր 11-ի (Վան, Խոշապ, Ճուլամերկ, Խլաթ, Արծկե, Արճեշ, Բերկրի, Բաղեշ (Բիթլիս), Խիզան, Ջրբլխան և Մուշ»[8]։ Նա հաստատապես պնդում է, որ այդ ժամանակ Վասպուրականի բնակիչների ճնշող մեծամասնությունը հայեր էին։ Վանի փաշայության մեջ, գրում է նա, «10 դիւղօրէք հազիւ գտնանին բնակեալ ի քրդաց»[9]։

Գ. Դյուլորիեն գտնում էր, որ XIX դարի առաջին կեսին Արևմտյան Հայաստանը վարչական տեսակետից բաժանված էր երեք փաշայությունների, որոնցից առաջինը և ամենամեծը էրզրումն էր, որի մեջ էին մտնում Ջլդրը, Կարսը, Բայազետը, Վանը և Մուշը։ Մյուս երկու փաշայություն-

---

4 Նույն տեղում։

5 «Արծուի Վասպուրական», 1858, № 6, էջ 182։

6 Նույն տեղում, էջ 183։

7 Նույն տեղում, № 7, էջ 213։

8 Ղ. Ինճիճյան, նշվ. աշխ., էջ 137։

9 Նույն տեղում, էջ 138։

ներն էին Դիարբեքիրն ու Խարբերդը[10]։ Վասպուրականը այդ ժամանակ վիլայեթ էր և Վանի Թուրքական փաշան ենթակա էր Էրզրումի փաշային։

Վասպուրականի առաջին և համեմատաբար ճիշտ վիճակագրությունը կազմվեց 1854 թ., երբ Ամենայն հայոց կաթողիկոս Ն. Աշտարակեցին ելնելով Արևելյան պատերազմից նույն թվականի դեկտեմբերի 19-ին մի կոնդակով Վանի հոգևոր առաջնորդ Խաչատուրից պահանջեց կազմել Վասպուրականի վիճակագրությունը։ Ն. Աշտարակեցին այդ կոնդակում նշում էր, որ իրեն հասած տեղեկությունների համաձայն Խոյի և Սալմաստի շրջանում սկսել են կուտակվել պարսկական ուժեր, որոնց նպատակն էր կռիվներ սկսել Թուրքիայի դեմ։ Կաթողիկոսին հետաքրքրում էր, թե «ի սահմանս ծերում վիճակաց 'ի ներքոյ իշխանութեան բազմութիւն քրթաց որքան գտանին ժողովուրդք հայոց և զորպիսի նեղութիւնս կրեն 'ի քրթաց և 'ի բանիլ պատերազմի պարսից կարող են ճայք աջակցութեամբ միմիանց պաշտպանել զանձինս իւրեանց և զգոյս 'ի սպանութենից, ի գերութենից և յափշտակութեանց ընչից իւրեանց (ընդգծումը մերն է— Հ. Պ.)»[11]։ Ինչպես տեսնում ենք, Ն. Աշտարակեցուն Վասպուրականի մասին միայն վիճակագրական տվյալները պետք չեն եղել, այլև այն, որ տեղի հայերը անհրաժեշտության դեպքում կարող են ինքնապաշտպանությամբ ազատվել կոտորածից։

Վիճակագրություն կազմելու գործը հանձնարարվում է Գևորգ վարդապետին, որն «ամենայն փութով ձեռնամուխ եղած գործն սկսեց և ութն ամսօրյա միջոց մեծ աշխատությամբ կարելին եղածին չափ լրացույց»[12]։ Մենք մինչև այժմ արխիվներում այդ վիճակագրության բնագրին չենք հանդիպել, սակայն «Արծուի Վասպուրականի» էջերում այդ մասին կա ընդարձակ հաղորդում, որից երևում է, որ վիճակագրության մասին տեղյակ էին Մ. Խրիմյանը և նրա շրջապատի մարդիկ։ Հոդվածից երևում է, որ հոդվածագրի ձեռքի տակ է եղել Գևորգ վարդապետի կազմած վիճակագրությունը, ըստ որի Վանա լճի շրջակայքում շատ քիչ թվով թուրք և քուրդ բնակչություն կար։ Այնտեղ կարդում ենք. «Տաճիկ և քուրդ ազգերուն լռելով առ այժմը, որոնց ճիշտ գտնելը մեծ աշխատության և ժամանակաց կարոտ է, բայց այս հայտնի բան է, որ անոնց թե որքանություն և թե հատուկ բնակության գյուղերուն հայերուն նայելով շատ նվազ են՝ բուն Վանա բոլորտիք»[13]։

10 Нынешние армяне, сочинение Г. Дюлорие, Тифлис, 1956, с. 28.

11 Մատենադարան, ձեռ. № 4587, թ. 110։

12 «Արծուի Վասպուրական» 1858, № 10, էջ 304։

13 Նույն տեղում։

Ըստ այդ վիճակագրության Վան քաղաքը և նրա շրջակա 76 գյուղերը վիլայեթի մեջ մտնող մի վարչական միավոր էին, որտեղ «յուրաքանչյուր գյուղ ունի մեկ հատուկ հայ իշխան, որուն տեղացիք (ռեիզ) կըսեն և յուրյանց ամեն մեկ գործ անմիջապես Վանա ժողովով կտեսնվի»[14]: Քաղվածքից դժվար չէ կռահել, որ 1850-ական թվականներին Վանում եղել է հայ վերնախավի անդամներից (հոգևոր և աշխարհիկ) բաղկացած մի ժողով, որը ղեկավարել է հայկական գյուղերում եղած ռեսներին (տանուտեր), որոնց անվանել են նաև իշխաններ: Այդ 76 գյուղերից և Վան քաղաքից դուրս գտնվող գավառները ղեկավարել են թուրքական մյուդիրները, որոնք «մեծ գործերու համար միայն կը պարտավորվին մեծ կուսակալին տալանը երթալ»[15]: Վիճակագրության համաձայն վասպուրականը այդ տարիներին ուներ հետևյալ գավառները:

1. Բերկրին (Առբերանի) ուներ 6 հայաբնակ գյուղ և լավ արոտավայրեր:

2. Ականց (Արճիշահովիտ), որի մեջ էին մտնում նախկին Քաջբերունյաց և Աղրովիտ գավառները, որոնք տարածվում էին լճի հյուսիսային կողմում և ունեին 24 գյուղ:

3. Արծկեն (Բզնունյաց) Բզնունյաց գավառի մի մասն էր, ուներ 17 գյուղ:

4. Խարապաշեհիր (Խլաթ), նախկին Բզնունյաց գավառի մի մասն էր և ուներ 12 գյուղ:

5. Կարճկանն (Կորդիք) ուներ ինը գյուղ:

6. Մոկքն ընկնում էր Վանա լճի արևմտյան մասում, ուներ 52 հայաբնակ գյուղ:

7. Հիզան (Սասնո) ուներ 44 հայկական գյուղ:

8. Կաուկաւ, ուներ 20 գյուղ:

9. Գավաշ (Ռշտունիք), տատանվում էր Վանա լճի հարավային մասում, Աղթամար կղզու դիմաց, ուներ 32 գյուղ:

10. Ոստան և Հայոց ձոր, ընկած էր Ռշտունյաց և Տոսպ գավառների միջև, լճի հարավարևելյան մասում, ուներ 32 գյուղ:

11. Շատախ կամ Բասենդաշտ, գտնվում էր Հայոց ձորի և Ոստանի մոտ, Արտոս լեռից հարավ, ուներ 45 գյուղ:

12. Մամռտանքն (այս գավառի վիճակագրությունը ըստ վիճակագրի թերի է) ուներ 4 գյուղ[16]:

---

14 Նույն տեղում:

15 Նույն տեղում:

16 Նույն տեղում, էջ 305—306:

Վիճակագրությունից երևում է, որ Վանի կուսակալությանը մոտիկ Սպարկերտ, Կեցան և Մամռուանք գավառները համաձայն վարչական բաժանման գտնվում էին Տիգրանակերտի վիլայեթում, սակայն ենթակա էին Վասպուրականի հոգևոր իշխանությանը:

Գևորգ վարդապետի կազմած վիճակագրության մասին նշում է նաև Ղևոնդ Փիրղալեմյանը իր «Տողիկ գրոց» ձեռագիր աշխատության մեջ: Վիճակագրության տվյալների համաձայն Վանի հոգևոր թեմը ուներ 17 գավառ, 432 գյուղ, 377 եկեղեցի, 56 վանք կամ մենաստան: Հեղինակը նշում է, որ իր տվյալները քաղել է 1854 թ. «տպագրյալ տախտակին ի Վարագ, զոր արարեալ է արժանահիշատակ Գևորգ վարդապետ տեր Բարսեղյան վանեցի, որ էր ի միաբանութենն Իմ անապատի, հրամանով Ե. Ներսես Աշտարակեցւոյ մեծանուն կաթողիկոսի ամենայն հայոց պաշտպանին հայրենյաց»[17]: Ղ. Փիրղալեմյանը այդ աշխատության մեջ Վանը համարելով «հնաշեն քաղաք» միաժամանակ նշում է, որ XIX դարի 50—60-ական թվականներին գյուղերը դեկավարվում էին իրենց «յատուկ ռեսոք և իշխանոք իւրովք»[18]: Այս մի անգամ ևս հաստատում է, որ պահպանվել էին իշխանական տների բնակորները, որոնց ավագներին ժողովուրդը իշխան էր անվանում:

Մ. Խրիմյանի կարգադրությամբ «Արծուի Վասպուրական»-ում տպագրված այդ վիճակագրական տվյալները Վասպուրականի եկեղեցիների, վանքերի, բնակչության թվի մասին հետագայում՝ 1859 թ. արտատպեց «Մեղուն»: Հ. Սվաճյանի խմբագրած թերթը գովում է Մ. Խրիմյանի նախաձեռնությունը, ասելով. «Երանի թե մյուս առաջնորդներուն ամենքն ալ ասանկ վիճակագրություններ ընեին իրենց թեմին մեջ գըտնըված հայերուն, որոնց համագումարը կը հայտներ Տաճկաստանի մեջ գտնված հայոց ճիշտ թիվը»[19]:

Վիճակագրական այդ ցուցակները Վասպուրականի բնակչության, վանքերի և եկեղեցիների թվի մասին 20 տարի անց (1878) Մ. Մամուրյանը հրապարակեց «Արևելյան մամուլի» մի քանի համարներում և գտավ. «որ այս հին վիճակագրական ցուցակները զգաստության դաս մը կլինեին մեզ՝ արժանի դատեցինք մեր թերթի միջոցով մաս մաս հրապարակել»[20]:

---

17 Մատենադարան, ձեռ. № 4470, թ. 2:

18 Նույն տեղում:

19 «Մեղու», 1859, թիվ 16, 10 հունիսի:

20 «Արևելյան մամուլ», 1878 սեպտեմբեր (էջ 179—180), հոկտեմբեր (էջ 237, 238), 1879 հունիս (էջ 66—68), դեկտեմբեր (էջ 363—368):

Գ. Սրվանձտյանցի արխիվում պահպանվել է «վիճակագրություն ըստ տպագրյալ տախտակաց 1858-ին» վավերագիրը, ըստ որի Վան քաղաքը ուներ 2528 հայ ընտանիք, 18722 բնակիչներով։ Քաղաքի շրջակա 77 գյուղերում ապրում էին 2531 ընտանիք՝ 16722 բնակիչներով[21]։ Այդ տվյալների համաձայն Վան քաղաքում, նրա շրջակա գյուղերում և 16 գավառներում միասին վերցրած ապրում էր 11.206 հայ ընտանիք՝ 79176 բնակիչով[22]։

1862 թ. Կոստանդնուպոլսում հրատարակված մի դասագրքի մեջ նշված է, որ Վասպուրականի նահանգը ունի 15 գավառ[23]։ Գավառների թվարկումից երևում է, որ գրքի հեղինակը հիմք է ընդունել Արծրունիների թագավորության, նրանից հետո էլ եղած վարչական բաժանումը և հին անունների կողքին դրել է նորերը։ Սակայն XIX դարի 60-ական թվականներին Վասպուրականի մեջ չէին մտնում ո՛չ Նախիջևանը, ո՛չ Գողթն գավառը և ոչ էլ Պարսկաստանի տարածքում գտնվող գավառները։

Նույն կերպ է վարվել Ս. Խապայանը իր գրքում[24], որոշ տեղերում ավելացնելով կամ պակասեցնելով գավառների անունները։ Այս երկու գրքերում տվյալներ չկան Վասպուրականի բնակչության թվի, ազգային կազմի և բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ։ Ինչպես տեսնում ենք, Վանի վիլայեթի գավառների թիվը նշված հեղինակների մոտ մի տեղում 17 է, մյուսում՝ 19, ապա՝ 15։ Այս բոլորը նրանից է, որ թուրքական կառավարության վարչական բաժանումների ժամանակ գավառների մի մասը անցնում էր այս կամ այն վիլայեթին կամ սանջակին։

Ինչպես ասվեց, Վանի վիլայեթի մասին պաշտոնական վիճակագրական տվյալներ համարյա թե չկան, իսկ եղածներն էլ վերաբերում են XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին։ Վանի վիլայեթը XIX դարի վերջին ուներ 39.300 քառ. կմ տարածություն և բաղկացած էր Վանի և Հեքիարի սանջակներից, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին ուներ 6-ական կազա։ Վանի սանջակը, ըստ Ա-Դոյի կազմած վիճակագրության, ուներ 6 կազա՝ 895 գյուղերով։ Այդ սանջակի մեջ էին մտնում հետևյալ

---

21 ԴԱԹ-ի արխիվ, Գ. Սրվանձտյանցի ֆոնդ (153), վավ. № 1—20։

22 Նույն տեղում։

23 Դասագիրք ազգային պատմության, աշխատասիրեաց Ստեփան Պերճ Պողոս-Փափազեանց, Կոստանդնուպոլիս, 1862, էջ 7։

24 Համառօտ աշխարհագրութիւն, բնական, քաղաքական, ուսումնական, Խ. Գ. Ս. Խապայանէ, Յերուսաղէմ, 1874, էջ 336—337։

կազաները՝ Վանի, Արճեշի, Ալջավազի, Գավաշի, Շատախի, Մահմուդիի[25]։

Հեքիարի սանջակը նույնպես ուներ 6 կազա՝ 732 գյուղերով՝ Հեքիարի, Համիդյեի, Գյավառի, Ջուլամերկի, Մամուրիեդի, Շամդինանի կազաներով[26]։

Ա.յսպիսով, ըստ Ա.-Դոյի, Վանի վիլայեթը ուներ 2 սանջակ, 12 կազա՝ 1627 գյուղերով[27]։ Մոտավորապես նույն թվական տվյալներն է բերում ռուսական փոխհյուպատոս Վլ. Մաևսկին։ Ըստ նրա, XIX դարի վերջին, վիլայեթը բաղկացած էր 2 սանջակից և 14 կազաներից, որոնցից բացի կային նաև երեք առանձին նահիյեներ (գյուղախումբ)՝ Օրտակը, Թիմարը և Հայոց ձորը։ Ռուսական փոխհյուպատոսի կազմած վիճակագրության համաձայն Վանի սանջակը ուներ 8 կազա՝ Գավաշ, Շատախ, Կարճկան, Մոկս, Մահմուդյե, Բերկրի, Արճեշ, Ադիլջևազ[28]։ Ըստ նրա, XIX դարի վերջին Վանի վիլայեթում ապրում էին 196 հազարից ավելի քրդեր, 45 հազարից ավելի թուրքեր և 93 հազարից ավելի հայեր[29]։ Ոչ մի կասկած, որ բնակչության թվի մասին նրա բերած տվյալները ճիշտ չեն, քանի որ մի զգալի մասը նա վերցրել է Վ. Քինեյի գըրքից, որտեղ բերված թվերը, մեր հաստատ համոզմամբ, նույնպես անհավաստի են։ Մանրամասն համեմատություններ անելուց հետո, այդ մասին նշում է նաև Ա. Ս. Համբարյանը, գտնելով, որ Վ. Քինեյի «ուսումնասիրությունը վստահություն չի ներշնչում, քանի որ հիմնված է թուրքական պաշտոնական տվյալների վրա և զրկում է մեզ երկրի տնտեսական էվոլյուցիան ցույց տալու հնարավորությունից»[30]։

Օտար ճանապարհորդների և միսիոներների բերած թվերի անհավաստի լինելու մասին իր ժամանակին նշել է նաև Խ. Աբովյանը, ասելով, որ նրանք «հարևանցի են ճանաչում մեր երկիրը և նրա բնակիչներին» և «նրանց նկարագրությունները թերի են և չեն համապատասխանում երկրին»[31]։

---

25 Ա.—Պօ, *Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, 1912, էջ 7։*

26 *Նույն տեղում։*

27 *Նույն տեղում, էջ 8։*

28 Ванский вилает, военно-стратегическое описание, составил В. Т. Майевский, Тифлись, 1901, с. 3.

29 *Նույն տեղում։*

30 Ա. Ս. Համբարյան, *Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856—1914), Ե., 1965, էջ 6։*

31 Խ. Աբովյան, *երկ, հ. 8, Ե., 1958, էջ 33։*

Թուրքերը գտնում էին, որ իսլամին հակառակ է վիճակագրություն կազմելը։ Ըստ Մկրտիչ Ավետիսյանի, շատ երկրներում «վիճակագրությունները կը տարածվին մինչև իսկ այծին, հավին ու հավկիթին վրա։ Թուրք կառավարությունը այդ կարգի ձանձրույթները հանձն առնելու ո՛չ ժամանակ և ո՛չ կամք ունեցած է դեռ»[32]։ Թուրքիային քաջատեղյակ Մ. Ավետիսյանը իրավացիորեն նշում է, որ եվրոպական ճանապարհորդների վիճակագրական տվյալները խիստ պակասավոր են, քանի որ «Հյուպատոսները և ուղևորները բնակիչների մանրամասն հաշիվները չեն կրնար հանել, հաճախ հավանականությունների, վեր ի վերո եննթադրությունների վրա և երբեմն ալ առաջին հանդիպած և զիրենք հյուրընկալող տեղացու ըսածների վրա կը հիմնեն իրենց հաշիվը և շատ անգամ ալ քաղաքական նկրտումներե ներշնչված՝ կիջեցունեն կամ կը պակասեցունեն գրչին չափազանց հնազանդ թվանշանները»[33]։

Ռուսական փոխհյուպատոս Վլ. Մաևսկին օգտվել է նաև 1897 թ. ցույց ընծայված թուրքական սալնամեից, որը նույնպես ճիշտ լինել չէր կարող, քանի որ թուրքական պաշտոնյաներին կենտրոնից ցուցում էր տրված ամեն կերպ պակաս ցույց տալ հայերի և մնացած քրիստոնյաների թիվը։ Վլ. Մաևսկին գտնում է, որ Վանի կազայի գյուղերում ապրում էր միայն 5000 բնակիչ։ Այս թիվը ոչ մի կերպ չի կարելի ճիշտ համարել, քանի որ կազայում կար 293 գյուղ և մի՞թե յուրաքանչյուրում 12—15 բնակիչ էր ապրում։ Այլ են 1877 թ. կազմած թուրքական սալնամեի տվյալները, ըստ որի Վանի կազան ուներ 63.698 բնակիչ, որից քրիստոնյաներ՝ 35.748 և մուսուլմաններ 27.950[34]։ Այս թվերը նույնպես ճիշտ չեն, քանի որ թուրքական վիճակագրության մեջ ոչ մի խոսք անգամ չկա Վանի կազայում ապրող չերքեզների, գնչուների, ասորիների, եզդիների և հրեաների թվի մասին։

Այժմ վերլուծենք Վանի մի քանի գավառների մասին Վլ. Մաևսկու տվյալները, որը նա վերցրել է Վ. Քինեյի գրքից։ Վերցնենք Գավաշի գավառը. ռուս դիվանագետը գտնում է, որ այն ուներ 59 գյուղ՝ 13.164 բնակիչներով, որից մուսուլմաններ՝ 8130 և քրիստոնյաներ՝ 5034։ Թուրքական սալնամեում այլ թվեր կան այդ գավառի բնակչության մասին։ Ըստ սալնամեի, Գավաշում կար 59 գյուղ՝ 2890 տուն բնակիչներով, որից մահմեդականներ՝ 5048 և ոչ մահմեդականներ՝ 4785[35]։ Բերված այս

32 «Թուրքիայի հայերը և նրանց դրացիները», գրեց Մ. Ա., Մարսել, 1890, էջ Ա։
33 Նույն տեղում, էջ Ե։
34 Вл. Маевский, նշվ. աշխ., էջ 96—97։
35 Նույն տեղում։

թվերը վկայում են այն, թե ինչ խառնաշփոթություն կար ժամանակի վիճակագրություններուն մեջ հայերի թվի մասին։ Այդ արվում էր միայն ու միայն հայերի թիվը պակաս ցույց տալու միտումով։

Իրողությանը ավելի մոտիկից ծանոթանալու նպատակով, վերցնենք Վ. Քինեյի թվերը, որոնք վերաբերում են Շատախին և Նորդուզին։ Ըստ Վ. Քինեյի, այդ երկու գավառները միասին ունեին 31.230 բնակիչ, որից մահմեդականներ՝ 18850 և ոչ մահմեդականներ՝ 12.380 մարդ։ Հեղինակը նշում է, որ այդ երկու գավառներում կար 169 գյուղ, իսկ ըստ թուրքական սալնամեի՝ 162 գյուղ՝ 13.562 բնակիչներով, որից մահմեդականներ՝ 8301 և ոչ մահմեդականներ՝ 5261[36]։ Ինչպես տեսնում ենք, այդ երկու աղբյուրների թվերը իրարից շատ հեռու են։

Եվրոպական հանապարհորդների և գիտնականների ձեռքին եղել են միայն թուրքական պաշտոնյաների կազմած վիճակագրական տվյալները և նրանք իրենց աշխատությունները շարադրել են այդ պաշտոնյաների կազմած կեղծ թվերի հիման վրա։ Ուսումնասիրություններից ակնհայտ է դառնում, որ հատկապես 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո թուրքական պաշտոնյաները սկսեցին ավելի ու ավելի պակաս ցույց տալ քրիստոնյաների և հատկապես հայերի թիվը։ Նրանց սարսափեցնում էին այն վիճակագրական տվյալները, որ կազմվել էր պատրիարք Ներսես Վարժապետյանի ցուցումով և Մ. Խրիմյանը ներկայացրել էր Բեռլինի կոնգրեսին։ Թուրքական վիճակագրության մեջ ճիշտ չէր նաև քրդական աշիրեթներում եղած մարդկանց թիվը, որը տրվում էր քրդական աշիրեթապետների և շեյխերի կողմից, որոնք կամ պակասեցնում, կամ էլ ավելացնում էին այն։ Վ. Քինեյի բերած տվյալներով Վանում և նրա շրջակա գյուղերում ապրում էին 1000-ից ավելի հրեաներ, սակայն իրականում այդ գյուղերում շատ քիչ թվով հրեաներ կային։ Իրար հակասում են նաև Վլ. Մաևսկու բերած թվերը։ Նա գրում է, որ Վանի բնակիչների 2/3-ը հայեր էին[37], այս նշանակում է, որ քաղաքի 30 հազար բնակիչներից 20 հազարը հայեր էին, սակայն գրքի մի այլ տեղում նշում է, որ Վանում ապրում էր 13500 հայ, որը, ինչ խոսք, 30 հազարի 2/3-ը չէ։ Ըստ Վլ. Մաևսկու, Վանի վիլայեթում ապրում էր 45.000 թուրք, սակայն նա միաժամանակ գրում է, որ այդ թիվը մի քանի անգամ ավելի է ցույց տրված, քանի որ ինքը պաշտոնական գործերով շատ անգամ է այցելել վասպուրականի

36 Նույն տեղում։

37 Նույն տեղում, էջ 101։

գյուղերը և թուրքերի չի հանդիպել, ուստի և հաստատապես պնդում է, որ «վիլայեթում թուրքերը շատ ավելի քիչ են հայերից»[38]։

Թուրքական իշխանությունները 1877 թ. սկզբին Վանի վիլայեթը վարչական նոր բաժանման ենթարկելու ժամանակ միատեսնավոր նրան միացրին նաև Հնթքարի սանջակը, որը հիմնականում բաղկացած էր ասորիներից և քրդերից։ Նրանք շատ լավ գիտեին, որ Վանի նախկին վիլայեթում հայերը մեծամասնություն են կազմում, այդ պատճառով էլ նոր կազմակերպված վիլայեթից անջատեցին հայաշատ Բիթլիսը, Մուշը, որպեսզի հայերի տոկոսը կամա թե ակամա իջնի։ Չնայած այդ քայլերին, Վասպուրականի հայերը միշտ էլ մեծամասնություն էին կազմում։

Վասպուրականի նահանգի բնակչության թվի մասին իրենց աշխատություններում ճիշտ տվյալներ են բերել Բաֆֆին, Ե. Տևկանցը, Արսեն Թոխմախյանը, Մ. Ալեխսյանը, Ալեքսիք Տեր-Հակոբյանը և Մալխասը։ Ըստ Ա. Թոխմախյանի, 1880 թ. Վան քաղաքը ուներ 18965 հայ և 8450 թուրք բնակիչ[39] և Վասպուրականի նահանգը Բուլանըխներ, Մանազկերտ և Խնուս գավառների հետ ուներ 314.101 հայ բնակիչ, իսկ նահանգն առանձին վերցրած՝ 249.361 հայ բնակիչ։ Նահանգում կային նաև ասորիներ՝ 86.368, քրդեր՝ 51.828, թուրքեր՝ 13.964, եզդիներ՝ 7760 և հրեաներ՝ 809։ Վարագի ժառանգավորաց վարժարանի սան և Վանի ծննդ. Ա. Թոխմախյանը գտնում է, որ Վանի նահանգում քրիստոնյաների թիվը հասնում էր 335.729-ի[40]։

Վասպուրականին քաջատեղյակ Բաֆֆին գրում է, որ Վանի նահանգը 1877—78 թթ. պատերազմից առաջ ուներ 24 գավառ՝ 1652 գյուղերով, որտեղ ապրում էր 43.750 հայ ընտանիք՝ 350 հազար շնչով, այդ թվին ավելացնելով Վան քաղաքում ապրող ավելի քան 20 հազար հայերի թիվը, գտնում է, որ Վանի նահանգում այդ ժամանակ ապրում էր 370.640 հայ, նահանգում կար 382 գործող եկեղեցի, 87 վանք ու մենաստան՝ 1500 հոգևորականներով[41]։

Ըստ Ա. Տեր-Հակոբյանի, առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Վասպուրականի նահանգում կար 576 հազար բնակիչ, որից 249.361-ը հայեր, իսկ Վանի կազայում կար 106 հազար բնակիչ,

---

38 Նույն տեղում, էջ 109։

39 Արսեն Թոխմախյան, Հայրենիքի պահանջները և հայ գյուղացին, Թիֆլիս, 1881, էջ 24։

40 Նույն տեղում, էջ 55։

41 Բաֆֆի, Հատ. IV, 1956, էջ 488։

որից 84-ը հայեր էին։ Հեղինակի առաջին թվերը վերաբերվում են պատմական Վասպուրականի տարածքում եղած բնակիչներին, իսկ նահանգում, ըստ նրա, ապրում էր 427 հազար բնակիչ, որից 194 հազարը՝ հայեր, 35 հազարը՝ թուրքեր, 111 հազարը՝ քրդեր և 87 հազարը՝ ասորիներ[42]։

Հավաստի պետք է համարել նաև Մալխասի (Ա. Հովսեփյան) թվերը, ըստ որի Վանի վիլայեթում XIX դարի վերջում ապրում էր 200 հազար հայ, 130 հազար քուրդ, 80 հազար ասորի, 47 հազար թուրք, 2 հազար եզդի և այդքան էլ գնչու ու չերքեզ ու 1500 հրեա[43]։ Վերը բերված երեք հեղինակների թվերից երևում է, որ Վասպուրականում հայ բնակչությունը միշտ էլ մեծամասնություն է կազմել։

1878 թ. Կոստանդնուպոլսի պատրիարքարանի հանձնարարությամբ Ե. Տևկանցը կազմել է Վասպուրականի վիճակագրությունը, որի համաձայն Վասպուրականում այդ ժամանակ կար 785 գյուղ, 57 վանք, 399 եկեղեցի։ Վասպուրականում ապրում էին հայեր՝ 137 հազար, ասորիներ՝ 86.768, հրեաներ՝ 363, թուրքեր՝ 19835, քրդեր՝ 42279։ Վան քաղաքը ուներ 22960 հայ և 8450 թուրք բնակիչ[44]։

1877 թ. թուրքական կառավարությունը հրատարակեց մի պակասավոր տարեցույց (սալնամե), որի համաձայն էրզրումի նահանգը կոչվում էր նահանգ Հյուսիսային Հայաստանի և բաղկացած էր էրզրումի, էրզինջանի, Բայազետի, Ջըլդրի, Կարսի և Մուշի սանջակներից՝ 27 կազաներով։ Սալնամեն թարգմանվել և տպագրվել է «Բազմավեպում», ըստ որի Վանի նահանգը կոչվում էր նահանգ Հարավային Հայաստանի և ուներ 8 կազա, որտեղ կար 83.799 տնտեսություն՝ 233.629 բնակիչներով (յուրաքանչյուր ընտանիքում երեք մարդ)[45]։

Թուրքական սալնամեի տվյալների մեջ ոչ մի թիվ չկա վիլայեթների բնակչության ազգային կազմի մասին։ Շատ ու շատ տեղերում այդ վիճակագրական տվյալները անհավատալի են։ Ըստ այդ վիճակագրության, Բայազետի սանջակը ուներ 4 կազա, որտեղ ապրում էր 7259 ընտանիք՝ 387.457 բնակիչներով[46]։ Եթե Վասպուրականի նահանգի մի ընտանիքը բաղկացած էր 3 շնչից, ապա Բայազետի սանջակում այն կազմում էր

---

42 Ֆիզիքական, ազգագրական և քաղաքական աշխարհագրություն Հայաստանի, կազմեց Ավետիք Տեր-Հակոբյան, Թիֆլիս, 1914, էջ 88—89 և 100։

43 Մալխաս, Ճամբուս վրա, հատ. Ա, Նյու Յորք, 1950, էջ 87—88։

44 ԳԱԹ-ի արխիվ, Թ. Ազատյանի ֆոնդ, վավ. № 57—3, թ. 5։

45 «Բազմավեպ», 1877, էջ 187։

46 Նույն տեղում։

A II 76908

միջինը՝ ավելի քան 53 շունչ, որը անհավանական է։ Վերևում բերված թվական տվյալները ցույց են տալիս, թե ինչքան մտացածին էին թուրքական առաջին սալնամեում եղած տվյալները։

Վանի վիլայեթի տարածքում զգալի տեղ է գրավում Վանա գեղածիծաղ լիճը, որն ուներ 3900 քառ. կմ տարածություն և 1659 մ բարձր էր ծովի մակերևույթից[47]։ Մինչև 1879 թ. լճում լողում էին միայն առագաստանավեր, նույն թվականին ամերիկյան միսիոներներն այնտեղ բերեցին առաջին շոգենավը, որը միայն երկու տարի աշխատեց։ Լճի վրա շոգենավեր աշխատացնելու հարցը դրեց «Արծուի Վասպուրականը», ապագրելով՝ «Թե որչափ կարևոր է Վանա ծովուն վերա շոգենավին մը շինվելն» հոդվածը, որի մեջ ասված է. նախ անհրաժեշտ է ածխահանք գտնել, կազմել շոգենավային ընկերություն, Մոկսի գետակի մոտ ալոցպարան կազմակերպել, ստանալ համապատասխան գերաններ և տախտակ, ապա «Նավը շինող ճարտարապետ մը պետք է ի Վան բերել, որ երթա անտառին եղած տեղն նավուն աստաղը պետք եղած ձևով և մեծությամբն կտրել տա» ապա հրավիրել «ճարտար նավապետ մը»[48]։ Շոգենավային այդ ընկերության նպատակը պետք է լիներ լճի շրջակա գյուղերի, Բաղեշի և Մշո բնակիչներին Վանի հետ կապելը, ապրանքափոխանակությունը և առևտուրը ուժգնացնելը։ 1876 թ. Մ. Խրիմյանի առաջարկով Կ. Պոլսի հայերը ցանկացան այդպիսի մի ընկերություն ստեղծել, սակայն նրանց ցանկությունը չիրականացավ։

Վանա լճից ոչ շատ հեռու ծփում էր աղահամ Արճակի լիճը։ Գրգուր լեռան հարավային մասում էր գտնվում իր միակ կղզիով, քաղցրահամ ջրով Նազիկ (Փրխուս) լիճը։ Դեպի Վանա լիճն էին հոսում Նաբեկ, Անգղադետ (Խոշապ), Շամիրամ, Կառկառ (Գարգար), Սև գետ (Մամերտ), Բերկրու գետ (Առևետ, Բանդի մահի), Օրորան և այլ գետերն ու գետակները։ Անգղադետը սկզբնավորվում էր Վասպուրականի լեռներից, անցնում էր Բաշկալե ավանի և ապա Անգղ գյուղի մոտով և թափվում Վանա լիճը։ Շամիրամ գետակը նույնպես սկիզբ էր առնում Վասպուրականի լեռների ջինջ աղբյուրներից, հասնում էր Արտամետ և ապա Վան։ Բերկրի գետը սկզբնավորվում էր Ծաղկանց լեռների Թանդուրեք լեռնակատարից և սրընթաց հոսքով միախառնվում լճի ջրերին։ Լճի մեջ թափվող գետակներն ու գետերն իրենց շրջապատում ստեղծել էին կանաչ տարածություններ, հարուստ բուսականություն, այգիներ։ Վասպուրականը մի հրաշագեղ երկիր էր՝ իր տեղ-

47 Հովհ. Գ. Պեպեսյան, Հայ առաս—Լոս Անժելես-Ֆրեզնո, 1954, էջ 163, կամ «Բանբեր» (Մարսեյլ), 1968, № 1—2, էջ 28։

48 «Արծուի Վասպուրական», 1864, թիվ 1, էջ 5—6։

տեղ պատած անտառներով, լիճը՝ շրջապատված բարձրաբերձ կատարներով, դաշտերով և խոտառատ արոտավայրերով։

Վան քաղաքը բաժանվում էր երկու մասի։ Պարսպից ներս ընկած էր Քաղաքամեջը, իսկ նրանից դուրս՝ Այգեստանը, որտեղ բացի ոռոգող ջրից և աղբյուրներից կային 20-ից ավելի քահրեղներ՝ իրենց սառնորակ ջրերով։ Այգեստանը ընկած էր հարթ տարածության վրա և 7 վերստ երկարություն ու 5 վերստ լայնություն ուներ։ Ուներ փոքրիկ բլրակներ (դարեր), Կլոր դար, Ավոյի դար, Շանոյի դար, Պողպատի դար և այլն։ Քաղաքի բնակիչները փողոցներն անվանում էին փողան, իսկ Սղգահ գյուղից դեպի ծովափ տանող ճանապարհը կոչվում էր Սղգայու Ջադդեն։ Գլխավոր հրապարակներն անվանում էին փոխնիգլուխ։

Վանա լճի մոտ էին գտնվում Սիփան-Նեխ Մասնիկ (4434)[49], Նեմրութ (2919), Արտոս, Ընձաքար Կապուտակող), Վարագ և Գրգուր լեռները։ Ամենահանրահայտ գագաթներն էին Սիփանը և Նեմրութը, որոնց վրա գտնվող արցունքաձևման լճերի ափերի ավազը երբ մի քիչ փորվում էր, տաք ջուր էր բխում, որի մեջ մարդիկ լողանում էին և ապաքինվում ցավերից։ Նեմրութ լեռան մասին մեծ բանաստեղծը գրել է, որ «հազար ակն ունի, հազարն էլ Մշու դաշտն ի վար կերթա», իսկ նրա ոսկե գագաթը «վառ-վառ կը շողա մեջ Վանա ծովուն»[50]։ Վանի վիլայեթի վարչական կենտրոնը՝ Վանը շրջապատող Վան-Տոսպ գավառը տարածվում էր լճի հարավարևելյան մասում, որի մեջ էր նաև հանրահայտ Վարագա լեռը։ Գավառի բնակչությունը զբաղվում էր խաղողի, պտղատու այգիների, հացահատիկի մշակությամբ և անասնապահությամբ։ Գավառն ուներ 40 գյուղ՝ 20 հազար բնակիչներով, որից 15 հազարը (75 տոկոս) հայեր էին[51]։

Վան-Տոսպ գավառից բացի սանջակի մեջ էր մտնում դեպի արևմուտք գտնվող Թիմար գավառը, որի տարածքի վրա լիճն ուներ մի քանի ծովախորշեր։ Գավառը բաղկացած էր բազմաթիվ հայաբնակ գյուղերից, որոնցից ամենաբազմամարդը Ալյուրն ու Մամերտն էին, որոնց բնակիչները զբաղվում էին այգեգործությամբ, խաղողի մշակությամբ և անասնապահությամբ։ Թիմար գավառն ուներ 118 գյուղ՝ 38.889 հայ և 230 թուրք բնակիչներով։ 1880 թ. գավառում գործում էր 14 վարժարան՝ 2800 աշակերտներով[52]։

---

49 Л. Н. Зограбян, Орография Армянского нагорья, изд. АН АрмССР, Е., 1979, с. 65.

50 Ավ. Իսահակյան, Հայդուկի երգեր, Պէյրութ, 1960, էջ 39։

51 «Հայրենագիտություն», Բ, դրեց Խորեն Խրիմյան, Վան-Վարագ, 1883, էջ 8։

52 Ս. Թոխմախյան, նշվ. աշխ., էջ 26։

Թիմարից դեպի արևելք տարածվում էին Արճակ գավառը, իր 30 վերստ շրջագծով հայտնի և գեղեցիկ լճով, որին տեղացի հայերը կոչում էին Առճակու ծով, որի արևելյան ափերին վեր էին խոյանում Ախրդաղ, Զլջու և Երկաթներ լեռնագագաթները: Լճի մեջ մեծ քանակությամբ ձկներ էին խայտում: Նրա մեջ թափվում էին Խառակոնիսի, Խնոյի և Մալավու գետակները: Գավառն ուներ 22 հայկական գյուղ, որոնցից ամենանշանավորներն էին Արճակը և Խառակոնիսը: Լճի շրջակայքի Խառնակոնիս, Կրպըլջա, Մխկրներ հայ գյուղերի բնակիչները լճից մեծ քանակությամբ բորակ էին հանում, որը օգտագործում էին ձմեռ ժամանակ անասուններին լվանալու, նաև «հագուստ լվանալիս և օճառ եփելիս»[53]:

Արճակը կենդանական հարուստ աշխարհ ուներ, նրա լեռներում կային եղնիկներ և եղջերուներ, արջեր, իսկ լճի վրա ամառը «լողանում էին անհամար սագեր, բադեր, ճայեր, կիվկիվներ, ձկնկուլներ և այլ թռչուններ»[54]: Վասպուրականի ժողովուրդը Արճակ գավառի գեղեցկությունը ի նկատի ունենալով ասել է. «Արճակ Խառակոնիս՝ ակն աշխարհիս»[55]:

Վասպուրականի մյուս գավառը դեպի Պարսկաստան ընկած ջրառատ Աղբակն էր, ուներ խոտավետ դաշտեր, իսկ նրա գետակներում մեծ քանակությամբ ձկներ էին խայտում: Գավառի ձմեռը սաստիկ էր, իսկ ամառը՝ մեղմ: Բնակչության հիմնական զբաղմունքը հողագործությունը և անասնապահությունն էին: Նրա վարչական կենտրոնում՝ Բաշկալե ավանում 1880-ական թվականներին ապրում էին 100 տուն հայեր, 150 տուն հրեաներ և 10 տուն իսլամներ: Գավառում էր գտնվում հանրահայտ Բարդուղիմիոս առաքյալի (Բաշկալե) վանքը, որն ուներ «ընդարձակ սահման, արտորայք, մարգագետինք»[56]: Ա. Թոխմախյանի բերած տվյալների համաձայն 1880 թ. այդ գավառում կար 81 գյուղ, որտեղ ապրում էին 9959 հայեր, 8608 քրդեր, 1447 ասորիներ և 489 հրեաներ: Գավառն ուներ 8 հայկական դպրոց՝ 308 աշակերտներով[57]:

Աղբակի հայ բնակիչները սակավացան հատկապես շեյխ Ջալալեդդինի արշավանքից հետո: Շեյխի նախնիները XIX դարի 50-ական թվականներին Մոկսից գաղթել էին Խիղան և հարստանալով, կարճ ժամանակում շեյխության տիտղոս էին ստացել: Շատ չանցած Ջալալեդդինը տեր է

---

53 Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ, հ. 8, 1978 (Վերինների գիրքը), էջ 10:

54 Նույն տեղում, էջ 11:

55 Նույն տեղում, էջ 12:

56 «Մասիս», 1885, 27 ապրիլի:

57 Ա. Թոխմախյան, նշվ. աշխ., էջ 31:

պառնում հայ հարուստներից մեկի ունեցվածքին, որի որդիներից ավագը գնում է Կոստանդնուպոլիս և բողոքում շեյխի արարքների դեմ, սակայն նրա բողոքները մնում են անհետևանք։ Մյուս որդին ստիպված ծառայության է մտնում շեյխի մոտ և «ինքը կը հերկի կը սերմանե արտերը, կիներ աղախնության և մատաղ գավակունք մշակության կրնանն, օրապահիկ մը հացի համար...»[58]։

Այնուհետև շեյխը սկսեց համոզել քրդական վերնախավին՝ թալանել հայկական գյուղերը, սպանել նրա բնակիչներին, սակայն վանքերից մեկի վանահայր Ալեքսիսը «արիի մեկն ըլլալով կը դիմադրե ասոր, ու բողոք կը բառնա նորա ըրած անիրավության դեմ.»[59], որից հետո շեյխը աքսորվեց Դիարբեքիր։ 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին Ջալալեդդինը վերադարձավ Աղբակ և այնտեղ շատ բարբարոսություններ կատարեց։ Այսպիսով, թուրքական իշխանությունների վարած քաղաքականության և քրդական վերնախավի կատարած բարբարոսությունների պատճառով մի շարք գավառներում, որոնց թվում նաև Խլզան գավառում սկսեց պակասել հայերի և ասորիների թիվը։ Եթե 1860 թ. Խլզանում կար 652 տնտեսություն հայ, ապա պատերազմից հետո մնաց 101 տուն։ Նույն ժամանակամիջոցում 267 տուն ասորիներից մնաց 50 տնտեսություն[60]։

1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Աղբակի, Ալաշկերտի, Մոկաց գավառների 150 գյուղեր դատարկվեցին իրենց բնակիչներից։ 1858—1878 թթ. 20 տարիների ընթացքում Վանա լճի հարավային մասում ընկած 6 գավառների 2440 հայ ընտանիքներից մնացին 585-ը[61]։

Վանի սանջակի մյուս գավառը Բերկրին էր, որը ընկած էր լճի հյուսիսային կողմում մինչև Թանդուրեք լեռնաշղթան և Պարսկաստանի սահմանը։ Գավառի կենտրոնը Բերկրի ավանն էր, իսկ գյուղերից ամենանշանավորներն էին Գործոթը և Խաչանը։ Գավառի արևելյան մասում գտնվող Սպահան լեռան մոտ գտնվող համանուն լճի ջրով ոռոգվում էին մի քանի գյուղերի դաշտերը։ Գավառում էր գտնվում Աբաղայի դաշտը, որի միջով հոսում էին Սավուղ Սու, Աշան-Դուլա և Նաղարավա գետակները, որոնց միախառնումից առաջանում էր Բերկրիի գետը։ Ականատեսների կարծիքով դաշտը չնաշխարհիկ և գեղեցիկ էր հատկապես «երբ իր գետին կը ծածկվի դմրխտափայլ կանաչությամբ մեկ կողմե, ոսկեփայլ հասկերով

58 Պ. Նաթանյան, Արտոսր Հայաստանի, Կոստանդնուպոլիս, 1878, էջ 170։

59 Նույն տեղում, էջ 171։

60 Նույն տեղում, էջ 190—191։

61 «Թուրքիայի հայերը և նրանց դրացիները», էջ 2—3։

մյուս կողմն և հիասքանչ զով օդով ու սառնորակ և անապակ ջուրերով ամեն կողմն»[62]: Մինչև XIX դարի սկզբները այդ դաշտում մեծ թվով հայաբնակ գյուղեր կային, սակայն ավարառություններն ու ասպատակությունները հասցրին նրան, որ դարավերջին գավառում գտնվող 77 գյուղերից միայն 26-ն էին հայկական: Ա. Թոխմախյանի վկայությամբ 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Բերկրի ավանը դարձավ թուրքական զորքերի բանակատեղի և նրա հայ բնակիչների մեծ մասը չդիմանալով զորքի կեղեքումներին, հեռացավ հայրենի բնակավայրից: Գավառում այդ ժամանակ ապրում էին 16.964 հայ, 5000 քուրդ, 400 եզդի: Գավառում կար 2 հայկական դպրոց՝ 75 աշակերտներով[63]:

Վանի սանջակի հաջորդ գավառը լճի հյուսիսարևելյան մասում պատմական Քաջբերունքի տարածքի վրա ընկած Արճեշն էր, համանուն և գեղեցիկ կանաչազարդ դաշտով, Տաղկանց (Ալադաղ) լեռով, բուժիչ հատկություններով հայտնի Ջիլանձորի ջերմուկով: Լճի ջրերը բարձրանալու հետ պատմական Արճեշն ու նրա բերդը անցան ջրի տակ և գավառի կենտրոնը դարձավ Ականց գյուղաքաղաքը: Գավառը վասպուրականի հացի շտեմարանն էր: Նրա մեղմ կլիման հնարավորություն էր ընձեռում մշակել խաղող, ձմերուկ և այլ մրգեր: Գավառի միջով հոսում էին Դալի-չայ, Օրորան և Իրիշատ գետակները: Գավառի Օրորան, Խարկեն, Բլուրմակ, Իրիշատ գյուղերի բնակիչները զբաղվում էին նաև տառեխի որսով: 1880 թ. Արճեշն ուներ 152 գյուղ՝ 26.897 հայ, 4000 քուրդ և 2904 թուրք բնակիչներով: Հայերն ունեին 3 դպրոց՝ 111 աշակերտներով[64]:

Հետաքրքրական է հացահատիկի մշակության արճեշյան տիր կոչվող սիստեմը, ըստ որի հողը վարելուց հետո «կրկին անգամ ակոսներով գծում են բոլոր արտը, որորի. հետ տախտակյա մի խողովակ է հաստատված, որի միջնորդությամբ յորենի հատիկներ կը թափին կարգավ միայն ակոսների մեջ: Բնական է, որ ակոսի երկու կողմի թմբերը միշտ կարող են խոնավություն պահպանել և առատ սնունդ տալ ցանքին»[65]: Ականցը ուներ իր նավահանգիստը: Արհեստներից այնտեղ զարգացած էին կոշկակարությունը, դերձակությունը, դարբնությունը, ոսկերչությունը, գինագործությունը, պայտարարությունը և այլն:

Մյուս գավառը լճի հյուսիսային ափին գտնվող Ադիլջևազն (Արծկե-

62 «Բյուզանդիոն», 1898, թիվ 368, 10/22 հունվար:

63 Ա. Թոխմախյան, նշվ. աշխ., էջ 26—28:

64 Նույն տեղում, էջ 48, 49:

65 Նույն տեղում, էջ 46, տե՛ս նաև՝ Վ. Բդոյան, Երկրագործական մշակույթը Հայաստանում, 1972, էջ 251—265:

Ալջավազ) էր, որի մեջ էր հանրահայտ Սիփան լեռը։ Գավառն ուներ 23 հայկական գյուղ՝ 5438 բնակիչներով[66]։ Կենտրոնը Արծկեն էր։ Ա. Թոխմախյանի տվյալներով Ադիլջևազ գավառը 1880 թ. ուներ 98 գյուղ՝ 15.615 հայ, 3675 թուրք և 780 չերքեզ բնակչությամբ[67]։ Գավառի հայ բնակիչների թիվը 3 անգամ պակասել էր։ Բնակիչները զբաղվում էին հացահատիկի, խաղողի և այգիների մշակությամբ, այնտեղ կար հայկական 4 դպրոց՝ 135 աշակերտներով[68]։

Վան-Տոսպից դեպի հարավ ընկնում էր Հայոց ձորի գավառը, որը մի չնաշխարհիկ ձոր էր, նրա միջով էր հոսում Խոշապ գետակը։ Հայոց ձորը առնորակ աղբյուրների և գետակների սկզբնավորման վայր էր, այստեղից էր սկզբնավորվում Շամիրամի ջրանցքը, ըստ ավանդության այստեղ էր տեղի ունեցել Հայկի կռիվը Բելի հետ, և վերջապես, այդտեղ էր գտնվում երիցկնկա ավանդական աղբյուրը։

Հաջորդ գավառը Խոշապն (Մահմուդչն) էր, որը ընկած էր Վան-Տոսպից դեպի արևելք, նրա երկարությամբ տեղավորված էր Ջուխի լեռնաշղթան, որից հորգոմ գյուղի մոտ սկզբնավորվում էր համանուն (Խոշապ) գետը։ Մինչև 1850-ական թվականները գավառում ապրող 1500 ընտանիքներից 1000-ը հայեր էին, մնացածը՝ քուրդ, ասորի, եզդի[69]։ 1890-ական թվականների կոտորածներից հետո նրանց թիվը խիստ կրճատվեց և դարավերջին գավառի 51 գյուղերից միայն 11-ն էր հայաբնակ՝ 180 տնտեսությամբ[70]։ Այնտեղ մինչև 1890-ական թվականները կար 30 գյուղ 30 հազար բնակչով, որից 20 հազարը հայեր էին, իսկ մնացածները քուրդ, ասորի, եզդի։

Պատմական Ոստան կամ Գավաշ գավառը ընկած էր վանա լճի հարավային մասում, որի ջրերին էին խառնվում Ոստան, Փշավանց և Մոխրաբերդ գետակները և որից տեղացիները մեծ քանակությամբ ստանում էին որսում։ Այդ գավառը և նրա կենտրոն Ոստանը համարվել են պատմական Հայաստանի Ծաղունյայց նախարարության կալվածքը։ Գարավերջին գավառի կենտրոնում՝ Ոստանում ոչ մի հայ բնակիչ չկար։ Գավառում էր գտնվում Ջարդար ս. Նշան վանքը, որտեղ թաղված էր Եղիշեն։ Այնտեղ էր գտնվում Նարեկա վանքը՝ համանուն գյուղով և Սրտեր կղզին

66 Ա—Պօ, նշվ. աշխ., էջ 45։

67 Ա. Թոխմախյան, նշվ. աշխ., էջ 45։

68 Նույն տեղում։

69 «Նկարագրական ուղեւորութիւն ի հայաբնակ գաւառս արեւելեան Տաճկաստանի», մասն Բ, տեղադրեց Մանուել Կ. Միրաքեան, Կ. Պոլիս, 1885, էջ 18։

70 Ա—Պօ, նշվ. աշխ., էջ 49։

ու Աղթամարն իր հռչակավոր տաճարով։ Բնակչության հիմնական զբաղմունքը հացահատիկի մշակությունն էր և անասնապահությունը։ Դավաբոյին հրվանդանը ծածկված էր խիտ անտառներով, բնակիչները փայտածուխ էին արտադրում և արտահանում Վան ու Արճեշ։ Դավառն ուներ 20 հայկական գյուղ։ Ոստանի մոտ կար «Կարմիր հողեր» կամ Կաղճին, որից բրուտները դեղնցիկ կավե ամաններ էին պատրաստում։ Նարեկ և Նորգյուղ գյուղերի բնակիչները զբաղվում էին շալադործությամբ։

Վանա լճի Դավաբոյին հրվանդանից դեպի արևելք գտնվում էր Կարճկան գավառը, որն ուներ 22 հայկական գյուղ, բնակիչները զբաղվում էին անասնապահությամբ, հացահատիկների մշակությամբ և փայտածուխի արտադրությամբ։ Կարճկանից Վան և Բաղեշ քաղաքներն էին արտահանվում բնաիր յուղ, պանիր, մեղր, ընկույզ։ Ճանապարհորդներից մեկը Կարճկանի մասին գրում է. «Լեռնային է և խիտ ու ընդարձակ անտառներով լի, ուր կը գտնվի գայլ, արջ, խոզ, աղվես և այլ տեսակ վայրի կենդանիք և գանազան թռչուն։ Կարճկանն ունի պատվական կլիմա և անուշ ջուր առատ»[71]։

Դավառի Ուրանց գյուղի երիտասարդները ունեին «Երկար հասակ, խարտյաշ մազեր, ծավի աչքեր և դեղնցիկ դեմք, ընդհանրապես, քաջ են, խիզախ և պինավարժ»[72]։ Կարճկանի բնությունով հիացած Ա. Թոխմախյանը գրում է. «Անտառները վայրի կենդանիներով լի են, մանավանդ վայրի խոզեր, որոնց բազմաթիվ երամակները վխտում են ամեն կողմ։ Բնակիչները, ոչ հայեր և ոչ քրդեր, չեն ուտում խոզի միս, դրա համար և բազմապատկվել է դրանց թիվը։ Մի ապխտադործ կարող է հարյուր հազարներ դիզել համարյա այդ պատրաստի դրամագլխից»[73]։

Հայտնի են Կարճկանի Կենտրանց, Փրխուս, Եղնգիս, Ուրանց, Սորբ (Նավահանգստային) և այլ գյուղեր։ Քրդական և թուրքական թալանից հետու մնացած Ուրանցը ուներ հաղարավոր ոչխարներ և հարյուրավոր մեղվափեթակներ։ Գյուղի բնակիչները քաջ էին և անվախ, նրանց ինքնապաշտպանական կռիվները ազատ էին պահել գյուղը քրդական բեկերից։ Սկսած 1830 թ. այդ գյուղի ռես Ծադոն իր ժողովրդի գլուխն անցած թույլ չէր տալիս խիղանի քրդական վերնախավին հաստատվել Ուրանցում։ Քրդերին հաջողվեց սպանել Ծադոյին, իսկ ուրանցիներին՝ նրա սպանողներին։ Ուրանցիների ինքնապաշտպանական ջանքերը շարունակ-

71 Միրախորյան, նշվ. աշխ., էջ 97։

72 Ս. Մ. Մոցիկյան, Արևմտյան աշխարհ, Նյու Յորք, 1947, էջ 683։

73 Ս. Թոխմախյան, նշվ. աշխ., էջ 40—41։

վեցին նաև Ծաղոյի հաջորդներ Թեչոյի և Հարոյի ժամանակ։ Վերջիններս կազմակերպեցին ժողովրդին, որը դուրս վռնդեց Խիզանի քուրդ աղանների ղոլամներին[74]։ Այս դեպքից հետո Կարճկանի հայտնի քուրդ Մուսաբեկը ուրանցիներին դատի տվեց։ Հարոն անվախ հանդես եկավ դատարանում և ապացուցեց, որ Ուրանցը «միայն հարկատու է կառավարության և քուրդ աղաներու ոտնձգությունները պարզապես ապօրինի են, հիմնված բռնության և կամայականության վրա»[75] և դատը շահեց։

Արտոս լեռան շրջապատում տարածված էր Շատախ (հնում Ջերմաձոր) գավառը, որը ըստ Ղ. Ինճիճյանի, XVIII դարի վերջին Ջուլամերկի վիճակներից մեկն էր, որտեղ այն ժամանակ «նատի մելիք յապտես Հայոց և՝ի գործ ածէ զամենայն իշխանութիւն և դատաւորական պաշտօն»[76]։ Գավառի լեռնակատարներն էին Արտոսն ու Առնոսը, Կարաբուլաղը, Ջմեռնը, Բարադոտիկը։ Ստեփան Կանայանը իր մի ձեռագիր աշխատության մեջ նշում է, որ Արևմտյան Հայաստանում կային մի քանի Շատախ գավառներ և գավառակներ. «1. Շահունի Ծովք-Շատախ, 2. Տարոնի Արշք-Շատախ, 3. Սասնո Շատախ, 4. Բաղիշու Շատախ, 5. Վանա Թաղ Շատախ...»[77]։ Այսպիսով հեղինակը հաստատում է, որ Հայաստանը ուներ 5 Շատախ գավառ և գավառակ։

Վասպուրականի Շատախը Վանից 12 ժամ հեռավորություն ուներ և ընկած էր Արևելյան Տիգրիսի մոտ, որին միախառնվում էին նրա Սիմակի, Կազպի և Եղանաձոր վտակները, որտեղ Առնոսն էր «Իրեն բովանդակ վայելչութեամբ և իր կողերին բղխած ուղիներով» որը «կը զարդարէ գավառը»։ Գավառը պատած էր խիտ անտառներով, ժողովուրդը զբաղվում էր այգեգործությամբ, արհեստներով և մեծ քանակությամբ ոչխարներ ու չուռ այծեր էր պահում։ Ժողովրդի «հագուստի ձևը խիստ տարօրինակ է, նեղ շալվարներով, թևլև հյուսած, բայց տակը մանր բևեռներով ամրացած կոշիկներով արագաշարժ են և սրընթաց, բայց շապիկներու և բաճկոններու երկայն թևերը կը կախվին մինչև իրենց ոտները, գլխարկը ոչխարի բուրդե շինված երկայն և տափակ քոլոզ է, որու վրա իբր քսան և ավելի յաղմաններ կը փաթթեն»[78]։

Լեռնային այդ գավառի մասին ականատես Ա.-Դոն գրում է. «Նրա մակերևույթը ներկայացնում է լեռների ու ձորերի մի ժխոր, մի վիթխարի

---

74 Մալխաս, Ճամբուս վրա, հատ. Ա, Նյու Յորք, 1950, էջ 139—140։

75 Նույն տեղում, էջ 140։

76 Ղ. Ինճիճյան, նշվ. աշխ., էջ 163։

77 ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, գիտ. մաս, վավ. № 135, էջ 162։

78 «Դիվան հայոց պատմության», գիրք 13, Թիֆլիս, 1913, էջ 259։

կատար իր լանջերով գալիս ընդհարվում է մի ուրիշ կատարի, մի խորունկ ձոր գալիս միանում է մի այլ ձորի։ Այս լեռներն ու ձորերը հանդերձ իրենց հոգևնցուցիչ ելևէջներով, հաճախ երևան են հանում բնության հմայիչ տեսարաններ, որոնց վրա կանգ է առնում մարդու հայացքը ու բևեռանում»[79]։

Շատախի գավառի վարչական կենտրոնը 250 բնակիչ ունեցող Թաղ գյուղն էր, 99 գյուղերից 52-ը հայաբնակ էին։ Նշանավոր գյուղերից էին Թաղը, Կաճեռը, Արմշատը, Սիվտկին, Կաղպին, Կոռովանքը, Առեղը, Կայնևմիրանը, Շիցանը, Կաղաղիսը և ուրիշներ։ Շատախի գավառի մի շարք գյուղերում դպրոցներ կային։

Անզնդախոր ձորերի, կածանների, լեռների, դժվարանցանելի կիրճերի երկիր Շատախի ժողովուրդը շատ հին ժամանակներից սկսած ձևռք էր բերել հարատահարողներին չենթարկվելու խրոխտ բնավորություն «կամքերնին անհողդողդ է և անվհեր,— գրում է Ե. Տևկանցը,— եթե կառավարության ուժ գա իրենց կարող է գինուր գիրենք պաշտպանել հարստահարչաց դեմ, գի գենք գործադրելո մեջ բավական քաջություն և վարժություն ունին»[80]։

Շատախից դեպի արևելք ընկած էր Նորդուզի (հնում՝ Անձևացյաց) գավառը, որտեղ XIX դարի առաջին կեսին բավական խիտ հայ բնակչություն կար, իսկ դարավերջին 60 գյուղերից միայն 11-ում 150 հայ ընտանիք էր ապրում, որոնց թիվը, 1895—96 թթ. թուրքական կառավարության վարած հայահալած քաղաքականության և կոտորածների պատճառով, ավելի պակասեց։ Ա. Թոխմախյանի տվյալների համաձայն Նորդուզի և Շատախի հայերի թիվը 1880 թ. կազմում էր 26.245, իսկ քրդերինը՝ 5190։ Այնտեղ ապրում էին նաև 447 ասորիներ։ Երկու գավառներում գործել է 7 դպրոց՝ 487 աշակերտով[81]։

Շատախից ոչ շատ հեռու, նրա սահմանին կից, ընկած էր Մոկս գավառն իր 60-ից ավելի գյուղերով և 15 հազար բնակչով, որից 10 հազարը հայեր էին[82]։ Այդ գավառի բնակիչները զբաղվում էին հացահատիկի, ծխախոտի մշակությամբ, անասնապահությամբ, զարգացած էր շալագործությունը և հատկապես գղրարությունը։ Մոկսի գղրարներին կարելի էր հանդիպել Դիարբեքիրում, Վանում, Տարոնում, Կովկասում և այլ վայրերում։ Այդ գղրարները իրենց ազատ ժամերին ժողովրդին պատմում էին

79 Ա—Ի, նշվ. աշխ., էջ 61։

80 Մատենադարան, զանազան հեղ. արխիվ, թղթ. 54, վավ. № 132, թ. 89։

81 Ա. Թոխմախյան, նշվ. աշխ., էջ 37։

82 Հայբենագիտություն, Բ, գրեց Խորեն Խրիմյան, Վարագ, 1883, էջ 21։

«Սասունցի Դավիթ», «Մոկաց Միրզա», «Կարոս խաչ» էպոսները, հեքիաթներ, առակներ և երգում էին հայկական զմայլելի երգեր: Մոկաց գավառը բաղկացած էր 7 մասից (գյալիներ), որը նշանակում է հովիտ: Դրանցից էին Փութկու, Տննիս, Տուրկա-բալասր, Տալանից, Հառնանց. Բառա և Յառջնու՝ իրենց 74 գյուղերով[83]: Մոկսի վարչական կենտրոնի Բաղերը «զետեղված էին հյուսիսեն-հարավ ձգվող գլխավոր «Գևալիխ» հյուսիսային ծայրը: Բաղերը իրարու կից՝ փռված էին լանջերու վրա, որոնց ստորոտեն ահագին խշշոցով կը վազեր Մոկաց գետը»[84]:

Մոկս գյուղաքաղաքը գտնվում էր Առնոս լեռան փեշերին և բաժանված էր չորս թաղի, որոնցից առաջինը կոչվում էր Դաշտի թաղ, որտեղ գտնվում էր շուկան, թուրքական ոստիկանատունը և դատարանը: Երկրորդը կոչվում էր Աբրահամենց, երրորդը՝ Անձուխանց և չորրորդը՝ Քրդի թաղ: Այս բոլորը կազմում էին Մոկս գյուղաքաղաքը: Ականատեսը Մոկսի գեղեցկության մասին գրում է, որ նրա «Օդն ու ջուրը խիստ անուշ են և առողջարար: Ձմեռը կարի ցուրտ և ձյունոտ, գարունն, ամառն ու աշունն՝ երջանկաբեր իրենց այլազան բարիքներով, ժողովուրդն ոչ այնքան հսկա, որքան առողջ և հուժկու»[85]:

Աշխարհագրության մի դասագրքում կարդում ենք. «Մոկաց աշխարհի դերքը և երկինքը նույնպես ներգործել էին այն տեղի հայոց վրա, որք աստղաբաշխությամբ և գիտություններով կը պարապեին»[86]: Նույն միտքը կրկնում է նաև Գ. Աբովյանը. «Մոկաց աշխարհի բնությունը և երկինքը կարող են ներգործել այնտեղի հայերի վրա, որոնք պարապում էին աստղաբաշխությամբ և ուրիշ գիտություններով»[87]: Այս հեղինակների այդ կարծիքները, անկասկած, վերաբերվում էին ավելի հին ժամանակներին:

Մոկս գավառի լեռներում ծվարած էր Ոզմ գյուղը: Այն գտնվում էր Մոկսից սկզբնավորվող Տիգրիսի վտակի ափին, Մոկսի հարավային մասում: Շատախից և Մոկսից եկող Տիգրիսի երկու վտակները գյուղի մոտ միախառնվում էին իրար: Գյուղն ուներ 300 տուն՝ 1800 հայ բնակիչներով: Նրա մոտ գտնվող երկու բերդերից մեկը կոչվում էր Ամիրբեկենց, իսկ մյուսը՝ Գյումրու[88]: Գյուղի այգիներում աճում էին նուռ, թուզ, տանձ,

83 Նաղկաքաղ վասպուրականի հայ ժողովրդական բանահյուսության, առաջին փունջ, հավաքագրեց Հայկ Ածեմյան, Էջմիածին, 1917, էջ 11:

84 Վանեան Փափազյան, Իմ հուշերը, հատ. I, Պոսթըն, 1950, էջ 573:

85 «Մասիս», 1887, № 3887, 29 օգոստոսի:

86 Համառոտ աշխ., Երուսաղեմ, 1874, էջ 320:

87 Համառոտութիւն հայոց պատմութեան, երկասխրութիւն Գևորգա Աբովեանց, Տփղիս, 1884, էջ 15:

88 Ասլան Ստեփանյանի հուշերը, գրի առավ Հայկ Ածեմյան, Թեհրան, 1966, էջ 21:

խնձոր և խաղողի մի քանի տեսակներ։ Ողմի հայերի աշխատասիրության և ինքնապաշտպանական ուժի մասին «Արծուի Վասպուրականի» և «Մեղուի» մեջ Գ. Սրվանձտյանցը գրում է. «Ողմնցի հայն յուր մանկությունից մինչև զերեզմանը մեկ ուսի վրա ուներ դրած բահը մյուսին հրացան. մեկով իր գործը կը գործեր, մյուսով յուր ինամին կը հալածեր, մեկ ձեռքը կը բռներ մանգաղ մյուսը սուր. մեկով յուր հունձը կը հնձեր, մյուսով յուր հնձածը կը պաշտպաններ ու այդպես կապրեր»[89]։

Վանի վիլայեթի Կարճկանի, Մոկսի, Խիզանի և Սպարկերտի միջտեղը գտնվում էր իր 19 հայաբնակ գյուղերով Կառկառի գավառը, որի մի մասը ընկնում էր Բիթլիսի վիլայեթի մեջ։ Այդ գավառի բնակիչները զբաղվում էին հացահատիկի մշակությամբ և անասնապահությամբ։

Այսպիսով, Վանի վիլայեթի գավառներում ըստ Բաֆֆու, Ս. Տեր-Պողոսյանի, Մ. Ալեխսյանի, Ա. Թոխմախյանի, Հ. Երամյանի, Մալխասի բերած տվյալների հայերի թիվը միջին հաշվով միշտ էլ անցնում էր 200 հազարից և նրանք մեծամասնություն էին կազմում։

---

89 «Մեղու», 1865, թ. 262, էջ 20, կամ «Արծուի Վասպուրական», 1862—63, թիվ 3, էջ 79։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

1870-ական թվականների սկզբին օսմանյան Թուրքիան բաժանված էր 16 վիլայեթի։ Մինչև XIX դարի 60—70-ական թվականները Էրզրումի էյալեթը կոչվում էր նաև էրմանիստան, որի մեջ էին մտնում Էրզրումը իր շրջականերով, Վանը, Բիթլիսը, Մուշը։ Էրզրումի էյալեթը վարչական ամենամեծ միավորներից էր և «Էրզրումի վիլայեթը (երբեմն անվանում էին նաև այդպես— Հ. Պ.) կը պարունակե Հայաստանի մեջ օսմանցոց ունեցած մասը»[1]։ Էրզրումում նստում էին «բարձրաստիճան փաշաներ», որոնց անվանում էին էյալեթի էրզրում վալիսի և նրանց իշխանության տակ էին գտնվում էյալեթի Զըլդր, Կարս, Վան, Հեքիարի, Մուշ, Բաղեշ, Պայազիտ, Երզնկա, Տերսիմ և այլ շատ քաղաքներ»[2]։ Ջոն Մադդոնալդ Քինեն XIX դարի առաջին քառորդին անցնելով Արևմտյան Հայաստանով, հատուկ պնդում է, որ «Կարնո փաշային իշխանության տակ են Քյուրդիստանի բոլոր պեյերը դեպի հարավ մինչև Սերտ (Սղերդ) և դեպի արևմուտք մինչև Արաբկիր»[3]։ Այսպիսով, էրզրումի էյալեթը ընդգրկում էր պատմական Հայաստանի մեծ մասը, որից XIX դարի վերջին քառորդին թուրքական կառավարությունը կազմեց էրզրումի, Վանի և Բիթլիսի վիլայեթները։

Սկսած XVIII դարից Արևմտյան Հայաստանի տարածքի մի մասը վրա հրենց իշխանությունն ունեին քրդական բեկերը, որոնց անվանում էին նաև դերեբեյներ, որը նշանակում է ձորի իշխան կամ ինչպես հայկական աղբյուրներն էին նրանց անվանում հովատաերեր։ Սակայն Հ. Շահ-

---

1 Ի. Ա.. Ասլանեան, *Նոր աշխարհագրութիւն ի պետս ազգային վարժարանաց*, Կ. Պոլիս, 1873, էջ 235։

2 «Խառն նամակներ ուղեւորութեանն», գրեաց Կիրակոս Ս. Ղազանճեան, Կ. Պոլիս» 1886, էջ 39։

3 «Մասյաց աղավնի», 1864, 15 նոյեմբերի։

պապյանի կարծիքով «միայն քուրդերը չեն որ ունեցել են տերեպեյներ, նույնը ունեցեր են և հայերը ասկե 1/4 դար առաջ»[4]: Նույն հեղինակը Վանը քաղաքը համարում է հայ դերեբեյների իշխանության վայր, ըստ նրա Վանի բերդը XVIII դարում գտնվում էր Դանկովյանների իրավասության տակ և «բերդին բերդապահը եղեր է Դանկովյան Օհաննես անունով մեկը՝ միևնույն ժամանակ Բնդանոթաձիգ. բերդի Բնդանոթները, զինական պահեստը, անոր իշխանության տակն են, ինչպես և բերդի բանալին»[5]:

Նույնը հաստատում է Սեյլանին (Արշակ Մադոյան) 1895 թ. «Մուրճ»-ի համարներում գրած «Տաճկաստանի ազգաբնակչությունը» իր հոդվածում, որտեղ նշում է այն մասին, որ Վանի Քոլոզ (Հովհաննես Ամիրզատյան) վարժապետի աշխատության մեջ հաստատված է, որ վաստպուրականում եղել է ինքնավար վիճակ և նշվում է «Վանի, Ամիկի Բագավորների անձնատուր լինելը»[6] Թուրքական իշխանություններին: Հեղինակը փաստերով հաստատում է, որ հպատակված հայ իշխանները Թուրքական իշխանություններից ստացան որոշ արտոնություններ. այսպես՝ «Վանում Արծրունիք՝ Ամիկի Բագավորության շառավիղները, Մուշում՝ Մամիկոնյանք վայելեցին մինչև 1700—1800 թվերը» ունեին Թոփչիպաշի (Բնդանոթաձիգների գլուխ) տիտղոսները և իբրև հին իշխանների շառավիղներ ստանում էին երկրի հարկերի որոշ մասը՝ «եթե ավանդ չէին այդ երկրները, եթե չկային ֆերմաններ և գրավոր փաստեր «ավանդ» լինելուն, ինչո՞ւ օսմանցին պիտի վճարեր Արծրունի, Բամիրյան (այժմ՝ Թուրք), Մամիկոնյան, Երամյան և այլ տոհմիկների ժառանգորդներին գրեթե հարկի կեսը, որոնց անցքերը պահած է և դեռ հիշում է նրանց երկրի ժողովուրդը»[7]:

Ուսումնասիրությունից երևում է, որ Վանի վերնախավից Դանկովյանները քաղաքում դանակ կրելու իրավունք ունեին: Այդ ժամանակ քաղաքում կային Թարխաններ (անկախներ), որոնք ազատ էին Թուրքական կառավարությանը հարկ վճարելուց: Նրանց մի մասը Արճեշում այնքան հզորացավ և բազմացավ, որ իր տիրապետությունը տարածեց յոթ հայկական գյուղերի վրա և օսմանյան կառավարությունը ճանաչեց նրանց Թարխանությունը[8]: Վանում հայ մեծատուների մեջ մեծ դիրք ունեին Ղարասեֆերյանները, նրանցից Հակոբը «Թուրքիո կառավարության մի

4 Հակոբ Շահպազյան. Քուրդո-հայ պատմություն, Կ. Պոլիս, 1911, էջ 71:
5 Նույն տեղում:
6 «Մուրճ», 1895, № 7, հուլիս, էջ 951:
7 Նույն տեղում, էջ 952:
8 Հ. Շահպազյան, նշվ. աշխ., էջ 71:

մասնավոր տուրք տալով կարողացել է բացարձակ իշխան լինել Վանա համայն երկրին»[9]։

Լեոյի կարծիքով Վանից 1913 թ. Թիֆլիս գաղթած Գևորգ Արծրունու (1771—1830) տոհմը Վասպուրականում ուներ «Հիսար-յոլդաշի» արտոնությունը, որով ստանում էր Վանի բերդի եկամուտների մի մասը[10]։ Էջմիածնի կաթողիկոսին 1868 թ. հուլիսի 1-ին Երեմիա Արծրունու գրած նամակից երևում է, որ իր ծնողների տոհմերը Վանում, Մոկսում և Շատախում ունեցել են կալվածքներ, որոնք նրա Թիֆլիս գնալուց հետո խլվել էին թուրքական իշխանությունների կողմից և խնդրում է միջնորդել նրանց «դարձուցանել ինձ զնչեալ գետինսն, որք պատկանէին տոհմիդ հօր իմոյ Արծրունի և մոր իմոյ Պոչովեանց 'ի քաղաքի Վան, մերձ լճին նորա և 'ի լերինս Մոկաց և Շատաղի»[11]։

Վանի հայ վերնախավի մեջ XVI—XVII դարերում եղել են այնպիսիները, որոնք ունեցել են դինված ուժեր և կոչվել են դուլեր կամ վանկուլիներ։ Օսմանյան կառավարությունը նրանց հպատակեցված պահելու նպատակով պատանդներ էր վերցնում, որոնք ապրում էին Կոստանդնուպոլսում։ Վանկուլիներից հայտնի էին Պոչովյանները, Ղարասեֆերյանները, Թորամանյանները և Պոյուն Կարապետը[12]։ Վերջինս այնքան հարստություն և իրավունքներ է ունեցել, որ կարող էր մարդկանց կախելու վճիռ կայացնել։ Այդ դերդաստանին Վանում անվանել են նաև Պարոնենց (Պոյուն) տուն։ Վանկուլիները (դուլերը) ունեին հայերից և քրդերից կազմված 2000-անոց հեծելազոր։ Օսմանյան կառավարության հովանավորությամբ և ցուցումով այդ հեծելազորը ուղղված էր Պարսկաստանի դեմ «և կամ Հայաստանն ու Քուրդիստանը Վան-Կուլիների իշխանությամբ մի պատվար էին պարսկական արշավանքին»[13]։ XVII դարի վերջին բերդապահությունը և թնդանոթաձուությունը դանվում էր վանկուլիներից Տեր Բարսեղենց ցեղի ձեռքին[14]։

Սկսած 1820-ական թվականներից Վասպուրականում շատ ազդեցիկ դերը ունեին քրդական բեկերը, մայրաքաղաքից եկած փաշաները և վանկուլիները։ Վանում այդ ժամանակ կային նաև 12 հայ պաշտոնյաներ, որոնց անվանում էին «օնիքիլեր» (տասներկուս)։ Սրանք ունեին հայերի

9 «Արձագանք», 1882, № 41։
10 Լեո, Գ. Արծրունի, հատ. I, Թիֆլիս, 1902, էջ 3։
11 Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 203, վավ. 788։
12 Հ. Շահպազյան, նշվ. աշխ., էջ 72։
13 Նույն տեղում, էջ 73։
14 Նույն տեղում։

և քրդերի համար դատարաններ, բանտ և շղթաներ[15]։ Վանի այդ երևելիներին ժողովուրդը անվանում էր հոճա կամ չորպաճի, իսկ «օնիքիլներ»-ներին՝ ընտրովի չորպաճիներ։ Վասպուրականի գավառների մի մասի վրա մինչև 1840-ական թվականների վերջերը քրդական ցեղապետերից ազդեցիկ դիրք ունեին Բեդիրխան բեկը, Խան Ավդալը և Խոն Մահմուդը։ Այսպիսով «տասներկուսի» իշխանությունը կիսավասալական կախման մեջ գտնվող մի իշխանություն էր, որը իր գոյությունը շարունակեց Վանում մինչև 1871 թ. ազգային սահմանադրության ընդունումը։ Եթե հավատի հանարենք Հ. Շահպազյանի տեղեկությունները, «օնիքիլները» տնօրինում էին Վասպուրականի հայ հատվածի գործերը և «շատ անգամ իրենց չանսայող աշիրեթապետներուն բերել կուտային առաջնորդարան «ֆալախկա» կըդնեին, կը ծեծեին ու շղթայակապ կը դնեին «օնիքիլերի» բանտը մինչև պատժի լրացումը և հետո ազատ կարձակեին»[16]։

Վան քաղաքում զարդերի համար պոչավոր ոսկի դրամներ էին արտադրվում և արտադրող ընտանիքը ստացել էր Պոչովյաններ ազգանունը։ Այդ ժամանակներում Վանի հայ վերնախավը մեծ ազդեցություն է ունեցել Վասպուրականում և նույնիսկ նրան հաջողվել է Կոստանդնուպոլսի արքունիքի միջոցով փոխել Վանի առանձին փաշաների։ Այդպիսի մի դեպքի մասին հիշատակարաններից մեկում կարդում ենք. «1808 փետր. 3, էլչի խանին առաջ Վանցի հայու սառֆի գլուխ մը կտրեցին. ըսին թե Վանու բաշաները կուզե բռնել կուտա եղեր, վե աղքատները արդուհալ (բողոք— Հ. Պ.) տվեր էին աս հայուն համար, որ չենք կրնար ասոր ձեռքը դիմանալ»[17]։ Հիշատակարանից երևում է նաև, որ այդ տարիներին Վան քաղաքի սարաֆներից մեկը ժողովրդին հարստահարելու միջոցով այնքան է հարստացել, որ ցանկացել է անգամ փոխել Վանի փաշային։ Վերջինս իմանալով աղքատ ժողովրդի մոտ սառաֆի վերաբերյալ եղած ատելությունը, կազմակերպել է աղքատներին, որոնք բողոքել են փաշային սարաֆի գործած անիրավությունների մասին, իսկ փաշան օգտագործելով նրանց բողոքները, ազատվել է իր համար ոչ հաճելի սարաֆից[18]։

Մինչև Վասպուրականում հայ ազգային սահմանադրության ընդունումը Աղթամարի կաթողիկոսը և վանքի վանահայրը ընտրվել են միաբանների և մելիքների քվեով։ Սահմանադրության գործադրությունից առաջ պատրիարքարանը կտրված էր գավառահայությունից և նրա վրա ոչ

15 Նույն տեղում, էջ 110։

16 Նույն տեղում։

17 Հ. Ութմյան, Հուշարձան, հատ. Ա, Ալեքսանդրիա, 1929, էջ 22։

18 Նույն տեղում։

մի ազդեցություն չուներ։ Սակայն եթե սահմանադրության ընդունումից առաջ Վանում նստած էին վանկուլինները, ապա շրջակա գավառների մի մասում կային հայկական ֆեոդալական իշխանությունների բեկորները՝ հանձինս հայ իշխանների և մելիքների։ Այդ ժամանակներում էին գործում Սրծափի Մելիք Մանուկը, Ալաշկերտի Մելիք Պետրոսը, Առբերունյանց Մինասը, Անձևացյաց, Ռշտունյաց, Բղնունյաց և Հայոց ձորի մելիքները[19]։ Մինչև 1850-ական թվականները Ռշտունյաց գավառում իշխում էր Մելիք Մալխասը[20]։

Քանի որ Վան քաղաքում և նրա շրջակա գավառներում այդ ժամանակ աննշան քանակությամբ թուրք բնակչություն կար, ապա Վանի հայ վերնախավը շատ հարցերում իր ձեռքն էր վերցրել տեղական իշխանությունը։ 1871 թ. Վասպուրականում վերջ տրվեց «օնիքիլերի» իշխանությանը։ Սկզբնական շրջանում վերջիններս չէին ընդունում սահմանադրությունը, սակայն 1871 թ. ստիպված ճանաչեցին այն։ 1850—1860-ական թվականները մի ժամանակաշրջան էր, երբ թուրքական իշխանություններն ավելի շատ վախենում էին ոչ թե հայերի, այլ քրդերի պոռթկումներից։ Ինչ խոսք «օնիքիլերի» իշխանության վերացումը ձեռնտու էր նաև թուրքական իշխանություններին, քանի որ դրանից հետո Վասպուրականում անվերապահորեն հաստատվեց նրանց իշխանությունը և հայ վերնախավը համարյա թե նրանց գործերին խառնվելու իրավունք չուներ։

Վասպուրականի (Վանի նահանգ) տարածքն անցյալ դարի երկրորդ կեսին ընդգրկում էր Բիթլիսի, Մուշի և Վանա լճի շրջակա տարածությունները։ Լճի շրջապատում կային մեծ ու փոքր դաշտեր, ինչպիսիք են Աբաղան, Բերկրին, Վանը, Սարայը, Բաշկալեն, Գյավարը և այլն։ Վան քաղաքի վրա իշխում էր նրա հյուսիսարևելյան մասում գտնվող մի հսկայական քարաժայռ՝ իր հինավուրց ատամնավոր բերդով։ Ըստ ավանդության, այդ բերդի հիմքից հոսում է Կոպալ (Մահակ) գետը, որի ջրերը միախառնվում են Վանա լճի ջրերին։ Բերդն ուներ միջնաբերդ։ Նրա վրա էին գտնվում քաղաքի թուրքական զորանոցը և մթերանոցները, որտեղ 1858 թ. կային «պատերազմի մթերանոցներ և զորաց օթագայելու (վարժելու—Հ. Պ.) տեղվանք։ Բայց բարձրությունը ահավոր է և վրայի շինդանոցներն էլ շատ մեծամեծ։ Այս հրաշեքները հարավային կողմանն քաղաքը իրենց

---

19 Վ. Փափազյան, Թե ինչու համար առաքելաստանցի գյուղացին ստիպված է գաղթել, «Արձագանք», 1882, № 41։

20 Սոցիկյան, նշվ. աշխ., էջ 691։

քարձր հովանավորության տակն ունենալով կը պաշտպանեն, հյուսիսեն ալ վերնաբերդն՝ ահրնկեց տնօքով»[21]։

Հին ժամանակներում Վան քաղաքը շրջապատված էր պարիսպներով, որոնց մոտ դրսի կողմից կային խրամներ, որոնց մեջ քաղաքի պաշտպանությունը ապահովելու նպատակով պատերազմի ժամանակ ջուր էր լցվում։ Քաղաքի կենտրոնում էր Վանի հայտնի շուկան, ուր վաճառքի էին հանվում արհեստավորների պատրաստած ոսկեղեն և արծաթեղեն իրերը, կտավագործների գործած կտավը, գյուղատնտեսական և անասնապահական մթերքներ։

Առևտրական քարավանների անցման կենտրոնից մեկի՝ Վանի բնակիչները արտահանում էին Շատախի շալ, կտավ, գորգեր, կարպետներ, մորթիներ, կերպաս, հացահատիկ, մսացու անասուններ, պանիր, յուղ, մեղր, պտուղներ, տառեխ ձուկ և այլն։ Քաղաքի ոսկերիչների նուրբ և գեղարվեստական ճաշակով պատրաստած մատանիները, ականջօղերը և այլ ոսկյա իրեր վաճառվում էին ոչ միայն տեղում, այլև Ռուսաստանում, Պարսկաստանում, Կովկասում, եվրոպական երկրներում և անգամ հեռավոր Ամերիկայում։ Քաղաքի բնակիչները վաճառքի էին հանում իրենց հանրահայտ կատուները, որոնց անվանում էին Փարսի կատուներ։ Կատուները «բազմահեր և թավ» մորթի ունեին և ստացել էին Բարախ անունը, որը «նշանակե թավ այսինքն բրդոտ. ի մորթո սորա շինեն բնակիչք մուշտակ»[22]։

Վանի առևտրականներին կարելի էր հանդիպել Ռուսաստանի, Պարսկաստանի, Հնդկաստանի և անգամ Չինաստանի շուկաներում։ Այդ նկատի ունենալով քաղաքի բնակիչները նրանց մասին հորինել էին հետևյալ թևավոր ասացվածքը՝ «Վանի թուխալ չարչին՝ գնաց չուր (մինչև) Չինումաչին»։ Քաղաքը 1850-ական թվականներին ունեցել է «կաշիի ու չթի հոյակապ գործարաններ և մեծ հոյակապ բաղնիս մը...»[23]։ Այժմ դժվար է ասել, թե ինչպիսին են եղել այդ հոյակապ կոչված գործարանները, քանի որ նրանց ում պատկանելուց, աշխատողների թվի, արտադրանքի տեսակների և քանակի, ինչպես նաև նրանում եղած արտադրական կենցաղի մասին պեղնկոփյուններ չեն պահպանվել։ Առանց կասկածելու կարելի է ասել, որ դրանք սովորական արհեստանոցներ են եղել։

Առհասարակ Արևմտյան Հայաստանի, այդ թվում նաև Վանի վիլայեթի ճանապարհները գտնվում էին շատ անմխիթար վիճակում, որի

---

21 «Արծուի Վասպուրական», 1858, № 7, էջ 217։

22 Ղ. Ինճիճյան, նշվ. աշխ., էջ 136։

23 «Արծուի Վասպուրական», 1858, № 7, էջ 214։

պատճառով ապրանքների ներմուծման և արտածման հարցը դժվարին էր դառնում: Տրապիզոնից Էրզրումի վրայով միայն 25 օրում էր հնարավոր ապրանքները Վան հասցնել: 1880-ական թվականներին Էրզրումից բեռնված անասուններով ապրանքները Վան էին հասնում 13—18 օրվա ընթացքում: Փոխադրության ծախսը Տրապիզոնից մի խաթարի դլուխ (մեկ խաթարը հավասար էր 180 օխայի) 380 դուրուշ էր նստում, իսկ առանձին դեպքերում այդ ծախսը հասնում էր 450—500 դուրուշի[24]: Պետք է պատկերացնել, թե առևտուրը ինչպիսի դժվարությունների հաղթահարման գնով էր կատարվում:

Վանի կտավագործները կտավը գործելուց հետո ներկում էին տորոնով, որը «մի բույսի արմատ էր, որ բոլոր այգիներում մեծ առատությամբ էր գտնվում: Այդ գույնը չփոխող կարմիր կտավը շիլա էր կոչվում»[25]: Վան-Վասպուրականի ներկ պատրաստողները «սև գույնը շինում էին ընկույզի և նուռի տերևներից ու կեղևներից, որոնց մեջ ձգում էին փթած երկաթի կտորներ»[26]:

Հանրահայտ էին Վանի Թիմար (Տոսպ) գավառի Ջիրաշեն և Մամերտ գյուղերի բրուտների շինած ամանները: Ջիրաշենի կավից ստացվում էին կարմիր, իսկ Մամերտի կավից՝ սպիտակ ամաններ: Բրուտներն իրենց ամանները պատրաստում էին տարբեր նպատակների համար. այսպես՝ ջուր կրելու ամանները կոչվում էին խամալիկ, ջռա, կուժ, դաստիկ, փարչ, բղբղիկ, պողիկ: Կային նաև բազմաթիվ ամաններ, որոնց մեջ պարեն էին պահում, ճաշ էին եփում, անասուններին էին կթում և այլն: Պարեն պահելու ամանները կոչվում էին՝ կարաս, կադալիկ, տիվճիկ, սեռիկ, պղիկ (կճուճ), տլուզ (յուղի փոքրիկ աման), դարիկ (գլուլ եփելու), պուլիկ (ձեթի աման): Եփելու համար եղած ամաններն էին՝ պուտուկ, ճլոր, խուփ, իսկ կթելու համար՝ կթոց, խրոտիկ (փոքր), տիկ: Ջորթան տլորելու համար՝ չոխթրիկ: Խմորի և լողանալու համար պատրաստած ամանները կոչվում էին՝ սախա, վառելունը՝ թոնիր, ակուկա, սալ: Դործածական ամաններըն էին՝ կռա, թաս, կուճուռիկ, մաթրաթ, քասա, կոտ (հովիվի), խոդ (աղի համար), ճրագ, ճրագկալ և այլն[27]: Կային ամաններ, որոնց անվանել են տուժիկ, կանաչիկ[28]: Միջին հաշվով յուրաքանչյուր բրուտ տարեկան

---

24 «Արևելք», 1884 (Կ. Պոլիս), № 237, 16 հոկտեմբերի: Մի օխան հավասար է 3.1/4 դրվանքայի (տե՛ս Ա. Համբարյան, նշվ. աշխ., էջ 309):

25 ՀՍՍՀ պատկերասրահի արխիվ, ֆոնդ № 30, Փ. Թերլեմեզյանի հուշերը, թ. 41:

26 Նույն տեղում:

27 «Արծիվ Վասպուրականց» (Ֆրեզնո), 1953, թիվ 10, հունվար-փետրվար:

28 Մ. Խերանյան, Երկար, երկար ճանապարհ, 1983, էջ 30:

100—120 փութ բրուտեղեն էր թրծում, յուրաքանչյուր փութը նրան բերում էր 3—400 ղուրուշ, որը տարեկան անում էր 48—50 հազար ղուրուշ, որից նա բաժին էր հանում աշակերտներին, բանվորներին, վճարում էր պետական հարկը, կատարում էր այլ ծախսեր[29]։

Վան քաղաքի և նրա շրջակա գյուղերի բնակիչները զբաղվում էին այգեգործությամբ և գյուղատնտեսությամբ։ Նրանց այգիներում կային խնձոր, սալոր, տանձ, ծիրան, խաղող։ Վերջինից պատրաստում էին լավորակ գինիներ, օղի, չամիչ, ռուփ (բեքմեզ), քացախ։ Քաղաքի բնակիչները շուտ հասնող մրգերն անվանում էին գարնանահաս, ամռանը հասնողներին՝ ամառնուկ, իսկ աշնանը հասնողներին՝ աշնանահաս։ Ավելի ուշ հասնող մրգերը ստացել էին ձմեռնուկ անունը։ Գ. Աղվանյանի հաշվումների համաձայն միայն քաղաքի «Հայոց այգիների մեջ գտա յոթանասունի չափ տեսակ տանձ, 40-ի չափ տեսակ խնձոր բաց Շամիրամ ըսված թաղի»[30]։ Ինչպես Այգեստանի, այնպես էլ շրջակա գյուղերում խաղողի տեսակներից հայտնի էին՝ կարմրագույն, մեծահատ և սրապտուկ Ալղին, ճերմակ, կարմիր, մութ կարմիր Այծեպտուկը, համեղ ու քաղցր Աբեաֆիշմիշը, մանր հնկախաղողը, սև կլոր խիտ բանձրամաշկ Սևաճին, սև, կլոր և միջակ մեծ Տորտորին և այլն[31]

Քաղաքում և նրան շրջապատող մի քանի գյուղերում կար 2400 այգի, որոնցից Այգեստանը, Շուշանցը, Լամզկերտը ունեին 600 Շահպազին և Լեզքը՝ 500, Ականցը և Ալյուրը՝ 400, Էրերինը և Ամկու բերդը՝ 600, Քոզանին, Կուտաբաշը մի քանի այլ գյուղերի հետ՝ 300 այգի։ Քաղաքը և վերը նշված գյուղերը յուրաքանչյուր տարի արտադրում էին 3 միլիոն 600 հազար կիլոգրամ խաղող՝ 27 հազար օսմանյան ոսկու արժեքով[32]։ Բացի դրանից Պարսկաստանից ամեն տարի Վան էր ներմուծվում կես միլիոն կիլո չամիչ, որի 240 հազար կիլոյից պատրաստվում էին տյուզ և մաստիկա խմիչքները։ 1890-ական թվականների սկզբներին Վանի բնակիչները տարեկան ծախսում էին.

Գինու համար		31.500 լիրա
Չամչի և քիշմիշի	—»—	6.750 —»—
Օղիի	—»—	7.000 —»—
Եվրոպական ըմպելիքների		1.000 —»—

29 «Բյուզանդիոն», 1906, թիվ 3062, 28 սեպտ. — 11 հոկտ.։
30 ԳԱԹ-ի արխիվ, Գ. Սրվանձտյանցի ֆոնդ, վավ. № 4—1, էջ 26։
31 Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1926, էջ 67—92։
32 «Հայրենիք» (Կ. Պոլիս), 1884, 30 գեկտեմբերի։

Այլ ծախսեր	—»—	1.750	—»—
Ընդամենը՝ 48.000[33]			

Քաղաքի և գյուղերի այգիներում աճում էին մեծ քանակությամբ ընկուզենի, կաղնի, թթենի, կային նաև մետաքսագործությամբ զբաղվող մարդիկ: Գյուղացիները մշակում էին ճակնդեղ, կարտոֆիլ, աֆիոն (խաշխաշ) և կտավհատ, որից լավորակ ձեթ էին ստանում, իսկ վայրի գազից ստանում էին խեժ: Քաղաքի և գյուղերի բանջարանոցներում կար նաև դդում, կոտեմ, ռեհան, պղպեղ, բողկ, մեխակ (գարանֆիլ), իսկ դաշտերում՝ ուրց, շրեշ, քեղ, ավելուկ և այլն: Սարերում և մարգագետիններում անշափ շատ էին անուշահոտ ծաղկատեսակները՝ անթառամ, մանուշակ, մեխակ, յասիուկ, պուտ, կոնդրուկ, կակաչ, սոսուն, վարդեր (բյասիուր, մասուր, դեղին, բոց, ճերմակ), հասմիկ, սուսամբար, գնեբրուկ, ասղուկ[34]:

Վասպուրականում կային շատ օգտակար հանածոներ: Շատախում, Կարճկանում և Զորավանցում հայտնի էին «Կապարահատք», իսկ նրա հարավարևելյան մասում «Երկաթահատք» լեռները: Շովակի արևելյան մասերում Միրվանեն, Սիրվան, Հազարա, Ճերնավիք վայրերում կային ածխահանքեր, իսկ Շիրվանում՝ ոսկու հանք: Ճանիկ գյուղը հայտնի էր իր աղահանքով: Մոկսում և Արտամետում երկաթահանք կար, իսկ Թանդուրեք լեռան վրա պղնձահանք, կային նաև մարմարի հանքեր[35]: Կենդանանց գյուղի մոտ գտնվող բարհանքից ջրաղացաքարեր էին կտրում և գյուղի բնակիչները «քարհատուիյան արհեստին կը ծառայեն, որ ըստ բավականին վաստակ կը բերե»[36]:

Վանում գտնվում էր թուրքական կառավարչատունը, փոստը և դրատնոցը: Քաղաքի թաղերն էին՝ Միջնաբերդ, Շամպանիե, Հայկավանք, Պեշպողան, Նորշեններ, Գարոյենց, Բոյենց, Ճավշին, Արախ, Հայնկոյներ: Քաղաքը գեղեցիկ էր կանաչազարդությամբ, առուների բազմությամբ, կապուտակ լճով և բնակիչներն իրենց քաղաքի մասին ասում էին՝ «Վան քաղաքը մեր այս աշխարհին, դրախտը մեջն հանդերձյալին»[37]: Թուրքական տիրապետության հաստատումից հետո վերը նշված ասացվածքը թարգմանվեց թուրքերեն և ասվեց. «Դունյատա Վան՝ ախիրեթաե իման...» (այս

33 «Հայրենիք» (Կ. Պոլիս), 1884, 30 դեկտեմբերի:

34 Պիրումի, Հայաստանի ոսկեհանքեր, Կ. Պոլիս (1919), էջ 17:

35 «Հանքեր Հայաստանի, Փոքր Ասիո և Կիլիկիո», գրեց՝ Հակոբ Ա. Խարաճյան, Նյու Յորք, 1919, էջ 26, 44, 64:

36 «Արծուի վասպուրական», 1859, № 3, էջ 90:

37 Ծոցիկյան, Արևմտահայ աշխարհ, Նյու Յորք, 1947, էջ 695:

աշխարհում՝ Վանը, իսկ հանդերձյալում՝ հավատը)[38]։ 1916 թ. Վան այցելած ռուս բանաստեղծ Սերգեյ Գորոդեցկին քաղաքն «ավերակված» դրախտ» անվանելուց հետո նույնպես գրել է. «Այն աշխարհում՝ դրախտ, այս աշխարհում՝ Վանը»[39]։ Վանում չորս տասնյակ տարի ապրած ամերիկյան միսիոներ բժիշկ Ռեյնոլտսը 1913 թ. Լոնդոնի հավաքույթներից մեկում Վանի մասին ասել է. «Դժբախտություն պետք է լիներ զայն չտեսած մեռնել»[40]։

Վանի հանրահայտ Ավոյի դարի վրա կիրակի և տոն օրերին բնակիչները հավաքվում էին գինի խմելու և երգեր լսելու։ Քաղաքի մոտ էր գտնվում Սոլխու մեհյան (Սոլախյանների անտառը), որտեղ կիրակի օրերին ժողովրդական զրոսանքներ էին կազմակերպվում, որի ժամանակ հնչում էին ժողովրդական ստեղծագործողների երգերը։ Քաղաքի բնակիչները սովորություն են ունեցել տարեկան մի օր գնալ Ավզնոց դաշտը, որտեղ ձիարշավ էր կատարվում։ Այնտեղ քաղաքի անվանի ձիավորները ճիրիտ էին խաղում, իրար վրա ճիրիտ էին արձակում և հաղթողը համարվելու էր այն ձիավորը, որը «սկզբեն մինչև վերջ կրցած է խաղալ և ճիրիտ չէ կեցած»[41]։ Կիրակի օրերին հավաքվում էին նաև Ճոչ Քենդրչի ջրի ակի մոտ, որտեղ տղամարդիկ ըմպում էին սուրճ, իսկ երեխաները՝ խաղում էին։ Քաղաքի Արարուց հրապարակը համարվում էր կիրակնօրյա տոնավաճառի վայր և շրջակա գյուղերի բնակիչները վաճառքի էին հանում գյուղատնտեսական և անասնապահական մթերքներ։ Քանի որ այդ առևտուրը համընկնում էր եկեղեցական ժամերգության հետ, եկեղեցականները «շատ անգամ փորձեցին կիրակի օրվա այդ առևտուրը ուրիշ օրվան մը փոխել։ Անկարելի եղավ, այնքան քարոզիչներու խրատ և սպառնալիքը չկրցան հետևանք մը ունենալ»[42]։

Քաղաքամեջը չորս դռներ ուներ Միջին, Նոր, Թավրիզի դուռ և Նավահանգիստ։ Սկսած 1871 թ. քաղաքը արևմտահայերի ազգային ահմադրության համաձայն ուներ իր ազգային իշխանությունը կրոնական և քաղաքական ժողովներով, որի նախագահը նահանգի հոգևոր առաջնորդն էր։ Ժողովների կողքին կային նաև դատաստանական, տնտեսական, վանական և ուսումնական խորհուրդներ։ Քաղաքի յոթ եկեղեցիներից յու-

---

38 Հ. Աճեմյան, նշվ. աշխ., էջ 83։

39 Սերգեյ Գորոդեցկի, Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, 1980, էջ 38—39։

40 «Վերածնունդ Վան Վասպուրականի (1850—1950)», գրեց Լևոն Գազանճյան, Պոսթոն, 1950, էջ 16։

41 «Հայրենիք» (Կ. Պոլիս), 1894, 22 մայիսի։

42 «Արևելք» (Կ. Պոլիս), 1901, 26/8 նոյեմբերի։

բաքանչյուրին կից կային բնակիչների կողմից ընտրվող թաղական խորհուրդները, որոնք պետք է հսկողություն սահմաններին թաղի, եկեղեցու և դպրոցի վրա։ Թաղականները ընտրվում էին չորս տարին մեկ անգամ, նրանցից շատերն իրենց վարք ու բարքով օրինակ չէին ծառայում բնակիչներին։ Այդպիսիների մասին հաճախ կարելի էր լսել. Տասներկու տարի շարունակ մնաց թաղական և ծծեց «բոլոր թաղեցիների արյունը» կամ Թաղի եկեղեցում երկար տարիներ վարեց երեցփոխի պաշտոնը ու «այնպես լսկեց, կողոպտեց եկեղեցու դրամները, որ քիչ էր մնացել նրա սուրբ սպասներն էլ ծախեր»[43]։

Քաղաքի արևելյան մասը, որտեղ հիանալի այգիներ կային, կոչվում էր Այգեստան կամ Լգեստար։ Այդ թաղամասի յուրաքանչյուր տուն հատուկ մուտքով կապված էր հարևան տան հետ, որը հնարավորություն էր տալիս նրա բնակիչներին վտանգի պահին անցնել թաղի ցանկացած մաս՝ աղատվելով թուրքական ոստիկանների հետապնդումից։ Այդ մասին ականատեսը գրում է, որ թաղամասի տները «պարսպապատ էին, փողոցները լայն, հորիզոնը ընդարձակ և կախարդական։ Այգիներն ու պարտեզները իրարու հետ կը հաղորդակցեին դռնակներով, կարելի էր երկար ճամբորդություն մը ընել առանց փողոց ելնելու, այս երևույթը Այգեստանի ինքնապաշտպանության կարևոր ազդակներեն մեկը եղած է և վանեցիին դարձուցած անընկճելի»[44]։ Այգեստանի գլխավոր փողոցը կոչվում էր Խաչ Փողան, որի կենտրոնական մասում էլ գտնվում էր համանուն հրապարակը։ Այգեստանը ուներ առատորակ աղբյուրներ, բացի դրանից նրա միջով դեպի լիճն էին հոսում Հայնկոյաներ և Կուռաբաշ գետակները։ Նրա այգիները ոռոգվում էին Շամիրամ ջրանցքի և Քիշիշ Գյոլի (Երիցալիճ) ջրերով։

Վանից ոչ հեռու գտնվող Սղգահ գյուղի բնակիչները զբաղվում էին երկրագործությամբ և անասնապահությամբ, որի հետ միասին լավ խոհրներ էին գործում, որի հումքը վերցնում էին գյուղի մոտ գտնվող լճից «աշնան եղանակին կը ժողովեն՝,— գրում է ականատեսը,— և ձմեռ մինչ՝ի գարուն գործելով՝ վան քաղաք և ուրիշ տեղեր կը ծախեն»[45]։

Վանի նաղելաշուք լճափից ոչ շատ հեռու գտնվում էր 300 տուն հայ բնակիչ ունեցող նավահանգստային Ավանց գյուղը, որի բնակիչները

---

43 Տ. Փիրումյանց, Պատկերներ Վասպուրականի հայոց կյանքից, գրքույկ առաջին, Թիֆլիս, 1888, էջ 80։

44 Հայ հանրագիտակ, խմբագրեց Մկրտիչ Վարդ. Պոտուրյան Պարտիզակցի, Պուքրեշ, 1938, էջ 139։

45 «Արծուի Վասպուրական», 1859, № 3, էջ 209։

զբաղվում էին այգեգործությամբ, անասնապահությամբ, նավաշինությամբ, նավավարությամբ և բորակահանությամբ։ Գյուղի բնակիչները բորակահանությամբ էին զբաղվում շատ հին ժամանակներից սկսած։ Նրանք հունիս, հուլիս և օգոստոս ամիսներին լճի ջուրը բաց էին թողնում հատուկ պատրաստված փոսերի մեջ և ջրի գոլորշիացումից հետո կըտրում էին փոսերում չորս մատ հաստությամբ առաջացած բորակը, ուղարկում Վան, Բիթլիս, Սղերդ, Պարսկաստան և այլ վայրեր։ Գյուղի բորակահանության մասին Ղ. Փիրղալեմյանը գրում է. «Բորակաշեն վարպետք յարգանօք և երեխտապարտ խոստովանութեամբ յիշատակեն զանուն սրբոյն Ներսեսի Պարթեի թէ սկիզբն գործոյն թէ յետ գործադուլի միշտ յաղօթս իւրյանց երեկոյ և առաւօտ և համարեն զնա հիմնադիր և տէր սոյն օգտակար արհեստին»[46]։ Մ. Կ. Միրախորյանը վկայում է, որ աշխատանքը վերջացնելուց հետո բորակահաններն ասում էին. «աստված ողորմի Ներսեսի հոգվոյն»[47]։ Ճիշտ է արդյոք այդ հարցը Ներսեսի հետ կապելը թե ոչ, այժմ դժվար է ասել, սակայն այս ասում է այն մասին, որ բորակահանությունը այդ գյուղում բազմաթիվ դարերի պատմություն ուներ։

Ավանց գյուղի բնակիչները բորակ ստանալու գաղտնիքը ոչ ոքի չէին ասում։ Ավանցի բորակահանը երբեք ուրիշ գյուղերից իր մոտ աշակերտ չէր վերցնում և դարեր շարունակ «ի՞նչ գաղտնիք ասես, որ հայը չհանեց իր սրտից։ Բայց ավանցի հայը պահեց իր բորակի գաղտնիքը»[48]։

Ավանցի բնակիչները զբաղվում էին նաև նավաշինությամբ և նավարարությամբ, նրանց առագաստանավերը կոչվում էին գյամիներ, իսկ նավավարները՝ գյամշիներ։ Ականատեսի վկայությամբ առագաստանավերը գեղեցիկ էին իրենց «ձյունի պես սպիտակ առագաստներով՝ ծովակի ջինջ կապույտ մակերևույթի վրա»[49]։ Առագաստանավերից յուրաքանչյուրը իր վրա կարող էր վերցնել 40—50 մարդ կամ հացահատիկով լիքը 30 ջվալ, կամ չորս-հինգ սայլի բեռ փայտ։ Այդ նավերը սուրում էին դեպի Դատվան, Սորփ և Արճեշ նավահանգիստները։ Նավավարության մենաշնորհը վասպուրականում պատկանում էր Ավանցի բնակիչներին և գյուղի մոտ լճափին գտնվում էր նավերի ապրկատեղը (նավահանգիստը)։ Առագաստանավերի թիվը հասնում էր մոտ 100-ի և նրա նավաստիներին հա-

---

46 Մատենադարան, ձեռ. № 4470, թ. 4—5։

47 «Նկարագրական ուղևորութիւն ի հայաբնակ գաւառս արեւելյան Տաճկաստանի», մասն Բ, Տեղագրեց Մանուել Կ. Միրախորյան, Կ. Պոլիս, 1885, էջ 205։

48 «Մուրճ», 1890, № 3, մարտ, էջ 545։

49 Նույն տեղում, էջ 534։

ջուղվել էր «Վանա լճի վրա թիավարելու և ալիքների դեմ մաքառելու արհեստը յուրացնել և կատարելագործել»[50]։

Վանա լիճը մոտ 3 անգամ մեծ էր Սևանա լճից։ Աշխարհահռչակ բանաստեղծ Գրիգոր Նարեկացին իր հայրենի լճի ջրերը անվանել է ծիծաղախիտ։ Լճում աճում էր մեծ քանակությամբ տառեխ ձուկ։ Քաղաքի և շրջակա գյուղերի բնակիչները ձուկը երբեք լճից չէին որսում, այլ լիճը թափվող գետերից։ Ձկան որսը կատարվում էր ապրիլ և մայիս ամիսներին, երբ ձկների անթիվ վտառները շարժվում էին դեպի գետերի ու գետակների անուշահամ ջրերը։ Ձկնորսները ծանոթ չէին կարթի և ուռկանի գործածությանը։ Հատկապես շատ ձուկ էին պարունակում իրենց մեջ Մամերա և Արճեշ գետերը։ Ձկան որսը, անկասկած, պակասեցնում էր նրա քանակը, քանի որ ձկների մի զգալի մասը որսվում էր դեռևս ձկնկիթը (կորնկը ըստ վանեցիների) բաց չթողած։ Ձկան որսի ժամանակ կառավարությունը աճուրդի էր դնում գետերի բանդերը (պատվարները), որը պետությանը տարեկան 1000 լիրա էր բերում։ Ըստ մի այլ աղբյուրի, կառավարությունը տառեխի որսից տարեկան ստանում էր 50—60 հազար դահեկան շահ[51]։ Իրրև կանոն բանդերը պետությունից գնում էին հարուստ գաղակարգի ներկայացուցիչները, որոնց գործակատարներին ժողովուրդը տվել էր Բանի Աղաս անունը։ Սրանք շրջակա գյուղերի վարպետների միջոցով շիվերից ցանց էին պատրաստում, որն անվանում էին շղթ։ Սկզբից դեպի գետերն էին բարձրանում կողպատ ձկները, որոնց հաջորդում էր տառեխ ձկների հսկայական բազմությունը, որ ընկնում էր պատրաստած կողովների մեջ։ Ե. Տեկանցը վկայում է, որ 1870-ական թվականների սկզբին ձուկը «այնչափ առատ եղանէ մինչ դի երկու հազարն հինգ դահեկանի վաճառի»[52]։ Հետագայում ձուկը սկսեց բանկանալ. այսպես, եթե 1884 թ. ձկներով լի կողովը արժեր 10—12 դահեկան, 1894 թ. հասավ 50—60 դահեկանի։ Եթե 1884 թ. 100 ձուկը արժեր 20—30 փարա, ապա 1894 թ. հասավ 3 դուրուշի[53]։ Ձուկը ձրի էր տրվում Աղթամար, Կտուց, Լիմ անապատներին և վարագա վանքին։

Վանի բնակիչները տարեկան սպառում էին 200 հազար լիտր ձուկ (մեկ լիտրը=8 օխա կարդալի), Մուշ, Կարին և Բիթլիս էր ուղարկվում 40—60 հազար լիտր, Պարսկաստան՝ 10—20 հազար լիտր, իսկ Կով-

---

50 Ա.—Պօ, նշվ. աշխ., էջ 20։

51 «Բազմավեպ», 1896, էջ 308։

52 Ե. Տեկանց, Հայրենասիրություն հայոց, Կ. Պոլիս, 1872, էջ 386։

53 «Հայրենիք» (Կ. Պոլիս), 1894, 5 հունիսի։

կաս (Ալեքսանդրոպոլ, Երևան) 10—20 հազար լիտր[54]: Հետաքրքրականն այն է, որ ձուկը ջրով չէին եփում, այլ յուղի մեջ տապակում: Ձուկը 10—12 րոպե աղաջրում պահելուց հետո պոչերը կպցնում էին տաք թոնրի պատերին, եփվելուց հետո հանում էին փորոտիքը և ուտում: Երբեմն ձկան խավիարը հանելուց հետո խորովում էին թոնրի մեջ: Ձմռան համար ձուկը աղում և լցնում էին կավե ամաններ: Տառեխը չորացնում էին նաև պարանների վրա կախելով, որը անվանում էին մանար: Ձմռանը այդ ձկները ջրով կամ գինիով փափկեցնում էին և ապա ուտում[55]:

Վան-Տոսպի գավառի գյուղերից էին Արտամետը, Լեղբը, Սղդահը, Շահբազին, Կուռաբաշը, Բերդակը, Ծվստանը և այլն: Սրանցից Շահբազին հայտնի էր խաղողի իր այգիներով և հիանալի գինիով, որը խմելիս Վանի բնակիչները հիացմունքով ասել են. «Ջա՜ն, Շահբազու կարմիր գինի թե վո՜վ խմի շատ կիյնի» կամ թե չէ «գնացինք Շահբազի, շեն մներ էն գեղ, գինին բանցուցին ջրի տեղ...»[56]: Հետաքրքրական է Ալլյուր գյուղի բնակիչների մասին մեզ հասած այն տեղեկությունը, թե նրանք եղել են շատ ուրախ ու քեֆ անող մարդիկ և Վան գնալիս «իրենց կանանց հետ միասին Մելխանե (գինետուն) կերթան խմելու»[57]:

Արտամետ գյուղն ուներ հիանալի այգիներ, որտեղ քաղցրահամ պտուղներ էին աճում: Նրա խնձորի հռչակը դուրս էր եկել վիլայեթի սահմաններից: Գյուղի այգիները ոռոգվում էին Շամիրամի ջրանցքի ջրով: Գյուղը ուներ 500 տուն, որից հայեր էին 150-ը: Ռուս-թուրքական պատերազմից առաջ (1877—1878) կար հայ 400 ընտանիք, թուրք՝ 60—70: Թուրք ընտանիքների թիվը ավելացավ պատերազմից հետո: Ըստ Ե. Տևկանցի, 1878 թ. այդ գյուղում ապրում էր 300 տուն թուրք և 100 տուն հայ ընտանիք, որոնց «մեծագույն մասն նոցա ծանր տոկոսի (պարտքերի— Հ. Պ.) ներքև ճնշված և հարստահարված են»[58]:

Վանա լիճն ուներ չորս կղզի՝ Աղթամար, Լիմ, Կտուց և Առտեր, վերջինս, չնայած անմարդաբնակ էր, սակայն տարածության տեսակետից ամենամեծն էր: Ավանդության համաձայն նրա վրա գտնվող մատուռի մեջ ապրել է Գրիգոր Նարեկացին և այնտեղ հնչել է նրա սքանչելի ձայնը: Առտեր կղզին մինչև 1772 թ. ունեցել է իր մենաստանը, որը նույն թվա-

---

54 «Բյուզանդիոն», 1905, 2692, հուլիս 19—4 օգոստոս:

55 «Մուրճ», 1890, № 4, մարտ, էջ 542:

56 Հ. Աճեմյան, նշվ. աշխ., էջ 46:

57 Արամը, մահվան հիսնամյակի առթիվ, Լիբանան, 1969, էջ 215:

58 Մատենադարան, ձեռագրեր հեղինակների արխիվ, թղթ. 54, վավ. 132, թ. 87:

կանին կողոպտվեց քրդական հրոսակների կողմից և կղզին դարձավ անմարդաբնակ[59]։

Կղզիներից ամենանշանավորը 4 քառ. կմ տարածություն ունեցող Աղթամարն էր, որի վրա էր գտնվում հրաշակերտ կոթողներից մեկը՝ ս. Խաչ հայտնի վանքը։ Կղզին գտնվում էր լճափից 3 կմ տարածության վրա։ Ժայռոտ կղզու վրա աճում էին կարմիր պտուղներով թթենիներ և վայրի նշենիներ, իսկ խմելու ջուրը բերվում էր նավակներով։ Կղզին Աղթամարի կաթողիկոսության նստավայրն էր, նրա դիմաց էր գտնվում «Դրսի տունը»՝ Ախվանքը, իր կաթողիկոսարանով և դպրոցով։ Վանքը շատ մեծ համարում ուներ ոչ միայն Վասպուրականում, այլև նրա սահմաններից շատ ու շատ հեռու։

Աղթամարի կաթողիկոսության հոգևոր իրավասության տակ էին գտնվում Հայոց ձոր, Գավաշ, Կարճկան, Շատախ, Նորդուզ, Մոկս, Խիզան, Կառկառ գավառները։ Վանքի տնտեսության եկամուտները տարեկան հասնում էին հազարավոր ոսկիների։ Վանքը ուներ մի այգի և պարտեզ, 500 չափ վարելահող, 40 եզ, 15 դոմեշ, 20 կով, 500 ոչխար, 20 ձի և ջորի։ Վանքը տարեկան Մոկսի Փուրիկու ս. Գևորգ վանքից ստանում էր 200 ոսկի, Նարեկա վանքից՝ 100 չափ ցորեն, Մոխրաբերդի Կարմրակ, Նորպյուղի ս. Գևորգ և այլ վանքերից՝ 20-ական չափ ցորեն[60]։ Ե. Տևկանցի 1873 թ. կազմած վիճակագրության համաձայն Աղթամարա վանքը ինը գավառների մեջ ուներ 4782 տուն բնակիչ[61]։

Վանի շքեղազարդ ծովակի կղզիներից էր Կտուցն իր անապատով, որի ծովակի ափին կար իր «դրսի տունն» համալիրը։ Անապատը ուներ կղզում և լճափում 200 չափ վարելահող, Ավանց և Ալյուր գյուղերում՝ 3 չափ խաղողի այգի և 50 չափ արոտատեղ։ Կտուցը ուներ նաև Մամերտ գյուղում ձիթհանք, Աննավանքում՝ 4 աշքանի ջրաղաց, Վանում՝ 40, Ադրիանապոլսում՝ 4, Թիֆլիսում՝ 5, Կոստանդնուպոլսում՝ մեկ խանութներ և ստանում էր նրանց վարձը (Կոստանդնուպոլսի խանութի վարձի կեսը և Թիֆլիսի խանութների վարձի մեկ երրորդը)[62]։ Անապատը Ռոտոսթոյում ուներ մի պանդոկ, իսկ Վանում ու Ավանցում՝ մեկական տներ։ Անապատը ուներ 108 գլուխ խոշոր և 300 գլուխ մանր եղջերավոր անասուն, 2 ձի, 8 էշ և մեկ նավակ։ Այս բոլոր հավլվածքների և անասունների տարեկան

---

59 «Արձագանք», 1882, № 20։

60 Ա—Պօ, նշվ. աշխ., էջ 58։

61 Մատենադարան, զանազան հեղինակների արխիվ, թղթ. 54, վավ. 132, թ. 80։

62 Ն. Լալայան, Վասպուրականի նշանավոր վանքեր, պրակ I, Թիֆլիս, 1912, էջ 77։

եկամուտը կազմում էր 300 լիրա կամ 2600 ռուբլի[63]։ Կոուց անապատին ենթակա էին 8 գյուղ (Ալյուր, Խավենց, Դոլաշեն, Աննավանք, Ամենաշատ, Մամերտ, Եկմալ, Ջիրաշեն)[64]։

Երևանի մատենադարանում գտնվող «Յուցակ Հիմ սուրբ անապատիս դպրոցին և թեմական գյուղօրէից» վավերագրից երևում է, որ այդ անապատին XIX դարի երկրորդ կեսին պատկանել է 16 գյուղ (Վանք, Խժլեկ, Բերթ, Էրերին, Քողանի, Կեոլլու, Սոսրաթ, Շահգելդի, Նորավանց, Ատիս, Նորշեն, Քանիկ, Աստվածածին, Տարապեկ, Գումս, Մերկարիպ)։ Անապատի դպրոցն ուներ 18 աշակերտ։ Չնայած վերը նշված գյուղերից ստացած եկամուտներին, 16 գյուղերից 8-ում առհասարակ դպրոցներ չկային, իսկ մնացածներում երեխաներին սովորեցրել են «հասարակ ընթերցմունք և ոմանք արհեստ» կամ «հասարակ ընթերցմունք» կամ «եկեղեցականություն՝ արհեստ և հասարակ ընթերցմունք»[65]։

1884 թ. Կոուց անապատ այցելողներից մեկը նշում է, որ այնտեղ կային 100-ից ավելի «մարդկային որջեր» (խուցեր), իսկ վանականների բոլոր հագուստները բրդից էին. «բուրդե շապիկ մը, բուրդե բաճկոն մը և բուրդե երկայն վերարկու մը կը կազմեն անոնց ագանելիքը»։ Անդրադառնալով կղզու վանականների զբաղմունքին, ականատեսը գրում է. «Օրվան կեսը եկեղեցւո մեջ անցունել՝ աղոթելու մեր մեղաց թողության համար, և ապա փակվիլ խավարչտին և վատառողջ խուցի մը մեջ, կամավ զրկելով ղիրենք աստծո շնորհած օդեն և լույսեն»[66]։

Անապատականների սնունդն էր բանջարեղենը, թանապուրը։ Այդտեղ դինին, մսակերությունը և կանանց ու երիտասարդների մուտքը արգելված էր։ Անապատականները դասալիքներ էին, որոնք թողել էին գյուղի աշխատանքը, ճակատի քրտինքով ապրելու հաճույքը և բռնել անհեթեթ կյանքի ուղին։ Ե. Լալայանի վկայությամբ այդ կղզիների հոգևորականներից շատերը «խարազան, բևեռներով պատած շապիկ են հագել, քարերի վրա շարունակ պառկել...»[67]։ Աշխարհիկ կյանքից կտրված այդ վանականների մասին ծաղրանքի շատ էջեր է գրել Սեդրակ Տևկանցն իր «Շահեն ի Սիպիր» պատմական վեպում, որի գլխավոր հերոսը՝ Շահենը չտանելով այդ դաժան ու անիմաստ կյանքը դիմել է փախուստի, քանզի չի ցանկանում «մազե սև շալ հագնիլ, պահք ծոմ պահել, գիշեր ցորեկը ժամ

63 Ե. Լալայան, Վասպուրականի նշանավոր վանքեր, պրակ I, Թիֆլիս, 1912, էջ 77։
64 Նույն տեղում։
65 Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 214, վավ. 154։
66 «Մասիս», 1884, № 37, 38, 6 հոկտեմբերի, էջ 251։
67 Ե. Լալայան նշվ. աշխ., էջ 77։

գնալ, աղոթք հսկում անել, քանի մը գդալ ծավրե վռոշ կամ չորթնե թան խմել, և դարձյալ սաղմոս, Նարեկ գլխել...»[68]։

Վանականների խեղկատակ կյանքի մասին գրել է նաև ականատես Րաֆֆին, որ նրանք նպատակ ունեին «Ամեն օր, ամեն ժամ, անդադար միևնույն աղոթքների կրկնությամբ բթացնել միտքը, և զգայուն, մտածող էակից դարձնել մի տեսակ անգիտակցական մեքենա—դա կատարյալ հոգեսպանություն է», «այդ հալող, մաշող ծոմապահությունն էր պատճառը, որ այդ թշվառ հասարակության մեջ ես չէի տեսնում ոչ մի առողջ մարդ, բոլորը հիվանդոտ, նիհար, ցամաքած, դունաթափ էակներ էին»[69]։ Րաֆֆին գտնում է, որ իզուր են այդ անապատականների հանդերձյալ աշխարհում իրենց «դրախտը» ապահովելու ձգտումները, քանի որ նրանց կյանքը «կենդանի մահացություն է»[70]։

Ս. Թոխմախյանը իրավացի է, երբ նշում է, որ մինչև 1850-ական թվականները Վանա լճի կղզիների անապատականները նմանվում էին «խումբ խումբ ապուշների», իսկ Վան քաղաքի բնակիչները «երկրային թագավորության մտքերի թշնամիներ էին։ Այդ մոլեռանդ պրոպագանդիստներին մահացու հարված տվեց Մ. Խրիմյան իր աշակերտներով, որոնք ազգայնություն քարոզեցին»[71]։

Ուսումնասիրությունը պարզում է, որ վանքերի և մենաստանների եկամուտների վրա ոչ մի հսկողություն չկար, այդ պատճառով էլ նրանց զգալի մասը մտնում էր առանձին ընչաքաղց հոգևորականների, նրանց բարեկամների և ազգականների գրպանը։

Վասպուրականում բազմաթիվ արհեստների կողքին զարգացած էր շալագործությունը, հատկապես Վանում և ամենից ավելի Շատախի գավառի Թաղ գյուղում։ Գյուղի բնակիչները շալի բուրդը ստանում էին խոտավետ արոտավայրեր ունեցող Նորդուզից։ Բուրդը տեղում լվացվում, ծեծվում, գզվում էր, թել ստանալուց հետո գործվում, ներկվում և վաճառքի էր հանվում ինչպես Վասպուրականում, այնպես էլ Թուրքիայի սահմաններից դուրս։ Շատախի շալին կարելի էր հանդիպել Պարսկաստանում և Ռուսաստանում, իսկ «Ֆիլիկի» մազից գործած շալերն ու կերպասները հայտնի էին ամենուր։ Թաղ գյուղը ուներ 250 տուն հայ բնակիչ և գտնվում էր Սիվտկա գետակի և Տիգրիսի ափին, Քուրիկ լեռան լանջին։

---

68 Ս. Տեր Սարգսենց, *Շահեն ի Սիպիր*, Կ. Պոլիս, 1911, էջ 38։

69 Րաֆֆի, հատ. 5, էջ 130—131։

70 Նույն տեղում, էջ 134։

71 Արսեն Թոխմախյան, *Հայրենիքի պահանջները և հայ գյուղացին*, Թիֆլիս, 1881. էջ 21—22։

Նրա մոտ էին Թլորանց և Շատնոց հայկական գյուղերը։ Թաղի այգիներում և բոստաններում աճում էր տանձ, խնձոր, ծիրան, ընկույզ, ձմերուկ և վարունգ։ Գյուղի բնակիչներից 140-ը շալագործներ էին, 50-ը ուներ խանութներ, 20-ը երկրագործներ էին, իսկ 40-ը զբաղվում էին շրջի՝ մանրավաճառությամբ[72]։ Դարավերջին Թաղում կային տղաների և աղջիկների մեկական դպրոց, այստեղ գրեթե բոլոր տղամարդիկ գրագետ էին։ Թաղի և Շատախի ժողովուրդը ապրելով լեռներում ձեռք էր բերել քաջի բնավորություն. «երկրի բնական դիրքը, սրածայր ատամնավոր անմատչելի լեռները, անդնդախոր ձորերը, անդունդները, ծմակները, խիտ անտառները նպաստել են ժողովրդին իրանց պապերի քաջազնական ոգին պահպանելու։ Լեռնային բնությունը ներշնչել է դոցա մեջ արիություն, քաջություն, անձնապաշտություն, պատվի-նամուսի—ընտանեկան օջախի մաքուր և անկեղծ պահպանության համար»[73]։

Ուսումնասիրությունը պարզում է, որ շալ գործելու արհեստով այդ գյուղի բնակիչները զբաղվել են վաղ ժամանակներից։ Նրանց գործած շալերը ունեին 54 սանտիմետր լայնություն և 12 մետր երկարություն, որից կարում էին տղամարդկանց անդրավարտիքներ, կանանց շրջազգեստներ, հոգևորականների փարաջաներ և այլն։ Գյուղում տարեկան գործվում էր 6—7 հազար թուփ կտոր և քանի որ յուրաքանչյուր թուփը 12 մետր էր, ապա առանց երկմտության կարելի է ասել, որ միայն Թաղ գյուղում յուրաքանչյուր տարի արտադրվում էր 70—80 հազար մետր շալ։ Շալի մի թուփը տեղում վաճառվում էր 70 ղուրուշից մի ոսկի։ Վան քաղաքում՝ 80—115 ղուրուշ, Էջմիածնում՝ 12—15 ռուբլի, Թիֆլիսում՝ 15—18 ռուբլի[74]։ Շատախի շալի թելերը ներկվում էին կարասների մեջ, ապա կանայք արշկանով (իլիկ) մանում էին, խինում, իսկ տղամարդիկ գործում էին։ Ներկը պատրաստում էին բորակի, շիբի, կրի և այլ նյութերի խառնուրդից։ Գործված շալերը ունենում էին կապույտ, բաց կապույտ, բաց դեղին և կանաչ գույներ։ Գործվածքները ներկվում էին նաև բույսերից ստացված ներկերով։ Վասպուրականի բնակիչները ընկուզենու թարմ տերևներից ստանում էին ներկ, որն անվանում էին զեյթունի, իսկ ընկուզենու կեղևից ստացածը՝ դահվեի, ընկուզենու արմատից ստացվում էր մուգ սև ներկ։ Վասպուրականի գործվածքները ունեցել են հետևյալ

---

72 Ե. Լալայան, Վասպուրական, տնայնագործություն, Ա պրակ, Շատախի շալագործություն, Թիֆլիս, 1914, էջ 6։

73 Սրբավայրեր, տեղագրություն, աշխատասիրեց Գևորգ Շերենց, Թիֆլիս, 1902, էջ 148—149։

74 Ե. Լալայան, Վասպուրականի տնայնագործություն..., էջ 7։

գույները՝ բաց կապույտ, մուգ կապույտ, լանջավթ, մանիշակագույն, ղեյթունի, սրճագույն, սև, դեղին գովարշի[75]*։ Շալ գործելու համար ունեցած մաքուկները (մքոք) պատրաստվում էին գոմեշի եղջյուրներից։*

Վասպուրականում հայտնի էին Վան քաղաքի ճիտաչինները (որմնանկարիչ), ոսկերիչները և փորագրողները։ Նրանցից Միքայել Առեղցյանը մտածել էր ստեղծել մանելու և գործելու աշխատանքները թեթևացնող մեքենա։ Այդ նպատակին հասնելու համար նա նույնիսկ «պարտքի տակ ալ ինկավ», սակայն կարողացավ ստեղծել մի մեքենա 20 իլիկներով[76]*։ Հետաքրքրական է այդ վարպետի մանվածքի գինը համեմատած Կոստանդնուպոլսից Վան բերվածի հետ։ Նրա գործվածքը «քաշ գլուխ՝ հինգ դահեկան աժան և դիմացկուն էր»։ Վարպետը շուտով բաց արեց մի փոքրիկ գործարան, որտեղ աշխատում էր 3—4 մեքենա։*

XIX դարի երկրորդ կեսին Վանի ճիտաչիններից հայտնի էր Գևորգ Խուդավերդյանը, որի «յուղաներկ պատկերներ, մանավանդ եկեղեցականները, կրնան մրցել նույնիսկ եվրոպականներուն հետ», հայտնի էին նշանավոր այդ վարպետի «պատրաստած Օսմ. զինանշանի (սրմա) նկարները, ծաղկազարդ ծանուցագիրները (ևաֆթա), առաստաղի, որմի, սընտուկի ծաղկազարդերը»[77]*։ Պարսկական հյուպատոսի խնդրանքով պատրաստեց արքունական մի դրոշ, որի վրա գծվեց «արև առյուծը, որ վեհ շահին ղրկվեցավ», որը նրան պարգևատրեց «Շիր ու խուրշիտ» նշանով», նա 1900 թ. էջմիածին հրավիրվեց «խաչկալի մը նորոգության գործով»*[78]*։*

Վանում զարգացած էր քարակոփության արհեստը. ուսուցիչ Խաչատուր Գրուզյանը քանդակներով, դրվագներով, ծաղկազարդերով, դիմագծությամբ և գրվածներով գեղեցիկ տապանաքարեր էր պատրաստում, նրան է պատկանում Աղթամարի Խաչատուր կաթողիկոսի տապանաքարը՝ նրա պատկերով և 12 առաքյալների արձանիկներով։ Ուսուցչին հետաքրքրել է նաև շինականի աշխատանքի թեթևացման հարցը և նա սկսեց մտածել ջրով կամնասայլը պատեցնելու մասին։

Վան քաղաքում է ապրել հայտնի ճիտաչի Մարտիրոսը, որը շինեց Մշո ս. Կարապետի վանքի զանգակատունը և «որուն վրա յուր բոլոր հանճարն ի գործ դրած է,— վկայում է Ա. Տևկանցը,— և զայն գրեթե ավարտած միջոցին կկյնա բարձրեն ու կմեռնի»[79]*։ Քաղաքում զարգացած էր*

---

75 «Վարագ» (Բեյրութ), 1967, № 56, ԺԴ տարի, հունվար։

76 «Բյուզանդիոն», 1900, № 1100, մայիս 22/4 հունիս։

77 Նույն տեղում։

78 Նույն տեղում։

79 Մատենադարան, զանազան հեղ. արխիվ, թղթ. 54, վավ. 135։

նաև կահագործությունը (մարանկոզ) «մասնավորապես ընկոյզի փայտե-րե և ցիցերե (քյություկ) քաշված տախտակներով շինված և այլ և այլ առարկաներ, որ կրնան մրցել բուն իսկ եվրոպականներուն հետ՝ իրենց փայլաններկի (ճիլա) փողփողուններով ու զարդագիծերով»[80]:

Վասպուրականում Սդիլչևաղի, Արճեշի, Հայոց ձորի, Թիմարի, Կարճկանի, Մոկսի և Վան քաղաքի շրջակա գյուղերի բնակիչները զբաղվում էին հայահատիկի (ցորեն, գարի, կորեկ, եգիպտացորեն, բրինձ) մշակությամբ: Վանի և Հեքիարի սանջակներում տարեկան արտադրվում էր 200 հազար տոննա հացահատիկ[81]:

Վիլայեթում զարգացած էր նաև ծխախոտագործությունը (հատկապես Հեքիարի սանջակի Շամդինանում), որի ամբողջ արտադրանքը կենտրոնացած էր շեյխ Մահմեդ Սադըխի ձեռքում, որը այն արտահանում էր Պարսկաստան[82]: Բնակիչների հիմնական զբաղմունքներից մեկը անասնապահությունն էր: XIX դարի վերջին միայն Վանի սանջակում կար 24 հազար կով և եզ, 20 հազար գոմեշ, 19 հազար ձի, 10 հազար էշ, 70 հազար ոչխար և 12 հազար այծ[83]: Այս թվերը, անկասկած, պակասավոր են, քանի որ նրա մեջ լրիվ չի արտահայտված հայկական բոլոր գյուղերի և հատկապես քրդական ցեղերի մոտ գտնվող մեծ քանակությամբ անասունների թիվը:

Վասպուրականի բնակիչների մոտ զարգացած էր ժողովրդական բժշկությունը, Գ. Սրվանձտյանցը վկայում է, որ կեռդ բույսից «կաթը կը հանեն, թանձրացնեն, չախու կը շինեն, մարմնո, որ տեղ որ քամին բռնած լինի, կը փակցնեն վրան. այնքան կը պրկի մնա, մինչև քամին ծծե հանե, ապա կը փրթի»[84]: Ժողովրդական բժշկության մասին նշում է նաև Ղ. Ինճիճյանը, գրելով, որ Վարագա սարին աճող Քինեփյուկ (գինեբիուկ) ծաղկից «բերեն սպիտակ ինչ փոշի պատեալ շուրջանակի, զոր ժողովել բնակչացն ի գործ ածեն ի դեղ ցաւոց և գիճութենե աչաց»[85]: Ե. Տևկանցի վկայությամբ Վանի նահանգի բնակիչների մոտ շատ զարգացած է եղել բույսերով և ծաղիկներով հիվանդներին բուժելու գործը և նրանք «ախտս բազմաց պարզ դեղորայուք, արմատովք, բուսովք և ծաղկոց բժշկեն»[86]:

---

80 «Բյուզանդիոն», 1900, № 1100, մայիս 22/4 հունիս:

81 Вл. Маевский, նշվ. աշխ., էջ 116:

82 Նույն տեղում, էջ 127:

83 Նույն տեղում, էջ 128:

84 Գ. Սրվանձտյանց, հ. I, էջ 43—44:

85 Ղ. Ինճիճյան, նշվ. աշխ., էջ 147:

86 Ե. Տևկանց, Հայբենասիրություն հայոց, էջ 257:

Ե. Լալայանը ուսումնասիրել է նաև Վանի և նրա նահանգի մեջ մըտնող գյուղերի բնակիչների տների կառուցվածքը: Գյուղական տունը բաղկացած էր սրահից, որը մի մեծ նահապետական սենյակ էր, տանիքը նստած էր չորս այուներին դրված գերանների վրա: Տան կենտրոնում թոնիրն էր, կողքին՝ գոմը, մարագը, մառանը և ցանոցը:

Քաղաքի տներն ավելի լավ վիճակում էին, նրանց մի մասը երկհարկանի էր, շարված հում աղյուսից:

Առհասարակ Արևմտյան Հայաստանի, ինչպես նաև Վասպուրականի գյուղատնտեսական գործիքները XIX դար էին հասել իրենց նահապետական վիճակով: Այդ իրողությունը ժամանակին շատ շուտ նկատեց Մ. Խրիմյանը և դրանք եվրոպական ավելի առաջավոր գործիքներով փոխարինելը դարձավ Վասպուրականի առաջավոր մտավորականների և արհեստավորների առջև դրված ամենակարևոր հարցերից մեկը Մ. Խրիմյանը հաճախ էր ասում. «Մեր բանեցուցած գործիքներ անուշաղ, անարվեստ և կոպիտ շինվածներ են, որ չէ թե միայն ղմեզ կը տանջեն, այլ առավել մեր խեղճ անխոսուն անասուններ»[87]: Նա միաժամանակ նշում էր, որ հողագործների սայլերը ծանր են և անհրաժեշտ է մտածել նրանց քաշը թեթևացնելու մասին: Այդ ծանր գութանները ժողովրդի կողմից ատացյալ էին եղ մականունը, որոնց խոփն էր միայն երկաթից և նրան առաջ տանելու համար լծում էին մի զույգ գոմեշ և 3 զույգ եզ: Գութանների մեջ ամենածանրը Մշո դաշտի և Ալաշկերտի գութաններն էին, որոնց աշխատեցնելու համար հարկ էր լինում լծել 9 զույգ գոմեշ և եզ: XIX դարի վերջին քառորդում Վանի ճարտար վարպետները սկսեցին եվրոպական գութանների նմանողությամբ գութաններ պատրաստել և վարը արդեն 4 լուծ անասունների փոխարեն կատարվում էր երկու լծով՝ հեշտացնելով հողագործի աշխատանքը:

XIX դարի երկրորդ կեսին Վասպուրականի գավառների գյուղերում սկսեց գյուղացիների մեջ ավելանալ մարաբա գյուղացիների թիվը: Մարաբա անունը հայկական զանազան հատվածներում կոչվել է մարաբա, մարապա, մըրիպա, միրիպա անուններով:

Սկսած XIX դարի երկրորդ կեսից սկսվեց Արևմտյան Հայաստանում և Վասպուրականում քրդական ցեղերի նստակյաց դառնալու պրոցեսը, որի ժամանակ նրանց վերնախավի ներկայացուցիչները ձգտում էին ամեն գնով ձեռք գցել հայ գյուղացիների հողերը: Մարաբայության առաջացման ամենակարևոր պատճառները հայ գյուղացիների ջարդերն ու հարստահա-

87 Մ. Խրիմյան, *Ամբողջական երկեր*, Նյու Յորք, 1929, էջ 663—664:

րություններն էին։ Բացի դրանից գյուղացին պարտքերի և այլ պատճառներով զրկվելով պապենական հողից, ունեզրկվելով ստիպված էր իր և ընտանիքի անդամների ուժը վաճառել և աշխատանքի անցնել բեկի կամ աղայի մոտ։ Մարաբա գյուղացին փաստորեն գտնվում էր ճորտական վիճակում, սակայն նա միաժամանակ ազատ էր և կարող էր ուզած ժամանակ թողնել իր հայրենի ծննդավայրը, պապենական տունն ու հողը և հեռանալ։

Քրդական վերնախավը հայ գյուղացիներին պատկանող հողերը գրավելով, նրա վրա քրդական ընտանիքներ էր բնակեցնում, որոնց նույնպես հասցնում էին մարաբայի աստիճանի։ Այսպես, միայն Աբաղայի դաշտում XIX դարի վերջին 77 քրդաբնակ և հայաբնակ գյուղերից 62-ը պատկանում էին քուրդ աղաներին[88]։ Այդ դաշտի հայ և քուրդ գյուղացիների երեք քառորդը սեփական հողից զրկվելով, դարձել էին մարաբաներ, աշխատում էին աղաների մոտ։

Մարաբաների մի մասը չնայած զրկվել էր սեփական հողից, սակայն պահպանել էր գյուղատնտեսական գործիքները և անասունները։ Աղան նրանց տալիս էր ցանվող սերմի կեսը և բերքահավաքից հետո ստանում էր բերքի 50 տոկոսը։ Եթե մարաբան սերմ չուներ, աղան նրան ապահովում էր սերմով, վերջում ստանում էր տված սերմը և ապա բերքի կեսը։ Մարաբայության այդ ձևը Բարձր Հայքում կոչվում էր ուրդղություն։ Օրթըղչին միաժամանակ պարտավոր էր բացի աղային բերքի կեսը տալուց իր սայլով նրա տունը տանել նրա հացահատիկը և հողը պարարտացնելու համար աղբ կրել[89]։

Մարաբա գյուղացիների մի մասը ունեզրկված էր, ոչինչ չուներ, բացի ընտանիքի անդամների աշխատուժից։ Այս դեպքում աղան նրան տալիս էր քաշող անասուններ, սերմացու և բերքահավաքից հետո մարաբա գյուղացին ստանալու էր բերքի մեկ երրորդը, հանձնելով նաև պետությանը հասանելիք տասանորդը։ Մարաբա գյուղացիները ստրկական կախման մեջ էին աղայից։ Գյուղացին ընտանիքի անդամների հետ պարտավոր էր կատարել աղայի դաշտային աշխատանքները՝ վարել, մշակել, հնձել նրա արտերը, ծեծել ու մաքրել ցորենն ու գարին։ Մարաբայի կինն ու աղջիկը պետք է կատարեին աղայի տնային աշխատանքները (կար, լվացք, գործվածքներ գործել և այլն)։ Այդ բռնակալական երկրում «աղան նայում էր մարաբայի վրա իբրև մի գրաստի, ոտքի տակ տալով նրա մարդ-

88 Ա—Դօ, նշվ. աշխ., էջ 278։

89 Նույն տեղում, էջ 276։

կային բոլոր արժանիքները[90]։ «Մարաբանները իրավական տեսակետից ճորտեր չէին,— գրում է Վ. Ա. Պարսամյանը,— բայց փաստորեն ճորտական կախման մեջ էին գտնվում հողատերերից»[91]։

Վան քաղաքից ոչ շատ հեռու գտնվող Շահգելդի գյուղի բնակիչների հողերը պատկանում էին քաղաքի հարուստներից մեկին և գյուղացիները ստիպված վարձակալում էին այն[92]։ Վանի աղաներին էին պատկանում Հայոց ձորի Հնգստան գյուղի հողերի կեսը, Երեմի գյուղի 700 գութան հողից՝ 430-ը, Առեղի 1200 գութանից՝ 1000-ը։ XIX դարի վերջերին Առեղի գյուղացիների մեծ մասը, իսկ Ոչխանանցի բոլոր գյուղացիները մարաբաններ էին։

Մարաբաններ էին նաև նստակյաց քուրդ գյուղացիներից շատերը, ինչպես այդ ժամանակ էր ասվում՝ ռայա քրդերը։ Ավելի շատ մարաբաններ կային Բարձր Հայքի, Մուշի, Սասունի, Վասպուրականի, Տրապիզոնի և այլ վայրերի հայ գյուղացիների մեջ։

Հայկական գյուղերի բնակիչների մի մասը ջարդից և թալանից ազատվելու նպատակով ստիպված ընդունում էր քուրդ այս կամ այն աղայի կամ բեկի հովանավորությունը։ Երբ բեկը կամ աղան հասնում էր տվյալ գյուղի բնակիչներին հովանավորելու վիճակին, պահանջում էր պետական հարկերից բացի իրեն խաֆիրային հարկեր վճարել։ Այսքանից հետո հողի չարքաշ աշխատավորները ստիպված նրան տալիս էին դրամ, հագուստ, գյուղատնտեսական մթերքներ, անասնակեր և պարտավորվում էին ձմեռ ժամանակ պահել նրա անասունները։ Այնուհետև քուրդ բեկը կամ աղան ստիպում էր գյուղացիներին իր համար գյուղի հողերից հող առանձնացնել, մշակել և արդյունքը տանել իր տունը։ Անտանելի էին այն հարստահարությունները, որոնք կատարում էին Մոսուլից և Ջիզիրեից Շատախ լեռնային արոտավայրերը եկած քոչար կոչվող ցեղախմբերը, որոնց հետ ստիպված համակերպվում էին Շատախի հայերը։

Վանի վիլայեթի հայերը շատ էին տուժում թափառական քոչար քրդերի վերնախավից։ Նրանք ոտից գլուխ զինված էին և «ահ ու սարսափ կը սփռեին մեր խաղաղ ժողովրդի մեջ։ Տարիներ շարունակ եկած են այդ շրջաններ և զենքի ուժով հայ գյուղերուն պարտադրած իրենց իշխանությունը,— գրում է ականատեսը»[93]։ Քոչարները շատ դեպքերում խլում էին ոչ միայն հայերի, այլև նստակյաց քրդերի անասունները։ Այդ ցեղե-

90 Ս.—Ի., նշվ. աշխ., էջ 277։

91 Վ. Ա. Պարսամյան, *Հայ ժողովրդի պատմություն (1801—1917)*, 1967, էջ 153։

92 *P. Беккульянц*, По Турецкой Армении, Ростов-на-Дону, 1914. с. 11.

93 Վահան Փափազյան, *Իմ հուշերը*, հատ. I, Պոսթըն, 1950, էջ 564։

բի աղաները Շատախի ավելի քան 10-ը գյուղերը համարում էին իրենց կալվածքը և այդ «գեղերը իրենց հողով ու ջրով, և բնակիչ ժողովրդով մեկտեղ կծախեն իրարու, ամեն ամառն իրենք և իրենց անասունները կերակրվելեն զկնի, աշնանը՝ երբ պիտի քաշվին տաք երկրները, իրենց գյուղերեն պիտի առնեն ու տանին ձմեռվա հագնվելիք և ուտելիքն, պետք չէ կարծեմ մանրամասն դրել տարած բաներնին, որ է հաց, յուղ, տրեխ, շալ, զրահապ, բուրդ և ամենայն ինչ որ գտնվի Շատղու մեջ»[94]: Յուրաքանչյուր գյուղ աղաներին տալիս էր խաֆիրային տուրք, այսպես՝ կաճհատից ստանում էին 200 սարակ (օրավարձով աշխատող մշակ), 20 չափ ցորեն (1 չափը 30 հոխա), 2 լիտր յուղ (= 6 հոխա), 8 լիտր պանիր, 9 այծ, ամեն տնից մեկական ոչխար և ձմեռը պետք է պահեին 150 ոչխար: Կազպի գյուղից վերցնում էին 100 սարակ, 66 չափ ցորեն, 4 ձի, 9 այծ, 5 լիտր յուղ, յուրաքանչյուր տնից մեկական ոչխար, անսահմանափակ քանակի տրեխ, ձմեռը գյուղացիները պետք է մեծ քանակությամբ ոչխարներ պահեին[95]: Նույնանման վիճակում էին Հինենց, Հինգի, Սըպտկի, Սագ և այլ գյուղերի բնակիչները:

Գյուղացիներից մեծ քանակությամբ բոնի հարկեր էին վերցնում նաև Համիդյե գնդերի պետերը, այսպես. Ականցի մոտ գտնվող Հարություն գյուղի 20 տնտեսություն ունեցող հայերը 1894 թ. աշնանից մինչև 1895 թ. հուլիսի 20-ը այդ գնդերից մեկի պետին՝ Ալի բեկին տվել էին 3288 դուրուշի դումար, 737 չափ ցորեն, 24 ձի, 25 հզ, 191 ոչխար և 1922 փայտ[96]: Այդ նույն գյուղից բեկը գյուղացիներին ստիպել էր տալ 900 իրղատ, 100 չիֆտ և գութան, բռնությամբ հավաքել էր 250 օխա ձեթ[97]:

Նույնանման վիճակ էր տիրում նաև Ականցի մոտ գտնվող Քոզեր գյուղում, որի գյուղացիները աղային ամեն տարի պարտավոր էին տալ 400 բարդ խոտ և 300 սայլ ցորեն, 30 թաղիք, աղային պետք է ապահովեին ձմեռվա վառելիքով և ձմռանը պետք է պահեին նրան պատկանող 7 ձին, 30 եղն ու կովը և 300 ոչխարները[98]: Այսպիսով, հայ գյուղացին ամբողջ տարին աշխատում էր, քրտինք թափում, սակայն նրա վաստակը խլում էին ոչ միայն կառավարության ներկայացուցիչները, այլև քրդական բեկերն ու աղաները և հայ վաշխառուները:

---

94 Դիվան, գիրք ԺԹ, Թիֆլիս, 1915, էջ 261—262:

95 Նույն տեղում, էջ 264:

96 «Արձագանք», 1895, 23 (4 օգոստոս) հուլիսի:

97 Նույն տեղում:

98 Նույն տեղում:

1872—1873 թթ. Բարձր Հայքում և Վասպուրականում կատարած իր ճանապարհորդությունների ընթացքում Ե. Տևկանցը ականատես է եղել Թուրքական և քրդական վերնախավի կողմից հայ բնակիչների և հատկապես վանքերին պատկանող հողերը բռնագրավելու փաստերին: Մ. Խրիմյանին 1873 թ. Վարագից ուղարկած իր մի նամակում նա գրում է. «Շատ վանքերու սահմանյաց դրացի այլազգիք՝ քուրդ և տաճիկք, զանազան միջոցներով վանորեից սահմաններ և հողեր բռնի կամ խորամանկությամբ կը հափշտակեն...»[99]: Բղնունյաց գավառում Պկուց վանքի հողերը մի տաճիկ գրավել է, իսկ Արճեշի «Արծվագիր վանքի քով քրդեր տուն շինելով հողերու մեծ մասն տիրեր են». այնուհետև նշում է, որ «Կաուց անապատին, Ջարհար սուրբ Նշանին և այլ շատ վանքերու հողեր հափշտակեր են և հետզհետե հափշտակելու վրա են, այսպիսի հափշտակություններ շատ անգամ տեղական կառավարություն աչք կը գոցեն»[100]: Հողերի հափշտակության մասին բողոքները կառավարական պաշտոնյաները հաշվի չէին առնում, այսպես, Ջարհար սուրբ Նշանի վանքի 124 չափ տեղը հափշտակել էր քրդական վերնախավը: Այդ մասին վանքի վանահայրը բողոքել էր կուսակալին, որը խոստացել էր «Վանքի իրավունքը ճանաչել», սակայն այդ բողոքը թողեց անհետևանք, քանի որ «կառավարություն երբեք չուզեր վանքի հողային կալվածքներ պաշտպանել, եթե հափշտակող հայազգի լինի, կամ օտարազգի, միշտ անոնց անիրավություն պաշտպանելով կուզե Վանորեից հողեր կորզվին...»[101]: Ե. Տևկանցի նամակներից երևում է, որ գյուղացիների հողերը գրավում էին նաև հայ հարուստները և վանականները: Այսպես, Անգղ գյուղի սուրբ Աստվածածնա վանքը աննման դիրք ուներ և ընդարձակ կալվածքներ, սակայն վանահայրը և նրա շրջապատի մարդիկ ցանկանում էին այդ «հողեր ծածուկ յուրյանց վրա թափու ընել տալ» և վերջապես վանահայրն ու իր եղբայրները վանքի հողերը համարում էին «իբրև յուրյանց հայրենի կալվածք»[102]:

Խիզանի ս. Խաչ վանքի վանահայրը մտերիմ էր կառավարական պաշտոնյաների և շեյխ Ջալալեդդինի հետ և ոչ ոքից չերկնչելով «իբրև բարբարոս կը հարստահարե և կը կեղեքե դիւղացի հայեր, որ չեն համարձակիր բողոք բառնալ նորա դեմ վասնզի Աղթամարա տեղապահ նորա հղոր

99 Մատենադարան, զանազան հեղինակների արխիվ, թղթ. 54, վավ. № 132, թ. 40:
100 Նույն տեղում:
101 Նույն տեղում, թ. 50:
102 Նույն տեղում, թ. 51:

պաշտպան է»[103]: Իսկ ինչ վերաբերում է Խիզանի ս. Կարապետի վանքին, ապա նրա «հողեր քրդեր բռնփու արած են յուրյանց վրա»[104]: Նույնանման վիճակում էր նաև Աղթամարի կաթողիկոսության իրավասության տակ գտնվող Խիզանի ս. Գևորգի վանքը, քանի որ «Հիշյալ վանք տարին 20.000 դրշի մուխարայով Աղթամար կը ծախե աշխարհականաց, որք ամեն կողմեր աշխարհական նվիրակներ ղրկելով, 80.000 դուրուշեն ավելի դրամ կհավաքեն ազգեն: Հիշյալ մուխարայի դումար Վանա առաջնորդ Գաբրիել եպիսկոպոսի ժամանակ վանեցիք կառնեին և Վասպուրականին պարտքացա վրա ծաղք կընեին», իսկ Ապարանից ս. Խաչ վանքի հողերը և «կալվածներ Դերվիշ պեյի ձեռն է»[105]:

Այսպիսի բազմաթիվ փաստեր կան նաև հայ պարբերական մամուլում: Սկսած 1880 թ. կեսերից Հայոց ձորի Կեմ գյուղում իր բռնապետական տիրապետությունը հաստատեց Բայրամ աղան, օգտագործելով այն հանգամանքը, որ այդ գյուղի շատ երիտասարդներ գտնվում էին պանդխտության մեջ, որի պատճառով գյուղն անվանում էին «պանդխտաններ ունեցող գյուղերու թագավոր»: Այդ աղան «բոլոր ձորը բռնություններով լեցուցած է. այս գյուղի (Կեմի— Հ. Պ.) սեփականություն եղող Ականց գյուղն ալ իրեն գրաված է»[106]:

Բերված այս ու բազմաթիվ այլ փաստեր կատարվում էին Թուրքական կառավարության պաշտոնյաների աչքի առջև, որոնք համարվում էին սովորական բան, քանի որ այդ բռնությունները հանգեցնում էին քրիստոնյա բնակչության և առանձնապես հայերի անտեսապես աղքատացմանը և հայրենիքից հեռանալուն, որը շատ ձեռնտու էր Թուրքական կառավարությանը:

Արևմտյան Հայաստանից հայ բնակիչների հեռանալը տեղում մնացածների համար առնչվում էր ավելի ծանր վիճակ և գյուղերի բնակիչների թվի նվազելու հետ միասին թուլանում էր հարստահարողներին դիմադրելու ուժը:

Հարկերը Վասպուրականում.— Հանրահայտ է, որ Թուրքական քոչվոր ցեղերը Միջնավոր Արևելքում հրեացին XIII դարի առաջին քառորդին: Հաստատվելով Փոքր Ասիայում, նրանք իրենց համարեցին աղնիվ ցեղ, իսկ հպատակ ազգերին՝ ռայա, որոնք իրավունք չունեին զենք կրելու, ձի հեծնելու, պատերազմին մասնակցելու և պարտավոր էին միայն աշխա-

---

103 Նույն տեղում, էջ. 52:

104 Նույն տեղում:

105 Նույն տեղում, էջ. 53:

106 «Արձագանք», 1887, № 16, 10 մայիսի:

տել ու հարկ տալ: Հենց այդ ժամանակաշրջանից էլ սկսվեց արյան կամ գլխագնի (խարաջ) գանձումը հպատակ քրիստոնյա ազգերից: Չորս դարերի ընթացքում թուրքերը «բնակվեցին գերազանցապես Փոքր Ասիայում և Հայաստանում, որոնք հանդիսացան թուրքական բանակի լրացման մշտական ավազանը»[107]:

Մինչև Թանզիմաթը (1839), թուրքական պետությունը յուրաքանչյուր էյալեթի կամ վիլայեթի տուրքը կապալով հանձնում էր կուսակալին, որը իր հերթին այն նույն կարգով «ամեն լիվայի մեջ տեղացի պեյի մը կամ ավելի ճիշտ տեբեպեյի մը, որ յուր ընտանիքին սեպհականացած ժառանգական իրավունք մը կը նկատեր այս գործը և որվոց որդի կը շարունակվեր»[108]: Թուրքական կառավարությանը բոլորովին էլ չէր հետաքրքրում, թե ինչ միջոցներով է հավաքվում հարկը, միայն թե այն մտներ կառավարական գանձարանը: Սկսած XIX դարի 30-ական թվականների վերջերից, տուրքերի գանձման եղանակը վերակառուցվեց և մի պահ կարծես թե վիճակը մեղմացավ, սակայն շատ չանցած կառավարական պաշտոնյաները և քուրդ աղաները նորից շարունակեցին անօրինականությունները և բնակչության կողոպուտը:

Վասպուրականի նահանգը թուրքական բռնակալական երկրի հարկային սիստեմից դուրս չէր, վճարում էին նույն հարկերը, ինչ մյուս վայրերի բնակիչները: Վանում եղած ժամանակ լինչը եկավ այն եզրակացության, որ թուրքական վերնախավի մեջ «ամենեն քիչ թիվ և քիչ կարողություն ունեցողներն են որ կը կառավարեն», և քաղաքի ամբողջ հարստությունը ստեղծված է աշխատավոր հայերի ձեռքով, սակայն «Իսլամ կառավարող փոքրամասնությունը կը պարարտանա շատ մեծ ամսականներով վարձատրված ձրիակեր պաշտոններով»[109]: Ժողովրդից կատարված այդ հափշտակությունները կատարում էին թուրք պաշտոնյաները և «զեղծարարությունը ցեցի մը պես մտած է վարչական բոլոր պաշտոնատանց մեջ», իսկ այն հայերը, որոնք ծառայում էին քաղաքապետարանում «պարզապես գողեր կամ գողերի մեղսակիցներ էին»[110]:

Հարկի տակ էր դրված նաև Կոստանդնուպոլսի պատրիարքարանը և «պատրիարքը պետական գանձին կը վճարեր տարեկան տուրք, անկե կատանար պատրիարքական աստիճան համարվող կապա կամ խիլա բա-

---

107 *К. Маркс и Ф. Энгельс*, Соч., т. 9, М., 1957, с. 5.

108 «*Տարեցույց ազգային հիվանդանոցի*», Կ. Պոլիս, 1931, էջ 61—62.

109 Լինչ, հատ. II, էջ 91:

110 Նույն տեղում, էջ 99:

ված հագուստը»[111]: Սակայն սուլթանը Կոստանդնուպոլսում գտնվող հոգևոր պետերին սիրաշահելու նպատակով ամեն տարի հունվարին Կ. Պոլսի հայկական և հունական պատրիարքներին համապատասխան գումար էր տալիս: Այսպես, 1895 թ. նա հունաց պատրիարքին նվիրեց 75, հայոց պատրիարքին՝ 40 և հայ-հռոմեական պատրիարքին՝ 25 հազար ղուրուշի դումար[112]:

Քրիստոնյա ազգերից գանձվող հարկերից մեկը կոչվում էր բեդել կամ գլխահարկ (պետելը ասքերի), որն անվանում էին նաև զինվորական կամ զինվորագրության փոխարեն հարկ: Քանի որ քրիստոնյաներից բանակի տարիք ունեցողները չէին զորակոչվում, պարտավոր էին 135 զինվորների համար յուրաքանչյուր տարի տալ այնքան հարկ, որը կփակեր բանակի մեկ զինվորի տարեկան ծախսը, այսինքն՝ 5000 դահեկան: Բանակի հասակ ունեցող յուրաքանչյուր քրիստոնյա ամեն տարի պետք է վճարեր 37 1/4 ղուրուշի հարկ[113]: Այս հարկը պետք է վճարեին արական սեռի ներկայացուցիչները ծնված օրից մինչև իրենց մահը[114]: Այսպիսով, «հին մուսուլմանական բարբարոսության պատվարը»[115] թուրքական բանակը պահվում էր կայսրության սահմաններում ապրող քրիստոնյաների, այդ թվում նաև հայերի հաշվին:

Հարկը գոյություն ուներ շատ հին ժամանակներից և ռայա ազգերին հպատակեցնելու ու ստրկական վիճակում պահելու հզոր միջոց էր: Դրանով կառավարությունը մեկընդմիշտ զրկում էր ռայային զենք կրելու և իր դեմ ընդվզելու հնարավորությունից: Բեդելը սկզբնական շրջանում կոչվել է ճիզիե, ապա խարաջ, իսկ XIX դարի կեսերից այդ անունը ստացավ, պահպանելով մինչև 1908 թ. թուրքական հեղափոխությունը: Վանի, Բիթլիսի, Սլվազի նահանգների տարածքներում այդ հարկը կոչվել է նաև ճուիֆուս:

Բեդելից ազատվում էին իգական սեռի ներկայացուցիչները, աղքատները, հիվանդները, հոգևորականները և Կոստանդնուպոլսում ծնվածները, իսկ այնտեղ ապրող պանդուխտների հարկը իրենց հայրենիքում վճարում էին նրանց հարազատները:

1894 թ. մտցվեց բեդելը հավաքելու նոր կարգ, ըստ որի հարկատուի

---

111 Լևոն Ճերաճեան, *ժամանակակից ընդարձակ քննական պատմություն հայոց*, Ա հատ., Մարսել, 1932, էջ 58:

112 «Նոր դար», 1895, № 16, 27 հունվարի:

113 Խաժակ, *Հարկերը Տաճկահայաստանում*, Բաքու, 1904, էջ 24:

114 «Արձագանք», 1888, № 80, 10 (22) հուլիսի:

115 *К. Маркс и Ф. Энгельс*, Соч., т. 10, М., 1958, с. 28.

անունը հաշվառումից միառմնավոր կերպով դուրս թողնելու դեպքում հարկը պետք է գանձվեր կրկնակի չափով, իսկ եթե այդ անձը ի վիճակի չէր վճարելու, այդ դեպքում այն պետք է վճարեին վիճակագրություն կազմողները, այսինքն՝ տանուտերը և հարկահավաքը[116]։

Թուրքական ագետությունը անթիվ և անհամար հարկեր էր հավաքում ժողովրդից և առանձնապես քրիստոնյաներից։ Կ. Մարքսը նշում է, որ Թուրքիայի ասիական մասում ծաղկած էր «թալանի և անգործության թուրքական սիստեմը»[117]։ Բավական է նշել, որ XIX դարի սկզբին դյուահարկը (խարաջ) 10 դահեկան էր, իսկ Արևելյան պատերազմից հետո հասավ 27-ի[118]։ Եթե զուլումի տարիներից առաջ մինչև 15 տարեկան տղաները ազատված էին այդ հարկից, ապա սուլթանի կարգադրությամբ նրանք սկսեցին ծնված օրից մինչև խորին ծերությունը վճարել այդ հարկը։ Եթե 1880 թ. յուրաքանչյուր տղամարդուց գանձվում էր 27 ղուրուշի բեդել, ապա շատ չանցած այն դարձավ 36, ապա՝ 37 1/4, իսկ 1895 թ.՝ 50 ղուրուշ։ Այս հարկը շատ ծանր էր, եթե մի ընտանիքում կենդանի էր պապը, որը ուներ 3 որդի և 3 թոռ, այդ ընտանիքը պետք է վճարեր 350 ղուրուշի բեդել, դրան գումարած 50 ղուրուշ՝ հարկահավաքներին կերակրելու համար[119]։

Բեդելը հավաքելուց առաջ թուրքական պաշտոնյաները հաշվառում էին գյուղի տղամարդկանց, անկախ նրանց առողջ կամ հաշմանդամ լինելու հանգամանքից, որից հետո գումարը բաժանում էին վճարող անձանց թվի վրա։ Այս հաշվարկից և բաժանումից հետո, բնականաբար, յուրաքանչյուր բեդել վճարողի հարկը պետք է ավելանար, քանի որ գյուղից պահանջվում էր նաև անվճարունակ տղամարդկանց հարկը։ Բեդելի թվի մեջ էր մտցվում նույն տարվա մահացածների և պանդխտության մեկնածների հարկը։ Հարկերը հավաքում էին հարկահավաքները և տանուտերը՝ ոստիկանների օգնությամբ։ Տանուտերը հարկերը գանձելուց հետո ստանում էր նրա 4—10 տոկոսը, այս միաժամանակ նշանակում է, որ հարկերի գումարը նորից կամա թե ակամա ավելանում էր։ Պատահում էին դեպքեր, երբ թուրքական հարկահավաքները յուրացնում էին բնակչությունից գանձված բեդելի մի մասը, չմոռանալով այն գրել ապագայի պանդխտության մեջ գտնվողների վրա։ Երբ այդ պանդուխտները տարիներ հետո տուն էին վերադառնում, նրանցից գանձվում էին հսկայական

116 «Հայրենիք» (Կ. Պոլիս), 1894, 20 հունվարի։

117 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 11, М., 1958, с. 490.

118 Խաժակ, նշվ. աշխ., էջ 35։

119 «Նոր դար», 1895, № 88, 23 մայիսի։

գումարներ, որով նրանց տարիների տառապանքի գնով աշխատած գումարը մտնում էր կառավարական պաշտոնյաների գրպանը։

Կային դեպքեր, երբ բեդելը գանձելու ժամանակ տղաներ ունեցող գյուղացիները գործարքի մեջ էին մտնում թուրքական հարկահավաքների հետ և կաշառք տալով պակաս էին գրում հարկադրվող իրենց որդիների թիվը։ Այդ գործարքից օգտվում էր թե՛ պաշտոնյան և թե՛ գյուղացին, սակայն պակաս էր ցույց տրվում Թուրքիայում ապրող հայերի թիվը։

Թուրքական կառավարության պաշտոնյաներն առանց բացառության կաշառակերներ էին։ Բանտ ընկնող յուրաքանչյուր անձից՝ սկսած դռնապանից մինչև ամենաբարձր պաշտոնյան, կաշառք էին վերցնում։ Կաշառակերությանը շատ էր նպաստում նաև այն հանգամանքը, որ պետական պաշտոնյաները ժամանակին աշխատավարձ չէին ստանում, այդ պատճառով էլ 50 գահեկանի համար բանտ ընկնողը «հաճախ ծախսում էր իբրև կաշառք՝ 200—300 գահեկան, մինչև որ կարողանում էր իր կաշին այդ ծուղակից ազատել»[120]։

1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, երբ հրապարակի վրա էին Սան-Ստեֆանոյի և Բեռլինի կոնգրեսի պայմանագրերը, երբ հայկական հատվածներում սկսեցին աշխուժանալ ազգային-ազատագրական շարժումները և հայկական լեռներում երևացին առաջին հայդուկներն ու նրանց խմբերը, հրապարակ եկան ազատագրական խմբակներն ու ազգային կուսակցությունները, թուրքական կառավարական պաշտոնյաների համար բացվեց կաշառակերության մի նոր ասպարեզ։ Նրանք այդ տարիներին սկսեցին ազգային-ազատագրական շարժման մասնակիցների հետ նաև բանտ նետել այնպիսիներին, որոնք ունևոր լինելով, շատ հետու էին այդ շարժումներից և թուրքական ոստիկանության ճանկերից ազատվելու համար ստիպված մեծ գումարներ էին տալիս։

XIX դարի երկրորդ կեսին հրապարակ եկավ, այսպես կոչված, Երուսաղեմի պարտքը, որի չափի մասին հրապարակված գրականության և պարբերական մամուլի էջերում տպագրված հոդվածներում կան իրարամերժ թվեր։ Ոմանք դնում են, որ այդ պարտքը հասնում էր 60 հազար, այլ աղբյուրների տվյալներով այն կազմում էր 38—40 հազար ոսկի։ Կոստանդնուպոլսի հայոց ազգային վարչությունը պարտքը մարելու նպատակով որոշեց դիմել կառավարությանը։ Ըստ այդ որոշման 3 տարի բեդելի վրա պետք է ավելացվեր տարեկան 3 դուրուշ։ Թուրքական կառավարությունը ազգային վարչության այդ առաջարկը սիրով ընդունեց, նպատակ

120 Խաժակ, նշվ. աշխ., էջ 42։

ունենալով ամենից առաջ սիրաշահել հայոց ազգային ժողովը և պատրիարքին, իսկ հարկի ավելացումը ավելի կծանրացներ գավառներում ապրողների վիճակը և կուժեղացներ արտագաղթը երկրից։ Հետաքրքրական են պատրիարքարանի տվյալները բեղել վճարող հայ տղամարդկանց թվի վերաբերյալ։ Այդ ժամանակ Թուրքիայում բեղել էին վճարում 500 հազար հայ և եթե յուրաքանչյուր տարի հարկին ավելացվեր 3 ղուրուշ, ապա յուրաքանչյուր տարի 1 մլն 500 հազար ղուրուշ վճարելուց հետո պարտքը երեք տարում կմարվեր։ Այդ հարցը իր ժամանակին հասարակության տարբեր խավերում սուր վեճերի առարկա դարձավ։ Մաթեոս Մամուրյանը «Արևելյան մամուլ»-ում պահանջեց հարկը վճարելուց առաջ ուսումնասիրել, թե որտեղից է առաջացել այն և այդ գումարից հայ ժողովուրդը ինչ օգուտ է ստացել։ Ոմանք այնտեղ հասան, որ սկսեցին Մ. Մամուրյանին մեղադրել «Երուսաղեմի վանքը քանդել» ջանալու մեջ։ Այդպես վարվեց Երուսաղեմի վանքի նվիրակ Ս. Խապայանը, որը կովկասահայության մեջ հանգանակություն էր անում և մամուլում հանդես եկավ մի հոդվածով[121]։

Կոստանդնուպոլսի հայոց ազգային վարչության անդամները և քաղաքի բնակիչները ապատ էին հարկ վճարելուց և նրանց ինչ փույթ, թե գավառահայերի հարկերի վրա նոր բեռ կավելացվի, այդ պատճառով էլ առանց վեճերի նրանք ընդունեցին այդ որոշումը։ Սակայն երկու տարում հազիվ 2000 ոսկի հավաքվեց։ Այդ առիթով «Արձագանքը» գրում էր. «Երբ գործը առնելուն կը վերաբերեր, Կ. պոլսեցիք վեր էին առնում, այժմ երբ գործը տալուն եկավ, յուրյանք մի կողմ քաշվեցին և գավառացի հայոց վզին կապեցին, որ նոքա վճարեն Երուսաղեմի պարտքը»[122]։ Երբ այդ մասին ասվում էր մայրաքաղաքի վերնախավի անդամներին, նրանք շատ հանգիստ պատասխանում էին. «Երուսաղեմա վանքն ազգին կը պատկանի կոր. հետևաբար ամբողջ ազգը պարտավոր է պարտքը վճարել»[123]։ Սակայն միթե Կոստանդնուպոլսի բնակիչները և նրանց վերնախավը չէին մտնում ազգի մեջ։ Մի բան պարզ էր բոլորի համար, որ այդ պարտքի վճարման կապակցությամբ բոլոր «վանեցիք, մուշեցիք և կարնեցիք և ուրիշ բոլոր գավառացիները պիտի նեղվին»[124] և ընկնելու էին ավելի ծանր վիճակի մեջ։

---

121 «Արևելյան մամուլ», 1882, հունիս, օգոստոս։

122 «Արձագանք», 1886, № 9, 9 մարտի։

123 Նույն տեղում։

124 «Արձագանք», 1884, № 36, օգոստոս։

Գյուղացիներից և բնակիչներից գանձվող մյուս հարկը կոչվում էր կալվածական, որը բաժանվում էր երկու մասի. տան հարկ (էմլաք մուլքիե) և հողային հարկ (արտը վերգսը)։ Հարկի առաջին մասը գանձվում էր խանութներից, տներից, դոմերից, մարագներից, փարախներից, ջրաղացներից, դինգերից, ձիթհաններից, բաղնիքներից և այլն։ Այսպես, 1000 ղուրուշի արժեք ունեցող հասույթաբեր շենքերից (խանութ և այլն) գանձվում էր տարեկան 10 ղուրուշի հարկ։ Խանութպանների և արհեստավորների 1000 ղուրուշ վաստակից խանութի տերը կամ արհեստավորը պետք է վճարեր 30 ղուրուշի հարկ[125]։

Հողային հարկը գանձվում էր արոտատեղերի, այգիների և հողակտորների գրաված տարածությունների համապատասխան։ Գյուղերում թուրքական պաշտոնյաներից կազմված հանձնաժողովը գնահատում էր անշարժ կալվածքները, շինությունները և համապատասխան հարկ նշանակում։ Եթե գյուղացին 1000 ղուրուշի արժեքով կալվածք ուներ, պետք է 6 ղուրուշ հարկ տար, իսկ եթե նրա անշարժ կալվածքի արժեքը 16.667 դահեկան էր, նա պետք է տար 100 ղուրուշ։ Հարկը հավաքելուց չէին մոռանում գանձել տանուտերերին հասանելիք համապատասխան տոկոսը որպես աշխատավարձ և պետությանը հասնող մեկ դահեկանի արժողությամբ դրոշմանիշներ։ Այսպիսով, 100-ի դիմաց գյուղացին կամ արհեստավորը պարտավոր էր վճարել 109—111 դահեկանի հարկ[126]։

Հարկ է նշել, որ թուրքական պաշտոնյաները աշխատում էին որքան հնարավոր է թանկ գնահատել գյուղացու ունեցվածքը, որպեսզի նրանից ավելի շատ հարկ գանձեն։ Այստեղից էլ առաջանում էր կաշառք տալը։ Կալվածք ունեցողը ցանկանում էր ամեն ինչի գնով հասնել նրան, որպեսզի այն ավելի ցածր գնահատվի։

Սահմանված էր նաև ճանապարհների հարկ։ Այն գանձվում էր երկրի ճանապարհները կարգի բերելու նպատակով։ 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո ավելի ակնառու դարձավ, թե ինչ ողորմելի վիճակում էին օսմանյան Թուրքիայի ճանապարհները։ Կառավարությունը ճանապարհները «կարգի դնելու» նպատակով գոյություն ունեցող հարկերի վրա ավելացրեց նաև 20-ից մինչև 50 տարեկան տղամարդկանցից գանձվող այդ նոր հարկը։ Գյուղացին հարկը վճարած էր համարվում, եթե նա 3-ից 5 օր աշխատեր ճանապարհաշինության վրա՝ իր հետ վերցնելով սայլը և երկու լուծ եզ, իսկ եթե այդ չէր անում, ապա պետք է 13 դահե-

125 «Արձագանք», 1892, № 80, 10 (22) հուլիսի։

126 Նույնպես, նշվ. աշխ., էջ 49։

կան վճարեր։ Գյուղացիների մեծ մասը թուրքական կառավարական պաշտոնյաների բերան ու դաժան վերաբերմունքից ազատ լինելու նպատակով գերադասում էին աշխատելու չգնալ և դրամով փակել այդ հարկը։ «Արձագանքում» տպագրված մի հոդվածից երևում է, որ ճանապարհի հարկը 1892 թ. պետք է վճարեին 14-ից մինչև 60 տարեկան տղամարդիկ, տարեկան 15-ից մինչև 20 ղուրուշի չափով[127]։

Օսմանյան Թուրքիայում գոյություն ունեցող հարկերից մեկը կոչվում էր զբաղմունքի հարկ, որը գանձվում էր քաղաքների արհեստավորներից և վաճառականներից։ Յուրաքանչյուր արհեստավոր տարեկան պարտավոր էր վճարել 40—60 դահեկան, իսկ նրա քարգահը (խալֆա)՝ 10-ից մինչև 40 դահեկան։ Վաճառականները տարեկան վճարում էին 200—250 դահեկանի հարկ։

1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո ծնված բոլոր երեխաների ծննդականները կոչվեցին սուլթանի անունով՝ Համիդյե, այդպես անվանվեցին նաև անձնագրերը։ Ծննդականները ստանալու համար նորածնի ծնողները պարտավոր էին 1 1/1 դահեկան վճարել կառավարությանը և մեկ դահեկան էլ առաջնորդարանին։ Կառավարությունը յուրաքանչյուր ընտանիք կազմողից ստանում էր 12 1/2 դահեկան[128]։

Թուրքիայում կենդանիների համար հարկ էին վերցնում (աղնամ)։ Քանի որ եզները, կովերը, ձիերը, էշերը և ջորիները համարվում էին գյուղացու համար իբրև աշխատուժ, նրանք չէին հարկադրվում։ Անասնահարկը գանձվում էր ոչխարներ և այծեր պահողներից։ Այս հարկը նշանակելիս կառավարությունը նկատի ուներ այն հանգամանքը, որ Թուրքիան հիմնականում գյուղատնտեսական և անասնապահական երկիր է, որ գյուղացիները պահում են մեծ թվով ոչխարներ և այծեր, որոնցից ստանում են կթամթերքներ, միս, իսկ նրանց բուրդը, մազն ու կաշին օգտագործում են տնտեսությունների կարիքների համար կամ ավելցուկը վաճառում են արհեստավորներին։ Թուրքիայում ամեն մի ոչխարի կամ այծի համար տարեկան գանձվում էր 4 1/2 դահեկան հարկ։ Այլ աղբյուրից քաղած տեղեկության համաձայն ամեն այծի և ոչխարի համար վերցվում էր 3 1/2 ղուրուշ, իսկ փիֆթիկ այծերից յուրաքանչյուրի համար՝ 7 ղուրուշ[129]։

Այծերի և ոչխարների հաշվառումը կատարվում էր հատուկ հանձնաժողովի միջոցով՝ գարնան սկզբին, երբ անասունները գտնվում էին ձմեռանոցներում և գոմերում։ Այն գյուղացիները, որոնք թաքցնում էին իրենց

---

127 «Արձագանք», 1892, № 80, 10 (22) հուլիսի։

128 Խաժակ, նշվ. աշխ., էջ 53 և 58։

129 «Արձագանք», 1892, № 80, 10 (22) հուլիսի։

ունեցած անասունները, նրանց այծերն ու ոչխարները պետականացվում էին։ Մանր եղջյուրավոր անասունների գարնանային հաշվառումը ուներ իր նպատակը, այդ ժամանակ անասունների ծինը վերջացած էր և գլխաքանակի մեջ էին մտնում նաև նոր ծնված գառները և ուլերը։ Այստեղ սկսվում էր պետական պաշտոնյաների և գյուղացիների մեջ նոր գործարքը՝ կաշառքի միջոցով անասունների գլխաքանակը պակաս ցույց տալու կապակցությամբ։

Ասվեց, որ օսմանյան Թուրքիայում հողի մշակները վճարում էին երկրագործական հարկ, որը կոչվում էր աշար։ Հարկը գանձվում էր խոտից, առվույտից, բանջարեղենից և այն բոստաններից, որտել վարունգ, սեխ կամ ձմերուկ էին ցանում։ Աշարը գոյություն ունեցող կարգի համաձայն պետք է գանձվեր բերքի մեկ տասներորդի չափով, սակայն պետական պաշտոնյաները հարկը աճուրդով տալու պատճառով ավելի շատ հարկ էին հավաքում գյուղացիներից։ Իբրև կանոն աշարը վաճառվում էր թուրք և քուրդ վերնախավին, որոնք ձգձգում էին հարկի հավաքելը, որպեսզի ավելի շատ ստանային գյուղացիներից։ Գյուղացիները հարկերը տալու ժամանակ ստիպված էին դիմել փողատեր վաշխառուներին և բազմաթիվ էին դեպքերը, երբ քաղաքների և գյուղերի քուրդ, թուրք և հայ վաշխառուները ալլոկում էին խեղճ հողագործներին անտանելի տոկոսներով։ Եվ այնքան ծանր է եղել քրտնաջան գյուղացու վիճակը, որ նա պարտքերը վճարելուց հետո «կալը սրբելեն վերջ, մաղն, ավելն և հեծանոցը միայն ձեռքն առած, գլուխը կախ, տխուր մտատանջության մեջ դիմում էր տուն, այսպես ասած՝ «դուռ ջանը և անօգուտ վաստակ»[130]։

Վ. Ի. Լենինը գյուղերում եղած այդ կարգի կուլակներին ու վաշխառուներին համարում էր «վատթար տեսակի շահագործողներ»[131]։

Արևմտյան Հայաստանի հայկական գյուղերում թուրք և քուրդ ֆեոդալները այնքան ազատ էին զգում իրենց, որ շատ դեպքերում անօրինականորեն հարկադրում էին հայկական եկեղեցիներին և մենաստաններին։ Այսպես, Վանա լճի անապատներից Լիմը և Կտուցը սեփականությունն էին համարվում Թեմուր աղայի, «որին տարեցտարի քանի մի հազար ղուրուշ հարկ են տալիս, բայց և նորա պաշտպանությունը վայելում»[132]։

Գյուղացիների նկատմամբ անխիղճ վերաբերմունք էին ցուցաբերում վաշխառուները։ Ե. Տևկանցը գրում է, որ վաշխառուները չեն վախենում ոչ մարդկանցից և ոչ էլ աստծուց և «այնչափ վաշխս ի վերա վաշխի

130 «Նոր դար», 1884, № 206, 18 դեկտեմբերի։

131 Վ. Ի. Լենին, Երկ, հատ. 4, 1957, էջ 73։

132 «Արձագանք», 1882, № 20։

քարդեն, մինչդի որդիք ծերանան կամ մեռանին և ոչ կարեն զպարտս հարց յուրեանց վճարել»[133]: Եթե տարին բերքառատ չէր և գյուղացին քիչ բերք ուներ, այդ դեպքում վաշխառուն որպես տղրուկ «ծծեսցէ զարիւն երկրագործին և յափշտակեսցէ ձեռաց նորա զարտօրայս և զայգիս ի փոխարէն անիրավ վաշխի իւրոյ»[134]:

Վաշխառուների դեպի պարտատեր գյուղացին ունեցած անխիղճ վերաբերմունքի մասին փաստեր տպագրեց «Արծուի Վասպուրականը», ահա նրանցից մի քանիսը: Վանի մոտ գտնվող Սղգահ գյուղում 1873 թ. կար 225 տղամարդ, որոնցից 29-ը՝ պանդուխտ: Այդ գյուղացիների պարտքը հասնում էր 130.200 ղուրուշի: Շուշանց գյուղն ուներ 186 տղամարդ, որից 24-ը պանդուխտ էին, իսկ պարտքը կազմում էր 130.400 ղուրուշ: Մխկնեց գյուղը ուներ 52 տղամարդ, որից 14-ը՝ պանդուխտ, պարտքի քանակը հասնում էր 93.600 ղուրուշի: Պարբերականում լույս տեսած այդ հոդվածում կարդում ենք. «Գյուղացվոց այս պարտքերու մեծագույն մասը տոկոս է, վասնզի այստեղ փողատերերը խեղճ և հարկադրյալ գյուղացվոցմե խիստ անխիղճաբար հարյուրին 30—40 և մինչև 50 ղուրուշ տոկոս և տոկոսի տոկոս կառնեն»[135]:

Թուրքական կառավարությանը քաջ հայտնի էր երկրում տիրող այդ վիճակը և գյուղացիների դրությունը մեղմելու նպատակով 1888 թ. մարտին բաց արեց օսմանյան երկրագործական բանկը, որը 1894 թ. ուներ 95 ճյուղ և 328 գործակալություն: Բանկի ճյուղերը բացվեցին սանջակների, իսկ գործակալությունները՝ կազաների կենտրոններում[136]: Սակայն խեղճ գյուղացիները նորից մնացին վաշխառուների ճանկերում:

Թուրքական հարկահավաքները մի տուրքը գանձելուց հետո վերցնում էին նաև նորանոր տուրքեր. այսպես, գյուղացին ուներ խաղողի այգի և նրա համար պարտավոր էր հարկ տալ և վճարում էր հողի ու ջրի տուրք: Բերքահավաքից հետո, եթե նա շիրա ստանար, նոր տուրք պետք է տար, մի տուրք էլ պետք է տար, եթե խաղողից չանչ էր ունենում: Այս բոլորին հաջորդում էր օղի քաշելու համար տուրքը: Գյուղացին պարտավոր էր մի տուրք էլ վճարել՝ օղին և գինին վաճառելու համար, իսկ ամենավերջում՝ այդ աշխատանքով զբաղվելու համար[137]:

133 Ե. Տեկյանց, Հայրենասիրություն հայոց, էջ 267:

134 Նույն տեղում, էջ 344:

135 «Արծուի Վասպուրական», 1873, թիվ 10—17, մարտ:

136 «Հայրենիք» (Կ. Պոլիս), 1894, 28 մարտի կամ «Արևելյան մամուլ», 1889, դեկտեմբեր, էջ 375:

137 Փարամազի ճառը, Իմ դատավորությունը Տաճկաստանում, 1898 թուին, Շիկագօ, 1919, էջ 20:

Թուրքիայում խոտի հարկը հավաքում էին արծաթ դրամով։ Ոչխարների համար նախատեսված աղնամ տուրքը հավաքում էին՝ նախորդ տարվա վրա ավելացնելով, առանց հաշվի առնելու, որ գյուղացու ոչխարները կարող էին բնության արհավիրքների պատճառով պակասել։ Գյուղացու բողոքը ոչ ոք չէր լսում, քանի որ կառավարությունը «աղնամճիներու կողմը կը բռնե և անոնց կոնակը կը կենա ի շահ անոնց քով տեսնելով և ոչ թե իրեն հպատակող գյուղացի ժողովրդին քով»[138]։

1890-ական թվականներին մի զորանոց (Կշլա) շինելու համար Աղթամարի խաչատուր կաթողիկոսը կարգադրեց Կարճկանի և Խիզանի հայերից հավաքել 500 ոսկի և այդ գավառների յուրաքանչյուր հայկական գյուղի վրա դրվեց 15-ական ոսկու հավելյալ հարկ[139]։

Հարկերը հավաքող կապալառուն ուներ իր գրագիրը (քյաթիպ), իր հարկահանները (մյուլթեզիմներ), իսկ սրանց օգնականները կոչվում էին շահնա։ Աշխատավոր գյուղացին բերքը կուտակում էր կալի մեջ, սակայն իրավունք չուներ պահեստավորելու, մինչև մյուլթեզիմը կամ շահնան չչափեին և չտանային համապատասխան մասը։ Վերջիններս այդ գործողությունը կատարելու համար գյուղացուց պահանջում էին իրենց ոտքի վարձը։ Եթե գյուղացին հրաժարվում էր այն վճարելուց, նրանք դաջում էին կալում եղած հացահատիկի շեղջերը և հեռանում։ Եթե այն խախտվեր, գյուղացին ստիպված էր ահագին գումար վճարել հարկահավաքներին։ Իրրև կանոն կապալառուն և նրա օգնականները՝ մյուլթեզիմն ու շահնան նախատեսվածից ավելի հարկ էին վերցնում։

Թուրքիայում շատ էին դեպքերը, երբ ցորենի, գարու, այգու, խոտի, խաղողի, մեղուների փեթակների և աուլույտի հարկերը դրամով էին վերցնում։ Մի միջին բոստանից վերցվում էր 5 ոսկի աշար, իսկ 8 խոռոմ աուլույտից՝ 2 դահեկան։ 1900 թ. կառավարության կարգադրությամբ աշարը ավելացավ, փոխանակ բերքի մեկ ութերորդը վերցնելու, սկսեցին մեկ յոթերորդը վերցնել[140]։

Վերը նշված հարկերից բացի Թուրքիայում կային շատ ու շատ այլ հարկեր ու տուրքեր։ Հարկատեսակներից մեկը կոչվում էր դան փաբասը, որը գանձվում էր յուրաքանչյուր մորթվող անասունի տիրոջից և կազմում էր 20 փարայից մինչև մեկ ու կես դահեկան, մորթվող մի ոչխարի

---

138 «Արագած», 1920, № 21, էջ 709։

139 «Արձագանք», 1897, № 50, 4 (16) մայիսի։

140 Խաժակ, նշվ. աշխ., էջ 75—76։

ճամ այծի համար։ Յուրաքանչյուր մորթվող եզի կամ գոմեշի համար գյուղացին պետք է վճարեր 3-ից մինչև 5 դահեկան[141]։

Թուրքիայում քաղաքացիներից հարկ էր գանձվում գիշերապահների համար, որը կոչվում էր ապահովության հարկ (բաղմանդ փարասը)։ Կոստանդնուպոլսից սկսած բոլոր քաղաքների փողոցներն ունեին իրենց գիշերապահները և յուրաքանչյուր ընտանիք ամիսը 2 դահեկան էր վճարում։ Շուկաներում կար նաև կշեռքի հարկ (ղանբար փարասը)։ Կային այնպիսի անուղղակի հարկեր, որոնք զայրույթ և ծիծաղ են առաջացնում, այսպես՝ թուրքական և քրդական վերնախավի ներկայացուցիչները մտնելով գյուղացիների տները, պահանջում էին դիշ Ֆրասին (ուտել խմելուց հետո ատամի վարձը) կամ վեր, սարմա վերկիսին (տուր, մի հարցրու)[142]։ Անչափ շատ էին փեշքեշները բութուն (ծխախոտ), չայ փարասիները։

1896 թ. Թուրքիայում սուլթանի կարգադրությամբ քրիստոնյաները պետք է զենք գնելու և պետությանը հանձնելու համար գումար տային։ Քրիստոնյաները ստիպված վճարեցին համապատասխան գումարը, զենքերը գնվեցին և հետագայում այն բաժանվեց մահմեդական ամբոխին, որը օգտագործեց քրիստոնյա բնակիչներին և առաջին հերթին հայերին կոտորելու համար։

Չնայած 1853—56 թթ. Արևելյան պատերազմից հետո սեղանի վրա դրված հրովարտակին (Հաթթը Հումայուն), կառավարությունը սկսեց գյուղացնել Մուշի, Բիթլիսի, Բարձր Հայքի, Վասպուրականի և այլ վայրերի հայ բնակչության ունեցող գյուղերի հողերի անցումը թուրք և քուրդ ֆեոդալներին։ Կառավարության վարած այդ սիստեմատիկ քաղաքականությունը մի քանի տասնյակ տարիների ընթացքում հասցրեց նրան, որ թուրք և քուրդ վերնախավը գրավեց հայ գյուղացիներից շատերի հողերը։ 1870 թ. կառավարությունը քրդական վերնախավին թույլատրեց «օրինական թափությով մը հայոց սեփական հողերը ամենաէժան կերպով գնեն»[143]։

Այսպիսով, օսմանյան կառավարությունը ժողովրդից հսկայական քանակությամբ հարկեր էր հավաքում։ Այդ մասին մամուլում տպագրված մի հոդվածում կարդում ենք. «Թուրքը մեր տիրող տարրն է, նրա գոյության պատվանդանը եղող հայ ազգը էն քիչը երեք միլիոն հոգի է։ Տարեկան մարդագլուխ ամեն բան ի մի առած հայ չկա, որ առնվազն երեք ոսկու տուրք չտա օսմանցիին։ Ուրեմն տարին 9 միլիոն ոսկի ենք տալիս տիրող տարրին, և նա մեր տված միջոցներով, մեր գրամով պահում է

141 Նույն տեղում, էջ 77—78։

142 Երուանդ Տեր Մկրտչեան, Գանձեր Վասպուրականի, հատ. I, Պոսթըն, 1966, էջ 279։

143 «Արագած» (Կ. Պոլիս), 1920, № 51, էջ 703։

հարյուր-հազարավոր զորքեր, ոստիկաններ՝ մեզ փշրելու համար, դատարաններ՝ մեզ արդարադատության ղոհ անելու, մեզ ստրկացնելու համար»[144]:

1890-ական թվականների սկզբներին թուրքական կառավարությունը անգլիական սպանների օգնությամբ սկսեց Կարինում նոր ամրություններ կառուցելու և եղածները վերակառուցելու աշխատանքները, որի իրականացման համար ամեն տարի պահանջվեց 2400 ավարշեք (տարճապարհակ), որից Կարինի վիլայեթից՝ 900, Վանից՝ 600, Տրապիզոնից, Խարբերդից և Դիարբեքիրի վիլայեթներից 300-ական ավարշեք[145]: Հայ գյուղացիները շատ լավ գիտեին, որ իրենց աշխատեցնելու են նախատեսածից ավելի շատ, հաշված պետական և զինվորական պաշտոնյաների անմարդկային վերաբերմունքը, ուստի ստիպված ամեն ավարշեքի համար 300 զուրուշ գումար էին վճարում և չէին գնում աշխատելու:

1885 թ. ժողովրդի հաշվին սկսվեց Վանից դեպի Կարին տանող խճուղու կառուցումը, որի առաջին օրը Վանի փաշան, թուրք և հայ վերնախավի ներկայացուցիչները առաջինը իրենց բրիչները խփեցին հողի մեջ, իսկ Պողոս Մելիքյանը նահանգապետի և հավաքված հայ և թուրք վերնախավի ու ճանապարհի վրա աշխատողների ներկայությամբ «օրհնեց այդ գործը և բարեմաղթություններ արեց վեհ. սուլթանի կենաց և կառավարության»[146]:

1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո թուրքական կառավարությունը սկսեց ավելացնել թուրքական դպրոցների թիվը և սուլթանի կարգադրությամբ աշարի վրա ավելացրեց ժողովրդական դպրոցների (միլեթի միքթեբիներ) նոր հարկը: Ըստ այդ օրենքի, առանց կրոնական խտրությունների այդ դպրոցներում կարող էին սովորել կայսրության սահմաններում գտնվող բոլոր ազգերի և ժողովուրդների երեխաները: Սակայն այդ դպրոցներում սկսեցին սովորել միայն թուրք երեխաները, իսկ մնացած ազգերը, որոնց թվում նաև հայերը, չնայած հարկը վճարելուն, ստիպված իրենց դպրոցները պետք է պահեին ժողովրդից հավաքված միջոցների հաշվին: Ստացվեց, որ ժողովուրդը դպրոցական հարկ էր վճարում, իսկ պետությունը այդ գումարներից դպրոցները պահելու համար ոչինչ չէր տալիս:

Թուրքիայի պետական ռազմաֆեոդալական և հարկային սիստեմը նստած էր գլխավորապես գյուղացիական մասսաների և արհեստավոր-

144 «Երիտասարդ Հայաստան», 1903, № 4, 30 մայիսի:
145 «Հայրենիք» (Կ. Պոլիս), 1893, 10 դեկտեմբերի:
146 «Նոր դար», 1885, № 71, 7 մայիսի:

ների ուսերին, քանի որ այդ երկրում իսկական արդյունաբերություն չկար։ Տարեցտարի ավելանում էին պետական ապարատի և բանակի վրա ծախսվող գումարները, որոնք պետք է քամվեին ժողովրդից։ Այդ, ինչ խոսք, ստիպում էր պետությանը ավելի շատ հարկեր ու տուրքեր հավաքել ժողովրդից։ Թուրքիայում ապրող գյուղացին շահագրգռված չէր գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացմամբ, քանի որ որքան շատ արտադրեր, այնքան էլ շատ հարկ պետք է տար, և վերջապես, եթե արտադրեր էլ, չկար այն շուկան, որտեղ նա պետք է վաճառեր այն։

Որպեսզի պարզ լինի, թե գյուղացին ինչ ծանր դրության մեջ էր ապրում, բերենք մի քանի օրինակ Վասպուրականի Կարճկանի գյուղացիների հարկային վիճակից։ Այսպես, այդ գավառի Եղեգիս գյուղի դարբնի ութ անդամից բաղկացած ընտանիքը չուներ ո՛չ հող, ո՛չ այգի, ուներ մի խրճիթ, մի գոմ, մի մատակ, մի կով, մի էշ և 15 ոչխար։ Այդ արհեստավորը վճարում էր 4 տղամարդու համար բեդել 168, տան, գոմի և ոչխարների համար խամշուռ 58 և ճանապարհաշինության համար 48 դուրուշ։ Այսպիսով, այդ հողազուրկ դարբնի ընտանիքը տարեկան 388 դուրուշ հարկ էր վճարում[147]։ Վանի նահանգի Ռևու գյուղի գյուղացիներից մեկի ընտանիքը 5 անձից էր բաղկացած (երկու տղամարդ և երեք կին)։ Ընտանիքի հայրը սպանվել էր, սակայն հոր գլխահարկը տղան էր վճարում էր, քանզի վախենում էր հին թղթերը քրքրելիս, պարտքեր դուրս գան։ Այդ ընտանիքը ուներ 480 հոխա կամ 36 փութ ցորենի տեղ, մի խրճիթ, մի գոմ, մի մարագ, մի խոտհարքի տեղ, որտեղից տարեկան 20 բարդ խոտ էր հավաքում։ Ընտանիքը վճարել էր 2 հոգու համար բեդել՝ 84 դուրուշ, հողի համար՝ 50, 3 շինքերի համար՝ 5 և ճանապարհների համար՝ 20 դուրուշ։ 1897 թ. այդ ընտանիքը ցանել էր 240 հոխա կամ 18 փութ ցորեն և ստացել էր 2400 հոխա (180 փութ) բերք, որի համար տվել էր 366 դուրուշ հարկ։ Քաղել էր 10 բարդ խոտ՝ յուրաքանչյուրը 30 դուրուշ արժողությամբ և քանի որ դրամ չէր ունեցել, վերցրել էին 7 բարդը՝ 210 դուրուշ արժեքով։ Այսպիսով, այդ ընտանիքը վճարել էր 735 դուրուշի (ռուսական փողով 56 ռուբլի 80 կ.) հարկեր[148]։

XIX դարի վերջին յուրաքանչյուր ընտանիք միջին հաշվով վճարում էր ռուսական դրամով հաշված 54 ռ. 70 կ. հարկ այն դեպքում, երբ Կովկասում ապրող յուրաքանչյուր ընտանիք վճարում էր 14 ռ. 09 կ.[149]։

---

147 Խաժակ, նշվ. աշխ., էջ 130։

148 Նույն տեղում, էջ 132։

149 Նույն տեղում, էջ 149։

Թուրքիայում ապրող հայերը հարկեր էին վճարում նաև եկեղեցուն։ Պատրիարքարանին վիճակներից և վանքերից ուղարկված հարկը կոչվում էր Մուգաթա։ Պատրիարքարանը քաղաքներից և գավառներից տարեկան ստանում էր 105.430 դուրուշ մուգաթա, որից Վանից՝ 2500, Վարագից՝ 500, Լիմ—Կտուց անապատներից 1000 և Աղբակից՝ մոտ 200 դուրուշ[150]։ Հոգևոր դասը շատ հին ժամանակներից սկսած ժողովրդից պահանջում էր «Օրինականացված» պարհակներ, այսպես, Աղթամար, Լիմ և Կտուց անապատները անհիշելի ժամանակներից սկսած գյուղացիների վրա ունեին «գութանի դուբարա» իրավունքը, ըստ որի գյուղի բոլոր գութանները մի օր պետք է վարեին այդ մենաստանների հողերը ստանալով միայն ճաշ։ Կար նաև «ցորենի դուբարա», որի համաձայն գյուղերի բոլոր տղամարդիկ մի օր ճաշ ստանալով պետք է հնձեին անապատներին պատկանող ցորենի դաշտերը։ Կար նաև «գարու դուբարա», որի համաձայն գյուղի բոլոր կանայք մի օր պարտավոր էին հնձել անապատների գարու արտերը[151]։ Արճակում այդ պարհակները կոչվում էին «Ջուրաբա», որից մեկը «ռեսի դուրաբան» էր, որի ժամանակ գյուղի բոլոր տղամարդիկ ճաշ ստանալով մի օր պետք է հնձեին տանուտերի արտերը։ Գոյություն ունեցող «գութնի դուրաբայի» համաձայն Արճակի յուրաքանչյուր «գութնատեր որպես կանոն իր հյուսնի համար պետք է աշխատեցներ իր վիծկին, մեկ օր՝ իր գութանը և մեկ օր էլ իր սայլով օրան պետք է տեղափոխեր»[152]։ Անապատները և վանքերը հին ժամանակներից ունեին «կաթի տուրքը», ըստ որի յուրաքանչյուր տարի քեմական գյուղերի ոչխարների մի օրվա կաթը պետք է տրվեր վանքին և «եթե այդ քեմական գյուղն վանքեն անչափ հեռու ըլլա, որ զհատն ի վանս բերել կարելի չը լինի, հայնժամ վանուց պաղի հավաքող վարդապետն 'ի գյուղն կը գա և զոչխարս կթել տալեն հետո շինել կաս յուղ և պանիր, զորս գյուղի անասուններով կը փոխադրե»[153]։

Վանքերին և եկեղեցիներին տրվող տուրքերից մեկը ուներ կողոպուտ անունը, որը գանձվում էր չափահաս ննջեցյալներից որպես հոգեբաժին մի եզ կամ մի ոչխար, իսկ եթե չուներ, պետք է դրամ տար[154]։ Իգական սեռի մահացողներից որպես կողոպուտ «երբեմն արծաթեղենքն ալ կառ-

---

150 «Բյուզանդիոն», 1906, թիվ 3069, 6/19 հոկտեմբեր։

151 Ն. Ալայան, Վասպուրական, նշանավոր վանքեր, Ա պրակ, Թիֆլիս, 1912, էջ 89։

152 Սերինեն, նշվ. աշխ., էջ 30։

153 «Նկարագրական ուղեւորություն ի հայաբնակ գավառս արեւելյան Տաճկաստանի», մասն Գ, տեղագրեց Մ. Կ. Միրախորյան, Կ. Պոլիս, 1885, էջ 214։

154 Ն. Ալայան, նշվ. աշխ., էջ 89։

նուն՝ իբրև մեղաց գին, եթե հարուստ է՝ զգեստին ալ կեսն»[155]: Գոյություն ուներ նաև պսակի տուրք, ըստ որի յուրաքանչյուր ընտանիք կազմող եկեղեցուն 3 մեջիթյե տուրք պետք է տար: Այս ասացվածների մեջ չեն մոռնում այն գումարները, որոնք տրվում էին կնունքների, ծնունդների, գերեզմանները օրհնելու և այլ գործերի կապակցությամբ:

Վարագա սարի Ոսկեփակ գյուղի մոտ գտնվող Քեշիշ գյոլի ջուրը պետությունը ամեն տարի վաճառում էր Այգեստանի և Վան քաղաքի մոտ գտնվող գյուղերի բնակիչներին և նրանցից 500 ոսկի ստանում: Անձրևապակաս տարիներին Այգեստանի բնակիչները կանդնում էին դժվարին դրության առաջ: Պետությունը հաշվի չէր առնում ջրի առատ և պակաս լինելը և նախօրոք լճի ջուրը տալիս էր աճուրդով: Մ. Նաթանյանի վկայությամբ «Ամեն գարնան աճուրդի կդրվի լճի ջուրն և սովորաբար 42-էն 60 հազար ղրուշի կծախվի: Առնողին բախտին կմնա շահիլ կամ վնասվել ջրոյն առատության և երկրագործության պետքերին համեմատ»[156]: Այդ լճի ջրին Վանի բնակիչները տվել էին Մրեավ անունը և այն այդիներին էր տրվում մայիս-հոկտեմբեր ամիսներին: Վանի և շրջակա գյուղերի 1500 ք. մ. այգի ունեցողներից յուրաքանչյուրը տարեկան վճարում էր 2 լիրա ջրի տուրք: Քեշիշ գյոլը շատ հին ժամանակներում պատկանում էր Վարագա վանքին: 1864 թ. նոյեմբերի 15-ին Կոստանդնուպոլսից Ե. Արծրունուն գրած Մ. Խրիմյանի նամակում կարդում ենք. «Քեշիշ կյոլ կոչված Վարագա սեպհական լճին աշխարհացույց տախտակ կամ պատկերը Գրիգորիս վարդապետին հետ ղրկեցինք, որպեսզի տեսնաք, հայրենասիրությամբ սուրբ նախանձը գրգռվի, թե ի՞նչպես այսպիսի շահավոր և չնաշխարհիկ կալված մը բռնության ձեռքը բավական տարիներե ի վեր գրավվեր է»[157]: Մ. Խրիմյանը խնդրում է Ե. Արծրունուց՝ լճի «Փրկանաց գինը տալով աղատել և վերստին Վարագա վանքին սեպհական ստացված հաստատել տար»[158]:

Վան քաղաքի բնակիչները բոլոր հարկերը վճարելուց բացի տալիս էին նաև սալյան և քարվանքրա տուրքերը, որպես քահրեղիները մաքրող քյանքյաններին վարձ: Վանում այգիները փորող վարձու բանվորներին անվանում էին սարեկներ, որոնց աշխատանքի դիմաց տանտերը նրանց

---

155 Մ. Կ. Միրախորյան, նշվ. աշխ., էջ 214—215:

156 «Բյուզանդիոն» (Կ. Պոլիս), 1899, № 879, 4/16 սեպտեմբերի:

157 ԳԱՓ-ի արխիվ, Գր. Արծրունու ֆոնդ, վավ. 301:

158 Նույն տեղում:

օրական երեք անգամ սնում էր և բանջողի ժամանակ նրանց տալիս գինի և երկու լավաշ[159]։

Այսպիսով, 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո հայ գյուղացիների վիճակը ավելի վատթարացավ։ Նրանց ուսերին հին հարկերի հետ միասին ծանրացան նորերը, էլ ավելի վատթարացավ նրանց տնտեսական առանց այն էլ ծանր վիճակը։

---

159 «Հայրենիք» (Կ. Պոլիս), 1895, 30 ապրիլի։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՅ–ՔՐԴԱԿԱՆ ԵՎ ՀԱՅ–ԱՍՈՐԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ

Վասպուրականում հայերից բացի ապրում էին մի քանի ազգեր։ Բնակչության ամենամեծ հատվածը հայերից հետո քրդերն էին, ապա՝ ասորիները։ Քրդերը երկու մասի էին բաժանված. մի մասը նստակյաց (ոտայի) քրդերն էին, որոնք ապրում էին գյուղերում, ունեին իրենց տընտեսությունը, այգիներն ու բոստանները և զբաղվում էին գլխավորապես հացահատիկի, բրնձի և ծխախոտի մշակությամբ։ Քրդական ցեղերի մյուս մասը կիսաքոչվորներն էին, որոնք գարնան բացվելու հետ միասին իրենց անասունների հոտերի և ընտանիքների հետ բարձրանում էին Վասպուրականի լեռները և այնտեղից իջնում միայն խոր աշնանը։ Քուրդ ժողովուրդը չուներ իր այբուբենը և դպրոցները, համատարած անգրագետ էր։ Մինչև 1840-ական թվականները քրդական ցեղերը խոտառատ լեռներից իջնելուց հետո «իրենց անհամար ոչխարների և եղջյուրավոր անասունների հոտերը ձմռան խիստ և երկարատև ամիսներին պատսպարում են հայերի մոտ, առանց որևէ վարձատրության»[1]։ Այս իրավիճակը կոչվում էր կշլա։ Սակայն 1830-ական թվականներից հետո քրդական ցեղերը սկսեցին կամաց-կամաց անցնել նստակյաց կյանքի, քանի որ Քրդստանի և քրդական ցեղերի վրա հարձակվող Ռաշիդ փաշան քրդերից «հաղարավորներին ոչնչացրեց, իսկ մյուս մասին ինչպես քաղաքներում, այնպես էլ գյուղերում ստիպեց նստակյաց կյանք վարել»[2]։ Իհարկե, դրանից հետո քրդերը միանգամից նստակյաց կյանքի չանցան, այդ մի քանի տասնամյակներ տևող պրոցես էր, որից հետո նրանց վերնախավը շարունակեց հայ գյուղացիների մի ղգալի մասից խաֆիրային տուրք քամել։

---

1 Խ. Աբովյան, *երկ*, հատ. 8, 1958, էջ 248։

2 Նույն տեղում։

Հայ քրդական հարաբերությունների և քրդական ցեղերի կենցաղի մասին արժեքավոր տեղեկություններ ու փաստեր կան Մ. Տվոտի (Արամյանց) «Քրդերը տաճկաց Հայաստանում» գրքում, որի մեջ ասված է, որ քրդերի մոտ մի դարձվածք կա, ըստ որի «հայերի և քրդերի մեջ խորթ մի մազ կա. կտրվեց այդ մազը, կվերանա երկու ժողովուրդների միջև ամեն մի օտարություն»[3], սակայն թուրքական կառավարության վարած քաղաքականությունը հասցրեց նրան, որ XIX դարի երկրորդ կեսին քրդական ցեղերի ճնշող մեծամասնությունը դարձավ կույր գործիք կառավարության ձեռքին՝ ընդդեմ իրենց հարևանների՝ հայերի. «Քուրդը մի կույր գործիք է,—ասված է այդ գրքում,—օսմանցվի ձեռքին՝ ընդդեմ քրիստոնյաների և ուրիշ-ոչինչ: Հայերին ոչ պակաս կհարստահարվին քրդերը մանավանդ հողագործ մասը»[4]: Հեղինակը իրավացի է, երբ գրում է, որ «օսմանցուն դարերե ի վեր ձգտել է մանացնել քրդերի մեջ ցեղային նախանձախնդրության հոգին և նրանց դարձնել լոկ մահմեդական համայնքներ՝ համախոհ և միատիպ մարգարեի խալիֆի ցեղին հետ (ընդգծումը մերն է— Հ. Պ.)»[5]:

Հեղինակը տիրապետել է քրդերենին, մոտիկից ծանոթ է եղել քրդական ցեղերի նիստ ու կացին և իրավացիորեն գտնում է, որ սխալ է շատերի կարծիքն այն մասին, թե քրդական ցեղերը հաստատուն բնակության վայր չունեն. «Ես կասեմ ընդհակառակը,—գրում է նա,— որ քրդերը իսկական թափառաշրջիկներ չունեն, ինչպես բոշաներն են՝ գնչուները»[6]: Գրքի հեղինակը գտնում է, որ նստակյաց քրդերը գյուղերում շերտավորված են, այնտեղ կա հողատերերի դաս՝ աղաներ և մարաբաներ, վերջիններս «գիշեր-ցերեկ, ամառ-ձմեռ, իր ընտանիքի բոլոր անդամներով կը տանջվի՝ լոկ աղային կշտացնելու համար»[7]:

Ինչպես Արևմտյան Հայաստանում, այնպես էլ Վասպուրականում և այլուր քրդական ցեղերին անվանում էին էլ, իսկ նրանց ցեղապետերին՝ էլ աղասի, բեկ, բեկլար բեկ, աղա, միր, միրիման և այլ անուններով:

Թուրքական կառավարությունը թույլ էր տվել քրդերին զենք կրելու: Մինչև 1890-ական թվականների սկիզբը նրանց զենքերը հին սիստեմի էին, սակայն Համիդյե գնդերի հրապարակ գալուց հետո նրանք կառավա-

---

3 Մ. Տ. Տվոտ (Արամյանց), *Քրդերը տաճկաց-Հայաստանում*, հատ. Ա, ՍՊԲ, 1905, էջ 33:

4 Նույն տեղում, էջ 41—42:

5 Նույն տեղում, էջ 43:

6 Նույն տեղում, էջ 52:

7 Արամյանց, նշվ. գիրքը, էջ 53:

գուբյունից ստացան արտասահմանյան նոր տիպի զենքեր։ Քրդերի հրացաններն էին՝ շեշխան, չաքմաքլի (կայծքարով), էղելի, գարապինա-սեչմելի, վերջինս օգտագործվում էր հիմնականում թուրքական ժամանակ։ Քրդական ցեղերի մոտ կային նաև չիֆթլի, բըշտոֆ և տապանջա տիպի հրացաններ։ Բացի հրացաններից քրդերի մոտ կային դաշույններ, շմշեր կամ շիր, շիման և յաթաղան սրեր, ինչպես նաև մզրախներ (նիզակ)[8]։

Խ. Աբովյանը նշում է, որ քուրդ կինը ընդհանրապես առաքինի էր ու քաջ և նույնպես զինված էր. «Հաճախ նրանք կռվի դաշտ են դուրս գալիս իրենց ամուսինների նման հագնված ու զինված և պակաս սխրագործություն չեն կատարում, քան տղամարդիկ»[9]։ Քրդական ցեղերն, ըստ Խ. Աբովյանի, զենքերից գերադասում են «ատրճանակը, թուրը, վահանը, կարաբինը և բանկարժեք եղեգից կազմված ու ծայր փետուրների մեծ փնջով զարդարված չափազանց գեղեցիկ նիզակը, որից նրանք կարողանում են օգտվել շատ ճարպկորեն»[10]։ Ռուս գիտնական և ճանապարհորդ Պ. Ա. Զիխաշևի վկայությամբ քրդերը շատ քիչ հարկ էին վճարում թուրքական կառավարությանը և զինվոր չէին տալիս բանակին[11]։

Քրդական ցեղերի մեծ մասը կյանքը անց էր կացնում յայլաններում և «առանց լեռների, քուրդի կարծիքով, յուր կյանքը մեռած է։ Նորա համար գերադասելի է կյանքից զրկվելը, քան յուր սիրած լեռներից, և կարծում է, որ յուր լեռնական կյանքը աստվածատուր մի պարգև է»[12]։ Քրդական մի ավանդության համաձայն, երբ աստված ստեղծեց երկիրը, մարդկանց մեծ մասը սկսեց ապրել միայն դաշտավայրերում և «սար ու ձոր երբ տեսան, որ իրենք անտեր մնացին, սկսեցին անչափ լաց լինել, որ նորանց արտասուքից համայն աշխարհը արյունե ծով դարձավ։ Աստված լսեց նրանց լացն ու աղաղակը և ստեղծեց մեզ՝ քրդերիս, որ բնակվեցանք լեռներումը և տեր դարձանք այս սար ու ձորին, նոր դադարեց դուրանց աղաղակը»[13]։ Քրդական ցեղերի մոտ միշտ էլ հարգված էր քաջությունը, արիությունը, քաջ լինելու հանգամանքը, անկախ նրանից, թե քաջություն գործողը ինչ ազգի է պատկանում։ Երբ ամենաաղքատ մարդն անգամ կռվի մեջ քաջություն էր ցուցաբերում, դառնում էր ամենքի հարգանքի առար-

---

8 Նույն տեղում, էջ 175։

9 Խ. Աբովյան, հատ. 8, էջ 225։

10 Նույն տեղում, էջ 257։

11 П. А. Чихачев, Великие державы и восточный вопрос, М., 1970, с. 106.

12 «Լումա», 1903, № 1, էջ 94—95։

13 Նույն տեղում։

կան, բոլորը նրանով էին պարծենում, նա մեծ համարում, հարգանք էր վայելում, հատկապես երիտասարդների շրջանում, նրա մասին երգեր էին հորինվում։ Քրդերի մոտ պատերազմական երգերի մեջ գովեստի խոսքեր էին ասվում պատերազմում աչքի ընկնող հերոսների մասին, գովերգվում էր «հաղթության պսակ տանողը, պատերազմի մեջ քաջությամբ կռվողը և անարգվում, ծաղրի էր մատնվում երկչոտը, վհերոտը, պատերազմի դաշտից փախչողը, նույնիսկ կանայք այդպիսիների գլխին թափում են իրենց անեծքը, ծաղր ու ծանակը»[14]։

Քրդական ցեղերի մեջ կային առանձին խավեր, որոնցից մեկին անվանում էին սաադար, սրանք իրենց համարում էին արաբական մարգարեի ցեղից, ժխտում էին իրենց քուրդ լինելը, բայց քրդական ցեղերի մոտ շեյխեր էին։ Քրդական ցեղերը կոչվում էին աշիրեթներ (քաջաց ցեղ), որոնցից յուրաքանչյուրին կառավարությունը առանձնացրել էր ընդարձակ արոտավայրեր։ Աշիրեթները բաժանվում էին էլեաթների։ Ցեղերի ազնվականներին անվանում էին թոռուներ։ Ցեղերի մեջ կային միրեր (իշխան), բեկեր, աղաներ, որոնք ինչպես նստակյաց, այնպես էլ կիսաքոչվորական ցեղերի ղեկավարներն էին[15]։ Չնայած հայտնի էին յուրաքանչյուր աշիրեթի հողային սահմանները, սակայն այդ ցեղերի մեջ ինչպես հողային, այնպես էլ ցեղապետների միջև եղած թշնամությունների պատճառով շատ ու շատ էին արյունալի կռիվներն ու վեճերը։ Ցեղապետության պաշտոնը քրդերի մոտ ժառանգական էր։

Օսմանյան Թուրքիայում սուլթանը համարվում էր ամենաբարձր պաշտոնյան, նրան համարում էին աստծո ստվերը երկրի վրա, իսկ նրանից հետո կրոնական գործերի ամենամեծ տնօրենը Շեյխ ուլ Իսլամն էր։ Քաղաքների մուսուլման բնակիչները ունեին իրենց իմամները, մուֆտիները և հաքիմները, իսկ գյուղերում բացի մոլլաներից ոչ մի հոգևորական չկար։ Քրդական յուրաքանչյուր աշիրեթ ուներ իր հոգևոր պետը՝ շեյխը։ Քուրդ կրոնավորների մոտ առանձնակի տեղ ունեին սեյիդները և «այն շեյխերն էին կոչվում սեյդա, որոնք մարմնավոր զբաղմունքներից հրաժարվելով՝ քարոզչության միջոցով ձգտում են հասարակությանը օգտակար դառնալ»[16]։ Սեյդաները պետք է լավ տիրապետեին արաբերենին, հմուտ լինեին շարիաթի օրենքներին և անգիր իմանային Ղուրանի սկզբունքները։ Շեյխերը շատ մեծ ազդեցություն ունեին ցեղի վրա և առան-

---

14 «Նոր դար», 1896, № 135, 1 օգոստոսի։

15 Հ. Շահպազյան, նշվ. աշխ., էջ 116—117։

16 «Երիտասարդ Հայաստան», 1904, № 50, 16 ապրիլի, էջ 401։

ձին դեպքերում ավելի ուժեղ էին, քան ցեղապետները։ Քրդական հոգևոր դասի մեջ կային ճգնող անապատականներ (ապիտներ), մոլլաներ, որոնց մեծ մասը անգրագետ և տգետ մարդիկ էին։ Հոգևորականների մեջ կային նաև դերվիշներ, որոնք բոկոտն, գլխաբաց, հերթական շրջում էին ամենուր։ Քրդական շեյխերը իրենց համարում էին արտոնված «մեծ խալիֆներից շատ բարձր առանձնաշնորհումներով և ընդարձակ իրավունքներով, ազատված քաղաքացիական և հպատակության ամեն տեսակի տուրքերից, մինչև անգամ պատժից»[17]։

Սուլթանական կառավարությունը քրդական շեյխերին իր կողմը դրավելու նպատակով ամեն տարի նրանց մի պատկառելի գումար էր տալիս, որը կոչվում էր խմուս։ Յուրաքանչյուր շեյխ տվյալ աշիրեթի հոգևոր պետն էր, հարևան ցեղախմբերում նրան չէին ընդունում։ Աշիրեթների հիմնական զբաղմունքը անասնապահությունն էր՝ ցեղի ապրուստի հիմնական միջոցը։ Աշիրեթի ապրուստի մյուս աղբյուրը հայկական և մնացած գյուղերից բռնի վերցրած հարկերն էին։ Աշիրեթապետը պարտավոր էր հոգ տանել իր աշիրեթի ապրուստի մասին, հարկ եղած դեպքում իր ունևոր ուժերով պաշտպանել նրա իրավունքները։ Աշիրեթում կային թոռուններ (ազնվականներ), որոնք աշխատելը ամոթ էին համարում և պինդ լինելով պատրաստ էին կռվի գնալու, նրանք իրենց արարքների համար չէին պատժվում և «կրնային պատժել, սպանել նույնիսկ մեկը, կրնային դյուղ մը վառել առանց հաշիվ տալու։ Արգելված էր անոր սպանությունը նույնիսկ կռիվներու ընթացքին։ Ան կրնար սպանվիլ միայն թշնամի թոռուն մը, կառավարութենեն կամ հեղափոխականե մը»[18]։

Աշիրեթապետերը և աշիրեթի անդամները պաշտպանում էին իրենց հայ և քուրդ ռայաներին. «Աշիրեթը կրնար ծախու հանել ռայա ները, 20, 50 կամ 100 և 200 ոսկիի, իբրև գերի։ Կրնար նաև զանոնք աքսորել, անոնց ստացվածքը թալանել և նույնիսկ սպանել անպատիժ»[19]։ Աշիրեթը հինելով իր պետի «խղճից», ենթակա ռայաների յուրաքանչյուր ծխից զուռով վերցնում էր 8 կոտ ցորեն, մեկ լիտր յուղ, մեկ լիտր մեղր, 10 նուկի բուրդ, 2 ոչխար, 2 զույգ տափատ, 2 զույգ գուլպա և 5-ից մինչև 200 զուրուշի նվեր[20]։

---

17 Նույն տեղում։

18 Լևոն Զորմիսյան, Համապատկեր արևմտահայոց մեկ դարու պատմության, Ա հատ., 1850—1876, Բեյրութ, 1972, էջ 125։

19 Նույն տեղում։

20 Նույն տեղում, էջ 126։

Հայ առաջավոր մտավորականությունը ցանկանում էր, որպեսզի քրդական ցեղերը նստակյաց դառնան և հայերն ու քրդերը իրար հետ հաշտ ապրեն առանց վիճերի և ընդհարումների։ Մ. Խրիմյանը այդ կապակցությամբ առաջարկից բարեներոգումների իր ծրագիրը, որի մեջ նշում էր, որ 1000, 1500 վրան ունեցող քրդական ցեղերը շատ դեպքերում «ի բնե անտի միշտ թշնամի և անհաշտ հակառակորդներ են միմյանց հետ»[21], որի պատճառով տուժում են և իրենք և նստակյաց հայերը։ Մ. Խրիմյանը զարմանքով գրում է, որ «Տերության երկրին մեջ զինվորական բանակին մոտ, տեղական կառավարության աչքին առաջ ի՞նչպես կը համարձակին նոքա (քրդական ցեղերը— Հ. Պ.) կռվո բանակներ կազմել»[22]։ Սակայն կառավարությանը միշտ էլ խոչնդոտում էր քրդական ցեղերի միավորմանը և հայերի հետ նրանց հաշտ ապրելուն։ Թուրքական պաշտոնյաները քրդական ցեղերից զանազան պատրվակներով մեծ քանակությամբ կաշառքներ էին վերցնում և բնական է, որ նրանց բոլորովին էլ չէր հետաքրքրում, թե ինչպես են քրդական վերնախավի ներկայացուցիչները կեղեքում հայերին։

Քրդական ցեղերը տեր էին ամենալավ արոտավայրերի, նրանք դուրս էին գտնվում Թուրքական կառավարության հսկողությունից, քանի որ զինվորները և ոստիկանությունը գտնվում էին քաղաքներում, ուստի քրդական ցեղերը կառավարությանը միայն ոչխարի տուրք էին տալիս։ Մ. Խրիմյանը առաջարկում էր. «Այո՛, շատ արդյունավոր և շահաբեր կը լինեին նոքա, եթե տեղական կառավարությունք ամեն հոգ ու ջանք տանին նոցա ներկա դրությունը փոխել և իսկապես երկրագործ ժողովուրդ մը կազմել դիրենք, և դժվարին չէ այս»[23]։ Ապա գտնում էր, որ հարստահարիչներ են քրդական վերնախավի մի մասը միայն, իսկ հասարակ քրդին կյանքի նոր ուղիով տանելու համար անհրաժեշտ է նստակյաց դարձնել։ Հիմնականում հարստահարիչներ են քրդերի մեջ «Թոսուն կոչվածները, կամ մանավոր անձինք»[24]։ Նա առաջարկում էր քուրդ հարստահարող վերնախավին փոխադրել այլ տեղ, իսկ նրանց հոծ մասսային նստակյաց դարձնել։ Քրդերին նստակյաց դարձնելու, նրանց հետ լավ հարաբերություններ հաստատելու կողմնակից էր նաև Ա. Զոպանյանը, նա գտնում էր, որ չնայած հայերը ապրում են քրդերի հետ կողք-կողքի, սակայն

---

21 Մ. Խրիմյան, *Ամբողջական երկեր*, էջ 853։

22 Նույն տեղում, էջ 854։

23 Նույն տեղում, էջ 857։

24 Նույն տեղում, էջ 859։

լավ չգիտեն նրանց[25]։ Քրդերի մեջ կան մի շարք արտահայտություններ, ըստ որի «Աւտապ ըժ տին չեդրա» (կրթությունը կրոնից լավն է), կամ «Աւտապ ու հայա նիվե տինա» (կրթությունը որ կա կրոնի կեսն է)[26]։ Ս. Զոպանյանը հանդես եկավ քրդերի հետ բարեկամությունը մերժող Ա. Արփիարյանի դեմ և նշեց, որ քուրդը զինված է և կառավարությունը նրան գործիք է դարձրել հայերի դեմ, այդ պատճառով էլ նրանցից հաճախ կարելի է լսել «բըտա՛ բը գոպալ հառա ջանաթե» (հենվիր գավազանի ուժին, դնա արքայության)[27]։

Վերևում ասվածները, մամուլում հրապարակված հոդվածները, նրանց մեջ արտահայտված մտքերն ու առաջարկությունները քրդերի հետ բարեկամական հարաբերությունների մեջ մտնելու մասին բարի ցանկություններ էին և իրագործվել չէին կարող, քանի որ թուրքական իշխանությունները քրդական ցեղապետերին և շեյխերին իր կողմն էր գրավել և լարում էր հայերի դեմ, ձախողելով երկու ժողովուրդների միջև սկսված բարեկամության փորձերը։

Մինչև 1840-ական թվականների կեսերը Մուսուլից Սղերդ, Բիթլիս և Վան մեծ ազդեցություն ուներ Բեդիրխան բեկը, իսկ Ջեզիրե Բոհտանում, Դավաշում և Մոկսում՝ ազիզ ցեղի ղեկավար խան Մահմուդը, որի աթոռանիստը գտնվում էր Բրջե Բալաք բերդում։ Չնայած վասպուրականում, Բիթլիսում, Մուշում, Դիարբեքիրում՝ սկսած XVI դարի կեսերից հաստատված էր թուրքական իշխանություն՝ իրենց փաշաներով, զորքով և ոստիկանական ուժերով, սակայն այդ վայրերի գլխավոր քաղաքներից դուրս գտնվող գյուղական հոծ բնակչության վրա ավելի շատ ազդեցություն ունեին քրդական բեկերը։

1840-ական թվականներից սկսած քրդական վերնախավի մեջ սկսեց ավելի ակտիվանալ քրդական անկախ պետություն ստեղծելու խնդիրը։ Սկսվեց մի շարժում, որը գլխավորում էին Բեդիրխան բեկը, խան Մահմուդը և Խան Սվդալը, որոնք սկսեցին միավորել քրդական ուժերը՝ ապագա անկախ պետություն ստեղծելու համար։ Այդ պայքարում նրանք նպատակադրվեցին վրացիների միջոցով դիմել Ռուսաստանին, իսկ «Հայերու բաժինը խնդրել տալ ռուսաց ու վրացիների օգնությունը»[28]։ Հաղթանակից հետո Բեդիրխան բեկը պետք է լիներ ապագա անկախ պետության, «կա-

---

25 «Անահիտ», 1900, № 6, 7, 8, ապրիլ, մայիս, հունիս, էջ 188։

26 «Անահիտ», 1900, № 7, 8, 9, ապրիլ, մայիս, հունիս, էջ 188։

27 Նույն տեղում, 1901, № 1, էջ 28։

28 Հ. Շահպազեան, Քիւրդօ-հայ պատմութիւն, Կ. Պոլիս, 1911, էջ 86։

ազավարիչը, որը հայերին խոստացավ տալ «կառավարության տնտեսական գործնի մատակարարությունը»[29]: Ստեղծված պետության զորքի մեջ հավասարապես պետք է ծառայեին և՛ քրդերը և՛ հայերը: Այդ տարիներին հայ-քրդական հարաբերությունները, համեմատած հետագա շրջանի հետ, անհամեմատ լավ էին:

Ըստ դեպքերի ժամանակակից Քոլոզ (Հովհաննես Ամիրզատյան) վարժապետի, քրդական վերնախավը՝ ապստամբություն բարձրացնելու և անկախ պետություն ստեղծելու նպատակով, հավաքվեց Արտամետում. որոշվեց ապստամբել Թուրքական պետության դեմ և անկախություն հռչակել:

Ապստամբությունից առաջ Բեդիրխան բեկը սկսեց դինված ուժերով իրեն ենթարկել քրդական մանր դերեբեյությունները: Սկսվեցին կռիվներ Մոկսի Ավդալ բեկի դեմ և երկուստեք զոհեր եղան. Բեդիրխան բեկը «Մոկաց բերդերու վրա քալելու ժամանակ կը կռվեր քուրդ և հայ արշավողներով, Ապտալ պեյ իր բերդերեն կը պատասխաներ հայ և քուրդ պաշտպանյալներով»[30]: Այս փաստը ասում է այն մասին, որ երկու բեկերի քերթ կամքին ենթարկվելով, ինչպես քրդերը, այնպես էլ հայերը մասնակցում էին այդ անիմաստ կռիվներին, որից օգտվում էր միայն թուրքական կառավարությունը:

Սակայն, ուրքի ելած քուրդ վերնախավի ներկայացուցիչները չհասկացան, որ հարկավոր է իրենց կողմը գրավել հայ ու ասորի բնակիչներին և նրանց ուժերը, որոնք սկսեցին թալանել հայկական գյուղերը, եկեղեցիներն ու վանքերը: Վանի Մուստաֆա բեկը թալանեց քաղաքի Սրարք եկեղեցին՝ տանելով «սպաս թէ ոսկեղէն և արծաթ բովանդակ, ի դանձարան յուր դրաւեաց յափշտակիչն անվաստակ»[31]: Դեպի Վան արշավելու ընթացքում խան Մահմուդը իբրև «ահեղ գազան» գրավեց Ռշտունիքը, որի ընթացքում վիշտը պատեց Վասպուրական աշխարհին. «Զի կործանումն անշուշտ իւրեանց ի ձեռս սոցա տեսաներ»[32]: Ըստ Քոլոզի՝ խան Մահմուդի և նրա ուժերի բոլոր չարագործություններն անհնարին է թղթին հանձնել, քանի որ թուղթը չի բավարարի, իսկ «ծովակն Վանայ չէ բավական լինիլ գրչացն մելան»[33]: Քրդական դինված ուժերը անարգել մտնում էին հայկական գյուղերը և բնակիչներին կողոպտում:

---

29 Նույն տեղում:

30 Նույն տեղում, էջ 81:

31 Մատենադարան, ձեռ. № 9424, էջ 277:

32 Նույն տեղում, էջ 146:

33 Նույն տեղում:

Քրդական զինված ուժերը տերության դեմ ապստամբելով չէին ընդունում 1839 թվականին սուլթանի հրապարակած հրովարտակը (Հաթթը շերիֆ)։ 1845 թ «Արշալույս Արարատյանում» կարդում ենք. «Վան քաղաքին մեջ պատահած խռովությունը կը շարունակվի միշտ, և օրէ օր հառաջանալու վրա է մերձակա քաղաքներուն մեջ ալ, որոնց բնակիչները չեն ուզեր ընդունելու տերության նոր հաստատած քաղաքական բարեկարգությունները (Թանզիմաթ), որ մինչև ցայսօր դեռ գործի դրված չէր այն կողմերը։ Կհաստատեն, թե ապստամբներուն թիվը քանի մը հազար հոգիի կը հասնի, որոնք ամենքն ալ զինվորյալ ի Քարս կքալին եղեր»[34]։ Այս վկայությունից երևում է, որ Բեդիրխան բեկը և խան Մահմուդը նպատակ ունեին, ապստամբություն բարձրացնելուց հետո, շարժվել Էրզրում և ապա Կարս։ Այդ ժամանակ Վանի բերդում կային 200, իսկ քաղաքից դուրս 5—600 թուրքական զինվորներ՝ մի քանի թնդանոթներով[35]։ Վանի փաշան այդպիսի ուժերով չէր կարող ճնշել ապստամբներին, ուստի Էրզրումից Սելիմ փաշայի և Ահմեդ բեյի գլխավորությամբ, Վան բերվեցին նոր ուժեր։ Թուրքական կառավարությունը Վան ուղարկեց Էրզրումի նախկին կառավարիչ Քյամիլին, որը սկսեց ապստամբներին համոզել, թե Թանզիմաթը այդ կողմերում չի կիրառվի, սակայն ապստամբները լսեցին նրան և շարունակեցին իրենց գործողությունները։

Քրդական այդ ապստամբության մասին հավաստի տեղեկություններ կան Ա. Պերպերյանի գրքի մի գլխում. «Յաղագս ազատութեան հայոց բնակելոց ՚ի Վասպուրական, ՚ի Տարօն եւ ՚ի Բագրեւանդ գաւառս ՚ի հարստահարութենէ բարբարոս ազգին մարաց՝ շնորհիվ Մատթէոս պատրիարքին»[36] վերնագրով։ Ապստամբության երկու ղեկավարների մասին այդ գրքում ասված է որ նրանք «հարստահարին զրնակիչս Վանայ և Տարօնոյ և շրջակա գյուղերիցն», իսկ Էրզրումի և Վանի փաշաները կապված էին քուրդ կողոպտող վերնախավի հետ և իրենք «առնունին զբաժինս իւրեանց յաւարէ անտի՝ զոր կողոպտէին նոքա...»[37]։ Մատթեոս պատրիարքը, ելնելով իր ժողովրդի այդ վիճակից, բողոքից Բ. Դռանը ու գտավ, որ եթե Վանի բնակիչները չազատվեն հարստահարություններից, ստիպված կլինեն իրենց ընտանիքներով գաղթել Ռուսաստան[38]։

---

34 «Արշալույս արարատյան», 1845, № 239։

35 Նույն տեղում։

36 «Պատմութիւն հայոց», աշխատասիրութեամբ Աւետիս վարժապետի Պերպերեան, Կոստանդնուպոլիս, 1871, էջ 321։

37 Նույն տեղում։

38 Նույն տեղում, էջ 322։

Քրդական ապստամբության ղեկավարների զինված ուժերի մեջ քշված էին զգալի թվով հայեր: Նրանց էին միացել նաև Մանօղլի Ստեփանը (Աստղ) և Հովհաննես Չալկատրյանը, որոնք ժամանակի գրագետ և ճանաչված անձերից էին: Նրանք համոզված լինելով, որ քուրդ բեկերը կհաղթանակեն, աշխատում էին ապստամբության մեջ ավելի շատ հայեր ներգրավել: Խան Մահմուդի ուժերի մեջ էին նաև Սասունի ծուռ Մուշեղը, Մոկաց Շատտ Ատոմը, Շատախի Մհերը և Ոզմեցին[39]:

Անկասկած, ապստամբներին ավելի շատ հայեր կմիանային, եթե չլինեին հայկական գյուղերի թալանը և ասպատակությունները: Ստեփան Մանոյանը (Մանօղլյան) Վանի բնակիչ էր, կրթվել էր, Կոստանդնուպոլսի իտալական մի վարժարանում, ապա վերադարձել հայրենիք: Նրա նախնիները Վան էին եկել Մուշից և իրենց համարում էին Մամիկոնյան նախարարական տնից սերվածներ. նույնն ասել են նաև Հովհաննես Չալկատրյանի մասին[40]: Այս երկու ազդեցիկ հայերին հաջողվեց ոտքի հանել «Շատախ և Մոկս գավառներու լեռնաբնակ բազմաթիվ հայերը»[41]: Չնայած ապստամբների շարքերում գտնվող այդ երկու և այլ հայերի, երբ ապստամբները շարժվեցին դեպի Վան, ճանապարհին շատ ու շատ «հայ գյուղեր ավերակ եղան, բնակիչները սպանվեցան: Ջարդուրանք տիրեց ամեն կողմ»[42]: Այդ հանգամանքը, անշուշտ, վանում էր հայերին ապստամբությունից և ինչպես հարկն է քրդերի հետ համագործակցելուց: Դեպի Վան արշաված միջոցին խան Մահմուդը պաշարեց 1500 տնտեսություն ունեցող Տեհ գյուղը, սակայն չկարողացավ գրավել: Գյուղի զինված հայերը պատնեշներ կառուցեցին և «մեկ մեկ հրացան ձեռքներին նշան կառնեին, թող չէին տար, որ հրոսակները գեղ կոխեն, սրե անցուցեն»[43]: Տեհ գյուղի հայերի այդ անօրինակ պաշտպանությունը ստիպեց խան Մահմուդին թողնել գյուղի պաշարումը: Նրան հատկապես զարմացրել էր հայ կանանց քաջությունը, որոնք տղամարդկանց «հրացանները կը լցնեին, այլ շատերն Վահան Կույլյան ձեռք բերած աջովն ատեպ հրացան կը կրակեին գետին փռված»[44]: Լեռնականներին դեպի այդ օրհասական կռիվն էին առաջնորդել ռես Խլոն և գյուղի տերտերը: Այդ արշավանքից հետո

---

39 Ս. Տէր Սարգսենց, Շահեն ի Սիպիր, Կ. Պոլիս, 1911, էջ 22:

40 Հ. Շահպազյան, նշվ. աշխ., էջ 86:

41 Լեոն Ճերահյան, Ժամանակակից ընդարձակ քննական պատմություն հայոց (պատմերազարգ), Ա. հատ., Մարսել, 1932, էջ 153:

42 Նույն տեղում:

43 Շահեն ի Սիպիր, էջ 20:

44 Նույն տեղում:

գյուղի բնակիչների մեծ մասը գաղթեց և 1880 թ.-ին այնտեղ 220 տուն հայ կար միայն։ Այդ գյուղի բոլոր բնակիչներն էլ, բացի մայրենիից, խոսում էին նաև քրդերեն։

Բեդիրխան բեկի ուժերը հարձակվեցին Շատախի հումար գյուղի վրա։ Բեկը կարգադրեց ավերել գյուղը, կոտորել նրա բնակիչներին։ Այդ օրերին միայն Թաղ գյուղի բնակիչները դիմադրեցին բեկի ուժերին և «Գլխանց տուն երկու օր կը դիմադրե և կալատի»[45]։

Բեդիրխան բեկը Ջուլամերկի նեստորական ասորիներին բարեկամ ձևանալով, ցանկացավ նրանց իրեն ենթարկել, սակայն ջուլոները այնպիսի ինքնապաշտպանություն կազմակերպեցին, որ զարմացրեց նրան։ Այդ բեկը 1843 թ. հարձակվեց Թաիր, իսկ 1846 թ.՝ Թխում՝ ասորի աշիրեթների վրա։ Քրդական ուժերին շատ մեծ դժվարություններ գնով հաջողվեց ենթարկել նրանց, օգտագործելով ասորիների վերնախավի միջև եղած երկպառակությունները։ Անկասկած, ասորիների վրա Բեդիրխան բեկի հարձակումը հովանավորել է օսմանյան կառավարությունը, որը նրան միաժամանակ հրահրում էր հայերի և եզդիների դեմ։ Նպատակը պարզ էր. այդ ժողովուրդները թող իրարով զբաղվեն, թուլանան, իսկ ինքը ժամանակ կշահի և ապագայում կհպատակեցնի նրանց։ Մոսուլի կառավարիչ Մուհամեդի կարծիքով այդ կռիվների ընթացքում քրդերը և ասորիները «կթուլացնեն իրար և դրանով կթեթևացնեն Քրդստանի լեռներում թուրքական իշխանության հաստատումը»[46]։

Քրդական ուժերը սկսեցին իրենց վայրագությունները Ջուլամերկում և սպանվեցին շատ անմեղ աղջիկներ, կանայք և երեխաներ[47]։ Լեռնականները այդ կռիվների ընթացքում 8000 հոգու կորուստ ունեցան[48]։ Այդ արշավանքին մասնակցում էին քրդական 40 ցեղապետեր և բազմաթիվ պատանիներ ու կանայք քշվեցին Սիրիայի շուկաները և վաճառքի հանվեցին[49]։ Այս բարբարոսությունների մասին ասորիների ղեկավարը՝ Մարշիմոնը բողոքեց Կոստանդնուպոլսի եվրոպական դեսպաններին, այդ մասին տեղյակ պահեց Ներսես Աշտարակեցուն, և սպանվածների ականջներով մի պարկ ուղարկեց Պետերբուրգ։ Այդ դեպքերից հետո Մարշիմոնը

---

45 «Հայրենիք» (Բոստոն), 1922, № 5 (316), մայիս։

46 Курды в войнах России с Персией и Турцией в течение XIX столетия, ист. очерк П. И. Аверянова, Тифлис, 1900, с. 146.

47 Շահեն ի Սիպիր, էջ 104։

48 «Թուրքիո հայերը և իրենց դրացիները», էջ 24։

49 «Նոր դար», 1885, № 71, 7 մայիսի։

հրաժարվեց թուրքական կառավարությանը հարկ վճարելուց և կազմակերպեց 10 հազար քաջարի մարտիկներից բաղկացած մի բանակ[50]:

Օսմանյան կառավարությունը 1847 թ. Օսման փաշայի գլխավորությամբ բանակ ուղարկեց քրդական ապստամբությունը ճնշելու համար և օգտագործեց «բաժանիր որ տիրես» սկզբունքը: Առանց կասկածելու կարելի է ասել, որ թուրքական կառավարության պահանջով Կոստանդնուպոլսի Մատթեոս պատրիարքը գրեց կոնդակ՝ ուղղված Տիգրանակերտի, Բաղեշի, Բալուջի, Կարինի և Վանի հոգևոր առաջնորդներին, որպեսզի հայերը զինվորներ տան թուրքական բանակին և օգնեն քրդական ապստամբության ճնշմանը և դրանով «ղհավատարմութիւն իւրեանց ցուցցեն իրօք առաջի արքայի»[51]:

Օսմանյան կառավարությունը սկսեց զինել հայերին և ստիպեց նրանց կռվի ելնելու քրդական ուժերի դեմ, որոնց մեջ, ինչպես ասվեց, կային ղզալի թվով հայեր: Օսման փաշան գրավեց Մոկսի Աբդալ բեյի բերդերը, ձերբակալեց նրան եղբայրների հետ և ուղարկեց Կոստանդնուպոլիս, որտեղից նրանք աքսորվեցին Ռոդոս կղզին: Թուրքական բանակը այնուհետև գրավեց Ճիղինն, գերեց Բեդիրխան բեկին, որին մայրաքաղաքում կարճ ժամանակ պահելուց հետո ուղարկեցին Կրետե կղզին:

Քրդական ցեղերին հպատակեցնելու ճանապարհին օսմանյան կառավարությունը օգտագործեց նաև հայ հարուստ, Կապան-Մատենի կառավարիչ ակնեցի ամիր Գասպար Արփիարյանին: 1840—50-ական թվականներին Կապան-Մատենում «մեծ քանակութիւնամբ արծաթ կը հանվեր ասկե, բովերը կը կենան և հետքերը կը տեսնվին. դեռ տասն տարի հառաջ կը պեղվեր. այս հանքերու անթիվ գործավորաց, վարպետաց, առևտրականաց, շահադիտաց կարի բազմութիւն մը կը բնակեր հոս Հունաց, Հայոց, և Տաճկաց»[52]: Խարբերդից 8 ժամ հեռու գտնվող Կապան-Մատենը կամ Գյումուշ-Մատենը հանքափորների և հանք մշակողների մի փոքրիկ քաղաք էր, որի հանքերից հանվում էր արծաթ «կապարի ու քարամարցանկի կամ քարարծաթի (մյուր դեսենիկի) հետ խառն, հանքերու մեջ գործողները գլխավորապես հույներ են, իսկ հալեցնողները՝ գրեթե միայն հայ»[53]: Այդ հանքերի վերակացուն էր «ինչպես նաև ան կողմերի տերութեան շատ գործքերու վրա աղնվական ակնցի Գասպար աղան»[54]: Այդ ամիրան

---

50 Շահեն ի Սիպիր, էջ 105:

51 Ա. Պերպերյան, նշվ. աշխ., էջ 322:

52 Գ. Սրվանձտյանց, երկեր, հատ. 2, 1982, էջ 356:

53 «Եւրոպա», 1850, թիվ 4, 22/10 հունվարի:

54 Նույն տեղում:

սկզբից մինչև վերջ գտնվում էր Թուրքական բանակում։ Թուրքական կառավարությունը իր այս վարմունքով երկու բան էր շահում. առաջինը. շարքից հանում էր իր համար ատելի քրդական դերբեյներին և սիրաշահում հայերին։ Ըստ Ս. Պերպերյանի, Օսման փաշան շատ դաժան վարվեց ապստամբների հետ և «բազումք յապստամբացն մատնեցան ՚ի սուր, և մնացեալք ցրուեցան ՚ի կողմանս ռուսաց և պարսից»[55]։

Ապստամբությունը ճնշելուց հետո Օսման փաշան կոչվեց «հաղթանակող Մարաստանի» և նրա ձեռքն ընկան ոչ միայն ապստամբության քուրդ ղեկավարները, այլև Սահփան Մանոյանը և Հովհաննես Չալկաոբրյանը, որոնք աքսորվեցին Կեսարիա, ապա Կապան-Մատեն։ Հովհաննես Չալկաոբրյանի մասին տեղեկություն կա, որ աքսորից հետո «վերջին ատիճանի չքավորության հասավ»[56]։ Օսման փաշան մի պատգամավորություն ուղարկեց լեռնական ասորիների մոտ, որոնց մելիքները չընդունեցին կառավարությանը հարկ վճարելու մասին նրա պահանջները և պատգամավորությանը «ընդունեցին 600 զինյալ մարտիկներով, իսպառ մերժեցին պահանջին և ձեռնունայն նա վերադարձրին ՚ի Բաշկալե»[57]։ Վանից հեռանալուց առաջ Օսման փաշան զինաթափ արեց հայ զինվորներին, կառավարիչ նշանակեց Մուստաֆային, որից պահանջեց կառավարությանը տալ տարեկան 600 հազար դահեկան հարկ[58]։ Սակայն քրդական ապստամբության ճնշումը միաժամանակ թուրքական կառավարությանը և նրա ներկայացուցիչ Օսման փաշային բերեց այն եղրակացության, որ անհրաժեշտ է զսպել նաև հայերին, որոնք դեռևս քնած էին[59]։

Թուրքիայի հայերի հոգևոր պետը՝ Մատթեոս պատրիարքը և Վասպուրականի ու այլ վայրերի հայերը միամտաբար կարծում էին, որ քրդական խոշոր դերբեյներին հպատակեցնելուց հետո հայ ժողովրդի վիճակը կլավանա և այդ նկատի ունենալով քրդական ապստամբության ճնշումը Ս. Պերպերյանը համարել է «Յաղագս ազատութեան հայոց բնակչաց Վասպուրական աշխարհի»։ Իրականում այդ ազատություն չէր, երկրում նորից մնաց նույն չուրը և ջրաղացը։ Թուրքական իշխանությունները ճնշեցին քրդական դերբեյներին, որը շատ ձեռնտու էր իրենց, սակայն չզսպեցին Վասպուրականում եղած մանր ֆեոդալներին, որոնք զինված ուժերով շարունակեցին իրենց վայրագությունները հայերի նկատմամբ,

---

55 Ս. Պերպերյան, նշվ. աշխ., էջ 322։

56 «Արձագանք», 1882, № 41։

57 «Նոր դար», 1885, № 71, 7 մայիսի։

58 Մատենադարան, ձեռ. № 9424, էջ 287։

59 Թորգոմ Գալուստյան, Իրիմյան Հայրիկ, Փարիզ, 1925, էջ 15։

իսկ միամիտ պատրիարքը այդ համարելով ազատություն, գտնում էր, որ հայերը պետք է շնորհակալ և բարեմաղթող լինեն «արքայի և իւրոյն մեծաշուք տերութեան, և ոչն ցնծութեան կատարել վասն ազատութեան ազգիս հայոց՝ ի բռնութենէ...»[60]: Ուսումնասիրությունից երևում է, որ թուրքական կառավարությունը մինչև XIX դարի 50—60-ական թվականները տանում էր քրդական խոշոր վերնախավին շարքից հանելու և նրանց ենթակա աշիրեթներին թուլացնելու քաղաքականություն: Նա բոլորովին էլ նպատակ չուներ պաշտպանելու ո՛չ հայերին և ո՛չ էլ ասորիներին, ընդհակառակը, քաջ իմանալով քրդական աշիրեթների միջև եղած հակասությունները և այդ առիթով մղվող արյունալի կռիվները, վախենալով քրդական ցեղերի միավորումից, միշտ էլ աշխատում էր նրանց պահել անջատ վիճակում: Սակայն XIX դարի երկրորդ կեսից թուրքական կառավարությունը սկսեց արտոնություններ տալ քրդական աշիրեթների ղեկավարներին և նրանց ուղղել հայերի դեմ: Այսպիսով, ճնշելով քրդական խոշոր ֆեոդալներին, կառավարությունը սկսեց մանր ֆեոդալներին զսպված և ենթակա պահելու իր նոր քաղաքականությունը: Սակայն քրդական ցեղապետներից շատերը դժգոհ էին թուրքական կառավարության այդ քաղաքականությունից, նրանցից մեկը ասել է. «Դուն գիտես, որ մենք, քուրտերս, շատ բաժան-բաժան ենք, և՝ ի հարկին, իրարու արյուն կը խմենք, և այս դրութիւնը ստեղծված է մեզ կառավարող պետության կողմե, որմե մենք ալ գոհ չենք, ինչպես գոհ չենք մեր այս կյանքեն»[61]: Այս նույն միտքը հայտնում է քրդական կյանքին քաջածանոթ Մկրտիչ Ավետիսյանը (Թերլեմեզյան) գրելով. «Քուրդը և թուրքը ոևէ իրական համերաշխություն չունին իրար մեջ: Վերջինս մի խորթ օտարական կը ճանաչվի քուրդեն և Ռոմի կոչվի անկե: Քուրդը այդ անուն ամեն անգամ սարսափով և զզվանքով կարտասանե դի ինքն էլ ազատված չէ թուրք փաշաների քամահրե կեղեքումներեն, նա ալ իր կարգին թուրքի կասկածի կենթարկվի հաճախ»[62]:

Թուրքական կառավարությունը XIX դարի երկրորդ կեսից սկսեց ավելի ուժեղացնել հայերին և քրդերին իրար դեմ լարելու քաղաքականությունը: Քրդական բեկերը կողոպտում և հարստահարում էին հայ գյուղերը, վերջիններիս բնակիչները Կոստանդնուպոլսի պատրիարքարանի միջոցով բողոքում էին կառավարությանը, որն իբրև կանոն անուշադրության էր

60 Ա. Պերպերյան, նշվ. աշխ., էջ 323:

61 Յուշեր Արմենակ Եկարյանի, Գահիրե, 1947, էջ 31:

62 Թուրքիայի հայերն ու իրենց դրացիները, էջ 32:

մատնում այդ բողոքները, սակայն առանձին դեպքերում այն հաշվի էր առնում, երբ պետք էր հրապարակից սրբել կառավարության համար անցանկալի այս կամ այն քուրդ մեծավորի։ Այդ վիրահատությունը կատարելու ճանապարհին թուրքական իշխանությունները միաժամանակ հասկացնում էին քրդական վերնախավին, որ այս կամ այն քուրդ բեկին շարքից հանելը կատարվել է՝ ելնելով հայերի բողոքներից։ Այս հանգամանքը, անշուշտ, ավելի էր ուժեղացնում հակամարտությունները հայ և քուրդ ժողովուրդների միջև։

1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Վանում հրավիրվեց քրդական ժողով, որտեղ դրված էր հայերին կոտորելու հարցը, այդտեղ շեյխ Աբդուլլահը ասաց. «Աստծո կամքին հակառակ է այսպես հայերը ջարդել և այս իրադեն ընդ Փադիշահը բռնավոր և անիրավ ըլլալոմն, ոչ միայն հրամանին հնազանդելու չէ այլև նույնիսկ արժանի է գահընկեցության։ Անոր բուն նպատակը նախ քրդերուն ձեռքով հայերը սպանել և հետո բանակին ձեռքով քուրդերը ջարդել տալ է»[63]։ Այս ասելով շեյխը թողեց ժողովը և հեռացավ։ Սակայն դրանից հետո էլ թուրքական կառավարության վարած քաղաքականության պատճառով հայ-քրդական հարաբերությունները ավելի վատացան։

Վասպուրականում ապրում էին քրդական ազգին պատկանող եզդիներ որոնց և քրդերի միջև կրոնական խիստատելություն էր ստեղծվել։ Եզդիներին անվանում էին նաև շամսկի (արաբերեն արև), քանի որ նրանց կրոնը ընդունում էր ինչպես արևի, այնպես էլ լուսնի պաշտամունքը։ Եզդիները պաշտում էին հրեշտակ աստծուն, որին անվանում էին «Մելեք Թաուս», աստծուն համարելով տիեզերքի գերագույն էակը։ Նրանց կրոնի մեջ կային քրիստոնեական և մահմեդական կրոնի տարրերը։ Նրանք հրեշտակին կոչում էին «Մելեք էլ Թաուս» (սիրամարգ հրեշտակ) կամ «Մելեք էլ քունտ» (ամենազոր հրեշտակ) և միաժամանակ պահանջում էին հարգանք տածել սատանայի նկատմամբ։ Եզդիների մոտ կրոնական դասը բաժանված էր մի քանի մասերի 1) Փիր (սուրբ), 2) Շեյխ (պետ առաջնորդ), 3) Կիվվալ (պարող և երգող) և վերջապես Ֆաքիր (սրբերի գերեզմանին ծառայող)[64]։

Վասպուրականում եզդիները ապրում էին հայերի, քրդերի և ասորիների հետ խառն, հիմնականում Մահմուդյե գավառում։ Նրանց թիվը վիլայեթում հասնում էր 307 տնտեսության՝ 2842 շնչով[65]։ Եզդիները խա-

63 «Դրոշակ», 1901, № 4 (115), հունիս։

64 Լևոն Մեսրոպ, Քուրդստան և քուրդեր, ակնարկ, Փարիզ, 1957, էջ 48—49։

65 Вл. Маевский, նշվ. աշխ., էջ 241։

զաղաաներ ժողովուրդ էին, նրանց հարաբերությունները շատ բարեկամական էին ինչպես հայերի, այնպես էլ մնացած քրիստոնյա ժողովուրդների հետ։ Խոսելով եզդիների և հայերի բարեկամության մասին, Խ. Աբովյանը գրում է, որ նրանց համայնքից «ոչ հայից մի բան հափշտակի, բոլորովին կվտարվի համայնքից։ Այդ պատճառով նրանց համար սուրբ և անձեռնմխելի է այն ամենը, ինչ պատկանում է հայ ժողովրդին։ Նրանք ավելի շատ իրենց ունեցվածքը կտան հային, քան թե նրանցից մի բան կը վերցնեն, և նրա ունեցվածքը կպաշտպանեն իրենց արյան գնով»[66]։

Եզդիների թիվը շատ էր Մոսուլում։ 1892 թ. թուրքական կառավարությունը պահանջեց եզդիներից ընդունել իսլամը, սակայն մերժում ստանալով, սկսեց նրանց նկատմամբ իր բռնությունները։ Սկսվեցին բանտարկությունները։ Իր ընտանիքի հետ բանտ նետվեց եզդիների ամենաազդեցիկ մարդկանցից մեկը՝ Միրզաբեկը։ Թուրքական զինված ուժերը Մոսուլի մոտ գտնվող Շեխադի վայրում կործանեցին եզդիների պաշտամունքի առարկան՝ բրոնզե աքլորը և ստիպեցին Միրզաբեկին իր ցեղակամբի հետ ընդունել իսլամը։ Եզդիները ստիպված ձևականորեն ընդունեցին Իսլամը և սկսվեց մզկիթի կառուցումը, սակայն նրանք ներքին կարգով շարունակում էին պաշտել իրենց հին կրոնը։ Եզդիներին նույնպես կառավարությունը արգելում էր զենք կրել և նրանք սրտատրոփ սպասում էին այն օրվան, թե երբ կկործանվի առելի օսմանյան պետությունը և նրանք ազատ կլինեն ճնշումներից։ Եզդիները հակված էին դեպի Ռուսաստանը։ 1830 թ. մայիսի 22-ին նրանց ղեկավար Միրզա աղան Պասկևիչին գրած իր մի նամակում նշում է, որ ռուսական զորքերի առաջխաղացումը ուրախացրել է քրիստոնյաներին, ինչպես նաև եզդիներին, որ ինքը ունի 1500 ձիավոր և 5000 զինվոր և պատրաստ է միանալու ռուսական բանակին[67]։

Վանի վիլայեթում ապրում էին նեստորական դավանանքին պատկանող ասորիներ։ Ասորիները՝ (ջուլոնները) քրդերի նման բաժանվում էին 5 աշիրեթի՝ Թիեր, Թխում, Ջելու, Դեզ և Բազ[68]։ Ե. Լալայանի պնդմամբ այդ անունները առաջացել են համապատասխան հովիտների անուններից։ Ջուլոնները ամփոփված էին լեռներում և չէին ընդունում թուրքական իշխանությունները։ Նրանց աշիրեթները XIX դարի երկրորդ կեսին պետությանը շատ չնչին հարկ էին վճարում, այսպես՝ Թիեր աշիրեթն ամեն

66 Խ. Աբովյան, երկ, հատ. 8, էջ 261։
67 Ավերյանով, նշվ. աշխ., էջ 11։
68 Вл. Маевский, նշվ. աշխ., էջ 226։

տարի կառավարությանը տալիս էր 400, իսկ Ջելում՝ 150 թուրքական լիր[69]։ Լեռնական ժողովրդի աշիրեթների ղեկավարներին անվանում էին մելիքներ։ Այդ քաջ ժողովրդահասավածի երկրի մասին մամուլում տպագրված մի հոդվածում կարդում ենք. «Անդնդախոր ձորեր, ունենալով մեջներնին բյուրավոր ջրոց ընթացքներ, երկնաբարձ ու սրածայր գագաթներ, ղուրկ ամենափոքրիկ սարահարթերե, լերկ ու քարքարոտ տպառաժներ, առանց մատ մը հողի...»[70]։ Ասորիները ենթակա էին իրենց հոգևոր և մարմնավոր պետին՝ Մարշիմոնին, որի կենտրոնատեղին Քոչանիս ավանն էր։ Ըստ Րաֆֆու՝ Մարշիմոնը մի քաջ զինվոր էր «զինվորի բոլոր ազնիվ հատկություններով»[71]։ Լեռներում ապրող ասորիները բոլորն էլ զինված էին, նրանց հարաբերությունները քրդական աշիրեթների հետ թշնամական էին։ Նեստորականների հասարակության մեջ, ճիշտ է, կային դասային հակասություններ, սակայն ելնելով արտաքին վտանգից, այն ավելի մեղմ էր։ Ջուլամերկի ասորիների հայրենիքը կոչվել է նաև Զիլոստան կամ Ասիայի Չեռնոգորիա։ Սկսած 1880-ական թվականներից լեռնականները «վառոդը և գնդակը իրենք էին պատրաստում»[72]։

Ամենայն հայոց կաթողիկոս Ներսես Աշտարակեցին շատ ջերմ հարաբերությունների մեջ էր ասորիների առաջնորդ Մարշիմոնի հետ, որն առաջին անգամ Վան ժամանեց 1856 թ., իսկ հետո նաև 1880 թ. և շատ լավ ընդունելություն գտավ քաղաքի վերնախավի ու բնակիչների կողմից[73]։ Փ. Թերլեմեզյանի հուշերից երևում է, որ 1880 թ. նրա Վան ժամանելու ժամանակ ժողովրդի մեջ տարածվել էր խոսակցություն այն մասին, որ «Մարշիմոնին Փեշով Մկոն (Խրիմյան) է հրավիրել Վան, որ միասին որոշեն իրենց բանելիք գիրքը բռնապետության հանդեպ և համագործակցեն»[74]։ Ասորիների առաջնորդն իր շրջապատի մարդկանց հետ Վանում մնացել է մոտ մի ամիս։

Մամուլում տպագրված մի հոդվածից երևում է, որ Մարշիմոնը երրորդ անգամ մի քանի եպիսկոպոսներով, մելիքներով և ծառաներով Վան է ժամանել 1901 թ. հոկտեմբերին «Իր ժողովրդային կարգ մը խնդիրներու համար»[75]։ Այս անգամ նրա շքախմբի մեջ էր իր 15 տարեկան եղ-

---

69 Նույն տեղում։

70 «Բյուզանդիոն», 1897, 16/29 օգոստոս։

71 Րաֆֆի, Երկեր հատ. 4, 1956, էջ 494։

72 «Նոր դար», 1889, № 99, 23 հունիս։

73 «Լումա», 1904, № 1, էջ 83։

74 Փ. Թերլեմեզյանի հուշերը, թ. 17։

75 «Բյուզանդիոն», 1901, նոյ. 8—21, № 1557։

քորորդին, որը պետք է լիներ նրա ապագա փոխարինողը։ Ըստ նեստորականների մոտ գոյություն ունեցող կարգի «հորովայնե ընտրյալ իրեն հաջորդն ըլլալով ուխտյալ է բնավ միս չուտել և կուսակրոն մնալ»[76]։ Այդ ժամանակ Մարշիմոնի հասակը 60-ից անց էր, և նրա պաշտոնը ժառանգական էր։ Այն պետք է դրավեր ընտանիքի անդրանիկ որդին։ Երբ ցեղի մեջ «կիներին մեկը հղի մնա, այլևս միս չուտեր, մինչև որ զավակը ծնի։ Ծնած զավակը կթե արու է, ա՛լ քանդիդատ մնե մարշիմոնության ու իր կյանքի մեջ երբեք միս չեն կերցներ անոր»[77]։

1880 թ. հունիսի 15-ին Վանից ռուսական փոխհյուպատոս Կ. Կամսարականի գրած զեկուցագրից երևում է, որ Մարշիմոնը եպիսկոպոս Իսաիֆի հետ ժամանել է Վան՝ նույն թվականի մայիսի 20-ին։ Կ. Կամսարականի հետ ունեցած զրույցի ժամանակ նա խնդրել է մարդ ուղարկել ասորիների մոտ քանի որ «անգլիացիները հաճախ են երևում այնտեղ»[78]։ Մարշիմոնը այդ օրերին հանդիպել է նաև Վանում գտնվող անգլիական գեներալ Տրետորին և ցանկացել իմանալ, թե ինչ են մտածում անգլիացիները Թուրքիայի կազմում գտնվող հպատակ քրիստոնյա ազգերի մասին։ Կ. Կամսարականը 1881 թ. գրած իր մի ուրիշ զեկուցագրում Մարշիմոնին անվանում է Սիբիա-խալդական պատրիարք[79]։

1881 թ. սկզբներին քուրդ շեյխ Իբադուլլահը Շամդինանի մոտ գտնվող ասորական մաթրանին ուղարկում է Մարշիմոնի նստավայրը՝ Քոչանիս և առաջարկում միավորվել ընդդեմ Թուրքական կառավարության, սակայն ասորի մելիքները հրաժարվում են միանալ նրան և առաջարկում են միավորվել հայերի հետ, որոնց լուրջ վտանգ է սպասվում ինչպես Թուրքական կառավարության, այնպես էլ նրանց ձեռքին գործիք դարձած քրդական վերնախավի ուժերի կողմից[80]։ Այս որոշման մասին Մարշիմոնը խնդրում է Բարդուղեմիոս առաքյալի վանքի վանահայր Հովհաննես (Կայծակ) վարդապետին՝ տեղյակ պահել Վանի հոգևոր առաջնորդին։ Ըստ Կ. Կամսարականի զեկուցագրի, Մարշիմոնը Վանի հայերից պահանջում է դինել 15 հազար հոգու և իրեն տալ Մարտին տիպի 1000 հրացան։ Կ. Կամ-

---

76 Նույն տեղում։

77 «Արևելք», (Կ. Պոլիս), 1903, 26/9 մայիս։

78 Ռ. Ֆ. Հովնանեխյան, Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը (19 դ. 70—80-ական ԹԹ.), 1965, էջ 337։

79 Նույն տեղում, էջ 339։

80 Նույն տեղում։

սարականի կարծիքով Մարշիմոնը այդ ժամանակ հակված է եղել դեպի անգլիացիները, իսկ նրա մելիքները՝ Ռուսաստանը[81]:

Վանի թուրքական իշխանությունները, անշուշտ, դիտեին հայ ասորական բարիդրացիական հարաբերությունների մասին և վախենալով հայերի պոռթկումից, 2 վաշտով ավելացրին բերդի կայազորը և բերդ փոխադրեցին քաղաքում գտնված զինապահեստները, սկսեցին զենք բաժանել մուսուլման բնակիչներին և ավելի ուժեղացնել հսկողությունը հայկական թաղերի վրա:

1880 թ. լեռնական ասորիները զինված մարտիկներով հարձակվեցին քրդական այն ցեղերի վրա, որոնք թալանել էին պարսկական մի շարք գյուղեր և «վերադարձրին պարսիկներին այն մեծ հարստությունը, որ քրդերը խլել էին նրանցից»: Պարսկական շահը այդ առիթով շքանշանով պարգևատրեց ասորիների իշխանին (հավանաբար՝ Մարշիմոնին— Հ. Պ.)[82]:

Ջուլամերկի Տիար-Տխուպ մասերում քարքարոտ կիրճերի և ծերպերի մեջ ապրող նեստորական ասորիները «կես անկախ դիրք ունին և շրջապատող քուրդերու նման աղատ կյանք են վարում, իսկ ցած տեղերում ապրող ոայան ամենաողորմելի վիճակի մեջ է՝ ստրուկ գրեթե թուրք իշխանավորների և քուրդ կալվածատերերի»[83],— կարդում ենք «Արարատ» ամսագրում: Մարշիմոնի մասին այդտեղ ասված է, որ նա «շատ խելացի և շրջահայաց մարդ է», նրա նիստուկացը շատ պարզ է և անշուք, գլխավոր զբաղմունքներից մեկն է «շախմատի խաղը, որի մեջ վարժ են կաթոլիկոսից սկսած, նրա տան բոլոր անդամները»[84]:

Ասորիների առաջնորդը շատ լավ է իմացել հպատակ քրիստոնյա ազգերի նկատմամբ թուրքական կառավարության վարած քաղաքականությունը և իրեն մոտ եկածներին ասել է. «Ո՞վ էր մեզ՝ ասորիներիս 1842-ին չարաչար կոտորել տվողը— սուլթան Մեջիդը», ապա շարունակել է, որ հաջորդ սուլթանը՝ Համիդը 1876 թ. կոտորեց բուլղարներին և նպատակ ունի «ջարդել, կոտորել և հետզհետե բոլորովին բնաջինջ անել իրանց հպատակ քրիստոնյա ազգերին հավասարապես», սուլթանը զինել է քրդերին «հոտից ցգլուխ այնալի, մարտինի և 16 հարավածանի վենչեստր

81 Նույն տեղում, էջ 340:

82 «Նոր դար», 1889, № 99, 23 հունիս:

83 «Արարատ», 1898, օգոստոս, էջ 394:

84 Նույն տեղում:

փառավոր հրացաններով»[85]: Նրանց միջոցով ցանկանում է կազմակերպել քրիստոնյաների կոտորածները:

Մարշիմոնից հետո լեռնական ասորիների մոտ եկեղեցական ամենաբարձր պաշտոնը մարբանը կամ մետրոպոլիտն էր, որը նստում էր Ջուլամերկից դեպի Վան տանող ճանապարհին ընկած Մար-Իշոյի հինավուրց վանքում: Նրան էին ենթարկվում եպիսկոպոսները և մնացած հոգևորականները: Մարբանը Մարշիմոնի փոխանորդն էր և չնայած «աստիճանով կաթողիկոսից վար է, բայց եկեղեցական պաշտոնով նրանից բարձր է իր նշանակությամբ, քանզի նա է օծում կաթողիկոսին հանդիսավոր ծիսակատարությամբ»[86]:

Ջուլոների քաջ կեցվածքը, նրանց ինքնապաշտպանական կռիվները ոգևորում էին Թուրքական տիրապետության տակ տառապող Վասպուրականի հայերին: Բաֆֆին գտնում էր, որ ասորիների բնակավայրը պատմական Հայաստանի Տմորիք և Կորդուք գավառներն են և հիանալով նրանց քաջագնական բնավորությամբ գրում է. «Ջուլոն մի քաջագնական ժողովուրդ է, որ սկսյալ անհիշելի ժամանակներից, Ջուլամերկի լեռներում պահպանել է իր անկախությունը: Քրդի և Թուրքի իշխանությունը մինչև այսօր այնտեղ մուտք չի գործել»[87]: Ըստ վիպասանի, ջուլոների թիվը այդ լեռներում հասնում էր 50 հազարի և նրանց մոտ ապրում են նաև քիչ թվով հայեր և քրդեր. «Ջուլոները,— գրում է նրանց քաջագործությունների ոգևորված վիպասանը,— զինված մարդիկ են, նրանց կանայք, աղջիկներն մինչև անգամ զենք են կրում»[88]: Բաֆֆին միաժամանակ նշում է, որ Մարշիմոնի «օրինակը մի բացառություն է ամբողջ քրիստոնեական աշխարհում, որ հոգևոր պատրիարքը միևնույն ժամանակ հասարակ զինվոր է, հայրենիքի պաշտպան է»[89]: Բաֆֆին Մարշիմոնին համեմատելով զինվորներ ունեցող Հռոմի Պապի հետ, գտնում է, որ Պապի իշխանությունը «մի կատարելագործված խաբեություն է: Մարշիմոնը զինվոր է, զինվորի բոլոր ազնիվ հատկություններով»[90]:

Ջուլոների երկիրը լեռնային էր, ապառաժոտ և աղքատ: Սարերի այդ ահռելի կույտերի վրա գյուղատնտեսության համար շատ քիչ պիտանի հողեր կային: Սակայն, չնայած այդ վիճակին, նրանք հացահատիկ

85 «Մուրճ», 1906, № 1—2, հունվար-փետրվար, էջ 58:
86 Նույն տեղում, № 4—5, ապրիլ-մայիս, էջ 24:
87 Բաֆֆի, երկեր, հատ. 4, էջ 493:
88 Նույն տեղում:
89 Նույն տեղում, էջ 494:
90 Նույն տեղում:

էին ցանում և ջրովի լեռնալանջերում ունեին պտղաստաս և խաղողի այգիներ, աճեցնում էին բրինձ, ծխախոտ, բամբակ, եգիպտացորեն։ Նրանց այգիներում կային ընկույզ, խնձոր, տանձ, կեռաս, թութ, դեղձ, նուռ, իսկ ծառերի մի մասի վրա փաթաթված վեր էին բարձրանում խաղողի վազերը։ Ջուլոնները զբաղվում էին անասնապահությամբ, պահում էին կովեր, այծեր ու ոչխարներ, մեծ քանակությամբ ջորիներ և ունեին փեթաքներ։ Ձմռան սկզբին Ճանապարհները փակվելուց առաջ լեռնականների տղամարդկանց մի մասը աշխատելու էր գնում Հալեպ, Մոսուլ և Ռուսաստան և վերադառնում էին գարնան բացվելու հետ միասին։ Նրանց բնակավայրերը հեռվից նմանվում էին ամֆիթատրոնի, աններից մեկի կտուրը մյուսի բակն էր։ Դետնափոր տները կառուցված էին գետերի ափերի երկայնությամբ։ Ամռանը և աշնանը այդ լեռնաշխարհում հիանալի եղանակ էր, իսկ ձմռանը՝ սարսափելի։ Ձյան հսկայական պատնեշները թույլ չէին տալիս ջուլոներին ամիսներով իրար հետ շփումներ ունենալ։ Իրար վրա թափված լեռնային հսկա զանգվածները, անդնդախոր կիրճերը արգելում էին թուրքական պաշտոնյաների և ղորքի մուտքը այդ երկիրը, որի պատճառով էլ սկսած շատ հին ժամանակներից ջուլոներն ապրում էին ինքնավար կյանքով, ինչպես Կիլիկիայում լեռնական ղեկ-Թունցիները և Տարոնում՝ Սասունի բնակիչները։

Թուրքիայում ապրող ասորիները բաժանված էին 7 խմբի՝ նեստորականներ, քաղդեա-կաթոլիկներ, Հակոբյաններ, լիբանանյան կաթոլիկներ (մարիոնականներ), սիրիական կաթոլիկներ, քաղդեական յուղերականներ և բողոքականներ, ուղղափառներ[91]։ Ե. Լալայանը պնդում է, որ Թուրքիայում ապրող 863 հազար ասորիներից Վանի նահանգում էին 79 հազարը, որից 41-ը՝ Հեքիարի սանջակի Ջուլամերկ կազայում, որտեղ ասորիները կազմում էին 95 տոկոս, Հեքիարի սանջակում՝ 37, Վանի վիլայեթում՝ 17 տոկոս[92]։ Մամուլում տպագրված մի հոդվածի համաձայն Վանա լճից մինչև Բաղդադ կային կես միլիոն ասորերեն խոսող և 200 հազար քուրդ ասորական՝ խառն լեզվով խոսողներ[93]։ Վանի վիլայեթում ապրող ասորիները, բացի Ջուլամերկից, բոլորն էլ ռայա էին։ Մարշիմոնը հաստատում էր մելիքներին և իրավունք ուներ անգամ նրանց դատելու։ Նա իր համայնքի դատական և կրոնական հարցերի պետն էր, ձեռնադրում էր եպիսկոպոսներին և միայն նրա ձեռքով էր հարկը հանձնվում օսմանյան կառավարության ներկայացուցիչներին։

---

91 Ե. Լալայան, Վասպուրական, ազգագրություն, ասորիներ, Թիֆլիս, 1913, էջ 5։

92 Նույն տեղում։

93 «Նոր դար», 1889, № 99, 23 հունիս։

Վանի ռուսական փոխհյուպատոս Վլ. Մաևսկու կարծիքով ջուլոնները ունեին 5 տոհմ, սակայն Ե. Լալայանը գտնում է, որ նրանք բաժանված էին 7 տոհմի։ Տոհմերը (աշիրեթները) բաժանված էին օջախների կամ տերունդների (կարիլաներ)։ Ջուլամերկում շրջագայած Ե. Լալայանի աչքից չի վրիպել այն հանգամանքը, որ ասորիների մոտ «երեխայի անուրջը լավ մարտիկ դառնալն է, նրա սիրած խաղալիքը՝ աղեղը, որով թռչուններ է որսում։ Թե՛ չափահասների և թե՛ երիտասարդների գոտում խրած է լինում կեռ դաշույնը, զարդարուն արծաթապատ երախակալով, նոր ձևի հրացաններ համարյա ամեն տան մեջ մի քանի հատ կարելի է գտնել»[94]։

Ջուլոնների մոտ դպրոցներ չեն եղել, իսկ ժամասացությունը կատարվել է ժողովրդին անհասկանալի հին սիրիական լեզվով։ XIX դարի վերջին անգլիական միսիոներները այնտեղ բաց արին մի քանի դպրոցներ։ Նրանք Նյու Յորքում և Ուրմիայում սկսեցին գրքեր տպագրել և տարածել ասորիների մեջ։ Կաթոլիկների կրոնը, ինչպես ամենուր, այնտեղ էլ տարածվում էր փայլուն ոսկիներով և ասորիներից շատերը սկսեցին կաթոլիկություն ընդունել «գրավված իրենց առաջարկված փայլուն ոսկիներից, սակայն հենց որ դադարում են իրենց սիրաշահել, վերադառնում են հին հավատին...»[95]։

1880-ական թվականներին ասորիների մոտ առաջին անգամ երևացին անգլիական միսիոներները։ Վերջիններս իրենց աշխատանքը սկսեցին Ուրմիա լճի մոտ ապրող ասորիներից։ 1886 թ. անգլիական միսիոներ միստր Բրաունը հասավ Քոչանիս ավանը, տասնյակ տարիներ ապրեց այնտեղ, նպատակ ունենալով լեռնականներին գրավել անգլիական եկեղեցու կողմը, սակայն նրա պրոպագանդած դաղափարները ջուլոնների մոտ ընդունելություն չգտան, դրանից հետո նա սկսեց անդլերեն լեզվի ուսուցման դասեր տալ Մարշիմոնի տղային և քրոջը, որոնք լավ տիրապետեցին այդ լեզվին[96]։

1896 թ., երբ ռուսական փոխհյուպատոս Վլ. Մաևսկին գտնվում էր Քոչանիսում, Մարշիմոնը և նրա շրջապատի մարդիկ նրան հավատացրին, որ նրանք պատրաստ են ընդունելու ռուսական ուղղափառ կրոնը։ Դրանից հետո նեստորական Ֆոմա Իսոևը անցավ Անդրկովկաս և ցանկացավ ձեռք բերել ջուլոնների համար 40 հազար ռուսական բերդան տիպի հրացան[97]։ 1897 թ. Քոչանիս հասավ ռուսական ուղղափառ եկեղեցու հայրերից մեկը՝

94 Ե. Լալայան, նշվ. աշխ., էջ 16։

95 Նույն տեղում, էջ 18։

96 Вл. Маевский, նշվ. աշխ., էջ 230։

97 Նույն տեղում, էջ 232։

Գևորգին: Այդ հանգամանքը ստիպեց վանի անգլիական կոնսուլին մեկնել Քոչանիս՝ ուսումնասիրելու, թե ռուսական եկեղեցու ներկայացուցչի մուտքը այնտեղ չի՞ վտանգի անգլիացիների քաղաքականության և Ռուսաստանի դիրքերի ուժեղացմանը: 1898 թ. Ռուսաստանից Բոնա Եպիսկոպոսի գլխավորությամբ հոգևոր մի հանձնախումբ մեկնեց Թավրիզ, նպատակ ունենալով սկսել «յուր գործունեությունը Պարսկաստանի Նեստորականների մեջ»[98] և ապա թափանցել Ջուլամերկ:

Թուրքական կառավարությունն, անշուշտ, իր լրտեսների միջոցով տեղյակ էր Ջուլամերկում կատարվող իրադարձություններին: Սուլթանը և նրա շրջապատի մարդիկ ամեն գնով ցանկանում էին իրենց կողմը գրավել լեռնականներին և հետու պահել նրանց եվրոպական և հատկապես ռուսական ազդեցությունից: Թուրքական կառավարությունը Մարշիմոնին իր կողմը գրավելու նպատակով նրան պարգևատրեց շքանշանով և յուրաքանչյուր տարի տալիս էր 400-ից մինչև 500 լիր[99]:

Այսպիսով, ասորի ժողովրդահատվածին իրենց կողմը գրավելու նպատակով իրար հետ մրցում էին եվրոպական, ամերիկյան և ռուսական հոգևորականները և թուրքական իշխանությունները: Սակայն իրականում ասորիների և նրանց ղեկավարի համակրանքը միշտ էլ եղել է Ռուսաստանի կողմը:

Հայ-ասորական հարաբերությունները միշտ էլ բարիդրացիական են եղել, սակայն նրանք ավելի լայն հունի մեջ մտան հատկապես 1840—50-ական թվականներին, կաթողիկոս Ներսես Աշտարակեցու օրոք: Մատենադարանի արխիվային բաժնում են գտնվում ասորիների կաթողիկոսներից Ներսեսի ստացած մի շարք նամակները և նրանց պատասխանները: 1850 թ. մայիսի 21-ին Դիարբեքիրից ասորիների կաթողիկոսին գրած նամակից երևում է, որ նա իրեն համարել է «կաթողիկոս ամենայն ասորոց»: Այդ նամակում կարդում ենք. «Հակոբ ծառայ քրիստոսի և ողորմածութեամբ աստծոյ, կաթողիկոս ամենայն ասորոց պատրիարք և աթոռակալ գերհռչակ սրբոյ Հակոբայ Մծբնայ աստուածընտիր Հայրապետի»: Նամակում Հակոբ կաթողիկոսը տեղեկացնում է Ն. Աշտարակեցուն, որ կաթոլիկները սկսել են թափանցել ասորական բնակավայրերը և ամեն գնով ցանկանում են բնակիչներին իրենց կողմը գրավել: Ապա գրում է, որ իր եղբայրը՝ Նշանը, Անդրկովկասից վերադառնալուց հետո տեղյակ է պահել իրեն Ներսեսի ասածների մասին[100]:

---

98 «Արարատ», 1898, օգոստոս, էջ 395:

99 Вл. Маевский, նշվ. աշխ., էջ 233:

100 Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 153, վավ. № 247:

Դեռևս 1848 թ. սեպտեմբերի 25-ին ասորիների Հակոբ կաթողիկոսի Հովհաննու Մկրտչի վանքից գրած նամակից երևում է, որ ասորիների կաթողիկոսների ֆերմանների ձեռք բերման հարցը լուծվել է մայրաքաղաքի հայ ամիրաների միջնորդությամբ, «բայց միայն սոյն իրացն,— գրում է նա,— հայտ լիցի՝ զի սովորութիւն է մերազնոյս ի հեռու հետէ զի վախճանիլ կաթողիկոսաց մերոց, և ի ընտրութեան նորոց, հրամանագրութիւնք ստանալոյ ձեռամբ ամիրայիցն հայոց, որք ի Պոլիս, ի թագավորեն օսմանեան տրվեն ծանր հատուցմամբ դրամոց և երբեմն միջակ»[101]: Նամակից երևում է, որ ասորիների կաթողիկոս Եղիան 1846 թ. մահացել է և նրա տեղը թուրքական իշխանություններին մեծ գումար տալով նստել է Հակոբ Երրորդը: Ապա Հակոբը գրում է, որ Կոստանդնուպոլիս է ուղարկել իր եղբորը՝ Նշանին՝ «զի՝ ընկալցի զնոյն ձեռամբ պատրիարգի Կոստանդնուպոլսոյ, զոր նա ընկալայ էր հարքունուստ՝ 10 քսակի (5000 դահեկան— Հ. Պ.)»[102]: Սակայն հայոց պատրիարքը ֆերմանը չէր տվել պատճառաբանելով, որ նախկին կաթողիկոսը պատրիարքարանին ունեցած 75 քսակ պարտքից վճարել է 50-ը և 25 քսակ պարտք ունի: Ուստի նոր կաթողիկոսը խնդրում է Ներսես Աշտարակեցուն օգնել իրեն նախկին պարտքը չեղյալ հայտարարելու և ֆերմանը ստանալու գործում: Այնուհետև ասորոց կաթողիկոսը նշում է, որ «անկեալ է աղգս մեր գրեթէ միանգամայն ընդ ծանր պարտիւք» և «երկնչիմ գուցե խռովութիւն ինչ ծագեսցի ի լեռնական ժողովուրդս այս»[103]:

Ինչպես տեսնում ենք հայ-ասորական բարիդրացիական հարաբերությունները շատ հետաքրքիր էջեր ունեն: Նրանք ավելի ջերմացան, երբ 1844 թ. Ներսես Աշտարակեցին Պետերբուրգում եղած ժամանակ նրանց Եղիա կաթողիկոսի նամակը հանձնեց ռուսական իշխանություններին: Քիշինևից 1844 թ. սեպտեմբերի 28-ին ասորիների կաթողիկոսին ուղղած իր նամակում այդ մասին գրում է. «զգիր ձեր եղեալ ի նմին՝ հայտնեցի նմա թէ ասորիք ուղղափառ գոլով միաբան ընդ հայոց՝ յամենայն իրս ողջմիտն հարկադրեալ գտանին լինել օգնական միմեանց, և խնդրեցի միջնորդ լինել մեղ և ի մեր դիմաց խնդրել իւրոյ կայսերական մեծութեան լինել պաշտպան ձեզ ընդդեմ ձերոց հակառակորդաց»[104]:

1850 թ. սկզբներին Սղերդից էջմիածին եկած Հովհաննես քահանան Ներսես Աշտարակեցուն և նրա շրջապատի մարդկանց պատմել է Սղերդի

---

101 Նույն տեղում, թղթ. 138, վավ. № 359:

102 Նույն տեղում:

103 Նույն տեղում:

104 Մատենադարան, ձեռ. № 4585, թ. 12:

հայերի և ասորիների սոցիալական ու քաղաքական ծանր վիճակի մասին, որից հետո էջմիածնի աթոռակալը 1850 թ. փետրվարի 14-ին մի կոնդակ ուղղեց Սղերդի հայերին, որի մեջ ասված է. «Քահանայք ձեր դիտեն կարդալ հայերեն, այլ ժողովուրդ առհասարակ ոչ դիտեն խոսիլ հայերեն և կարդալ, որով հայտնի լինի, թե որ ինչ կարդան այն ևս ոչ հասկանան, որ է մեծ պակասութիւն աղզական, դի ամենեն անարժան է վասն ամենայն մարդկանց ոչ դիտելն դիւր հայրենական լեզուն։ Եւ այդ աններելի հանցանքեն առաջնորդաց ձերոց դի չեն ունեցել հոգացողութիւն վասն ուսանելոյ Ձեր զձեր հայկական լեզուս»[105]։ Հայերին մայրենի լեզուն ուսուցանելու հարցը այսպիսի սրութեամբ դնելուց հետո Ներսես Աշտարակեցին ասում է, որ «թե կան ի քաղաքի ձերում բազմութիւն ժողովրդեան ասորոց որք չեն օտար եկեղեցին հայոց» և նրանց պատգամ է տալիս ասելով՝ «պատվիրան նոր տամ ձեզ, դի սիրեսջիք զմիմեանս» և վերջապես «յուսով եմ թէ ի սիրելն հայոց զաղգն ասորաց նոքա ևս ունին զաղգն հայոց սիրել»[106]։

1850 թ. մարտի 15-ին Թիֆլիսից Տիգրանակերտի հայերին ուղարկած Ն. Աշտարակեցու մի կոնդակից երևում է, որ այնտեղ գտնվող ասորի մի եպիսկոպոսից իմացել է, որ օսմանյան կառավարությունը կառավարական պարգևներ է հանձնել մի շարք հայերի և ասորաց Հակոբ կաթողիկոսին։ Կոնդակում Ներսես Աշտարակեցին նորից երկու ժողովուրդներին հորդորում է միմյանց նկատմամբ չերմ լինել ասելով. «Պատվիրան նոր տամ ձեզ, դի սիրեսջիք զմիմեանս», ապա գրում է, որ նա նամակով խնդրել է Կոստանդնուպոլսի Հակոբ պատրիարքին, որպեսզի նա «ըստ յորումն բազմօք ջանագործեալ առաքինասիրութիւնից եղիցի և սրբազան Հակոբ կաթողիկոսին ասորոց օժանդակ և պաշտպան ըստ ամենայն իւրոյ կարողութիւնից և եղիցի հորդորակ ամենայն մերազնեաց կարողաց, դի հոգ կալցին ընկալնուլ զհրաման սուլթանի վասն շինելոյ ասորոց դմի եկեղեցի ի Կ. Պոլիս»[107]։

Մատենադարանում են գտնվում Ն. Աշտարակեցու երկու նամակները՝ ուղղված ասորիների Հակոբ պատրիարքին (կաթողիկոս), որին անվանում է «կաթողիկոս ասորոց», «Հայրապետ ամենայն ասորոց»։ Նամակներից երևում է, որ Թիֆլիսում Ն. Աշտարակեցին հանդիպում է ունեցել կաթողիկոսի եղբոր՝ Նշանի հետ, որին համարում է «հանճարունակ առաք-

105 Մատենադարան, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 154, վավ. № 165։

106 Նույն տեղում։

107 Նույն տեղում, վավ. № 173։

յալ» և նրան կարողացել է տանել «առ գլխաւոր կառավարիչն տէր փոխարքայն Կովկասեան սահմանաց Նորան պայծառուին կնեաղ Միքայէլ Սիմոնիչ Վոռոնցովին»[108]: Այնուհետև նշում է, որ Նշանը փոխարքային պատմել է այն ծանր վիճակի մասին, որի մեջ ապրում էին ասորիները, նշելով նաև «ի մասին հալածականութիւնից ոմանց եկեղեցեաց ձերոց, ի ձերոց հերձուածոց»: Նամակից երևում է նաև, որ Տիգրանակերտի շրջանում ապրող ասորիները կրոնական չորս ազանդների էին պատկանում (նեստորականներ, կաթոլիկներ, բողոքականներ և եպիսկոպոսականներ) և եվրոպական միսիոներներն ամեն գնով ցանկանում էին թափանցել ասորիների և հայերի մեջ, իսկ այդ անհանգստություն էր առաջացնում ինչպես ասորիների, այնպես էլ հայոց կաթողիկոսի մոտ:

Երկրորդ նամակում, որը նույնպես գրված է 1850 թ. մարտի 15-ին՝ ուղղված Կոստանդնուպոլսի պատրիարքին, նորից կրկնում է այն միտքը, թե «պատուիրան տամ ձեզ, զի սիրեսջիք զմիմիեանս» նշելով «թէ եկեղեցիք ասորոց, զպտոց և հապեշա չեն ըշնամի եկեղեցվոց սրբոց հայոց» և ապա ասում է. «Յաղագս քանզի սրբազան Յակոբ կաթողիկոսն ասորոց ծանուցեալ գտանի որպես և գրեմ, և եղբայր յուր Նշան անուն անձն, հաճեսա և բանաւոր գոլով առեալ առ տէր փոխարքայն Կովկասեան սահմանաց կնեաղ Միխայիլ Սիմոնիչ Վոռոնցովն հայցելով զբարեխոսութիւն կայսերական առ սուլթան օսմանեան վասն պաշտպանութիւն եկեղեցեաց ասորոց բռնաբարելոց 'ի հերձուածողաց իւրեանց:

Մեք եկեալ 'ի Թիֆլիզ յամեն անցելոյ 'ի 11 ապրիլի գտաք զնա ասէն, զոր ընկալեալ առ մեզ 'ի վանք կոչեցեալ բնակարան մեր, այժմ ահա ընկալեալ զպատասխանագիր տէրութիւնէ ռուսաց վերադարձավ այսօր առ եղբայրն իւր, որ ունի փալ և առ ձեզ բարձր սրբազնութեանն ի Կ. Պոլիս ուր գործք վասն նոցա գտանին 'ի կառավարութիւն դեսպանատան քրիստոսասպակ տերութեան ռուսաց»[109]:

Այսպիսով, Թիֆլիս ժամանած ասորիների ներկայացուցիչ Նշանին հաջողվում է Կոստանդնուպոլսի ռուսական դեսպանատուն գրություն ուղարկել այնտեղ ասորական մի եկեղեցի կառուցելու և ասորական եկեղեցիները պաշտպանելու մասին: Այդպիսի մի գրություն է ուղարկում Կոստանդնուպոլսի պատրիարքին նաև Ներսես Աշտարակեցին:

Էջմիածնի և ասորիների պատրիարքի ջերմ հարաբերությունները շարունակվեցին նաև հետագայում: Մոսկվայի ռազմապատմական արխի-

---

108 Նույն տեղում, վավ. № 175:
109 Նույն տեղում, վավ. № 174:

վում գտնվող զեկուցագրերից մեկում նշված է այն մասին, որ ասորիների պատրիարքը արևելյան պատերազմի նախօրյակին էջմիածնին ուղարկած իր մի նամակում նշել է, որ եթե ռուսական զորքը հասնի Վանա լճի մոտ, ապա «35.000 ասորիներ զենք կբարձրացնեն»[110]:

Չնայած 1847 թ. քրդական ապստամբությունը ճնշվեց, սակայն շատ չանցած, նրանք նորից ապստամբեցին: Նրանց զսպելու նպատակով Վան եկած զինվորների համար զորանոցներ չկային և կառավարությունը նրանց տեղավորում էր հայերի և հատկապես աղքատների ընտանիքներում, որը պատճառ էր դառնում շատ անախորժությունների: Իր ձեռագիր աշխատություններից մեկում Ե. Տեկանցը գրում է. «Տեղական կառավարութիւն 'ի պետս նորեկ զորուց հանկարծակի հաներ զհայս 'ի տանց իւրեանց և բնակեցուցաներ զզորս հորոց բազում անկարգութիւնք և անբարոյական դիպվածք պատահեալ վշտացուցանեին զսիրտ իշխանավորաց հասարակաց և աղքատաց»[111]:

Այդ վիճակից դուրս գալու նպատակով Վանի եվրեյները Արևելյան պատերազմի նախօրյակին ստիպված որոշեցին «շինել զորանոց մի յանուն ազգին վասն երթևեկ զօրացն արքունի և անդ պատսպարել զզօրս մինչև ելեալ երթային այլ ուր»[112]: Զորանոցը կառուցվելու էր ժողովրդի հաշվին: Շուտով շուկայում աշխատող արհեստավորների մոտ սկսվեցին խոսակցություններ այն մասին, թե «մեզ չէ պիտոյ շինել զօրանոց և թե ծանր է տուրս այս չկարիմք տալ»[113]: Ժողովրդի մեջ սկսվեցին հուզումներ: Քաղաքի արհեստավորները հավաքվեցին և որոշեցին 4 հոգուց բաղկացած մի ներկայացուցչություն ուղարկել Վանի առաջնորդարան և խոսել այդ մասին: Գործին խառնվեցին թուրքական իշխանությունները, որոնք քաղաքի հայ վերնախավի համաձայնությամբ որոշեցին «աքսորել զպատգամաւորան իբրև յուզիչ և խռովարար ժողովրդեան»[114]: Ե. Տեկանցի վկայությամբ այդ մարդիկ աքսորվեցին, իսկ ժողովրդի միջոցներով զորանոցը կառուցվեց: Սակայն հասարակությունը մնաց անդրդվելի, նրանց ավելի զայրացրեց թուրքական իշխանությունների և հայ աշխարհիկ ու հոգևոր վերնախավի այդ անօրինակ քայլը: Նրանք շարունակեցին պայքարը և ժողովրդի անունից մի հանրագիր ուղարկեցին Հակոբոս պատրիարքին, որի միջնորդության շնորհիվ աքսորյալները 6 ամիս հետո վերադարձան

---

110 ЦГВИА, ф. 1300, оп. 18, ед. хр. 10, Л-7.

111 *Մատենադարան, ձեռ. № 4180, թ. 93:*

112 *Նույն տեղում:*

113 *Նույն տեղում:*

114 *Նույն տեղում:*

Վան։ Զորանոցի կառուցման և նրա շուրջը տեղի ունեցող իրադարձություններին անդրադարձել է նաև Քոլոզ վարժապետը, որն ասել է «որ մինչև զորանոցի կառուցումը Վան եկող թուրքական երթևեկ զորքերի համար հարկ եղավ «Հայկավանցւոց դատարկել տունս աղքատին»[115]։ Քոլոզը նշում է, որ ժողովրդի ընդվզման պատճառը միայն հարկերի ծանրությունը չէր, այլ այն, որ շուտով նկատվեց, թե զորանոցը կառուցող մնծավորները հավաքած դրամների մի մասը «քսակս իւրեանց լնուն»[116]։ Իմանալով այդ մասին, ղայրացած ամբոխը հավաքվում է քաղաքի հրապարակում և ապա՝ հոգևոր առաջնորդի բնակարանի մոտ։ Վանի երևելիները ամբոխին զսպելու նպատակով դիմում են կուսակալին, որի կարգադրությամբ զենքի ուժով ժողովուրդը ցրվում է և նրանցից ոմանք բանտարկվում են[117]։

Այս դեպքերի կապակցությամբ Հակոբոս պատրիարքը Վան է ուղարկում Մ. Խրիմյանին, որը եկեղեցիներից մեկում կարդում է պատրիարքի կոնդակը, սակայն այդ ընթացքում «Իշխանք և կուսակիցք իւրեանց յարուցին շփոթս և աղաղակս, խափանեցին բացատրութիւն Հայր Արծւոյն, յայտ հանդիման անուանեցին զնա խռովարար ազգի և ժողովրդեան, որպես թէ նա հրապուրեալ էր զհասարակութիւն խնդրել զանկումն իշխանաց և նորա աղերսութեամբ տուեալ էր պատրիարքն»[118]։ Երիտասարդ Մ. Խրիմյանին չհաջողվեց «զհրաման պատրիարքին 'ի գլուխ հանել»[119], նա ստիպված թողեց եկեղեցին և հեռացավ։ Այդ կապակցությամբ Ե. Տևկանցը գրում է. «Զի ինքն դառնացեալ ընդ արհամարութիւն և անպատուութիւն անձին ել արտաքս և հասարակութիւն մնացեալ անգլուխ ցրվեցան։ Տեր Պողոսեան տիրացու Մանուկն, որ էր մին 'ի իշխանաւորաց ասէ որոտաձայն արհամարութեամբ ցմկրտիչ վարդապետն հարիւր հատ քեզ պես վարժապետ ձախ կրպանես դուրս կհանեմ, դու ո՞վ ես, որ իշխաններ պաշտօնէ հանելով ուրիշ մարդիկ կհաստատես»[120]։ Դրանից հետո պատրիարքին հարկ եղավ նոր մարդիկ ուղարկել Վան և իր կոնդակը ընդունել տալ։ Այդ իրադարձությունը քաղաքի միջին և արհեստավորական խավի առաջին ընդվզումն էր Վանի հղփացած և ագետ վերնախավի դեմ, որը

115 Մատենադարան, ձեռ. № 9424, էջ 56։
116 Նույն տեղում, էջ 60։
117 Նույն տեղում, էջ 62։
118 Մատենադարան, ձեռ. № 4180, թ. 93։
119 Նույն տեղում, թ. 94։
120 Նույն տեղում։

ժամանակին խեղդվեց նրանց և թուրքական իշխանությունների օգնությամբ։

1853—1856 թթ. արևելյան պատերազմի տարիներին հայ ժողովուրդը շատ տառապանքներ կրեց։ Պատերազմը սկսվելու հետ Վանում գտնվող թուրքական բանակի զորամասերը մեկնեցին ռազմաճակատ։ Դրանից օգտվելով Վանի թուրք վերնախավի անդամներից ոմանք սկսեցին գրգռել մուսուլման բնակչությանը և ցանկացան «կալեալ զդրունս եկեղեցեաց կտրել զմեղ ազգովին»[121]։ Սակայն կուսակալի ձեռք առած միջոցառումները կանխեցին հայերի գլխին կախված կոտորածի վտանգը։ Այդ ժամանկաշրջանի իրադարձությունների մասին են գրված Բարդուղեմիոս առաքյալի վանքի վանահայր Փիլիպոս վարդապետի երկու նամակները։ 1855 թ. մարտի 14-ի նամակում նկարագրված են տեղի հայերի տառապալից վիճակը և տանջանքները «զոր կրեմք ողորմելի հայազգիքս որ եմք ստորացեալ ՚ի ներքոյ դժնդակ տերութեանս օսմանեան. իբր ՚ի նավակի բռնալիր հողմովք երերեալ ՚ի ծովու աշխարհիս»[122], ապա նշվում է քրդական ցեղերի կատարած վայրագությունների մասին. «Վասնզի բարբարոս ազգս այս մարաց վերստին ապստամբեալք են ՚ի տերութենէն օսմանեան և առանձնացեալք ՚ի խորին վայրս դաշտաց և լերանց բնակիչք և առնին ո՛չ սակաւ աւերութիւնս երկրի և քաղաքաց նամանաւանդ ողորմելի ազգիս մերոյ, զորոց աղետից ո՛չ կարեմք ճառել մի ըստ միոջէ»[123]։ Գրում է այն մասին, որ թուրքական պետությունը հարկերը ծանրացնելու հետ միասին բնակիչներից պահանջում է նոր հարկեր։ Միամիտ եկեղեցականը ժողովրդի սարսափների մեղքը միայն քրդական ցեղերի վրա դնելով գրում է. «Քանզի մերս հավաստի նեղութիւնս զոր արդ կրեմք, ո՛չ այնքան ՚ի տերումէն է, որքան ՚ի բարբարոս ազգիս մարաց»[124], ապա շարունակում է. «քանզի տերութեանս օսմանեան այժմեանս նեղութիւննիս, որ առ մեզ ո՛չ այլ ինչ է, եթե ոչ ծանրացումն հարկապահանջութիւնից և այլ իրացն»[125]։

Արևելյան պատերազմի ժամանակ կառավարությունը սկսեց զենքի կոչել քրդերին և նրանց հաջողվեց քրդական աշիրեթների ուժերի մի մասին քշել ռազմաճակատ։ Շատ չանցած, քրդական անկազմակերպ, անմարտունակ ուժերը, հարվածներ ստանալով ռուսական բանակից, լքեցին

121 Մատենադարան, ձեռ. № 9424, էջ 39։
122 Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 176, վավ. № 46։
123 Նույն տեղում։
124 Նույն տեղում։
125 Նույն տեղում։

ապստամբությունը և հետապնդեցին Դրանից հետո 1854 թ. սկսվեց Եզդանշիրի ապստամբությունը։ Ըստ Ն. Մախմուդովի, Եզդանշիրը «հայերի, ասորիների և հույների նկատմամբ տանում էր համերաշխության քաղաքականություն»[126]։ Նրան 1855 թ. հաջողվեց գրավել Բիթլիսը։ Ապստամբների թիվը հասնում էր 30 հազարի, իսկ այլ տվյալներով՝ 100 հազարի։ Նրան էին միացել նաև հայեր, ասորիներ, արաբներ[127]։

Թուրքական պետությունը պատերազմի մեջ էր և հնարավորություն չուներ իր զորքերը ճակատից բերել և կռվել ապստամբների դեմ։ Կառավարության հրամանով այդ ապստամբությունը պետք է ճնշեր Բաղդադի Քեգնամ փաշան, որի ուժերը ապստամբների հետ հանդիպելիս հարված ստացան։ Չեռք բերած այդ հաղթանակը ավելի բարձրացրեց Եզդանշիրի հեղինակությունը, որը սկսեց կապ պահպանել ռուսական կովկասյան բանակի հրամանատարության հետ։ Ապստամբների և թուրքական ուժերի մյուս հանդիպումը տեղի ունեցավ Վանա լճի հարավային ափին գտնվող Պախվանց գյուղի մոտ, որի ժամանակ թուրքական ուժերը 4 հազար զոհ տալով, թողնելին պատերազմի դաշտը։ Դրանից հետո Եզդանշիրը իրեն հռչակեց Բաղդադից Վան ընկած տարածքների իրական տերը և ջարդելով դուրս վռնդեց բոլոր թուրք պաշտոնյաներին։

Քրդական այդ ապստամբության գործին խառնվեցին Թուրքիայի դաշնակից անգլիացիները, որոնք բանակցություններ սկսեցին Եզդանշիրի հետ, խաբեությամբ նրան բանտարկեցին և ուղարկեցին Կոստանդնուպոլիս։ Եզդանշիրի գլխավորած ապստամբությունը ավելի մեծ հաջողություններ կունենար, եթե նա և նրան շրջապատող քուրդ վերնախավը զսպեին քրդական ուժերի մի մասի վայրագ վերաբերմունքը հայկական և ասորական բնակչության նկատմամբ։ Ժողովրդի ծանր վիճակի մասին է հավաստում 1856 թ. նոյեմբերի 23-ին Լիմ անապատից ուղարկված մի համախոսական նամակ, որի տակ ստորագրել էին Վանի առաջնորդ Գաբրիել եպիսկոպոսը և 13 հոգևորական։ Նամակի մեջ նրանք գրում էին. «Այժմ ՝ի պատճառաւ աղքատութենէ ժողովրդոց իւրոց և ինքն է աղքատացեալ և խոնարհեալ ՝ի դուռն չետին չքաւորութեան մինչև անկարող լինել ՝ի հայթհայթութիւնս ապրուստից, և ՝ի դիւտ հնարից ծածկելո զմերկութիւնս աղօթաւոր միաբանութենեան իւրոյ»[128]։ Պատերազմի հասցրած վնասների և կատարված հարստահարությունների մասին նամակում գրե-

126 Ն. Ս. Մախմուդով, Քուրդ ժողովուրդը, համառոտ պատմական ակնարկ, 1959, էջ 119։

127 Ավերյանով, նշվ. աշխ., էջ 149։

128 Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 181, վավ. 372։

լուց հետո նշում են օսմանյան պետության սահմաններում գտնվող հայերի ծանր վիճակը, ասելով. «Եւ գիտելի. զի ՚ի վերայ միւս մասին ազգիս՝ որ օսմանեան հպատակք իցեն՝ յոյս դնել անկարելի է. ըստ որում ամենեքին ենք որպես ՚ի պատճառս երկարաւոր պատերազմաց այնչափ հարստահարեցաք մինչ զի աւուր ապրուստից կարօտ լինել առհասարակ. յոր յաւելաւ և անհնարին սղութեան հացի ո՛չ միայն ՚ի մի և երկուս գաւառս, այլ գրեթե ՚ի Պոնդոսէ և այսր, և աստի յայլ և՛ս հեռաւորս»[129]։

Իրականությունն այն է, որ քրդական ապստամբությունների ղեկավարները, ինչպես 1840-ական թվականներին, այնպես էլ Արևելյան պատերազմի ժամանակ, ապստամբության դրոշ բարձրացնելով ցանկացան իրենց դրոշի տակ առնել հայերին և ասորիներին, սակայն չկարողացան զսպել իրենց զինված ուժերի մի մասին, որպեսզի նրանք չթալանեն հայկական և ասորական գյուղերը, որի պատճառով այդ ժողովուրդների հիմնական մասը չմասնակցեց ապստամբություններին։ Այս երկու ապստամբություններից հետո հայ բնակչությունն ընդհանրապես չմասնակցեց XIX դարի երկրորդ կեսի քրդական շարժումներին։ Սուլթանական կառավարությունը ի վերջո հասավ նրան, որ քրդական աշիրեթներին արտոնություններ տալով, նրանց ուղղեց հայերի դեմ։ Ոգևորված դրանից, քրդական վերնախավը և նրանց զինված ուժերը սկսեցին թալանել հայկական գյուղերը, սպանել և խոշտանգել նրա բնակիչներին։ Այս հանգամանքը, ինչ խոսք, վատթար վիճակի հասցրեց դարերով իրար կողքի ապրող երկու ժողովուրդների փոխհարաբերությունները։

---

129 Նույն տեղում։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Մ. ԽՐԻՄՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ (1850—1860)

Մ. Խրիմյանը (1820—1907) ծնվել է Վանի Այգեստանի Հայնկոյսներ թաղամասի Սղդայու Ջաղդեն արվարձանում, որտեղ ապրում էին զգալի թվով արհեստավոր ընտանիքներ։ Խրիմյանների (Կըրմոց) ընտանիքը քաղաքի ամենահին կտավագործ դերդաստաններից էր։ Սկսած XIX դարի 30—40-ական թվականներից, Վանի կտավագործների դրությունը սկսեց վատանալ։ Եթե մինչ այդ Վասպուրականի բնակիչները հագնում էին միայն տեղական կտավից և շալից գործված հագուստներ ապա այդ ժամանակից էլ սկսած տեղի առևտրականները Կոստանդնուպոլսից Վան տեղափոխեցին եվրոպական ապրանքներ, որի պատճառով տեղական «ապրանքներ վար ընկան, շատ շիլաճիք, չըչիք և կտավագործք սնանկացան, վասնզի սկսան մարդիկ ապրանքների փայլուքենէ խաբվիլ և դիմացկության չհայել, զրամ և հարստություն երկրեն հեռացավ, գնաց Եվրոպա և աղքատություն և սնանկություն տիրեց բնիկ արհեստավորաց և երկրի մեջ»[1]։

Մ. Խրիմյանն սկզբնական կրթությունն ստացել է կտավագործ հորեղբոր՝ Խաչատուրի մոտ, միաժամանակ սովորելով կտավ գործելու արհեստը։ Անկասկած, նրա հորեղբայրը եղել է լավ արհեստավոր, Վանի այն ժամանակվա գրագետ և հայ մատենագրությանը քաջածանոթ մարդկանցից մեկը և իր սանին սովորեցրել է «կարդալ և գրել, փոխ ըսել, շարական երգել»[2]։ *Մ. Խրիմյանի բոլոր կենսագրիները գրում են, որ Խաչատուրը մաքուր վարքի տեր էր։ Հետագայում Մ. Խրիմյանը իր մի բանաստեղծության մեջ նշում է, որ նա եղել է իր համար և՛ հայր և՛ մայր և՛ վարժապետ և՛ դաստիարակ։ Այդ արհեստավորը օրն ի բուն աշխատանքով հազիվ էր կարողանում պահել իր ընտանիքը և մահից հետո չթողեց ոչ մի*

---

1 *Մատենադարան, ձեռ. № 4184, թ. 201։*

2 *Մ. Ս. Գաբրիելյան, Խրիմյան Հայրիկ, Նյու Յորք, 1892, էջ 9։*

ժառանգություն՝ «ոչ ոսկի, ոչ արծաթ, այլ մի աստվածաշունչ և մեր սուրբ նախնյաց մի քանի մատյաններ, զորս հաճախ կարդալ տալով՝ ընտանի լեզվով կը բացատրեր ինձ,— գրում է հետագայում Մ. Խրիմյանը»[3]։ Պատանի Մկրտիչը երբեմն արոտ էր տանում ընտանիքի «գառանց և խոյոց փոքրիկ հոտն ի մարգս և ի մարմանդս Վանա»[4]։ Կտավագործությունը սովորելուց հետո Մ. Խրիմյանը «պարտիզպանական վարժություններ ևս ստացավ. սովրեցավ պատվաստ ընել, տունկեր տնկել և խնամել, և որ ի կարգին»[5]։ Ապա սկսեց զբաղվել ինքնակրթությամբ։ 1841 թ. Մ. Խրիմյանը Կտուց և Լիմ անապատներում էր, որտեղ գնալը կյանքի հետ կապված երիտասարդին չէր տանելու դեպի ճգնավորական կյանքը։ Նա ցանկանում էր այդ անապատներում եղած հայկաբանների մոտ ավելի ամրապնդել գրաբարի մեջ ունեցած իր գիտելիքները և ծանոթանալ այդտեղ գտնվող մատենագիտական գանձերին։ Շուտով նա թողեց անապատները և անցավ Վան, ապա իր երկու ընկերների հետ շուրջ 5 ամիս շրջագայեց Վասպուրականի բոլոր գավառներում, ծանոթացավ հայրենի բնությանը, նրա բերդերի, վանքերի, հուշարձանների և ժողովրդի կյանքին։ Ծանապարհորդության ժամանակ երիտասարդները ականատես եղան, թե ինչպիսի ծանր ու խավար վիճակում էին գտնվում Վասպուրականում ապրող հայ գեղջուկները, որոնք ջալարվում էին թուրք, քուրդ բռնակալների և սեփական հարստահարողների լծի տակ։ 1842 թ. Մ. Խրիմյանը այցելեց Էջմիածին։ Այդ նրա առաջին ծանոթությունն էր Արարատյան աշխարհի հետ։

1847 թ. Մ. Խրիմյանը թողնում է Վանը, մորն ու կնոջը, միակ աղջկան և մի քանի ընկերների հետ անցնում Արևելյան Հայաստան։ Արարատյան դաշտի, Էջմիածնի, Օշականի և Աշտարակի հետ ծանոթանալուց հետո ուղևորվում է Շիրակ, Անի, Ալեքսանդրապոլ, որից հետո՝ Թիֆլիս, Բաթում և Կոստանդնուպոլիս։ Կոստանդնուպոլսում 1848 թ. Մ. Խրիմյանը Խասգյուղի նոր բացված աղջկանց վարժարանի ուսուցիչ էր. ծանոթանում է տեղի մտավորականների և այնտեղ գտնվող «Հայկ դյուցազն» պոեմի հեղինակ Արսեն Բագրատունու հետ, որի ազդեցությամբ գրում է մի քննատեղծություն, տպագրելով այն «Բազմավեպի» 1849 թ. համարներից մեկում։ Կոստանդնուպոլսում Մ. Խրիմյանը սկսում է ընթերցել Վե-

---

3 Հայոց Հայրիկ (1820—1907), մահվան հիսնամյակին առթիվ, գրեց Սիոն արքեպիսկոպոս, Պ. Այրես, 1957, էջ 47։

4 Մ. Ս. Գաբրիելյան, նշվ. աշխ., էջ 8։

5 Նույն տեղում։

նետիկի և Վիեննայի Մխիթարյանների հրատարակած գրքերը։ Նրան հատկապես զարմացնում էր Մխիթարյանների տպարանների աշխատանքը, որոնք տպագրում էին ինչպես հայագիտական, այնպես էլ հին հույն, լատին հեղինակների և եվրոպական գրողների գործերի հայերեն թարգմանությունները։ Այս շրջանում նա ծանոթացավ Ա. Բագրատունու, Հյուրմյուզյանների, Դ. Այվազովսկու, Հ. Գաթրջյանի և այլոց գործերի հետ։ Սակայն Մխիթարյանները գտնվում էին հայրենի երկրից հեռու և կաթոլիկ եկեղեցու հովանավորության ու գաղափարական ազդեցության ներքո։ Նրա մեջ սկսեց հասուն հայրենի Աղթամար կղզում մի այդպիսի միաբանություն ստեղծելու գաղափարը։

Մ. Խրիմյանը, երբ մայրաքաղաքում էր, տեղի էր ունենում 1848 թ. ֆրանսիական հեղափոխությունը, որի գաղափարներն իրենց ազդեցությունն էին ունենում գրականության և արվեստի վրա։ Ճիշտ է, այդ գաղափարները մայրաքաղաքի յուրաքանչյուր խավի մեջ յուրատեսակ գույն ու երանգ էին ստանում, սակայն այդ հոսանքը նոր էր ու թարմ և ընդհանրապես օգնում էր այնտեղ եղած ճահճային մթնոլորտի մաքրմանը։ Մարդկանց մտքերի վրա մեծ ազդեցություն էին գործում նաև եվրոպական համալսարաններն ավարտած հայ երիտասարդները, որոնք սկսել էին մայրաքաղաքում լուսավորական աշխատանք ծավալել։ Դավառից Կոստանդնուպոլիս ժամանած Մ. Խրիմյանի համար, անշուշտ, այդ ժամանակաշրջանի իրադարձությունները նորություն էին և շատ հետաքրքրական։

Մ. Խրիմյանի շրջագայությունները Վասպուրականում, Արևելյան Հայաստանում, Թիֆլիսում և Կոստանդնուպոլսում իզուր չանցան և նրան առատ նյութ տվեցին գրելու և 1850 թ. Կոստանդնուպոլսում հրատարակելու իր «Հրավիրակ Արարատեան» պոեմը։ Հրավիրակը բաղկացած էր չորս նվագից։ Նրա առաջաբանից երևում է, որ պոեմը հրապարակ է եկել այն սիրուց, որ տածում էր նրա հեղինակը դեպի իր հայրենիքը։ Գրքի սկզբում ջերմ խոսքեր են ասված Ա. Բագրատունու և իր գիրքը տպագրող բարերարի հասցեին[6]։

Առաջին նվագի մեջ Հայաստանն է, իր լեռներով, դաշտերով, զուլալ աղբյուրներով և նրա դաշտերում աքնող շինականներով։ Ապա, ինչպես հիանալի կտավ, երևում են Արարատյան դաշտում և նրա շրջապատում անկախության ժամանակներում աշխատող «մատաղագույն և մեղրահամ» կույս աղջիկները, որոնք բանջար են հավաքում։ Այնտեղ արուտի են ելել շինականների անասունները, որոնք տունդարձին առատ կաթ էին պար-

6 Խրիմյան Հայրիկ, *Ամբողջական երկեր*, Նյու Յորք, 1929, էջ 7։

դևում նրանց։ Սակայն իր անկախությունը կորցրած Հայաստանը նախկինը չէ և խոպանի է վերածվել, նրա տարածքով անցած բազմաթիվ հրոսակների շարժի պատճառով։ Հայաստանի մեծ մասը ընկած է Թուրքիայի և Պարսկաստանի տիրապետության տակ, որտեղ հողի աշխատավորը դաշտերում շատ քիչ է սերմանում և քիչ արդյունք է ստանում։ Ժողովրդի դառն կյանքի նկարագրությունից հետո Մ. Խրիմյանը երազում է այն օրվա մասին, երբ իր հայրենիքում չեն լինի բռնավորներ, զորք և պատերազմ, իսկ արհեստի մարդիկ երկաթից ոչ թե պատերազմական զենքեր կձուլեն, այլ աշխատավորներին պիտանի գործիքներ, կվերանան սոցիալական անհավասարությունները[7]։

Հայաստանի հրավիրակը երկրորդ նվագում շարունակում է իր ճանապարհորդությունը Մասիսի ստորոտներից մինչև Էջմիածին, ապա դեպի ավերակների կույտի վերածված մայրաքաղաքը՝ Անի։ Հեղինակը գովեստի խոսքեր է ասում Անիի հին ժամանակների մասին, գովերգում նրա ճոխ ու հիասքանչ շինությունները, ջերմ տողեր նվիրում Բագրատունիների հոյակապ և հոյաշեն մայրաքաղաքի բնակիչներին, որոնք պայքարի ելան Հայաստանը նվաճել ցանկացող բյուզանդական զինված ուժերի դեմ։ Բագրատունիների թագավորության ժամանակ Անիում կառուցվեցին հոյակապ շենքեր, այնտեղ էր գործում հանրահռչակ ճարտարապետ Տրդատը։ Սակայն քաղաքի բնակիչները ելնելով ժամանակի պայմաններից, թողեցին գեղեցիկ Անին և բռնեցին գաղթի ճանապարհը։ Հրավիրակը կոչ է անում իր ժողովրդին՝ չմոռանալ հոյակապ ու հոյաշեն Անին։

Հաջորդ նվագի մեջ հրավիրակը վաղարշապատում է, մտնում է Հռիփսիմեի տաճարը, ապա անցնում Արտաշատ, Խորվիրապ, Օշական, որից հետո՝ Ալարայրի դաշտ և Վասպուրական։ Վերջին նվագում Վան քաղաքն է, նրա Այգեստան արվարձանը, երևում են նրա արագահոս առուները, դիտաբարձ բարդիները, ապա Արտամետ գյուղի ճոխ այգիներն ու բուրաստանները, Ալանց նավահանգստային գյուղի խիտ ծառերը։ Հեռվից երևում է Վարագա լեռը իր վերին Վարագով, որի վրա աճում են սքանչելի ու անմահական ծաղիկներ, այնտեղից սկիզբ են առնում սառնորակ աղբյուրներ, որոնց ջրերը, լեռան լանջերից հոսելով, կյանք են տալիս նրա ստորոտում բազմած բոստաններին և այգիներին։ Այնուհետև Հայաստանի հրավիրակը առաջ է ընթանում դեպի Վասպուրականի գավառները։ Գովում է Ոշականյաց լեռներով ու ծաղիկներով լի աշխարհը, նրա գեղեցիկ և աննման բնությունը, Վանա լճի վրա գտնվող կղզիները և Աղթամարի

7 Խրիմյան Հայրիկ, Ամբողջական երկեր, Նյու Յորք, էջ 36։

հոյաշեն ու հոյակերտ և աշխարհին զարմացնող հուշակավոր տաճարը: Սակայն հրավիրակի հեղինակը, հայ ժողովրդի ապագա կյանքի մասին խոսելով, չի նշում թուրքական բռնակալական սիստեմից նրա ազատագրվելու ճանապարհները: Եվ չէր կարող, քանի որ նրա կյանքը անցել էր մի փոքրիկ քաղաքում, որտեղ օսմանյան բռնակալական սիստեմից ազատագրվելու հարցը այդ ժամանակներում իր սրությամբ չէր դրվում: «Հրավիրակը» հետագայում ունեցավ երկու նոր հրատարակություն (1851, 1876):

1876 թ. հրատարակության ժամանակ հեղինակը պոեմին ավելացրեց հինգերորդ նվագը, որը նվիրված էր Տարոնի աշխարհին, որտեղ դառն դույներով են տոզագրված Լևնկթեմուրի ավերիչ արշավանքները և նրա Սահակի տաճարը փլատակների վերածելու դեպքերը: Սրտառուչ են թարգմանչաց վանքի և նրա մոտ եղած խաչքար գերեզմանների նկարագրությունը: Եթե առաջին 4 նվագների մեջ Մ. Խրիմյանը հանգիստ էր թողել հայ հոգևորականներին և նրանց մասին ոչինչ չէր ասել, ապա այս նվագում ծաղրի է ենթարկում հայ հետամնաց կղերականների բարքերը, նրանցից շատերի դալշելի և ընչաքաղց արարքները:

«Հրավիրակի» հեղինակը հորդորում է հայրենիքից հեռու գտնվող հայերին ամենից առաջ ճանաչել մայր հայրենիքը, նրա լեռները, լճերը, գետերը, պատմական հուշարձանները, զուլալ աղբյուրները և կոչ է անում Հայաստանի զավակներին՝ հիանալ իր ժողովրդի անցյալի լավագույն հիշատակներով և, վերջապես, ապրել այն աշխարհում, որը Հայաստան են անվանում: Պոեմը գրված է հայրենասիրական ջերմ շնչով, այնտեղ սկզբից մինչև վերջ իշխում է հեղինակի սերը իր հայրենիքի նկատմամբ: «Հրավիրակի» հեղինակը պոեմում հանդես է գալիս իբրև իր հայրենիքի՝ Մայր Հայաստանի պատվիրակը, հրավիրում է հայերին գալ Հայաստան, փառաբանում է իր ժողովրդի հերոսական անցյալը և ցույց տալիս իր ժողովրդի դառն ու անագորույն վիճակը: Հայաստանը պոեմում սիրասուն մայր է և հորդորում է իր պանդուխտ զավակներին հիշել Հայաստանը, օգնել նրան նոր կյանքի մեջ մտնելու և թշվառ վիճակից դուրս գալու գործում: Պոեմի հեղինակը Հայաստանին հեռակա ճանաչող չի, այլ շփվելով իր ժողովրդի հետ, քաջատեղյակ է նրա սոցիալական, տնտեսական և քաղաքական վիճակին և ճիշտ է ըմբռնել գավառահայության այն ժամանակի պահանջները:)

Կոստանդնուպոլսից Մ. Խրիմյանը անցավ Երուսաղեմ, ապա 1850 թ. պատրիարքարանի հանձնարարությամբ՝ Կիլիկիա, որպես այցելու և դաստիարակ: Նա մի տարի Սսի դպրոցում ուսուցիչ էր, որը հնարավորու-

թյուն տվեց նրան ծանոթանալ Կիլիկիայի հայաբնակ վայրերի մի մասի հետ։ Մայրաքաղաք վերադառնալով նա կազմեց իր տեղեկագիրը, որը 1855 թ. տպագրեց «Արծուի վասպուրականի» համարներում (3, 4, 5)՝ «Ճանապարհորդութիւն ի Սիս մայրաքաղաքն Կիլիկիոյ» վերնագրով։ Ջնկուցագրից երևում է, որ նա Կիլիկիա է մեկնել «Հնգօք ամօք առաջ» Կեսարիայի վրայով։ Նրան դուր են եկել Կեսարիայի դպրոցները, որտեղ մանուկները «տակաւ տակաւ թոթովէին զմայրենի լեզուն իբր զնորեկ ձագունս ծիծառանց»[8]։ Մ. Խրիմյանին հիացրել էին Տավրոսյան լեռները, նրա կիրճերն ու անտառները, գետերի և գետակների բազմությունը, որոնց եզերքներին «տնկեալ կային հազարամեայ կաղնիք և նոճիք»։ Տեղեկագրի հեղինակը, սակայն, միայն բնության սիրահար չէ, նա խորհելով Կիլիկիայում իր նախնիների ունեցած անկախության մասին, ափսոսալից բացականչում է. «ա՛յ բիւրաւոր լերինք և բլուրք եւ գետք եւ հովիտք և ձորք եւ խուռներամ անտառք Տորոսեան պատմեցեք ինձ այսօր զաշխոյժ քաջագործս Հայկազուն պատանեկաց, որ երբեմն զօրին ազատ էրէոյ շրջեին նրամով 'ի մեջի ձերում»[9]։ Հիանալով Կիլիկիայի, Սսի և նրա շրջակայքի բնության ու հուշարձանների գեղեցկությամբ, երիտասարդ հայրենասերի աչքից չի վրիպում նաև այն, որ Կիլիկիայում թագավորում է «գերութիւն, աղքատութիւն, սով, տառապանք, սարկութիւն, պանդխտութիւն, հալածումն 'ի հայրենեաց, աւերումն աշխարհաց, քանդումն քաղաքաց...»[10]։ Սսում եղած ժամանակ նա ուսումնասիրեց Մայրավանքի ձեռագրերը, որոնցից վերցրած հիշատակարաններից մեկը տպագրեց ամսագրում՝ «Պատմութիւն առման մեծի քաղաքին Սըսոյ հանեալ ի ձեռագիր հիշատակարանաց»[11] վերնագրով։

Լսելով կնոջ, մոր և միակ զավակի մահվան լուրը, Մ. Խրիմյանը 1852 թվականին վերադարձավ Հայրենի Վան։ Ժողովրդի ցավերով տագնապված հայորդին մեծ տենչ ուներ իր ժողովրդին օգնելու, սակայն այդ նա անհնարին համարեց առանց վարդապետական աստիճանի և 1854 թ. փետրվարի 14-ին Աղթամարում վարդապետ ձեռնադրվեց, իր առաջին քարոզի վերնագիրը դնելով «Հովիվ հաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց» ու խոստացավ աղնվապես ծառայել իր ժողովրդին։ Այդ խոստումը դարձավ նրա կյանքի բնաբանը, որով էլ ընթացավ նրա ամբողջ կյանքը։ Այնուհետև ցանկացավ Կոստանդնուպոլսի դպրոցների նմանողությամբ

8 «Արծուի Վասպուրական», 1855, № 3, օգոստոս, էջ 40։

9 Նույն տեղում, № 5, հոկտեմբեր, էջ 66։

10 Նույն տեղում, 1855, № 6, էջ 82—83։

11 Նույն տեղում, էջ 84։

Վանում մի դպրոց բաց անել, սակայն «Աղթամարա միաբանք և վասպուրականի գործի վրա եղողները մերժեցին Խրիմյանին և ծիծաղեցան նորա հույսերուն վրա»[12]։

Տարիների ընթացքում Աղթամարը ս. Ղազար դարձնելու Մ. Խրիմյանի ձգտումը քանի գնաց, այնքան հզորացավ և որոշ ժամանակ անց նա նորից Կոստանդնուպոլսում էր։ Այդ մի ժամանակաշրջան էր, երբ մայրաքաղաքի հայկական համայնքը պայքարի էր դուրս եկել թուրքական կառավարությունից սահմանադրություն ձեռք բերելու համար, որը գլխավորում էին այնպիսի մտավորականներ, ինչպիսիք էին Դ. Օտյանը, Ն. Ռուսինյանը, Ս. Վիշենյանը (Սերվիչե) և ուրիշներ։ Մ. Խրիմյանը բնականաբար չէր կարող անտարբեր լինել մայրաքաղաքի հայ համայնքում կատարվող իրադարձությունների նկատմամբ։ Առաջավոր հայ մտավորականների հետ ունեցած շփումները նրան ավելի մղեցին դեպի ժողովրդի մեջ լուսավորական դաղափարների պրոպագանդան և նրա կոնկրետ իրականացումը։ Սակայն Մ. Խրիմյանի մտահոգության գլխավոր առարկան գավառն էր և այնտեղ ապրող գավառահայությունը։ Գավառը շատ կարևոր էր, քանի որ այնտեղ էին կենտրոնացած հայ ժողովրդի ճնշող մեծամասնությունը, հողի և աշխատանքի հետ կապված մարդիկ։ Գավառում հողը հերկող և նրանից հաց քամող չարքաշ գյուղացին տառապում էր թուրքական, քրդական ու սեփական հարստահարողների ճանկերում, իր ճակատի վրա ունենալով ռայա խարանը։ Հարցն այն էր, որ մայրաքաղաքի հայությունը և նրա մտավորականությունը շատ աղոտ պատկերացում ունեին գավառահայության մասին։

Շատ դեպքերում նրանց ճանաչողականությունն սկսվում և վերջանում էր եվրոպական ճանապարհորդների հրատարակած գրքերով ու հոդվածներով, սակայն այդ ճանապարհորդները տեղում լինելով, կարճ ժամանակամիջոցում հնարավորություն չունեին խորը թափանցել գավառահայության կյանքի բազմապիսի ու բազմաթիվ երևույթների ծալքերը։ Նրանց հանդիպումները թուրք, քուրդ, հայ վերնախավի ներկայացուցիչների հետ չէին պարզում ժողովրդի կյանքի իրական պատկերն իր բոլոր գծերով։ Եվրոպական գիտնականներին և ճանապարհորդներին ամենից առաջ հետաքրքրում էին հանքային հարստությունները, պատմական հուշարձանները, աղգագրական բնույթի նյութերը, վանքերում և մենաստաններում գտնվող հին մագաղաթյա ձեռագրերը, դրամները և ժողովրդի մասին եղած վիճակագրական տվյալները։ Այդ է պատճառը, որ Եվրոպայում

12 «Արաքս», 1888, գիրք Բ, էջ 75։

նրանց հրատարակած գրքերը ընդհանուր առմամբ շատ կարևոր լինելով հանդերձ, հեռու էին հայ և մնացած ժողովուրդների վիճակի ճշգրիտ պատկերը տալուց։ Մ. Խրիմյանը հիանալի գիտեր հայրենի բնաշխարհը և ժողովրդի անապորոշ վիճակը։

Կոստանդնուպոլիս հասնելուց հետո Մ. Խրիմյանը Գում Գաբուի մայր եկեղեցում կարդաց իր առաջին քարոզը և այն լսողների մեջ տեսնելով արքունի վառոդապետ Հովհաննես պեյ Տաոյանին ասաց. «Ո՛վ արհուճի վառոդապետ, հու ամբարած վառօդեդ ինչ մըն ալ հայաստանցի հայերուն տուր, որ գործածենք մեր թշնամիներուն դեմ», ապա դառնալով դեպի արքունի Ճարտարապետ Կարապետ Պալյանը, ձայնեց. «Ո՛վ արհուճի ճարտարապետ, բա՛վ է, որ սուլթանաց համար պալատներ շինես, եկո՛ւր ինձ Հայաստան տանիմ, հոն մեր նախնեաց ավերակներ շատ կան, եկո՛ւր նորոգե՛ մեր փլած և կիսավերակ ամրոցներ, բերդեր և պալատներ»[13]։

1858 թ., Վարագում գտնված ժամանակ, երբ Մ. Խրիմյանը լսեց Պալյաններից Նիկողայոս Պալյան Ճարտարապետի մահը, Հայնկոյաններ եկեղեցում կարդացած իր քարոզում ասաց, որ այդ Ճարտարապետը հանդիսացել է իր ամառգրի «մեծ բարերարը», նրան անվանեց «քաջարվեստ պալատաշեն», Վարագի տպարանին «մեծ գումար շնորհող»։ Ն. Պալյանի մասին «Արծիվի» մեջ տպած մի հոդվածից երևում է, որ մայրաքաղաքում եղած ժամանակ Մ. Խրիմյանը հաճախ է այցելել արքունի Ճարտարապետների բնակարանը և նրանց պատմել Հայաստանում ապրող իր ժողովրդի Ճարտարապետական դժհարների մասին։ Լսելուց հետո Ն. Պալյանը ասել է. «Պիտի հաջողե՞ բախտն արդյոք, որ ատ կիսականգուն ավերակաց բարձրաշեն կամարները եվրոպական Ճարտարութեամբ նորոգեի...»[14]։

Գում Գաբուի եկեղեցում գտնվող թուրքական արքունիքից կախում ունեցող այդ երկու ամիրաները գավառահայ վարդապետի այդ խոսքերը լսելուց հետո դառնում են դեպի նա և ասում. «ատանկ մի խոսեր, զմեզ խայտառակե՞լ կուզես»[15]։ Իր կարդացած մի այլ քարոզում, գավառահայության ցավերին ու պահանջներին քաջատեղյակ, Մ. Խրիմյանը հայտարարել է. «Ելեք, ելեք Հայկա զավակունք, առեք սուր ու հրացան, վառոդ ու գնդակ, երթանք աշխարհ Հայաստան, զի տառապյալ հայ ժողովուրդը ձեզի կը սպասե ակնդետ»[16]։

---

13 Հայկ Աճեմյան, Հայոց Հայրիկ, հատ. Ա, Թավրիզ, 1929, էջ 214։

14 «Արծուի Վասպուրական», 1858, № 3, էջ 70—71։

15 Հ. Աճեմյան, նշվ. աշխ., էջ 214։

16 Նույն տեղում, էջ 215։

Մ. Խրիմյանի քարոզների, նրա աշխատությունների հայրենասիրական շնչի և հայրենանվեր գործունեության մասին ջերմ տողեր են գրել Ղ. Աղայանը, Ղ. Ալիշանը, Րաֆֆին, Ավ. Իսահակյանը, Գր. Զալխուշյանը և շատ ուրիշներ։ Գր. Զալխուշյանի ճիշտ բնութագրությամբ «Հայրիկի մասին ինչքան գրվեցին անվայել բաներ, Հայրիկը հայրիկ մնաց։ Նրա քանքարը նրա ժողովրդականությունը անմահացրին նրա անունը»[17]։ Իրավացի է Կ. Տուրյանը իր գրած մի հոդվածում, երբ ասում է. «Հայրիկ իր կյանքով, իր գործունեությամբ և իր ձգտումներով կը վերաբերի ընդհանուր հայ ժողովրդյան»։ Այնուհետև նա նրան համարում է. «ժողովրդի դգացմանց կենդանություն տվող, նորա բարոյական և մտավոր վերածնության, նորա ինքնաճանաչության և նորա սրտի ամենափափուկ թելերուն զարկ տվող կենդանի ամենամեծ լծակն...»[18]։

1855 թ. հունիսից մինչև 1856 թ. մայիս ամիսը Կոստանդնուպոլսում լույս տեսավ Մ. Խրիմյանի «Արծուի Վասպուրական» ամսագիրը։ Մ. Խրիմյանը, անկասկած, մայրաքաղաքում ուներ իր հակառակորդները. այդ մասին «Մասյաց Աղավնիի» 1856 թ. օգոստոսին նրա տպագրած մի նամակում ասված է, որ Արծիվը «ըստ ուժի իւրում մաքառեաց եւս ընդ հակառակորդսն, որք կամեցան յանդիման կալել արգելու զթռիչ մեր դմտանել ի դեմ եղեալ լաստաիայտն»։ Այդ նույն համարում «Մասյաց Աղավնին» քաջալերական խոսքեր ասելով Մ. Խրիմյանի մասին, գրում է, որ «իր հայրենասիրական կարգե դուրս եռանդն ու անուշ գրվածքները միշտ սիրելի եղած են ազգիս և մեզ»[19]։ Ամսագրի տիտղոսաթերթի վրա Մ. Խրիմյանը գրել է. «Արծուի Վասպուրական, թռուցեալ հայրենասեր թեւօք Յարծրունի գահէն ի Վանտոսպ, հրատարակեալ հայրենասիրութեամբ Մկրտիչ վարդապետի Խրիմեան վանեցւոյ, հատոր առաջին, Կոստանդնուպօլիս, ի տպարանի երից եղբայր Ամրասեան, 1855—ՌՅԴ»։ Անդրանիկ համարի հայտարարության մեջ նշելով մամուլի և լուսավորության նշանակության մասին, դնում է նաև իր հավատամքը. այն է՝ «աղաղակ բարձեալ զոչեմք հառաչանօք, Հայաստա՜ն, Հայաստա՜ն»[20]։ Սակայն պանդխտության մեջ գտնվող խմբագիրը իր խոսքն է ասում իր հեռավոր հայրենիքի մասին և ցանկանում գրել «զնորին նախնի ճոխ բարգաւաճութեանցն, զվերջին դժբախտ վիճակացն, զհայրենաշէն քաջացն հայոց,

17 Գր. Զալխուշյան, Մտքեր, խոհեր, դեմքեր, Թիֆլիս, էջ 90։

18 «Հանդես ամսօրյա», 1892, № 8, օգոստոս, էջ 247։

19 «Մասյաց աղավնի», 1856, սեպտեմբեր, էջ 229։

20 «Արծուի Վասպուրական», 1855, № 1, էջ 3։

դառաքինի հարցն հոգևոր և որ այն ինչ առ հայրենիսն վերաբերեին»[21]։ Իր ընթերցողներին ամսագրի տնօրենը ասում է, որ շրջելով Հայաստանով մեկ, պես-պես ծաղիկներ է հավաքել և նպատակ ունի այն հասցնել հայ մանուկներին «նախաբարբառ լեզվավ» հրատարակվող մի ամսագրի միջոցով։ Առաջին համարը մի կոչ է իր ժողովրդի ցրված զավակներին՝ հայրենիք վերադառնալու մասին, ապա տպագրված է «դրաբար եւ աշխարհաբար լեզուին վրա» վերնագրով մի հոդված, որի մեջ դրվատելով դրաբարը, միաժամանակ գտնում է, որ պետք է այնպես անել, որ «կամաց կամաց աշխարհաբար լեզուն՝ պարզ ու յստակ դրաբարին մօտենայ եւ առհասարակ հայոց ազգին գործնական եւ դիւրին հասկընալու լեզու մը ըլլա»[22]։ Շեշտելով դրաբարի հարուստ լեզու լինելու հանգամանքը, նա միաժամանակ չի մոռանում նշել, որ նրանից միայն «ուսումնականներուն դասը օգուտ կը քաղե, հասարակութեյուն բոլորովին անճաշակ մնալով կը զրկվի անոնց քաղցրութենեն»։ Սակայն ժողովրդի ականջին խիստ անախորժ է և անհաճո է այժմյան աշխարհաբար լեզուն, առաջարկում է զրել նաև տեղական բարբառներով, սակայն այնպիսի զգուշութեյամբ, որպեսզի «երկրորդ բանը փնտրելով՝ առաջինը չկորսնցընել»[23]։ Վերջապես գրաբարով հանդես եկած երկու «հրավիրակների» հեղինակը գտնում է, որ պետք է անցնել աշխարհաբարի, ասելով. «Հասարակութեյան օգուտ մտածելով՝ հարկ կստիպե, որ քաղաքականութեյան, արվեստից վերաբերեյալ գրքերը աշխարհիկ լեզվով գրվին պարզ ու մաքուր ոճով։ Այս պարզութեյունը ավելի կը վայելե ամսաթերթից և լրագրաց հրատարակիչներուն»[24]։

Այնուամենայնիվ, այդ տարիներին Մ. Խրիմյանը գտնում էր, որ զարգացնելով աշխարհաբարը, չպետք է հրաժարվել դրաբարից։ Հետագայում, շատ չանցած, երբ ամսագիրը Վարագա վանքում էր, Գ. Սրվանձտյանցը հանդես եկավ «Հանդես հակառակութեանց հայոց գրաբառ և աշխարահաբառ լեզվաց» հոդվածով, որի մեջ աշխարհաբարին գրաբարի որդին համարելով, լրիվ պաշտպանեց աշխարհաբարը։ Գրաբարը պահանջում է աշխարհաբարից մտնել «քարերու մեջ, գնա ամայի դաշտեր, այնտեղ ծնա ես զքեզ», աշխարհաբարը գրաբարին համարելով «ծեր զառամյալ» գտնում է, որ նա պետք է թաղվի, քանզի մարդկությունը միշտ սիրում է նորը. «գլորվեցավ քո անիվ. թեպետ հայր, բայց դու արդեն ինկար,

---

21 Նույն տեղում։

22 Նույն տեղում, էջ 12—13։

23 Նույն տեղում, էջ 14։

24 Նույն տեղում, էջ 15։

Երբոր դիս ծնաւ»[25]: Վերջում եզրակացնում է. «գնա մտիր եկեղեցին, դռնից դուրս մելներ, այն բավական համարե. քո իշխանութիւնն ու սահմանդ եկեղեցին է միայն»[26]: Այս նշանակում է, որ Մ. Խրիմյանը և նրա աշակերտները 1860-ական թվականների սկզբներին վերջնականապես անցել էին աշխարհաբարի կողմը:

Ամսագրի երկրորդ համարում տպագրված «Երկրագործության կենցաղօգուտ արհեստին վրա» հոդվածում նշվեց, որ եվրոպական երկրները ավելի քիչ հողեր ունենալով լավ մշակությամբ ավելի շատ բերք են ստանում, իսկ Արևմտյան Հայաստանի հողերը մնացել են կորդացած ու ամայի, անմշակ, ապա նշում է, որ պետք է բամբակ և կանեփ ցանել և նրանցից լավ կտավ գործել: Եվրոպացիները տանում են Հայաստանի բուրդն ու մազը, որը լավ կլինի տեղում մշակել և վերջապես ամոթ է համարում «Եվրոպայի շաքարով իր բերանը քաղցրացնել» երբ կարելի է ճակնդեղ մշակել: Առաջարկում է հողերը ոռոգելու համար ջրհան գործիքներ օգտագործել, իսկ Վանում Շամիրամի առվի «ջրերը ամենն ալ կը վազեն, կերթան զոր և անօգուտ ծովը կը թափին»[27]: Ամսագիրը հորդորում է գյուղերում ստեղծել երկրագործական ընկերություններ:

1855 թ. հոկտեմբերին Մ. Խրիմյանը գրում էր. ամսագիրը դեռևս շատ թույլ է, «առ այժմ հազիվ հազ Պօլսեն մինչև Հյուսքուտար թռչելու կարողություն ունեցավ»[28]: Մ. Խրիմյանը գտնում էր, որ իր նպատակը այնտեղ հասատաւուելը չէ, այլ ամսագիրը պետք է Հայաստան փոխադրվի, «այսինքն Վասպուրական գավառին հարմարագույն և ապահով վանքի մը մեջը»[29]: Մ. Խրիմյանի երազանքն էր անցնել Վասպուրական, օգնել Տարոնի, Վասպուրականի «գավառներուն անտերունչ ժողովրդոց. և այնչափ գյուղացի մանկտիներուն, որոնք ոչ դպրոց մի, ոչ դաստիարակ ունին»[30]:

Կոստանդնուպոլսին հրաժեշտ տալուց առաջ իր ամսագրի 12-րդ համարում Մ. Խրիմյանը գրեց. «Դարձ արծույն պանդխտելոյ 'ի Բիւզանդիոնէն յաշխարհն իւր հայրենի Վասպուրական» և ապա՝ «Թռիր Արծուիդ իմ պանդուխտ, շատ եղեւ քեզ կալ այդչափ յօտարութեան, թռիր ի Վասպուրական հայրենիդ. դիր զբոյն քո անշարժ ի ծոց միոյ մենաստանի, որ

---

25 «Արծուի Վասպուրական», 1862—63, թիվ 2, էջ 52—53:

26 Նույն տեղում, էջ 59:

27 Նույն տեղում, 1855, թիվ 2, էջ 30:

28 «Արծուի Վասպուրական», 1855, № 5, հոկտեմբեր, էջ 79:

29 Նույն տեղում:

30 Նույն տեղում, էջ 80:

ախորժ թուի քո հանդարտ եւ անփառասէր բարուդդ»[31]: *Այնուհետեւ մի բանաստեղծության մեջ, որը, հավանաբար, պատկանում է Մ. Խրիմյանի գրչին, հաստատապես ասվեց. «Ժամ եհաս Արծուդդ իմոյ թըռչել յերկրէ օտարութեան»*[32]:

Սակայն Մ. Խրիմյանի բաղձանքը միայն ամսագրի հրատարակելը չէր. նա շատ վաղուց էր նկատել, որ հայ ժողովրդի կրթական օջախները գտնվում են հայրենիքից դուրս: Նա անչափ ոգեւորված էր Մխիթարյաններ եւ Լազարյանների դպրոցներով: Նրան շատ էր դուր եկել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը: Սակայն այդ ուսումնական հաստատություններն իր ժողովրդի համար մեծ աշխատանք տանելով, հեռու էին մայր Հայաստանից: Նա տենչում էր իր հայրենի Վասպուրականում ամսագիր, տպարան և առաջավոր դպրոց ունենալու մասին: Ուստի նա ամեն ջանք գործադրեց Բոսֆորի ափերից տպարանը և ամսագիրը Վասպուրական տեղափոխելու համար: Նրա տենչանքը Վանի ծովակի ալիքներով ողողված Աղթամար կղզին էր: Իմանալով գավառից մայրաքաղաք եկած վարդապետի նպատակների մասին, Կոստանդնուպոլսի մտավորականների մեծ մասը ոչ-ջունում էին նրան:

1856 թ. աշնանը Մ. Խրիմյանը շարժվեց դեպի Վասպուրական, նավի վրա ունենալով փաթեթավորված երկու տպագրական մեքենա, տառեր, թուղթ և այլ հարմարանքներ: Շուտով նա Տրապիզոնում և ապա՝ Վանում էր: Պատմության մեջ առաջին անգամ հայերին XVI դարի սկզբներից ծանոթ Գուտենբերգի գյուտը պետք է իր բույնը գտներ Բզնունյաց լճի ափերին: Այս մի հրաշք էր, որին առաջին անգամ պետք է ականատես լիներին ինչպես Արևմտյան Հայաստանի, այնպես էլ Վասպուրականի բնակիչները: Մ. Խրիմյանի այդ դժվարին ճանապարհորդության մասին «Մեղուն» գրեց, որ նա Վան է մեկնել նոյեմբեր ամսին, հաշվի չնստելով ձմռան խստության հետ և «իբրև նոր Կյուբեմպերկ՝ աշխարհի լուսավորության ջահը իր առաջին ձգած ճյունները և սառերը կոխկրտելով» հասավ Վան—Վարագ[33]: *Հասնելով Վան, նա ներկայացավ Գաբրիել արքեպիսկոպոսին և հայտնեց իր նպատակը՝ Աղթամարը վիճետիկի վերածելու և այնտեղ տպագրություն ու դպրոց հիմնելու մասին: Տեղապահից մերժում ստանալով, Մ. Խրիմյանը հասավ նրան, որ Հակոբոս պատրիարքը նրան կոնդակով Վարագա վանքի վանահայր նշանակեց՝ հանձնելով նրան վանքի*

---

31 Նույն տեղում, էջ 181:

32 Նույն տեղում, էջ 192:

33 «Մեղու», 1859, թիվ 28, 10 հոկտեմբերի:

կալվածքների տնօրինությունը։ Կոնդակը Վարագա վանքը անկախ էր համարում Վանի հոգևոր առաջնորդարանից, և նրա առաջնորդին իրավունք էր տալիս գույքյան ունեցող եկեղեցական կանոնների համաձայն տնօրինելու վանքի բոլոր գործերը։

Դեպի ժողովուրդ, ժողովրդի մեջ և նրա համար՝ այս էր Մ. Խրիմյանի հիմնական նպատակը և նա իր բոլոր աշխատություններում և քարոզների ժամանակ դիմում էր հավաքվածներին «ժողովուրդ հայոց» բառերով։ Ճիշտ է նկատել Րաֆֆին, որ «նա ժողովրդի մարդն էր և ժողովրդի համար ծնված»[34]։ Սակայն Վանի երևելիների մի մասը այնտեղ ստեղծված ճահճային մթնոլորտում իրենց ավելի լավ էին զգում և սկսեցին հակառակվել նրա ծրագրերին։ Երբ Մ. Խրիմյանը առաջին անգամ տպագրական մեքենաներով երևաց քաղաքում, տեղի աղաներից մեկը ասաց. «Եկեր կը խոսե, կը խոսե, ես էլ կըսեմ ինչ է. քանի մը փետ-փետուր բերեր լեցուցեր և մամուլ, մամուլ կը կանչե»[35]։ Նրանք նույնիսկ իրենց կողմնակիցներից պահանջեցին Մ. Խրիմյանին և նրա համախոհներին վանքի պարսպից ներս չթողնել։ Չնայած դրան, 1857 թ. Մ. Խրիմյանը իր շրջապատի մարդկանց հետ մեծ շուքով մուտք գործեց Վարագ և սկսեց իր հայրենանվեր գործունեությունը։

Վարագա լեռը ուներ Գալիլեյա և Աստղկան բերդ կատարները։ Այդ լեռան վրա էր Վերին Վարագը, որի մոտ կար երկու փլված եկեղեցի, որտեղից բխում էր գրողներին և պոետներին ներշնչող Ապատանջաներ կոչվող աղբյուրն իր զուլալ, քաղցրահամ և արծաթափայլ ջրով։ Լեռան ստորոտում էր Շուշանց գյուղը և նրանից ոչ հեռու գտնվող Ուրբաթ առուն, որի մոտ գտնվող հարթավայրի վրա տարին մեկ անգամ ձիարշավ էր կազմակերպվում[36]։ Ներքին Վարագը գտնվում էր համանուն լեռան արևմտյան լանջին, որին թուրքերը տվել էին Եատիքիլիսե (յոթ եկեղեցի) անունը։ Իսկապես, Վարագա վանքը իրար կողքի կառուցված յոթ եկեղեցիներից համաշափ ձուլված մի փունջ էր։ Վանքի մոտ գտնվող լեռնահովիտը կոչվում էր Գյալի, որտեղ կար «հազարերանգ ծաղիկների ծիծաղ, ջրերի կարկաչ, հավքերի դայլայլ, զեփյուռ զովաշունչ, ոչխարների հոտ և հովվի սրինգ...»[37]։ Լեռան վրա աճում էին գեղեցիկ ծաղիկներ՝ մեռոն ծաղիկը, կարմիր կակաչը, խավրծիլը, ինչպես նաև «ծաղկանց նազելի»

---

34 Րաֆֆի, երկեր, հատ. 5, 1956, էջ 189։

35 «Ազատամարտ» (Կ. Պոլիս), 1910, № 313, հունիս 20/3 հուլիս։

36 Մ. Խերանյան, Երկար, երկար մի հանապարհ, 1983, էջ 96։

37 Նույն տեղում, էջ 167։

ֆիներբուկը։ Վարագա վանքից երևում էր Վանա ծովակը, իսկ նրա կատարից՝ մշուշի միջից՝ Արարատ լեռը։

Հենց այս վանքում 1858 թ. հունվարին լույս տեսավ «Արծուի Վասպուրական» պարբերականը, որի առաջաբանում Մ. Խրիմյանը գրեց. «Այո՛, Արծուիդ իմ դու, իբրեւ մեռեալ համարեցար, ՚ի սրտից բազմաց եւ սիրային զաչկունս քո կափուցեալ ննջեցեր այսչափ առ շիրմօք ոսկերաց Արծրունւոյն Սենեքերիմայ, զարթիր զարթիր ՚ի կնքեալ գերեզմանեդ, աւասիկ ձայն տան եւ կոչեն զքեզ Ազգասիրացն կաճառք ՚ի հարութիւն»[38]։

1857 թ. սկզբներին Մ. Խրիմյանը վանքի ողջ միաբանության հետ միասին սկսեց և 3 ամսվա ծանր ու համառ աշխատանքով կառուցեց վանքի ժառանգավորաց դպրոցի շենքը և տպարանը։ Վարժարանը ուներ ննջարան, խոհանոց, սեղանատուն, հանդերձարան, բաղնիք և այլ հարմարություններ։ Դպրոցը նոր տիպի էր, որի աշակերտները առաջին անգամ պետք է տեսնեին գրատախտակներ, սեղաններ, քարտեզներ և բնագիտական նկարներ։ Այն բացվեց 1857 թ. մարտի մեկին և ուներ հարմարավետ պայմաններ՝ 25 աշակերտի համար։ Այնտեղ կազմակերպվեց թանգարան, հավաքվեցին հին մատյաններ և գրքեր։ Դպրոցի տեսուչ Մ. Խրիմյանը աշակերտների օտար անունները փոխում էր հայկականով։ Վարժարանի դասատուներ հրավիրվեցին Մանուկ Արտամերտցյանը, Մարտիրոս Փափազյանը, Տիգրան Գալփակչյանը, Միքայել Ռուբինյանը, Նահապետ Փիրղալեմյանը և ուրիշներ։ Այդ վարժարանում չկային հին, տեր-թոդիկյան մեթոդները և նրա աշակերտները առանց մարմնական պատիժների սովորում էին սրբազան պատմություն, քրիստոնեական վարդապետություն, եկեղեցական երաժշտություն, ճարտասանություն, քերականություն, աշխարհագրություն, թվաբանություն, ազգային պատմություն, հասարակագիտություն, հասարակ ընթերցում և այլ առարկաներ[39]։

Դպրոցի անդրանիկ սաներն էին Գ. Սրվանձտյանցը, Ա. Թոխմախյանը, Հ. Տեր-Սարգսյանը, Ա. Փոխանյանը, Հ. Սևիկյանը և ուրիշներ։ Սկսած 1858 թ. ժառանգավորաց վարժարանում ուսանելու էին գալիս Կոստանդնուպոլսից, Կովկասից, Պարսկաստանից և այլ վայրերից։ Մ. Խրիմյանը դպրոցում քարոզում էր, որ նրա աշխատանքները և սաների դաստիարակությունը ուղղված չպետք է լինեին այլ ժողովուրդների և հատկապես քրդերի դեմ և հորդորում էր քուրդ վերնախավին և հասարակ մարդկանց իրենց երեխաներին ուղարկել այնտեղ սովորելու։ Մ. Խրիմ-

38 «Արծուի Վասպուրական», 1858, թիվ 1, հունվար։

39 «Արծուի Վասպուրական», 1859, № 3, էջ 117։

յանի քրոնաջան այդ աշխատանքը ի նկատի ունենալով, Վարագա վանքը անվանում էին «Խրիմյան Հայրիկի տուն»:

Վարժարանում կարճ ժամանակ դասավանդեց նաև Րաֆֆին, որը հնարավորություն տվեց նրան ուսումնասիրել Վան քաղաքի և Վասպուրականի գեղջուկների նիստն ու կացը, կազմելու վիլայեթի վիճակագրությունը: Արծվին թղթակցելու հետ միասին 1858 թ. Րաֆֆին գրեց «Աղթամարա վանք» հոդվածը, «Ամեն տեղ խորին լռություն» և «Ձայն տուրուվ ծովակ» բանաստեղծությունները, որոնք 1860 թ. հրատարակվեցին «Հյուսիսափայլում»:

Հետագայում այդ վարժարանում, Վասպուրականի դպրոցների պատմության մեջ առաջին անգամ, սկսեցին դասավանդել հայրենագիտություն առարկան, որը դասավանդում էին Շվեյցարիայում համալսարանական կրթություն ստացած Խորեն Խրիմյանը և Մանուել Անանյանը: Առարկան դասավանդելիս նրանք հետևում էին Գրիմ եղբայրների ցուցմունքներին, այն է՝ աշակերտների հետ շրջագայում էին հայրենի երկրի պատմական վայրերը, շփվում ժողովրդի հետ, հավաքում ժողովրդական երգեր, հեքիաթներ, առակներ, ասացվածքներ. այդ առիթով դասարաններում աշակերտների համար զրույցներ էին կազմակերպում: Վարագի տպարանում 1883 թ. տպագրվեց Խ. Խրիմյանի 3 պրակից բաղկացած «Հայրենագիտություն» գիրքը, որը նպատակ ուներ հայ մանուկներին ծանոթացնելու երկրագնդի և ապա Հայաստանի, Վասպուրականի վիլայեթի, Վան քաղաքի, նրա շրջակա գավառների, գյուղերի հետ[40]:

Վարագում ստեղծված նոր տիպի դպրոցի, տպարանի և պարբերականի հրատարակությունը ոտքի հանեցին Վանի հետամնաց հոգևորականներին, որոնք Պողոս Մելիքյանի գլխավորությամբ սկսեցին վարկաբեկել Մ. Խրիմյանին և նրա կողմնակիցներին և անհարկի մեղադրանքներ ուղղել նրանց հասցեին: Սակայն Մ. Խրիմյանը հարվածելով իր հակառակորդներին, շարունակեց իր ազգօգուտ գործունեությունը: Ամենից ավելի դժվար էր տպարանի աշխատանքները առաջ տանելու խնդիրը: Նրա այդ տարիների գործունեության մասին ջերմ տողեր են թողել Գ. Գալամքեարյանը, Ստ. Փափազյանը, Ստ. Պալասանյանը, Հ. Լինչը, Հ. Երամյանը, Րաֆֆին, Խ. Մալումյանը և շատ ուրիշներ: Մ. Խրիմյանի պաշտպանությամբ հանդես եկավ արևմտահայ դեմոկրատական ուղղության այնպիսի ներկայացուցիչ, ինչպիսին էր Հ. Սվաճյանը: «Մեղուն» 1859 թ. մայիսի 20-ի իր առաջնորդող հոդվածում նրան անվանեց «Հրեշ-

40 Հայրենագիտություն, ի տպարանի Վ. Արծվոյն, ի Վարագ, 1883, պրակ Ա, Բ, Գ:

տակ Հայաստանի», որը ամեն կերպ ջանում էր իր ժողովրդի սրտի մեջ վառել «հայրենասիրության հուրը», որը հայրենիքի «բշվառությունները մեր աչաց առաջ» բերողն է և Հայաստանի «համնստ սիրահարը»[41]: «Մեղու»-ի հաղորդումներից երևում է, որ 1859 թ. մայիս-հոկտեմբեր ամիսներին Մ. Խրիմյանը գտնվել է Կոստանդնուպոլսում՝ իր գործունեության մասին պատրիարքարանին բացատրություն տալու և Վարագա դպրոցի, տպարանի և ամսագրի համար նյութական օգնություն ստանալու համար. Եվ Հայաստանի նվիրակին այդ ամիսներին հաջողվում է հասնել այն բանին, որպեսզի պարտքերի մեծ մասը փակվի և «երկու մեծկակ մամուլ թուղթ և այլն կառնե և այսօր կը մեկնի մնեն,— գրում է «Մեղուն»[42]: Դրանից հետո Հ. Սվաճյանը իր թերթի միջոցով դիմելով նրան, ասում է, որ «չնայած դու շուտով կմեկնես և կհեռանաս մեզանից, սակայն քու անխոնջ աշխատությունները անպտուղ չպիտի մնան, քու ցանած սերմերդ ապառաժներու վրա ալ իյնի՝ դարձյալ բաւական քրտինքդ իր ջերմությամբը ասոնք պիտի մաներե փշերը, հողն ընե ու զանոնք պտղաբերե պիտի»[43]: 1859 թ. հոկտեմբերի 10-ին «Մեղուի» հրատարակած «Ջու Մկրտիչ վարդապետ Խրիմյան» հոդվածից երևում է, որ Մ. Խրիմյանը Կոստանդնուպոլսից Վան է մեկնել 1859 թ. հոկտեմբերի 10-ին: Հ. Սվաճյանը այդ հոդվածում նրան անվանում է «աղնիվ վարդապետ», «Հայաստանի հրեշտակ», «անձնուրաց հայրենասեր»[44]:

Վասպուրականի առաջին տպագիր օրգանը՝ «Արծուի Վասպուրականը» տպագրվում էր մի քանի հարյուր տպաքանակով: Պարբերականի օրինակների մի մասը կտրում էր Ռուսաստանի սահմանը, անցնում Արևելյան Հայաստան, Թիֆլիս և Ռուսաստանի հայաբնակ վայրերը: Վասպուրականի այդ ժամանակվա պայմաններում այն մի հսկայական քայլ էր, նոր առաջադեմ երևույթ: Պարբերականը հոդվածներ էր ստանում Կոստանդնուպոլսից, Շամախից, Ալեքսանդրապոլից և այլ վայրերից: Այդ տարիներին Վարագի տպարանից դուրս եկան 200 օրինակ Քերական և Հեգարան դասագրքերը: Մինչ այդ դասագրքերը ստացվում էին Կոստանդնուպոլսից, իսկ դասագրքեր չունեցող աշակերտներին դպրոցներում ուսուցանում էին տնից բերված պատահական գրքերով:

«Արծուի Վասպուրական» պարբերականի անդրանիկ գրաշար Պողոսը՝ նրա առաջին համարի լույս ընծայման կապակցությամբ, հետա-

41 «Մեղու», 1859, թիվ 14, 20 մայիսի:
42 Նույն տեղում, թիվ 28, 10 հոկտեմբերի:
43 «Մեղու», 1859, թիվ 14, 20 մայիսի:
44 Նույն տեղում, թիվ 28, 10 հոկտեմբերի:

գայում իր հուշերում գրում էր. «Ո՞րքա՜ն ուրախություն և ոգևորություն առաջացավ վանքի միաբաններու, վարժարանի ուսուցիչներու և աշակերտներու մեջ, երբ «Արծուի Վասպուրականը» լույս տեսավ ի Վարագ։ Այդ օրը տոնական կերպարանք ստացավ, ամենքը կը ողջագուրվեին և կը շնորհավորեին թերթի հրատարակությունը։ Խմբագիր Խրիմյանը արցունքն աչերուն կը դիտեր այս բոլորը և հոգեպես կը հրճվեր ու կը մխիթարվեր»[45]։ Տառերի պակասը լրացնելու նպատակով տպարանին կից կազմակերպվեց մի փոքրիկ ձուլարան, այդ հարցում Մ. Խրիմյանին օգնության հասան Վանի ճարտար արհեստավորները։

Մ. Խրիմյանի՝ դավառում կատարած այդ աշխատանքներին հետևում էր առաջավոր հայ մտավորականությունը։ Նրա գործունեության մասին Գ. Զիլինկիրյանը դրվատանքի խոսքեր գրեց Զմյուռնիայի «Ծաղիկում», ասելով, որ նա ազգի օգտին աշխատանք տանող մի անձնավորություն է, և նրա հանդեսում լույս տեսած «Հոդվածներուն քաղցրությունը վայելելով գմայլեցանք ու միանգամայն ուրախացանք», իսկ խմբագրի գրիչը լի է «ազատության և հայրենասիրության ոգով», քանզի նա մի «ճշմարիտ կրոնավոր»[46] է։

Տպարանի առաջին աշխատողներն էին Մ. Խրիմյանը, վարժարանի դասատուներ Տիգրան Գալփակչյանը, Միքայել Ռուբինյանը, Մանուել Արտամերցյանը, տիրացուներ Մանվելն ու Գևորգը և Մարտիրոս Փափազյանը։ Շուտով աշակերտների մեջ երևան եկան առաջին հոդվածներ, առակներ, ոտանավորներ, տեղագրական և թատերական հոդվածներ գրողները. դրանցից էին Սանդենց Հովհաննեսը (Գ. Սրվանձտյանց), Արեան Թոխմախյանը, Բժշկյանը, Տեր-Մեսրոպյանը, Գրիգորյանը և ուրիշներ։

Սկսած 1860 թ. սկզբներից մինչև տարվա վերջը պարբերականը լույս չտեսավ, քանի որ Մ. Խրիմյանը Վանի հոգևոր առաջնորդ Իգնատիոս Թոքմաջյանի, Գ. Սրվանձտյանցի, Հ. Սևիկյանի և Նարեկա վանքի վանահայր Հովսեփ վարդապետի հետ անցավ Արևելյան Հայաստան և Անդրկովկասի հայաբնակ վայրերը, վարագի համար հանգանակություն անելու։ 1861 թ. ամսագիրը նորից սկսեց հրատարակվել և շարունակվեց մինչև 1864 թ. սկիզբը։ Ամսագրի առաջին էջին երևաց մի նկար՝ Վարագա վանքը, նրանից հեռու երևում էին Վանա լիճը և Վան քաղաքը։ Լեռների հետևից բարձրացած արևը իր ճառագայթներն էր փռել ամենուր և նրանց

45 Հ. Աճեմյան, նշվ. աշխ., էջ 270։

46 «Ծաղիկ» (Զմյուռնիա), 1861, № 15, 20 նոյեմբերի։

մեջ ճախրում էր մի արծիվ, որի կտուցից կախված թղթին դրոշմված էին «ողջույն հայրենյաց» բառերը։ 1872 թ. Մանուել Անանյանի խմբագրությամբ և Տ. Ամիրջանյանի, Ս. Գնունու և այլոց աշխատակցությամբ սկսվում է նրա հրատարակության նոր շրջանը (1872 թ. օգոստոսից մինչև 1873 թ. հունվարի 13-ը) որպես շաբաթաթերթ։ Այս նրա վերջին ճիգն էր, որը տևեց ընդամենը 6 ամիս, որից հետո նա դադարեց լույս տեսնելուց։ Այսպիսով «Արծուի Վասպուրականը» լույս է տեսել 8 տարի և մեծ դեր խաղացել հայ ժողովրդի և Վասպուրականի հայության ազգային դիտակցության զարթոնքի գործում։

Մ. Խրիմյանի հակառակորդները մի քանի անգամ հարձակվեցին նրա վրա, նույնիսկ փորձ արեցին սպանել, սակայն չհաջողվեց։ Մ. Խրիմյանին օգնում էին Կոստանդնուպոլսի առաջավոր գաղափարների տեր հայրենասերները, որոնք Վարագն անվանում էին Հայկական Վենետիկ։

Մ. Խրիմյանի բաղձանքը, սակայն, միայն Վարագն ու Վասպուրականը լուսավորելը չէր, նա ամեն կերպ պրոպագանդում էր և քաջալերում, որպեսզի Թուրքիայի և Արևմտյան Հայաստանի բոլոր հայկական վանքերին և եկեղեցիներին կից դպրոցներ բացվեն։ Վասպուրականում Մ. Խրիմյանի այդ տարիների գործունեության մասին դրվատանքի խոսքեր է գրում նաև Ասպողոսյան Թևի կողմնակից Քոլոզ վարժապետը՝ անվանելով նրան «հայր արծիվ», «տեր աղնիվ», գովելով նրա հիմնադրած դպրոցի և տպարանի բացումը[47]։ Սակայն Քոլոզը Մ. Խրիմյանին մնաղադրում է, որ նա անհատի ձեռքից խլում էր ազատությունը, հատկապես այն ժամանակ, երբ նա 1850-ական թվականների սկզբներին Վանի եկեղեցիներից մեկում քաղաքի բնակիչների ներկայությամբ կարդաց պատրիարքի դրությունը և ասաց, որ հասել է իշխանների իշխանության վերջը։ Այն մարդկանց, որոնք դեմ էին Վանի վերնախավի հայացքներին, Քոլոզը անվանում էր «խուժան» կամ «ամբոխ» և չէր ընդունում Մ. Խրիմյանի և նրա կողմնակիցների կարծիքն այն մասին, որ անհատը ցանկացած մարդուն կարող է ժողովի անդամ ընտրել և ազատորեն արտահայտել իր մտքերը։ Քոլոզի պոեմից երևում է այն կատաղի պայքարը, որ իրար դեմ մղում էին քաղաքի երկու խմբերը։ Բանը հասել էր նրան, որ «Հղբայր հղբօր ջաններ դրկել զերթ ոխերիմ թշնամի»[48]։ Քոլոզ վարժապետին և Մ. Խրիմյանի հակառակորդներին հատկապես դուր չէր գալիս այն հանգամանքը, որ Վանի երիտասարդները սկսեցին կրքոտ պայքար մղել հին հայացքները պաշտ-

47 Մատենադարան, ձեռ. № 9424, էջ 79։

48 Նույն տեղում, էջ 78։

պանող քաղաքի վերնախավի դեմ։ Նրանք այդ նոր սերնդին անվանում էին «սրիկայք», որոնք «ընդվզեցան սանձարձակ»[49]։ Աշխատության ընթերցումից երևում է, որ Մ. Խրիմյանը հին հայացքներ ունեցողներին «վատաբաններ սատկապին», նրանց անվանելով «մերթ ազգատեաց, մերթ բռնաւոր» տալով նրանց «խաւարեալ»[50] մականունը և ընդհակառակը իրեն և կողմնակիցներին անվանում էր լուսավորյալներ։ Պաշտպանելով Պողոս վարդապետին և նրա կողմնակիցներին, Քոլոզը նրանց անվանում է ազգին սատար կանգնողներ և վատաբանում է Մ. Խրիմյանի կողմնակիցներին։

1860 թ. Մ. Խրիմյանը իր ուղեկիցների հետ հասավ Էջմիածին և մեծ դժվարությունների գնով ամենայն հայոց կաթողիկոս Մատթեոս Զուխաջյանից ստացավ կոնդակ՝ Անդրկովկասի հայկական բնակավայրերում իր դպրոցի, տպարանի համար հանգանակություն անելու։ Դրանից հետո նրանք Երևանի, Ախտալայի, Դիլիջանի, Ղարաքիլիսայի վրայով անցան Թիֆլիս։ Վրաստանի և Իմերեթիայի թեմի այն ժամանակվա առաջնորդ Սարգիս Հասան Ջալալյանը սկզբում նրանց շատ լավ ընդունեց։ Մ. Խրիմյանը սկսեց իր քարոզները Թիֆլիսի հայկական եկեղեցիներում, որոնցից մեկին ներկա գտնվող Ղ. Աղայանը գրում է. «...Հայրենիքի սերը։ Դրա նյութը ունեի ես։ Բայց բարեպատեհ հանգամանք պետք էր, որ վառվեր և բորբոքվեր։ Խրիմյան Հայրիկը մի երկնային շանթով վառեց իմ մեջ այդ նյութը»[51]։ Թիֆլիսի Մեյդանի ս. Գևորգ եկեղեցում Մ. Խրիմյանի մի այլ քարոզի մասին այնուհետև Ղ. Աղայանը գրում է. «Սիրտս լցվեց. բուկս խեղդվեց, քիչ մնաց բղավեմ— վա՜յ, օգնեցե՜ք, մեռա՜... Բայց ամենայն ուժովս զսպեցի ինձ և տեղս ու տեղս չոքեցի, գլուխս դրի գետնին երկու ձեռքիս մեջ և խեղդված հեկեկանքով հորդ արցունք թափեցի»[52]։

Մ. Խրիմյանը քարոզներ կարդալուց բացի հանդիպումներ ունեցավ Թիֆլիսի հայ երևելիների հետ և «Կռունկ Հայոց աշխարհին» պարբերականում տպագրեց «Ձայն Վասպուրական Արծվո» հոդվածը։ Թիֆլիսի ժողովուրդը սիրեց Վանից եկած վարդապետին, ասելով. «Ահա վարդապետ էսենց կուլի»[53]։ 1860 թ. նույն պարբերականում Մ. Աղաբեկյանը տպագրեց «Մկրտիչ վարդապետ Խրիմյան վանեցի կամ Վասպուրականի Արծիվը Թիֆլիզումն» հոդվածը և Գ. Մուրատյանցի նամակը՝ ուղղված

---

49 Նույն տեղում։

50 Նույն տեղում, էջ 81։

51 Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հատ. 4, 1969, էջ 47։

52 Նույն տեղում, էջ 48։

53 Հ. Ալեմյան, Հայոց Հայրիկ, էջ 295։

«Կռունկին»։ Այդ նամակում ասված էր. «Այս վրա երկրորդ կիրակին էր, որ տեղվոյս եկեղեցական տաճարների սեղաններն զարդում են մի հայրենասեր հոգվով վառված նորեկ վարդապետի նորօրինակ քարոզությամբ»[54]։ Նրա քարոզների ժամանակ եկեղեցիները լիքն են եղել ժողովրդով, որոնց նպատակն էր լսելու «վառվռուն և ազատամիտ վարդապետի քարոզները», իսկ քարոզների բովանդակությունն է եղել «Հայրենի երկրի նվիրական սարերի, գետերի և քաղաքների անուններն, իրան եկեղեցաշեն հայրերի և հայրենաշեն թագավորների և նախարարների առաքինի մեծագործությանց հիշատակներն, իրան ազգի անցած ու գնացած փառավորության և ներկայիս անփառունակ վիճակի նկարագրություններն»[55]։ Թիֆլիսի «Կռունկը» Մ. Խրիմյանին համարում է «Ազգի կարոտության և բաղձանքին համար մի վարդապետ, որ մի ձեռին ունի ազգային կյանքի պատմությունը»[56]։

Իր վերհիշյալ հոդվածում Մ. Խրիմյանը նշում է, որ հայ գրականության երկնակամարում դանազան աստղեր են փայլում, սակայն ժողովուրդը ապրում է ծանր վիճակում և խորհուրդ է տալիս «կորուսյալ հայրենիքը դարձյալ հայրենյաց մեջը գտնելու ջանալ»[57], ապա քննադատության է ենթարկում հայ ժողովրդին լուսավորելու գործում տակավին քնած կղերականներին, առաջարկելով. «Եկեք ուրեմն հայոց շվարած բանակ, ընտրենք մեր միջեն ուսումնական անձինքները. թո՛ղ լոկ աշխարհականաք լինին, վնաս չունի, գրավոր հանդեսներու նոր ատյան մի բանա՛մք, խորհուրդ առնենք, ու համաձայնությամբ վերջին վճիռը հաստատելով գրենք, կնքենք, հրատարակենք և քարոզենք բոլոր հայկազանց տանիքներու վրա»[58]։ Հայ մանուկների կրթությունը պետք է տանել հայրենի հողի վրա, քանի որ «Օտար սահմանները բուսած որմնախառն ցորենեն շինված հացը՝ հայու ախորժակին դառն է և հայրենյաց համար ապրելու սնունդ չի տար, հայ պատանին Հայաստանի հողերու վրա բուսած պատվական, անխառն գարնանացան ցորենի հաց կուզե, որպեսզի քաջառույգ մարմնով արիական հոգվով աճի և հայրենյաց սիրույն նվիրե յուր անձն»[59]։

1861 թ. հունվարին «Կռունկի» առաջին համարում տպագրվեց դանձակեցի (Հարություն Տ. Մարտիրոսյանց տ. Դանիելյանց) ստորագրու-

---

54 «Կռունկ Հայոց աշխարհին», 1860, դեկտ., էջ 1003—1004։
55 Նույն տեղում, էջ 1004։
56 Նույն տեղում, էջ 1005։
57 «Կռունկ Հայոց աշխարհին», 1861, հունվար, № 1, էջ 57։
58 Նույն տեղում։
59 Նույն տեղում, էջ 64։

թյամբ մի բանաստեղծություն, որի մեջ հեղինակը ողջունեց Արծվի ներկայացուցիչների մուտքը Թիֆլիս, ասելով, որ «Դիտեմ Հայաստան աշխարհից կգաս, բայց մեզ նորանից ի՞նչ խապրիկ կտաս»[60]։ Գ. Սրվանձտյանցի մի բանաստեղծության մեջ նշվեց, որ Թիֆլիսի հայերը ավելի ապահով են, իսկ Արծիվը՝ անապահով, որը կարճիկ թևերով չի կարողանում ամպերի մեջ սլանալ, նա տկար է ու անօգնական, իսկ Թիֆլիսի վարժարանները ապահով վիճակ ունեն, նրանց պակաս չէ ոչ հացը, ոչ դգեստը, սակայն Արծիվը թշվառ է, քանզի իր ձագերի համար ընկել է աշխարհից աշխարհ, որպեսզի օրական պաշար ձեռք բերի։ Չնայած Վասպուրականը գեղեցիկ բնություն ունի, սակայն Արծվի բախտը դժխեմ է, նա աղքատ է և չունի Ներսիսյան դպրոցի ապահովվածությունը, չնայած դրան Արծիվը միշտ իր հայրենիքում կլինի։

Մ. Խրիմյանի այդ ճանապարհորդության մասին Հ. Սվաճյանի «Մեղուն» դրվատանքի խոսքեր գրեց, անվանելով նրան «չնաշխարհիկ անձ», «ճշմարիտ ազգասեր և ճշմարիտ անձնվեր քարոզիչ», որը «Թիֆլիզեցվոց սրտերը իրար մերձեցուց»։ Մ. Խրիմյանը շրջում է Հայաստանով մեկ, առանց վախենալու բնության արհավիրքներից և «ոչ ձյունն ոչ անձրևն իրեն արգելք եղած են, ոչ ցուրտն ու ձմեռը»[61], իսկ երբ նա արդեն Վանում էր, «Մեղուն» «Հայաստանի հրեշտակը» հոդվածում գրեց, որ նա «Ռուսաբնակ հայրենակցած քաջալերությամբ կրկին ոտվով կաշխատի ի կրթության և ի լուսավորության Հայաստանի։ Արծուի Վասպուրականն ալ, որ ամեն աստեն Հայաստանի հոգին կուգար վեղուլ մեր ներսի դին կը խոստանա այսուհետև շարունակ լուր բերելու մեզ սիրելի Հայաստանեն»[62]։

Հ. Մ. Խրիմյանի համար նոր բան չէր հայրենասիրական քարոզներ անելը, այդպիսի շատ քարոզներ էր կարդացել նա Վասպուրականում, Կիլիկիայում, Կոստանդնուպոլսում, Երուսաղեմում և այլուր։ Ժամանակի մամուլում տպագրված հոդվածներից և հաղորդումներից երևում է, որ Թիֆլիսի հայ հասարակությունը Վասպուրականից այնտեղ ժամանած վարդապետից լսել է հափշտակված, որ «Թիֆլիզցո հայ ժողովուրդը շարժված և ոգևորված է իրենց հայրենյաց հիշատակովը...»[63]։ Մ. Խրիմյանը «փառասիրության, անձնապաշտության, ծուլության և մեղկության կուռքերն ոտքի տակ փշրելով և միայն ազգային փառացը և պարծանացը փափաքելով՝ հա-

60 Նույն տեղում, էջ 65։

61 «Մեղու», 1861, թիվ 127, 10 մարտի։

62 «Մեղու», 1861, № 144—145, 31 հոկտեմբեր—10 նոյեմբերի։

63 «Կռունկ Հայոց աշխարհին», 1860, դեկտեմբեր, էջ 1004։

մարձակ լսելի է անում իրեն ձայնն ընդդեմ ամենայն ազգակործան աղետների և սկզբունքների»[64]: Մամուլում եղած հոդվածներից երևում է, որ Թիֆլիսում Մ. Խրիմյանին ճանաչել են ոչ միայն որպես վարդապետի, այլև երկու «հրավիրակների» հեղինակի, որոնց ընթերցողները ասել են. «Ա՛խ, էս ի՞նչ աստվածային և ազգային սիրով ճննճերյալ ոգի է, որ իրան Սրաբատյան հրավիրակովը հայ մանուկներին պրոստանք է անել տալի իրանց խանդակաթ հայրենիքումը՝ սրտաշարժ նկարագրելով նրանց առաջին մայրենի երկրի տեղերը, անցքերը, փառքը և տառապանքները...»[65]:

Այդ ճանապարհորդության մասին հետաքրքրական փաստեր է պարունակում Մ. Խրիմյանի մի հոդվածը, որը նա այդ ժամանակ չհրատարակեց: Հետագայում Գ. Սրվանձտյանցի արխիվում Գ. Աշանյանցը գտնելով այն, ցանկացավ հրատարակել, սակայն կաթողիկոսը ընդդիմացավ և խնդրեց հրատարակել իր մահից հետո: Հոդվածը հրատարակվեց «Լումա» հանդեսի 1907 թ. հոկտեմբերի և նոյեմբերի համարներում «Խրիմյան Հայրիկի անդրանիկ տպավորությունները կովկասահայերի մասին» վերնագրով, որտեղ նկարագրված են նրա ճանապարհորդության մանրամասները Վանից էջմիածին և ապա Թիֆլիս:

Էջմիածնի հոգևորականության մի մասը լսելով Մ. Խրիմյանի Թիֆլիսահայության մեջ ունեցած հաջողությունների մասին, սկսեց կաթողիկոսի մոտ վատաբանել նրան և հասավ այն բանին, որ վերջինս պահանջեց. «Ղևրիմյանն ռուսաց անողոք դատախներուն հանձնելով Տփխսեն խայտառակությամբ դուրս հանեն և մինչև էջմիածին անարգանոք բերեն»[66]: Նրանք Մ. Խրիմյանին մի շարք մեղադրանքներ տալու հետ միասին ասում էին, որ «Խրիմյանի գրիչն ու բերանը պետության ընդդեմ խոսելով, կառավարությունը ծանր նկատած էր և հրամայած, որ Ռուսաստանեն դուրս հանեն»[67]: Այս նշանակում է, որ հայրենասիրություն և լուսավորություն քարոզող վարդապետի մասին ամբաստանություններ էին լսել ոչ միայն կաթողիկոսը, այլև ցարական իշխանավորները: Սակայն ողջամիտ մարդիկ համոզում են կաթողիկոսին փոխել իր որոշումը և նա կանչեց Մ. Խրիմյանին, որը Ղազախի, Գանձակի և Ղարաբաղի վրայով բռնեց էջմիածնի ճանապարհը: Ղարաբաղում նա կարդաց մի քանի քարոզներ և այդ ժողովրդի մասին գրեց, որ «շատ ջերմեռանդ տեսա այնտեղի ժողո-

---

64 Նույն տեղում:

65 Նույն տեղում, էջ 1005:

66 «Լումա», 1907, № 3—4—սեպտ.-հոկտ., էջ ԺԱ:

67 Հ. Ալեմյան, նշվ. աշխ., էջ 297:

վուրդը»[68]: Սակայն հենց այստեղ էլ ստացվում է կաթողիկոսի կտրուկ կարգադրությունը անմիջապես էջմիածին գալու մասին: Ղարաբաղից Մ. Խրիմյանը Նախիջևանի վրայով անցնում է էջմիածին, որտեղ նրանից պահանջում են, որ «վեհափառին հրաման այս է, որ իրեն քեզ տված արտոնության կոնդակը տաս»[69]: Մ. Խրիմյանը կատարում է կաթողիկոսի կարգադրությունը, ապա հայոց քահանայապետը առանց նրան լսելու պահանջում է անմիջապես թողնել էջմիածինը:

Այդ իրադարձության կապակցությամբ Երևանից 1861 թ. ապրիլի 8-ին Երեմիա Արծրունուն գրած նամակում Մ. Խրիմյանը գրում է. «Ապրիլ ամսո վեցին հասանք էջմիածին, վեհափառին իմացուց հյուրընկալ վարդապետն. նա ևս իրիկվան պահուն գանձապետ Թադեոս վարդապետն մեզի ղրկեց թե վեհափառն իր քեզ տված կոնդակն կուզե, շատ լավ պատասխանեցի հանի տվի կոնդակն»[70]: Ապա Մ. Խրիմյանին ասում են «թե վեհափառին հրաման այս է, որ վաղը առավոտը այս տեղեն ելլես և քու ճանապարհով երթաս, պատասխանեցի կրկին ևս առավել լավ»[71]:

Կաթողիկոսի այդպիսի շտապ պահանջը էջմիածնից Մ. Խրիմյանի և նրա համախոհների հեռանալու մասին նույնպես խավարյալ հոգևորականների ամբաստանության արդյունքն էր, քանի որ Մ. Խրիմյանը մի քանի վարդապետների ներկայությամբ ասել էր, որ անհրաժեշտ է կազմել հանձնաժողով և քննել իրեն տրվող մեղադրանքները և ինքը պատրաստ է պատասխան տալու, սակայն կաթողիկոսի պահանջը կտրուկ էր. այդ կապակցությամբ Մ. Խրիմյանը գրում է. «Թեպետ մտածեց Արծիվը բողոքել և իրավունք խնդրել. բայց ո՞վ պիտի լինիլ այն տեղը Արծվոյն համար դատավոր իրավարար: Վասն որո այն նվաքին ևս Արծիվը հեզությամբ ներից և համբերեց»[72]:

Վշտացած վերը նշված իրադարձություններից, նա անցավ Երևան, որտեղ տեղի «աղգասեր անձինք» խնդրեցին պատմել կատարվածի մասին և «Արծիվը կը պատմե այս անցքերու տեղեկությունները կը լսեն, կը ցավին և կը նղովեն միաբերան»[73]: Երևանի երևելիները խնդրում են նրան հայրենասիրական մի քարոզ կարդալ, սակայն նա հրաժարվում է, ասելով, որ տեղի առաջնորդը կարող է դրա համար պատասխան տալ: Երևա-

---

68 «Լումա», 1907, № 3—4, սեպտ.-հոկտեմ., էջ ԺԱ:
69 Նույն տեղում, էջ ԺԲ:
70 ԳԱԹ-ի արխիվ, Գր. Արծրունու ֆոնդ, վավ. № 298:
71 Նույն տեղում:
72 «Լումա», 1907, № 3—4, սեպտ.-հոկտեմ., էջ ԺԳ:
73 Նույն տեղում:

նից նա անցնում է Ադուլիս, որտեղ տեղի վերնախավը և ժողովուրդը նրան ընդունում են շատ ջերմությամբ և «Ջարմա՜նք մեծ, չը հարցնելով բնավ, թե կոնդակ ունի՞ս և այլն»[74]: Ադուլիսում նրա անցկացրած օրերի մասին «Մուրճում» տպագրված է Հակոբ Անագչյանի ծավալուն փոքր, սակայն արժեքավոր հոդվածը, որի մեջ ասված է, որ Խրիմյանը երբ այցելեց տեղի դպրոցը, նկատեց, որ աշակերտները ազգային և աշխարհիկ երգեր չեն երգում և խնդրեց մի խմբի մեջ գտնվող Սարգսին երգել «Նորարուս խայրիք» և «Որդիք Հայկա» երգերը[75]: Շատ չանցած Ադուլիս ժամանած Մեսրոպ Փափազյանը «եկավ հարստացնելու մեր երգերի պաշարը ուրիշ շատ երգերով: Ահա թե ով առաջինը երգել սովորեցրեց Խորենացու «Դողթան երգիչների թոռներին»[76]: Ադուլիսից Մ. Խրիմյանը անցավ Թավրիզ, ապա Սալմաստի Փայաջուկ գյուղը, իսկ հետո՝ Հայրենի Վասպուրական:

Սակայն ինչքան էլ այդ ճանապարհորդության ընթացքում արգելքներ հարուցվեցին Մ. Խրիմյանի դեմ, այնուհանդերձ, այն շատ կարևոր էր նրա համար, քանի որ հնարավորություն տվեց մի անգամ էլ հիմնավորապես և մոտիկից ծանոթանալու կովկասահայերի կյանքին: Մ. Խրիմյանը ավելի ու ավելի համոզվեց, որ հայ ժողովրդի այդ հատվածը ավելի աղատ է այն խոշտանգումներից և զրկանքներից, որի մեջ է գտնվում Արևմտյան Հայաստանի բնակչությունը: Ե. Արծրունուն գրած մի նամակից երևում է, որ Մ. Խրիմյանը վարագ է հասել 1861 թ. հուլիսի 1-ին[77]:

1862 թ. մայիսի վերջին Վարագի ժառանգավորաց վարժարանը տվեց իր անդրանիկ շրջանավարտները, որոնց մեջ էին Գ. Սրվանձտյանցը, Ա. Թոխմախյանը, Հ. Սևիկյանը, Մ. Մոկացյանը, Ն. Տեր-Հովսեփյանը և ուրիշներ: Այդ նույն թվականին սկսվեց Զեյթունի հերոսական ապստամբությունը: Կիլիկիայի հայկական կյանքին մոտիկից ծանոթ Մ. Խրիմյանը չէր կարող անտարբեր մնալ Տավրոսյան լեռներում գտնվող հայ ժողովրդի այդ բեկորի բռնկման նկատմամբ: Ամսագրում սկզբից այդ մասին տպագրվեց հաղորդագրություն, որից հետո Գ. Սրվանձտյանցի «Սկսենք մեր գործը նորեն սկսենք» հոդվածը, որի մեջ ասված է. «Էն դեհ մի կռիվ կա, լսե՞ք նախանձավոր ահավոր ձայներ, ձայն Արևմուտքից, ձայն Հյուսիսից, ձայն և ամեն կողմից, մի, մի սարսափինք, նոքա մեզ քաջություն թող տան, կուգան դեպի մեզ, մենք հավ չենք, մենք էլ մարդ և

---

74 Նույն տեղում, էջ ԺԴ:

75 «Մուրճ», 1893, № 7—8, էջ 1245:

76 Նույն տեղում, էջ 1247:

77 ԳԱԹ-ի արխիվ, Գր. Արծրունու ֆոնդ, վավ. № 390:

մարդու զավակ ենք. հայ և հայու ժառանգ ենք»[78]: Ոգևորված Տավրոսի լեռնականների հաջողություններից, հոդվածագիրը շարունակում է. «Բանանք մեր աչքերը, բանանք մեր կուրծքերը, միշտ դիմենք հառաջ, միշտ արի և քաջ, գործենք անվեհեր ու անձնանվեր, գործենք անդադար թե տիվ թե գիշեր»[79]:

Հայրենասեր մտավորականը այդ հոդվածում գրում է իր հավատամքը ասելով. «Ազգի համար պիտի աշխատիս, էլ ուրիմն դու քեզ համար չիս, քո ծնողաց համար չես և քեզ համար ծնող չունիս: Ազգին ես և Ազգին ես: Քեզ համար աշխարհից, փառքից, բաղդից և նույնիսկ քո անձից մտոն չունես: Դու այդ ամենը փոխանցիր մեկ անմահ նահատակիմը, ազգասիրության»[80]: Ապա տգիտությունը ազգի համար «անհագ գաղան, անգութ գաղան» համարելով առաջարկում է կրթել, նորոգել ազգի զավակներին, դիմադրել հարստահարողներին՝ չվախենալ նրանցից. «Կոխե ու կոխվիր, զարկ ու զարկվիր, իննա՛ր վեր կանգնիր, անշուշտ կհաղթես, մեռնիս էլ կհաղթես, վերջապես կը հաղթես, վասնզի նոր ես և լուսավոր ես, բարի ես, ճշմարիտ ես»[81]: Հոդվածի վերջում դիմելով հայ երիտասարդներին ասում է. «Այլ դու կորովիդ իմ, դու հայկական երիտասարդություն. ընդ օգս ի վեր կխոյանաս սլանաս, թևերուդ վերա ազգականվի բևեռած նահատակության շավղով, ճշմարտության շավղով, իրավ ճանապարհը դա է...»[82]: Մ. Խրիմյանի Վարագում եղած տարիներին Տարոնի հոգևորականների մի զգալի մասը անհարդի վերաբերմունք ուներ դեպի ժողովուրդը, նրանցից ոմանք ձևոք էին մեկնում եկեղեցական կալվածքների եկամուտներին, իսկ ժողովրդի զավակներին կրթություն տալու մասին չէին մտածում: Տարոնի ժողովրդի առաջավոր մասը գիտեր Վասպուրականում Մ. Խրիմյանի և նրա կողմնակիցների կատարած ազգօգուտ և հայրենասիրական գործերի մասին և դիմից Կոստանդնուպոլսի պատրիարքարան ու խնդրեց նրան ուղարկել Տարոն: Պատրիարքարանին հաջողվից ստանալ սուլթանի ֆերմանը և Մ. Խրիմյանը դարձավ Տարոնի հոգևոր առաջնորդը և ս. Կարապետի (Գլակա) վանքի վանահայրը: 1862 թ. Մ. Խրիմյանը իր շրջապատի մարդկանց հետ տպագրական մեքենաների բեռներով շարժվեցին դեպի Տարոն: Նրա այդ հրթի մասին «Մեղուն» իր հոդվածներից մեկում նորից ու նորից նրան համարեց «ճշմարիտ հայր մը, ժողովրդա-

---

78 «Արծուի Վասպուրական», 1862—63, թիվ 1, էջ 10:
79 Նույն տեղում, էջ 11:
80 Նույն տեղում:
81 Նույն տեղում:
82 Նույն տեղում, էջ 12:

աեր հովիվ մը, կրոնասեր անբիծ կղերական մը, անձնուրաց առաքյալ մը, Հայաստանի լուսավորության ջանադիր մը»[83]: Տեղ հասնելով, նրա առաջին գործը եղավ ս. Կարապետի վանքում բաց անել ժառանգավորաց վարժարան: Տարոնի ժողովուրդը սակայն զուրկ էր միջոցներից և Մ. Խրիմյանը տեղում ուսումնասիրելով գտավ, որ վանքը ունի միջոցներ, մտածեց այն ի մի հավաքելու և այդ նպատակին օգտագործելու մասին: Մ. Խրիմյանը ուներ, անշուշտ, վարագի փորձը: Նա կազմեց մի տնտեսական խորհուրդ, որը տնօրինելու էր վանքի եկամուտները, որի միջոցով պետք է պահվեր վարժարանը և վերջ տրվեր վանականների մի մասի վանքի ունեցվածքը հափշտակելու անհադուրդ ձգտումներին: Անհանգիստ բնավորություն ունեցող Մ. Խրիմյանը շրջում էր Տարոնի գավառներն ու գյուղերը և ծանոթանում իր հոտի անագորույն վիճակի հետ: Այդ ընթացքում նրա առջև բացվեց իր ժողովրդի սոցիալական ու քաղաքական ծանր վիճակը: Տարոնի ժողովուրդը լուռ ու մունջ համակերպվում էր այդ վիճակին և տանում այն դառն տանջանքները, որ նրան պատճառում էին պետական պաշտոնյաները, քուրդ ցեղապետներն ու աղաները և հայ վաշխառուները: Տարոնի բնակչության թշվառ վիճակի մասին նա մի քանի տեղեկագրեր ուղարկեց պատրիարքարան և ազգային ժողովին:

1863 թ. ապրիլին Սրվանձտյանցի խմբագրությամբ սկսեց «Արծուիկ Տարօնոյ» թերթի հրատարակությունը, որը տևեց մինչև 1865 թ. հուլիսի 15-ը: Տարոնի Արծվիկը շատ հետաքրքրական հոդվածներ էր տպագրում պանդխտության, ժողովրդի հարստահարությունների, ինչպես նաև Տարոն-աշխարհի հուշարձանների մասին: Նրա էջերում երևում էին նաև ժողովրդական դողտրիկ երգեր և վասպուրականի մասին հոդվածներ: Ըստ նրա մի հոդվածի, 1863 թ. վանում կազմակերպվել էր 13 անդամներով «Գինեհատ մի ընկերություն», որի նպատակն է եղել մարդկանց հեռու պահել գինեմոլությունից[84]: Թերթը հորդորում էր այգիներ տնկել, կազմել ընկերություններ, բամբակ ու բրինձ ցանել, որը կավելացնի գյուղացիների նյութական հնարավորությունները[85]: 1865 թ. համարներից մեկում տպագրվեց մի հոդված վանում կազմակերպած «ուսումնասիրաց» ընկերության մասին, որի նպատակն էր մարդկանց մոտ եղած գրքերը գնել և թեթև շահով վաճառել, իսկ հազվագյուտ գրքերը հավաքել և ստեղծել ազգային թանգարան[86]:

---

83 «Մեղու», 1862, թիվ 168, 20 հուլիսի:

84 «Արծուիկ Տարօնոյ», 1864, թիվ 27, 1 հոկտեմբերի:

85 Նույն տեղում, 1864, թիվ 31, դեկտեմբեր:

86 Նույն տեղում, 1865, թիվ 43, 1-ը հունիս:

Մ. Խրիմյանի, Գ. Սրվանձտյանցի լուսավորական գործունեությունը խափանելու նպատակով շուտով ոտքի ելան և միավորվեցին ինչպես վասպուրականի, այնպես էլ Մուշի նրանց հակառակորդները, որոնք նրանց գործունեությունը որակեցին որպես հակապետական։ Այս, անշուշտ, արվում էր թուրքական պաշտոնյաներին նրանց դեմ հանելու նպատակով և շատ չանցած հակառակորդներին հաջողվեց շարքից հանել երկու պարբերականները։ Այդ կապակցությամբ Գ. Սրվանձտյանցը սրտի ցավով գրում է. «Արծվո թռիչքը խափանեցին, և Արծվիկը խոցոտեցին, երկուքի շարունակությունն ալ վատությանց և մատնությանց ղոհ ընելով»[87]։

Մ. Խրիմյանը ստիպված Տարոնից մեկնեց։ 1863 թ. հուլիսի 14-ին հասավ Կոստանդնուպոլիս և պատրիարքին ներկայացրեց «Մշեցոց աղերսագիր առ ազգային վարչություն» վերնագրով։ «Մեղուն» տպագրելով այն, նշեց, որ այն մի հրաշք ոգի է Տարոնի ժողովրդի մասին, որը կարդացողը զգում է, որ «Հոգեվարք է Տարոն» և «Տարոնո ժողովուրդ ցամաքած արյունով, չորացած ոսկերքներով հազիվ կը շնչե, հազիվ կը շարժի, ո՛հ և գերեզման կը խնդրե յուր հանգիստ»[88]։ Այնուհետև, 1863 թ. սեպտեմբերի 3-ի համարում «Մեղուն» տպագրեց մի առաջնորդող, որի մեջ պաշտպանեց Մ. Խրիմյանին հարձակումներից և նշեց, որ նա «անարատ, անբիծ և անմեղ» մի գործիչ է, որի դեմ են ելել «խավարասեր մարդիկ» և փաստեր չունենալով ամեն ինչի գնով ցանկանում են արատավորել նրան։ «Մեղուն» գտավ, որ նա «մեծամեծ գովութեանց արժանի է իր ընդհանուրին նկատմամբ ըրած օգտակար ծառայութեանց համար»[89]։

Մ. Խրիմյանը մոտ 7 տարի Տարոնում հոգևոր պաշտոն էր վարում։ Մշո ժողովուրդը սիրեց նրան, Հայրիկ անվանեց և խնդրեց Կոստանդնուպոլսի պատրիարքին միջնորդելու Էջմիածնի կաթողիկոսի առջև, որպեսզի նա եպիսկոպոս ձեռնադրվի, և նա 1868 թ. հոկտեմբերին ձեռնադրվեց եպիսկոպոս։

Գնահատելով ինչպես Վասպուրականում, այնպես էլ Տարոն աշխարհում Մ. Խրիմյանի ծավալած հսկայական լուսավորչական գործունեությունը, չենք կարող չնշել, որ նրա մի տասնամյակից ավելի գործադրած ջանքերը իղուր չանցան։ Վարագում և Մշո ս. Կարապետի վանքում հրատարակվեցին երկու պարբերականներ, բացվեցին ժառանգավորաց

87 Գ. Սրվանձտյանց, երկեր, հատ. I, էջ 84։

88 «Մեղու», 1863, թիվ 208, 16 հուլիս։

89 Նույն տեղում, թիվ 215, 3 սեպտեմբերի։

դպրոցներ, տպարաններ։ Այդ դպրոցների շրջանավարտները ստացան «Արծվի ձագեր» մականունը և շարունակեցին իրենց ուսուցչի սկսած գործը։ Այդ տարիներին ինչպես Վասպուրականում, այնպես էլ Տարոնում բարձրացավ ժողովրդի ինքնագիտակցությունը, նա սկսեց ավելի մոտիկից ճանաչել իր հայրենիքը և նրա ցավերը։ Ժողովուրդը այլևս նախկինը չէր և նրա առաջավոր մարդիկ սկսեցին լավ հասկանալ նրա ներկան և խորհել ապագայի մասին։ Մ. Խրիմյանի սաները աշխատում էին իրենց ուսուցչից ժառանգած «ժողովրդով և ժողովրդի համար» նշանաբանով, իսկ այդ այն ժամանակվա խավարի պայմաններում շատ բան էր նշանակում։ Մ. Խրիմյանի այդ ժամանակաշրջանի գործունեությունը ի նկատի ունենալով Մ. Մամուրյանը նրան համարեց «Հայաստանի հրեշտակ մը»[90]։

1869 թ. սեպտեմբերի 4-ին մի տարի անց Կոստանդնուպոլսի ազգային ժողովը Մ. Խրիմյանին ընտրեց պատրիարք և իր առաջին բանախոսության ժամանակ ասաց, որ նա միայն պատրիարք չպետք է լինի, այլ իր ժողովրդի ցավերի արտահայտիչը. «Ես Հայաստանի ցավոց պատկերն եմ, ասաց նա։ Գիտեմ, թե իմ նախորդքս ինչպես միջնորդած են տերության՝ այս ցավոց դարմանը խնդրելու համար. բայց ես ազդու միջնորդություն մը պիտի ընեմ...»[91]։

Երբ 1869 թ. նոյեմբերին Մ. Խրիմյանը հասավ Կոստանդնուպոլիս, 18 տարեկան Պ. Դուրյանը գրեց իր «Ի դիմավորություն ամենն. Հայրիկին» և «Հայրիկն հայոց» երկու բանաստեղծությունները, որոնցից առաջինի մեջ նրան բնութագրեց ժողովրդի ցավերից սև հագած մի հոգևորական, որը ժողովրդի մարդն է, ապրում է նրա ցավերով։ Բանաստեղծը գտնում էր, որ Մ. Խրիմյանը քամել է գավառահայության արցունքը և մայրաքաղաքի հայությանը ցույց է տալիս, որ հայկական գավառները լի են ավիրով ու արցունքով։ Այդ դյուցազնի ձեռքին կա ոչ թե սուր, այլ խաչ և չնայած նրա աչքերը հզոր են, սակայն այդ աչքերից չեն ցայտում շանթեր, այլ՝ «սեր, գութ»։ Նա իր ժողովրդի մեջ հնչեցրեց «ազատության փողը», իսկ իր կրակ սիրտը շատ ազնիվ է և ապդին նվիրված, նա «հիշատ արինգ» է հնչեցնում, որին արձագանքում են հայոց դաշտերն ու լեռները[92]։ Երկրորդ բանաստեղծության մեջ Պ. Դուրյանը կոչ է անում նոր պատրիարքին գործունեություն ծավալել հանուն ազգի միասնության և ազատության[93]։

---

90 «Արևելյան մամուլ», 1871, թիվ 1, էջ 22։

91 Թ. Դուշակյան, նշվ. աշխ., էջ 47։

92 Պ. Դուրյան, Երկեր, 1947, էջ 11։

93 Նույն տեղում, էջ 12։

Պատրիարքական աթոռին նստելուց հետո Մ. Խրիմյանը բոլոր ենթակա թեմերին ուղարկեց «Նախնի շրջաբերական թուղթ, առ ամենայն եկեղեցիս հայոց, որ ընդ իշխանությամբ օսմանեան պետության», որը 1871 թ. լույս տեսավ առանձին գրքույկով։ Այդ թղթում նորընտիր պատրիարքը նշեց, որ իր ժողովուրդը շատ է տուժել ավերիչ արշավանքներից, սակայն ամենից շատ տուժել է տգիտությունից և երկպառակությունից և վերջինս համարելով դարանակալ օձ, առաջարկեց «լուսով խավարը հալածենք և սիրո միությամբ երկպառակությունը վանենք»[94]։ Պատրիարքը պահանջում էր հոգևոր հովիվներից մի անգամ էլ Եփրատի ջրերի մեջ մկրտել ժողովրդին, սակայն այս անգամ «ուսման և դաստիարակության ջրով» չվախենալ նրանից, որ ազգը սակավաթիվ է, քանի որ «ժրաջան մշակին տնկած սիրելի էս, թևսետ մեծամեծ որթերդ, ընտիր ընտիր ողկույզներդ քո դրացի թշնամիներ անխնա քանդեցին ու ճմլեցին», սակայն սիրելի ազգ դու պետք է մնաս և «կրկին քաջաբար որթերովդ բարգավաճիս»[95]։ Թղթի վերջում պատրիարքը կոչ է անում հայ եկեղեցու սպասավորներին սիրել ազգն ու եկեղեցին, ապա խորհուրդ է տալիս նրանց՝ «տնտեսություն քարոզեցեք, զգուշացրեք ժողովուրդ զեխ և շռայլ կյանքեն, քարոզեցեք քաղաքացվոց, որ արհեստ սորվին, ընկերություններ կազմեն, շահավաճառության հետևին, քարոզեցե՛ք գեղացվոց, հայրենի հող սիրեն, ամոլ՝ եղներ սիրեն, մաճ սիրեն, քրտինք շահաբեր հողի վրա թափեն, չարաչար պանդխտության չդիմեն... դպրոց սիրեն, լույս սիրեն, դաստիարակություն սիրեն, ազգ սիրեն, հայրենիք սիրեն...»[96]։

Երկու տասնամյակից ավելի էր անցել այն ժամանակաշրջանից, երբ առաջին անգամ Մ. Խրիմյանը վանից եկավ մայրաքաղաք։ Այդ տարիներին այնտեղ շատ բան էր փոխվել, սակայն ժողովրդի և հատկապես գավառահայության վիճակն ավելի ու ավելի էր վատթարացել։ Այժմ Հայաստանի հրավիրակը նստած էր արդեն պատրիարքական աթոռին և նրա առաջին գործն եղավ թուրքական կառավարության առջև դնել ժողովրդի կյանքի ծանր վիճակի և հատկապես նրա հարստահարությունների հարցը։ 1870 թ. ազգային ժողովի նիստերից մեկի ժամանակ պատրիարքը նիստի մասնակիցներին ասաց, որ ինքը ո՛չ հանճար է և ո՛չ էլ քաղաքագետ, սակայն շատ լավ դիտի իր ժողովրդի ցավերը և պահանջեց

---

94 Նախնի շրջաբերական թուղթ, առ ամենայն եկեղեցիս հայոց, որ ընդ իշխանությամբ Օսմանյան պետության, Կ. Պոլիս, 1871, էջ Բ—5։

95 Նույն տեղում, էջ Բ—6։

96 Նույն տեղում, էջ Բ—7։

հարստահարությունների հարցը քննարկել, ապա դիմել Բ. Դռանը, որպեսզի միջոցներ ձեռնարկվեն վիճակը մեղմելու համար։

Մ. Խրիմյանի պատրիարքարան մուտքի և այդ ու մի շարք այլ հայտարարություններ անելու հետ միասին Արևմտյան Հայաստանից և Թուրքիայի հայաբնակ գավառներից սկսեցին դեպի պատրիարքարան հոսել նամակներ ու զեկուցագրեր՝ գավառահայության անտանելի վիճակի մասին։ Պատրիարքը բոլորը կարդում էր և առաջարկեց այդ հարցը քննարկել առաջիկա ազգային ժողովում, չնայած նրա անդամների մի մասը առարկում էին, գտնելով, որ այդ թղթերը վտանգավոր են և նրա քննարկումը կարող է դիտվել որպես ըմբոստություն Թուրքական կառավարության դեմ։ Ստացվեց 525 զեկուցագիր։ Մ. Խրիմյանը և Գ. Օտյանը պահանջում էին հավաքված նյութերը քննարկել նաև այն պատճառով, որպեսզի տերության առաջ հարց բարձրացվի հայ երիտասարդների զինվորագրության մասին, որով ազգի վրայից կվերանա հնգադարյան ռայա կոչված խարանը և ժողովուրդը կազատվեր բեղելից, իսկ նրա զավակների զինվելը կզսպեր քրդական վերնախավի զինված ուժերի ոտնձգությունները։

Ն. Վարժապետյանի կողմից զեկավարվող քննիչ հանձնաժողովը ծանոթացավ գավառներից եկած նյութերին և գրեց իր ամփոփ տեղեկագիրը, ապա այն քննարկվեց և նրա արդյունքները ներկայացվեցին Բ. Դռանը։ Օսմանյան կառավարությունը իր հերթին կազմեց մի հանձնաժողով և ստուգեց ներկայացված ճիշտ փաստերը և խոստացավ պատժել մեղավորներին, սակայն գործը քննարկումից այն կողմ չանցավ, իսկ գավառահայության սոցիալ-քաղաքական կյանքի ասպարեզում ոչ մի փոփոխություն տեղի չունեցավ։ Իրականում Թուրքական կառավարությունը ինքն էր այդ ֆշվառությունների ստեղծման պատճառը։

Մ. Խրիմյանը գավառներում եղած հարստահարությունների խնդիրը քննարկման դնելու հետ միասին պահանջում էր վերանայել ազգային սահմանադրությունը, գտնելով, որ այն ավելի շատ ծառայում է Բոսֆորի ափերին ապրող մարդկանց՝ հատկապես նրա վերնախավին, իսկ գավառահայությունը չգիտեն նրա մասին։ Պատրիարքարանը ուներ սահմանադրությունը վերանայելու մի քանի տարբերակներ և գտնում էր, որ անհրաժեշտ է գոյություն ունեցող ժողովները հանել իրենց անգործ վիճակից, ունենալ ոչ թե 140, այլ 50 երեսփոխան, որից 20-ը՝ մայրաքաղաքից, 20-ը՝ գավառներից և 10-ը՝ եկեղեցականներից[97]։ Նա իրավացիո-

97 Թ. Գուշակյան, նշվ. աշխ., էջ 50։

րեն գտնում էր, որ սահմանադրություն կազմողները լավ են ճանաչել Եվրոպան և նրա օրենքները, քան Հայաստանինը, որ այն կազմված է Եվրոպական սահմանադրությունների հիման վրա, սակայն լավ չի համապատասխանում տեղական պայմաններին: Արևմտահայ ժողովրդի մեծ մասը ապրում էր գավառներում և նրանց մեծամասնությունը չգիտեր, թե ինչ է սահմանադրությունը: 1872 թ. Վանից Գ. Աղվանյանը Մ. Խրիմյանին գրում էր, որ թաղական խորհուրդներ կան միայն քաղաքում, իսկ գյուղերում այդպիսիք չկան: Այն նշանակում է, որ սահմանադրությունը ընդունվելուց ավելի քան 19 տարի անց գյուղերում մարդիկ չգիտեին նրա գոյության մասին, էլ ուր մնաց որ իմանային նրա էության մասին:

1870 թ. հունվարի 19-ին Գ. Սրվանձտյանցին գրած իր մի նամակում Մ. Խրիմյանը գրում է, որ իր մի քանի միջոցառումները հասցրել են նրան, որ մայրաքաղաքի մի շարք մեծատուններ չեն ցանկանում ազգային գործերին խառնվել, սակայն այդ նրան չի վհատեցնում և ինքը մտադիր է կազմել «քաղաքական ժողովը. թող այս մասնաժողովի մի ևս բուն գավառացի հայերեն պիտի կազմվի»[93]: Այս նամակից երևում է նաև, որ նա ցանկանում էր ժողովներին մասնակից դարձնել ժողովրդի միջին և մանր խավերի ներկայացուցիչներին, ակտիվացնել նրանց մասնակցությունը ազգային գործերի մեջ և այդ ժողովներին ավելի դեմոկրատիկ բնույթ տալ: Մ. Խրիմյանը մտածում էր Կոստանդնուպոլսում ունենալ պատրիարքական երեք փոխանորդներ, որոնք պետք է նստեին Բերայում, Կ. Պոլսի մայր եկեղեցում, Իսքյութարում և զբաղվեին միայն քաղաքի քնակիչների գործերով, իսկ պատրիարքը և վարչական ժողովը պետք է զբաղվեին միայն ազգային խնդիրներով[99]: Մ. Խրիմյանը շտապեցնում էր գավառներում սահմանադրությամբ նախատեսվող բոլոր մարմինների ընտրությունը, որն այնքան էլ դյուրին չէր: Գավառներից մեկի առաջնորդը պատրիարքին նրա այդ պահանջի կապակցությամբ գրում էր. «Ձեր հրահանգը ստացա, բայց զո՞վ ընտրիմ ժողովին ատենապետ, ատենադպիր և ժողովականներ ո՞ւրկէ գտնիմ»[100]: Մի ուրիշ գավառից պատրիարքին գրում էին. «Մեր գյուղացիները գրել, կարդալ չեն գիտեր, այլ՝ միայն խոփն ու արորը կը ճանչին: Անոնց մեջ ի՞նչպես սահմանադրություն գործադրելու է: Քաղաքացվոց պարտուց տակ ճնշվեր են խեղճերը, թե որ ընտրվին և քաղաք գան, հայ չորպաճիների կամքը իրենց

98 «Լումա», 1910, № 7—8, օգոստոս-սեպտ., էջ 54:

99 Նույն տեղում:

100 «Լումա», 1908, № 3—4, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 72:

պատգամ կը դառնա, անոնց դիմացը չեն համարձակիր ձայն ծպտուն հանել...»[101]: Սահմանադրությունն ընդունվելուց երկու տասնամյակ անց 1884 թ. Գ. Շերենցը նրա մասին Վասպուրականից ուղարկած մի հոդվածում գրում է. «Քսանչորս տարվա գոյություն ունեցող սահմանադրությունն այնքան անծանոթ է գյուղացուն, որքան նրան անծանոթ լիներ արևմտյան ազգաց վարչական օրենքները»[102]: Բերված քաղվածքներից երևում է, որ գավառահայությունը անտեղյակ էր սահմանադրությանը և կեղեքվում էր ոչ միայն այլազգի, այլև սեփական հարստահարողներից, մինչդեռ, նրան կեղեքողների ճիրաններից ազատող էր պետք և ոչ թե սահմանադրություն: Իր ժողովրդի այդ վիճակին քաջ ծանոթ էր Մ. Խրիմյանը, այդ պատճառով էլ պահանջում էր իր շրջապատի մարդկանցից՝ «Բոսֆորի ափերից դուրս գալով քննեին այդ ժողովրդի վիճակը, պիտույքը, բարքը, որուն համար օրենք սահմանելու կոչված էին»[103]: Մ. Խրիմյանի հակառակորդների միջոցով կառավարությունը, անշուշտ, տեղյակ էր նրա գործունեությանը և ապագա մտահղացումներին և շատ շուտ հասկացավ, որ պատրիարքական աթոռին նրա նմանին տեսնելը ձեռնտու չէ: Մայրաքաղաքի հայ վերնախավի մեջ կային մարդիկ, որոնք կողմ էին Մ. Խրիմյանի տապալմանը: Հատկապես նրանց դուր չէր գալիս, որ պատրիարքն իրեն հասարակ էր պահում, հաճախակի հանդիպումներ էր ունենում խաներում ապրող պանդուխտների հետ, նրանց հետ հացի էր նստում: Այդ հանգամանքը մեծ զարմանք էր պաճառում Կոստանդնուպոլսի «ազգային ջոջերին», որոնք սկսեցին նրա մասին ասել, թե «Օրենքի մարդ չէ՞, վերհանձնումներն չի հասկնար...»[104]: Կ. Պոլսում նրան աղաներն ու էֆենդիները «դերվիշ» էին անվանում ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ նա հաճախակի է այցելում պանդուխտների կացարանները և նույնիսկ «նամակներ կը գրեր անոնց համար»[105]: Սակայն պատրիարքը սիրված ու հարգված էր ցածր և միջին խավերից և տուշադրություն չէր դարձնում նրանց բարբաջանքներին, ասելով. «Իմ հակառակորդներիս ոսկին պիտի հատնի, բայց իմ համբերություն չպիտի հատնի, կը համբերեմ մինչև արդարությունը հաստնի և պաշտպանի անմեղությունը»[106]: Մ. Խրիմյանը անբասիր հոգևորական էր: Նրա պաշտպա-

---

101 Նույն տեղում:

102 «Նոր դար», 1884, № 212, 27 դեկտեմբերի:

103 «Լումա», 1908, № 3—4, նոյեմ.-դեկտ., էջ 72:

104 Թ. Գուշակյան, նշվ. աշխ., էջ 55:

105 «Յառաջ» (Փարիզ), 1929, 8 դեկտեմբերի, № 1131:

106 Նույն տեղում:

նույնպես հանդես էր գալիս հայ առաջավոր մտավորականների ճնշող մեծամասնություն։ Բաֆֆին նկատել էր, որ «Հայրիկի բարեկամները ժողովրդի հալածված, հարստահարված և ամեն իրավունքներից զրկված դասակարգն է»[107]։

Թուրքական կառավարության ցանկությունը և հայ վերնախավի մի մասի՝ Մ. Խրիմյանի նկատմամբ ծավալած խժդժությունները հասցրին նրան, որ կամաց-կամաց մայրաքաղաքում նրա շուրջը սկսեցին մութ ամպեր կուտակվել և ստեղծվեց անտանելի մթնոլորտ։ Ճիշտ է, նրան պաշտպանում էր Կոստանդնուպոլսի մտավորականների մեծ մասը, հրատարակչությունը, գավառահայության ներկայացուցիչները, սակայն դրությունը այնքան շիկացավ, որ Մ. Խրիմյանը ստիպված մայրաքաղաքի հայկական մայր եկեղեցում արտասանեց իր «Խոսք հրաժարման» հայտնի ճառը։ Եկեղեցում գտնվողները միաբերան ասացին. «Հրաժարականդ չենք ընդուներ հայրի՛կ»... «ժողովուրդը քեզ հետ է հայրի՛կ», «պիտի մնաս, չհրաժարվի՛ս»[108]։ Սակայն պատրիարքը անդրդվելի էր։ 1873 թ. հոկտեմբերին նա թողեց պատրիարքական աթոռը և հեռացավ։ Նրա հակառակորդները ավելի աշխուժացան և սկսեցին քաղաքական մեղադրանքներ բարդել նրա վրա, ասելով՝ «Խրիմյանը հակապետական քայլեր կաներ և բարեխնամ կառավարության սիրտը կը պղտորեր ազգին վրա»[109]։ Իր վերջին ճառում նա հայտարարել է իր հրաժարման պատճառների մասին, որ «գործելու համար եկա և բան մը չը գործեցի...»[110]։ Հակառակորդները մեղադրում էին նրան, որ հակասահմանադրական է. «Ես,— ասաց նա,— սահմանադրությունը գրկել կուզեմ, բայց չեմ ուզեր զանի այնչափ... սեղմել, մինչև որ գրկիս մեջ մեռնի...»[111]։

Անկասկած Մ. Խրիմյանը զգաց, որ իր ժողովրդի նկատմամբ թուրքական կառավարության վարած քաղաքականության պայմաններում չէր կարող լուծել շատ հարցեր։ Նա չկարողացավ փարատել իր ժողովրդի ցավը և մեղմել գավառահայության հարստահարությունները, այդ պատճառով էլ հրաժարվեց պատրիարքական աթոռից։ Թուրքական կառավարությունը սիրով համաձայնվեց նրա խնդրանքին։ Պատրիարքությունից հրաժարվելուց հետո Մ. Խրիմյանը ապրում էր Կոստանդնուպոլսում, մեկուսացված կյանքով։ Նա ցանկանում էր մեկնել Տարոն, սակայն նրա

---

107 Բաֆֆի, *երկեր*, հատ. 5, էջ 187։

108 Հ. Ալեմյան, նշվ. աշխ., էջ 450։

109 Նույն տեղում, էջ 452։

110 Մ. Խրիմյան, *Ամբողջական երկեր*, Հավելված Բ, էջ 8։

111 Նույն տեղում, էջ 16։

այդ բաղձանքը մերժվեց, որից հետո նրա հակառակորդները սկսեցին դրպարտել նրան, իբրև թե վատնել է պատրիարքարանի դումարները։ 1874 թ. նոր պատրիարք Ն. Վարժապետյանը մամուլում հերքեց այդ սուտ լուրերը։ Իրավացի է Հ. Առաքելյանը, երբ գրում է, որ Մ. Խրիմյանը «ընդհանուր աղգի խաղաղության համար զոհեց իր անձը, իջավ պատրիարքական աթոռից և վերստին մտավ յուր խոնարհ վիճակի մեջ»[112]։

Պատրիարքական աթոռը թողնելուց հետո Մ. Խրիմյանի դեմ իրենց պայքարը ուժեղացրին Վանի Պողոսյանները և հասան նրան, որ 1874 թ. տպագրեցին «Խրիմեան եւ գործք իւր» գրքույկը, իսկ Խրիմյանականները՝ «Ամբաստանութիւն Վանայ Պողոս վարդապետի վրա» գրքույկները։ Կարծիքներ կան, որ Մ. Խրիմյանի և նրա կողմնակիցների դեմ ուղղված այդ գրքույկը գրել է Պողոս Մելիքյանը, սակայն իրավացի է «Դանձեր վասպուրականի» գրքի հեղինակը, երբ գրում է, որ «Պողոս եպիսկոպոս այդպիսի ոտանավոր գրելու չափ ուսում չուներ»[113]։ Մեր ուսումնասիրությունից և Հովհաննես Քոլոզյանի չափածո գործի համապատասխան մասերի համեմատությունից երևում է, որ գրքույկը գրել է Հովհաննես Քոլոզյանը, քանի որ այնտեղ տպագրված են երկու հատված (Բ հատորի Դ երգը և Բ հատորի Դ երգը), որոնք նրա աշխատության հատվածաբար հրատարակելու առաջին փորձն է[114]։

Գրքույկում Մ. Խրիմյանը համարվում է «կեղծ բարոյականութեամբ զարդարված», «կեղծ բարոյականութեամբ ծպտյալ» և «դժոխային վարք» ունեցող հոգևորական, իսկ նրա կոչմից իր տեղը նստեցրած Պողոսը «բարձր դրան միջոցով քննվելով՝ անպարտ և միանգամայն առ բարեխնամ տերութիւնն օսմանեան հավատարիմ և գործունյա ոմն ճանաչվեցավ, և ազատ այդ բարդյալ անհատականասպարութենեն՝ վերստին յուր հայրենյաց գիրկը կը դիմե (ընդգծումը մերն է— Հ. Պ.)»[115]։ Այնուհետև Մ. Խրիմյանը անվանվում է աղգութիւնը կործանող, «աղգութեան վնասակար էակը», կառավարության կողմից դահրնկեց արված «աղգավնաս շարժումներ կազմակերպող»[116]։ Ապա նա համարվում է «աղգը ի խռովութիւն պահպանող» մի անձ, իսկ Վարագի պարոցի շրջանավարտները «Արծվեն հղացած շաղաղակեր ձագեր»[117], և վերջապես նա Վարա-

---

112 ԳԱՖ-ի արխիվ, Հ. Առաքելյանի ֆոնդ, վավ. № 200, թ. 1։

113 Դանձեր Վասպուրականի, էջ 145։

114 «Խրիմյան և գործք իւր», Կ. Պոլիս, 1874, էջ 76—79 և 79—84։

115 Նույն տեղում, էջ 1—4։

116 Նույն տեղում, էջ 5։

117 Նույն տեղում, էջ 13 և 14։

գում եղած ժամանակ վանքը «լեցուց գուսաններով, երգեցիկներով», «անատակաց և թատերական խաղուց տեսարաններով, մինչև շարժվիլ դորա նորաձևությունները աստի և անտի բազմություն խռնիլ և հայնժամ եվագարաններու ձայներով և գուսանաց կանչյուններով վարագա լեռան սրտաձայն թնդումը տեսնելու էր...»[118]: Մեզադրանքների մեծ մասը անհիմն են, սակայն վերջին մասը՝ ժողովրդական երգերի և գուսանների մասին, պատիվ կարող է բերել Մ. Խրիմյանին: Խրիմյանականներն էլ գրեցին վերը նշված գրքույկը, որի ավելի հանգամանորեն վերլուծությունը տրված է աշխատության հինգերորդ գլխում:

Հետաքրքրական են Ավ. Իսահակյանի հուշերը Մ. Խրիմյանի մասին, որին նա հանդիպել է 1901 թ.: «Մանուկ օրերից երազել էի տեսնել Վատապուրականի արծվին,— գրում է վարպետը,— հայ ժողովրդի հույսերի և ենչերի կրող Հայրիկին», այնուհետև եղրափակում է. «Եվ հայ ժողովուրդն էլ չի մոռանա նրան: Քանի հնանա, այնքան ավելի պիտի սայծառանա նրա հիշատակը: Նա դարերի միջից պիտի նայե հայ ժողովրդին և պիտի խոսի նրա հետ հարազատ լեզվով՝ նրա նվիրական իղձերից և անմահ նպատակներից: Ժողովուրդը նրան չի մոռանա երբեք, որովհետև նրա սրտից էր եկել և դեպի նրա սիրտն էր գնում»[119]:

Մ. Խրիմյանը իր ժողովրդի հարազատ զավակն էր. ձայնապնակի վրա պահպանվել է նրա կոչը՝ 1895 թ. ուղղված ամերիկահայերին. «Ողջույն ձեզ, պանդուխտ որդիք հայու,— ասված է կոչում,— որ բախտն զձեզ հայրենի աշխարհից վարել է մինչև Ամերիկա: Ու տայր ինձ, որ ավետիս տայի ձեզ, իբրև նոյան աղավնին, թե ցամաքեցավ ջրհեղեղ, դարձեք ձեր հայրենի աշխարհ»[120]: Մ. Խրիմյանը նամակագրական կապերի մեջ էր աշխարհահռչակ ծովանկարիչ Հ. Այվազովսկու հետ: 1896 թ. սեպտեմբերի 8-ին նկարչին գրած մի նամակից երևում է, որ հայոց Հայրապետը նրանից խնդրել էր նկարել «Կարմիր գունով հայոց կոտրածի պատկեր, արյան դաշտեր և լեռներ և վշտահար Հայոց Հայրիկ ավերաց վերա»[121]: 1892 թ. Մ. Խրիմյանը ընտրվեց Ամենայն հայոց կաթողիկոս: Ընտրությունների նախօրյակին նրա թեկնածությունը պաշտպանում էին ժամանակի առաջավոր մտավորականները, որոնց թվում նաև Գ. Սունդուկյանը, որը հատուկ նամակով դրեց. «Ես անպայման խրիմ-

118 Նույն տեղում, էջ 24:
119 «Էջմիածին», 1946, հունվար-փետրվար, էջ 42:
120 Նույն տեղում, փետրվար-մարտ, էջ 24:
121 «Էջմիածին», 1950, մայիս-հունիս, էջ 73:

ցանական եմ, սա իմ համոզմունքն է»[122]։ Ընտրությունների և Մ. Խրիմյանին անդրադարձել են նաև ժամանակի ռուսական մամուլի օրգանները։ Հոդվածներից մեկի մեջ դրվատանքի խոսքեր են ասված նրա անձի, վարադում հրատարակած նրա պարբերականի մասին։ Այնտեղ ասված է նաև, որ 1860 թ., երբ Մ. Խրիմյանը այցելեց Կովկաս, լավ կարծիք կազմեց «Ռուսաստանի հայերի մասին» և համոզվեց, որ Ռուսաստանը համարվում է «Արևելյան քրիստոնյաների և հայերի միակ, ճշմարիտ հովանավորը»[123]։ Հոդվածում ասված է. ինչ վերաբերվում է Մ. Խրիմյանի դեպի Ռուսաստանն ունեցած վերաբերմունքին «ապա այն ամենալավն է, և նրան կարելի է համարել ճշմարիտ, ամենաշիտակ և համոզված ռուսաֆիլը»[124]։

* * *

Վասպուրականի XIX դարի երկրորդ կեսին հասարակական-քաղաքական և մշակութային կյանքում ուշագրավ երևույթ էր «Արծուի Վասպուրական» պարբերականի հրատարակությունը։

Մ. Խրիմյանն իր պարբերականի հենց առաջին համարում այն կոչեց «Հայրենասիրական պտուղ», որը նվիրում է Վասպուրականի և այլ վայրերի հայ մանուկներին, որոնք նրան «սպասեն անձկանոք և կարոտությամբ»[125]։ Ապա հորդորում է Արծվին թափ տալ իր հայրենասեր թևերը, թռչել ու հասնել «հեռավոր Հայկաղումս» տալ «ավետիս որ կարոտագին աշոք մինչև ցարդ սպասեն հուսով ավետաբեր գալստյանդ. թե դարձյալ գարուն եկն ի Հայաստան և ի Վասպուրական երկիր, էանց ձմեռն տխուր, անցին գնացին անձրևք տեղատարափ, ծլեցան բուսան ծաղկունք լերին Վարագա...»[126]։ Ալեգորիկ այս խոսքերը վերաբերվում են լուսավորական այն աշխատանքներին, որ պետք է ծավալվեին Վասպուրականում և այլ վայրերում։ Այնուհետև նշում է, որ Արծվի հակառակորդները սխալվեցին, երբ ասացին Արծվի մասին «թե մեռավ և թաղեցավ...»։ Սակայն իրականում «ավասիկ նորոգեցավ»[127]։

---

122 «Նոր դար», 1892, № 39, 7 մարտի։

123 «Исторический Вестник», июль—август—сентябрь, 1892, с. 162.

124 Նույն տեղում։

125 «Արծուի Վասպուրական», 1858, թիվ 1, էջ Ա։

126 Նույն տեղում, էջ Բ։

127 Նույն տեղում։

Մ. Խրիմյանը պահանջում էր Արծվից լինել անվախ, քաջ, չվհատվել, չտատանվել, համբերությամբ ծռվել ամենուր և այնտեղ բույն դնել։ Ապա հուսադրելով իր ընթերցողներին ասում է. «զի գիշերն ու ձմեռն անցյալ է, ծիրանանշույլ արշալույսն զբարձրագագաթամբ լերին վարագա ծավալյալ» «զգալուստ գեղեցիկ առավոտուն. հանդերձյալ է արեգակն հայոց դյուր ամփոփյալ նշոյլս, դարձյալ ճառագայթել զերեսոք Վասպուրական երկրիս»[128]։ Մ. Խրիմյանը պարբերականից պահանջում է սլանալ վարագա լեռից դեպի հայկական հեռուները։ Խմբագիրը նպատակադրվել է հասնել նրան, որ հայ ազգը ճանաչի ինքն իրեն, իմանա անցյալի պատմության փառահեղ դրվագները և դասեր քաղի դրանից։ Արծիվը իր էջերում տպագրում էր իրեն նյութապես աջակցողների անունները, նրանց համարելով «սատարք և բարերարք Վասպուրականի Արծվոյն» և ուրախանում է, որ նկել է ժամանակը, երբ կարելի է ամբողջ ազգին հայտնի դարձնել բարերարների մասին։ «Վասպուրականի Արծիվն,— կարդում ենք մի հոդվածում,— զիշեր ու ցորեկ ցանկանալով կը փափագեր, թե ե՞րբ պիտի ըլլա այն բարենպատեհ ժամանակը, որ իր բարերարացն պանծալի անունները թևերուն վրա առնելով՝ բոլոր հայ ականչներուն հրատարակե»[129]։ Արծվի խմբագիրը դրվատանքի խոսքեր է ասում Կոստանդնուպոլսի այն մարդկանց հասցեին, որոնք նյութապես օգնեցին իրեն և հնարավորություն տվեցին պանդխտության մեջ գտնվող պարբերականին «դեպ 'ի հայրենիք դարձնեն»[130]։ Պարբերականի առաջին համարից երևում է, որ Մ. Խրիմյանը Կոստանդնուպոլսի բեմերից շատ է խոսել Արծվին հայրենիք տանելու մասին, Հայաստան, Հայաստան կանչելով մինչև «Պոլսո մեջ առած կըլլա ամենուն բերանը՝ Հայաստանի վարդապետ կը կոչեն զինքը»[131]։ Այնուհետև «գաղթական հայոց ականջները կարթննան այս անուշակ ձայնեն, ամրացած սրտերին կբնդա ու կը շարժի, մարած ոգիին դարձյալ կը վառի նայրենասիրական կրակով. դեպի արևմուտք նայող աչուները արևելս կը դառնան (ընդգծումը մերն է— Հ. Պ.)»[132]։

Մ. Խրիմյանի ու նրա կողմնակիցների նպատակն էր ամենից առաջ պարբերականը վասպուրական փոխադրել և համայն հայությանը ու հատկապես հայրենիքից դուրս ապրողներին ծանոթացնել իրենց հայրենիքի՝

128 «Արծուի Վասպուրական», 1858, թիվ 1, էջ 2—3։
129 Նույն տեղում, էջ 10։
130 Նույն տեղում, էջ 11։
131 Նույն տեղում։
132 Նույն տեղում։

Հայաստանի հետ։ Հայրենասեր խմբագիրը առանց երկնչելու գրում էր. «Գեղերուն ու քաղաքներուն ղրկվիլ ու թափուր մնալը այն բազմաբյուր հայ բնակիչներեն, կը պատմե Արծիվը, կը հառաչեն աղգասերք։ Հայաստան բնակող մնացյալ սակավաթիվ ժողովրդոց աղքատությունը, տառապանքը ու վերջին չքավորության գառն վիճակը ողբալով կը խոսի Արծիվն. Կուլան աղգասերք։ Հայրենյաց քաղցր գրկեն, ընտանյաց, սիրելյաց, բարեկամաց մոտեն զատվելով՝ երկար ժամանակ ի վեր պանդխտությամբ Պոլսո հրապարակներուն մեջը թափառական շրջող, մեծամեծաց դուռներուն առաջ ինկած հայազգի աղքատ ղազարոսները, ցույց կուտան իրենց Արծիվն...»[133]։

Արծվի էջերում տպագրված հաղորդումներից երևում է, որ Կոստանդնուպոլսում ապրող հայ հարուստ Պողոս Պետրոսյանի նախաձեռնությամբ պարբերականը հրատարակելուց առաջ կազմել է մի ընկերություն, որին նա նվիրում է իր տան սենյակներից մեկը, որն անվանեցին «Արծիվյան սենյակ», որանից հետո այդ ընկերության միջոցներով Կ. Պոլսի ս. Խաչ Եկեղեցում սկսվում է Մ. Խրիմյանի ամսագրի հրատարակությունը։ Մ. Խրիմյանը և ընկերության անդամները մտահոգվում են պանդխտության մեջ գտնվող Արծիվին իր հայրենիքը վերադարձնելու մասին. այդ կապակցությամբ Մ. Խրիմյանը գրում է. «Երբոր Արծվոյն պանդխտության ժամանակ կը լրանա՝ տպագրության մամուլը իր խոնջած թևերուն վրա առնելով՝ դեպ հայրենիք կը դառնա»[134]։

Հայոց աղգի ամենամեծ չարիքներից մեկը պանդխտությունը համարելով, Մ. Խրիմյանը հենց սկզբից սկսեց իր պայքարը այդ երևույթին առաջացնող պատճառների դեմ։ Հոգով և սրտով կապված լինելով, իրենց տունն ու տեղը և ընտանիքն ու հարազատներին թողած, ամեն օր խորը հոգոցներով իրենց հայրենիքը հիշող պանդուխտների հետ, պարբերականի էջերում Մ. Խրիմյանը սկսեց հորդորել նրանց վերադառնալ հայրենիք։ Պանդխտության առաջն առնելու Մ. Խրիմյանի դեղատոմսը Հայաստանում ժողովրդի համար շահավետ վաստակ ստեղծելը և լուսավորություն տարածելն էր։ Նա գրում էր. «Մինչև որ Հաայստանի մեջ ալ շահավետ վաստակի դռներ չբացվի, կրթության ուսմունքը չտարածվի ազգի մեջը՝ հնար չկա ասոր դեմը առնելու»[135]։

---

133 Նույն տեղում։

134 Նույն տեղում, էջ 13։

135 Նույն տեղում, թիվ 3, էջ 79—80։

«Տեսարանք հայրենի աշխարհաց» ընդհանուր խորագրի տակ պարբերականը հոդվածներ էր տպագրում Հայաստանի տարբեր վայրերի մասին, նկարագրում նրանց անցյալը և այդ ժամանակների դառը վիճակը։

Իր էջերում Արծիվը հոդվածներ է տպագրում նաև Արևելյան Հայաստանի մասին։ 1862—1863 թթ. համարներից մեկում տպագրվեց Գ. Սըրվանձտյանցի «Սյունաց աշխարհ և Շուշի քաղաք» հոդվածը, որտեղ նկարագրելով Տաթև, Գանձասար և Ամարաս վանքերը, գտնում է, որ այդ լեռնաշխարհում ապրող ժողովուրդը ունի «բնական արիութիւն և սրտի քաջութիւն», «ազատասիրութեան հոգի և նահատակութեան պրկունը յուր անձին մէջ կը կրէ, պարզութիւն է թէ՛ ուտելու, թէ՛ հագնելու և թէ՛ խոսելու մէջ»[136]։ Հոդվածագիրն անդրադառնում է Ղարաբաղի 5 մելիքությունների համառոտ պատմությանը, գովեստի խոսքեր ասում գեղեցիկ Շուշի քաղաքի մասին, որտեղ գործում են գրատուն, կայսերական և ազգային ուսումնարաններ։

Պարբերականում «Թանգարան հայկական դպրութեանց» խորագրի տակ տպագրվեցին բազմաթիվ հոդվածներ, որոնցից 1858 թ. Ալեքսանդրապոլից Մխիթարյան Հակոբ վարժապետի նամակը, որի մեջ նա ողջունելով Արծվին, ասում էր. «Ախուրյան գետի եզերքին բարձրաբերձ բազեմը Ծաղկոցաց ձորեն երկու փունջ ծաղիկ բերան առած՝ վարագա մենաստանը կը հասնի, կողջունեն ղԱրծիվը և իր բերնի ծաղկեփունջ ընծաները կը նվիրե Թանգարանին»[137]։ Հակոբ վարժապետը նշում է, որ Արծվի հրատարակությունը ուրախացրել է թե՛ իրեն և թե՛ իր աշակերտներին և նրան համարում է «Հայաստան աշխարհի Արծիվը»[138]։

«Մեծն Տիգրան Երվանդյան» հոդվածում Տիգրանին Աքիլլեսի հետ համեմատելուց հետո նշում է, որ նա չէր արհամարհում «զնվաստն, այսինքն զշինականս»։ Մ. Խրիմյանը դրանով հասկացնում էր ժամանակի վերնախավի ներկայացուցիչներին՝ հասարակ մարդկանց հետ լավ վարվել և բերում է Աստվածաշնչի խոսքերը, թե մարդը պետք է հասարակ լինի «որչափ ՚ի մեծութիւն հասանիցիս, ՚ի խոնարհութեան կալ զանձն քո»[139]։ Նա հորդորում է մեծամեծներին չզբաղվել կաշառակերությամբ՝ «ոչ աշառել յատենի կրծելով կաշառս անօրէն ձեռոք եւ զողորմել տնանկին անգամ յորժամ անիրաւ իցէ։ Գութ եւ խնամ տարածել հայրաբար

136 «Արծուի Վասպուրական», 1862—63, թիվ 4, էջ 100։
137 «Արծուի Վասպուրական», 1858, թիվ 1, էջ 25։
138 Նույն տեղում։
139 Նույն տեղում, թիվ 4, էջ 124։

ի վերայ հասարակաց. ընդ աւագն քաղաքացին եւ ընդ նուաստն գեղջուկ միով մարդասիրական ակամբ հայել»[140]։ Մ. Խրիմյանի համար մարդը մնում է մարդ անկախ նրանից նա իշխան է, թե գեղջուկ, ամեն ոք պարտավոր է մարդու նկատմամբ մարդավայել վերաբերմունք ունենալ և խորհուրդ է տալիս լինել «պարկեշտ, բարեխառն եւ սակավապէտ կենցաղաւարութեամբ. եւ մի զառածանել երբեք 'ի շռայլական սէս պէս զեխութեանս։ Ի կերակուրս եւ յըմպելիս համեստաբար վարեցարուք»[141]։

Մ. Խրիմյանի աչքից չի վրիպել հայաշատ Թիֆլիսը և նա տպագրել է «Հայկազուն ուսումնասերք ի Տփղիս» հոդվածը, նշելով, որ չնայած այնտեղ ապրող հայերը գաղթել են Հայաստանից, սակայն նրանից հեռու չեն և շատ հաճախ ուխտի են գնում Վաղարշապատ, Խորվիրապ, անգամ Տարոն՝ չմոռանալով ճանապարհին մտնել Անի։

Մի ուրիշ հոդվածում «Սահակ Պարթեն հրաշարվեստ թարգմանիչ հայազգի դպրության» վերնագրով, դրվատում է Սահակ Պարթևի կատարած աշխատանքը, որը «Ի ձեռն առեալ զիմաստից եւ գիտութեան լուսապայծառ ջահ» իր աշակերտների հետ միասին շրջում էր Հայաստանով մեկ, լուսավորություն տարածում, բաց էր անում դպրոցներ, կրթում մանուկներին, հանում ժողովրդին հեթանոսական նիրհից։ Նա միաժամանակ Հայաստանի անկախության ջերմ պաշտպանն էր։ Արծիվը կոչ էր անում սիրել հայրենիքը, ժողովրդին, արդարությունը։ Պարբերականը տպագրեց «Սուրբ Մեսրոպ հեղինակ և գրիչ հայկական տառից» հոդվածը, որի մեջ Մաշտոցին համարում է հանճարեղ մի մարդ, որն անգնահատելի ծառայություն մատուցեց իր ժողովրդին, հայ գրերի նրա գյուտը համարելով «Մեսրոպյան շնորհակիր տառեր», որը նա ձեռք բերեց քրտնավաստակ աշխատությամբ, որոնցով «բղխեցին աղբիւրք կենդանարար ջուրց և գետորէն ծավալեալ խաղացին 'ի ծարաւատ երկիր հայոց»[142]։

Հայրենասիրության մասին պարբերականը գրում էր, որ հայրենիքի սերը պետք է կոնկրետ լինի և ոչ թե վերացական։ Հայրենասերը պետք է լավ ճանաչի իր հայրենիքը, տեսնի և չմոռանա նրան, և պարտավոր է, եթե անգամ ապրում է հայրենիքից դուրս, այցի գնալ նրան, քանզի Հայաստանը իր քարակերտ հուշարձաններով մեծ զարմանք է առաջացնում անգամ օտարների մոտ։

---

140 Նույն տեղում, էջ 127։

141 Նույն տեղում։

142 Նույն տեղում, № 6, էջ 172։

Պարբերականը մի հոդվածը վերնագրել է «Մեռած սրտերու կենդանութիւն տվող ազգային պատմութիւնն է միայն» և ապա ի լուր իր ազգի հայտարարում է, որ «Մեռելութեան քունով ընկղմած որևէ անզգա սրտերը ազգային նախնյաց պատմութիւններով միայն պիտի կարեն կենդանութիւն առնուլ»[143]:

Մ. Խրիմյանը «Արծիվում» սկսեց տպագրել հոդվածներ գյուղատնտեսության հին եղանակներից հրաժարվելու և այն նոր եղանակներով վարելու մասին: Առաջարկվում էր ստեղծել կենցաղօգուտ ընկերություն, որը պետք է սկսեր զբաղվել թթենու մշակությամբ: Մայրաքաղաքում ապրող մի քանի վանեցիներ կազմակերպում են «բաժանորդական ընկերություն», որը Վասպուրականում պետք է ստեղծեր թթաստաններ և սկսեր շերամի մշակությունը: Սակայն Մ. Խրիմյանի նպատակը միայն շերամի մշակությունը չէր, այլև պանդուխտներին իրենց հայրենիքի հետ կապելը: Ավանց գյուղում կազմակերպված այդ ընկերությունը ուներ 120 բաժին (յուրաքանչյուրը 300 ղուրուշ), որը թթենիներ աճեցնելու և շերամի մշակությունը սկսելու համար գնել էր 24.500 ղուրուշի արժողությամբ մի այգի[144]:

Մ. Խրիմյանը կոչ էր անում Արևմտյան Հայաստանի բնակիչներին ստեղծել 4 ընկերություն (Հարկավճար, խնայաշահ, աղքատասիրաց և ընթերցասիրաց) և տպագրեց այդ ընկերությունների կանոնադրությունները:

Պարբերականի հետագա համարներում տպագրվեցին նաև գյուղացիների կյանքի մասին հոդվածներ: Լույս տեսավ Գ. Սրվանձտյանցի «Շինական հայոց կյանք ի Հայաստան, թշվառ նկարագրութիւն, առ նույն ընկեր իմ Պ. Ա. Իշխանյանց ի Գ. Գյուղ» հոդվածը, որի մեջ շարադրում է իր կարծիքը հայ շինականի կենցաղի մասին և այն համարում «մահաբեր գերութիւն, զրկանք և նեղութիւն, մանավանդ թե հոգեկան ու անձնական կուրութիւն»[145]: Հայ շինականների կյանքը Գ. Սրվանձտյանցը համարում է «կրկին անեծք», «Եգիպտոսի գերութիւն», որոնցից մեկի «պարտատերը մեկ տարի տիրեց այն արտին, երկրորդ տարին տարավ եզները»[146] և գյուղացին ստիպված դիմում է դեպի «կամովին և ակամա անձամբ գերութիւն»[147], այսինքն՝ պանդխտության:

---

143 «Արծուի Վասպուրական», 1862—63, թիվ 1, էջ 24:

144 «Արծուի Վասպուրական», 1858, թիվ 3, էջ 65:

145 «Արծուի Վասպուրական», 1862—63, թիվ 3, էջ 66:

146 Նույն տեղում, էջ 69:

147 Նույն տեղում, էջ 71:

Ամփոփելով շինականի կյանքի նկարագիրը, Գարեգին Սրվանձտյանցը պնդում է, որ «թշվառություն է մանկան յուր ծնած րոպեից մինչև գերեզմանը»: Կյանքը մի գեհեն է Թուրքիա կոչված երկրում: Շինականների կյանքին Գ. Սրվանձտյանցը անդրադարձավ նաև Արծվի 1863 թ. մի համարում տպագրելով «Թշվառ նկարագրություն» հոդվածը, որտեղ ասում էր, որ շինականի կյանքը զազրելի է դարձել նաև այն պատճառով, որ նրան ուսուցանող, խնամող և մխիթարող չկա, նրա կյանքը անցնում է թշվառության մեջ՝ արտասուքներով, հառաչանքներով, գյուղացի մանուկները ծնվելով ապրում են գերության մեջ, որը սոսկալի ողբերգություն է: Քննադատում է կշռակությունը, որի ժամանակ հայ ընտանիքները իրենց տներում պետք է պահեին քրդական ցեղերի ընտանիքներին՝ իրենց անասուններով:

Իր էջերում պարբերականը մեծ տեղ էր տալիս հայկական դպրոցների, աշակերտների դաստիարակության և դպրոցի հետ կապված այլ հարցերի: 1858 թ. № 5-ում նա տպագրեց «Նորակառույց վարժարան ժառանգավորաց ի Կարին» հոդվածը, որտեղ այդ ուսումնարանի բացումը համարում էր մի եղելություն, որը կարող էր զալարեցնել և կանաչեցնել ժողովրդի ոսկորները: Գովեստի խոսքեր են ասվում Կարինի Գրիգորիս հոգևոր առաջնորդի հասցեին, որի ջանքերով Կարինից ոչ շատ հեռու լուսավորչի վանքում «հայոց դաշտաբնակ զառնուկներուն համար փարախ կամ մանկատեղի» է շինել[148]: Հոդվածում ջերմ խոսքեր են ասված հինժամանակների վանքերի կրթիչ դերի մասին: Հոդվածագիրը նշում է, որ XIX դարի կեսերին եկեղեցիներից շատերը ավերակ են և «մեկ մեկ երկրագործության ագարակ զարձած են և կը ծառային միայն: մարմնո պիտոյից և իրենց մեջ բնակող վանահայրերն ալ համարյա թե գեղացիի նման ավելի կախորժեն գետին հերկել, տավար, ոչխար զարմանել, քան թե եկեղեցվո մանկանց միտքը մշակել կամ թե գրիչ սիրելով զանազան նորանոր մատենից հեղինակ ըլլալ»[149]: Արծիվը այդ դպրոցը լուսավորության մի ջահ համարելով, կոչ է անում այնտեղ հիմնել տպարան:

Արծվի էջերում Տ. Գալփակչյանը ոչ միայն հայոց պատմության մասին էր հոդվածներ գրում, այլև տպագրում էր առակներ և դաստիարակության թեմաներով հոդվածներ: «Ուսմունք և ընթերցանություն» հոդվածում նա ընթերցանությունը համարում է մարդկային առաջադիմության աղբյուրը: Հայ մատենագրությանը քաջատեղյակ և մի քանի լեզուների մեջ հմուտ

148 «Արծուի Վասպուրական», 1858, № 5, էջ 151:

149 Նույն տեղում, էջ 153:

այդ ուսուցիչը Մ. Խորենացուն համարում է «քաջ պատմագիր», անդրադառնում է նրա գրքի հրապարակ գալու պատմությանը, նշում նաև Գուտենբերգի գյուտի մասին: Հոդվածագիրը գտնում է, որ անհրաժեշտ է դպրոցներ բացել նաև աղջիկների համար, պետք է մանուկներին դաստիարակող լավ ուսուցիչներ ունենալ և վերջապես մայրերին հանել խորը թմբությունից, կրթել և դաստիարակել, քանի որ «տղի մը մատաղ հասակին մեջ, առաջին դաստիարակություն տալու միջոց եղող պատրաստական ուսուցիչ և օրինակ մայրերը կրնան ըլլալ»[150]: Աղջիկների այդ նոր բացվող դպրոցներում առաջարկվում էր անցնել հայկաբանություն, ազգային պատմություն, կրոն, լեզվագիտություն և «կանանց վերաբերյալ արվեստներ»[151]: Այդ ժամանակ Վասպուրականում աղջիկների դպրոցներ չկային, նրանց բացումը և այդ առարկաների անցնելը հնարավոր կդարձնեին ապագա մայրերին ավելի լավ դաստիարակել իրենց երեխաներին: Արծիվը առաջարկում էր ավելի շատ թերթեր հրատարակել:

1858 թ. Արծիվը տպագրեց Բաֆֆու նամակը, որի մեջ պարբերականը նա համարեց մի նորություն Արևմտյան Հայաստանի կենտրոնում՝ Վանում, որը «կը մարանչի հնության հնտը»[152]: Հոդվածում Հայաստանի թուլացումը, տկարացումը և անկախության կորուստը Բաֆֆին համարում է «հոգևորականաց անհոգության» արդյունք, քանի որ նրանց մոտ շատ պակաս է լուսավորություն տարածելու ենթանքը և «եվրոպացիք՝ որչափ ավելի ջանք են տանում ուսումնարաններն բազմացուցանելու և տպագրությունն առաջ տանելու՝ Հայաստանի վարդապետներն անչափ հետքում են»[153]: Հոդվածի կապակցությամբ տպագրված ծանոթության մեջ խմբագրությունը նշում է, որ չնայած հոդվածի հեղինակը սուր դիտողություններ է անում եկեղեցականների հասցեին, սակայն դրանք ճիշտ են: Մ. Խրիմյանը կոչ էր անում հայ հոգևորականներին արթնանալ խորը նիրհից և հասնել նրան, որ «եկեղեցւոյ անխնամ մարդկանց և ազգային հառաջադիմության համար անձնվեր ծառայությամբ հոգ տանիմք»[154]:

Վարագա վանքից դեպի Հայկական գավառները և այլ վայրեր «քայլող» պարբերականը երար հետևից հոդվածների մի ամբողջ շարք է տպագրել հայ մատենագիրների մասին, որի նպատակը հայ ժողովրդին անցյալի մատենագիտական դանձերին ծանոթացնելն էր: Հոդվածներից «Անձնվեր

150 Նույն տեղում, էջ 163:
151 Նույն տեղում, էջ 164:
152 Նույն տեղում, № 6, էջ 188:
153 Նույն տեղում, էջ 190:
154 Նույն տեղում, էջ 193:

աշակերտք սրբո թարգմանչացի» մեջ խոսվում է Ղևոնդ Երեցի, Եղնիկ Կողբացու, Կորյունի, Եղիշեի, Մովսես Խորենացու, Մամբրե Վերծանողի, Դավիթ Անհաղթի, Ստեփանոս Սյունեցու և այլոց մասին: Նրանց համարում է Մեսրոպի և Սահակի աշակերտները: Թուրքական դաժան տիրապետությունը ի նկատի ունենալով Մ. Խրիմյանը թախիծով լեցուն բառերով դիմում է իր ժողովրդին, ասելով. «Նկեղեցիք քո հրձիգ եղեն, հարկք քո տապալեցան, մանկունք քո գերի վարեցան, արյուն քո հեղին որպես ջուր... աշխարհ ձեր, առաջի օտարք կեցցեն»[155]: Ապա հորդորում է իր ժողովրդին արթնանալ խորը քնից և անել ամեն ինչ իր զավակների հզորացման համար:

Արծվի էջերում այնուհետև իրար հետևից տպագրվեցին «Մովսես Քերթողահայր ակնաղբեր հայազգի դպրության», «Եղիշե վսեմախոս պատմագիր հայոց», «Եղնիկ Կողբացի ընտիր աստվածաբան հայոց», «Դավիթ Անհաղթ փիլիսոփա» և այլ հոդվածները: Վերլուծելով Եղնիկ Կողբացու աշխատությունը, նրան կոչում է «Սքանչելի Եղնիկ» և կոչ է անում հայ մանուկներին նմանվել նրան: Դավիթ Անհաղթի մասին կենսագրական տեղեկություններ հաղորդելուց հետո, գրում է նրա փիլիսոփայական հայացքների մասին: Արծիվը միաժամանակ գտնում է, որ հասել է ժամանակը, երբ իր ժողովրդի ընդերքից պետք է ծնվեն նոր Եղնիկներ, Եղիշեներ, Դավիթներ:

Արծիվը իր էջերում տպագրում էր նաև գիտական բնույթի հոդվածներ: Նրա մի քանի համարներում տպագրվեց «Տաղաչափություն գերապատիվ Թուխուլյան Հակոբ եպիսկոպոսի վանահոր Լիմ անապատու» հոդվածը, որի մեջ այդ երկարամյա ուսուցչին և բանաստեղծին համարում է «գիտնական», որը «յուր բարի առաքինի և սուրբ վարքովն և բարեգործությամբքն շատ օգտակար արդյունքներ ունեցած է»[156]: Այնուհետև հոդվածի հեղինակը վերլուծում է նրա բանաստեղծությունների տաղաչափությունը և ստուգաբանում նրա աստվածաբանական բնույթի մի բանաստեղծությունը: Արծիվը տպագրեց Հ. Թուխուլյանի մի շարք բանաստեղծությունները: Արծիվը իր էջերում տպագրեց Պետրոս Մադաթյանի, Մարտիրոս Վանեցու, Գ. Սրվանձտյանցի և այլոց բանաստեղծությունները:

Տ. Գալփակչյանը հանդեսի էջերում հաճախ էր տպագրում նաև բարոյագիտական հոդվածներ: Նպատակը մարդկանց բարոյական դաստիարակությունն էր: Ահա նրանցից մի քանիսի վերնագրերը. «Ջորս բան կա-

155 Նույն տեղում, էջ 201:

156 «Արծուի Վասպուրական», 1864, թիվ 1, էջ 10:

աշխարհիս մեջ, որ մարդուս երջանկություն կընծայէ առաջին առաքինություն, երկրորդ ուսմունք և գիտություն, երրորդ չափավորություն սիրել, չորրորդ հայրենյաց փառավորություն ու զգացում»[157]: Կամ «Առաքինի մարդը՝ արդարության և ճշմարտության անկործանելի անարիկ պարսպին մեջ ապահով ըլլալուն համար բնավ տեղե մը երկյուղ չկրեր. բայց չար ու մոլի մարդը ամեն բանե կը վախենա ու կը դողա»[158], «Քիչ հարստություն ունեցողը՝ իր կարողութենեն ավելի առատաձեռն է, քան թե շատ հարուստ եղողը», «Աղքատ արհեստավորը հարուստ ծառայեն երջանիկ է»[159] և այլն: Պարբերականի համարյա բոլոր համարներում կարելի է հանդիպել ժողովրդական առակների: Տպագրվում էին Վասպուրականի բնակիչների բազմաթիվ թևավոր խոսքերը[160]:

1859 թ. պարբերականի էջերում տպագրվում են Տ. Գալփակչյանի պատմագրական հոդվածները, որոնց մեջ կարմիր թելի նման անցնում էր հայ ժողովրդի անկախության գաղափարը, ցավով խոսվում այն կորցնելու և թուրքական բռնակալական սիստեմում ապրելու մասին:

1859 թ. Արծիվը սկսեց ավելի շատ առակներ և բանաստեղծություններ տպագրել և նրա էջերում երևացին «Աղվես և գայլ», «Հավ և թռչունք», «Արծիվ և ագռավ», «Առյուծ և այծ», «Ագռավ և աղվես», «Արագիլ և ճնճղուկ», «Մկունք և կատուն», «Գյուղացի և խոզ և ոչխար» և այլ առակները: Տպագրվեցին Պետրոս Մադաթյանի «Քնար Հայաստանի» և Սմբատ Մոմիկոնյանի «Գայլ վահան», Ա. Թոխմախյանի «Արսեն ի դաշտ Ավարայրի», «Մեծն Վարդան ի Շավարշան», Դ. Փիրղալեմյանի «Պարսավանք բռնակալաց աշխարհիս և հորդորակ առ հանդերձյալն», Ա. Գրիգորյանի «Աշուն» և այլ բանաստեղծությունները: Արծվի էջերում երևաց թատերական մի վեպ՝ «Վերջին Արտաշիր թագավոր» վերնագրով:

1860 թ. լույս տեսավ Արծվի միայն մեկ համար, քանի որ նրա տնօրենը Գ. Սրվանձտյանցի և այլոց հետ մեկնեց Կովկաս:

1861 թ. առաջին համարում տպագրվեց Գ. Սրվանձտյանցի «Խորհրդածություն Վասպուրականի Արծվոյն յուր ճանապարհորդության մեջը» հոդվածը, որից երևում է, որ Մ. Խրիմյանը և նրա հետ Կովկաս մեկնողները 7 օր են մնացել Էջմիածնում: Գ. Սրվանձտյանցը խիստ քննադատության է ենթարկում Ամենայն Հայոց կաթողիկոսին և նրան շրջա-

157 «Արծուի Վասպուրական», 1858, թիվ 10, էջ 301:
158 Նույն տեղում, էջ 300:
159 Նույն տեղում, թիվ 8, էջ 243—244:
160 Նույն տեղում:

պատող միաբանությանը, համարելով նրանց ժողովրդից կտրված մարդիկ, որոնք պարփակված են վանքի պարիսպների մեջ՝ «Սրտով և մտքով ճնշված, կարող չեն դուրս ելնել և Արարատյան դաշտին մեջ խաղալ, մըրցիլ, կռվիլ ու ազիտութեյան բանակ հաղթահարիլ»[161]: Գ. Սրվանձտյանցը պատում է, որ էջմիածնի միաբանությունը և նրա վեհափառը նպատակ չունեն կարգավորելու վանքի անտեսությունը, որ էջմիածնի հոգևորականներն անմիաբան են, սուր խոսքեր են ասված Թուրքիայում և Ռուսաստանում ապրող հայ հարուստների մասին, նշելով, որ նրանք «չեմ գիտեր էջմիածին տեսեր են թե ոչ»[162]: Գ. Սրվանձտյանցը նշում է, որ Երևանում թափանցել է լուսավորությունը, այնտեղ բացի հայկական դպրոցներից պետական միջոցների հաշվին գործում են տղաների և աղջիկների գիմնազիաներ: Երևանի մոտերքով անցնում էր Հրազդան գետը, որի մասին քաղաքի բնակիչները «զանազան խաղեր, երգեր և գովեստներ են շինած»[163]:

Պարբերականի էջերում տպագրվում էին նաև հայ ժողովրդի կենցաղին վերաբերվող հոդվածներ, որոնցից էին Մեսրովբ Փափազյանի «Նորագիր գինեմոլ անձանց» հոդվածը: Հեղինակը գինին համարում է «գինին գեղեցկապույն», որը ըմպելուց հետո մարդը իրեն շատ լավ է զգում, սակայն այդ հիանալի ըմպելիքը պետք է չափավոր օգտագործել, քանի որ չափավորությունը կորցնելու դեպքում այն կարող է ընտանիքին թշվառություն բերել: Հարբեցողները, ասված է հոդվածում, վատնում են իրենց վաստակը և ընկնում ծանր պարտքերի տակ, այնուհետև ստիպված թողնում են իրենց ընտանիքները և դիմում պանդխտության: Վերջում հոդվածագիրը եզրակացնում է. «Ուր, ո՛չ է գինեմոլութիւն՝ անդ թագաւորի փառաւոր երջանկութիւն»[164]:

Պարբերականի աչքից չէին վրիպում նաև այն հյուղակներն ու տները, որի մեջ ապրում էին իր ժողովրդի զավակները: Ուստի առաջարկություն է մտցվում առաջավոր աղգերի օրինակով լավացնել բնակարանների տանիքները: Այդ առիթով տպագրված «Թե Հայաստանի շինվածոց տանիքներն ինչո՞ւ հողով ծածկված են և թե անոր տեղ կղմինդր գործածվի ինչ օգուտներ կառաջանա»[165]:

Նշվում էր, որ Հայաստանի գյուղերում տների կտուրները հողով են ծածկված, այդ սովորությունը գալիս է շատ հին ժամանակներից և ան-

161 «Արծուի Վասպուրական», 1861, № 1, էջ 8:
162 Նույն տեղում, էջ 13:
163 Նույն տեղում, էջ 17:
164 «Արծուի Վասպուրական», 1859, № 6, էջ 205:
165 «Արծուի Վասպուրական», 1862—63, թիվ 5, էջ 153:

հրաժեշտ է, որպեսզի գյուղացիները հրաժարվեն դրանից և իրենց բնակարանների տանիքները կղմինդրով ծածկեն։

1861 թ. փետրվարի համարում Արծիվը տպագրում է Գ. Սրվանձտյանցի իրար հաջորդող երեք «Հոգի և զգացողություն Հայկազանց Ռուսաստանի», «Հայկազանց հառաջադիմության կենտրոն բուն հայրենիքն է» և «Շիրիմք հայրենյաց» հոդվածները։ Առաջին հոդվածում նշում է, որ Կովկասում հանդիպել է շատ ռուսահայ մարդկանց, որոնց հետ զրուցելիս երևում է «նոցա սրտի եռանդը, որ շատ մասերու մեջ ավելի կենդանի և զգայուն էր։ Տաճկաստանի ուսումնականաց եռանդեն, մանավանդ զինվորական կարգին մեջ եղած ուսումնականները. վասնզի սրտի եռանդը վառող արիական առաքինության սրբազան կրակն է. ո՞վ կը տարակուսի, որ այս մասին մեջը Ռուսիո Հայկազունքը գերազանց են»[166]։ Գովում է Ներսիսյան դպրոցը և գիմնազիաները, ցավով նշում, որ հայերը թողնելով իրենց հայրենիքը, կուտակվել են Թիֆլիսում, Կոստանդնուպոլսում և Հնդկաստանում։ Վերջիններս Հնդկաստանում տաճարներ են կանգնեցնում, առանց մտածելու, որ իրենց ժողովուրդը հիմնականում ապրում է Հայաստանում և պետք է օգնել նրա բնակիչներին՝ իրենց զավակներին կրթելու հարցում։ Այնուհետև հոդվածագիրը նշում է, որ «Բուն Հայաստանյաց հողեն կամ սահմաններն դուրս հայրենի տաճարին հիմն դնող մարդիկը դեպ ի Լեհաստան գնացող քառասուն հազար հայ գաղթականաց պատմությունը թող կարդան, կամ ներկա ժամանակիս մեջը ոտքով շրջելով Լեհաստանի սահմանները գոնե այնչափ գաղթականներեն հայ մի պտնան»[167]։ Հայ ժողովրդի վիճակը ծանր է բուն հայրենիքում, որտեղ նա «յուր հայրենյաց մեջը անհայրենիք կը բնակի»[168]։

Հաջորդ հոդվածում Գ. Սրվանձտյանցը գրում է, որ հայի իսկական հայրենիքը Հայաստանն է՝ «Այն հողեր ու դաշտեր, զոր մեր սուրբ նահատակաց արյունները թրջեցին. այն սուրբ շիրիմները, ուր որ մեր առաքինի նախնիքները կընկղեն. ահա այս նվիրական տեղերն են մեր հայրենիքը կամ հայ զավակներուն սեփհական կալված ու աստվածապարգև ժառանգ»[169]։ Թեև թշնամու անողոք հարվածներից հետո հայրենի երկրում հայերի թիվը քչացել է, սակայն մնացած զավակների մեծագույն մասը բնակվում են հայրենի աշխարհի մեջ և «դեռ Այրարատ, Բարձր Հայք,

166 «Արծուի Վասպուրական», 1861, թիվ 2, էջ 36։
167 Նույն տեղում, էջ 42։
168 Նույն տեղում։
169 Նույն տեղում, էջ 44։

Տարոն, Վասպուրական և այլ նշանավոր նահանգները հայոց բազմութեյան կենտրոն կը համարվին»[170]։

Սակայն բուն Հայաստանում ժողովուրդը թմրութեյան մեջ է ապրում և պետք է նրան հանել այդ նիրհից, որի համար անհրաժեշտ են դպրոց, ուսուցիչ և դաստիարակութեյուն ու ժողովրդին նվիրված անկեղծ եկեղեցականներ։ Ժողովուրդն իր նիրհից դուրս բերելու համար «Երկու աթենական տաճար է պետք Հայաստանին լուսավորելու համար՝ այսինքն եկեղեցական դպրոց և ժողովրդական դպրոց»[171], և առաջարկում է էջմիածնում «գոնե հարյուր աշակերտ պարունակող եկեղեցական դպրոց մի հաստատվի»[172]։ Գտնում է, որ պետք է դպրոցներ ունենալ նաև Սանահին, Հաղպատ, Գանձասար, Տաթև գյուղերին և Սևանի վանքերին կից։ Արևմըտյան Հայաստանում դպրոցներ պետք է բաց անել Մուշում, Կարինում, Բաղեշում, Կիլիկիայում, Սեբաստիայում և այլուր, օգտագործելով վանքերի հասույթները։ Պետք է ունենալ լուսավոր ճրագներ, այնտեղ հավաքել աշակերտներ և նրանց կրթել ու դաստիարակել։ Հայ մարդուն պետք է այնպես կրթել, որ նա ճանաչի իր հայրենիքը, ասելով. «Հոդի, թե կսիրես հայրենիքդ, ոտքով և այցելութեյամբ շրջիր բոլոր Հայաստանի սահմանները, դիտե, տես աչքիդ առաջ ինչ ողբալի տեսարաններ կբացվին. եկեղեցվո դաշտերը Աֆրիկեի ծարավոտ անապատներ դարձեր են»[173]։ Այնուհետև նա շարունակում է. «Եթե մեկը գթոտ աչքով իրենց վիճակին վրա նայի, կտեսնա զիրենք ամենայն կերպ թշվառութեյամբ լի. աղքատութեյուն, չքավորութեյուն գրեթե իրենց համար սեփհական է»[174]։ Հոդվածը քննադատութեյան է ենթարկում այն հոգևորականներին, որոնք շինականներից առատ տուրք են հավաքում, սակայն կտրված են նրանցից և չեն ղբաղվում նրանց զավակներին կրթելու հարցով. «Հիրավի,— կարդում ենք այնտեղ,— հոգևոր մխիթարութեյան աղբյուրներուն ջուր կտրած է իսպառ վանքերու ակներեն. բայց գյուղացոց աղբյուրները առատ կը վազեն. այսինքն պտղին տուրք առանձնապես կը վճարեն նախնի սովորութեյան համեմատ»[175]։ Հոգևորականները առատաբար վայելում են շինականների սեղանի բարիքները, սակայն նրան չեն ծառայում, իսկ հոդի աշխատավորները գյուղում «եկեղեցական տուրքերու բեռները սիրով կը

170 Նույն տեղում։
171 Նույն տեղում, էջ 46։
172 Նույն տեղում, էջ 47—48։
173 Նույն տեղում, էջ 52։
174 Նույն տեղում, էջ 53։
175 Նույն տեղում։

տանին և կարծեմ քաղաքական տուրքերն ալ իրենց ուժեն վեր կրկնապատիկ կը վճարեն»[176]։

Այդ վիճակը շտկելու նպատակով Գ. Սրվանձտյանցը և Մ. Խրիմյանը տնում էին հայկական եկեղեցին վերակառուցելու խնդիրը, գտնելով, որ «Հայրենի շինության հիմն եկեղեցիեն սկսելու է»[177]։

Վերջին «Շիրիմք հայրենյաց» հոդվածում Գ. Սրվանձտյանցը կոչ է անում իր ժողովրդին՝ չմոռանալ իրենց նախնիների լավ և բարի հիշատակը, նկատի ունենալով, որ բռնավորները պատմության բեմահարթակից ժողովրդին ջնջելուց առաջ «նախ այն ազգին մեջ եղած գիրքերը կայրեին, կարդացողները կսպաննեին. նախնյաց շիրիմները կքանդեին. և այն ազգի դյուցազանց, նահապետաց, թագավորաց և քաջաց պատվական ոսկորներ կը փշրեին կամ կը վառեին»[178]։ Բարբարոսները ազգը հիմնահատակ կործանելու նպատակով այրում և ոչնչացնում էին նրա հանճարով կառուցված բերդերն ու դղյակները, նշանավոր դաստակերտներն ու շենքերը, եկեղեցիները, նպատակ ունենալով ազգի միջից մեկընդմիշտ անհետացնել «Հայրենասիրական կամ ազգասիրական սրբազան զգացմունքն ու հոգին և ապա կսկսեին խեղճ ժողովուրդը դերել, տանել, կամ դարձուցանել իրենց ազգութենեն»[179]։

1864 թ. Արծիվը տպագրեց Տ. Դալփակչյանի «Հայաստանի վանօրեից այժմյան ողբալի վիճակը» հոդվածը, որի մեջ ասում էր, որ հայկական «վանքերն ազգային բարոյական զարգացմանը ծառայելու պարտավոր են» և Ազգային Սահմանադրության համաձայն պետք է այնտեղ բացվեն դպրոցներ, թանգարաններ, տպարաններ և հիվանդանոցներ, սակայն Հայաստանի վանքերի ճնշող մեծամասնությունը գտնվում են «ողբալի դրության զեղծմանց և անկարգության մեջ»[180]։ Հայկական վանքերի ճնշող մեծամասնությունը ապաստան են դարձել դինեմոլ, որկրամոլ անձանց։

Պարբերականը առանձնակի ուշադրություն է նվիրել դպրոցների, ուսման և դաստիարակության հարցերին։ Վարագի ժառանգավորաց, Վանի, Կարինի, Թիֆլիսի դպրոցների մասին տպագրված հոդվածներից հետո Արծիվը տպագրեց «Ժողովրդական դպրոց» հոդվածը, որի մեջ խոսվում է այն մասին, թե ի՞նչ պետք է անել ժողովրդական դպրոցների ցան-

176 Նույն տեղում, էջ 54։
177 Նույն տեղում, էջ 55։
178 Նույն տեղում, էջ 58։
179 Նույն տեղում։
180 «Արծուի Վասպուրական», 1864, թիվ 2, էջ 26։

ցը ընդլայնելու և ժողովրդի զավակներին կրթելու կապակցությամբ։ Հոդվածը, անշուշտ, պատկանում է Մ. Խրիմյանի գրչին, որի մեջ նա ասում է, որ Հայաստանի մթին գավառների մեջ լույս ծավալելու համար «ժողովրդական դպրոց պետք է։ Ազգային լուսավորության միջոցն այս է միայն»[181]։ Քննադատում է այն մարդկանց, որոնք ասում էին, թե ուսումը պետք է միայն եկեղեցականներին, գտնելով, որ «տղաս քահանա կամ վարդապե՞տ պիտի լինի, ի՞նչ պետք է իրեն համար ավելի դրել կարդալ»[182]։ Առաջադիմական համարելով Կոստանդնուպոլսի և հայկական այլ գաղթօջախների մեջ գործող դպրոցները, հոդվածագիրը գտնում է, որ դրանք քիչ են և չեն կարող բժշկել «հայրենյաց երկոտանի կաղությունը», քանի որ բուն Հայաստանի մեջ քիչ են ժողովրդական դպրոցները, իսկ գյուղերի ընդհանուր մեծամասնության մեջ «ուսումն կամ դպրոց գրեթե օտար և անլուր ձայն մի է»[183]։ Հարկավոր է կրթել գյուղացուն, որպեսզի նա կարողանա օգտվել «շարականաց անուշությունեն կամ սաղմոսաց քաղցրութենեն»[184]։ Մ. Խրիմյանը հայտարարում է, որ «մեր խեղճ հայրենիքը չարչարող ուրիշ բան չէ, քան թե տգիտության ժանտ դահիճը, որ ի սկզբանե անտի մեր Հայաստանի տունը իբրև խավարչտին բանտ դարձուցեր է. գերության, տարկության, աղքատության և ամեն կերպ թշվառության կերպարանքներով կնեղե և կը չարչարե»[185]։ Այդ նեղ վիճակից ժողովրդին դուրս բերելու համար առաջարկում է առանց սեռը և տարիքը հարցնելու, նրա պարանոցին կախել ոսկե շղթա, որը նա համարում է ժողովրդական դպրոց։ Սակայն ովքեր պետք է պատրաստեն այդ ոսկե շղթաները, չէ որ «հանճարեղ արհեստավորներ խիստ պակաս են հայրենյաց մեջ»[186]։ Հեղինակը դառնացած նշում է, որ 4 միլիոնանոց իր ժողովրդի «ամենափոքր մասն հազիվ գրել կարդալ գիտե»[187]։ Առաջարկում է վիճակային հոգևոր առաջնորդներին իրենց մոտ եղած աշխարհիկ մարդկանց հետ միասին ստեղծել ժողովրդական դպրոցներ։

Արծիվը միաժամանակ դնում էր ուսուցիչներ ունենալու խնդիրը և տպագրվեց Գալֆայկյանի «Թե ինչպես պետք է քիչ ժամանակի մեջ քաջ դաստիարակներ պատրաստել» հոդվածը, ուր նա գտնում է, որ «առանց

---

181 «Արծուի Վասպուրական», 1861, թիվ 3, էջ 65։
182 Նույն տեղում, էջ 66։
183 Նույն տեղում, էջ 69։
184 Նույն տեղում։
185 Նույն տեղում, էջ 70։
186 Նույն տեղում, էջ 71։
187 Նույն տեղում, էջ 74։

ողջոյց դաստիարակության ազգը լուսավորյալ դարուս պահանջին համեմատ որչափ որ կարելի է նե շուտ և կատարյալ կերպով չափի կրնա հառաջ երթալ»[188], անհրաժեշտ է ունենալ կրթող դաստիարակներ և «զանազան տեսակ գիտությանց և արվեստից ուսուցիչներ պատրաստել պետք է»[189]։

Մ. Խրիմյանը ժողովրդի աղքատ վիճակը համարում է տիրող վայրագ կարգերի և ուսման պակասության արդյունք։ Պակաս են նյութական միջոցները, հասարակության մեջ մարդկանց մի մասը ժլատ է և ցանկանում է ունեցած նյութական միջոցները օգտագործել իր համար, ջրել իր պարտեզը՝ չմտածելով այն մասին, որ «հասարակաց հրապարակ կամ պարտեզը մնացեր է չոր ու ցամաք ծարավուտ երկրի նման»[190]։ Առաջարկում է միացնել նյութական միջոցները, կազմակերպել ընկերություններ, «մեծաշահ վաճառականության ճանապարհներ բանալ, ճարտարության արվեստները ծաղկեցնել և մեր հայրենյաց ամայի մնացած ընդարձակ և բարեբեր դաշտերը մշակել։ Հերիք չէ Հայաստանի աղքատ զավակները ուրիշի գործած կտավ կամ կարած կոշիկներ հագնեին»[191]։

Արծիվը իր էջերում լուրջ ուշադրություն էր դարձնում նաև դաստիարակության հարցերին և տպագրվեց Մեսրովբ Փափազյանի «Դաստիարակության սրտի բարի դանձարան» հոդվածը, որտեղ ընդգծվում է ծնողներին որպես մարդու առաջին դաստիարակները լինելու հանգամանքը. «Ծնողք ինչ բնություն ունին, երեխան ավելի անոնց կը հետևի, ինչ լեզու կը խոսին, երեխան դայն կը սորվե... Բարի են, երեխան բարի կը լինի, չար են, երեխան ալ անոնց կը հետևի. ինչպես որ դաստիարակին, երեխան սիրով կը հնազանդի»[192]։ Եվ քանի որ դաստիարակության այլ օջախներ չկան, նրա վրա ամենից ավելի խոր ազդեցություն են թողնում ծնողները և այդ է պատճառը, որ «Ծնողք ինչ են, նա ևս նույն կլինի. ծնողք զավակաց լուսանկար հայելին են. ինչ որ տեսնան, դայն շուտ կը տպավորեն իրենց վարաց մեջ»[193]։ Սակայն ծնողները կրթված չեն։ Այդ դեպքում նրանք պետք է երեխային հանձնեն մի կրթված ուսուցչի, որը կկրթի նրան և բարոյապես կդաստիարակի։ Այն կարծիքին, որ երեխային ուսում պետք չէ, նա վարդապետ չպետք է լինի, հոդվածագիրը պատասխանում է.

---

188 «Արծուի Վասպուրական», 1862—63, թիվ 4, էջ 108։
189 Նույն տեղում, էջ 122։
190 Նույն տեղում։
191 Նույն տեղում, էջ 75։
192 «Արծուի Վասպուրական», 1862, թիվ 9, էջ 258—59։
193 Նույն տեղում, էջ 259։

«ես չեմ ասեր վարդապետ լինի, այլ մարդ միայն թող լինի»[194]: Հոդվածի հեղինակը ապա գրում է. «Առանց դաստիարակության մնացած սրտի դանձարան չարության լիճ մըն է, օրեօր յուր մեջեն միշտ չարության վտակներ կը բխեն, որովհետև ինքն սուրբ դաստիարակության շնորհաց աղբյուրեն ջուր խմած չէ, ոչ յուր անձին չափ կճանչնա և ոչ էլ ընկերին հարգ»[195]: Բերված այս մտքերը առաջավոր մարդկանց համար, իհարկե, նորություն չէին, սակայն Վասպուրականի հասարակության համար դրանք նոր և կարևոր էին, առաջավոր մտքեր, որոնք չկային մինչև 1850-ական թվականները Վասպուրականի եկեղեցիներին կից վարժարաններում, որտեղ թագավորում էին ուսման տեր-թոդիկյան մեթոդները:

Արծիվը տպագրեց բազմաթիվ հայրենասիրական հոդվածներ, որոնցից մեկը Գ. Սրվանձտյանցի «Հայրենասիրություն և հայրենիք» էր, որի մեջ նկարագրված է Արևմտյան Հայաստանի ծանր վիճակը. «Ներկա հայրենիք մեզ համար մի բազմամասնյաց մարմին է. զլուխ առանց պարանոցի, թև առանց բազուկի, աչք լուսավոր բայց փակված, յուրաքանչյուր մասունք միմյանցից անջատյալ, ցրվյալ, բայց ոչ կորուսյալ»[196]: Իր բազմադարյան պատմության մեջ հայ ժողովուրդը շատ ու շատ դժնդակ ժամանակներ է ապրել, սակայն նրան ոչնչացնող ամպերը ցրվել են և նա նորից վեր է խոյացել, ապրել է ու ստեղծագործել. «Թե պարանոց կտրեցին, բազուկներ զորացան, թե բազուկներ կտրեցին, ոտներով առաջ գնաց, թե սիրտ վիրավորեցին, հոգին կենդանի մնաց, և այժմ այսպիսի դրության մեջ կշարժի նա դեռևս ու կը հառաջե»[197]: Շատերը հայ ժողովրդին մեռած համարեցին, սակայն նա ապրում է ու շնչում: Այդ ժողովրդին ոտքի կանգնեցնելու համար անհրաժեշտ է նրան «նախ ուսանիլ ճշմարիտ հայրենասիրություն», այնպիսի հայրենասիրություն, որը պետք է ծառայի «հասարակաց օգտին»[198]:

1850-ական թվականներին Կոստանդնուպոլսի հայ համայնքում սուր պայքար էր մղվում Սահմանադրության համար: Արծիվը լուռ և անտարբեր չէր այդ պայքարի նկատմամբ, տպագրվեցին մի քանի ընդարձակ հոդվածներ: Ամասգրի 1860 թ. երկրորդ համարում տպագրվեց «Ազգային Սահմանադրություն և հայրենասեր հիմադիրք նորին» հոդվածը, որտեղ

194 Նույն տեղում, էջ 261:
195 Նույն տեղում, էջ 262:
196 «Արծուի Վասպուրական», 1861, թիվ 3, էջ 89:
197 Նույն տեղում, էջ 90:
198 Նույն տեղում, էջ 91:

«Սահմանադրությունը հսկող, արթուն ու շրջահայաց աչք մըն է, որ ազգային դանազան կառավարության մասերուն վրա գլուխ կեցած պահապան դինվորի մը նման կհսկե ու միանգամայն իբրև վարժապետ ու դաստիարակ է ազգային կառավարության ամեն մեկ դասերու մեջը»[199]։

Հոդվածներից մեկն ուներ «Հայկազունք հայրենյաց կամ ազգային գավառական վարչություն» վերնագիրը, որտեղ Մ. Խրիմյանը գտնում է, որ Սահմանադրության կենտրոնական վարչության «առանցքը սահմանադրության բարեկարգ օրենքով ամրացած չէ, քանի որ նույն առանցքին երկայնության տրամագիծը ուղղություն չունի, ի՞նչ կարելի բան է՝ որ Տաճկաստանի գավառական վարչությունները բարվոք ու շիտակ ընթանան առաջադիմության գծին վրա»[200]։ Այնուհետև նա նշում է, որ կենտրոնական վարչությունը հիվանդ է, նրա գլուխը առողջ չէ և մյուս անդամները առողջ լինել չեն կարող «վտակների մեջ պարզություն մի նկատեր, մինչդեռ աղբյուրին ակն պղտոր է. շինական ժողովրդեն օրինաց պահպանություն մի պահանջեր, մինչդեռ քաղաքային օրինազանց է»[201]։ Կենտրոնական վարչության մասին քննադատական խոսքեր ասելուց հետո հոդվածի հեղինակը բերում է ժողովրդական այն առածը, թե «ակոսին ծռիլը, ամոլ եղեն է» կամ թե չէ «եթե գլուխդ ժիր և առողջ լիներ, անշուշտ ողորմելի անդամները այս ցավեր չէին կրեր»[202]։ Կենտրոնական վարչությունը չի կատարում ինչպես հարկն է իր գլուխ լինելու դերը, նրա անդամները պետք է հասկանան, որ «մարդու զարգացման արմատն ալ իր գլուխն է, ոտքը չէ»[203]։ Այնուհետև վիճակային վարչությունները պետք է մտածեն ժողովրդի վերքերը բուժելու, նրա մանուկներին կրթելու և դաստիարակելու մասին, քանի որ «հայոց երեխաները դաստիարակության ջուրով մկրտելու համար Հայաստանին մեջ ոչ դետ, ոչ վտակ կպակասին»[204]։ Արծիվը կավի է կոչում ընդդեմ տգիտության և կրթությունն ու դաստիարակությունը ժողովրդի համար համարում է հզոր գործոն, գտնելով, որ «Առանց կրթության աղգը խստապարանոց է, առանց դաստիարակության՝ սիրտն անթլպատ է»[205]։

---

199 «Արծուի Վասպուրական», 1860, № 6, էջ 33։
200 «Արծուի Վասպուրական», 1862, թիվ 6, էջ 162։
201 Նույն տեղում։
202 Նույն տեղում, էջ 166—167։
203 Նույն տեղում, էջ 167։
204 Նույն տեղում, էջ 170։
205 Նույն տեղում, էջ 172։

Արծիվը իր 1862 թ. համարներից մեկում նորից անդրադարձավ սահմանադրության հարցին, տպագրելով Մ. Խրիմյանի «Հայրենյաց նոր առաջադիմության համար մարդ պետք է թե սահմանադրությունը» հոդվածը և գտավ, որ երկուսն էլ պետք են, սակայն հասարակությանը ամենից առաջ մարդիկ են պետք, առանց որի յուրաքանչյուր օրենք կլինի ողորմելի և խղճուկ. «Աշխարհը միօրինակ առաքյալներ չի ծնաներ. բնության արգանդը ծաղկին հետ փուշ ալ կբուսցնե, իսկ եթե մշակենք, կարծեմ թե դաստիարակության սքանչելյոք տաժանարուես փշերը անուշահոտ ծաղիկ կդառնան»[206]: Մ. Խրիմյանը հանդես է գալիս որոշ մարդկանց դեմ, որոնք այն կարծիքին էին, որ սահմանադրության միջոցով Հայաստանը կարող է վերաիանգնվել: Ժխտելով այդ կարծիքը, նա գրում է. «Բայց ես կզարմանամ, որ մեր ողորմելի Հայաստանը Նոտի պատրաստած հանդերձի մը նման հազար ու մի կտոր եղած է. այդ սահմանադրության նոր կարկատան պիտի կարենա՞ նորոգել կամ միանալ հնության հետը»[207], առաջարկում է փոխել այդ հագուստները, ազգի մեջ լուսավորություն տարածել, կրթել նրան:

Պարբերականի էջերում պայքար էր ծավալվում նաև ժողովրդի մեջ իշխող հետամնաց բարքերի դեմ, ինչպիսին է չարախոսությունը, որը մարդկային միտքը ու սիրտը թունավորող մի ահավոր հատկություն է: Մարդկանց մեջ կան այնպիսիները, որոնք նենգավոր լեզու ունեն: Եթե օձի լեզուն թունավորում է մի անձի, ապա չարախոսի լեզուն թունավորում է ամբողջ ազգին: Չարախոսները իրրև կանոն նաև մատնիչ են[208]: Այնուհետև Արծիվը տպագրեց «Անհամաձայն և անմիաբան դաղափարք Հայկազանցս» հոդվածը, նշելով, որ չնայած ազգի մեջ պակասում է միաբանությունը, սակայն լի հավատով լցված դեպի իր ժողովրդի անմահությունը, ասում է, որ «Հայաստանը մշտենջենավոր անմահ է»[209]: Այնուհետև դռնում է, որ «բանաստեղծը սրտին լեզվով ճշմարիտ կը խոսի, իսկ փիլիսոփան մտքի»[210]: Ելնելով այս դատողությունից, նա գտնում է, որ երբեմն սիրտն ավելի է տեսնում և զգում, քան միտքը: Հին դարերից հայ ժողովրդի ուրիշներին ենթարկվելու փաստը նա համարում է անմիաբանության և լուսավորության պակասի արդյունք, առաջարկում է կրթել և լուսավորել ազգը, քանզի «մարդկային մտաց գաղափարները կորդ ու

206 Նույն տեղում, թիվ 8, էջ 227:
207 Նույն տեղում, էջ 230:
208 Նույն տեղում, թիվ 6, էջ 189:
209 Նույն տեղում, թիվ 7, էջ 194:
210 Նույն տեղում, էջ 195:

ապառաժ գետնի կը նմանին, քանի որ դաստիարակությամբ մշակված չէ»[211]: Սակայն դաստիարակությունը պետք է ճշմարիտ լինի, որը «մարդոյն սիրտը իբրև բարի ու պարարտ երկիր կը հարդարե, որով նույն սերմն բազմապատիկ պտուղ կուտա», իսկ «ուղիղ դաստիարակության հիմն պարզամիտ հոգին ու բարի սիրտն է և ոչ թե մտաց հանճարով Արիստոտելին չափ բան գիտենալ»[212]: Հեղինակը գտնում է, որ իր ժամանակներում մարդկային սիրտը կույր է ու միտքը խավար, քանի որ բարի դաստիարակություն չի ստանում, իսկ այդ գործը առաջ տանելու համար դաստիարակներ են պետք, իսկ իր ապրած դարի մեջ «միմիայն դպրոցն է սքանչելի ձուլարան մարդկային մտաց ու սրտին»[213]: Ապա գտնում է, որ հին աշխարհը եղել է բռնակալության ու զենքի աշխարհ, որտեղ պատերազմի դաշտը և թագավորական հրամանները ուժի միջոցով իրար են միացրել մարդկանց և նա միանգամաբար կարծում է, որ քաղաքակիրթ երկրներում «այս մեքենան (բռնությունը— Հ. Պ.) ալ չի բաներ. ասոր տեղը դպրոց, դաստիարակություն և մարդկային ազատ իրավունքներն են»[214]: Հոդվածագիրը այդպիսի եզրակացության է գալիս չիմորանալով կապիտալիստական աշխարհի էության մեջ, ելնելով այդ հասարակարգում գիտության ծաղկման վիճակից: Հոդվածագրի կարծիքով դաստիարակության ընթացքը երկարատև է և դժվարին: Այն ավելի դյուրին է, երբ սկսվում է մանուկ հասակից, քանի դեռ մանուկները դալար ճյուղեր են: Բայց հասարակության մեջ կան անհատներ, որոնք գտնում են, որ «հայերը դժվարահալ մետաղ են, նրանց հալել և իրար միացնելը դժվարին գործ է, սակայն այդպես չէ, հարկավոր է նրան դնել «դպրոցական դաստիարակության հալոցին մեջ»[215] և կտեսնես, թե ինչպես կհալվի:

Սրծիվը իր էջերում տպագրեց «Շինականի և քաղաքացու վեճը» հոդվածը, գտնելով, որ երկրագնդի վրա ապրող բնակչության մեծ մասը ապրում է գյուղերում: Շինականը գտնում է, որ հին ժամանակներում մարդիկ ապրում, աշխատում և սնվում էին միասին և շատ քիչ էր նրանց միջև եղած տարբերությունը: Այժմ քաղաքի բնակիչները իրենց բարձր են դասում շինականներից և վերջիններս իրավունք չունեն քաղաքացիների հետ սեղանակից լինելու և «շինականին տեղը դռան ետև և դռեն դուրսն

---

211 Նույն տեղում, էջ 196:
212 Նույն տեղում, թիվ 7, էջ 197:
213 Նույն տեղում, էջ 198:
214 Նույն տեղում, էջ 199:
215 Նույն տեղում, էջ 204:

է»[216]։ Շինականը գտնում է, որ քաղաքացիները հյուրասեր չեն և նրանց տների դռները «փակված են հոգնած ճանապարհորդների դեմը. կվաստակեք միայն ձեր փորին համար և կապրեք միայն ուտելու համար»[217]։ Քաղաքներում նրանք ապրում են պալատների ու փառքի մեջ, իսկ շինականները ապրում են խրճիթներում։ Քաղաքացին զարմանքով է նկատում, թե ուսումից հետու շինականը ինչպես է, որ այդպիսի դատողություն է անում և չի հասկանում, որ մարդկային արվեստը, հանճարը, ճարտարապետությունը ծաղկել են քաղաքներում, որտեղ գտնվում են օրենքն ու դատարանը, իսկ գյուղում ապրողները կոշտ են ու կոպիտ։ Շինականը նրան հասկացնում է, որ քաղաքում ապրողները չգիտեն շինականի հարկը, չեն գնահատում նրա վաստակը։ Սակայն քաղաքացիները օրենքները արդարությամբ չեն կիրառում, շինականին իրենց ցանցի մեջ են առնում, նրանից կաշառքներ են կորզում։ Քաղաքում խաբեություն և սուտ կա և քաղաքացիներդ ապրում եք շռայլության ցնծության մեջ։ Այսպես հարց ու պատասխանի միջոցով քննադատվում են գյուղում ապրողների տգիտությունը, վատ բարքերը, որի հետ նաև քաղաքներում գոյություն ունեցող հոռի բարքերն ու այլանդակությունները։ Հոդվածագիրը, անկասկած, չի կարողացել խորանալ իր ժամանակի հասարակական խավերի, նրանց դիրքի մեջ և քննադատելով ժամանակի այլանդակ բարքերը, չի բացահայտել դրանք առաջացնող պատճառները։

Մ. Խրիմյանի պարբերականը կտրում էր Ռուսաստանի սահմանը և հասնում այնտեղ ապրող հայերին, նրա մասին նույնիսկ նշում էին ռուսական մամուլի առանձին օրգաններ, որոնցից մեկում ասված է, որ Մ. Խրիմյանը իր առաջ նպատակ դրեց «ընթերցողներին ծանոթացնել Հայաստանի պատմությանը, տպագրելով պատմական տարբեր վավերագրեր, որոնց ուղեկցված էին համապատասխան մեկնություններ»[218]։

Համառոտակի սրանք են այն գաղափարները, որոնք արծարծվեցին Վաղարշապատում երևան եկած առաջին տպագիր օրգանի՝ «Արծուի Վաղարշապատի» էջերում։ Նրա համարների հավաքածուն մի իսկական գանձարան է, մի փոքրիկ հանրագիտարան, որը կարևոր դեր խաղաց Արևմտյան Հայաստանի ժողովրդի ազգային զարթոնքի, ինքնագիտակցության բարձրացման, ինքնաճանաչման և նրա զավակներին հայրենասիրության ոգով դաստիարակելու գործում։

---

216 Նույն տեղում, թիվ 10, էջ 291։

217 Նույն տեղում։

218 «Мир Божий», сентябрь, 1896, с. 290.

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԲԱԽՈՒՄՆԵՐԸ ՎԱՆՈՒՄ

Վասպուրականի 1850—60-ական թվականների պատմության ուշադրավ հարցերից մեկը Պողոսյան և Ապողոսյան խմբավորումների պայքարն էր։ Մ. Խրիմյանը և նրա կողմնակիցները, որոնց անվանում էին Ապողոսյաններ, սուր պայքար էին մղում Վանի հոգևոր առաջնորդ Պողոս վարդապետի ու նրա համախոհների՝ Պողոսյանների դեմ։ Պողոսյաններին իրենց հովանավորության տակ էին վերցրել Կոստանդնուպոլսի կղերաամիրայական խավի հետամնաց թևի այնպիսի ներկայացուցիչներ, ինչպիսիք էին Հովհաննես Ջամուռճյանը (Տերոյենց) և նրա կողմնակիցները՝ թուրք աստիճանավորները և քուրդ վերնախավի ներկայացուցիչները։ Ապողոսյանների պաշտպանությամբ հանդես էին գալիս հայ մտավորականության առաջավոր ներկայացուցիչները, դրանց թվում՝ Մ. Նալբանդյանը, Հ. Սվաճյանը, Մ. Մամուրյանը, Գ. Զիլինկիրյանը, Ս. Հայկունին, Բաֆֆին և ուրիշներ[1]։

Թե ի՞նչ էր ներկայացնում Վանում տասնյակ տարիներ գործող Պողոսյան կոչված խմբակցությունը կամ ինչպես ժամանակակիցներն էին անվանում «Պողոսյան կուսակցությունը», կարելի է սպառիչ պատասխան ստանալ, ընթերցելով 1874 թ. Կոստանդնուպոլսում հրատարակված «Ամբաստանութիւն Վանայ Պօղոս վարդապետին վրայ» գրքույկը, որի մեջ հանգամանորեն շարադրված է Պողոս վարդապետի և նրա շրջապատի մարդկանց այլանդակ վարքի և գործունեության նկարագիրը։ Մ. Խրիմյանի՝ Վանում երևալուց առաջ Վասպուրականի քաղաքի և գյուղերի բնակիչներից ոչ ոք չի կարողացել հանդես գալ Պողոս վարդապետի դեմ։ Վան ժամանելով, Մ. Խրիմյանը ժողովրդին ցույց տվեց նրա իսկական դեմքը։ Պողոսի՝ եկեղեցականին ոչ վայել վարքագծի հարցը պատրիարքարանի քննարկման առարկա դարձավ և նա կանչվեց Կոստանդնուպոլիս։ Պողոսը

---

1 Աշ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք I, 1955, էջ 374—378։

կապված էր Վասպուրականի թուրք աստիճանավորների և քուրդ բեկերի հետ և որքան «գող, ավազակ հարստահարիչներ կան, բոլորին պաշտպանն է, բարեկամն է, ազատարարն է»[2]: Վերևում նշված տեսրակի հեղինակները խիստ քննադատության են ենթարկում Կոստանդնուպոլսի կենտրոնական վարչության անդամներից ոմանց վարքագիծը (Մաքսուդյան Սիմոն և Տատյան Առաքել պեյեր), որոնք Պողոսի հարցի քննարկման ժամանակ հանդես եկան անարդարության դիրքերից: Վարչության անդամները գտնում են, որ Պողոսը մի տարի է, որ Վանում չի և լավ կլինի նրան ուղարկել Լիմ անապատը և դրանով ավարտել այդ հարցը: Տեսրակի հեղինակները իրավացիորեն գտնում են, որ եթե Պողոսը «եկեղեցական է, որ ուր որ լինի՝ եկեղեցին պակաս չէ իրեն. եթե վարդապետ է, շատ տեղ ուսուցչի և քարոզչի կարոտ են. եթե քաջ առաջնորդ է, ահա ամեն կողմեն առաջնորդ կուզեն. եթե կրոնավոր է, շորս կողմը լեցուն վանքեր են.»[3]: Նրանք պահանջում են Պողոսին ուղարկել մի այլ վայր, որպեսզի հնարավորություն չունենա խառնվելու Վասպուրականի, ինչպես աշխարհիկ, այնպես էլ հոգևոր գործերին: Չսպասելով իր հարցի վերջնական լուծմանը, Պողոս վարդապետը թողեց մայրաքաղաքը և մեկնեց Կարին: Տեղի ազգային բաղաքական ժողովը նրանից մի կերպ ազատվելու նպատակով որոշեց Պողոսին ուղարկել Վան:

1860 թ. հոկտեմբերի 5-ին պատրիարքարանին կից ազգային վարչությունը լսեց Պողոսի հարցը և որոշեց, որ Պողոսը «ո՛չ վանաիայր պիտի ըլլա և ո՛չ էլ Վանա սահմանը պիտի մտնե»[4]: Ազգային վարչությունը Պողոսի Կարին գնալու կապակցությամբ որոշեց. «Թաղրիր գրել Բ. Դուռ, որ Պողոս վարդապետ Կարինեն ի Վան դառնայ»[5]: Քաղվածքից անշուշտ երևում է, որ պատրիարքարանը և նրա կենտրոնական վարչությունը չեն կարողացել ազդել այդ հոգևորականի վրա և նրա մի տեղից մյուսը շարժելու հարցը ցանկացել են լուծել պալատի միջոցով: Վարչության այդ որոշման մեջ միաժամանակ նշվեց, որ եթե Պողոսը անգամ վերադառնա Վան, ապա պետք է մնա Կաուց անապատում և իրավունք չպետք է ունենա խառնվելու տեղի ազգային գործերին: Այդ որոշման մասին իմանալով, Պողոսը սկսեց սպառնալ պատրիարքարանին, որ կաթոլիկություն կընդունի և վերադարձավ Վան: Չնայած նրան Կաուց անապատի վանահայր չէին

---

2 Ամբաստանութիւն Վանայ Պօղոս վարդապետի վրա, Կ. Պոլիս, 1874, էջ 7—8:

3 Նույն տեղում, էջ 12:

4 Նույն տեղում, էջ 37:

5 Նույն տեղում, էջ 4:

կարգել, գնաց Կոտայք և այնտեղից բանակցություններ վարեց Վանի կուսակալի հետ և ապա վանահայր կարգվելով, սկսեց վատնել վանքի ունեցվածքը։

Իրականում ի՞նչ մեղադրանքներ էին առաջադրվում Պողոս վարդապետին։ Ամենից առաջ այն, որ նա հայտնի կաշառակեր էր և վասպուրականի գյուղերի տանուտերերից և հոգևոր անձերից կաշառք վերցնելով, նրանց պահում էր իրենց տեղում։ Եթե այդ մարդիկ հանցանքներ էին գործում, միջնորդում էր կառավարական պաշտոնյաների առաջ և նրանց քսակները դատարկելու միջոցով ազատում։ Վանի փաշաներն անգամ երկնչում էին Պողոսից, քանի որ նրանց մասին ամբաստանագիր էր գրում պատրիարքարան և Բ. Դռան միջոցով պաշտոնանկ անում։ Այդպես էր վարվել Մյունիֆ փաշայի նկատմամբ, որի մասին գրքույկի հեղինակները հարգանքով են խոսում։ Մամուլում տպագրված բազմաթիվ հոդվածներից անմիջապես ակնհայտ է դառնում, որ Պողոսը ավելի շատ գնահատվել է «շրջակա քուրդ աշիրեթների մեջ, որո ուշադրությամբ և սրբազանը գործում է և կատարում հօգուտ հասարակութեան»[6]։ Իր հոդվածներից մեկում Արխատակես Տեր Սարգսյանցը (Տևկանց) Պողոս Մելիքյանին անվանում է «քուրդերուն կնքահայրն»[7]։ Այսպիսով, Պողոս վարդապետը կաշառքի և փողի միջոցով արել է այն, ինչ ցանկացել է։ Գրքույկում նշված են քուրդ վերնախավի մի շարք ներկայացուցիչների անունները և նրանց կատարած ոճրագործությունները, սակայն այդ չի խանգարել, որպեսզի Վանի հոգևոր առաջնորդը նրանց հետ ջերմ հարաբերությունների մեջ լինի։ Հոգևոր առաջնորդը իր ժողովրդին պաշտպանելու փոխարեն համագործակցում էր հեղհեղագործների, անառակների ու գողերի հետ և «սովորություն ունի,— գրված է այդ գրքույկում,— անդեն այր և կին իբրև հանցավոր բանտարկել առաջնորդարանին մեջ գիշերները և ցորեկները, ծեծել ուզածին չափ, նույնպես և գնդերը պատահած ժամանակ չարաչար ծեծ քաշել կնկան և էրիկ մարդուն»[8]։

Գրքույկի երկրորդ մասում (էջ 30—77) բերված են Պողոս վարդապետի գործած հանցանքների ցանկը, մի շարք նամակներ և նրա հարցի քննարկման ժամանակ պատրիարքարանի կազմած արձանագրությունների պատճենները։ Աշխատությունը չծանրաբեռնելու նպատակով մենք հարկ չենք համարում մեջ բերել բոլոր փաստերը։

---

6 «Նոր դար», 1884, № 212, 27 դեկտեմբերի։

7 «Մանզումեի էֆքեար», 1869, 15 հուլիսի։

8 Պողոսի մասին գրքույկը, էջ 26։

Պողոս վարդապետի անօրինականությունների ու կեղծիքների մասին հոդվածներ տպագրվեցին «Մեղու», «Մեղու Հայաստանի», «Մասիս», «Փարիզ», «Արևելյան փող», «Արարատ», «Մյունատի», «Վարագայի հավատիս», «Մանզումեի էֆքեար», «Օրագիր», «Ժամանակ», «Մամուլ» և այլ պարբերականներում, որոնց հեղինակները գտնում էին, որ Վասպուրականը շատ վանքեր ու եկեղեցիներ ու մոտ 200 հազար հայ բնակիչ ունի և չի կարելի այնտեղ ունենալ մի այդպիսի պատուհաս կրոնավոր։

1859 թ. սեպտեմբերի 10-ին «Մեղուն» տպագրեց «Վանն ալ պիտի ծախեն» հոդվածը, որի մեջ ասվեց այն մասին, որ Պողոսը «մի ակչայի համար տաս խայ կը ծախի» և իր համախոհների հետ անհրաժեշտության դեպքում կծախեն Վանը։

1860 թ. ապրիլի «Մեղուն» տպագրեց Հ. Սվաճյանի «Վանեցի Պողոս եղբայրը» հոդվածը, որի մեջ գտավ, որ Պողոսը «անօրենն» վարդապետ է և պահանջեց պատրիարքարանից պատժել նրան իր կատարած հանցանքների համար։ Միաժամանակ Հ. Սվաճյանը նշեց, որ նրա «հանցանքները, անօրինականությունները, ոճիրները, ասկե թեթև պատժով մը չէին կրնար քավություն գտնել...»[9]։ Գրվեց նաև այն մասին, որ կրոնական ժողովը Պողոսին չպատժեց, քանզի ուներ «զորավոր պաշտպաններ» և պնդեց, որ «չենք ուզեր մեր եկեղեցվոյն մեջ այսպիսի անօրեն գայթակղեցուցիչ մը տեսնել»[10]։

Նշենք, որ Վասպուրականում և Կոստանդնուպոլսում Պողոսի և նրան շրջապատողների դեմ սկսված պայքարը նրա անձը չհարգելու կամ թե չէ նրա հետ անձնական հաշիվներ ունենալու պայքար չէր, այն նոր գաղափարների տեր երիտասարդների պայքարն էր քաղաքի հետամնաց վերնախավի և հոգևորականների մոտ եղած հոռի բարքերի դեմ։ Իր հայրենիքին անհուն սիրով նվիրված, առաջավոր գաղափարներով զինված երիտասարդությունը չէր կարող իր խոսքը չասել Պողոսի և նրա նմանների մասին։ Այս միաժամանակ մի խուլ պայքար էր թուրքական աստիճանավորների դեմ, որոնցից պաշտպանություն էին գտնում Պողոսը և նրա նմանները։ Այդ պայքարը Վանից տեղափոխվեց Թուրքիայի մայրաքաղաքը, որտեղ ազգային խնդիրների շուրջ ուժեղ բախումներ կային հեղափոխական-դեմոկրատական և կղերապահպանողական հոսանքների միջև։

1860 թ. հունվարի 10-ին «Մեղուի» էջերում երևաց «Վանեցի Պողոս վարդապետը» հոդվածը, իսկ 1860 թ. հունիսի 20-ին «Մեղուն» տպագրեց «Վանեցվոց գործը» առաջնորդողը, ուր նշեց, որ այդ վարդապետն իր

9 Հ. Սվաճյան, Հրապարակախոսություն, 1960, էջ 121։

10 Նույն տեղում, էջ 122։

հայրենի քաղաքի բնակիչներին շատ նեղություն պատճառեց «անոնց և մեկ քանի անձերու ալ մասնավոր շահուն դալչելով զանոնք կործանեց»[11]։

Երբ Պողոսը առանց պատրիարքարանի թույլատվության հեռացավ մայրաքաղաքից, այնտեղ գտնվող 1000-ից ավելի վանեցի պանդուխտներ հավաքվեցին պատրիարքարանի մոտ, մի խնդրագիր ներկայացրին պատրիարքին, որի մեջ հաստատակամորեն պնդեցին, որ չեն ցանկանում տեսնել Պողոսին Վանի առաջնորդի պաշտոնում։

1860 թ. դեկտեմբերի 26-ին «Մեղուն» հանդես եկավ Հ. Սվաճյանի մի նոր հոդվածով, որի մեջ նշեց, որ կրոնական ժողովը Պողոսին պետք է դատեր իր գործած հանցանքների և պատրիարքարանին չենթարկվելու համար։ Ապա գտնում էր, որ նրան պետք է անհապաղ աղատել զբաղեցրած պաշտոնից, զրկել հոգևոր կոչումից։ Հայ հոգևորականներից չկա մեկը, որ այդքան հանցանքների հեղինակ լինի։

«Մեղուի» պայքարը Պողոսի և նրա նմանների դեմ հետևողական էր։ Թերթը 1863 թ. փետրվարի 19-ին հրատարակեց «Դարձյալ վանեցի Պողոս վարդապետը» հոդվածը, որի մեջ ասված էր, որ այդ վարդապետը ժամանակին չպատժվեց և քաջալերվելով, շարունակում է իր անօրինական և վայրագ գործողությունները, որ պատրիարքարանում «արծաթին առջև ամեն բան, ամեն արգելք կը խոնարհին երբեմն ալ»[12]։

1863 թ. սեպտեմբերի 10-ին «Մեղուն» հանդես եկավ Վանում և նրա գյուղերում կատարված հարստահարությունները կոծկող Վանի առաջնորդ Թոքմաջյան Իգնատիոսի (1860—1866) դեմ, տպագրելով «Առ Իգնատիոս արքեպիսկոպոս առաջնորդ Վասպուրականի» հոդվածը, որի մեջ նշեց, որ Վանից եկած նամակները հավաստում են ժողովրդի ծանր վիճակի մասին, սակայն առաջնորդը պատասխանում է, որ ժողովրդի «վրա գործված ոճիրները ոչինչ բաներ են. ուստի պետք չէ հավատալ եթե մասնավոր անձինք զանոնք մեծ դնելով պատմեն»[13]։ Ի պատասխան առաջնորդի այդ խոսքերի «Մեղուն» հրապարակեց Վանում կատարված հանցագործությունների շատ փաստեր, և ցույց տվեց, որ այնտեղ գոյություն ունեն թալանի և սպանությունների բազմաթիվ դեպքեր։ Ապա նշեց, որ հոգևոր առաջնորդը մտածում է ոչ թե ժողովրդի, այլ իր քսակը լցնելու մասին, ասելով. «Կրոնական մասին ալ անհոդ եղած ես, որ քու քսակդ ուռցնելե զատ ուրիշ բանի նայած չունիս. կրակի դնով մեռոն կը ծախես. այդ յոթը

11 «Մեղու», 1860, թիվ 101, 20 հունիսի։

12 «Մեղու», 1863, թիվ 189, 19 փետրվարի։

13 Նույն տեղում, թիվ 216, 10 սեպտեմբերի։

որ առաջ Վանա մեջ 5, 10 դուրուշի կը կատարվեր 100, 150 դուրուշի հանեցիր»[14]։

Մ. Նալբանդյանը Կոստանդնուպոլսում եղած ժամանակ ծանոթանալով Պողոսի գործունեության հետ, 1860 թ. դեկտեմբերի 19-ին «Մեղուի» մեջ տպագրեց «Նամակ «Մեղուի» խմբագրին» հոդվածը, որտեղ այդ վարդապետին համարեց հայոց ազգի և եկեղեցու համար իսկական նախատինք և նշեց, որ շատ ցավալի է տեսնել «որևէ արատ կամ ապականություն մեր ազգի անդամներից մինի վրա, մանավանդ մի այնպիսի անդամի, որ յուր անձը նվիրած լինելով եկեղեցու սպասավորության, հետևաբար մեծապես պարտական էր անարատ պահել յուրյան»[15]։ Մ. Նալբանդյանը գտավ, որ «Մեղուն» շատ արդարացի է վարվել, որ անարգանքի սյունին է գամել Պողոսին և այդպիսի քննադատությունը «ոչ թե միայն հանցանք չէ, այլ առաքինություն»[16], իսկ Պողոսի «Մեղուում» հրատարակված չարագործությունների ցանկը «մի սարսափելի ղղվանք պատճառեց մեզ դեպի խայտառակված չարագործ անձը»[17]։ Մ. Նալբանդյանը քննադատության տակ առավ պատրիարքարանին կից կրոնական ժողովին և զարմանք հայտնեց, թե ինչո՞ւ այդ ժողովը Պողոսին չի զրկել հոգևոր կոչումից։ Այնուհետև նշեց այն մասին, որ կան մարդիկ, որոնք հանդես են գալիս այդ այլանդակ վարքի տեր հոգևորականի պաշտպանությամբ, չմտածելով, որ այդ վարմունքով ցեխոտում են «յուրյանց հանդերձը» կամ ապականում են «յուրյանց տունը, որի մեջ բնակվում են»[18]։ Մ. Նալբանդյանը իրավացիորեն գտնում էր, որ հայ եկեղեցու կամարների տակ անհնարին է այդպիսի ապականությունը պահել և «Մեղուն» իրավացիորեն է դատապարտել այդ վարդապետին և հանգել է ճիշտ եզրակացություններին։ Նամակի վերջում նա եզրակացնում է, որ «Պողոսի պես հոգևորք, եթե կան, թո՛ղ այս օրից հոգան յուրյանց գլխի ճարը. կամ ուղղեն յուրյանց անձը, վարքը և բարքը կամ դուրս գնան մեր եկեղեցուց»[19]։

Մ. Նալբանդյանը Պողոս վարդապետի հարցին անդրադարձավ նաև իր հայտնի «Երկու տողում» և քննադատեց Պողոսին պաշտպանող Զամուռճյանին (Տերոյենց) և գրեց, որ պետք չէ «պաշտպանել չարագործ

---

14 Նույն տեղում։
15 Մ. Նալբանդյան, երկ, հատ. 2, 1947, էջ 302։
16 Նույն տեղում։
17 Նույն տեղում, էջ 304։
18 Նույն տեղում, էջ 305։
19 Նույն տեղում, էջ 306։

Պողոսը և պահպանել նորա յայտարակված ճակատի վրա եկեղեցական անունը»[20]։ Մ. Նալբանդյանը գտավ, որ պետք է պաշտպանել միայն ճշմարտությունը, չվախենալով կրոնական ժողովի օրհնությունից և Ջամուռճյանի շնորհակալությունը ստանալուց։ Պաշտպանել այդ այլանդակ հոգևորականին, միաժամանակ նշանակում է ճանաչել և օրինական համարել ժողովրդի հարստահարությունները։

Մ. Նալբանդյանը պաշտպանում է Մ. Խրիմյանի և նրա կողմնակիցների պայքարը Պողոս վարդապետի և նրա նմանների դեմ, հարգում և գնահատում է վասպուրականում կատարած նրա հսկայական լուսավորական աշխատանքը։ Մ. Խրիմյանի հակառակորդների մասին նա նշում է, որ նրանք ցանկանում են ծածկել ազգի կրոնական և աշխարհիկ վերնախավի մեջ եղած խայտառակ փաստերը և վերջապես ծաղրելով «Մեղուի» և նրա կողմնակիցների վրա հարձակվողներին, ասում է. «Թող վանեցի Պողոսները փառավորվին...»[21]։

Պողոս վարդապետի դեմ հանդես եկավ նաև Բաֆֆին, գրելով իր «Ամբաստանություն Վանա Պողոս վարդապետի վրա» հայտնի հոդվածը, որից երևում է, որ նա իր ձեռքի տակ ունեցել է Պողոսի մասին Կոստանդնուպոլսում 1874 թ. հրատարակված գրքույկը։ Այդ հոդվածում Պողոսին նա համարում է քրդական և թուրքական վերնախավի հետ կապված չարագործ, իսկ նրա դեմ հանդես եկող «կուսակցությունը»՝ հայրենասերների, աշխատավորական դասի խոհերը պաշտպանող։ Այնուհետև նշում է, որ Պողոսը խառնվում է ժողովրդի ներքին գործերին, քանի որ նա իր ձեռքն է վերցրել գյուղական համայնքների կողմից ընտրվող տանուտերերին նշանակելու գործը։ Տանուտերերից ստացած կաշառքից նա բաժին է հանում կառավարական պաշտոնյաներին և քուրդ վերնախավին։ Պողոսը կապված է ավազակաբարո տարրերի հետ և «այդ բոլոր չարագործները,— գաղտնի կապեր են կցում Պողոս հայր սուրբի հետ և նորանից կախում ունեն։ Ինչո՞ւ։ Որովհետև Պողոս հայր սուրբը փաշային շատ մոտ մի անձն է, եթե այդ ավազակապետերից մինը մեղադրվում է որևիցե հանցանքի մեջ, միշտ կարող էր նորա միջնորդությունից օգուտ քաղել և ազատվել»[22]։

Վասպուրականում տասնյակ տարիներ տևող Պողոսյան—Ապողոսյան պայքարը նորի և հնի պայքար էր, խավարի և առաջադիմության պայքար,

---

20 Մ. Նալբանդյան, Երկ, հ. 3, 1940, էջ 16։

21 Նույն տեղում, էջ 107—108։

22 Բաֆֆի, Երկեր, հատ. 9, 1958, էջ 72։

դա նոր սերնդի պայքարն էր հանուն ժողովրդի լուսավորության, որի դեմ հանդիման կանգնած էին խավարամիտ Պողոս վարդապետը և իր կողմնակիցները։

1896 թ. ծննդի գիշերը Վանի հնչակյան գործիչներից մեկի գնդակով Պողոսը սպանվեց։

Աղթամարի կաթողիկոսության խնդիրը

1850-ական թվականներին Կոստանդնուպոլսի հոգևոր և գերագույն ժողովը Ն. Աշտարակեցու համաձայնությամբ հաստատեց «Համառոտ կանոնք սահմանեալք ի պետս բարեկարգութեան մեծի տանն Աղթամարայ»[23], որի համաձայն Աղթամարի կաթողիկոսը եպիսկոպոսների, վարդապետների և մնացած հոգևորականների ձեռնադրությունը կատարելիս պարտավոր էր «հարցանել առ հոգևորական ժողովն Պօլսոյ և առանց գիտութեան պատրիարքին չձեռնադրել ղոք»[24]։ Հոգևորականների ընտրությունը կատարելիս պատրիարքարանին պետք է ներկայացվեին այնպիսի թեկնածուներ, որոնք լինեին «առաքինասեր, հանդարտաբարոյ, խոհեմ, դիտնական և բարեկիրթ անձինս...»[25]։

Ըստ այդ կանոնների հոգևոր կոչումներ չպետք է ստանային դրսից վաստպուրական եկած հոգևորականները, պետք է բացվեին դպրոցներ, որով «մեծ հոգ ունիլ զհաստատութենէ դպրոցաց յամենայն վիճակս իւր մինչև ի գիւղօրէս անգամ չը թողուլ առանց վարժարանի և դաստատուի, և առանց քահանայի զուրկ ի հոգեւոր մխիթարութեանց»[26]։ Այս քաղվածքից, անշուշտ, երևում է, որ մայրաքաղաքում սահմանադրական պայքարի ընթացքում գավառներում դպրոցներ բաց անելու հարցը արդեն կարևոր նշանակություն էր ստացել։ Կանոնների մեջ այնուհետև նշված էր եպիսկոպոսների, վարդապետների և քահանաների պարտականությունների մասին, որոնք կաթողիկոսին ենթարկվելու հետ միասին պետք է «նախամեծար ընտրել զաթոռոյն շահն քան զանձանց իւրեանց»[27]։ Կանոնները արգելում էին անօրինական ամուսնությունների և պսակների ձևակերպումները, գտնելով «այրն զկինն թողուլ և կինն զայրն թողուլ, և ի կեն-

---

23 Հայրապետութիւն Հայաստանեաց առաքելական սուրբ եկեղեցւոյ եւ Աղթամար ու Սիս, գրեց Մատթեոս եպիս. Իզմիրլեան, Կ. Պոլիս, 1881, էջ 329։

24 Նույն տեղում, էջ 330։

25 Նույն տեղում։

26 Նույն տեղում, էջ 332։

27 Նույն տեղում, էջ 333։

դանութեան կնոջ՝ դայլ կին առնուլ, և կամ դայլ այր առնուլ մի երբեք եղիցի. և վասն չհաս ապօրինաւոր պսակի կարգաւորաց նեղութիւն և բռնադատութիւն մի երբեք արասցէ ոք»[28]:

Կանոններ կազմողներին, անշուշտ, հայտնի էին, որ Արևմտյան Հայաստանում, Թուրքիայի հայաբնակ վայրերում և Վասպուրականում շատ հաճախ թուրք և քուրդ վերնախավի միջնորդությամբ հայ անձինք հոգևոր պաշտոններ էին ստանում և այդ պատճառով էլ կանոնների մեջ գրվեց. «Վասն անօրինելի եկեղեցական հոգևոր գործոց ի դրունս այլազգեայց երթալ անկանիլ, նոցա ձեռօք ի վերայ կաթողիկոսին և ի վերայ առաջնորդաց բռնութիւն ոչ ի գործ ածել վասն ղչար կամն իւրեանց յառաջ տանելոյ, կուրանամ չասել, զհոգին ի դժոխս չձգել, այլ միշտ զբրիստոնէական սուրբ հաւատս իւր անբիծ, անարատ, հաստատուն պահել»[29]:

Վերոհիշյալ կանոնները չլուծեցին Աղթամարի կաթողիկոսության և Վանի առաջնորդության փոխհարաբերությունների հարցը և կաթողիկոսությունը նորից մնաց Վանի հոգևոր իշխանության ենթակայության տակ: Կոստանդնուպոլսի պատրիարքարանը XIX դարի սկզբներից միշտ էլ ցանկանում էր հրապարակից հանել Աղթամարի կաթողիկոսությունը: Այդպիսի մի փորձ արվեց Հովհաննես Շատախեցու (1823—1843) ժամանակ, սակայն հանդիպեց Վանի հոգևոր և աշխարհիկ վերնախավի համառ դիմադրությանը:

Աղթամարի կաթողիկոսության XIX դարի առաջին կեսի պատմության մասին շատ հետաքրքրական տեղեկություններ կան Նարեկա վանքի վանահայր Հովսեփ վարդապետի 1866 թ. ամենայն հայոց կաթողիկոսին ուղարկած տեղեկագրի մեջ, որը 1873 թ. հրատարակվեց Կոստանդնուպոլսում: Այդ գրքույկում բավմաթիվ փաստեր կան այն քսու և արգահատելի բարքերի մասին, որոնք առկա էին Վասպուրականի եկեղեցականներից ոմանց մոտ: Հովսեփ վարդապետի կարծիքով Հովհաննես Շատախեցին «մեռաւ, դեղ մահու առեալ նմա միաբան եպիսկոպոսի և վարդապետի տեղւոյն»[30]: Այնուհետև եկեղեցականների և քուրդ Մահմուդի ջանքերով կաթողիկոսական գավազանը ճանկեց Խաչատուր Մոկացին (1844—1851): Պատրիարքարանը այդ «օծումը» անօրինական համարեց և նրան աքսորեց Շապին Գարահիսար: Նրա մահից հետո նորից հրապարակի վրա

---

28 Մ. Իգմիրլյան, նշվ. աշխ., էջ 336:

29 Նույն տեղում, էջ 337:

30 Տեղեկագիր աղետալի անցից եւ անկարգութեանց տանն Աղթամարայ, գրեալ Յովսեփ վարդապետի վանահօր Նարեկայ Վանից, Կ. Պոլիս, 1873, էջ 7:

դրվեց Աղթամարի կաթողիկոսության վերացման հարցը, սակայն Վանի հոգևոր և աշխարհիկ վերնախավը պատրիարքարանից կաթոլիկություն ընդունելու սպառնալիքով կաթողիկոս ընտրելու թույլտվություն ստացան: Այս իրադարձություններից հետո կաթողիկոսական աթոռին նստեց Գաբրիել Շիրոյանը (1851—1857): Չնայած Ներսես Աշտարակեցին դեմ էր այդ ընտրությանը և կասեցրեց այդ օծումը, բայց կաթողիկոսը մինչև 1857 թ. մնաց իր պաշտոնին: Դրանից հետո ճանապարհ բացվեց Պետրոս Պյուլպյուլյանի համար (1858—1864): Ըստ այդ տեղեկագրի Վասպուրականի շրջակա քրդական ցեղերի վերնախավի շատ ներկայացուցիչներ շատ էին վախենում Պետրոս կաթողիկոսից. «շատ բարբարոսք դողային ի նմանէ շատ ևս այն էր զի հարուածս և դատաստանս կրէին ի ձեռաց նորին. առնէր խնամս աղքատաց, շէն պահէր զտունն, և անփառասէր որ էր և խոշորակեաց»[31]: Կաթողիկոսը ուներ համառ և անընկճելի բնավորություն, նրա համար ոչ մի նշանակություն չի ունեցել անգամ «ոչ ձեռք և սպառնալիք ահարկու քրդաց մեծամեծաց», որոնցից ոմանք ձըգտում էին նրան ճաշի հրավիրել և տալ «դեղ մահու», բայց նա ամեն անգամ խուսափում էր նրանց հետ հանդիպելուց: Տեղեկագրից երևում է, որ կաթողիկոսը չի երկնչել ո՛չ աքսորից և ո՛չ էլ տանջանքից: Ըստ Ե. Տեկանցի, Պյուլպյուլ կաթողիկոսը իր «խրոխտ և անվեհեր բնությամբ և իշխանությամբ սարսափ ձգած էր բոլոր բռնակալ և հարստահարիչ քրտաց վրա, որ անե Պյուլպյուլին չէին կարող խլրտել և հարստահարել զժողովուրդն»[32]:

1864 թ. մարտի 16-ին Պետրոս կաթողիկոսը պատրիարքին ուղարկած իր մի նամակում գրում է, որ նպատակ ունի ազգային սահմանադրությունը գործադրել տալ Վասպուրականի գավառներում և տեղյակ է պահում ժողովրդի քաղաքական և տնտեսական անտանելի վիճակի մասին, նշելով, որ գավառների մի մասը «աւերակ են և 'ի տասնեակ և 'ի քսան և աւելի կամ պակաս տունէ երկու՝ չորս՝ և հինգ տուն հազիւ թէ մնացեալ և այն 'ի մեջ քրդաց և 'ի շատ գիւղօրայս հայազգի ոչ գտանին»[33]: Անդրադառնալով Վասպուրականի գյուղերում կատարված հարստահարություններին, գրում է. «զի 'ի սաստիկ նեղութենէ հարկապահանջութենէ աղքատացան չքաւորեալ յամենայն գոյից՝ յոլով պարտեօք եղին և փախեան ցիր ու ցան եղեն, եկեղեցիք մնացին 'ի ձեռս քրդաց»[34]: Եվ վերջապես

31 Նույն տեղում, էջ 8:

32 Մատենադարան, զանազան հեղինակների արխիվ, թղթ. 54, վավ. 132, թ. 80.

33 ԳԱԹ-ի արխիվ, Թ. Ազատյանի ֆոնդ, վավ. 9790/12:

34 Նույն տեղում:

հայտնում է պատրիարքին անընդհատ ավելացող հարկերի մասին և խնդրում մի ելք գտնել ժողովրդին այդ ծանր վիճակից դուրս հանելու համար. «յայսմ տարի,— գրում է նա,— սաստիկ աղուիսի է հացի, բազում անձինք մեռան 'ի սովոյ, և ոմանք բոլորովին, 'ի գարնան հասանել փախուստ առնեն երթան 'ի Ռուսաստան»[35]:

Սակայն եթե կաթողիկոսին չկարողացան ծնկի բերել թուրք և քուրդ վերնախավի ներկայացուցիչները, նրան ընկճեց իր ընկեր Խաչատուր Շիրոյանը, որին հաջողվեց շարքից հանել Պետրոսին և գրավել կաթողիկոսական աթոռը: Խ. Շիրոյանը Ռշտունիքի Գավաշի Բողանիս գյուղից էր: Մանկությունից սկսեց ծառայել Պետրոսի, ապա էջմիածնում՝ վարդապետ Խաչատուր Նազլուխանի մոտ: Վերջինիս մահից հետո տեր դարձավ նրա ունեցվածքին, որը, ըստ մատուլում տպագրված մի հոդվածի, հասնում էր 8000 ոսկու[36]: Դրանից հետո նա գալիս է Աղթամար, ձեռնադրվում վարդապետ և ապա՝ եպիսկոպոս:

Աղթամարում Խ. Շիրոյանը կոչումներից բացի յոթ տարի վարում է գանձապահի և գործակալի պաշտոնը և «երբ ավելի յուր գանձարանը ճոխացնելու մտադիր կըլլա, վեր կհանե իր սրտի խորհուրդը, կաթողիկոսը տապալէլ և ինքն գրավել աթոռը»[37]:

Գործակալի և գանձապահի պաշտոնում նա վանքի ունեցվածքը հափշտակելու ճանապարհով սկսեց հարստանալ: Հ. Բազունու (Կայծակ վարդապետ) մի հոդվածից երևում է, որ նա «Վանա և գյուղերի հայ և քուրդ բեգերի ամենքի խորին համակրութեյանն և հարգանքին էր արժանացած և՝ դոցա վրա հիմնված՝ միշտ ձգտում էր Արծրունյաց հոգևոր գահը բարձրանալու...»[38]: Ըստ Հովսեփ վարդապետի տեղեկագրի, Խաչատուրը ոսկիների հսկայական պաշարը տալիս էր տոկոսով Վանի վաճառականներին և հարստատ անձանց: Դրանից հետո, երբ սկսեց ավելի հարստանալ «ձեռն էարկ վարձակալութիւնս վարձել (թաշիր աղնամ, ևն) արքունի հարկաց գաւառացն և գյուղօրէից մերձակիցն Աղթամարայ, և այսպես թէ գանձ երկրին և թէ սանձ առ հասարակ բնակչացն ի ձեռն էառ Խաչատուրն»[39]: Քաղվածքից երևում է, որ Խաչատուրը ավելի շատ նման էր կեղեքող վաշխառուի, քան հոգևորականի, քանզի եկեղեցական օրենք-

---

35 Նույն տեղում:

36 «Մշակ», 1896, № 16, 8 փետրվարի:

37 Գաւազանագիրք, կաթողիկոսաց Աղթամարայ, պատմական ուսումնասիրութիւն, գրեց Հ. Ներսես Ակինյան, Վիեննա, 1920, էջ 183:

38 «Արաքս», գիրք Բ, 1897, էջ 54:

39 Հովսեփի տեղեկագիրը, էջ 10:

նները արգելում էին հոգևորականներին նմանօրինակ գործերի հեղինակ լինել։ Իմանալով նրա այդ վարքագծի մասին, Պյուլպյուլ կաթողիկոսը մի օր զայրանալով, նրան ասաց. «Կզղճամ ձեռքս գլխուդ վրա դնելու համար»[40]։ Երկու հոգևորականների միջև սկսված խուլ պայքարը սկսեց ավելի բացահայտ դառնալ և խաչատուրի համախոհները Վանի առաջնորդարանը հեղեղեցին կաթողիկոսի մասին ամբաստանագրերով։ Քաղաքի վերնախավի մի մասը խաչատուրին պաշտպանում էր, քանի որ իր «մեծաքանակ ոսկիներն անոնց քով դրած էր թեթև տոկոսով»[41]։

Հարստանալուց հետո Խ. Շիրոյանի մոտ սկսեց ավելի հոսել ամեն ինչի գնով իր ընկերոջ՝ Պետրոս կաթողիկոսի դիակի վրայով կաթողիկոսական աթոռին տիրանալու տենչը։ Մի օր նա իր հայրենի գյուղում հավաքեց Վասպուրականի հայ, թուրք և քուրդ երևելիներին, որին մասնակցում էին Դավաշի մյուդիր Ջերքեզ Մահմեդը, մոլլա Ավսամատ Ղադին, Խան Մահմուդի եղբայր Դավրիշ բեյը, Քելեշ աղայի որդի Օսմանը։ Հավաքի մասնակիցները գտան, որ պետք է Խ. Շիրոյանին կաթողիկոս դարձնել։ Այդ կապակցությամբ նրանք դիմեցին Վանի հոգևոր առաջնորդ Իգնատիոսին և քաղաքի մի շարք երևելիների, որոնք Խ. Շիրոյանից նյութապես կախված լինելով, ստիպված խոստացան նրան օգնել։ Խ. Շիրոյանին մնում էր կոնկրետ գործի անցնել և հավաքի մասնակիցների հետ նրանք անցան Սղթամար՝ «նոր» կաթողիկոսին «օծելու»։ Պետրոս կաթողիկոսին հայտնի դարձավ այդ ամենը և նա շտապեց ժամ առաջ հասնել կղզի, սակայն խաչատուրի կողմնակիցները նրան նավակից դուրս նետեցին լճափի ավազի վրա։ 1864 թ. խաչատուրի կողմնակիցները նրան «կաթողիկոս» օծեցին։

Ե. Տևկանցի մի ձեռագիր աշխատության մեջ վերևում նշված դեպքի և նրանից հետո տեղի ունեցած իրադարձությունների մասին ասված է, որ լսելով, որ խաչատուրը պետք է կաթողիկոս «ձեռնադրվի», օրինական գահակալը «փոքր նավակ բերելով կաճապարե կղզին երթալ. խաչատուր, Հակոբ, Եղիազար և Սարգիս եպիսկոպոսք դրսի տուն պատրաստի լինելով նավակ ուրիշ կողմ կփոխուցանեն»[42], ապա ուժի միջոցով նրան հանում են նավակից և կիսամեռ դրում ավազի վրա, որը «երկու օր երկու գիշեր ավազի վրա կմնա», որից հետո «խեղճի սրտի կսկիծեն կսկսի բերնեն և քթեն գունդագունդ արյուն հոսել...»[43]։ Դրանից հետո կաթողիկոսը մի

40 «Բյուզանդիոն», 1900, № 1202, սեպտ. 18—4 հոկտ.։

41 Նույն տեղում։

42 Մատենադարան, զանազան հեղինակների արխիվ, թղթ. 54, վավ. 13բ, թ. 58։

43 Նույն տեղում, թ. 59։

կերպ հաանում է իր հայրենի Փշավանք գյուղը, որտեղ և երդիկից արձակված հրացանի գնդակներից սպանվում է Դավրիշ բեյի որդի Գուլի խանի և այլ քրդերի կողմից։ Այդ սպանության մասին մի հոդվածում կարդում ենք. քրդերը «հրացանները կիսով չափ երդիկից ներս պարզելով՝ Պետրոսի թիկնամեջին կուղղեն, երկու հրացան միաժամանակ կարձակվին, չորս գնդակ դժբախտ Պետրոսի թիկունքից անցնելով կրծքից դուրս կը գան»[44]։ Այդ օրերին վերը նշված դեպքին անդրադարձան «Արծուիկ Տարօնոյ» և «Արծուի վասպուրական» պարբերականները։ Վերջինիս մեջ նշվեց, որ Աղթամարի հոգևոր թեմը «թշվառության բաժակը իսպառ քամած է», քանի որ այնտեղ կատարվեցին «ծանրակշիռ ոճիրներ»։ Ապա ասված է, որ այդ օրերին Փշավանքում կաթողիկոսը «հրացանով զարկվեցավ»։ Հոդվածում ասված է նաև այն մասին, որ երբ Վանի հասարակությունը իմացավ Խաչատուրի կաթողիկոս դառնալու մտադրության մասին, դիմեց կուսակալին, որը շտապ զորք ուղարկեց, սակայն նրանք հասան այն ժամանակ, երբ նա արդեն «օծվել» էր։ Դեպքերի թարմ տպավորության տակ «Արծուիկ Տարօնոյն» գրեց. «Սեպտեմբեր 26 Աղթամարա Խաչատուր եպիսկոպոս ձեռնադրել տալավ դինքը կաթողիկոս։ Պետրոս կաթողիկոսն ալ որ ողջ՝ Փշավանք գյուղն էր, երկու օր եռքը՝ ատրճանակով սպանվեցավ»[45]։ Այնուհետև թերթը Խաչատուրի մասին գրում է, որ նա «50 հազար քսակի տեր է (5 միլիոն ղուրուշ, մի քսակը հավասար է 500 ղուրուշի— Հ. Պ.) վաճառականություն կընե»[46]։

Կաթողիկոսի սպանությունից հետո նրա եղբոր տղան ամենուր սկսեց խոսել այն մասին, որ իր հորեղբորը սպանել են Խ. Շիրոյանի կողմնակիցները։ Նորընտիր կաթողիկոսը թուրքական իշխանությունների միջոցով նրան բանտարկել տվեց և այնքան ծեծեցին, որ ստիպված ասաց, թե «ես սպանի չէր եղբայրն իմ պիւլպիւլ», սակայն երբ մի քիչ սթափվում էր, ձեռքը դեպի նորընծան ուղղելով ասում էր. «ես ոչ սպանի, այլ մանաւանդ թե զարիւն հորեղբօր իմոյ խնդրեմ»[47]։ Վերջապես Խ. Շիրոյանի աշխատանքի շնորհիվ հրապարակ իջան մի քանի վկաներ, որոնք կեղծ ցուցմունքներ տվեցին, թե կաթողիկոսին սպանել է նրա եղբոր տղան։ Վանի փաշան ստեղծեց հայերից և մուսուլմաններից կազմված հանձնաժողով, որը Փշավանքում սկսեց այդ գործի նոր քննությունը, սակայն ոչ մի ար-

---

44 «Արաքս», 1897, գիրք Բ, էջ 61։

45 «Արծուիկ Տարօնոյ», 1864, թիվ 27, 1-ը հոկտեմբերի։

46 Նույն տեղում, թիվ 30, 15 նոյեմբերի։

47 Հովսեփի տեղեկագիրը, էջ 19։

գյումրի չհասավ, քանզի Խաչատուր Շիրոյանի ոսկիներն ավելի ուժեղ էին, քան այդ կարգի քննությունները։

1865 թ. հունիսին «Մեղուում» տպագրված մի հոդվածում ասված է, որ Աղթամարի Խաչատուր կաթողիկոսի գործը քննելու համար առանձնացվեց հանձնաժողով, որի մեջ էին Վանի Իգնատիոս արքեպիսկոպոսը և Կարինի առաջնորդ Հարություն եպիսկոպոսը, որոնք ամեն կերպ ցանկանում էին Խաչատուրին արդարացնել։ Վան մեկնելուց առաջ Հարություն եպիսկոպոսը կրոնական ժողովից հարցնում է թե «Վան երթամ նե Խաչատուր եպիսկոպոսը արդարացնեմ թե դատապարտեմ»[48]։ Այդ հանձնաժողովը պատրիարքարանին ուղղված իր զեկուցագրով արդարացրեց մարդասպան կաթողիկոսին, խնդրեց վարչությունից վավերացնել նրա ընտրությունը և ուղարկել նրան իր պաշտոնին։ Վերը նշված զեկուցագիրը չստորագրեց միայն Բոփուզյան Հակոբ եպիսկոպոսը։ Այսպիսով, Խաչատուրը մեծաքանակ ոսկիներ ծախսելով, ամեն ինչ հարթեց, իսկ այդ օրերին «Մեղուն» ցավով նշեց, որ «Խաչատուր եպիսկոպոսի ոսկիները շատ հրաշք պիտի գործեին»[49]։

1866 թ. հուլիսին Խաչատուրը հրավիրվեց Կոստանդնուպոլսի պատրիարքարան, որտեղ քննարկվեց Աղթամարի և Սսի անօրինական ընտրված կաթողիկոսների հարցը և որոշում ընդունվեց, որ «Վիճակային եկեղեցական ժողովս տեղեկանալով եթե Խաչատուր եպիսկոպոս Աղթամարա հանգուցյալ Պետրոս կաթողիկոսին կենդանության ատեն ինքզինքը անոր տեղ կաթողիկոս օծել տված է, անվավեր վճռեց անոր կաթողիկոսությունը»[50]։ 1866 թ. հուլիսի 22-ին Ազգային ժողովը նույնպես երկու կաթողիկոսների ընտրությունը անօրինական ճանաչեց և չեղյալ հայտարարեց։ Սակայն Խաչատուրը և նրա կողմնակիցները հասան նրան, որ 1867 թ. փետրվարի 24-ին Ազգային ժողովը փոխեց իր նախկին որոշումը։ Միաժամանակ ստեղծվեց հանձնաժողով, որը պետք է հիմնավորեր Սսի կաթողիկոսությունը Երուսաղեմի պատրիարքությանը, իսկ Աղթամարինը՝ կամ էջմիածնի կամ էլ Կոստանդնուպոլսի պատրիարքությանը միացնելու հարցը։ 1868 թ. հունվար-փետրվար ամիսներին Ազգային ժողովը նորից քննության առավ այդ հարցը և ընդունեց մի որոշում, որի մեջ ասվեց. «մեր դիտողությունները կը վերջացնենք ըսելով, որ Աղթամարա աթոռոյ մասին՝ այսօրվան ընելիքը հոն տեղակալ մը դրկել և կաթողիկոսը հոս

48 «Մեղու», 1865, թիվ 269, 5 հունիսի։

49 Նույն տեղում։

50 Մ. Իզմիրլյան, նշվ. աշխ., էջ 569 կամ խառն հանձնաժողովո տեղեկագիրը, էջ 16

բերել տալով՝ իրեն թեմի առաջնորդությունները բարեկարգել, և Աղթամարա վիճակն եղածին չափ բարվոքել...»[51]։

Աղթամարի կաթողիկոսության հարցը հասավ Ամենայն հայոց կաթողիկոսին, որը և Կոստանդնուպոլսի պատրիարքին ուղարկած իր գրության մեջ գրեց. «Կաթողիկոսութիւնք Սսոյ և Աղթամարայ կընտրուին ի վիճակայնոց իւրեանց և չընդհանուր ժողովոյն Կ. Պոլսոյ, յորմէ կառաջարկուին առ վեհափառ կաթողիկոսն ամենայն հայոց ի վավերացումն և ի հաստատութիւն»[52]։ Սակայն վերը նշված որոշումները մնացին որպես որոշում, իրականում Խաչատուր Շիրոյանը մինչև 1895 թ. մնաց կաթողիկոս։

1872 թ. պատրիարքարանի կողմից ստեղծված հանձնաժողովը սկսեց նորից ուսումնասիրել տարիների տևողություն ունեցող Աղթամարի կաթողիկոսության խնդիրը և Կոստանդնուպոլսում նորից հրապարակի վրա դրվեց այն հարցը, որ անհրաժեշտ է կամ վերացնել կաթողիկոսությունը կամ էլ բավարավել նրա փոխարեն մի փոխանորդ նշանակելով, որի իրավունքները պետք է հաստատված լինեին միայն կղզու վրա։ Սակայն նրանց այդ չհաջողվեց։ Այս տեղեկագրի մեջ արդեն չկա այն հանգամանքը, թե Պետրոս կաթողիկոսին ջուրն են նետել։ Տեղեկագրի համաձայն Պետրոս կաթողիկոսը հրաժարական է տալիս և թողնելով կղզին, գնում է «ի Փշավանք իր եղբոր տունը...»[53]։ Նարեկա վանքում սեպտեմբերի 10-ին հավաքված քուրդ և թուրք վերնախավի ներկայացուցիչների, ինչպես և Խաչատուրի կողմնակիցների ժողովի մասին ասված է, որ նրանք կաթողիկոս են ընտրում «Միաձայն, հաճութեամբ» Խաչատուր Շիրոյանին, իսկ սեպտեմբերի 25-ին կատարվում է նրա օծումը Աղթամարում։ Տեղեկագրի մեջ ասված է, որ Պետրոսը, երբ ցանկանում է կղզի գնալ, հավանաբար, համապատասխան բացատրություններ տալու համար, միաբանները ոչ թե նրան ջուրն են նետում, այլ նրանցից ոմանք արգելում են «զՊետրոս կաթողիկոս ներս ի կղզին երթալեւ»[54]։ Տեղեկագիրը հավաստում էր, որ նրա օծման ժամանակ եղել են չորս եպիսկոպոս և 10—12 վարդապետ, որոնք թեմի վերնախավի ներկայությամբ հանդիսավոր եղանակով Խաչատուրին կաթողիկոս են օծել[55]։ Պատրիարքարանը ինչ-ինչ պատճառներից

51 Մ. Իզմիրլյան, նշվ. աշխ., էջ 609—610։

52 Նույն տեղում, էջ 728։

53 Տեղեկագիր խառն հանձնաժողովոյ Աղթամարայ աթոռոյ կաթողիկոսական խնդրոյն, 1872 նոյեմբերի 15, ներկայացեալ ազգային երեսփոխանական ժողովոյ, Կոստանդնուպոլիս, 1873, էջ 8։

54 Նույն տեղում, էջ 9։

55 Նույն տեղում։

ելնելով ցանկացել է վերջ տալ այդ խնդրին և տեղեկագիրը կազմվել է Շիրոյանին պաշտպանելու միտումով։

Այսպես այս գործը տարիներ շարունակ մնաց ընթացքի մեջ, իսկ սպանողները չբացահայտվեցին, չնայած Բ. Դռան կողմից Ալի փաշայի գրած գրության մեջ ասված էր. «Մինչև որ Յուսուֆ և Շահեն երկու քուրտերը չձերբակալվին և չխոստովանվին, Խաչատուր եպիսկոպոսը հիմիկվանն ոչ անպարտ կրսվի և ոչ հանցապարտ, ուստի և այժմեն չկրնար կաթողիկոսության մեջ հաստատվիլ»[56]։ Սակայն Խաչատուր Շիրոյանը և նրա կողմնակիցները դիմեցին պատրիարքարանին՝ վախեցնելու և ահաբեկելու փորձված ու հին մի մեթոդի. նրանք սկսեցին պատրիարքարան գրություններ ուղարկել, սպառնալով, որ եթե Խաչատուրը չհաստատվի կաթողիկոս, ապա «տեղացիք կրոնափոխության պիտի դիմեն»[57]։

Գործի քննության այսպիսի խայտառակ ընթացքը ստեղծեցին Խաչատուր կաթողիկոսի և նրա կողմնակիցների համար մի նպաստավոր ժամանակաշրջան և նրանք պատրիարքարանը սկսեցին հեղեղել հանրագրերով այն մասին, որ Պետրոսի սպանության մեջ կաթողիկոսի մատը խառն չէ, «քի սպանողք են այն երկու քուրտերն՝ որք ի վաղուց ոխ ունեցած են եղեր Պետրոս կաթողիկոսի դեմ»[58]։ Ինչպես երևում է, Խաչատուր կաթողիկոսը այդպիսի գործեր կազմակերպելու վարպետ էր, այլապես հանրագրերի հեղինակները որտեղից գիտեին, թե Պետրոսի սպանողները եղել են այն երկու քրդերը, որոնք առհասարակ պաշտոնական քննության չէին ենթարկվել։

Ասացինք, որ Խաչատուր կաթողիկոսը վհատվողներից չէր, նա սկսեց ահաբեկել Կոստանդնուպոլսի հայ պատրիարքին և վերնախավին կաթոլիկության ընդունելու մասին իր արած հայտարարություններով։ Այդ խաղը, ինչպես ասվեց, իր ժամանակին սկսել էր նաև Պողոս Մելիքյանը։ Աղթամարի միաբանությունը և թեմական ժողովուրդը սկսեցին այդ կապակցությամբ իրենք թե բանակցություններ կաթոլիկական եկեղեցու հայրերի հետ։

Շուտով, 1867 թ. միաբանության որոշ եպիսկոպոսների, վարդապետների և թեմական իշխանների կնիքներով մի հանրագիր ուղարկվեց Անտոն Հասունյանին, որի մեջ «ստորագրողք իրենց խորին հպատակությունը կը

---

56 Նույն տեղում, էջ 14։
57 Նույն տեղում, էջ 15։
58 Նույն տեղում, էջ 16։

հայանեն Հռոմա Պապին»[59]: Խաչատուր կաթողիկոսը շատ խորամանկ էր և դիտմամբ իր ստորագրությունը չէր դրել այդ հանրագրի տակ: Նույն 1867 թ. մարտի 30-ին կաթոլիկ եկեղեցու Ստեփան եպիսկոպոսը գրություն ուղարկեց Խաչատուր Շիրոյանին, խնդրեց գրավոր պատասխան գրել կաթոլիկություն ընդունելու մասին, որից հետո նա խոստանում էր ըստ ամենայնի գործը առաջ տանել: Խաչատուրը չպատասխանեց նրա գրությանը և սպասեց Կոստանդնուպոլսի պատրիարքարանի նոր կարգադրությանը:

Ժամանակը առաջ էր ընթանում մարդասպան և անօրինական «օծվածի» կաթողիկոսի օգտին, որքան գործը հնանում էր, այնքան այն խափանելու միջոցները ավելանում էին, և ահա, 1870 թ. օգոստոսին նա մի նամակ է գրում Կոստանդնուպոլսի հայ պատրիարքին և ազգային ժողովին, որի մեջ խնդրում է նախկին որոշումը վերանայել՝ «բավ համարելով մեր յորինամյա անցուցած պարապո ժամերն և կրած վշտերն... հաճիք վերջնական որոշում մը ընելու համար»[60]:

1870 թ. Խաչատուր կաթողիկոսը Կոստանդնուպոլսի ազգային ժողովին գրեց իր երկրորդ նամակը և նշեց, որ երկու տարի գտնվում է մայրաքաղաքում և խնդրում է անդրադառնալ իր հարցին: Տարիներ անց նա իրեն արդարացնելու համար նոր թևեր առաջադրեց, որ իրեն մեղադրում են, որ կաթողիկոս է օծվել Պետրոսի կենդանության ժամանակ, սակայն չէ որ ինքը հրաժարվել էր և «Թեմականք բռնի կոչեցին զմեզ ի կաթողիկոսություն»[61]: Նամակի մեջ խոստովանում է իր ապօրինի ընտրության մասին, սակայն միաժամանակ նշում, որ «յոթը տարին հին օրինաց մեջ ազատական ու քավչական թիվ մի էր, միթե շնորհական օրենքը պիտի զլանա՞ այն շնորհը, որ առաւերականը կը շնորհեր ըսպասողաց...»[62]: Այս նշանակում էր նաև, որ նա ներում էր խնդրում: Աղթամարի կաթողիկոսության խնդիրը ձգձգվեց մինչև 1872 թվականը և լուծվեց մարդասպանության մեջ մեղսակից և անօրինական ընտրված կաթողիկոսի օգտին: Խաչատուր կաթողիկոսին հաջողվեց «արդարանալ» և նրան հնարավորություն տրվեց Կոստանդնուպոլսի մայր եկեղեցում կարդալ մի քարոզ, որի բնաբանը առանց ամոթի նա դրեց՝ «Գնով գնեցաք»[63] 1876 թ. Խաչատուր կաթողիկոսը հաղթական կեցվածքով վերադարձավ Վան, նրա կրծքին ամ-

---

59 Նույն տեղում, էջ 17:
60 Նույն տեղում, էջ 20:
61 Նույն տեղում:
62 Նույն տեղում:
63 «Նոր դար», 1884, № 74, 3 մայիսի:

բացված էր սուլթանի կողմից տրված մի շքանշան և ըստ Ե. Տեկանցի էջմիածին ուղարկած գրության՝ «մինչև որ Խաչատուր կաթողիկոսը իրեն վերագրված հանցանքը կը քավե՝ 1500 ոսկի կը նստի»[64]:

Ն. Շիրոյանի ժամանակակից Ե. Տեկանցը վկայում էր, որ նույնիսկ Պողոս վարդապետը նրա մասին ասում էր. «Գյուղերեն ցորեն կժողովվի վանուց համար պատճառաբանելով, թե վանուց միաբանք սովյալ են, բայց ծախելով ոսկի կշինե, ինքն տարին մի անգամ եկեղեցի չի մտներ, զմեղ կստիպե հաճախ եկեղեցի մտնալ և հսկումն առնել, շարունակ Քրքաց և քրդաց հետ ժամանակ անցուցանել կհոժարի, քան թե վարդապետ կարգավորաց կամ քրիստոնյա ժողովրդոց»[65]:

1872 թ. Մ. Խրիմյանի հանձնարարությամբ ժողովրդի հարստահարությունների պատճառները պարզելու նպատակով Ե. Տեկանցը գնաց Էրզրումի նահանգը, ապա Վան և իր զեկուցագրերի մեջ նշեց, որ Խաչատուր Շիրոյանը ուշադրություն չի դարձնում բեմի վանքերի և նույնիսկ Աղթամարի վրա: Նա հաստատապես պնդում է, որ Խաչատուրը հանցագործ է և «այժմ իբրև կալանավոր կնստի պատրիարքարանի մեջ և շարունակ կը բողոքե ժողովրդյան հարստահարողաց դեմ, երբեմն ինքն օտարազգի հարստահարողներեն ավելի կբռնանար ժողովրդյան վրա, և ծայրահեղ անողութեամբ կկեղեքեր գյուղացիս»[66]:

Այնուհետև դեպքերի ժամանակակից Ե. Տեկանցը, որը շատ լավ էր ճանաչում Խաչատուր կաթողիկոսին, գրում է, որ նա դեռևս Պետրոս կաթողիկոսի ժամանակ երկար տարիներ «Ռշտունյաց, Հայոց ձորո գյուղերու մեջ վարձակալություն ընելով անհագ տզրուկի պես ժողովրդյան արյուն կը ծծեր և ագահելով կը հարստանար օր ըստ օրե. այս մասին խեղճ նահատակյալ Պետրոս կաթողիկոս բազում անգամ առանձին և հրապարակավ կհամոզեր զինքն և կհանդիմաներ»[67]: Ե. Տեկանցը վկայում է, որ Պետրոս կաթողիկոսը Խաչատուրին ինչ որ առիթով ասել է, որ «դու քուրթ պեչերեն ավելի իմ խեղճ ժողովուրդս կկեղեքես»[68]: Սակայն Խաչատուրի ոսկիները, անկասկած, շատ փակ դռներ էին բաց անում նրա առջև: Ե. Տեկանցը իրավացիորեն իր հուշերում գայրացած ասում է, որ սկսած Գ. Լուսավորչից մինչև իր օրերը ո՞ր հոգևորականն է զբաղվել վարձա-

---

64 Տես Ակինյան, նշվ. աշխ., էջ 189:

65 Մատենադարան, ձեռ. № 4442, թ. 747:

66 Մատենադարան, զանազան հեղինակների արխիվ, թղթ. 54, վավ. 132, թ. 54:

67 Նույն տեղում:

68 Նույն տեղում:

կալութեամբ, և նրան մեղադրելով Պետրոսի սպանութեան մեջ, ասում է. «սակայն թե բոլոր ժողովուրդ Աղթամարա, արք և կանայք միաբարբար կվկայեն այսպես թե՝ զի եթե Խաչատուր եպիսկոպոս կաթողիկոս չձեռնադրվեր, բնավ ոչ ոք չէր համարձակեր Պետրոս կաթողիկոսին մերձենալ և սպանանել, եթե նա ամիսներով առանձին միայնակ լերանց գլուխ, ձորոց խորքերու մեջ շրջագայեր, այս վկայութիւն ոչ միայն Խաչատուրի թշնամիք այլ առավել նորա սիրելիք և բարեկամք հրապարակավ կը խոստովանին»[69]: Այս տողերից երևում է, որ Ե. Տևկանցը Պետրոս կաթողիկոսի սպանության և Խաչատուրի մասին ղրույց է ունեցել շատ շատերի հետ: Այնուհետև մանրամասն կանգ է առնում Պետրոսի սպանության հարցին, նշելով, որ նրան սպանել են Խաչատուրի կողմից վարձված քրդերը:

Ըստ Ե. Տևկանցի, նոր օծված կաթողիկոսը գնում է Փշավանք գյուղը և ստիպում Պետրոսի ազգականներին իրեն հանձնել կաթողիկոսի ունեցած գումարները: Նարեկի Հովսեփ վարդապետի տված տեղեկության համաձայն, 300 հազար դուրուշի գումար հանում է նրա անդուկից, ապա վերցնում է գյուղացիներին տրված 100 հազարի պարտքը և ամբողջ գումարը հասնում է 500 հազար դուրուշի[70]:

Այդ կաթողիկոսը իր պաշտոնավորության ընթացքում երբեք չշփվեց իր հոտի հետ, կտրված մնաց ժողովրդից և «փոխանակ շրջակա վայրագ ցեղերու վրա ազդելու բարոյապես՝ ինքն անցավ անոնց ազդեցության տակ»[71]: Կաթողիկոսի ընչաքաղցության և գյուղացիների նկատմամբ ունեցած անհարգի վերաբերմունքի մասին 1895 թ. հուլիսի 23-ին Նարեկի բնակիչներից մեկը Մ. Խրիմյանին գրում է. «Խաչատուր կաթողիկոսն իմ ագարակս բռնութեամբ տիրեց, ես եկա ձեզ մոտ Պոլիս, դուք ինձ տարաք Հարութիւն պատրիարքի մոտ և ասացիք՝ դու գնա, պատրիարքը թուղթ ուղարկեց Խաչատուր կաթողիկոսին, այդ նամակի պատճառով ես գնացի երկիր, իսկույն գանգատվեց իշխանութեանը և ինձ բռնութեամբ բանտ դրեց մինչև մի և կես տարի, հետո իմ բարեկամներս հավաքեցին երեսուն ոսկի, ջարմա տալով տաճկաց՝ հազիվ հազ ազատեցին»[72]:

Կաթողիկոսի մասին Գավաշի բնակիչներից մեկը գրում է, որ «մենք քանի մը գավառացի գլխավոր մարդիկ հավաքվեցանք, դիմում ըրինք կաթողիկոսին, որ ժառանգավորաց դպրոց մը բանա՝ մեզի ուսումնական

---

69 Նույն տեղում, թ. 55:

70 Նույն տեղում, թ. 60:

71 Ն. Ակինյան. նշվ. աշխ., էջ 193:

72 Մատենադարան, արխիվ Խրիմյան կաթողիկոսի, թղթ. 103, վավ. 80:

եղերներ հասցնելու։ Կաթողիկոսը խոստացավ հաջորդ օրը պատասխանել։ Այդ գիշերը Խաչատուր կաթողիկոս, կառավարական զինանշանին վրա, որ վեհարանի դրան ճակատը կը զարդարեր, աղտոտություն քսել կուտա և մեր վրա կը դնե։ Առավոտ երբ իրեն քով գացինք՝ կրակ ու բոց կտրած էր մեզի դեմ և զմեզ հանցավոր կը դատեր այն աղտոտ արարքի համար և կսպառնար զմեզ կառավարության հանձնել։ Հազիվհազ մենք մեր օձիքը ազատեցինք իր ձեռքեն ու մեր տեղերը դարձանք այն որոշմամբ, որ այլևս դպրոցի մասին խոսք պիտի չընենք»[73]։

Հետաքրքրական է Քոլոզ վարժապետի գնահատականը Խաչատուր կաթողիկոսի մասին, որին նա անվանում է ընչաքաղցի մեկը, որն անընդհատ մտածում էր դրամ կուտակելու մասին և «զաղգս կեղեքեր, գրքեր, գրկեր, մրկեր անխնա» և այդ հասցրեց նրան, որ նա «կուտեաց բազում գանձ» և իր հոտից հավաքում էր «Ջտասանորդն գյուղօրեից և հարկս խաշանց միաբան, որ անվաներ էօշխր գամշուր զոր և առնայր հարկահան»[74]։

Աղթամարի կաթողիկոսությունը չնայած բնակչությունից հսկայական միջոցներ էր հավաքում, սակայն կաթողիկոսը նույնիսկ իր հայրենի Բոզանիս գյուղի եկեղեցին վերաշինելու համար դրամ էր պահանջում պատրիարքարանից։ Նա բնակվում էր Աղթամարի «դրսի տան» մեջ և նպատակադրվեց ունենալ «հանգստավետ կյանք մը՝ բոլոր վայելումներովը, իբր իմաստուն տնտես անխտիր շահագործելով ամեն ինչ որմե կրնա հասույթ մը արտադրվիլ»[75]։ Նրա գլխավոր հասույթը, ինչ խոսք, գոյանում էր ժողովրդից պտղի հավաքելուց, քահանաներ ձեռնադրվելուց, նվերներից և եկեղեցական այլ ծեսերից։ Աղթամարի պտղի հավաքող վարդապետները «ամեն տարի մինչև 500 գառ կը հավաքեն, բայց իրենց անծանոթ է գեղերու եկեղեցիներու դուռն ալ»[76]։

1895 թ. հունվարին, երբ ամբողջ Արևմտյան Հայաստանը և Թուրքիայում ապրող հայությունը գալարվում էր արյան մեջ, Խաչատուր կաթողիկոսը Վանի կուսակալին ուղարկեց մի գրություն այն մասին, որ սուլթանի ծննդյան օրվա կապակցությամբ Աղթամարի վանքում «հանդիսավոր բարեմաղթություններ ըրած է արդարասեր և հպատակասեր օգոստոսափառ վեհապետին» համար[77]։

---

73 «Արծիվ Վասպուրականի», (Ֆրեզնո), 1955, հուլիս-օգոստոս, թիվ 13։
74 Մատենադարան, ձեռ. № 9424, էջ 84։
75 «Հայրենիք», (Կ. Պոլիս), 1893, 8 հուլիսի։
76 Նույն տեղում, 1895, 23 փետրվարի։
77 «Արևելք», 1901, 11/24 սեպտեմբերի։

Չնայած այդ ընչաքաղց հոգևորականի դրամները մի քանի անգամ գողացան, սակայն մահից հետո մնաց մեծ գումար, և իրերը քննելիս հայտնաբերվեց արևելյան երկաթուղու 40 և Բուխարեստի վիճակահանության 3 տոմս[78]: Բացի ոսկիներից և այս տոմսերից ու մուրհակներից, ումանց կարծիքով, նրա «ամբողջ գումարը տասն հազարը կանցներ» (ոսկի անպայման— Հ. Պ.)[79]:

Մահից առաջ 1893 թ. Ն. Շերոյանը արդեն պատրաստել էր իր շիրիմը, որի և Ախվանքի վիհարանի վրա գրված վիմագիր արձանագրության մեջ քծնանքի խոսքեր էր գրել սուլթան Համիդի մասին[80]:

Ուսումնասիրություններից երևում է, որ ժողովրդից հավաքված գումարները նա ծախսում էր այնպես, ինչպես ինքն էր ցանկանում: Կաթողիկոսը վատ չէր ծառայել սուլթանին և այդ պատճառով ստացել էր նրանից երկու շքանշան: Սակայն համարյա թե չէր ծառայել իր թեմի մեջ գտնվող աշխատավորներին: XIX դարի վերջին քաոտրդի աշխուժացած հայ ազգային ազատագրական շարժումներից խուսս տվող կաթողիկոսը այն համարում էր «հայ ստահակների» և «գեշ գայմագամների» գործ: Նրան դուր չեն եկել Ռուսաստանից Վասպուրական ժամանած մարդիկ, որոնց նա համարում էր Սրևմտյան Հայաստանում թափառող «բոշ բողազ ռուսիաֆիներ»: Կաթողիկոսի բնութագրությամբ նրանցից երկու հոգի գալիս են Աղթամարի դրսի տունը. «Գեշ մարդիկ չէին երևնար: Նվեր տվին վանքին. սակայն այլանդակ խոսքեր կնեին վտանգավոր խոսքեր... կատղուցին ոչխս, համբերություն չիողին...»[81]: Անկասկած, Ռուսաստանից եկածները կաթողիկոսի հետ ղրույցի են բռնվել թուրքական կառավարության հայերի նկատմամբ վարած քաղաքականության և հայ ժողովրդի կրած տառապանքների մասին, որը և դուր չի եկել սուլթանի ջատագով և նրանից հովանավորվող կաթողիկոսին:

Այսպիսով, խաչատուր Շերոյանը կարողացավ մնալ աթոռին մինչև 1896 թվականը, որից հետո մինչև 1915 թ. Աղթամարում նշանակվեց կաթողիկոսի տեղապահ: Թուրքական կառավարությունը այդ թվականին վերջնականապես վերացրեց ինչպես Սսի, այնպես էլ Աղթամարի կաթողիկոսությունները:

---

78 «Բյուզանդիոն», 1900, № 1095, 16/29 մայիսի:

79 Նույն տեղում, 1900, թիվ 1204, սեպտ. 20—3 հոկտ.:

80 Տե՛ս «Բյուզանդիոն», 1900, № 1204, սեպտ. 20—3 հոկտ. կամ «Հանդես ամսօրյա», 1920, թիվ 7, հուլիս, էջ 182:

81 «Արձագանք», 1897, № 50, 4 (16) մայիսի:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ 1870—1880 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1870-ական թվականներից սկսած Վասպուրականը դարձավ ազատագրական շարժումների ասպարեզ, որոնց աշխուժացման հիմքը Թուրքիայի հայաբնակ վայրերում և Արևմտյան Հայաստանում սաստկացած հարբստահարությունները և հայ բնակչության նկատմամբ թուրք աստիճանավորների և քրդական բեկերի ու աղանների բարբարոս վերաբերմունքն էր։ Հարստահարությունների մասին կան շատ ու շատ վավերագրեր, որոնցից է Դավաշից 1869 թ. հոկտեմբերի 14-ին բազմաթիվ ստորագրություններով ու կնիքներով Կոստանդնուպոլսի պատրիարքին ուղարկված նամակը, որի մեջ նշված են այն տառապանքները, որ ժողովուրդը կրում էր Սելիմ բեկից։ Նամակում ասված է, որ Դավաշում կա «հարստահարություն, պղծություն, սպանություն, կեղեքում և բռնաբարություն»[1]։

Պահպանված է Վանի փոխառաջնորդի 1869 թ. հունիսի 25-ին կազմած տեղեկագիրը՝ Սաթմանս գյուղում Մահմեդ Ալիի կողմից գյուղի եկեղեցին պղծելու, ջրաղացի քարերը ջարդելու և ժողովրդի ծանր վիճակի մասին։ Այնտեղ կարդում ենք. «Սղերտու, Մշո Բաղեշու, Վանա և Պայազիտու սահմանները և գեղեր խառն ըլլալով իրարու մեջ և քուրտեր անարգել կերպով անտի այսր և աստի անդր ելումուտ ընելով զանազան անպատմելի չարիքներ կիսատան ողորմելի բնակչաց գլուխ»[2]։

1869 թ. մայիսի 27-ին պատրիարքին և կենտրոնական խառն վարչությանը ուղղված բազմաթիվ ստորագրություններով մի դիմումում աս-

---

1 *Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 262, վավ. 34։*

2 *ԳԱՔ-ի արխիվ, Ր. Ազատյանի ֆոնդ, վավ. № 10668։ Վասպուրականի XIX դարի երկրորդ կեսի պատմության, ժողովրդի ծանր վիճակի, ազատագրական շարժումների մասին հետաքրքրական նյութեր կան Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ 1982 թ. հրատարակած „Геноцид армян в османской империи" վավերագրերի և նյութերի ժողովածուում։*

ված է այն ասպատակությունների մասին, որ կատարվում էին վասպուրականում, «եղեռնագործներեն խումբ մը,— կարդում ենք այնտեղ,— Շատախու գյուղօրեից վրա հարձակվելով, հինգ հարյուր, չորս հարյուր և երեք հարյուրական ղուռուշ բնությամբ տուգանք առնելեն ետքը խաշանց հոտերն ալ կը հափշտակեն կփախցնեն, տեղական քուրտերը հետնուն հասնելով ավարն կդարձունեն, բայց ասպատակները կփախցունեն...»[3]:

1872 թ. ապրիլի 25-ին Վասպուրականից Ամենայն հայոց կաթողիկոսին գրված է մի նամակ, որի տակ ստորագրել են Նորդուզի Մելիք Գասպարը, Մելիք Մարտիրոսը և իշխանապետ Մելիք Հովհաննեսը: Նամակում ասված է, որ Վասպուրականի հայերը դանվում են «Նյութական և բարոյական» ծանր ու ցավալի վիճակում, որի մասին նրանք տեղյակ են պահել դրանից առաջ կաթողիկոսին, սակայն ժողովուրդը ոչ մի բանով չմխիթարվեց «ո՛չ արտաքնացն և ո՛չ յայզգայնոց, այլ գամ քան զգամ ծանրանան ազետք և հնծութիւնք ի վերայ մեր և ո՛չ դիտեմք թե ե՞րբ առնէ մեզ տէր այցելութիւն ի բարձրանց»[4]: Նամակի հեղինակները նշում են նաև, որ հոգվոց վանքը դարձել է «զարան և որջ ավազակաց», քրդերի կողմից թալանվում են հայկական գյուղերը, վանքերը, հափշտակվում են բնակիչների ոչխարները և «Հօտք ոչխարացն սպառեալ և անտիայք պակասեալ կերակուրք խաշանց ի մոխիր տարեալ որպես սովորութիւն է չարաճճի և վայրենաբարոյ քրդացն կողմանցս»[5]: Ապա նշվում է «իսկ ի մասին գաւառացնոցս զարձեալ սպանութիւնք առևանգութիւնք, բռնի մահմեդականութիւնք շարունակին ըստ առաջնոյն, յայսմ ամի զմի մանկամարդ օրիորդ և վերկու կանայս բռնի մահմեդական արարին և զմի անմեղ սպանութիւն գործեցին և երեք հազարի ոչխարաց յափշտակութիւն եղեալ է»[6]: Դիմումի հեղինակները նշում են, որ վերոհիշյալի մասին նրանք դիմել են պատրիարքարան, սակայն ոչ մի արդյունքի չհասնելով, դիմում են էջմիածնի կաթողիկոսին և խնդրում նրանց այդ վիճակից հանելու ելք փնտրել:

1872 թ. ստեղծված անտանելի վիճակը և անլուր տառապանքները չտանելով, Վան քաղաքի բնակիչները որոշեցին կազմել մի միություն, որն անվանեցին «Միութիւն ի փրկութիւն»: 1872 թ. փետրվարին կատարված վիճակագրության համաձայն Վանում այդ ժամանակ ապրում

---

3 ԳԱԹ-ի արխիվ, Թ. Ազատյանի ֆոնդ, վավ. № 10669:

4 Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 214, վավ. 135:

5 Նույն տեղում:

6 Նույն տեղում:

էին 16 հազար հայեր, որոնցից 1200-ը գտնվում էին պանդխտության մեջ։ Քաղաքի բնակիչներից արական սեռի ներկայացուցիչներ էին 8007 հոգի, իսկ կանանց թիվը հասնում էր 8000-ի[7]։ Միության կազմակերպիչները ստորագրեցին մի վավերագիր, որը տպագրված է Գ. Ալանյանցի «Դիվանի» 13-րդ հատորում[8]։ Վավերագրի տակ իրենց ստորագրություններն էին դրել Վանի թվով 46 երևելիներ։ Միությունը միաժամանակ կոչվել է «Ազատության միություն»։ Իրենց ժողովրդի կրած տառապանքները ի նկատի ունենալով, նրանք վավերագրի մեջ գրում էին. «Վասնզի գնաց մեր պատիվը, պղծվեցան մեր եկեղեցիք, առևանգվեցին մեր հարսունքն ու երիտասարդունք — հայտնապես կը խլեն մեր իրավունքը մեր ձեռքեն և իսպառ սպուռ մեր ազգության սերունդը ջնջելու կըճգնին։ Վասնորո կամ պետք է մեռնիլ ու չտեսնել այս ոարսափելի վիճակը, և կամ վերակենդանության ստանալ ի ծոց հայրենյաց»[9]։ Միության անդամները երդվեցին հավատարիմ մնալ իրենց ուխտին և բոլորին կոչ արեցին ասելով. «Ահա ձեռն ի գործարկյալ կը հրավիրեմք ամեն ղգայուն հայ հաստատուն երդմամբ ուխտել այս գործը ի գլուխ հանելու առանց երկմտության որպես և վարդանանք և միաբանության ուխտեցին նոցա»[10]։

Միության հիմնադիր վավերագիրը ստորագրվեց 1872 թ. մարտի 3-ին։ Նույն թվականի ապրիլի 26-ին Միության ղեկավարները ստանում են Անդղ գյուղի հասարակության դիմումը իրենց հուսահատ վիճակի և Միությանը միանալու մասին, որը ստորագրել են գյուղի երևելիները։ Նրանք հայտնում էին, որ իմանալով միության ստեղծման մասին, իրենք էլ որոշեցին միանալ նրան[11]։

1872 թ. ապրիլի 26-ին Միությունը ստանում է Հորոտենց, Խեքքեղ, Հնդստան, Հառեղ գյուղերի բնակիչների և երևելիների դիմումները՝ միությանը միանալու մասին։ 1872 թ. մայիսի 9-ին գրվեց Վանի հոգևոր փոխանորդի և երևելիների դիմումը՝ ուղղված Կովկասի փոխարքային, որը Թիֆլիս տարան Միության ներկայացուցիչներ Նշան Շիրվանյանը և Հակոբ Կալոյանը։ Մի դիմում էլ ուղղված էր Երևանի նահանգապետին և Ամենայն Հայոց կաթողիկոսին։ Գ. Սրվանձտյանցի արխիվում պահպանվել է այդ միության հավատարմագիրը տրված վերը նշված վանեցիներին, որի

---

7 «Արարատ», 1873, մայիս, էջ 193։

8 Դիվան, ԺԹ հատ., էջ 269։

9 Նույն տեղում։

10 Նույն տեղում, էջ 270։

11 Տե՛ս նաև Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850—1870 ԹԹ., 1955, էջ 169—171։

մեջ ասված է. «Ստորագրյալ Վանա հայ հասարակութիւնքս ութ տասն տարիէ ի վեր անհնարին թշվառութեան և հարստահարութեան գերի մատնված և վերին աստիճան հուսահատված ըլլալով, երկու պատվավոր անձանց, այն է Հակոբ ազա Կալոյան և Նշան Շիրվանյանի խորհրդատվությամբ նույն դառնագնա վիճակին ազատվելու համար, որոշեցինք նորին մեծազոր ռուսաց առաջադրութ կայսեր հպատակելու դիմել. սորա գործադրությունն ալ վերոհիշյալ հարգելիք անձնվիրաբար հանձն առնելով՝ հասարակության կողմանե այդ կողմը դիմեցին լիազոր փոխադրությամբ և մենք ալ՝ միահամուռ, սիրով և սրտիվ ընդունելով, կնքեցինք սույն փոխանորդագիրը։ 1872 թ. մայիս 9, ի Վան»[12]։

Վանի այդ երկու բնակիչների, առանձնապես Հ. Կալոյանի մասին քիչ տեղեկություններ են պահպանվել, իսկ Ն. Շիրվանյանը (1840—1900) սկզբնական կրթությունը ստացել է ծննդավայրում, ապա Վարագի ժառանգավորաց վարժարանում։ 1855—1863 թթ. սովորել է Կոստանդնուպոլսում և համառ աշխատանքից հետո տիրապետում է թուրքերեն, պարսկերեն, ֆրանսերեն և անգլերեն լեզուներին։ 1869 թ. ճանապարհորդում է Եվրոպա, Ամերիկա, ասիական մի շարք երկրներ և վերադառնում հայրենի Վան ու զբաղվում ուսուցչությամբ։ Ժամանակակիցների վկայությամբ նա գրել է շատ բանաստեղծություններ, սակայն մինչ այժմ մեզ հայտնի է նրա «Վիշտը իմ ի Փարիզ» երկարաշունչ բանաստեղծությունը[13]։

Կովկասի փոխարքային գրած դիմումում Վանի միության ղեկավարները գրում էին. «Վանա խղճալի ու թշվառ ժողովուրդը, որ միշտ այսգունակ հալածանաց մեջ կը գտնվի ի ձեռն բարբարոսաց և անհավատից, որոն համար դառն արտասվոք ձայն բարձած յուր կրոնակցին և միանգամայն բարի և արի դրացիին օգնություն կը հայցե...»[14]։ Նամակում նրանք խնդրում էին իրենց քաղաքում ռուսական հյուպատոս ունենալ։ Փոխարքային գրած դիմումում նրանք հայտնում էին, որ նամակը գրված է արտասուքի կաթիլներով, իսկ դիմումի տակ դրել էին «Հպատակք ռուսաց ի Վան» արտահայտությունը։

Արխիվում պահպանվել է Ն. Շիրվանյանի գրությունը՝ ուղղված կաթողիկոսին, որից երևում է, որ մինչ Ռուսաստանի սահմանը անցնելը նա Վանում հանդիպել է Կարինի ռուսական կոնսուլի հետ։ Վավերագրում այդ մասին կարդում ենք. «արդեն կարնո վսեմ, դեսպանին Վան եղած ժա-

---

12 ԳՄՄ-ի արխիվ, Գ. Սրվանձտյանցի ֆոնդ, վավ. 31/6, կամ Դիվան հատ. ԺԳ, էջ 275։

13 Ն. Շիրվանյան, Վիշտը իմ ի Փարիզ, յերեսաց Ոստանիկ, Կ. Պոլիս, 1874։

14 Դիվան, հատ. ԺԳ, էջ 273։

մանակը օրերով և դիշերներով խորհուած ու խոսված է և ինչպես Պոլսո դեսպանատունն ալ հաղորդված է։ Ուստի այս այսպես լինելով՝ հայտնի կամ գաղտնի սույն շնորհեքը Ձերդ վեհափառութենեն կսպասեմք, իսկ եթե անհույս թողվի մեզ, աստի մեկնելու հրամանը կը խնդրեմք ուր որ անկ է անդ դիմելու, վասն զի մնալը մեր ձեռքը չէ, որովհետև հաղարավոր թշվառացելոց ձայները մեր ետևեն են, որք սակնդետ աղդասեր հովվապետիդ այցելութեանը անհամբեր կսպասեն»[15]։

Ինչպես տեսնում ենք, Վանի բնակիչները սրտատրոփ սպասել են իրենց ուղարկած աղերսագրերի պատասխանին և միամտաբար կարծել են, թե ինչպես Կովկասի փոխարքան, Երևանի նահանգապետը և Ամենայն հայոց կաթողիկոսը կաղդեն թուրքական կառավարության վրա, որպեսզի նրա միջոցով մեղմացվեն Վասպուրականում թուրքական և քրդական ուժերի կողմից ժողովրդի հարստահարությունները։ 1872 թ. մայիսի 26-ին Վասպուրական ուղարկվեց Ամենայն հայոց կաթողիկոսի մխիթարական նամակը, որի մեջ նա հորդորում էր վանեցիներին համբերություն ունենալ և կրթել հայ ազգի մանուկներին։ Նրա մեջ ասված է. «Թադաւորք տքնին ՚ի խաղաղութիւն պահել դաշխարհս և զհպատակին յուրեանց... արդ փութացեք կրթել զմանկունս ձեր ուսմամբ և գիտութեամբ, դաստիարակեցեք զնոսա բարոյական առաքինութեամբ, եթե միաբան լինիք ղի առ ամենայն օգուտ ձեր և հասարակութեան ազգիս, վնաս ուստիք և ոչ մի ինչ լիցին ձեզ։ Յայս մասին, որ ինչ անել էր խօսեցաք բանիւ բերանոյ ընդ այնոցիկ, որ եկեալ էին ի կողմանէ ձերմէ...»[16]։

1872 թ. մայիսի 30-ին էջմիածնի կաթողիկոսը մի նամակ է գրել կանցլեր իշխան Գորչակովին, որի մեջ նշելով ռուսական կայսրությանը իր հոտի ունեցած հավատարմության մասին խնդրում է Արևմտյան Հայաստանում մի քանի հյուպատոսներ ունենալ՝ «եթե ոչ յամենայն տեղին, գոնե ի վեց վիլայեթս», ապա նշելով Վանի և Մուշի հայ հատվածի ծանր վիճակի մասին, ռուսական կառավարությունից խնդրում է գոնե «նշանակել զհյուպատոս գեթ առայժմ ի Վան քաղաք»[17]։

Վանի հասարակության երազանքը իրենց քաղաքում ռուսական հյուպատոս ունենալու մասին նոր չէր։ Ըստ Ե. Տևկանցի մի ձեռագիր աշխատության, 1859 թ. Վանից Թիֆլիս մեկնեց մի պատվիրակություն և խնդրեց ռուսական իշխանություններից իրենց քաղաքում կոնսուլ ունենալ, նույ-

---

15 Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 214, վավ. 138։

16 Նույն տեղում, վավ. 139։

17 ԳԱ պատմ. ինստ. արխիվ, Լեոյի անձնական ֆոնդ, ց. 1, գ. 95, էջ 2ր

նիսկ խոստացան վճարել նրա աշխատավարձը։ Այդ ձեռագիր աշխատության մեջ կարդում ենք. «Ջի թեպետ քան ամոք առաջ ոմանք ի գլխավորաց Վանա գնացին 'ի Տփղիս քաղաքն, բազումս աշխատեցան 'ի դրունս փոխարքային, խոստացան վճարել ըծաղս հյուպատոսի միո և բազում գումարս դրամոց եւս վատնեցին այլ չկարացին ղհյուպատոս մի բերել 'ի Վան»[18]։ Այդ հարցը լուծվեց միայն 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո։

* * *

1876 թ. մայիսին սուլթան Ազիզը գահընկեց արվեց և գահ նստեց Մուրադ V-ը, որից մի քանի ամիս անց գահը հափշտակեց Աբդուլ Համիդը, որը 1876 թ. սեպտեմբերի 1-ին հռչակեց օսմանյան պետության պատմության մեջ առաջին սահմանադրությունը։ Այդ արարողության ժամանակ խորամանկ սուլթանը ասաց. «Որովհետև Սահմանադրական սիստեմը ազգերի առաջադիմության գլխավոր ազդակներից մեկն է. մենք հայտարարում ենք ընդունել կառավարական այդ ձևը՝ ի նկատի ունենալով Շերիի օրենքները ու մեր ժողովրդի սովորությունները»[19]։ Նոր գահակալը երկրի անտեսական և քաղաքական ծանր վիճակի պատճառը համարում էր Շարիաթի օրենքների ոտնահարումը, որի պատճառով պետության գործերի մեջ տիրում էր անկարգություն, երկրում չէին պահպանվում օրենքները։ Իր դիրքերը ամրապնդելու նպատակով նա պահանջեց հսկողություն սահմանել պետական եկամուտների և ծախսերի վրա, խուսափելով ավելորդ ծախսերից։ Խոստացավ պետական պաշտոնյաներ ընդունել ամենաընդունակներին և ամենաառաջավորներին, կարգավորել հարկային սիստեմը, ուշադրություն դարձնել հանրային կրթությանը։

1876 թ. դեկտեմբերի 23-ին Կոստանդնուպոլսում 101 թնդանոթներից արձակած որոտը ազդարարեց սահմանադրության ընդունումը, որի համաձայն Թուրքիան մի անբաժանելի երկիր էր, իսկ նրա հպատակները՝ առանց ազգային և կրոնական խտրության օսմանցիներ: Այդ սահմանադրության համաձայն «օսմանյան պետության հպատակ եղող անհատնեքուն ամենուն ալ՝ ինչ կրոնքե և դավանության ալ, որ ըլլան՝ օսմանցի (օսմանլը) կըսվի անխտիր»[20]։ Այսպիսով, չնայած ընդունված սահմանադրությունը օսմանյան ռազմաֆեոդալական սիստեմի պայմաններում

---

18 Մատենադարան, ձեռ. № 4182, թ. 491։

19 «Հնչակ», 1908, 8—12, օգոստոս-դեկտեմբեր, էջ 73։

20 Հիմնական կանոնք օսմանյան պետության, Կ. Պոլիս, 1876, էջ 5։

առաջադիմական երևույթ էր, սակայն պահանջում էր մնացած ազգերի ձուլումը։ Ըստ սահմանադրության 4 տարին մի անգամ անց էին կացվելու պառլամենտի ընտրություններ և 50 հազար բնակչից ընտրվելու էր մեկ դեպուտատ։

Առաջին պառլամենտը բաց անելով, սուլթանը ասաց. «Իմ նախորդներս երբեք արդելք չեն եղած խղճի և կրոնքի ազատության և այս սկզբունքի մեկ հետևանքով, որ բարձր արդարություն է, իմ անձնվեր ժողովուրդներս կարողացած են պահպանել իրենց ազգային հատկանիշը, իրենց լեզուն և իրենց կրոնքը...»[21]։

Շատ չանցած սուլթանը թողեց պառլամենտը, քանի որ հույն դեպուտատները, Կարինից ընտրված Հ. Պալլարյանը, ինչպես նաև մուսուլմանական կրոնին պատկանող դեպուտատներից ոմանք սկսեցին կառավարությանը քննադատել գավառներում կառավարական պաշտոնյաների, քրդական բեկերի ու նրանց զինված ուժերի կողմից կատարված բռնությունների և հարստահարությունների համար։

Օսմանյան առաջին պառլամենտը ուներ 86 դեպուտատ, որից 48-ը՝ մահմեդականներ և 38-ը՝ քրիստոնյաներ։ Վերջիններից 17-ը հույներ էին, 10-ը՝ հայեր, 8-ը՝ սլավոններ, 3-ը՝ արաբներ (քրիստոնյա)։ Հայերից դեպուտատներ էին Ադրիանապոլսից՝ Ռուբենը, Հալեպից՝ Մանուկ Խարաճյանը, Այտընից՝ Հակոբ Սպարթալյանը, Դիարբեքիրից՝ Հովսեփ Դադաղյանը, Կարինից՝ Դանիել Խարաճյանը և Համազասպ Պալլարյանը, Սեբաստիայից՝ Հակոբ Շիրինյանը, Պրուսայից՝ Յավրույանը, Ադանայից՝ Պղտիկյանը և Կոստանդնուպոլսից՝ Սնպուհ Մաքսուդյանը[22]։

Սահմանադրությունը սկզբնական շրջանում ոգևորեց շատերին, որոնց թվում նաև Մ. Խրիմյանին, որը գրեց «Ժամանակ և խորհուրդ յուր» գործը, ողջունեց այն և կոչ արեց պաշտպանել այդ մանուկը թշնամիներից։ Մ. Խրիմյանը կարծում էր, որ սահմանադրությամբ ստեղծված օրգանները կկարողանան բռնել հարստահարողների ձեռքերը, որպեսզի «հողագործի եզները լծերեն չարձակեն և մաճկալ՝ սրահար առնելով՝ արյուն և արցունք վաղեն յուր վարած ակոսներուն մեջ»[23]։ Նա միամտաբար հավատում էր, որ երկրում կկենսագործվեն օրենքները, կպահպանվեն բողոքների իրավունքները, կլինեն արժանավոր պաշտոնյաներ, իսկ եթե այդ չլինի, սահմանադրությունը կմեռնի։

---

21 «Հնչակ», 1908, № 8—12, օգոստոս-դեկտեմբեր, էջ 80։

22 «Ժամանակակից պատմություն», մասն Գ, գրեց Հ. Մինաս Նուրիխան, Վենետիկ, 1907, էջ 367։

23 Խրիմյան Հայրիկ, Ամբողջական երկեր, Նյու Յորք, 1929, էջ 244։

Այնուհետև անդրադառնալով իր ժողովրդի ծանր վիճակին, նա գրեց. «Բարգավաճ և հարուստ աշխարհ հիմնահատակ քանդվեցավ, շեն շեն գյուղեր և քաղաքներ առ ի չգոյե բնակչաց ավերակ դարձան, մնացորդ ժողովուրդ հայրենիքեն հեռացած պանդխտության մեջ անարդ ծառայությամբ կշարչարվի»[24], «Մինչև ե՞րբ սգանք ու լանք, մինչև մեր աշխարհ մեռելոց աշխա՞րհ է, մեր կյանքը գերեզմա՞ն է, մեր գոյությունը ոչնչությո՞ւն է, մեր բնակարան բա՞նտ է, մեր կապանք հալիտենական շղթա՞ է»[25]: Մ. Խորիմյանը նշում է, որ իր ժողովուրդը ստրկական ոգով դաստիարակվեց և ապտակողին մյուս երեսը ցույց տվեց, իսկ եթե մամուլը «յուր ազատության ճիգ և ձայն հաներ, այն ևս կը ճնշվեր խիստ օրինաց ներքև, ուստի մեր աշխարհի զրկանաց և անիրավության բազմատեսակ վերքեր միշտ ծածուկ մնաց, վերջապես նեխեցավ ու փտեցավ, ամեն ոք դարմա՞ն, դարմա՞ն, կաղաղակեն»[26]: Ապա գտնում էր, որ սահմանադրության հրապարակ գալուց հետո չպետք է խորհրդարանի ժողովուրդների միջև և պետք է հանվի «ժողովրդոց սրտեն թշնամության, ատելության և խորհրդարանի վես ոգին» և երկրում «տաճիկ, հույն, հայն, հրյան ղիրար ողջունեն իբրև համաքաղաքացի ժողովուրդ»[27]: Իր հայրենիքը անհուն սիրով սիրող այդ գործիչը պահանջում էր. «Այո՛, հավասարություն իրավանց և պարտուց մեջ, հավասարություն երկրին օրինաց առաջ, հավասարություն հայրենյաց ժառանգության մեջ, հավասարություն փառաց և պատվո մեջ, հավասարություն դինակրության և դինվորության մեջ, հավասարություն քաղաքացիության և ազնվականության մեջ, հավասարություն ուսման և առաջադիմության մեջ, հավասարություն արյան և անձնանվիրության մեջ, հավասարություն արժանավոր վարձուց մրցանակին մեջ»[28]:

Շուտով օսմանյան պառլամենտը ցրվեց, քանի որ այնտեղ կային զահակալին ոչ հաճելի դեպուտատներ, որոնք պահանջում էին վերահսկողություն սահմանել երկրի ֆինանսների վրա, միջոցների դիմել զեղծարարների, անկարող և կաշառակեր պաշտոնյաների ու դատավորների դեմ: Դեպուտատներից մեկը ասաց. «Ոստիկանները կողոպտում են ժողովրդին, դատարանների պաշտոնյաները պահեստի դրած դրամները գողանում են և աստիճանավորները ամեն տեսակ ծեծ ու չարչարանք են տալիս

---

24 Նույն տեղում, էջ 241:
25 Նույն տեղում, էջ 241—242:
26 Նույն տեղում, էջ 242:
27 Նույն տեղում, էջ 244:
28 Նույն տեղում:

ժողովրդին»[29]: Դեպուտատներից մեկ ուրիշը հայտարարում է պառլամենտում՝ «Իրողություններն ավելի քան ակնհայտ են, ավերակները դեռ մնացած են, դիակները դեռ այնտեղ են»[30]:

1877 թ. նոյեմբերի 13-ին ընտրված նոր պառլամենտը ուներ 127 դեպուտատ, որից իսլամներ՝ 60, ոչ իսլամներ՝ 47 և մայրաքաղաքից 10 հոգի: Այս պառլամենտում հայերից 13 հոգի ընտրվեցին գավառներից, իսկ երեքը Կոստանդնուպոլսից[31]:

1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ երբ քրդական վերնախավի ուժերը սկսեցին իրենց բարբարոսությունները խաղաղ հայ բնակիչների նկատմամբ, հույն դեպուտատ Սուլիգեսը հուզված, առանց երկնչելու ասաց. «Բայց միթե արդարությո՞ւն է որ հայը՝ տերության ամենեն հնազանդ և հպատակ ազգն՝ այսպես չարչարվի և կեղեքվի»[32]: Սրան հաջորդում է Կարինից ընտրված Հ. Պալլարյանի ելույթը այն մասին, որ թուրքական պաշտոնյաները պաշտպանում են քրդական վերնախավին և «Վալիներեն և մյութասարիֆներեն շատերն ալ կան՝ որ այդ քրդաց գործակից և համախոհ գտնված են»[33]: Ապա շարունակում է. «Իսկ շատ աղեկ գիտեմ, որ այդ քուրտերուն աղատ թողնվիլին ամեն անգամ 10.000 ոսկի կըլլա իրենց»[34]: Ելույթներից մեկում Հ. Պալլարյանը բացեիբաց հայտարարում է. «Երբ կը հարցնեի կուսակալին, թե ինչո՞ւ քուրտերը չեն պատժվիր, երբ երկու վաշտ զինվորը բավական է այդ գործողությունը կատարելու համար, և այսպես թույլ կը տրվի, որ անպատիժ շարունակեն իրենց չարագործությունները» կամ «Թուրք կառավարությունը՝ տեղական թե կեդրոնական, անոր համար քուրտերը այդ վիճակին մեջ կը պահեն, որ հայերու կողմե, Հայաստանի մեջ ծագելիք որևէ ապստամբություն անոնց միջոցով զսպեն: Երկրորդ, Ռուս-տաճկական պատերազմի մը ժամանակ քուրտերը որպես կամավորական գունդեր օգտագործվին, թուրք բանակի կողքին»[35]:

Այս ելույթներին հաջորդում է հույն Վասիլաքիի ելույթը, որը հաստատելով նախորդ ելույթները, գտնում է, որ պետք է վիճակը կարգավո-

---

29 «Հնչակ», 1908, № 8—12, էջ 82:

30 Նույն տեղում:

31 Մ. Նուրիխան, նշվ. աշխ., էջ 544:

32 Նույն տեղում, էջ 455:

33 Նույն տեղում:

34 Նույն տեղում:

35 Ղազար—Ջարըգ, Յուշամատեան Բարձր Հայքի, Կարինապատում, Պէյրութ, 1957, էջ 394—395:

թելու համար միջոցների դիմել և դրանից հետո «բոլոր իսլամ երեսփոխանք ալ համամիտ և ձայնակից եղան թե սոյն առաջարկութեան և թե վերոհիշեալ առնախոսներուն հայտնած կարծացը, հետևաբար որոշվեցավ գրել Ք. Դուռն՝ որպեսզի անմիջական ազդու միջոցներ ձեռք առնվին»[36]:

1878 թ. հունվարի 3-ին պառլամենտի նիստում քննարկման դրվեց այլազգիներից դինվորներ վերցնելու հարցը և, քանի որ, այդ տարվա բեդելը վճարված էր, որոշվեց հարցը տեղափոխել մյուս տարվան: Պառլամենտի հայ և հույն դեպուտատները դեմ էին դինվորագրությանը, քանի որ չէին ցանկանում, որ իրենց զավակները կռվեն Ռուսաստանի դեմ:

Թուրքական երկրորդ պառլամենտը նույնպես չարդարացրեց սուլթանի հույսերը: Թուրք դեպուտատ Ենիշեհիրլիզադե Ահմեդը նշեց, որ գավառային իշխանությունները լավ չեն աշխատում, որ տերության պաշտոնյաները «ամենն ալ գող են ու կաշառակեր», ուրիշ մուսուլման դեպուտատները նշեցին, որ «քիչ թոշակով ուղիղ և անկաշառ պաշտոնյաներ չեն կրնար գտնվիլ»[37]: *Նրան անմիջապես ձայնակցում է Հալեպի դեպուտատ Մանուկ Խարաճյանը: Դեպուտատներից մի ուրիշը հայտարարում է. «Կուզենք որ ճշմարտությունը դրուցեմ. իմ գավառիս մեջ կառավարության պաշտոնյաները խոշտանգանք ի գործ դնեն. դատարանաց մեջ հանձնված ավանդները պաշտոնյայք կը գողնան. ոստիկանության դինվորք ժողովուրդը կը կողոպտեն»*[38]: *Այնուհետև էնկուրի դեպուտատ Մելքոնը, ապա Դաղազյան Հակոբը և նրանց միացած մի շարք մուսուլման դեպուտատներ գտնում են, որ պետական պաշտոնյաները զեղծարարներ են: Իզմիրից Մինա էֆենդին հայտարարում է, որ մեր նահանգի մեջ «Պաշտոնատարք գողության կընեն, ոստիկանության գործակալք ժողովուրդը կը կողոպտեն»*[39]:

1878 թ., երբ ռուսական զորքերը հաղթականորեն շարժվում էին դեպի մայրաքաղաք, սուլթանը փետրվարի 14-ին ցրեց իր համար ոչ հաճելի պառլամենտը, ասելով. «Ես սխալ ճանապարհի մեջ էի մտել, երբ ուզում էի հորս՝ Աբդուլ Մեջիդին նմանիլ, որ ուզեց բարենորոգումներ ներմուծել և ազատական հաստատություններ հիմնել: Ես պիտի քալեմ իմ մեծ հորս (պապիս) սուլթան Մահմուդի շավղով: Ես էլ նրա պես հասկանում եմ թե միայն բռնությամբ կարելի է քալեցնել տալ այդ ժողովուրդներին,

---

36 Մ. Նուրիխան, *նշվ. աշխ.*, էջ 456:

37 Նույն տեղում, էջ 548 և 549:

38 Նույն տեղում:

39 Նույն տեղում, էջ 552:

որոնց պահպանությունը ստված ինձ է հանձնել»[40]։ Եվ Թուրքիան, ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական տեսակետից մնաց նույն վիճակում։ Նրան եվրոպական պետությունների դիվանագետները և ռուսական ցարը անվանում էին «հիվանդ մարդ»։ Ռուսական ցարը ինչ-որ առիթով Թուրքիայի մասին ասել է. «Այո՛, Թուրքիան հիվանդ, շատ հիվանդ մարդ է, որը կարող է մեռնել հանկարծակի, մնալով եվրոպացի ձեռքերին»[41]։ Անգլիացի Սոլսբերին Թուրքիան համարում էր «եվրոպացի մարմնի վարակված անդամ»[42]։

Պատերազմից առաջ, 1876 թ. նոյեմբերի վերջին այրվեց Վանի շուկան և կրակի հարակ դարձան 500 վաճառատներ և կրպակներ։ Հրդեհից առաջ թուրքական զորքերի հրամանատար գնդապետ Մահմեդը բանակի համար հանգանակություն անելիս ասել է. «Իսլամ զորքեր ձեր հանգստության ինչքի և կյանքի ապահովության համար բանակ պիտի երթան քեաֆիր Մոսկոֆին դեմ կռվելու, հանգանակությունը քանի որ այդ զորքերուն համար է, պետք է սիրով մասնակցիք և ձեզմե պահանջված գումարն ամբողջ վճարեք, ինչպես նաև կերպասներ և այլն, ապա թե ոչ վերջեն պիտի զղջաք. շուված կեռպասնիդ, դրամներդ և դուք պիտի այրիք (ընդգծումը մերն է— Հ. Պ.), ուստի տվեք ձեզմե պահանջվածները, որպեսզի վերջեն չզղջաք և այլևս ուշ չըլլա»[43]։ Հրամանատարը Վանի Կարին մեկնելու ճանապարհին Արճեշում իմանում է շուկայի այրվելու մասին և ասում, եթե Գալաճյան Գևորգ պեյի շուկան չի այրվել, «անպատճառ պետք է այրել ինչպես նաև Շարան պեյի շուկան»[44]։ Թուրքական շրջաններում այդ հրդեհի կապակցությամբ սկսեցին լուրեր տարածվել, թե հայկական հարցը սեղանի վրա դնելու նպատակով այն այրել են հայերը։ Սակայն իրականում շուկան այրեցին թուրքական զինվորները և ոստիկանները։

Անհերքելի է, որ հրդեհը կազմակերպվեց թուրքական վերը նշված հրամանատարի և նրա կողմնակիցների միջոցով։ Ուսումնասիրությունից երևում է, որ շուկան թալանել են թուրք զինվորներն ու ոստիկանները և հետքերը անհետ կորցնելու նպատակով այրել։ Հրդեհը սկսվելուց հետո այնտեղ հայտնվեցին նաև մեծ թվով քրդական ուժեր՝ իրենց բեռնակիր անասունների հետ, որոնք սկսեցին թալանել դեռևս չայրված խանութ-

---

40 «Հնչակ», 1908, № 8—12, օգոստոս-դեկտեմբեր, էջ 83։

41 «Северный вестник», (СПб.,), 1896, № 10, с. 94.

42 Նույն տեղում, էջ 83։

43 Տ. Կ. Ձանկուլյան, Հիշատակներ հայկական հզնաժամեն, Կ. Պոլիս, 1913, մաս Ա և Բ, էջ 14։

44 Նույն տեղում, էջ 16։

նները։ Լիմ անապատից Ա. Շիրոյանի 1881 թ. գրած մի նամակում հրդեհի մասին ասված է. «1876 թվոյն, երբ Վան քաղաքի տեղական բարբարոս թուրքերը ամբողջ դուքանները վառեցին և թե անտի որչա՞փ նյութական վնասսաց ենթարկվեցան մեր խղճալի աղգայնիք յուրաքանչյուր ոք լսելով կարե գաղել և որոշել։ Ահա այս հրդեհին ղոհ գնաց Լիմ սուրբ անապատիս 20-ի չափ կրպակներ»[45]։

Ե. Տևկանցի մի ձեռագրում պահպանվել է հրդեհի կապակցությամբ Վանից Կոստանդնուպոլսի պատրիարքարան ուղարկած մի բողոքագիր, որտեղ խոսվում է հրդեհի հանգամանքների մասին։ Այնտեղ կարդում ենք. «Ինդանոթաձիգ զորքեր շուկան մտած մուրճեր ձեռքին կրպակաց դռներ մեկ հարվածով կը խորտակեին դրամոց արկղներ կը ջարդեին և իբրև թշնամաց ավար կհափշտակեին. ապա ընկերացան ձիավոր զորքեր, ապա պահեստի զորքեր և ապա ոստիկանական գինվորք, զորաց հետևեցան նախապես մոտավոր և հեռավոր տեղերի եկող տաճիկք, որք փոխանակ կրակ մարելու երբ տեսան թե զորք տապարներով խանութաց դռները կխորտակեն և կկողոպտեն նոքա ևս համարձակվեցան կողոպտել»[46]։ Այնուհետև բողոքի հեղինակները շարունակում են. «Այսպես մետաքսագործաց, կոշկակարաց, մանավանդ ոսկերչաց շուկային բնավ կրակ չմոտեցավ, բայց զարձյալ մուրճովք և քարիվ խորտակեցին դռներ, կողոպտեցին անխնա և դիմակացներ անխնա հալածեցին։ Չմոռանաք գրելու թե հրդեհյալ խանութներ նախ կողոպտեցին և ապա կրակ տալով վառեցին»[47]։

Ե. Տևկանցի վկայությամբ, չնայած Շարան բէյի 100 կրպականոց շուկան չայրվեց, սակայն այնտեղ «զորքեր մուրճովք ջարդեցին դռներ և միջի դրամներ և ապրանքներ կողոպտեցին։ Հոն միայն 3 խանութ չկողոպտված մնաց նշանավոր ոմանց բուռն պաշտպանության շնորհիվ»[48]։

Բողոքի կապակցությամբ պատրիարքարանից պատասխանեցին, որ այդ մասին հայտնված է մեծ էպարքոսին և արդյունքը եղավ այն, որ ստեղծվեց Վանի առանձին վիլայեթը և այնտեղ կարգվեց նոր կուսակալ Հասան փաշան, որի մասին պատասխան գրության մեջ ասված էր, որ նա «Հայրենասեր և արդարասեր» մի կուսակալ է և նրա «անկաշառ ճշմարտասիրությունը ամեն բան երևան պիտի հանե. նորա ծանուցյալ հայրենասիրությունը և դպրոցասիրությունը Վասպուրականի համար նոր երջանկու-

45 Մատենադարան, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 149, վավ. 148։

46 Մատենադարան, ձեռ. № 4182, թ. 24։

47 Նույն տեղում, թ. 30։

48 Նույն տեղում։

թյան թվական պիտի բանա»[49]։ Այդ նոր բաժանման ժամանակ Վանի վիլայեթի մեջ մտան նաև Մուշն ու Բիթլիսը[50]։ Դրանից հետո պատրիարքարանի ղեկավարները հայտնում էին, որ Հասան փաշային տեղակալ է նշանակված Մարկոս Աղաբեկյանը, միության էին քարոզում և առանց որևէ հիմք ունենալու պրում էին, որ շուտով «Բարեվոր թվական մը կսկսի Հայաստանի համար»[51]։ Վանի Հասան փաշային անվանում էին նաև Շքոտրալի Հասան փաշա Ալբանացի։ Մինչև Վան գալը նա Խարբերդի փաշան էր։ Նրա նախնիները XIX դարի սկզբներին Ալբանիայում օսմանյան պետության դեմ ապստամբության դրոշ բարձրացրին, սակայն պարտվեցին։ Հասան փաշան «ամբողջը իր ամբողջ բնակիչներով օրը հանող հրոշակավոր Դերե-Դելենլի Ալի Բաշայի ցեղից լինելով, դեպի օսմանյան սուլթաններն գահը խոր ատելությամբ տոգորված մի մարդ էր և իբր աքսոր ուղարկված էր Վան»[52]։ Ժամանակի մամուլում լույս տեսած մի քանի հոդվածներում այդ փաշայի մասին խոսում են շատ հարգանքով։ Սակայն ինչքան էլ փաշան չսիրեր թուրքական արյունարբու կառավարական սիստեմը, ինչքան էլ մեղմ լիներ հայերի նկատմամբ, այնուամենայնիվ, թուրքական պաշտոնյա էր և ստիպված էր կատարելու իր կառավարության հանձնարարությունները և պետք է լիներ նրա վարած քաղաքականության կատարողներից մեկը։ Նոր վիլայեթի ստեղծումը ոչ մի օգուտ չէր կարող բերել Վասպուրականի հայությանը, դրանից հետո Վան քաղաքում ավելացավ թուրքական ղորքերի, ոստիկանների և պետական պաշտոնյաների թիվը։ Թուրքական բռնակալության ծանր լուծն ավելի ծանրացավ ժողովրդի վրա։ Հասան փաշան Վան հասնելուց հետո կազմեց մի հանձնաժողով, որը պետք է պարզեր հրդեհի պատճառները և պատժեր մեղավորներին։ Դեռևս հրդեհի ժամանակ թուրք արդարամիտ մարդկանցից մեկը՝ Շեմիլ պեյը ասել էր, որ այն «դիտումնավոր և պատրաստված ծրագրի մը գործադրությունն է, ըսել է այդ հրեշները բնավ խիղճ չեն ունեցած, որ հարյուրավորներ մոխրի վրա նստացուցին...»[53]։ Եվ նրան հաջողվեց խուզարկությունների միջոցով մեծ թանակությամբ ապրանքներ հանել, որը հավասարությամբ բաշխվեց հրկիզյալներին։ 100-ից ավելի կողոպտիչներ բանտարկվեցին, սակայն նրանցից ոչ մեկը չպա-

---

49 Նույն տեղում, թ. 31։

50 Սարուխան, *Հայկական խնդիրն ու ազգային սահմանադրությունը Թուրքիայում (1860—1910)*, Բիֆլիա, 1912, էջ 195։

51 *Մասնագործարան*, ձեռ. № 4182, թ. 34։

52 «*Մուրճ*», 1906, № 2, փետրվար, էջ 54։

53 Ճանկյուլյան, նշվ. աշխ., էջ 23։

տրժվեց, քանի որ «հավաստի աղբյուրներե ստուգվեցավ, որ հրդեհի հրամանը վերեն եկած էր»[54]: Հանձնաժողովը սկսեց «հռչակել թե հրդեհ պատահմամբ եղած է»[55]: Վանի ժողովուրդը սկսեց ջողոքել Կարինի կուսակալը Սամի փաշային նշված հանձնաժողովի գործունեության դեմ, որը Վան ուղարկեց Կարինի բնակիչ Խաչատուր խան էֆենդուն, որը սկսեց քաղաքի բնակիչներին համոզել, որպեսզի նրանք «բնավ չխոսին և չպնդեն, թե նախ քնդանոթաձիգ զորքեր և ժանդարմաներ կոտրելու և կողոպտելու ձեռնարկեցին»[56]: Այնուհետև շարունակվեցին Վանից մայրաքաղաք գնացած բողոքները և շուտով Վան ժամանեցին Աղաթոն Մկրտիչը և Լիվան փաշան, որոնք տեղի իշխանավորների հետ սկսեցին համոզել Վանի բնակիչներին, որպեսզի նրանք այլևս չասեն «թե զորքեր խորտակեցին և կողոպտեցին, դուք միայն ողորմություն խնդրեցեք, եթե ողորմեցան լավ, իսկ եթե չողորմեցան ուրիշ բան պետք չէ»[57]: Այսպես էլ վերջացավ Վան քաղաքի բնակչության տարիների ընթացքում կուտակած միջոցների կողոպուտի և հրդեհի գործը:

Այդ ժամանակաշրջանի իրադարձությունների, թալանի, սպանությունների և հրդեհի մասին՝ Մ. Խրիմյանը գրեց «Հայ գույժ» և «Վան գույժ» գործերը: «Հայ գույժը» մի ողբ է, որի մեջ իր ժողովրդի անունից նա բողոքում է օսմանյան բռնակալության դեմ, ողբում է և միաժամանակ հանդես գալիս աշխարհի մնացած ենթակա այն ժողովուրդների անունից, որոնք նույնպես հասել են սարկության դուռը, ասելով. «Այս աշխարհ և աշխարհիս գահեր՝ ամեն գայթակղություն և որոգայթներ ունին, խեղճ և սորուկ ժողովուրդներ բռնաբարված են և կը դոչեն ազատություն՛ն, ազատությո՛ւն»[58]: Մ. Խրիմյանը գտնում է, որ աշխարհում ամեն ինչ ուժեղի կողմն է, քանի որ աշխարհի տերերը կարող են մորթել իրենց ենթականերին, քանզի նրանք «չունեն խեթկիչ եղջյուր, որ ցուլի նման ոտքին իրենց կտրիճներուն դեմ»[59]:

Մ. Խրիմյանը կոչ է անում ոչ թե հարձակվել ուրիշների վրա, կոտորել նրանց, այլ անհրաժեշտության դեպքում իրենց անձը, ընտանիքի ունեցվածքը և պատիվը պաշտպանելու համար դիմել ինքնապաշտպանության: Այդ մասին նա գրում էր. «Ո՛վ հայոց ողջ ու մնացորդ որդիներ, դեռ

---

54 Նույն տեղում, էջ 28:

55 Մատենադարան, ձեռ. № 4182, թ. 35:

56 Նույն տեղում, թ. 51:

57 Նույն տեղում:

58 Մ. Խրիմյան, Ամբողջական երկեր. էջ 274.

59 Նույն տեղում, էջ 275.

պիտի կոտորվիք, դեռ պիտի մորթվիք այդ չքոտի քուրտերուն, քանի որ անզեն, անեղջյուր, անասապար կապրիք. դուք մարդ եք, ձեռք ու բազուկ ունիք, մինչև անզգացած մեռե՞ր է ձեր սրտմտության ոգին, մինչև կը հավատա՞ք, որ իշխանության աչքը հասնի մինչև հայոց ամայի լեռներ ու դաշտեր և ձեզ պահապան լինի»[60]:

«Վան գոյժը» ըստ հեղինակի մի կուժ ջուր է, որ նա սրսկում է իր այրած հայրենիքի վրա: Գործը հրատարակվեց Թիֆլիսում, թուրքական կառավարությունը արգելեց նրա վաճառքը իր երկրում: Շուկան այրելու փաստի մասին այդ գործում նա գրում էր. «Հին դրացի քաղաքացիներդ գրավեցին զբեզ. նոքա՝ որ քեզ հետ կուտեին հայրենի սեղանեն, նոքա՝ որ քո ճակտին քրտնաց վաստակով լիապես կը հագենային, ո՜հ, անխնայաբար ոտնակոխեցին բարելից հացի սեղանդ»[61]: Մ. Խրիմյանի կարծիքով հրդեհը և նրան նախորդող թալանը արվեց Վան քաղաքի հայ բնակչությանը նյութապես ծանր վիճակի մեջ դնելու և աղքատացնելու համար: Այդ հրդեհը առաջացավ թուրքական սահմանադրությունը ընդունելու նախօրյակին, այն նրան տրված մի զոհ էր:

1877—78 թթ. պատերազմի նախօրյակին օսմանյան կառավարությունը քրդական ուժերին օգտագործելու նպատակով սկսեց սիրաշահել շեյխ Ջալալեդդինին և Աբդուլլային, որոնք կոչ էին անում քրդերին մասնակցելու Ռուսաստանի դեմ մղվող պատերազմին: Վասպուրականի նահանգի քրդական ցեղապետերը խոստացան իրենց ուժերով Ռուսաստանի դեմ կռվի գնալ, շարժվեցին դեպի Վան և կողոպտեցին, հրի ու սրի մատնեցին հայկական գյուղերը:

Պատերազմի առաջին օրերին օսմանյան բանակի զինվորականներից շատերը զոռողաբար հայտարարում էին, թե օսմանյան զրոշակը պետք է բարձրացնեն Թիֆլիսի փոխարքայի պալատի պատին[62]: Շեյխ Ջալալեդդինը սկսեց պարծանքով տարածել, թե ռուսական զինվորը կռվի համար անընդունակ է և նրա ուժերը ճակատ հասնելուն պես «ճանճի նման կկոտորեն հայոց քեռուն»[63]: Շեյխի ուժերի վայրագությունների մասին հայերը բողոքում էին օսմանյան պետական պաշտոնյաներին, սակայն նրանք ոչ մի միջոց ձեռք չէին առնում:

1877 թ. մարտին սկսվեց շեյխ Ջալալեդդինի զինված ուժերի հարձակումը Աղբակի անզեն հայ գյուղերի վրա: Արշավանքից առաջ շեյխը

60 Նույն տեղում:

61 Նույն տեղում, էջ 253:

62 Ճանկյուլյան, նշվ. աշխ., էջ 37:

63 «Բերիտասարդ Հայաստան» 1904, № 50, 16 ապրիլի, էջ 402:

այդ հարձակմանը կրոնական բնույթ էր տվել հայտարարելով, որ հայերը իսլամական կրոնի թշնամիներ են: Չնայած առանձին անհավասար դիմադրություններին, այրվեցին և մոխրացան Ակբակի 24 հայկական գյուղեր, որի մասին սրտաճմլիկ նկարագրություններ է գրել Րաֆֆին իր «Ջալալեդդին» վիպակում, չմոռանալով ասել, որ քրդերի մեջ գտնվեցին նաև ազնիվ մարդիկ «որոնք ղուրկ չէին բարի զգացմունքներից, որոնք չէին մասնակցում վատ գործի»[64]: Ջալալեդդինի այդ արշավանքի և նրա հետևանքների մասին պատրիարք Ն. Վարժապետյանը բողոք ներկայացրեց Ֆ. Դռանը և որոշ ժամանակ անց հանկարծակի պալատ հրավիրվեց ու սուլթանը պատրիարքի պարանոցին կախեց մի շքանշան: Պատրիարքը հանկարծակիի է գալիս: Լսելով սուլթանի այդ արարքը Մ. Խրիմյանը ասաց. «Ոչխարներու ոսկորներեն մանյակ շինեցին և հովվի վզեն կախեցին»[65]:

Պատերազմի նախօրյակին վանը հանդիսանում էր թուրքական և հատկապես քրդական դինված ուժերի հավաքատեղի: Տարբեր վայրերից սկսեց այնտեղ հոսել այդ անկազմակերպ և աննկանոն ուժերի հեղեղը՝ «Սասակությամբ իջանելով հանկարծ հայաբնակ գյուղեր լեցվելով կոզոպտեին և տանեին ղշարժական և անշարժ կահքկարասիք հայոց. կուտեին նոցա կերակուրք և որպես մարախ կսպառեին զամենայն ինչ»[66]: Ժամանակի վավերագրերը թերթելիս երևում է, որ թուրքական տեղական պաշտոնյաները շատ դեպքերում նույնիսկ անկարող էին զսպել այդ ուժերի վայրագություններն և նրանց «չոկատներ խումբ խումբ փողոցաց մեջ շրջելով զհայս կողոպտելու հետամուտ էին. ամեն խումբ տեղացի թուրքերեն մի առաջնորդ ուներ, որ քրդաց մատամբ ցույց տալով ասեր, այս մարդ հայ է, այն մարդ տաճիկ է, հայոց տուներ խորտակելով ներս խուժեին և ձեռք ընկած բան կառնեին կերթային համարձակ»[67]:

Ականատես Ե. Տեկանցի վկայությամբ, երբ Ջալալեդդինը մտավ Վան՝ «Կուսակալ սարսափելով դիմավորեց զշեյխն ընդառաջ գնալով նմա մինչև Արտամետու փողոցն ձիեն վար եկավ, գնաց շեյխու ձեռք համբուրեց ակամա, բայց շեյխ ոչ նորա երես նայեցավ, ոչ ողջույն տվավ նմա, պի թուրք հառաջագույն շեխի ականջին խոսած էին, թե՝ կուսակալն հայասեր է և կյավուր»[68]: Վանի մոլեռանդ թուրքերի մի մասն սկսեց դրգռել շեյխին, մղելով նրան և իր ուժերին դեպի հայերի տների թալանը: Հատան

64 Րաֆֆի, երկեր, հատ. 2, 1955, էջ 47:

65 Թարգամ Գուշակյան. Խրիմյան Հայրիկ, Փարիզ, 1925, էջ 84:

66 Մատենադարան, ձեռ. № 4442, թ. 741:

67 Նույն տեղում:

68 Նույն տեղում, թ. 742:

փաշան ցանկանում էր այդ ուժերը օր առաջ հեռացնել Վանից և ուղարկել Ճակատ, սակայն կուսակալի թշնամիները նրան ամբաստանում էին, ասելով, որ նա ցանկանում է «զքաղաքն ռուսաց մատնել»: Քրդական ուժերը չէին ցանկանում Ճակատ գնալ և բացեիբաց հայտարարում էին, թե «հայեր պիտի ջարդեմք հետո հեռանամք»[69]:

Իրականում քրդական ուժերին դեպի թալանն էին մղում նրանց ղեկավարները: Ջալալեդդինի ուժերը Վան գալու Ճանապարհին թալանել էին Կարճկանի, Գավաշի և Հայոց ձորի գյուղերը: Պատրիարքարան ուղարկած Ե. Տևկանցի զեկուցագրերից մեկում նշված է, որ նրա ուժերը թալանել էին Կապուտկողի ս. Հակոբի վանքը, ապա մտնելով Վան «Կառավարության աչքի առաջ շատ հայերը ծեծեցին, կողոպտեցին և անպատիժ մնալով, գյուղեր ողողելով, կողոպտելով հասան Գործոթ, սոյն գյուղի մէջ սոսկալի ոճիրներ գործելով եկեղեցին կողոպտեցին»[70]: Կառավարական պաշտոնյաները անկարող էին որևէ միջոցի դիմել այդ ոճրագործների նկատմամբ, իսկ նրանք ոգևորվելով դրանից ավելի էին սաստկացնում անզեն հայերի նկատմամբ իրենց վայրագությունները: Բացի շեյխ Ջալալեդդինից Սղերդի, Մոկաց, Նեճիրայի շեյխերի զինված ուժերը կողոպտելով իրենց Ճանապարհին ընկած հայկական գյուղերը, հասան Վան: Նրանց մուտքի հետ միասին քաղաքում փակվեցին եկեղեցիները, դպրոցները: Այդ օրերի դեպքերը թղթին տվող Ե. Տևկանցը իր այդ ձեռագրում բերում է բազմաթիվ փաստեր. ահա նրանցից մի քանիսը. «Հայտարանցի Բռնունք խումբ կազմելով Բզնունյաց և Քաչբերունյաց գավառներ կողոպտեցին, խեղճ հայոց սոսկալի տանջանքներ տալով շատեր վիրավորեցին»[71]: Այնուհետև շարունակում է. «Քրդաց զորք ահա այսպես օսմանյան երկիր կողոպտեցին իբրև Թշնամվո երկիր տակավին պատերազմ և քաջություն չարած»[72]: Ե. Տևկանցը ապա եղրակացնում է. «Հին դարերեն ոչ ոք այսպիսին լսած ու տեսած չուներ. մի արասցե տեր, եթե քանի օր ևս շարունակվի այսպես ոչ վանք, ոչ եկեղեցի, ոչ գյուղ, ոչ քաղաք, ոչ մարդ և ոչ բնակություն կմնա»[73]: Եվ այդ բոլորը կատարվում էր թուրք և քուրդ վերնախավի դրդմամբ և, վերջապես, նրանք ժողովրդի և քրդա-

---

69 Նույն տեղում:
70 Նույն տեղում, ձեռ. № 4182, թ. 48:
71 Նույն տեղում:
72 Նույն տեղում:
73 Նույն տեղում, թ. 49:

կան ուժերի մեջ տարածում էին՝ թե «Վասպուրականի Հայք զոռւսաց բանակներ պատերազմի հանած են ընդդեմ տաճկաց»[74]։

Ե. Տևկանցի 1877 թ. հունիսի 6-ին Կոստանդնուպոլսի ազգային ժողովին ուղղված գրությունից երևում է, որ Վասպուրականի ժողովուրդը ստիպված թուրքական բանակին տվեց 230 հազար ոսկի, 1.337.000 զուրուշի գումար, 20 հազար հոխա յուղ, 45 հազար հոխա ձավար, 200 ձի, 250 սրղըր (արջառ), 3500 ոչխար, 3500 խոխա (հագուստատեսակ— Հ. Պ.), 5000 զորապ, 800 ֆես, 300 զույգ ջվալ[75]։

Ջեկուցագրում Վասպուրականում քրդական ուժերի կատարած վայրագությունների մասին կարդում ենք. «յուրաքանչյուր անձն յուր տան մեջ պաշարված մնացած է. բուն քաղաքի և կառավարության դռան վրա քուրդ զորքեր մարդ կողոպտեցին, մերկացուցին և վիրավորեցին արյունթաթաւ ընելով, եկեղեցիք և վարժարանք տակավին գոց են, թեև 4—5 ավուր չափ զորքեր մեկնելուն հալածանք փոքր ինչ դադարեցավ, սակայն նորեն հետզհետե քուրդեր գալուն նորեն սաստկացավ»[76]։

Վասպուրականի 1876—1880 թթ. պատմությունը իր բոլոր մանրամասնություններով հանդերձ շարադրված է Ե. Տևկանցի Երևանի մատենադարանում գտնվող «Տոհմային հիշատակարանի» 11-րդ հատորում։

Պատրիարքարանին ուղարկած իր տեղեկագրերից մեկում Ե. Տևկանցը նշում է, որ Վասպուրականի ժողովուրդը «յուր ունեցած և վաստակածը բռնավորաց և հարստահարչաց տալով ինքն ըստ ամենայնի թշվառացած կամ սնանկացած է»[77]։ Հարստահարությունները ու ավարառությունները քանի գնում, այնքան բազմապատկվում էին։ Աղբակի գավառից ազգով քուրդ Ալի խանի ուժերը թալանեցին գյուղացիներին պատկանող 285 գլուխ խոշոր անասունները և 2334 ոչխարները։ Նրանք տարան նաև Սարա ասորական գյուղի 1250 ոչխարը։ Քուրդ Հուսեյին աղայի գլխավորած ուժերը հարձակվեցին Պզտիկ գյուղի վրա տարան 600 ոչխարը և 437 գլուխ խոշոր եղջերավոր անասունները[78]։ Այս մասին կառավարությանը ներկայացված բողոքներն անուշադրության են մատնվում։

1876 թ. նոյեմբերի 8-ին գրվում է ժողովրդին հարստահարելու մասին մի նոր տեղեկագիր, որի մեջ նրա հեղինակները խնդրում են դարմանել իրենց ցավերը, քանի որ Վասպուրականի գավառներում կյանքը ան-

---

74 Նույն տեղում։
75 Նույն տեղում, թ. 50։
76 Նույն տեղում։
77 Նույն տեղում, թ. 19։
78 Նույն տեղում, թ. 20։

տանելի է դարձել և ժողովուրդը այլևս չի կարող տանել «ամեն չարություն և եղեռնագործություն, որ տեղի կունենա հարստահարիչ քուրդերեն, քաղաքիս տաճկաց անկիրթ մասեն և նույնիսկ ամենահետին ժանգարմե ղինվորեն և հավաքված պահեստի զորքերեն դի առհասարակ ղինյալ և պատրաստյալ են ղհայն հարստահարել, հաբվածել, կողոպտել, բռնաբարել և սպանել»[79]:

Բացի բրդական ղինված ուժերից հայկական գյուղերի բնակիչներին մեծ վնաս էին հասցնում նաև թուրքական բանակի ղինվորները, որոնք «Կարին երթալու ճանապարհին թե՝ ի՞նչ չարաչար հարված և նեղություն տվին գյուղացի ազգայնոց՝ անթվելի է»[80]:

Հարստահարությունները և թալանը շարունակվեցին պատերազմի ժամանակ և նրանից հետո: Վանի երևելիները 1878 թ. մայիսի 15-ին մի բողոք ներկայացրին Վանի Հասան փաշային, որի մեջ նշեցին, որ պատերազմի ժամանակ թալանվել են վանքերն ու եկեղեցիները, հափշտակվել է գյուղացիների ունեցվածքը և անհրաժեշտ է պատժել հանցավորներին: Այդ բողոքում նշվեց նաև, որ գյուղերի բնակիչները գտնվում են տնտեսական ծանր վիճակում և սկսել են գաղթել, անհրաժեշտ է դրա առաջն առնել, օգնել սուլամահության հասած գյուղացիներին, մուրացկաններին և այն գումարները, որոնք պատերազմի ժամանակ Վասպուրականի բնակիչները տվել են բանակին, հաշվել հարկերի փոխարեն և այլն: Սակայն ով էր նրանց այդ պահանջները կատարողը: 1878 թ. վերջերին Վանում գումարվեց մի ժողով, որին մասնակցում էին քաղաքի վերնախավից, գավառների տանուտերերից և վանականներից՝ թվով 19 եկեղեցականներ և 15 աշխարհականներ, որը որոշեց մի նոր խնդրագիր ուղարկել Վանի փաշային՝ հարստահարությունների առաջն առնելու մասին: Խնդրագրի մեջ պատերազմը «աշխարհաքանդ» անվանելով, նրանք հայտնում էին, որ ժողովուրդը «սույն գարնանեն սկսյալ ամեն օր գավառներեն և գյուղերեն քաղաքս հասնելով աղեկտուր և լալոտ աչոք կաղաղակեին քուրդեր օրով ցերեկով մեր գյուղ թալլեցին, ոչխարներ տարին, մարդիկ վիրավորեցին կամ սպանին, տուները տեղերը վառեցին և այլն, և այլն, թե գյուղով գաղթեցան մերկ և բոլոր ցիրուցան եղան»[81]: Վավերագրերի ընթերցումից երևում է, որ ամենուր տիրել էր հուսահատություն և տառապյալների բողոքները կառավարական պաշտոնյաներին դրանից ազատվելու երկչոտ փորձեր էին: Դրանք ոչ մի նշանակություն չունեին, քանզի «ազատու-

79 Նույն տեղում, թ. 23:
80 Նույն տեղում, թ. 24:
81 Նույն տեղում, թ. 105:

Թյուն բռնաբարյալ երկրի մը մեջ այսպիսի բողոք տալ դյուրին բան չէ, պի ևթե ուղղակի զմեզ չվնասին, անուղղակի կրնան մեծամեծ վնասներ տալ,— ասված է այդ վավերագրում»[82]:

Պատերազմը սկսվելուց հետո թուրքական իշխանությունները հայերից կամավորներ պահանջեցին, սակայն «ի մեծատանց և արհեստավորաց քաղաքիս ոչ ոք հոժարեցավ զինվորել, ուստի ևս բազում խորհրդոց որոշվեցավ յուրաքանչյուր թաղից զինվոր մի պահանջել և ծաղքն զինվորաց ի բնակչաց թաղիցն առնուլ և վճարել»[83]: *Քաղաքի վերնախավի ներկայացուցիչներին հաղիվ է հաջողվում շատ հորդորանքների և խոստումների գնով զինվորագրել 50 հոգու, քանզի ոչ ոք չէր ցանկանում ռուսական բանակի դեմ կռվի մեկնել: Այդ թվից բացի Աղթամարի Խաչատուր կաթողիկոսը կարողացել էր հավաքագրել 15 «աղքատ այր»: Թուրքական իշխանությունները ցանկացան այդ խմբին ազդով թուրք հրամանատար կարգել, սակայն հայերը հրաժարվեցին: Հրավիրվեցին մի շարք մարդիկ, որոնք բոլորն էլ մերժեցին ջոկատի հրամանատար լինել: Վերջապես Վ. Փափազյանի պատմվածքներից մեկի հերոսը՝ Կայծակ (Հովհաննես Բազունի) վարդապետը ներկայանում է Հասան փաշային և տալիս իր համաձայնությունը խմբի հրամանատար լինելու մասին: Ջոկատը ստանում է 100 հրացան, ուներ իր դրոշը՝ «ի կարմիր գունո» և 1878 թ. հունվարին շարժվեց դեպի Շահբազի գյուղը, որտեղ այդ օրերին քրդական մի ջոկատ ցանկանում էր հարստահարել գյուղացիներին: Բազունու սպառնալիքից նրանք ստիպված հեռանում են գյուղից: Հայերից կազմված ջոկատը մինչև պատերազմի վերջը մնաց այդ գյուղում և չմասնակցեց ռուս-թուրքական պատերազմին:*

1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, ինչպես ցույց են տալիս բերված փաստերը, հայ գյուղացիները մասսայաբար թալանվեցին: Այդ տարիներին կառավարական և քրդական ուժերի կողմից Վասպուրականի հայ գյուղացիներից բռնի կերպով խլվեց 72.971 ոչխար, 8676 եզ: Կառավարությունը ստիպում էր գյուղացիներին բանակի համար պաշար տեղափոխել վերադարձի ճանապարհին, նրանք սպանվում էին, իսկ եզները հափշտակվում: Այդ տարիներին գյուղացիների ձեռքից հափրշտակվեց 4889 կով, 628 ջորի, 732 ձի, 738 գոմեշ, 564 էշ[84]: *Այդ նույն ժամանակամիջոցում գյուղացիներից բռնի կերպով խլվեց 141.316 փութ*

---

82 Նույն տեղում:

83 Նույն տեղում, թ. 404:

84 Ա. Թոխմախյան, նշվ. գրքույկը, էջ 62—63:

ցորեն։ Կողոպտվեցին 19 վանքեր և եկեղեցիներ, սպանվեցին 152 հոգի, բռնի կրոնափոխ եղան 44 հոգի և առևանգվեց 38 կին։ Ժողովրդին հասցված վնասը հասավ 2 մլն 161.899 ռուբլու[85]։

Հայ բնակչության սոսկալի թալանի մասին ամենայն հայոց կաթողիկոսին ուղղված մանրամասն տեղեկություններ են հաղորդվում Բարդուղեմիոս առաքյալի վանքի Սղիտաղար վարդապետի 1877 թ. հունիսի 2-ին գրած նամակում, որի համաձայն կողոպտվեցին վանքը և նրա շրջապատում գտնվող հայկական գյուղերը[86]։

Ինչպես շեյխ Ջալալեդդինը, այնպես էլ Աբդուլլան Վանից ռազմաճակատ մեկնելուց առաջ ուխտեցին պատերազմի դաշտից վերադառնալուց հետո այդ մեծ հայաշատ քաղաքը սրի և թալանի ենթարկելով, հիմնահատակ քարուքանդ անել[87]։

Սակայն երկու այս «ղորահրամանատարներն» էլ պատերազմից վերադարձան պարտված և բղկտված ուժերով։ Ջալալեդդինը թոնավորվեց, իսկ Աբդուլան սուլթանի հրամանով մեկնեց Մեքքա, ապա անցավ Կոստանդնուպոլիս և արժանացավ Աբդուլ Համիդի «ընդունելությանը և ընծաներին»[88]։

Պատերազմից առաջ թուրքական կառավարության կողմից հրապարակ հանվեց քրդական հարցը, որը նպատակ ուներ քրդերին միավորելու և ուղղելու Ռուսաստանի դեմ։ «Քրդական միության» ստեղծելը սուլթանի կողմից առաջ քաշված մի խաղ էր, որով նա ցանկանում էր խաղալ քուրդ ժողովրդի ազգային զգացումների հետ։ Պատերազմից հետո սուլթանը քրդական հարցը հրապարակից չհանեց և նպատակ ուներ քրդական վերնախավին ուղղել հայկական հարցի և հայերի դեմ։

Պատերազմից հետո Վասպուրականի ժողովուրդը ապրեց ավելի ծանր օրեր։ 1879 թ. հունվարի 16-ին Հոգվոց վանքի վանականներից մեկի գրած նամակից երևում է, որ սովի ճիրաններում գալարվող ժողովուրդը պատերազմից հետո անգամ չէր ազատվել քրդական վերնախավի ուժերի ասպատակություններից։ Նշված է այն մասին, որ մոնելով Խնձորուտ գյուղը, նրանք թալանեցին այն[89]։

Արճեշի ավազակ Համզոն ոչ միայն կողոպտում էր հայկական գյուղերը, այլև թուրքական բանակի մի հարյուրապետի «յուր ընտանյօք,

85 Նույն տեղում, էջ 63—64։

86 Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 214, վավ. 144։

87 «Մուրճ», 1906, № 2, փետրվար, էջ 57։

88 Նույն տեղում, էջ 54։

89 Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 214, վավ. 147։

զորքով և զապթիաներով կողոպտած և ամեն խայտառակություններ ըրած էր»[90]։

* * *

1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմը ոչ միայն մեծ քանակությամբ մարդկային զոհեր և նյութական միջոցներ կլանեց, այլև հնարավորություն չտվեց Վասպուրականի և այլ վայրերի գյուղացիներին հողը մշակել և բերք ստանալ։ 1879 թ. սկսվեց երաշտը, որին հաջորդեց սովը։ Ծանր էր նաև քրդական ցեղերի վիճակը, որոնց զինված ուժերը ջարդված ու բզկտված վերադարձան ռազմաճակատից, տեսան, որ իրենց կատարած ավերի պատճառով սով է սկսվել, որի ժամանակ «Վասպուրականի գյուղերը ավերակ դարձած էին, գյուղացի չկար, եթե կար ալ, եղ, գոմեշ, դուարու ցորեն չուներ»[91]։ Սովը ընդգրկել էր ողջ բնակչությանը։

Այդ ժամանակ Մ. Խրիմյանը դարձավ Վանի հոգևոր առաջնորդ և 1879 թ. նոյեմբերի վերջերին վերադարձավ իր հայրենի քաղաքը։ Տեղի անտանելի վիճակի հետ ծանոթանալուց հետո Մ. Խրիմյանը լծվեց սովի ճանկերից ժողովրդին ազատելու խնդրին։ Նրա նախագահությամբ կազմվեց Վասպուրականի Սովելյուց հանձնաժողովը։ Սովը իր գիրկն էր առել ոչ միայն քաղաքը, այլև շրջակա Բաշկալե, Աղբակ, Նորդուզ, Խոշապ, Հայոց ձոր, Շատախ, Մոկս, Ոշտունիք, Թիմար գավառների գյուղերը։ Դրությունը շատ ծանր էր և գավառներից սոված հայ և քուրդ հատվածները սկսեցին շարժվել դեպի Վան և հաց խնդրել։ Հատկապես ծանր է եղել քուրդ բնակչության վիճակը, որոնց ներկայացուցիչները մոտենալով Մ. Խրիմյանին, արցունքոտ աչքերով ասել են. «— Հայրի՛կ, հայրի՛կ, ազ բախտե տա, նա՛ն, նա՛ն, հիմդատ... (Հայրի՛կ, հայրի՛կ, քո բախտն ենք ընկել, հա՛ց, հա՛ց, օգնություն)»[92]։

Արսեն Թոխմախյանի վկայությամբ Մ. Խրիմյանը այդ տարիներին «ոչ միայն հայերի, այլ բոլոր քրդերի, ասորիների, եզդիների և տաճիկների հայրիկն» էր[93]։ Այդ վերաբերմունքը անպատասխան չմնաց, և երբ, հետագայում, Մ. Խրիմյանին թուրքական իշխանությունները հեռացրին Վանից, նրան ճանապարհելու էին եկել հայեր, թուրքեր, քրդեր, գնչուներ, որոնք նրան ասել են. «Հայրի՛կ, մեզ մի մոռանար, շուտ վերադարձիր»[94]։

90 «Արաքս», 1893, գիրք Ա, էջ 55։
91 Հ. Ճանկյուլյան, նշվ. աշխ., էջ 45։
92 Հ. Աճեմյան, նշվ. աշխ., էջ 527։
93 Ա. Թոխմախյան, նշվ. գրքույկը, էջ 82—83։
94 Հ. Ճանկյուլյան, նշվ. աշխ., էջ 46։

Արևմտյան Հայաստանի և Վասպուրականի սովյալներին օգնություն կազմակերպից կովկասահայությունը: Այդ գործում մեծ աշխատանք տարավ «Մշակի» խմբագիր Գր. Արծրունին: Վասպուրականի Սովելոց հանձնաժողովի տվյալների համաձայն ամբողջ նահանգի և Վան քաղաքի սովյալների թիվը հասնում էր 66 հազարի, որից 2000-ը մահացան: Սկսված սովին շատ շուտով հաջորդեցին հիվանդությունները, որը և շատ կյանքեր տարավ: Մ. Խրիմյանը և հանձնաժողովի անդամները օգնում էին բոլորին անկախ ազգային պատկանելությունից: Մի անգամ նրան են դիմում մի խումբ քրդեր և խոստանում քրիստոնեություն ընդունել, եթե նրանց հաց տրվի: Մ. Խրիմյանը նրանց ասում է. «Ես կը կարգադրեմ, որ այսուհետև քրդերն ալ հաց և դրամ ստանան մեր «Սովելոց հանձնաժողովեն» այս մասին ապահով եղեք, կը մերժեմ կտրուկ կերպով քրիստոնյա դառնալու ձեր առաջարկը»[95]:

Վասպուրականի Սովելոց հանձնաժողովին որոշ գումար տվից նաև անգլիական հյուպատոսը, իսկ ռուսականը՝ Կ. Կամսարականը տվից 476 օսմանյան ոսկի: Սովյալներին օգնության հասան նաև պարսկահայերը: Սակայն եթե հացի գործը մի կերպ կարգավորվում էր, բայց հիվանդությունների դեմ անհնարին էր պայքարել, քանի որ Վանում պակասում էին բժշկական աշխատողները: Մ. Խրիմյանի խնդրանքով 1880 թ. Վան եկան բժիշկ Հովսեփ Շիշմանյանը (Սերենց) և Միհրան Վարդանյանը, որոնք էլ բնակչությանը բժշկական անհրաժեշտ օգնություն կազմակերպեցին:

1880 թ. աշնանը Սովելոց հանձնաժողովը սկսեց գյուղացիներին նաև սերմացու բաժանել: 1881 թ. լավ բերք ստացվեց և սովը Վասպուրականից անհետացավ: Երեք տարիների ընթացքում այդ հանձնաժողովը սովյալներին հատկացրեց 12.602 օսմանյան ոսկի: Միայն Վան քաղաքում օրական 5966 սովյալներ ձրի հաց էին ստանում, իսկ 1563 գյուղական ընտանիքներ սերմացու ստացան և 1500 աղքատներ՝ հագուստ և կոշիկ[96]: Պատրիարք Ն. Վարժապետյանի գլխավորած Սովելոց կենտրոնական հանձնաժողովը այդ տարիներին 40 հազար ոսկու հանգանակություն ունեցավ, իսկ Վանի հանձնաժողովը 20 հազար ոսկի ծախսեց «հայերու, քրդերու և նույնիսկ թուրքերու վրա»[97]:

Մ. Խրիմյանը շատ շուտ էր նկատել, որ սովի առաջացման պատճառներից մեկն էլ այն էր, որ գյուղացին նոր ձևերով չէր մշակում հողը և

---

95 Հ. Ածեմյան, նշվ. աշխ., էջ 531:

96 Նույն տեղում, էջ 534:

97 Հ. Ութմյան, նշվ. աշխ., Ա հատ., էջ 123:

այդ պատճառով էլ նրանից ցածր բերք էր ստանում։ Այդ հարցը կարգավորելու համար նա վարագա վանքում բաց արեց երկրագործական վարժարան, որը պահպանելու համար հայ հարուստներից ստացավ 250, իսկ Կ. Կամսարականից՝ 100 ոսկի։ Մ. Սանասարյանը երկու տարի տարեկան 1000 ռ. աշխատավարձ էր վճարում վարժարանի ուսուցիչ գյուղատնտես Նշան Մադաթյանին։ Վարժարանին նյութական օգնություն ցույց տվեցին նաև Ղզլարի, Փոթիի և այլ վայրերի հայերը։ Վարժարանի բացման հիմնական նպատակը անհիշելի ժամանակներից XIX դար թափանցած երկրագործական հին մեթոդները առաջավորով փոխարինելն էր, որը գյուղացուն կհաներ ծանր վիճակից, կբարելավեր նրա տնտեսական դրությունը, կհեշտացներ նրա աշխատանքը։ Վարժարանի տեսուչն էր եվրոպական կրթություն ստացած Ս. Խրիմյանը, այնտեղ էր աշխատում նաև հողագործությանը լավ գիտակ Ն. Մադաթյանցը։ Դպրոցը բացվեց 1880 թ. նոյեմբերի 1-ին։ Նրան օգնեց նաև Կոստանդնուպոլսի Սուվելոց Հանձնաժողովը, որը ուսումնական հաստատության համար ուղարկում էր երկրագործական գործիքների նմուշներ։ Սակայն «Հայրիկը պահանջում էր ուղարկել հերկելու, հնձելու, հարդ և խոտ մանրելու եվրոպական կատարելագործված մեքենաներ»[98]։ Հանձնաժողովը ի վիճակի չէր կատարելու Մ. Խրիմյանի այդ պահանջը և դպրոցին օգնելու նպատակով դիմեց Մանչեստրի, Վիեննայի, Մարսելի հայերին։ Մանչեստրի հայերը հնձող մի մեքենա նվիրեցին Վարագա երկրագործական դպրոցին. «Այդ մեքենան դործ էր ածվում թե՛ վանքի հողերում և թե՛ վարձով տրվում էր մյուս կալվածատերերին և այդպիսով տարեկան 40 ոսկու օգուտ բերում»[99]։

Վարժարանը գործեց 1880—1883 թվականներին։ Նրա սանները կատարում էին նաև ֆիզիկական աշխատանք, մշակում էին վանքի հողատարածությունները, վանքի շուրջը արհեստական անտառ և պտղատու ծառեր տնկում։ Այդ կապակցությամբ աշակերտներից մեկի հուշերում կարդում ենք. «Ով որքան անուշ է դպրոցական կյանքը, այնտեղ՝ վարագի մեջ, ուր ուսուցիչ և աշակերտ, մեծ ու պզտիկ, երբ դուրս կելնեին իրենց դասարաններեն, կը հագնին դաշտային աշխատանքի բանվորական շապիկն ու գլխարկը, բահ ու բրիչ իրենց ուսին՝ աշխատանքի երգը շրթներուն՝ կը վազեն դեպի դաշտն ու ծառաստան, բանջարանոցն ու մեղվանոցը, պարտեզն ու այգին...»[100]։

---

98 ԳԱԹ-ի արխիվ, Հ. Առաքելյանի ֆոնդ, վավ. № 182, «Մ. Խրիմյանի կյանքը և գործունեությունը», ձեռագիր, էջ 137։

99 Նույն տեղում։

100 «Գյուղատնտեսի տարեցույց», Կ. Պոլիս, 1914, առաջին տարի, էջ 22։

Մ. Խրիմյանի ջանքերով վարագա վանքը կառավարությունից գնեց Սալախա գյուղը, որտեղ 35—40 տուն հայեր բնակեցվեցին, որոնք հողը մշակելով հարկեր էին տալիս. «զկայսերն կայսեր և զաստվածոյն աստծո» նշանակում է, որ նրանք տուրքեր էին տալիս և՛ պետությանը և՛ վանքին։ Մ. Խրիմյանը ընդարձակեց գյուղի մոտ եղած լճակը, որպեսզի շատանան ոռոգվող հողերը[101]։ Սակայն Մ. Խրիմյանի և նրա շրջապատի մարդկանց մտածմունքի առարկան միայն երկրագործության մեջ նոր ձևեր ու մեքենաներ մտցնելը չէր։ Մ. Խրիմյանը միշտ էլ այն կարծիքին է եղել, որ ուսում ստացած հայ երիտասարդներն իրենց հետու չպետք է պահեն հողի մշակությունից։ Ամենայն հայոց կաթողիկոս եղած ժամանակ Ճեմարանի ուսանողների հետ իր հանդիպումներից մեկի ժամանակ ասել է, որ դուք՝ գյուղի և քաղաքի բնակիչներդ «չպիտի բավականանաք միայն գիտություններով, այլ մի ձեռքում պիտի բահը բռնած լինեք, մյուս ձեռքում գրիչը»[102], ապա «ասել կուզեմ, որ գիտությունը, ուսումը՝ հող մշակելու հետ պիտի որ ղուգընթաց ու հավասար գնա»[103]։ Ներսիսյան դպրոցի սաների հետ հանդիպման ժամանակ դիմելով ուսուցիչներին, ասաց. «Գյուղացուն գյուղ սիրել տվեք, որ այնտեղ գնա, այնտեղ մնա, քաղաքացուն քաղաքը»[104]։ Երևանի բնակիչների հետ հանդիպման ժամանակ ասել է, որ անհրաժեշտ է հարգել այն մարդկանց, որոնք բնակվում են լեռների ու դաշտերի մեջ և որոնց «աշխատանաց արդյունքը հասարակ մարդոց սեղաններեն սկսյալ մինչև իշխանաց և թագվորաց սեղանները կը հանվի, որ երկիրը կը հերկե և այս հացը կը պատրաստե, որ այգիներ կը մշակի և անուշ մրգեր և բանջարեղեն կը հասունացնե, ով է այդ մարդը, դա հայ մշակն է, հայ երկրագործը, հայ գյուղացին...»[105]։

Մ. Խրիմյանը իր հայրենի քաղաքում արհեստների մեջ տեսնում էր առաջավորը և դրվատում ճարտար արհեստավորների աշխատանքը։ Գ. Աղվանյանի 1882 թ. հունվարին Մանուկ Անանյանին գրած նամակից երևում է, որ Վանի բնակիչ Ալեքսանդր Իշխանյանը «Վանա մեջ ընկերության ջրաղացն շինեց», Բուլղարիայի Վառնա քաղաքի մոտ «վարելու և հնձելու մեքենաները շինեց», «Վանա ծովի վրա բաղոքականներու շինած

---

101 Նկարագրական ուղեվորություն ի հայաբնակ գավառս արևելյան Տաճկաստանի, մասն Բ, տեղագրեց Մանուկ Կ. Միրախորյան, Կ. Պոլիս, 1885, էջ 45—46։

102 «Մուրճ», 1893, № 10, էջ 1556։

103 Նույն տեղում, էջ 1557։

104 Նույն տեղում, էջ 1560։

105 Նույն տեղում։

նավակի մեջը փոքր շոգեշարժ մեքենա տրավ»[106]։ Այդ վարպետի մասին այնուհետև վավերագրում ասված է, որ նա Մ. Խրիմյանի «պատրիարքության ժամանակը մի փոքրիկ շոգեշարժ նավակ շինեց և պատրիարքին ներկայացուց» և, վերջապես, ըստ Գ. Աղվանյանի, նույն մարդը «երկաթահանքի հողերը կրնա հալել և ձուլել»[107]։ Գ. Աղվանյանի՝ Մ. Անանյանին գրած մի ուրիշ նամակից երևում է, որ Վանում սկսել էին օճառ եփելու փորձերը. «Քանի մը տարի առաջ մի եվրոպացի եկած կլինի Վան ճրագուե սապոն եփելու, իհարկե շատ լավ տեսակն, չնայելով որ Եվրոպայի մեջ յուր ձախ ձեռքի ընտրյալ արհեստն էր, բայց Վանա մեջ չկրցավ հաջողացնել, ճրագուի հոտն չկրցավ կտրել, թեև շատ լավ կփրփրար սապոնն»[108]։

Վանի մտավորականներից ոմանց մտածողության առարկան էր նաև ինքնապաշտպանության համար սեփական միջոցներով զենք արտադրելու հարցը։ Քաղաքում 80-ական թվականներին ուստա Փանոսի ջանքերով և հնարամտությամբ հնարավոր եղավ Բերդան հրացան արտադրել և վարպետը «իր գաղտնի արհեստանոցին մեջ կը նորոգեր փամփշտավոր հրացաններ և կը շիներ Պերտան կամ Սուրմալի հրացաններ...»[109]։ Ինքնապաշտպանության բնազդը վարպետին մղել էր արհեստանոցային պայմաններում նույնիսկ ամերիկյան Մարտին տիպի հրացան պատրաստելը։ Իմանալով այդ մասին, Վանի փաշան մի անգամ վարպետին իր մոտ կանչելով, ասում է. «Դուն կարող ես որսի հրացաններ շինել վստահելի մարդոց համար, բայց մի անգամ էլ լսեցի, որ դու պետական հրացան ես շինել, այն էլ մյուզիր (կասկածելի) մարդոց համար, գլուխդ թռցնել կտամ»[110]։

1880 թ. սեպտեմբերի 10-ին Վանից Կ. Պոլիս Հ. Մկրյանին գրած իր մի նամակում Զեյթունի երկաթահանքի մասին Մ. Խրիմյանը գրում է. «Հույսերու մեջ երկաթն է կասեք, բայց երկաթագործներ կը պակսին և հոս Զեյթունի երկաթահանքեր չկան, ժամանակ պետք է, որ նոր արարչագործեսս»[111]։ Անկասկած Մ. Խրիմյանի այդ արտահայտությունը չի վերաբերվում Զեյթունի երկաթահանքի մշակմանը, քանի որ նրան շատ լավ հայտնի էր, որ Վասպուրականում շատ հանքերի կողքին մի շարք տեղե-

---

106 Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 2342, վավ. 135, թ. 50։

107 Նույն տեղում, թ. 50—51։

108 Նույն տեղում, վավ. 155, թ. 67։

109 Ա. Պարբինյան, նշվ. աշխ., էջ 66։

110 Փ. Թերլեմեզյանի հուշերը, էջ 139։

111 Ամենայն հայոց Հայրիկ, Պոսթոն, 1957, էջ 204։

թում երկաթի հանքեր կային, իսկ Զեյթունի երկաթահանքը համարյա թե չէր գործում։ Նամակի մեջ խոսքը, անշուշտ, վերաբերվում է Զեյթունի լեռնականների նման քաջեր և ինքնապաշտպանության նպատակով զենք ունենալու մասին։

1878 թ. վերջերին պատերազմից անմիջապես հետո Վան քաղաքում հրապարակ եկավ «Սև խաչ» անունով մի կազմակերպություն, որի հիմնական նպատակն էր «ժողովրդին մեջ ինքնապաշտպանության ոգին տարածել, իր իրավանց տեր ընել և իբրև մարդ ապրիլ»[112]։ Ժամանակակիցների վկայությամբ «Սև խաչ» «մակդիրը կը նշանակեր՝ կազմակերպության գավաճան և անգաղտնապահ ընկերի անվան վրա սև խաչ քաշելով, իսկույն ևեթ մահվան դատապարտել»[113]։ Վանի հասարակությունը և երիտասարդները շատ լավ գիտեին, որ պատերազմի նախօրյակին և նրա ժամանակ Վասպուրականի գավառներում կատարված թալանը և ասպատակությունները կատարվել են թուրքական կառավարության գիտությամբ, ուստի և նրանք այդ կազմակերպությունը ստեղծեցին, որպեսզի հարկ եղած դեպքում զենքով պաշտպանեն ժողովրդին։ Կազմակերպության հրապարակ գալը ավելի էր ամրապնդում ժողովրդի մոտ այն գաղափարը, որ թշնամու հարձակման դեպքում անհրաժեշտ է պաշտպանվել։

«Սև խաչ» կազմակերպության կառուցվածքի մասին, ցավոք, շատ քիչ տեղեկություններ են պահպանվել։ Ժամանակի մտավորականների գրած աշխատություններից երևում է, որ այդ կազմակերպության մեջ ընդունվողները երդվում էին հավատարիմ ծառայել ժողովրդին։ «Սև խաչը» ունեցել է իր ակումբը, որտեղ կազմակերպվել են հավաքներ, դասախոսություններ և երդվել են հայկական ազգային ու ժողովրդական երգեր։ Հ. Երամյանի վկայությամբ կազմակերպությունը ստեղծվել է Մ. Փորթուգալյանի ջանքերով, իսկ ակումբի մուտքը ազատ էր բոլորի համար և այնտեղ էին գալիս նույնիսկ թուրք պաշտոնյաներ, որոնք հաճախ ժամանցի համար այցելում էին «Սև խաչի» ակումբը[114]։ Շատ բնական է, որ կազմակերպության հիմնական հարցերը քննվել են գաղտնի ժողովներում, իսկ ակումբը եղել է սովորական միջոցառումների վայր։ Այնտեղ դասախոսություններ են կարդացել Մ. Փորթուգալյանը, Տաճատ

---

112 Յ. Կ. Ճանկյուլյան, Հիշատակներ հայկական ճգնաժամեն, Կ. Պոլիս, 1913, մասն Ա և Բ, էջ 51։

113 Հ. Աճեմյան, նշվ. աշխ., էջ 556։

114 Հ. Երամյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 128։

Պեչլերյանը, Կովկասից Վան ժամանած Գալուստը։ Մ. Փորթուգալյանի դասախոսություններից մեկի թեման էր «Ժամանակը հասեր է, հայե՞ր ի՞նչ աննենք»[115]։ Իմանալով այդ մասին Վանի դատախազը և ոստիկանապետը արգելում են նրան կարդալ այն։ Սակայն պահպանվել է տեղեկություն այն մասին, որ այդ թեմայով դասախոսություն Մ. Փորթուգալյանը կարդացել է, որի մեջ իրական գույներով նկարագրվել է Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում ապրող հայերի կրած անթիվ տառապանքների իսկական պատկերը, որից հետո նա մի օր բանտարկվում է և ստիպված թողնում Վանը և Թուրքիան։

1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Վանում հաստատվեցին ռուսական և անգլիական հյուպատոսարաններ։ Ռուսական փոխհյուպատոս Կոնստանտին Կամսարականը (1843—1922) Նուխից էր, ավարտել էր Մոսկվայի զինվորական դպրոցը, մասնակցել 1877—78 թթ. պատերազմին և էրզրումի դրավումից հետո քաղաքի ժամանակավոր ոստիկանապետն էր։ Վանում նրա գործունեության ուսումնասիրությունից երևում է, որ նա մեծ համակրանք ուներ «Սև խաչ» կազմակերպության անդամների նկատմամբ[116]։

Վասպուրականի և հատկապես Վանի բնակիչները կարծում էին, թե իրենց քաղաքում օտարերկրյա և հատկապես ռուսական հյուպատոսի առկայությունը կմեղմացնի ժողովրդի հարստահարությունները. այդ նկատի ունենալով, Ե. Տևկանցը գրում է. «Ի բազում ժամանակաց փափագեին Վասպուրականի ժողովուրդք տեսանել զհյուպատոս քրիստոնյա պետության ի Վան զի ակն ունեին թե ի ներկայութենե նոցա ակնածյալ բռնքաց և քրդաց փոխին զբռնավորական բարս յուրյանց և ձեռնապահ լինին ի հորժամ հարստահարելո զքրիստոնյայս Վասպուրականի»[117]։ 1879 թ. հուլիսի 26-ին Կ. Կամսարականը մուտք գործեց Վան։

Պատերազմից հետո, երբ հրապարակի վրա էին Սան-Ստեֆանոյի և Բեռլինի կոնգրեսի պայմանագրերը, Վանի երեսփոխանական ժողովը հարստահարությունների վերացման և բարենորոգումներ անցկացնելու հանձնաժողովի հետ միասին 1880 թ. մարտի 20-ին կազմեց և ներկայացրեց «Բարենորոգումներ Վասպուրականի» անունով առաջարկություններ «առ արքունի լիազոր հանձնաժողով և պահանջել զբարենորոգումն»[118]։

---

115 Յ. Կ. Ճանկյուլյան, նշվ. աշխ., էջ 51։

116 Նույն տեղում։

117 Մատենադարան, ձեռ. № 4182, թ. 491։

118 Նույն տեղում, թ. 495։

Վասպուրականի հոգևոր ու աշխարհիկ վերնախավը գտնում էր, որ սպասվող բարենորոգումները հնարավոր չէ անցկացնել թուրք պաշտոնյաների միջոցով, որոնք հայերի նկատմամբ բոլոր խժդժությունների կազմակերպիչներն են, առերես ցույց են տալիս, որ պաշտպանում են հայերին, սակայն «զանազան անուղղակի արգելքներ հարուցանելով հայոց արդար իրավունքներ և ստիպողական գործեր կչեզոքացնեն կամ հօգուտ կառավարության կամ իսլամաց կգործադրեն»[119], իսկ Վանի թուրք կուսակալները արքունիքի առաջ «նախ անաչառ և արդարասեր կձևանան, ապա աշառոք և կաշառակեր, նախ փութաջան և ապա ապիկար և անհոգ, նախ քաջ և ապա վատ, նախ զքրիստոնյան և զայլազգին հավասար ճանաչող և չխտրող, ապա ծայրահեղ մոլեռանդությամբ ապրող և իբրև դահիճ զքրիստոնյայս հալածող և հարվածող»[120]։ Այնուհետև նրանք նշում էին, որ անցկացված մարդահամարից երևում է, որ Վասպուրականում «Հայոց ազգություն մեծամասնություն կկազմեն»[121]։ Վավերագրում խիստ քննադատության է ենթարկված սուլթանական բռնապետական կարգը և որ տեղական կուսակալները «յուրյանց կամք, շրթունք և լեզուն օրինաց և կանոնաց գործադրություններեն միշտ նախապատիվ և գերազանց տարած են և ետ այսօրիկ այսպես պիտի տանին քանի որ կառավարություն **բռնապետական և միապետական** է (ընդգծումը մերն է—Հ. Պ.)»[122]։

Կուսակալից հետո ամենակարևոր պաշտոնյան համարակալն է, որը բաշխում է տուրքերը, զբաղվում նրանց հավաքման հարցերով և «Գյուղօրեից իրիս աճուրդով ծախելը, տասանորդներ սահմանելը հավաքելը, տարին անգամ ոչխարներ թվելոց և դրամներ գանձելը»[123]։ Այս պաշտոնյան միաժամանակ որոշում էր մնացած պաշտոնյաների ամսական աշխատավարձերը և «քրիստոնեից անարգ և ստորին պաշտոններ կուտա, իսկ իսլամաց մեծ և պատվավոր, քրիստոնեից ամսականներ միշտ կհետաձգե, իսկ իսլամաց ուրախությամբ կվճարե. միով բանիվ զթուրքեր և քուրտ միշտ շահիլ և հարստացուցանել կջանա, իսկ զքրիստոնյայս զրկել և աղքատացնել. Թուրք պաշտոնեից թերությանց պակասությանց և անհավատարմությանց աչք գոցելով անպատիժ կարձակե, իսկ քրիստոնեից

119 Նույն տեղում, թ. 496։
120 Նույն տեղում։
121 Նույն տեղում, թ. 497։
122 Նույն տեղում, թ. 597։
123 Նույն տեղում, էջ 598։

փորը թերություն սաստկապես վրեժխնդիր լինելով պաշտոնե կզրկեն, տուգանք կառնեն և կպատուհասեն»[124]:

Ելնելով վերևում նշվածից, հանձնաժողովը առաջարկում էր այդ պաշտոնին մի անաչառ մարդ նշանակել, ապա բերվում են փաստեր, թե ինչպես են տեղական պաշտոնյաները հարստանում ժողովրդի հաշվին, «տեղույս անդուք տոմարակալի միջոցով խեղճ գավառացիներեն հանուն թղթադրամի քսան դուրուշանոց արծաթ մեճիտ առնվեցավ, սույն ողջ դրամեն կուսակալին, դատավորին, տենպեահին ամսականներ վճարվեցավ և տոմարի մեջ իբրև թղթադրամ արձանագրվեցավ: Տերության մեծ պաշտոնյայք աղքատ գյուղացիներեն և միանգամայն արքունի գանձեն այսպիսի աղնվական գողություն ընելով հարստացան»[125]:

Վավերագրի մեջ ասված է նաև, թե ինչպես հայ պաշտոնյաներից ոմանք ղրկվեցին պաշտոններից, որոնցից Մ. Աղաբեկյանը «ազատ կամքով և խղճով հայոց դատն և իրավունքն պաշտպանելով, վաղվաղակի կուսակալի գաղտնի ամբաստանությամբ պաշտոնանկ եղավ, իսկ Աղաթոնյան նորա տեղ հաջորդելով յուր ազատ կամք և խիղճ ծախելով հազիվ կարողացավ 2 տարի պաշտոն վարել, բայց երբ տեղվույս ուսումնական խորհրդո անդամ ընտրվեցավ և մասնակցեցավ, իսկույն իբրև կասկածելի պաշտոնանկ եղավ և գնաց»[126]:

Քանի որ Վասպուրականում բնակչության մեծամասնությունը հայեր էին, բարենորոգումներ առաջարկողները այն կարծիքին էին, որ կուսակալը և տոմարակալը հայ կամ քրիստոնյա լինեն, ասելով «բայց եթե կուսակալն և տոմարակալն քրիստոնյա լինին, օգնական ինչ ազգե կլինի Թող լինի. բավական է տեղացի բնակիչ իվեով ընտրեն և կուսակալին ներկայացնելով վավերացնել տան Բ. Դռան, եթե այդպիսի ազատական ընտրությամբ արդարասեր մի մարդ օգնական չընտրվի ուրիշ մի նշանակություն չունի նրա պաշտոն (ընդգծումը մերն է— Հ. Պ.)»:

Դեմոկրատիկ հիմունքներով կուսակալի ընտրությունը, նրան քրիստոնյաներից կարգելու առաջարկը անհնարին էր Թուրքիայի նման մի բռնակալական երկրում: Այդ պատճառով էլ վանի վերնախավի ներկայացրած սույն առաջարկը չպետք է իրականանար: Առաջարկությունների հեղինակները շատ լավ վերլուծում էին դատավորի և դենպետի գործունեությունը: Սրանք երկուսն էլ կրոնավորներ էին և ժողովրդին ստրկական

---

124 Նույն տեղում:

125 Նույն տեղում:

126 Նույն տեղում, թ. 599:

վիճակի մեջ պահելու նպատակով դատական վճիռներն արձակում էին, ելնելով միայն շարիաթի օրենքներից:

Վանի վիլայեթում կար մի ատյան, որը կոչվում էր Տիվանե խտիճաֆիե, որը գլխավորում էր դատավորը: Ատյանը բաղկացած էր 3 մահմեդական և 3 քրիստոնյա անդամներից: Առաջարկվում էր ատյանին դեկավար նշանակել ոչ թե կրոնավորի, այլև կրոնագետ և արդարասեր մարդկանց՝ առանց կրոնի խտրության, նրանց ընտրել քվեով և հաստատել «քանզի կրոնական անձն ստիպված է կամա ակամա յուր կրոնակից անձին... պաշտպանել իբրև կրոնական պարտականություն»[127]:

Այնուհետև կուսակալին կից կար հանձնաժողով Տիվանե իպիհատ՝ մի մահմեդական նախագահով և երկուական թուրք և հայ անդամներով, առաջարկվում էր այնտեղ չկիրառել շարիաթի օրենքները և «յուրաքանչյուր ազգ առանձին ժողով ունենաւ, դատե, վճռե և վճռագիր նահանգապետին հղե ի գործադրություն»[128]: Շատ բնական է, որ այսպիսի առաջարկությունները թուրքական իշխանությունների կողմից ընդունվել չէին կարող, քանի որ նրանք շատ հին ժամանակներից սկսած ղեկավարվել էին միայն շարիաթի օրենքներով: Դատական այդ երկու ժողովների բոլոր գրագիրները մահմեդականներ լինելով, արձանագրությունները կազմում էին թուրքերեն այնպես, ինչպես իրենք էին ցանկանում, ուստի առաջարկվում էր գրագիրների կեսին քրիստոնյաներից նշանակել:

Այդ վավերագրում դպրոցների մասին նշված է, որ անցած 15 տարիների ընթացքում Վանում բացվեցին դպրոցներ՝ թուրքերի համար, որոնց «ծաղքեր եղան տերության գանձին» սակայն «հայոց համար մինչ ցայսօր մի բարձրագույն դպրոց չբացվեցավ, երիցս և չորիցս բողոքեցին սոյն անհավասարության դեմ և մեր ազգի իրավունք պահանջեցինք, որպեսզի մեր ազգին քաջ տաճկագետք գրագիրք և ժողովո արժանավոր անդամք պատրաստեինք, դարձյալ այս մասին կուսակալն խոստումն տվավ, բայց դարձյալ մյուս խոսամանց կարգին տրամ, սոյն խոստման գործադրության և պատերազմեն զկնի պատասխանեց թե տերություն դրամ չունի, որ ձեզ դպրոց բանա և այլն»[129]:

Բարենորոգումների ծրագրի հեղինակները առաջարկում էին, որպեսզի «հայեր յուրյանց բողոքներ հայերեն մատուցանեն, պետք է հայոց քննության հայերեն գրով լինի, որպեսզի հայք կարդան և այնպես ստորագրեն, զի թուրքերեն քննության թուրք գրագիրներ միշտ կխարդախեն,

127 Նույն տեղում, թ. 602:

128 Նույն տեղում, թ. 603:

129 Նույն տեղում:

այլ ինչ կգրին և այլ ինչ բան կկարդան»[130]։ Ապա նրանք գտնում էին, որ «տեղական Թուրք պառավարութիւն այժմեան դրութեամբ հայ ժողովականներ և անդամներ իբրև խորթ և ավելորդ կը համարև և երբեմն իբրև պետութեան շահուց վնասակար ուսոի տերութեան ներքին խորհրդոց խորհրդակից չառներ»[131]։ Վավերագրում նշում էին նաև այն մասին, որ ինչպես կուսակալները, այնպես էլ նրանց պաշտոնյաները բոլորովին չեն մտածում մայրաքաղաքից եկած հրահանգները կենսագործելու մասին և երբ «հասարակութեան օգտին համար մի ազդու հրամանագիր մը գալու լինի իսկույն կուսակալն զդենպետներ, զտումարակալն և զայլ պաշտոնեայս գաղտնաբար յուր տուն կը համախմբե նոքոք ծածկաբար խորհելով հրամանագրոց իմաստներ ուզածին պես կը շրջե կայլայլե հետո եթե ուզե ժողովո մեջ կկարդա և յուր քմաց համաձայն մեկնութիւն և բացատրութիւն կուտայն և եթե չուզե բնավ ժողովո մեջ չի կարդար այլ կպահե»[132]։

Վան քաղաքում գոյություն ուներ քաղաքապետական ժողով (պալատին), որի մեջ ազգաբնակչության թվի համեմատ կային 6 հայ և 4 թուրք անդամներ։ Կուսակալը այդ ժողովի հայերի թիվը իջեցրեց 3-ի, առանց հաշվի առնելու, որ նրանք ընտրված էին հայ բնակչության թվի համեմատ։ Վանում կուսակալին կից կար Թեփու մմուրի պաշտոնը, որը գլխավորում էր մի թուրք՝ իր գրագիրներով, որոնք վարում էին կալվածական գործերը և չնայած այդ գրասենյակի գոյությանը, Վասպուրականի «կալվածական գործեր լի էին ամեն տեսակ զեղծումներով և հարստահարութեամբ»[133]։ Գավառների և քաղաքի հայերն իրենց կամքից անկախ կալվածների գնահատության կապակցությամբ առնչվում էին այդ պաշտոնյայի հետ և «խեղճ երկրագործք շաբաթներով ամիսներով յուրյանց տեղական գործերեն պարապ մնալով սույն պաշտոնեի սենեկի դռան վրա ձեռ ի ծոց շիվարյալ կսպասեն յուրյանց գործոց վերջանալուն»[134]։ Վավերագրի մեջ բերված են բազմաթիվ փաստեր այդ պաշտոնյայի զեղծարարության մասին։ Բարենորոգումներ առաջարկողները չէին հասկանում, որ կաշառքը և զեղծարարությունը կախված է ոչ թե պաշտոնյայի ազգային պատկանելությունից, այլև թուրքական ռազմաֆեոդալական սիստեմից։

Կուսակալին կից կար նաև «Ալմաք օտասի» գրասենյակը, որտեղ աշխատում էին երկու հայեր և երկու թուրքեր՝ 4-ը մահմեդական գրագիր-

130 Նույն տեղում։
131 Նույն տեղում, թ. 604։
132 Նույն տեղում։
133 Նույն տեղում, թ. 605։
134 Նույն տեղում։

ներով։ Գրասենյակի աշխատողները հեռու մնալով հսկողությունից, կեղծում էին գործերի իրական վիճակը և կալվածքները գնահատում այնպես, ինչպես իրենք էին ցանկանում. «Կալվածական տումարներ երբ աչքի անցանեմք,— ասված է վավերագրում,— կտեսնամք թե միշտ հայոց կալվածքներին արժեք միշտ բարձրագույն աստիճանով գրված են, իսկ թուրքաց վար աստիճանով արձանագրված»[135]։ Կուսակալի քաղաքականությունն էր այդ և ելնելով դրանից, նրանք եղրակացնում են. «Հայոց ազգին և արևելյան fրիստոնեից բուն և առաջին հարստահարիչն թուրքական կառավարությունն է, երկրորդական են գավառական կուսակալք և մեծ ու փոfր պաշտոնեայք, երկրորդական են թուրք, fուրդ և չերfեզ, որոց հարբստահարության բաղդատմամբ առաջնոյն և երկրորդին կարի նվազ և թերի է (ընդգծումը մերն է— Հ. Պ.)»[136]։

Վավերագրի հեղինակները վերջապես նշում են տեղական առևտրական հանձնաժողովի (Թեճարեթ) մասին, որը ոչինչ չի անում առևտրի զարգացման համար։ Նրանք նշում էին, որ այդ հանձնաժողովի անդամները «վաճառականներեն ավելի պարտքեր առնելով յուրյանց ամսական և պետության գանձն կապահովեն» և նրանց համար «փոյթ չէ արհեստ և վաճառականություն քաջալերել և առաջ մղել»[137]։ Վասպուրականի ժողովրդի անունից տրված վերոհիշյալ հետաքրքրական առաջարկությունները բոլորովին էլ քննարկման չենթարկվեցին թուրքական իշխանությունների կողմից և ժողովուրդը նորից քաղաքական, սոցիալական ու տնտեսական տեսակետից մնաց ծանր վիճակում։

Վասպուրականի 1880-ական թվականների պատմության մեջ ուրվագծվում է Աղթամարի խաչատուր կաթողիկոսի ոսկիների գողության հարցը։ Ընչաքաղց այդ կաթողիկոսը մոտ մեծ քանակությամբ պարտամուրհակներ և ոսկիներ էին կուտակվել։ Վանի երիտասարդներից մի քանիսը որոշում են իրենց ձեռքը դցել այդ ոսկիները և օգտագործել «Սև խաչ» կազմակերպության նպատակների համար։ 1885 թ. կեսերին նրանց հաջողվեց տիրանալ կաթողիկոսի 4000 ոսկիներին։ Մամուլում պահպանված տեղեկությունների համաձայն այդ ոսկիները նրա «անբավ հարստության մեկ չնչին մասը միայն կկազմեր, որ շատ չանցնելու նորեն տեղ կբերվի հավելումներով»[138]։ Թուրքական իշխանությունների հետ

---

135 Նույն տեղում, թ. 607։

136 Նույն տեղում։

137 Նույն տեղում, թ. 608։

138 «Բյուզանդիոն», 1900, № 1203, սեպտ. 19—հոկտ. 5։

կապված կաթողիկոսը գողության մեջ կասկածելիների նկատմամբ դատ-բաց արեց և դատի տրվեցին Մկրտիչ Սեֆիլյանը, միաբաններից Խորեն Կեցանցին և Պողոս Խիզանցին: Պարզվեց, որ ոսկիները տանողները որպես ուխտավորներ մուտք էին գործել կղզի, պատարագից հետո հարբեցրել էին միաբաններից ոմանց և նրանցից ստանալով բանալիները տեր էին դարձել ոսկիներին: «Արձագանքում» տպագրված մի հոդվածում Մ. Սեֆիլյանի մասին ասված է, որ նա «Վանա մեջ հարակից էր միշտ ինքզինքնին «աղգային գործող» ու «ղգայուն մաս» մաս ավանող խմբակի մը...»[139], ոչ մի կասկած լինել չի կարող, որ այդ կազմակերպությունը «Սև խաչն» էր: Կաթողիկոսի ոսկիների անհետացման կապակցությամբ բանտ նետվածների դատավարությունը սկզբից սկսվեց Ոստանում և ապա փոխադրվեց Վան: Պողոս եպիսկոպոսի առաջարկով գողության մեջ կասկածվողների վրա հոգեբանական ազդեցություն գործելու նպատակով «շեյխի խորհրդով փորձահաց կը կերցնեն»: Դրանից հետո Վան քաղաքի բնակիչները սկսեցին ամեն տեղ ասել. «Պողոսը մեր սուրբ կրոնը կաղարտե, հավատ ընծայելով կախարդության և մինչև իսկ մահմեդական շեյխ բերել տալով առաջնորդարան ու նորա խորհրդով փորձահաց կկերցնե մեզ, որպեսզի այդ եղանակով գողը գտնե...»[140]: Չնայած վերը նշվածին և կատարված բռնություններին, թուրքական դատարանը ստիպված կաթողիկոսի ոսկիների գողության մեջ մեղադրվողներին անպատրա ճանաչեց: Վանի երիտասարդներին հաջողվեց ինքնապաշտպանության համար վերցրած ոսկիներին տեր դառնալ: Կաթողիկոսին հաջողվեց Կովկասից եկած Գալուստին և Բաղդասարին կուսակալի միջոցով Կովկաս ուղարկել: Բայազետում նրանք բանտարկվեցին, սակայն Կարինի ռուսական հյուպատոսի միջամտությամբ աղատ արձակվեցին:

Ջայրացած Պողոսի վարքագծից Պոլսում բնակվող 250 վանեցիներ պատրիարքարանին մի հանրագիր ներկայացրին, իսկ Վանից ստացվեցին մեծ թվով բողոքներ: Սակայն պատրիարքարանը, ինչպես միշտ, այս անգամ էլ սկսեց մեղմել Պողոսի նկատմամբ ժողովրդի մեջ եղած արդարացի զայրույթը: Պատրիարքարանը ելնելով բողոքներից, հանձնարարում է Մ. Օրմանյանին ծանոթանալ այդ նյութերին: Նա գտնում է, որ Պողոսը չի կարող վանի առաջնորդի տեղապահ լինել, քանզի նորից հոգևորականին անհարիր գործեր է կատարում: Իմանալով այս մասին Պո-

---

139 «Արձագանք», 1885, № 6, 11 օգոստոսի:

140 «Արձագանք», 1886, № 22, 8 հունիսի:

դոսին հաջողվում է 100 հոգու որպես տեղական իշխանությունների հակառակորդների բանտարկել, որոնցից 60-ը ավելի քան երկու ամիս մնացին բանտում: Այնուհետև սկսվեցին հալածանքները Վանի առաջավոր մտավորականների և բնակիչների նկատմամբ: Մի շարք առաջավոր մարդիկ անցան Պարսկաստան, աքսորվեցին Կ. Պոլիս և Դամասկոս[141]: 1886 թ. վերջերին բանտարկվեցին Գևորգ Օտյանը, Միքայել Նաթանյանը, Գրիգոր Պողիկյանը, Ռուբեն Շատվորյանը, Արիստակես Ախիկյանը, Հովհաննես Քանքանյանը և ուրիշներ: Օսմանյան պաշտոնյաների բռնություններից դուրս չմնացին դպրոցների աշակերտներից ոմանք: «Արձագանքում» տպագրված մի այլ հոդվածում այդ մասին ասված է. «Այս երեքշաբթի օր Կիրակնօրյա վարժարանի բոլոր աշակերտներն հավաքելով բանտարկեցին. մի քանի ժամեն հետո փոքրերն հարցաքննեցին և ազատ թողեցին. բայց երեք մեծ աշակերտներ, որոնք իրենց աչքերուն խորթ երևացած էին՝ բանտը պահեցին»[142]:

Արևմտյան Հայաստանում և Վասպուրականում անիշխանություն էր տիրում, կառավարական պաշտոնյաները կապված էին ավազակաբարո մութ տարրերի հետ և նրանց կողոպուտներից ստանում էին իրենց համապատասխան բաժինը: Ինչպես զորքը, այնպես էլ ոստիկանները ամիսներով աշխատավարձ չէին ստանում և այդ հանգամանքը նրանց մղում էր ավազակային մեթոդներով զինվելու, հագնվելու և ժողովրդից դրամ կորզելու ճանապարհը: Զինվորականներից շատերն այդ տարիներին նույնիսկ սկսեցին պետական զենքեր վաճառել: Ժամանակակիցների վկայությամբ, երբ պատերազմը վերջացավ, Վան վերադարձած թուրքական բանակի զինվորները ծայրագույն թշվառ վիճակում գտնվելով, սկսեցին «հրացան փամփուշտ գողանալ և ծախել շատ ոչինչ և աննշան գինով...» սկզբնական շրջանում այդ զենքերը գնում էին թուրքերը, քրդերը և պարսիկները: Ժամանակակիցների վկայությամբ ամերիկյան «Մարթինի» տիպի հրացանը արժեր 4—5 մեճիտյե (80—100 ղուրուշ), իսկ փամփուշտի հատը՝ 5—10 փարա, զինվորական վերարկուները՝ 15—20 ղուրուշ[143]: Վաճառքի հանվեցին նաև զինվորական ձիերը և ջորիները: Օգտվելով զենքերի մասսայական վաճառքից, հայերը նույնպես ինքնապաշտպանության նպատակով սկսեցին գնել այն: «Սև խաչը» այդ օրերին պահանջեց զենքը վաճառել կազմակերպությանը, այլապես սպառնաց խլել գնող-

---

141 Նույն տեղում, № 30, 10 օգոստոսի:

142 «Արձագանք», 1887, № 1, 18 հունվարի:

143 Յ. Կ. Ճանկյուլյան, նշվ. աշխ., էջ 81:

ներից։ Ձևնքի վաճառքի մասին նույն ժամանակակիցը գրում է. «Հրայաններն որ առհասարակ գիշերները կը փոխադրեին, կաղմակերպությունը շատ հեշտությամբ կիմանար թե որ գիշերը պիտի փոխադրեն. իսկույն ճիշտ վայրկյանին հրացաններն ու փամփուշտները ձեռքերնուն կառնեին...»[144]։ Կառավարությունը և զինվորական հրամանատարությունը այդ մասին իմանալով, խուզարկել տվեց պարսիկների խանը, որտեղից հայտնաբերվեցին 300 հրացան և մեծ թվով փամփուշտներ[145]։ Սակայն ամեն ինչ կատարվել էր և այն էլ հրամանատարներից ոմանց գիտությամբ։

1880 թ. եվրոպական 6 պետություններ, ինչպես նաև Ռուսաստանը, սուլթանին հիշեցրին հայկական մարզերում բարենորոգումներ անցկացնելու մասին, սակայն սայլը տեղից չշարժվեց։ Սկսած այդ ժամանակից էլ հայ ժողովրդի արևմտյան հատվածի և նրա մտավորականության ավելի ու ավելի հավակնալի դարձավ եվրոպական օգնության ոչ ունայն լինելու հանգամանքը և սկսեց ավելի ցցուն դառնալ սեփական ուժերով պայքարի ելնելու և արդյունքի հասնելու մտածողությունը։ Այդ, ինչ խոսք, անղեն ժողովրդին անհավասար պայքարի տանելու ձգտումներ էին, որոնք հաջողությամբ պսակվել չէին կարող։ Դիվանագիտական սալոններում մի քանի անգամ հղած խորեն Նար-Պեյը «Հայ ապրինք» բանաստեղծության մեջ ասաց. «Հայ մեռնինք, ո՛չ, եղբայրք, ո՛չ, օտարեն չկա հույս»։ Հենց այդ ժամանակից էլ եկեղեցիներում երգվող «տեր ողորմյա» կրոնական տաղի մեջ մուտք գործեց «Աղգիս հայոց աղատություն» արտահայտությունը։

Թուրքական կառավարությունը ժխտում էր առհասարակ իր տերության սահմաններում Արևմտյան Հայաստանի գոյությունը։ 1883 թ. հոկտեմբերին Վիեննայի «Ստանդարտ» թերթի թղթակցի հետ ունեցած զրույցի ժամանակ Թուրքիայի այն ժամանակվա ամենաազդեցիկ դեմքերից մեկը՝ Մուխթար փաշան ասաց, որ «Բեռլինի դաշնագիրը մեզ վրա պարտականություն է դրել հայկական մարզերում բարենորոգումներ գործադրել, սակայն «— Ի՞նչ է Հայաստան։— Չկա օսմանյան գավառ այդ անվամբ և վարչական անվանումներն ալ մի կողմ թողլով՝ Հայաստանի սահմանն, ինչպես ցույց է տրված Պերլինի դաշնագրով շատ դժվար է ճշտել...»[146], ապա նա շարունակում է. «— Ինչ դուք Արմենիա կը կոչե՞

144 Նույն տեղում, էջ 86։

145 Նույն տեղում, էջ 83։

146 «Արևելյան մամուլ», 1883, հոկտեմբեր, էջ 485—486։

ավելի Ռուսիո և Պարսկաստանի մեջ է»։ «Արմենիան ոչ այնքան Արարատին այս կողմն, որքան մյուս կողմը՝ Ռուսիո կողմը՝ կը գտնվի (ընդգծումները թերթինն է— Հ. Պ.)»[147]։ Ինչպես տեսնում ենք թուրքական կառավարությունը առհասարակ չէր էլ ընդունում իր տերության սահմաններում Արևմտյան Հայաստանի գոյությունը։ Թուրքիան այդ ժամանակաշրջանում գտնվում էր շատ ծանր վիճակում և 1890-ական թվականներին ֆրանսիական գործիչներից մեկը նրա մասին իրավամբ ասել է. «այդ պետությունը նման է գյուղական խլության մեջ հանդիպող հին սայլակառքերի, որոնք ճարճատում են և ամեն րոպե սպառնում են փլուզվել և իսկապես համենայն դեպս տանում են։ Այդպես է Թուրքիան»[148]։

1881 թ. բացվեց Էրզրումի Սանասարյան վարժարանը և ժողովրդի հարստահարություններից ծնվեց «Պաշտպան Հայրենյաց» կազմակերպությունը։ Այդ ժամանակաշրջանից սկսած կառավարությունը սկսեց կասկածել Մ. Խրիմյանին, Մ. Փորթուգալյանին և Կ. Կամսարականին։ Գործը այնտեղ է հասնում, որ Վանի կուսակալը թուրք վերնախավի ներկայացուցիչներից ոմանց ներկայությամբ Մ. Խրիմյանին ասում է. «Իրավ է, որ դիմած է ռուս կառավարության՝ որպեսզի բանակ մը դրկե Վանը գրավելու համար»։ Մ. Խրիմյանից փաշան ստանում է հետևյալ պատասխանը. «Եթե վստահ լինեի, թե ռուս կառավարությունը պիտի անսար իմ խոսքիս, կանդրադարձնեի Խրիմյան, կը խնդրեի որ չշարժեր նա իր բանակը»[149]։

Ռուս-թուրքական պատերազմից հետո ավելի ուժեղացավ Արևմտյան Հայաստանի և Վասպուրականի բնակչության մի մասի արտագաղթը։ Գ. Դարաջյանը (Արկոմեդ) իր հուշերում այդ մասին գրում է. «Տաճկաստանից դեպի կովկասյան սահմանները հայ գաղթականների հոսանք էր ստեղծվել, հայ բազմաթիվ ընտանիքներ խմբերով փախչում էին սովից, կոտորածից, թուրքական ռեժիմի սարսափներից»[150]։ Այս արտագաղթը շատ ձեռնտու էր թուրքական կառավարությանը, քանի որ հայերի ֆիզիկական ոչնչացումը, այնպես էլ հայրենիքից հեռանալը նրա վարած քաղաքականության արդյունքն էր։

Պատերազմից հետո Վան քաղաքում և նրա շրջաններում ստեղծված ընկերությունները որոշեցին իրենց ընկերությունների անդամներին հա-

147 Նույն տեղում։

148 «Мир Божий», 1896, январь, с. 232.

149 Թ. Գուշակյան, նշվ. աշխ., էջ 118։

150 Գ. Դարաջյան, Անցյալի հիշողություններից, Թիֆլիս, 1918, էջ 10։

տուկ հագուստներով տանել Վարագ և նրանց «թափորին առջևեն կերթային քանի մը սրինգ զարնողներ, ուրկե վերջ կուգային հետիոտն զինվորները կամ ոստիկանները՝ իրենց զենքերով. անկե վերջ կուգային ընկերություններ խումբ խումբ, իսկ հեծյալ զորքերը՝ թափորին չորս կողմեն...»[151]: Այս դեպքին տեղյակ էր Թուրքական կառավարությունը և այդ օրերին Վանից ետ կանչեց Մարկոս Աղաբեկյանին, որը իրեն ճանապարհ դնողներին ասաց. «Եթե ականատես չըլլայի, դժվար պիտի հավմոզվեի թե դուք այս դժոխային կյանքով կապրիք, դուք գովելի եք որ կը տոկաք և կը տանիք կյանքի այս դառնությունները, ինչ որ շատ քչեր կարող են տանիլ»[152], ապա իր մտերիմներին ասել է. «Չկարծեք թե պաշտոնանկության համար կուլամ, ո՛չ, լալուս պատճառը ձեր դժոխային կյանքն է, և թերևս ձեզի ավելի սոսկալի կյանք պահված է...»[153]:

Վանի փաշան 1883 թ. օգոստոսին իր մոտ է հրավիրում քաղաքի մի շարք հայ երևելիների և նրանց ստորագրել է տալիս հետևյալ գրությունը. «Վանի հայ ժողովուրդը բնավ գոհ չէ օտար հյուպատոսներու ներկայութեննեն, որ այդ հյուպատոսները կը միջամտեն հայերու, թուրքերու և պետության ներքին գործերուն և հառաջ կը բերեն դժգոհություններ և խռովություններ, որ Վանի հայությունը բարեխնամ պետության քաղաքականութենեն և արդարադատ կուսակալեն շատ գոհ է, որ երկրի մեջ կատարյալ խաղաղություն կը տիրե (ասայիշ պերքեմալ տըր), որ հայերը օտար պետության միջամտություններեն շատ դժգոհ են»[154]: Կոստանդնուպոլսում փաշայի կազմակերպած այդ հեռագիրը հրապարակվեց թուրքերեն և հայերեն թերթերում: Վանի երևելիներից 13 հոգու սուլթանը պարգևատրեց շքանշաններով այն ժամանակ, երբ Լոնդոնում հայ մի պատգամավորություն ներկայացրել էր «լորդ Դյուֆերինի հայոց խնդրո վրա ուշադրություն հրավիրելու և 61-րդ հոդվածի գործադրությունը խընդրելու Անգլո տերութենեն»[155]: Իմանալով այդ հեռագրի մասին, ժողովուրդը սկսեց հուզվել և երբ Կոստանդնուպոլսում հրատարակված թերթերը Վան հասան, նրանց պայրույթը իր գագաթնակետին հասավ:

Ապագա անախորժություններից խուսափելու նպատակով Մ. Խրիմյանը 1883 թ. հունիսի 24-ին հրավիրեց Վանի գավառական ազգային

---

151 Հ. Աճեմյան, նշվ. աշխ., էջ 557:

152 Յ. Կ. Ճանկյուլյան, նշվ. աշխ., էջ 93:

153 Նույն տեղում:

154 Հ. Աճեմյան, նշվ. աշխ., էջ 561:

155 «Արձագանք», 1883, № 30:

խառը ժողովի նիստ, որտեղ հրավիրվեցին 13 պարգևատրվածները: Ժողովը որոշեց չընդունել «հիշյալ 13 անձանց Վանա հայ հասարակության ներկայացուցիչ լինելը, նկատելով, որ օսմանյան սահմանադրության տրամադրության համեմատ Հայաստանում հայ ազգի ներկայացուցիչներն են նահանգին առաջնորդը—երեսփոխանական ժողով, կրոնական և քաղաքական ժողովները»[156]: Այդ ժողովի ժամանակ դրսում սկսեցին հավաքվել Վանի բնակչությունից մոտ 3000 հոգի: Նրանք հարձակվեցին հեռագիրը ստորագրողների վրա և սկսեցին ծեծել, որի պատճառով նրանցից մեկը մի քանի օր հետո մահացավ: Այս դեպքին սկսեց միջամտել թուրքական ոստիկանությունը և հազիվ կարողացավ ամբոխի ձեռքից ազատել ծեծվողներին: Մ. Խրիմյանը չէր թողնում ժողովրդին հարձակվելու 13-ի և նրանց համախոհների վրա, սակայն հոգնածությունից «սրահի ապականյալ օդից ուշաթափ ընկավ, զոր երիտասարդք ոմանք անմիջապես վեր առնելով սրահից դուրս հանեցին այն առեն ժողովրդատեղին ամբողջապես կատաղի ամբոխին կուլ վայր մի դառավ, ժողովուրդը այս անգամ հարձակվեցավ ուղղակի այն անձանց վրա, զորս Խրիմյան Հայրիկ այնքան երկար պաշտպանել հաջողված էր, և զանոնք գետնաքարշ գանակոծելով առաջնորդարանից դուրս վռնդեցին»[157]: Ծեծից հետո ժողովուրդը հավաքվեց եկեղեցիներից մեկում և ընտրեց 24 երեսփոխան, իսկ սրանք էլ 7 հոգիանոց մի մարմին և «հազարավոր ստորագրություններով ծածկված մի հանրագիր տվավ այս ժողովին ձեռքը, որով կը հայտարարեր թե իրավունք տված է այդ ժողովին իբր յուր պատգամավորներ դիմել ուր որ անկե և գործել հանուն ժողովրդին»[158]: Դեպքի կապակցությամբ Վանի կուսակալը նորից կեղծ հեռագիր է ուղարկում մայրաքաղաք՝ խեղաթյուրելով իրական վիճակը: Իմանալով այդ մասին, Մ. Խրիմյանը 1883 թ. սեպտեմբերի 4-ին Կ. Պոլիս է ուղարկում մի հեռագիր, որի մեջ պատրիարքին տեղյակ էր պահում նոր կեղծիքի մասին, ասելով. «Մեր ստորագրած երկու նամակներուն իմաստը, զոր հրատարակեց Մասիս, մեր հասկացածեն շատ տարբեր կետեր կը պարունակե, որոնց դեմ կը բողոքեմ: Նամակներուն բնագրերը փութապես հղեցեք մեզ: Սույն հեռագիրը հրատարակեցեք, Խրիմյան»[159]: Իրադարձությունները սկսեցին ավելի շիկանալ և կառավարությունը ստիպված

156 Նույն տեղում:

157 Նույն տեղում:

158 Նույն տեղում, № 33:

159 Նույն տեղում, № 41:

պաշտոնանկ արեց Վանի փաշային։ Սակայն փաշան և նրա կողմնակիցները սկսեցին լուրեր տարածել այն մասին, թե Մ. Խրիմյանը, Մ. Փորթուգալյանը և Կ. Կամսարականը Վասպուրականի ժողովրդին ապստամբության են նախապատրաստում և նպատակ ունեն ռուսական զինված ուժերի օգնությամբ Վանը անջատել Թուրքիայից և միանալ Ռուսաստանին։ Նրանք մայրաքաղաքին տեղեկացնում էին այն մասին, որ այդ գործիչները միավորված «ժողովրդին հեղափոխության կը գրգռեն, ռուսական քաղաքականության որս ընել կուզեն ժողովուրդը...»[160]։

Անժխտելի է, որ Մ. Խրիմյանը, Մ. Փորթուգալյանը, Գ. Սրվանձտյանցը և նրանց կողմնակիցները ռուսական կողմնորոշման տեր մարդիկ էին, սակայն նրանք երբեք էլ ապստամբության չէին նախապատրաստում, այդ լուրերը նրանց մասին տարածվում էին նրա համար, որպեսզի թուրքական կառավարությունը այդ մտավորականներին հեռացնի Վանից։ Անկասկած թուրքական իշխանություններին նրանց մասին առատ նյութ էին մատակարարում քաղաքի վերնախավի մեջ եղած ազգապավները։ Մ. Խրիմյանը հրաժարվելով իր պաշտոնից, գնաց Վաբագ։ 1884 թ. Վանը մնկընդմիշտ թողեց Կ. Կամսարականը։ «Արևելքի» մի հոդվածից երևում է, որ նա Վանը թողել է 1884 թ. նոյեմբերի 19-ին, իսկ ըստ «Արևելյան մամուլի»՝ նոյեմբերի 21-ին։ Ժամանակակիցների վկայությամբ «Սաստիկ տխուր և հուզյալ էր։ Իսկ տիկինը հայհոյապես կարտասվեր»։ Վանի բնակիչները նրան նվիրեցին իր մեծադիր պատկերը (նկարել էր Փ. Թերլեմեզյանը) և արծաթյա մի իր, որի վրա գրված էր՝ «Կոստանդին պ. Կամսարականին՝ վանեցիք», իսկ կնոջը տրված արծաթյա իրի վրա գրված էր՝ «տիկին Աննա Կ. Կամսարականին՝ վանուհիներից»։ Հուզված Կամսարականը ասել է, որ ինքը իր կնոջ հետ «այնպիսի հիշատակներ կը տանեն Վանեն, զորս անկարելի է մոռանալ»[161]։ Ճանապարհին նա այցելեց Ալյուր գյուղի նախակրթարանը, որի վատ վիճակը տեսնելով «սիրտը կը շարժի»[162]։

1884 թ. Վանից ստացված նամակից երևում է, որ Վասպուրականում ժողովուրդը ապրել է շատ ծանր վիճակ։ Ամենուրեք տիրել են ավարառություն և սպանություններ, անապահով վիճակ։ Ժողովրդի կրած տառապանքների մասին այնտեղ ասված է. «Ժողովուրդը կը ճնշվի հարբսատահարության և սրոց ծանրության տակ, պանդխտությունը և գաղ-

160 Նույն տեղում, № 33։

161 «Արևելք» (Կ. Պոլիս), 1884 № 278, 5 դեկտեմբերի։

162 «Արևելյան մամուլ», 1884, դեկտեմբեր, էջ 651։

թականությունը կամայացնեն մեր երկիրը։ Թուրքը կուզե հազարավոր տարիներ ապրող հայ ազգը բնաջինջ անել աշխարհիս վրայեն։ Անձնապաշտպանությունը բացարձակապես կարգելվի։ Կուսակալի նոր հրամանով այլևս ոչ ոք ազատ չէ զենք ունենալ յուր հետ. ճանապարհորդ մը իրավունք չունի զենք կրել»[163]։ Այդ ծանր վիճակից ելնելով Վանի բնակիչների մեջ ձգտում առաջացավ անցնել ռուսական օրթոդոքս եկեղեցու կողմը և ժողովուրդը երկու անգամ հավաքվելով եկեղեցիներից մեկում, որոշում ընդունեց այդ մասին։ Նրանց այդ շարժումը մի բողոք էր «Թուրք կառավարության հոռի վարչության դեմ»[164]։

Շատ շուտով արքունիքի հրամանով իր ծննդավայրից մեկընդմիշտ հեռացավ նաև Մ. Խրիմյանը, որի ժամանակ երիտասարդները երգեցին տխրալի մի երգ, որի մեջ իրենց թախծալի վիճակը արտահայտելու հետ մեսին խնդրեցին իրենց հայրենակցին, ասելով. «Հայրիկ հայ ազգին Խրիմյան, դարձիր դեպի Վան»[165]։ 1885 թ. մարտի 12-ին Գ. Սրվանձտյանցին ուղղած իր մի նամակում Մ. Խրիմյանը գրում է, որ պատրիարքարանը նրան ստիպեց օր առաջ թողնել Վանը. «Պատրիարքան հեռագրած էր մեզ,— գրում է նա,— որ մարտ ամսոյն ճամբա ելլիմ», բայց նա խնդրում է թուլլատրել իրեն մնալ Վանում մինչև եղանակները տաքանալը, սակայն պատրիարքարանից եկած հաջորդ հեռագիրը պարտավորեցնում էր նրան անմիջապես դուրս գալ Վանից. «կը գուշակեմ,— շարունակում է Մ. Խրիմյանը,— որ Բ. Դուռը սաստկապես ճնշումն բանեցուցած է պատրիարքին վրա. և դորա պատճառով կերևի որ տեղույս պետ նոր և սաստկապես կրկնած է հին գրպարտությունները, զի այս օրերս դավաճանաց մատնության ժանդախտ համաճարակեց ի Վան, որ երեսեն շատ մարդիկ ի զոհ պիտի գնան...։ Որչափ դժբախտություն է այս, այնինչ համայն այդ գխրիմյան առաջին ընտրելի կը հռչակե ո՛հ, իբր քրեական հանցավոր Պոլիս կը տարվի, ի փառս և ի պարծանս տեղույդ մեծաբառաբաո ազգասիրաց»[166]։ «Մասիսում» տպագրված մի հաղորդումից երևում է, որ «ներքին գործոց նախարար բարձր. էմհեմ փաշա հեռագրած է Վանա կուսակալին, որպեսզի փութացնե... Խրիմյան սրբազանի ի Պոլիս գալուստը»[167]։ Այս քաղվածքը վկայում է այն մասին, որ

---

163 «Արձագանք», 1884, № 40։

164 Նույն տեղում, № 41։

165 Թ. Գուշակյան, նշվ. աշխ., էջ 120։

166 ԳԱ պատմության ինստ. արխիվ, Լեոյի անձնական ֆոնդ, ց. 1, գ. 7, թ. 1—2։

167 «Մասիս», 1885, № 3749, 22 դեկտեմբերի։

նա մայրաքաղաք է հրավիրվել ոչ թե պատրիարքարանի, այլև կառավարության պահանջով։ Այդ նույն հաղորդման համաձայն Մ. Խրիմյանը մարտի 19 (31)-ին Վանի ս. Հակոբի եկեղեցում մի քարոզ կարդաց, ապա բռնեց Կոստանդնուպոլսի ճանապարհը։ Քարոզի բովանդակությունից երևում է, որ նրա նպատակը միշտ էլ եղել է իր ազգին լուսավորության միջոցով մի նոր աստիճանի բարձրացնելը։ Քարոզի մեջ նա ասաց. «Ժողովրդի չարիք տգիտությունն է, տգետն միշտ պիտի չարչարվի. ժողովրդի մը չարչարանք գիտցեք, որ իր տգիտութենեն է։ Ապուշ մի լինիք, հասկացեք ինչ որ կխոսիմ, արդի աշխարհի իմաստասիրություն, փիլիսոփայություն կհաստատեն թե մի միայն ուսումն է օգտակար ժողովրդի համար։ Երանի թե մեր հազար վանքերի ու մատուռների տեղ դպրոցներ ունենայինք», «Վերջին կտակս ձեզ ուսում և դպրոց սիրեք»[168]։

1885 թ. հունիսի երեքին նա մայրաքաղաքում էր և մի քանի օր անց եկեղեցիներից մեկում կարդաց մի քարոզ, հորդորելով ժողովրդին դեպի «աշխատասիրություն և ի տնտեսագիտություն, որք միակ միջոցներն են թշվառությունը բառնալու աղքատ դասուն միջեն»[169]։ Մայրաքաղաքում Մ. Խրիմյանը կամա թե ակամա պետք է մասնակցեր այնտեղ եղած իրադարձություններին ու վեճերին, որոնցից մեկը Պեշիկթաշի հայկական գերեզմանոցը սուլթանի այգուն միացնելու հարցն էր։ 1887 թ. պալատից ստացված գրության համաձայն այն պետք է միացվեր սուլթանի այգուն։ Խնդիրը կենտրոնական ժողովի քննարկման հարց դարձավ։ Ժողովի ադմրկոտ նիստերում ոմանք առաջարկում էին մերժել պալատի խնդրանքը, իսկ Մ. Խրիմյանը և նրա կողմնակիցները առաջարկեցին «խնդիրն ուսումնասիրել և որոշում տալ ամենայն խոհեմությամբ»[170]։ Սակայն Մ. Խրիմյանի նույնիսկ այդ խոհեմ առաջարկությունը դիտվեց որպես ըմբոստություն թուրքական կառավարության և նրա գահակալի նկատմամբ և Շեյխ ու Իսլամը նրան բ. Դուռ կանչելով ասաց. «Դու արդեն ամբաստանյալ մարդ ես, ինչպես կը խառնվիս այդպես գործոց մեջ, կը դգուշացնեմ քեզ, որ չընդդիմանաս և երթաս պատրիարքի հետ համաձայնիս, որ գերեզմանատունը հանձնեն, եթե ոչ մեծ վնաս պիտի կրես...»[171]։ Այսքանից հետո պատրիարքարանը ու ժողովը ստիպված որոշում ընդունեցին գերեզմանատունը հանձնելու մասին, բայց սուլթանը տեղի տվեց և գերեզմանատունը դարձրեց այգի։

---

168 ԳԱԹ-ի արխիվ, Մ. Խրիմյանի ֆոնդ, վավ. № 875—162։

169 «Մասիս», 1885, № 3774, 15 հունիսի։

170 «Արձագանք», 1887, № 6, 22 փետրվարի։

171 Նույն տեղում, № 9, 15 մարտի։

Մայրաքաղաքում Մ. Խրիմյանին թուրքական ոստիկանությունը հանգիստ չէր տալիս։ Որոշ ժամանակ անց, 1890 թ. նա աքսորվեց Երուսաղեմ, որտեղ գրեց իր «Պապիկ և Թոռնիկ» գիրքը։

1880-ական թվականների կեսերին վախենալով ժողովրդի մեջ եղած խմորումներից, թուրքական կառավարությունը ամբողջ երկրով մեկ սկսեց իր համար անհաճո և կասկածելի մարդկանց բանտարկությունները։ Դրանից առաջ բանտարկվեցին Կարինի «Պաշտպան Հայրենյացի» 56 անդամները։ Ժամանակի մամուլը այդ կազմակերպության մասին գրել էր, որ նա ընդարձակ ճյուղեր ունեցող ապստամբական մի հսկա ընկերություն է եղել, որը «հատուկ գաղտնի տպարան ունի եղեր. մինչև այժմ հազարավոր անդամակիցներ ունեցեր է բայց թուրք կառավարությունն չի կրցեր իմանալ այդ գաղտնիքը»[172]։ Կառավարությունը սկսեց բանտարկությունները։ Դրանից հետո հետագրվում է Վանի փաշային, նշելով, որ եթե այդ ընկերության «գլխավոր անդամներ Վան ալ կան, պետք է խուզարկել և ձերբակալել»[173]։ Այդ հետագրից հետո Վանում սկսեցին խուզարկել հատկապես այն վաճառականների տները, որոնք կապեր ունեին էրզրումի հետ։ Ձերբակալությունները շարունակվեցին դրանից էլ շատ հետո, ամենուր 1886 թ. դեկտեմբերին բանտարկվեցին Մ. Սարըյանը և Մ. Նաթանյանը։ 1887 թ. դեկտեմբերին Կոստանդնուպոլսում բանտարկվեցին Մ. Ալեքսյանը (Թերլեմեզյան) և Գ. Ազվանյանը։ Ժամանակի դեպքերի ուսումնասիրությունից հետո չէ կռահել, որ հայ ժողովրդի ջարդերը կազմակերպելուց առաջ սուլթանը նպատակ ուներ հրապարակից հանել ազգային հովերով և հեղափոխական տրամադրություններով տրամադրված հայ մտավորականներին։

Հարց է առաջ գալիս, ունե՞ր արդյոք կապեր Կարինի «Պաշտպան Հայրենյաց» կազմակերպությունը իրենից առաջ գործող Վանի «Սև խաչի» հետ։ Ժամանակակիցներից մեզ հասած հուշերից երևում է, որ նրանք գործել են իրարից անկախ և միայն վերջում սկսեցին «թղթակցել, բայց ափսոս, որ շատ երկար չտևեց և մատնության գուժն Վան հասավ...»[174]։ Թե ինչպիսի թղթակցություններ են եղել այդ կազմակերպությունների միջև, ցավոք, այդ կապակցությամբ մեր կատարած պրպտումները ցայսօր ոչ մի արդյունք չեն տվել։ Պահպանվել է նաև տեղեկություն այն մա-

---

172 «Արձագանք», 1883, № 3։

173 Նույն տեղում։

174 Յ. Կ. Ճանկյուլյան, Հիշատակներ հայկական ճգնաժամեն, մասն Ա և Բ, Կ. Պոլիս, 1913, էջ 93։

սին, որ Վանի «Սև խաչ» կազմակերպությունը իր հավաքներից մեկի ժամանակ ընդունել է որոշում այն մասին, որ անհրաժեշտ է Վանից «դուրս փնտրել և գտնել ուրիշ կազմակերպություններ և անոնց հետ կապվիլ և թղթակցել»[175]: Ունեցավ «Սև խաչը» այդպիսի կապ թե ոչ, ցարդ անհայտ է:

1885 թ. պատրիարք Ն. Վարժապետյանի մահից, Մ. Խրիմյանի Վանից հեռացվելուց հետո սուլթանը և նրա շրջապատի պաշտոնյաները օրակարգի հարց դարձրին Վանի կազմակերպությանը լուրջ հարված հասցնելու խնդիրը: 1885 թ. հունիսի 3-ին կառավարական պաշտոնյաները փակեցին քաղաքի կեդրոնական վարժարանը, կնքեցին Վարագի տպարանը և սկսեցին տեղում եղած մտավորականների և կասկածելի մարդկանց բանտարկությունները: Վանից հեռացավ նաև Մ. Փորթուգալյանը, որը Կոստանդնուպոլսից անցավ Մարսել քաղաքը, որտեղ էլ 1885 թ. հունիսին սկսեց հրատարակել «Արմենիա» թերթը: Այդ թվին էլ հրապարակ էկավ Արմենական կուսակցությունը, որը հայ ժողովրդի կյանքում առաջին քաղաքական կուսակցությունն էր:

Ռուս-Թուրքական պատերազմից հետո Մ. Փորթուգալյանը Վանում ստեղծեց «Առաջադիմական միությունը», որի նպատակն էր թաղական ընկերությունների ժամանակ բնակչության մեջ լայն աշխատանք տանել աղատական կոչված թևկնածուների օգտին՝ ընդդեմ Պողոս Մելիքյանի և նրա կողմնակիցների: «Զինակիր» ընկերության նպատակը գաղտնի ճանապարհներով զենք ձեռք բերելն ու երիտասարդությանը զենք գործածել սովորեցնելն էր: Վանի երիտասարդների շրջանում այդ ժամանակ հատկապես մեծ ոգևորություն էին առաջացրել ռուս-թուրքական պատերազմից հետո Սան-Ստեֆանոյի և Բեռլինի կոնգրեսի 16 և 61 հոդվածները: Երիտասարդությունը այդ տարիներին գործում էր «Դեպի ժողովուրդ, ամեն բան ժողովրդի համար» նշանաբանով: Ռուսական բանակի սպա Նուխիի բնակիչ Սողոմոնյանի և սպայական դպրոցի սան Վարագի դպրոցի ուսուցիչ Վաղինակ Տրդատյանի Վանում երկու տարի մնալը շատ է օգնել «Զինակիր» խմբի մասնակիցներին՝ զենքի գործածությունը սովորեցնելու հարցում:

Արմենականները սկզբում առաջնորդվել են մի ծրագրով, որը կոչվել է «Վարդապետարան Հայաստանի ազատության», որտեղ հարց ու պատասխանի միջոցով արծարծված է արմենականների գաղափարները: Առաջին հարցն այն է՝ «ո՞վ պիտի ազատե Հայաստանը օտարների ձեռքեն»:

175 Նույն տեղում:

Պատասխան,— ինքը հայ ազգը պիտի ազատե Հայաստանը օտարների ձեռքեն»: Այնուհետև նրան հաջորդում է մյուս հարցը. «Ի՞նչ հնարներով» պատասխանը լինում է. «Հնարները զանազան են, նայելով հանգամանքին,— երբեմն սեպհական ղենքով, երբեմն փողով և երբեմն օտարների օգնությամբ»[176]: Տրվում է հաջորդ հարցը այն մասին, թե միթե Հայաստանը երբևիցե կարող է դառնալ հայերի սեփականությունը: Պատասխանի մեջ ասված է. «Այո՛, կարող է, և անշուշտ կը դառնա նա հայերի սեպհականությունը, եթե բոլոր հայերը՝ այր և կին, հարուստ և աղքատ, ծեր և պատանի, այնպես բաղձան և ձգտին Հայաստանի ազատության, ինչպես քաղցածը ձգտում է հացին և ծարավածը ջրին»[177]:

Հայաստանը Վարդապետարանը համարում է այն երկիրը, որը շրջապատում է Սևան, Վան և Ուրմիա ծովակները, իսկ սրանք էլ իրենց հերթին Մասիս լեռը: Հայերի թշնամիները նրանք են, ովքեր աշխատում են հայերին հեռացնել Հայաստանից:

Իսկական հայը նա է, որ անկեղծ իղձ ունի և նպաստում է «Հայաստանի անկախության»: Հայը ըստ Վարդապետարանի կարող է երջանիկ լինել միայն Հայաստանի մեջ «Վասնզի նա ամեն տեղ հալածված և արհամարհված պանդուխտ է, և միայն Հայաստանի մեջ նա պատվավոր մարդ է մարդկության աչքում»: Եվ հայերը օտար երկնակամարների տակ նմանվում են «օտարի տուն վարձողի, որն աշխատում է զարդարել այն տան պատերը, որից վաղ կամ ուշ դուրս պիտի ձգեն նորա օրինավոր տանուտերը»: Եվ եթե հայերը Հայաստանը չազատեն, ապա նրանք շատ շուտ «բնաջինջ կը լինեն աշխարհի երեսեն»[178]:

Հայի առաքինությունը պետք է լինի «յուր ստացվածքն ու արյունը նվիրել Հայաստանի ազատության ս. գործին». նա ամեն օր պետք է իր աղոթքում ասի. «Ո՛վ բարեգործ աստված, օգնե՛ ինձ Հայաստանը ազատելու», նրա նշանաբանը պետք է լինի. «Ազատություն կամ մահ»[179]: Սակայն ո՞վ պիտք է բարձրացնի սուրը և դրոշակը, երբ դրվի Հայաստանի ազատագրության հարցը. հաջորդում է պատասխանը. «Դրոշակը պիտի բարձրացնե հայ վարդապետը, իսկ սուրը բոլոր հայ պատանեկու-

---

176 Ամիտայի արձագանքներու վերակոչումն, Բ հատ., Տիգրան Մկունդ, Նյու Յորք, 1953, էջ 251:

177 Նույն տեղում:

178 Նույն տեղում, էջ 252:

179 Նույն տեղում, էջ 253:

թյունը, երիտասարդությունը և տղամարդիկ, 16 տարեկանից բռնած մինչև 45 տարեկանը»[180]։

Վարդապետարանը պահանջում է, որպեսզի հայերը զենք ձեռք բերեն, իսկ երիտասարդները զենք գործածել սովորեն և վերջապես հայ ազգի կրոնը և հաստատուն հավատը պետք է լինի «Հայաստանը պիտի ազատվի օտարի լծեն»։ Ով այս բանին հավատում է, նա է «ուղղափառ հայադավանը»[181] և այլն և այլն։

Ազատագրական պայքարի ժամանակ ընկածների հոգին գնում է արքայություն, անկողնի մեջ «մեռնելը հազարապատիկ ավելի դժվար է, քան պատերազմի դաշտում» և «եթե չես ուզում, որ թշնամին քեզ սպանե, դու ինքդ շտապե նորան սպանելու»[182]։

Վարդապետարանում խոսվում է նաև օտար երկրներում հայերի ունեցած հարստությունների, տիտղոսների, աստիճանների և շքանշանների մասին և ասվում է, որ օտարների մոտ գտնվող հայերի հարստությունը «ստրկի անեւուէթ, բայց ամենապինդ շղթա է, որով կաշկանդված են նորա ձեռները և ոտները», իսկ կոչումները և շքանշանները «ստրկության գլխադիրներ են ի տրիտուր իրենց կորցրած ազատության և հայրենիքի ուրացության»[183]։ «Հայոց հայրենասիրական միության» կանոնադրության մեջ ասված է, որ նրա «նպատակն է աշխատել վարչական բարենորոգումներ մտցնելու Թուրքահայաստանի մեջ, հայ ժողովրդի տեղական պետքերին համեմատ, իսկ միության օրգանը «Արմենիա» լրագիրն է[184]։ Բերված քաղվածքից անմիջապես երևում է, թե ինչպիսի տարբերություն կա վարդապետարանի և Հայոց հայրենասիրական միության ծրագրի մեջ, առաջինը պահանջում է զենքով ստանալ անկախությունը, իսկ երկրորդը գնում է դեպի ռեֆորմների ճանապարհը։ Ուսումնասիրողներից ոմանք սխալմամբ գտնում են, որ Արմենականները «սկզբից ևեթ չընդդիմացին հեղափոխական գործելակերպ, նրանք, եթե կարելի է ասել, ընդդիմադիրներ էին՝ կանգնած օրինական ճանապարհի վրա համարում էին իրենց Թուրքիայի քաղաքացի, ուրեմն չդրեցին ուրույն քաղաքական նպատակ»[185]։

---

180 Նույն տեղում, էջ 255։

181 Նույն տեղում, էջ 256։

182 Նույն տեղում, էջ 258։

183 Նույն տեղում։

184 Նույն տեղում, էջ 259։

185 Հայ քաղաքական մտքի զարգացումը և Հ. Յ. դաշնակցությունը, գրեց Գ. Գյուզալյան, Փարիզ, 1927, էջ 120։

Մ. Փորթուգալյանը Մարսելում հաստատվելուց հետո մինչև 1890-ական թվականների սկիզբը երկու անգամ հրատարակեց «Վարդապետարանը» և «Հայոց հայրենասիրական միության կանոնադրությունը»։ Վերջինիս սկզբում Մ. Փորթուգալյանը տպագրեց այդ միության հայտարարությունը, որի մեջ ասված է այն մասին, որ ժամանակն է, որպեսզի միությունը հայտարարի իր գոյությունը, քանի որ Թուրքիայում իր ժողովուրդը ապրում է ծանր վիճակում և Արևմտյան Հայաստանում «հաբեստահարությունները փոխանակ թեթևանալու կը բազմապատկվին», իսկ Թուրքական կառավարության նպատակն է հուսահատ վիճակում պահել հայ ժողովրդին և «հայության գաղափարը ջնջելու Հայաստանի մեջ»[186]։

Մ. Փորթուգալյանը կոչ էր անում Հայաստանից դուրս ապրող բոլոր հայերին անտարբեր չմնալ փաստերի նկատմամբ և օգնել Հայաստանի բնակիչներին «Հայաստանի մեջ նահատակվող իրենց եղբայրներին»՝ իմ մի բերել հայության ցրված ուժերը և միացնել «միևնույն գաղափարի ծառայող հայրենակիցներն, որպեսզի արդյունավորեն իրենց բաղձանքներ» և ապա «ամփոփել և կապակցել միևնույն գաղափարների և համոզման ծառայող հայ հայրենասերներն ու միությամբ առաջ բերել հայ ազգին մեջ բարոյական, ֆիզիքական և դրամական ուժեր, հայրենասիրական նպատակին նվիրված։ Պետք է բուն իսկ հայ ժողովրդին մեջ ոյժ գոյացունել իր ազատության համար, առանց ատոր օտարներե եղած օգնության անօգուտ կլինի և մինչև իսկ կրնա վնասակար դառնալ»[187]։

Հայտարարության մեջ ասված է, որ հայրենիքի ազատագրության գործը «շատ զոհեր պիտի պահանջե», սակայն չպետք է վհատվել և պետք է «առաջ ընթանալ իմանալով հանդերձ, որ ազատագրության գործի մասնակիցները կհալածվեն ոչ միայն Թուրքական իշխանություններից, այլև նույնիսկ իրենց հայրենակիցներե»[188]։ Այնուհետև հայտարարության վերջին մասում ասված է. «Մտածեցե՛ք. հայրենակիցնե՛ր, որ ձեր եղբայրներ ամեն օր կը հարստահարվին ձեր մայր-հայրենիքի մեջ, կը զրկվին իրենց ընտանիքներե, կը զրկվին իրենց կյանքե և իրենց հույս դրած են այժմ իրենց տարաբնակ հայ եղբայրների օգնության վրա»[189]։

---

186 Կանոնադրություն «Հայոց հայրենասիրական միության» երկրորդ տպագրություն, Մարսել, հայերեն տպարան, Մ. Փորթուգալյան, 1889, էջ 3—4։

187 Նույն տեղում, էջ 7։

188 Նույն տեղում, էջ 10։

189 Նույն տեղում, էջ 12։

Կանոնադրության սկզբում ասված է միության նպատակի և միջոցների մասին, այն է. «Վարչական բարենորոգումներ մտցնելու Թուրքահայաստանի մեջ», որով ժողովուրդը իրավունք ունենա ինքն իրեն կառավարելու, որով հնարավոր կլինի վերացնել «հարստահարությունները, որոնք այսօր Հայաստանի թշվառության և ավերակ դառնալու պատճառ կլինին»: Միությունը պետք է աշխատի «ներքին ուժեր գոյացնել ազգին մեջ» և հրատարակություններ և դիմումներ անել իր օրգան «Արմենիայի» մեջ[190]: Միությունը ունենալու էր իր վարչությունը և տնօրենը, երկու խորհրդական անդամ և երկու խորհրդական անդամ էլ նրան պետք է տա միության ընդհանուր ժողովը, որով ընկերության վարչական ժողովը տնօրենի հետ միասին կունենար 5 անձ, որոնք պարտադիր չէ, որ նույն վայրում գտնվեն: Տնօրենը կարող է մնալ իր պաշտոնին 7 տարի, իսկ վարչության անդամները տարին մեկ անգամ «տեղեկագիր ներկայացնելով» հրաժարվելու էին, սակայն կարող էին ընտրվել[191]:

Միությունը տարին մեկ անգամ պետք է հրավիրեր ընդհանուր ժողով, որտեղ պետք է ամփոփվեր նրա աշխատանքը և կարող էին ընտրվել ձայնատու նոր անդամներ և անհրաժեշտության դեպքում փոփոխություններ կմտցվեին կանոնադրության մեջ: Միության մեջ կարող էին մտնել բոլոր հայերն առանց երկրի, կրոնի և սեռի ընտրության: Միությունը ունենալու էր 3 կարգի անդամներ, որոնցից առաջինները կոչվելու էին հաջակերող անդամներ և պետք է մուծեին տարեկան 50 ֆրանկ անդամավճար, երկրորդ կարգի անդամները կոչվելու էին գործող անդամներ, տալու էին 20 ֆրանկ և վերջապես նվիրատուներ, որոնք 20 ֆրանկից պակաս անդամավճար պետք է տային: 500 ֆրանկ տվողները կոչվելու էին Պատվո անդամներ[192]:

Տվյալ վայրում գտնվող միության մի քանի անդամներ կարող էին միանալ և կազմել մի օթյակ, որոնք հաճախ պետք է հավաքվեին հայրենասիրական ընթերցումների, «միության գաղափարները տարածելու» և այլ հարցերի կապակցությամբ: Նրանք իրավունք ունեին վերևում ասված կանոնադրության հիման վրա ունենալ իրենց կանոնադրությունը, որը կազմվելու էր՝ ելնելով տեղական հանգամանքներից[193]: Միությունը պետք է ունենար իր գանձատունը և վերջապես հարկ եղած դեպ-

190 Նույն տեղում, էջ 13 և 14:
191 Նույն տեղում, էջ 15:
192 Նույն տեղում, էջ 17 և 20:
193 Նույն տեղում, էջ 23:

ռանոցը, չհողնելով քնելու անընդհատ 40—45 ժամ, շիկացած երկաթով «դաղմա» են դարկում նրա կողերին, թրջում են նրա առանձնարանի հատակը ձմեռ ժամանակ, չեն տաքացնում այդ գարշելի խցիկը և օրերով քաղցած պահում, գիշերները սաստիկ ծեծելով։ Շատ անգամ հանդուգն երիտասարդների մեջքից մինչև վիզը փաթաթում են 4—9 փթանոց ահագին շղթան, որի մի ծայրը քարշ էր գալիս հատակի վրա և շառաչում կամարների տակ»[31]։ Նոր կուսակալը ամեն տեղ հայտարարում էր, որ եթե մի տան մեջ հայ հայդուկ գտնվի, ապա նա կհրդեհի այդ տունը և տան տղամարդիկ 3 տարի և ավելի ժամանակով կբանտարկվեն, իսկ տան ունեցվածքը կդրավվի պետության կողմից[32]։ 1894 թ. Վան քաղաքում և շրջակա գյուղերում 2000 տուն խուզարկվեց, նույն թվականի մայիսի 9-ին փաշան Պողոս եպիսկոպոսի հետ, 50 ձիավորով գնաց Վարագ, խուզարկեց վանքը։

Անկասկած այդ բանտարկությունները կուսակալին նյութական մեծ օգուտներ էին բերում և միաժամանակ բարձրացնում նրա հեղինակությունը մայրաքաղաքի իշխանությունների առջև։ Պահրին սովորություն է ունեցել քայլելու ժամանակ իրենից առաջ քայլող չտեսնել, իսկ եթե մեկը հանդգներ այն, սկսվում էր «մտրակի շաչյուն, հայոյանք և ափոց՝ իրեն ընկերակցող ոստիկաններու և նույնիսկ էլ կողմանեն։ Քանիցս կառքով անցած ատեն վար իջած և մտրակի հարվածներ տեղացուցած է այն անմեղներուն գլխուն, որոնք՝ իր հրեշության անգիտակ՝ կը հանդգնեին եղեր փողոցի մյուս եղերքեն իրմե առաջ անցնիլ»[33]։ Այդ փաշայի արարքները մի պահ շշմեցրին Վանի արմենականներին «և ամբողջ հայ բնակչությանը»[34] նշում է ժամանակակիցը, սակայն բազմաթիվ բողոքները հասցրին նրան, որ փաշան 1895 թ. պաշտոնանկ եղավ և Կոստանդնուպոլիս մեկնելու ճանապարհին Տրապիզոնում վիրավորվեց հնչակյանների գնդակից։

1894—96 թթ. հայ ժողովրդի արևմտահայ հատվածի համար ողբերգական տարիներ էին։ 1894 թ. պատրիարքական աթոռին նստեց Մ. Իզմիրլյանը, որը մերժեց սուլթանից շքանշան ստանալ և թուրքական կառավարությանը դիմադրելու համար ստացավ «հերկաթյա պատրիարք» մականունը։ Իր անդրանիկ ճառի մեջ իր ժողովրդի ողբեր-

---

31 Նույն տեղում, 1894, № 7, մարտ։

32 Նույն տեղում, 1894, № 9, հուլիս։

33 Հ. Ութմյան, նշվ. աշխ., Ա հատոր, էջ 273։

34 «Պայքար», 1957, հունիս։

գությանը քաջատեղյակ պատրիարքը նշեց «Հպատակաց հավատարմությունը կախում ունի վայելած բարեկեցության և անդորրության չափեն. (ընդգծումը մերն է— Հ. Գ.)»[35]:

1894 թ. սուլթանի հրամանով թուրքական կանոնավոր զորքը և քրդական Համիդյե գնդերը հարձակվեցին Սասունի լեռնականների վրա, որոնք ստիպված անցան ինքնապաշտպանության, որը ճնշվելուց հետո Սասունի զմրուխտյա լեռներն ու կիրճերը ներկվեցին բնակիչների արյամբ: Եվրոպական պետությունների և Ռուսաստանի կառավարության աչքերին թոզ փչելու նպատակով սուլթանը 1895 թ. հրապարակի վրա դրեց մայիսյան ռեֆորմների նախագիծը, որն, իրավամբ, Մ. Խրիմյանը անվանեց «հայոց գերեզման», քանի որ նրա ընդունվելուց հետո հայկական գավառներում սկսվեցին հայ բնակիչների մասսայական կոտորածները, որին զոհ գնացին 300 հազար մարդ: Այս իրադարձությունները նկատի ունենալով Մ. Օրմանյանը իրավացիորեն ասաց. «Հայ տարրը չքացնելու գաղափարը ժամանակին կառավարության դիտակետը եղած էր անզոտին այն օրեն, որ հայկական խնդիր մը երևան եկավ»[36], ապա ասում է, որ սուլթանական կառավարության «բարձրագույն հրամանը իբր թե հայերը զսպելու համար էր, այլ նպատակ ուներ հայերը ջնջել...»[37]:

1895 թ. նոյեմբերի 4-ին էջմիածնի կաթողիկոսին գրած իր մի նամակում Իզմիրլյանը կոտորածների և հայության անագորույն վիճակի մասին գրում էր. «Կը հաստատեմ, թե ազետն սաստկագույն արագությամբ կընդհանրանա այլևս և կոտորածն ավարառություններով ու հրձգություններով հանդերձ կը կատարե իր ահռելի ու մոլեգին արշավն, գրեթե ընդհանուր հայաբնակ գավառաց մեջ, մեկ ծայրեն մյուսն և ափսո՜ս, ճիշտ այն միջոցին էր երբ բարենորոգումներ կը հռչակվին՝ որք կսկսին կոտորածովը և հայոց անհետացմամբ»[38]: Ապա Թուրքիայի հայոց քահանայապետը շարունակում է. «Ժամանակ մը ի վեր սկսած էին արդեն գավառներու մեջ տեղական իշխանությանց կողմե խուզարկվիլ հայոց տունն ու տեղը և կը կողոպտվեին անոնց ձեռքեն ամեն ինչ որ՝ մինչև հացի դանակը կրնային ծառայել անոնց ինքնապաշտպանության, կը լսվեին իսլամաց բերնեն սպառնալիքներ նոր սասուններ ստեղծելու

35 Հ. Ութմյան, նշվ. աշխ., էջ 273:

36 Մ. Օրմանյան, Հիշատակագիրք, պրակ առաջին, Կոստանդնուպոլիս, 1910, էջ 40:

37 Նույն տեղում:

38 Մատենադարան, կամ. դիվան, թղթ. 226ժա վավ. 115, թ. 1:

և կը տեսնվէին պատրաստութիւններ զանոնք գործադրելու»[39]: Այնուհետև Թուրքիայի հայերի իրական վիճակին քաջածանոթ պատրիարքը գրում է. «Հայաստանն ամբողջ, վեհափառ տեր, սպառնդարան է դարձած, ո՛չ քաղաքացիին, ո՛չ շինականին, ո՛չ կնոջ և ո՛չ մանկան կխնայվին»[40]: Իր ժողովրդի ծանր վիճակից վշտացած պատրիարքն այնուհետև ավելացնում է. «Փութացի աղերսել կրկին ու կրկին եվրոպական պետութեանց դեսպաններուն, որ միջամտեն ու արգելուն կոտորածն, որ քաղքե քաղաք, գյուղե գյուղ կը վազե արյան գետերու վրայե: Հոկտեմբերի 24-ին երեքշաբթի օր հազիվ բոլոր դեսպանք զատ զատ դիմելով 'ի Բ. Դռանը կը հայտարարեն, որ միջոցներ ի գործ դրվին անոնց առաջքն առնելու համար, եթե ոչ իրենք պիտի խորհին միջոցներն, սակայն արդյունքը չերևիր դեռ»[41]: 1895 թ. նոյեմբերի 24-ին Մ. Խրիմյանին ուղղած զեկուցագրում Գ. Իզմիրլյանը նորից գրում է, որ «Սոսկալի աղետն, որ կը դառնա բնաջինջ ընել Թուրքիո հայ ժողովուրդն» շարունակվում է ուժգնությամբ և ինքը գավառներից ստացել է շատ ու շատ նամակներ ու զեկուցագրեր ջարդերի մասին. «Կը գուժեն նորանոր նախճիրներ, հայտնի համարձակ գործված ղինվորներու ոստիկաններու, պաշտոնիաներու դրդումով կամ թողտվությամբ և կամ գործակցությամբ և ամենուրեք միաձև դրությամբ»[42]: Իր մի այլ նամակում՝ ուղղված Մ. Խրիմյանին, 1895 թ. դեկտեմբերի 15 (27)-ին պատրիարքը թախծալի տողեր է գրում իր հոտի անագորույն վիճակի մասին, «Իսկ քանի կրոնափոխություններ, կանանց և աղջիկ ու մանչ տղայոց առևանգությանց հետ և կրոնական սրբապղծություններ անցան իրենց չափն: Ամբողջ գյուղեր կան թրքացած իրենց քահանաներով. եկեղեցիները կամ այրված կամ քանդված և կամ մզկիթներու վերածված են, ուր մոլլաներ կվարդապետեն հաղթական մահմեդականությունը: Կան սրբավայրեր նաև գոմերու և զորանոցներու վերածված»[43]: Վերջապես պատրիարքը գալիս է ճիշտ եզրակացության, որ այդ ջարդերը «խաժամուժ ամբոխին կատաղության կամ վրեժխնդրության հետևանք չէին երբեք, այլ պարզապես բարձրեն արձակված հրամաններու գործադրություն էին»[44]:

---

39 Նույն տեղում, վավ. 202, թ. 1—2:
40 Նույն տեղում, թ. 2—3:
41 Նույն տեղում, վավ. 204, թ. 4:
42 Նույն տեղում, թ. 1:
43 Նույն տեղում, վավ. 204, թ. 2:
44 Մ. Օրմանյան, Խոհք և խոսք, էջ 176:

Սուլթանը այդ տարիներին ուժեղացրեց իր պանիսլամիստական քաղաքականությունը, որի կենտրոնը այդ ժամանակ նրա նստավայր Յըլդըզ պալատն էր։ Այդ գործում նա օգտագործեց Հալեպի փողոցներից պալատ բերված մի դերվիշի՝ Աբդուլ Գուդային, որը ամեն տեղ հայտարարում էր, որ աստղերի մեջ կարդացել է «սուլթանի փայլուն բախտի մասին, որին վիճակված էր լինել մեծագույն խալիֆ»[45]։ Սուլթանի պանիսլամիստական գաղափարները նրա կողմից առատ վարձատրվող այդ դերվիշը պրոպագանդում էր Հնդկաստանում, Պարսկաստանում, Եգիպտոսում և այլուր, դառնալով մուսուլմանական ֆանատիզմը զրգռողներից մեկը։

Պահպանված վավերագրերից երևում է, որ պատրիարքը դիմել է ամեն տեղ՝ Բ. Դուռ, եվրոպական և ռուսական դեսպաններին, սակայն ջարդերը շարունակվեցին ոչ միայն 1895, այլև 1896 թ. և ոչ ոք չփորձեց դրանց առաջն առնել։ 1896 թ. փետրվարի 7-ին կաթողիկոսին գրած մի այլ նամակում Մ. Իզմիրլյանը նշում է կոտորածների և հայ ժողովրդի կրած հսկայական նյութական վնասի մասին, միաժամանակ հայտնում, որ այդ բոլորը ամփոփելով «Հատուկ տեղեկագրով մի ծանուցի մեծին Բրիտանիո, Գաղիո և Գերմանիո մեջ գտնվող բոլոր դեսպանաց, ճշգրիտ տեղեկություն մը հաղորդելու համար տեղի ունեցած վերջին ամենասխուր դեպքերի մասին։ Միևնույն տեղեկագրեն մեկ մեկ օրինակ մատադիր եմ ուղարկել ռուսաց սինոդականաց և այլ ռուս եկեղեցականաց»[46]։ Այդ տեղեկագրի մի օրինակը ուղարկվեց ռուսաց սինոդի անդամներին և այլ եկեղեցականների, թե ոչ՝ հայտնի չէ, սակայն 1896 թ. Վասպուրականում սկսվեց ժողովրդի ջարդը, որին հաջորդեց Վանի բնակիչների հերոսական ինքնապաշտպանությունը։

Ժամանակի մամուլի էջերում կան բազմաթիվ վավերագրեր և հուշեր Թուրքիայի հայաբնակ գավառների, Արևմտյան Հայաստանի և նրա մեջ մտնող Վասպուրականի հայության զարհուրելի կոտորածի մասին։ 1895 թ. հոկտեմբերի 25-ին Վանի պատրիարքական փոխանորդ Սահակ Բագրեւանդյանցը պատրիարքին ուղարկած իր մի տեղեկագրում հայտնում է այն սարսափների մասին, որ կրեց Արճեշի ժողովուրդը։ Բացի Արճեշ գյուղաքաղաքից կողոպտվեցին 16 գյուղեր, որոնց կենդանի մնացած բնակիչները ցրվեցին զանազան կողմեր։ Ջեկուցագրի մեջ այդ ժամանակաշրջանի իրադարձությունների մասին կարդում ենք. «Արճեշո

---

45 «Мир божий», август, 1897, стр. 44.

46 Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 236ժա, վավ. 115։

գավառի 17 գյուղերին զատ, որ ցարդ անվնաս կը համարվին, մնացորդ 16 գլխավոր ու զուտ հայաբնակ գյուղորայք նմանապես բոլորովին ավարի զարկված, ոմանք սպանյալ ոմանք վիրավոր բնակիչք ամբողջովին մերկ ու նոթի ցրվեցան կը թափառին»[47]: Նույն փոխանորդի 1895 թ. հոկտեմբերի 26-ին գրած մի այլ տեղեկագրից հայտնի է դառնում, որ Արճեշի ժողովրդից 2000 հոգի թողնելով գյուղերը, տեղավորվեցին ս. Էջմիածին անապատի մենաստանում:

1896 թ. սկզբներին քրդական ուժերը սկսեցին Սպարկերտ և Խիզան գավառների հայկական գյուղերի թալանը և բնակիչների կոտորածը, միայն Սպարկերտում սպանեցին 225, իսկ Խիզանում՝ 96 հոգի[48]: Թալանից և սպանություններից զերծ չմնացին նաև Սարայի ասորական գյուղերը, որտեղ թուրքական ուժերը ավերեցին 12 գյուղեր, «կանանց բռնաբարեցին, ոչխար, տավար, ցորեն ամեն բան սրբեցին ի բաց առյալ մի քանի գյուղեր, որ դիմադրության պատճառով թալանը կիսով չափ եղավ»[49]:

1896 թ. գարնանից Վանում օրօրի սկսեց ավելանալ թուրքական բանակի ուժերի թիվը և միայն Այգեստանում կար թուրքական 22 պահականոց: Շրջակա գյուղերի բնակիչներից շատերը ազատվելով կոտորածներից և կոահելով կառավարության ապագա մտադրությունները, սկսեցին կուտակվել քաղաքում: Անգլիական հյուպատոս Հերվարդը սկսեց նրանց համոզել, որպեսզի գյուղերը վերադառնան: Սակայն այդ գյուղերում ոչ տուն կար, ոչ ուտելիք, քանի որ տները ավերվել, իսկ ուտելիքն ու անասունները թալանվել էին քրդական և թուրքական ուժերի կողմից: Հյուպատոսը խոստանում էր նրանց թուրքական կառավարության օգնությունը, այդ կապակցությամբ Բողազ Քյասանի ռես Թամոն նրան պատասխանում է. «Երբ մեր գյուղերն ավերում, մեր կանանց փախցնում էին, զորքն ու զապթիան մեզ մոտ էին և անել տվողը նրանք էին: Մենք երբե՛ք հավատ չունենք կառավարության վրա»: Լսելով նրանց, հյուպատոսը համոզում է գյուղացիներին վաճառել իրենց հողերը և գաղթել Բաբերդ: Դրանից հետո Սպարկերտի ռես Շաշոն հյուպատոսին ասում է. «Մենք մեր հողերը երբեք չենք ծախիլ. թողնք մեզ մեր հողերի վրա մեռնենք: Կառավարությանը չենք հավատում, եթե դուք այդչափ հավատ ունիք թուրքի և քուրդի վրա՝ հադեք քեազախիկը, պրեք իմ քո-

---

47 ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի ֆոնդ, ց. 1, գ. 144, թ. 14:

48 «Դրոշակ», 1896, № 8, 10 մարտ:

49 Նույն տեղում, 1896, № 14, 1 հունիս:

լողը և 2 ժամ քաղաքից հեռացեք, եթե դուք սալամաթ դարձաք, ձեր գլուխը ձեր վրան մնաց, մենք ամենքս կը վաղենք մեր ավերակ դրոնները»[50]։

1895 թ. վերջերին և 1896 թ. սկզբներին Վանի նահանգի Զախոզ, Ծողտու, Տապ, Խրոտենց, Միչկանց, Մուլք-Դիճի, Արգինց և Հախտ գյուղերի բնակիչներին սպառնալիքի տակ ստիպեցին ընդունել մահմեդական կրոնը։ Նույն բանը շատ չանցած արվեց նաև Փայխներ, Նարեկ, Վերին Սարին, Շադոսեն, Վարենց, Փիշավկանք, Պատականց, Դելոզ, Սմբոն, Ուղուց, Բիկանց և այլ գյուղերի բնակիչների նկատմամբ։ Սորը գյուղում ջարդարարները անդամահատեցին Պետրոս վարդապետին։ Հափշտակվեցին և առևանգվեցին զգալի թվով կանայք և աղջիկներ[51]։ Հայոց ձորից բալանվեցին 25 գյուղեր, սպանվեցին 19 հոգի, իսկ Կարճկանից՝ 27 գյուղեր և սպանվեցին 11 հոգի[52]։ Թուրքական կառավարությունը ավելի ու ավելի ֆշնամական էր դարձնում հայ-քրդական, առանց այն էլ սրված հարաբերությունները։ Երկու հարևան ժողովուրդների միջև սիրող ֆշնամությունը ձևնտու էր թուրքական կառավարությանը։ Սուլթանը ոչ միայն չէր մտածում այն բարելավելու մասին, այլև շահագրգռված էր պաշտպանել և ավելի խորացնել երկու ժողովուրդների միջև եղած ֆշնամանքը նաև ապագայում[53]։ Ռուսական փոխհյուպատոս Վլ. Մաևսկու կարծիքով հայկական ազգային կուսակցությունները Թուրքիայի դեմ պայքարելու նպատակով դիմում էին արևմտաեվրոպական պետություններին[54]։ Ինչ խոսք, այս հարցում ռուսական դիվանագետը ճիշտ չէ, քանի որ եթե հայկական կուսակցությունների անդամների մի մասը այդպես էր մտածում, ապա ամբողջ Արևմտյան Հայաստանի բնակիչները միայն ռուսական կողմնորոշում ունեին։

1895 թ. հոկտեմբերին սկսվեց բիբլիսահայության կոտորածը, որը գլխավորում էր սուլթանի օգնականներից մեկը՝ Սաաեդդին փաշան, որին հանձնարարված էր իրականացնել նաև Վասպուրականի հայերի ջարդը։ Իսլամացած այս մշեցի հային հաջողվել էր Կոստանդնուպոլսի փաշաներից մեկի միջոցով սատանալ ժամանակի լավ կրթություն և հասնել մինչև սուլթանի օգնականի պաշտոնին։ Այդ փաշայի ժամանման և նրա նպատակների մասին արխիվային մի վավերագրում կարդում ենք. «8 Հուն-

50 «Դրոշակ», 1896, № 13, 15 մայիսի։

51 «Արարատ», 1896, № 2, փետրվար, էջ 88—89։

52 Նույն տեղում, 1896, մայիս, էջ 247։

53 Ванский вилает, составитель В. Т. Маевский, Тифлис, 1901, стр. 189.

54 Նույն տեղում, էջ 190։

վարեն սկսյալ վեհ. սուլթանի բարեկարգիչ գոմիսեր Սաադ-էդ-դին փաշան արդեն եկած էր, անոր վարմունքը և բռնած ուղղությունը հետզհետե ավելի գրգիռ և խրախույս տվին խուժանի վրեժխնդրական զգացմանց։ Անցյալ ամռան մեջ բարձրագույն հրամանով Կ. Պոլիս կանչված էր նա, թերևս իր ներկայությունը այստեղ կարևոր ցուցնելու նպատակավ էր, որ այլևս չուզեց ուշացնել այն չարիքը, որ այս երկրին հասցնելու եկած էր...։ Նա այնչափ հառաջ գնաց, որ մինչև իսկ չվարանեցավ իր տուն հյուր ընդունել հռչակավոր ավազակապետ Շաքիրը, և երկու օր ամեն կերպ պատիվներով հյուրասիրել այդ չարագործը...»[55]։

Բաղոնի վարդապետի՝ մամուլում տպագրված մի հոդվածի համաձայն Վանի Նազըմ փաշան 1895 թ. Կոստանդնուպոլսից մի հեռագիր էր ստացել, որով պահանջում էր՝ «կոտորել հայերին, չխնայել տղամարդկանց, այրել նոցա տները, ավարի ու կողոպուտի ենթարկել նոցա կայքը, միայն կարելին եղածին չափ խնայել կանանց կյանքին»[56]։ Արխիվային մի վավերագրում նշված է, որ «Թեև Վանի կուսակալ Նազըմ փաշային ճանիցս կոտորելու հեռագիրներ եկան (ընդգծումը մերն է— Հ. Պ.), սակայն հայասեր կուսակալ միշտ ձգձգեց պատճառաբանելով, թե տեղվույս հայեր անմատչելի դիրք մը բռնած են, տուներու մեջ փակված ինքնապաշտպանության կը պատրաստվին»[57]։ Այս վավերագիրը ասում է այն մասին, որ մայրաքաղաքից ոչ թե մեկ, այլ մի քանի հեռագրեր են եկել փաշային՝ Վանի բնակչությանը կոտորելու մասին, սակայն նա չի գնացել դրան և ընդհակառակը, Սաադեդդինի Վան ժամանելուց հետո հասկացնում էր Վանի հայ վերնախավին, որ այդ օրերին մահացած խաչատուր կաթողիկոսի ունեցած 1500 ոսկով կաշառեն Սաադեդդինին և դրանով արագացնեն նրա մեկնումը։ Սակայն այդ նրանց չհաջողվեց և Վասպուրականի հայության առջև իր սև կերպարանքով սկսեց երևալ սպասվող կոտորածի ահավոր վտանգը։

Սաադեդդինը Վան գալուց շատ չանցած խլեց Նազըմ փաշայի իրավունքները, թաղերում հաստատեց ոստիկանական նոր կայաններ և խիստ հսկողություն սահմանեց հայ երիտասարդության վրա։ «Անձամբ հաճախակի սկսավ քննել հայ թաղերու աշխարհագրական դիրքերը, կարևոր շենքերը և այն պողոտաները, որոնցմե կարելի էր խուժել հայկական թաղամասները»[58]։ Ջարդի մասին ունեցած իր մտահղացումների

55 ԳԱԹ-ի արխիվ, Հ. Առաքելյանի ֆոնդ, վավ. № 144, էջ 1։
56 «Արաքս», 1897, գիրք Բ, էջ 103։
57 ԳԱԹ-ի արխիվ, Հ. Առաքելյանի ֆոնդ, վավ. 155, էջ 1։
58 «Պայքար» (Ամերիկա), 1957, հունիս։

մասին սկսեց խորհրդակցել Վանում գտնվող դիվանագիտական գնդերի պետերի և քրդական համիդյենների ղեկավարների հետ։ Այսպիսով Վան ժամանած «Աբդուլ Համիդի սիրելի Սաաեդդին փաշան հատուկ նպատակ ուներ ջարդել հայերին»[59] և այդ նպատակի իրագործման ճանապարհին դիմում էր ամեն միջոցի։ Ըստ քուրդ մի հիսնապետի վկայության, նա այցելում էր Համիդյե գնդերի պետերին և նրանց հրահրում կենսագործել Վանի հայերի կոտորածը։ Հիսնապետի վկայությամբ Սաաեդդինը այցելելով Համիդյե գնդի ղեկավարին, կարգադրեց որպեսզի հայերին կոտորելու մասին հեռագիր ստանալուն պես «համիդյե հեծյալներով ճամբա ելնեք և պատահած հայ գյուղերը կոտորելեն հետո Վան քաղաքը կը լցվիք, որպեսզի ջնջեմք այն քաֆիրներ, որոնք կուզեն թագավորության ձեռք բերել և իշխել մուսուլմաններու վրա, որչափ կրնաք անխնա և աներկյուղ կոտորեցեք, իսկ քաղաքի ամբողջ ավար և հարստություն ձեզ համար է»[60]։ Այնուհետև նույն քուրդը շարունակում է. «Վերջապես մայիսի 31-ին եկավ սուլթանի դժոխքի մուրով գրված հեռագիրը, որ վճռակի և անհապաղ Վանա կոտորածը կը պահանջեր»[61]։

1896 թ. մայիսին Սաաեդդինը կանչվեց Կոստանդնուպոլիս և համապատասխան ցուցումներ ստանալուց հետո Վան վերադարձավ, մեկուսացրեց Նազըմ փաշային «իբրև մի թույլ մարդու, որ յուր վարմունքով խրախուսելիս է եղել հեղափոխականներին»[62]։ Իմանալով մայրաքաղաքից ժամանած Սաաեդդինի տրամադրությունները տեղացի թուրքերը Նազըմ փաշային և Վանի ղորքերի հրամանատար Մուստաֆա փաշային այսպես են բնութագրել. «Ասոնցմե առաջինը իր խաղաղասիրության համար նազարեթ, իսկ երկրորդը՝ բաղտաբար զարգացած մեկն ըլլալուն՝ Քիբապսըզ կը կոչվեր թուրքերեն։ Այս երկու բանիմաց պաշտոնյաները կրցած էին գնահատել երկրի իրական պայմանները և մեկ կողմ թողուլ Համիդի հրահանգները»[63]։

Սաաեդդինի պլանի համաձայն Վան քաղաքի բնակիչների կոտորածը պետք է սկսվեր մայիսի 31-ին շուկայից, որի մասին հայերին նախազգուշացրել էին թուրքերից ոմանք, սակայն Ղուրբան Հայրամի տոնի պատճառով շուկան «այդ և հաջորդ օրերը գոց էր և կոտորածը ըստ երե-

---

59 «Армянский Вестник», М., № 6, 6 марта, 1916, с. 4.

60 ԳԱԹ-ի արխիվ, Հ. Առաքելյանի ֆոնդ, վավ. 155, էջ 3։

61 Նույն տեղում։

62 «Արարատ», 1896, հուլիս, էջ 382։

63 Յուշեր Արմենակ Եկարյանի, Գահիրե, 1947, էջ 65։

վուլթին հետաձգվեցավ»[64]։ Մայիսի հինգին թուրքական ոստիկանությանը վերջապես հայտնի է դառնում, որ Վանի վանքերից մեկում 8 զինված հայ կա։ Այնտեղ ուղարկում են 177 զինվոր, որոնց և թաքնվածների միջև սկսվում է հրաձգություն, որից հետո վանքում ապաստանածներին հաջողվում է հեռանալ այնտեղից։ Այդ օրերի կապակցությամբ «Մշակում» կարդում ենք. «Լեռներ ու ձորեր թուրք զորքերով պաշարված են, շատ տեղ հաղորդակցությունը անկարելի դարձած է, նորանոր աղետներու պատահումն կը վախցվի։ Գյուղերուն վիճակը անտանելի է, բան գործ ձգած ամենքն ալ սպասողական վիճակի մեջ են, մոտալուտ հարձակումներու սարսափին տակ ընկճված»[65]։

Ինքնապաշտպանական կռիվներից մի քանի տարի առաջ 1892 թ. Վանի դաշնակցականները հրավիրեցին միջկուսակցական ժողով, որին մասնակցում էին քաղաքում եղած երեք կուսակցությունների ներկայացուցիչները։ Այդ ժողովում արմենականները, որոնք քաղաքում և նահանգում մեծամասնություն էին կազմում, դոնում էին, որ ժողովրդին ազատելու և ազատ հայրենիք ունենալու համար անհրաժեշտ է ժողովրդին նախապատրաստել և այն էլ երկար ժամանակ, քանի որ ժողովուրդը դեռևս պատրաստ չէ հեղափոխական գաղափարների համար «և որ նախ՝ պետք է ժողովուրդը պատրաստել դպրոցներով, խաղաղ միջոցներով և ապա միայն մտածել հեղափոխության մասին»[66]։ Դաշնակցականները Պետոյի (Ալեքսանդր Պետրոսյան, Արճակցի, Կարիպ) ղեկավորությամբ պահանջում էին արմենականներից «տատացիորեն հպատակվիլ իր բոլոր ցուցումներուն որպես կենտրոնական մարմնի»[67], սակայն արմենականները մերժեցին նրանց առաջարկը, գտնելով, որ ինչպես դաշնակցականները, այնպես էլ հնչակյանները երկրից դուրս են գտնվում և «թերթեր հանելն և դիրար վարկաբեկելն անդին չեն անցնիր, եթե չհաշվենք մեծածախս կեդրոնական մարմիններուն գոյությունը, որոնց հարուցած գայթակղությունները ամենուս ծանոթ են»[68]։

Վանի հնչակյանների ղեկավարն էր Մարտիրոս (Մարտիկ) Սարուխանյանը, որը քաղաքում և նրա շրջակա գյուղերում հայտնի էր որպես Մարտիկ Լևոնյան։ Շուշիում ծնված այդ երիտասարդը ավարտել էր տեղի ռեալական դպրոցը, ապա սովորել Պետերբուրգի բարձրագույն մեքե-

64 «Արարատ», 1896, օգոստոս, էջ 382։
65 «Մշակ», 1896, № 64, 4 հունիսի։
66 Արամը, մահվան հիսնամյակի առթիվ, Լիբանան, 1969, էջ 24։
67 Ա. Եկարյանի հուշերը, էջ 42։
68 Նույն տեղում։

նագիտական դպրոցում, որից հետո անցել էր Ժնև և 1895 թ. հայտնվել Վանում: Ինչպես Մարտիկը, այնպես էլ Վանի մնացած հնչակյանները միամտաբար կարծում էին, որ եթե թուրքական և քրդական ուժերը քաղաքում կոտորած առաջացնեն, ապա այս անգամ եվրոպական պետությունները սեղանի վրա կդնեն և կլուծեն հայկական հարցը:

Վան քաղաքում վերևում ասված երկու կուսակցությունները շատ սահմանափակ հետևորդներ ունեին, այնտեղ ստվար թիվ էին կազմում արմենական կուսակցության անդամները, որոնց ղեկավարը՝ Մկրտիչ (Մարտիկ) Ավետիսյանը (Թերլեմեզյան) «Երիտասարդության վրա մեծ հմայք ուներ»[69]: Թերլեմեզյան գերդաստանը քաղաքի ամենաազդեցիկներից մեկն էր և ըստ Փ. Թերլեմեզյանի, մի քանի հարյուր տարի առաջ Վան էր գաղթել Մոկսի Թալամազ գյուղից: Եղբայրներից կրտսերը՝ Կարապետը գնդակահարվեց թուրքական իշխանությունների կողմից, իսկ Մկրտիչը և Գրիգորը զոհվեցին 1896 թ. Բարդուղիմիոս առաքյալի վանքի կռիվներում[70]:

Մկրտիչ Ավետիսյանը (ազգանունը ժառանգել է հոր անունից) Վանի վարժապետանոցի սաներից էր և Մ. Փորթուգալյանի ամենասիրած աշակերտներից մեկը: Մայրենի լեզվից բացի, տիրապետում էր ֆրանսերենին, անգլերենին և թուրքերենին: Ականատեսն այդ երիտասարդի մասին գրում է. «Միջահասակ, վայելչակազմ, խոհուն, խոշոր աչքերով, սրածայր մորուքով երիտասարդ էր Մ. Ավետիսյան, մեղմ ժպիտ մը կընկերանար թախիծի մը և կիշխեր իր նայվածքին»[71]: 1885 թ. թուրքական ոստիկանության հետ պատահած մի անախորժության պատճառով նա թողնց հայրենի Վանը և անցավ Պարսկաստան, ապա Կոստանդնուպոլիս, որտեղ բանտարկվեց և աքսորվեց: Ճանապարհին նրան հաջողվեց փախչել և անցնել Մարսել՝ Մ. Փորթուգալյանի մոտ, որտեղից էլ Ամերիկա: 1890 թ. Մ. Ա. ստորագրությամբ հրատարակեց «Թուրքիայի հայերը և նրանց դրացինները» արժեքավոր գրքույկը: Նյու Յորքում նրա ջանքերով հիմնվեց առաջին հայկական գրադարանը:

Դեռևս Վանում եղած ժամանակ նա բաց էր արել կիրակնօրյա դպրոց, որտեղ 3 ժամ դաս էր արվում, իսկ «մնացած ժամերը խաղի և մրցումների հատկացնում»[72]: Այս նշանակում է, որ նա վաղուց ղգացել

---

69 Հ. Նրամյան, նշվ. աշխ., Ա հատ., էջ 354:

70 Փ. Թերլեմեզյանի հուշերը, թ. 4:

71 Ա. Դարբինյան, նշվ. աշխ., էջ 43:

72 Փ. Թերլեմեզյանի հուշերը, թ. 127:

էր նախապատրաստվող ապագա կոտորածների վտանգը և սկսել էր մըրցումների միջոցով մարզել երիտասարդներին։ Դպրոցը, սակայն, փակվեց, քանի որ Վանի վերնախավի մի քանի անդամներ դիմեցին կուսակալին և բողոքեցին, թե այդ դպրոցը «հեղափոխական մտքեր է տարածում ժողովրդի մեջ»[73]։ Մ. Ավետիսյանը ժամանակի մամուլում («Արմենիա», «Մշակ», «Արձագանք») հանդես է եկել բազմաթիվ հոդվածներով։ Նրա մասին հոբինվել են շատ երգեր։

Մ. Ավետիսյանը համառ ու քրտնաջան լուսավորական աշխատանք է տարել սալմաստահայության շրջանում։ Նա Սալմաստի հայ վարժարանների ուսումնական տեսուչն էր, Ա. Եկարյանի կարծիքով «կազմակերպչական գերազանց հատկություններով այս մեծ մարդը, իր անուշ բնավորությամբը, շուտով մագնիսացուց տեղացի հայությանը, արթնացուց անոր մեջ հայրենասիրության սրբազան հուրը՝ սթափեցնելով զայն այն խորը քունեն ու խավարեն, ուրկե շատոնց դուրս եկած էին տաճկահայերն ու ռուսահայերը»[74]։ 1895 թ. հունվարին նրա ջանքերով Հաֆթվանի օրիորդաց դպրոցի շենքում բեմադրվեց Պ. Դուրյանի «Սև հողեր» ողբերգությունը և «Սուտ եղնավոր» կատակերգությունը, որոնցից առաջինը արարատյան և երկրորդը Սալմաստի բարբառներով։ Ըստ ժամանակակիցների, այդ ներկայացումները տրվեցին ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց համար, «հասարակությունը շատ գոհ սրտով հեռացավ, հայտնելով պ. Մ. Ավետիսյանին իր ջերմ շնորհակալությունը»[75]։

Լուսավորական աշխատանքներ տանելու հետ Մ. Ավետիսյանը ուշադրություն էր դարձնում նաև Սալմաստի գյուղացիների սոցիալական և տնտեսական հարցերին։ Հաֆթվան գյուղում նա նկատեց, որ պարսիկ խանը, որին պատկանում էր գյուղը, ժողովրդից անօրինական հարկեր էր պահանջում և որոշեց դնպել այդ ավատատիրի ախորժակը։ Նրա խորհրդով գյուղի բնակիչներն ըմբոստացան խանի դեմ և հավաքվելով նրա իշխանի առջև, ասացին, որ «չենք կարող քո տուրքերը վճարել, անիրավություններ շատ կրնես, հեռացիր այս տեղեն»[76]։ Տեսնելով գյուղացիների վրդովմունքը և զայրույթը, խանը ստիպված թողեց և հեռացավ։ Նույն օրը գյուղացիների անունից մի հեռագիր ուղարկվեց Թավրիզ

---

73 Նույն տեղում, թ. 128։

74 Յուշեր Արմենակ Եկարյանի, Գահիրե, 1947, էջ 26։

75 «Արձագանք», 1895, № 18, 15 (27) փետրվար։

76 Ս. Դարբինյան, նշվ. աշխ., էջ 44։

գյուղը գյուղացիները գնեցին կառավարությունից, խանը այնտեղ այլևս մուտք չուներ։ Սալմաստում աշխատած ժամանակ նա «ամեն գյուղի մեջ նշանակեց մարմիններ՝ տեղական խնդիրները քննելու և վճռելու համար, որպեսզի ժողովուրդը կառավարության գռները ափ չառնի և չհողոպտվի անխիղճ պաշտոնյաներեն»[77]։

1895 թ. երբ Մ. Խրիմյանը Պետերբուրգում էր և ցարին հանձնեց արևմտահայերի ծանր վիճակի և Սասունի կոտորածի մասին իր խնդրագիրը, Մ. Ալեխսյանը որպես «Արմենիայի» թղթակից նրա շքախմբում էր։ Այդ օրերին Կարապետ Սղյանը նրան առաջարկում է իբրև լեզուների պետական միլիոնատեր Տատուրյանի հետ Լոնդոն գնալ և այնտեղ պրոպագանդել հայկական հարցը, սակայն «նա մերժեց, առարկելով՝ որ ինքը Ազգապատկանի դպրոցների կրթական տեսուչը լինելով՝ իր գործը ավելի իրական և ավելի օգտակար է համարում»[78]։ Ժամանակակիցների վկայությամբ, Մ. Ալեխսյանը «սկսեց քիմիայով զբաղվել և պայթուցիկներ պատրաստել Հայաստանի ապագա ապստամբության համար»[79]։

Պետերբուրգից վերադառնալով Պարսկաստան, նա կռահեց, որ հայրենի քաղաքի և Վասպուրականի ժողովրդի գլխին սև ամպեր են կուտակվել, թողեց ամեն ինչ և հայտնվեց Վանում։ Նրա այնտեղ երևալու հետ արմենականները ոգևորվեցին և սկսեցին ժողովրդին պինել ինքնապաշտպանության համար։ Ժամանակակիցների հուշերից երևում է, որ 1896 թ. խաղաղունչ ձմռան պատճառով նյութական վատ վիճակում գտնվող և թալանված գյուղերի բնակիչներն ընտանիքներով տեղափոխվում են քաղաք։ Տեղի բնակիչները ստիպված էին իրենց միջոցներից նրանց համար մասնահանումներ կատարել։ 1896 թ. մարտ ամսին Վանում տեղի ունեցած երկրաշարժը ավելի հուսահատ դրության հասցրեց առանց այն էլ ծանր վիճակում գտնվող ժողովրդին։ Մարտի վերջին քաղաքի շուկան փակված էր։ Կառավարական պաշտոնյանները ամիսներ ի վեր աշխատավարձ չէին ստացել, իսկ «կառավարական սնդուկն ալ բոլորովին պարպված է,— ասված է մամուլում տպված մի հոդվածում,— կը հավաստեն թե օրական 600 ծախուց հանդեպ՝ եկամուտեն 6 ոսկի միայն կը գանձվի, իսկ այս օրական 6 ոսկիը մուտքը հազիվ կուսակալի ամսականը գոցե, ո՞ւր կմնան հապա ամբողջ վիլայեթի, վարչական, դատաստանական, զինվորական և այլ ծաղքերը»[80]։

77 Նույն տեղում։
78 Փ. Թերլեմեզյանի հուշերը, թ. 208։
79 «Հայրենիք», 1939, № 4 (196), փետրվար։
80 «Մշակ», 1896, № 45, 20 ապրիլի։

Սաաեդդին փաշան Վասպուրականի բնակիչների կոտորածները սկսեց գավառներից և հրահանգեց քուրդ վերնախավին թալանել հայ գյուղերը, սպանել նրանց բնակիչներին: Այդ նպատակի համար քրդական ցեղերին նոր տիպի զենքեր և հրազեն բաժանվեց: Միայն Թեքուրլի, Մուկուրլի, Միլանլի, Շակլի, Հայդարանլի և Շիկյաֆիի ցեղերին տրվեց յուրաքանչյուր 100-ին 150 հրացան, ընդհանուր թվով 750[81]:

1896 թ. հունիսի 1-ին ռուսական փոխհյուպատոս Վլ. Մաևսկին անցավ Կոլկաս: Սաաեդդինը սկսեց բանտարկությունները: Պարսկաստանից դեպի Վան եկող քրդերի և թուրքական ոստիկանների միջև սկսված ընդհարումը վերագրվեց հայերին, որը և պատրվակ դարձավ արագացնելու կոտորածը: Ընդհարման ժամանակ սպանված մի ոստիկանի դիակը և վիրավորներից մեկը ցուցադրվեցին քաղաքի փողոցներում, նպատակ ունենալով զրգռել մուսուլման ժողովրդի մոլեռանդությունը: Վանի զորահրամանատար Հալիմի կարգադրությամբ այդ օրը մի քանի հայեր սպանվեցին, իսկ 1896 թ. հունիսի 3-ին սկսվեց քաղաքի անդեն բնակչության կոտորածը: Առաջին օրը Հայկավանքի, Թորոմանի, Կլոր դարի, ս. Հակոբի և Շանոյի դարի հայաբնակ թաղերը ամբողջովին զոհ գնացին թուրքական բարբարոսության: Ջինված ուժերը չխնայեցին կանանց և երեխաներին և ջարդեցին նրանց «կացիններով, փայտերով, սուրերով և խանչալներով, շատերն ալ ողջ-ողջ վառվող թոնիրներ ձգելով»[82]: Ջարդարարները բնակիչներին սպանելու հետ միասին թալանում և այրում էին նրանց տները:

Սակայն գտնվեցին քաղաքում թուրքեր և գյուղերում քուրդ բնակիչներ, որոնք ոչ միայն չմասնակցեցին ջարդին, այլ իրենց հարկերի տակ պատսպարեցին շատ հայերի, ազատելով նրանց կոտորածից: Այդ կապակցությամբ դեպքերի ժամանակակից Հ. Երամյանը գրում է. «Գըտնըվեցան նույնիսկ թուրքեր և քրդեր, որոնք ո՛չ իրենց ձեռքը հայու արյունով արատավորեցին և ո՛չ անոնց (հայերի— Հ. Պ.) հարստությունները ավարին մասնակցեցան, ընդհակառակը տասնյակներով, հարյուրներով փախստականներ պատսպարելե զատ՝ նաև՝ օրերով կերակրեցին զանոնք մինչև կոտորածի վախճանը»[83]:

Վան քաղաքի կենտրոնը և շուկան այդ կռիվների ընթացքում անվնաս մնացին, քանի որ հազարապետ Չերքեզ Էմինը հրաժարվեց կրակի

---

81 В. Маевский, նշվ. աշխ., էջ 208:

82 Կեօրկիզյան Առսեն, Վասպուրականի հերոսամարտը, 1915 ապրիլ 7—1915 մայիս 7, Պեյրութ, 1965, էջ 25:

83 Հ. Երամյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 350:

մեծ թնդանոթները տրամադրել Սաաեդդինին, ասելով. «Այս թնդանոթները թշնամի բանակի մը դեմ գործադրելու համար են և ոչ թե անմեղ աղգաբնակչության կոտորելու»[84]:

Չնայած Վլ. Մահակին բացակայում էր քաղաքից, սակայն ռուսական հյուպատոսարանի շենքում ապաստանածները աղատվեցին կոտորածից: Հյուպատոսարանի թարգման Կարապետ Չիլինգարյանի ջանքերով այդ օրերին այնտեղ ապաստանեցին շուրջ 6000 հայեր և նա իր «եռանդուն միջամտությամբ հեռացրեց 500 հոգուց բաղկացած քրդերի մի խումբ, որը հարձակվել էր հայկական թաղերից մեկի վրա»[85]: Այդ օրերին այդպես է վարվել նաև պարսկական հյուպատոսը, որը հյուպատոսարանի վրա բարձրացրեց իր պետության դրոշակը, ապա «դուրը բաց ձգեց և ինքը իր քանի մը պաշտոնյաներով դռան առջև նստավ և դուրգուրալիր սիրով ներս առավ ամեն հայ, առանց սեռի խտրության, որ կրցավ ջարդն ճողոպրելու իրեն դիմել: Հալածող թուրքերու դեմ կելներ և սպառնագին կը պոռար դրոշակ ի ձեռին, մինչև գիս ու սա պաշտոնիաներս չսպանեք, դուռեն ներս չեք կրնար մտնել, իսկ եթե կը համարձակիք, փորձեցեք այդ բանն անել»[86]: Հյուպատոսի գործադրած ջանքերի շնորհիվ 2000 հայեր ապաստանեցին նրա մոտ, աղատվելով կոտորածից: Դեպքերի ականատես Մ. Նաթանյանը նշում է, որ ԱՄՆ-ի միսիոներ ապա հյուպատոս Ռիչնոլտսը, որը 26 տարի ապրել էր Վանում, չնայած սկզբից ընդունեց հայերին, սակայն խումբի հարձակման ժամանակ նրանց մեծ մասին, հատկապես տղամարդկանց հանձնեց վայրագներին, որոնք «տեղն ի տեղ սպանվեցան չարաշար»[87]:

Քաղաքի և շրջակա գավառների գյուղերի անդեն բնակչության կոտորածը ստիպեց վանի երիտասարդներին, բաժանվելով ջոկատների, սկսել քաղաքի ինքնապաշտպանությունը: Մինչ այդ նրանք Մ. Ավետիսյանի գլխավորությամբ նախապատրաստական որոշ աշխատանք էին տարել: Սակայն վանում պակասում էր զենքը և զինամթերքը: Այդ լրացնելու համար նրանք մարդիկ ուղարկեցին Պարսկաստան, սակայն պարսկական կառավարությունը կարգադրեց խստացնել սահմանի գիծը և նրանք չվարժացան այնտեղից զենք բերել: Դրանից հետո նրանք թուր-

---

84 «Պայքար» (Ամերիկա), 1957, հունիս:

85 «Արձագանք», 1897, № 1, 1 (13) հունվարի:

86 Պարսկահայ տարեցույց, 1927, էջ 179:

87 Նույն տեղում, էջ 180:

քական բանակի մի հարյուրապետի 100 ոսկի տալով 80 մարտին տիպ-հրացան ստացան[88]։

Քաղաքը բաժանվեց ինքնապաշտպանական չորս մասի, որոնց պետք է ղեկավարեին Համայակ Թանկարաղյանը, Արմենակ Եկարյանը, Դարեգին Բաղդեցյանը և Բաղդասարը, իսկ սրանց ղեկավարում էր մի խորհուրդ՝ Մ. Ավետիսյանի գլխավորությամբ։ Մ. Ավետիսյանի մոտ հավաքվեցին հնչակյան մարտիկն ու դաշնակցական պետն և սկսվեց ինքնապաշտպանական մատհդացումների կոնկրետ իրականացումը։ Քաղաքվերը նշված թաղերում ստեղծվեցին 10 դիրքեր։ Պարզվեց, որ արմենականները ունեին 370, դաշնակները՝ 42 և հնչակյանները՝ 30 հրացան, կար նաև յութանասոն վեց հարվածան[89]։ Ահա այսպիսի փոքրաթիվ զենքերով նրանք կռվի դուրս եկան մինչև ատամները զինված թուրքական կանոնավոր զորքերի և քրդական համիդյենների դեմ, որոնք ունեին զենքի և փամփուշտների ահռելի պաշար։

Վան քաղաքի ինքնապաշտպանությունը տևեց 9 օր, հունիսի 3-ից մինչև 11-ը։ Վ.լ. Մաևսկու վկայությամբ այդ ժամանակամիջոցում զոհ գնացին 250 մուսուլմաններ և 500 հայեր։ Քաղաքի ինքնապաշտպանական խմբերում կռվում էին 700-ից մինչև 900 երիտասարդներ։ Քաղաքի փողոցների երկու կողմում գտնվող ծառերը կտրվեցին և թափվեցին փողոցները, որով անհնարին դարձավ քրդական հեծելազորի մուտքը հայկական թաղերը։ Թուրքական բանակի վաշտերի թիվը հասնում էր 5-ի, իսկ քրդական համիդյեներինը՝ 1896 թ. հունիսի 5-ին հասնում էր 5000-ի և շատ շուտով հասավ 10 հազարի[90]։

Հունիսի 6-ին թուրքական ուժերը հարձակվեցին Հայկավանք թաղի վրա, որին զոհ գնացին 100 հոգի։ Այդ օրը թուրք Կալիպ փաշան 300 հոգու փրկեց սպանվելուց։ Սակայն մի քանի օր հետո նրանց հանձնեց զարդարաններին, որոնք բոլորն էլ սպանվեցին։ Նույն օրը 300 հոգի զինված ուժեր հարձակվեցին Կլոր դարի վրա, սակայն 30 սպանված տալով հետացան։ Հունիսի 7-ին սկսվեց նոր հարձակում Սահակ Պեչենց և Թյութունճյանների դիրքերի վրա, սակայն պաշտպանների կրակը ստիպեց հարձակվողներին 30—40 զոհ տալով հետանալ[91]։ Հունիսի 8-ին թշնամու հարձակումը նրանից խլեց 70 զոհ և նա ստիպված հետացավ

88 «Պայքար» (Ամերիկա), 1957, հունիս։
89 Նույն տեղում։
90 В. Маевский, նշվ. աշխ., էջ 173։
91 «Պայքար» (Ամերիկա), 1957, հունիս։

դիրքերից։ Հերոսական դիմադրություն ցույց տվին Այգեստանի բնակիչները, որոնք քաջաբար պաշտպանվեցին «և տեղի չտվին, մինչև որ զինվորական ուժը և ընդանոթներու գործածությունը շատ անհավասար դարձրին կռիվը»[92]։

Կռիվը շատ կատաղի բնույթ ընդունեց հատկապես հունիսի 8-ին, երբ սկսվից Թուրքական կանոնավոր բանակի զինվորների և քրդական ուժերի միասյալ հարձակումը քաղաքի հայկական թաղերի պաշտպանների վրա։ Թուրքական բանակը այդ օրը գործի դրեց իր ունեցած երկու թնդանոթները։ Նույն օրը հայկական թաղերի պաշտպանների վրա հարձակվողները չդիմանալով հայերի հակահարձակմանը, ստիպված նահանջեցին թողնելով նրանց այդ թնդանոթները։ Հայկական դիրքերը շատ ամուր էին և անառիկ։ Աղատության վեհ գաղափարներով տոգորված Վան քաղաքի ինքնապաշտպանության ելած հայ երիտասարդները կռվում էին հերոսաբար, երգելով «Կռվեցե՛ք տղերք, կռվեցե՛ք քաջ քաջ» երգը[93]։

Սաահդինին սկզբում թվացել էր թե մի քանի հարվածներից հետո պաշտպանները կհանձնվեն և նա կկարողանա մարբել իր հաշիվները Վան քաղաքի հայ բնակչության հետ, սակայն երբ զգում է քաղաքը պաշտպանողների անսասանությունը, ստիպված օտար հյուպատոսներին ուղարկեց ինքնապաշտպանության ղեկավարների մոտ և նրանց միջոցով պահանջեց տաս հոգու հանձնելուց հետո դադարեցնել ջարդը։ Երկար վիճելուց հետո Մ. Ավետիսյանը համաձայնվում է այդ առաջարկի հետ պայմանով, որ օտարերկրյա հյուպատոսները «գլխավորապես երաշխավորեին և ապագա հետևանքին պատասխանատուն իրենք ճանաչվեին»[94]։ Հանձնվելու առաջարկությունը Մ. Ավետիսյանը ընդունեց, գտնելով, որ եթե այդ 10 հոգին սպանվեն, անգամ, քաղաքի և նրա շրջակայքի գյուղերի տասնյակ հազարավոր բնակիչներ կփրկվեն կոտորածից։ Այդ կապակցությամբ հայրենասեր երիտասարդը ասաց, որ եթե «մեր անձնատուր լինելով կոտորածը կը դադրի, մենք պիտակցաբար մահը դիմագրավենք, այդ միևնույն ժողովրդի սիրուն համար»։ Այնուհետև Մ. Ավետիսյանը ասել է. «Եթե մենք մեռնինք և ժողովուրդը ապրի, քիչ ժամանակեն մեզ պես շատ շատեր պիտի արտադրե դարձյալ, իսկ եթե մենք ապրինք ու ժողովուրդը մեռնի, մենք չենք կարող ժողովուրդ մը ստեղծել»[95]։ Վեր-

---

92 «Արձագանք», 1897, № 85, 27 (8 օգ.) հուլիսի։

93 Տե՛ս Հայուն երգարանը, Կ. Պոլիս, 1911, էջ 134։

94 «Հայրենիք» (Բոստոն), 1906, № 32 (370), 11 օգոստոսի։

95 Նույն տեղում։

ջապես ինքնապաշտպանության ելածները հյուպատոսների խոսակցությունից հասկանում են, որ զեկավարների հանձնվելուց հետո անգամ ժողովրդին կոտորածից փրկելը չի երաշխավորվում, ուստի առանց տատանվելու որոշեցին շարունակել ինքնապաշտպանությունը։ Քաղաքի բնակիչներից մեկը, որը եղել էր աշխարհի շատ երկրներում, միամտաբար իր ընկերներին հայտարարում է, թե «Միջազգային օրենքի համաձայն կառավարությունը իրավունք չունի ժողովրդի վրա թնդանոթ քաշելու։ Եթե մենք ալ թնդանոթ ունենայինք ուրիշ հարց էր»[96]։ Այս ասելուց հետո նա առաջարկում է գնալ անգլիական հյուպատոս Ուլիեմի մոտ, առանց իմանալու, որ նա միացած թուրքերի հետ կանգնեց «թնդանոթի գլուխն և ուղղություն տվավ տաճիկ տղեա ու անճարակ թնդանոթաձիգներուն»[97]։ Երբ գրավեցին թուրքական երկու թնդանոթները, վանի պաշտպանները ուրախ իրար ողջունում էին, ասելով. «Օտարին մեզ ճրագ չի կպչիր, մեր միակ և իրական հույսը մեր սեփական բազկի ուժն է»[98]։

1896 թ. անգլիական հյուպատոսը մոտենալով ինքնապաշտպանության դուրս եկած երիտասարդներին ասում է.

«— Այս հրացաններն ո՞վ տվավ ձեզ։

— Ոչ ոք չէ տվեր,— պատասխանեց մեր ընկերներեն Սանոյանը,— ասոնք մեր սեփական հրացաններն են, մեր դրամով գնված։

— Սուտ կը խոսիք,— գոռաց հյուպատոսը, —ասոնք ռուս կառավարության հինարանի զենքերն են և անպայման անոնց հյուպատոսարանը բաժանած է ձեզ»[99]։

Անկասկած այդ զենքերը նրանք ռուսական հյուպատոսից չէին ստացել, այլ գնել էին իրենց միջոցներով, վախենալով կոտորածից։ Երիտասարդները հյուպատոսին պատասխանում են, թե ինչպես է, որ հարց է տալիս, թե որտեղից ենք եկել, չէ որ նա քաջ գիտե, որ իրենք բոլորն էլ վանի բնակիչներ են և ապա ասում են. «Դուք մոտ քառորդ դար մեր մեջը կապրիք և մեզ չափ հայերեն գիտեք. միթե՞ դուք մեր լեզվեն և մեր հնչյուններեն չեք կարող հաստատել, որ մենք բոլորս ալ վանեցի ենք»։ Հյուպատոսը դրանից հետո առանց ամոթի խայթ ղգալու երիտասարդներին ասում է. «Դուք իրավունք չունեք զենք բարձրացնելու ձեր տիրոջ վրա։ Դուք վար պետք է դնեք ձեր զենքերը և ապավինեք սուլթանի

96 «Հայրենիք», 1936, 3 հունիսի։

97 Նույն տեղում։

98 Նույն տեղում։

99 «Հայրենիք» (Բոստոն), 1933, № 7 (127), մայիս։

դթասրտության, ապա թե ոչ, Կրուպի թնդանոթներով կոտորել պիտի տան ձեզ և ձեր ընտանիքները»[100]: Նույն պրոպագանդան էր անում նաև ամերիկյան ավելի քան քառորդ դարյա ղեկավար Ռեյնոլդսը, որը այդ ժամանակ նաև Ամերիկայի հյուպատոսն էր: 1896 թ. դեպքերի ժամանակ հանդիպելով իր աշակերտներից մեկին, նա ասում է. «Քեզ խորհուրդ կուտամ, որ զենքդ վար դնես և Հիսուս Քրիստոսին ապավինիս, եթե քուրդ սպաննես, թե քեզ թե հոգիիդ և թե մանավանդ քուրդին վնաս է...», աշակերտը նրան պատասխանում է. «Պատվելի, քուրդերը կը սպաննեն, խուժանը կայրե ու կը կողոպտե և ամեն ինչ պիտի ոչընչացնեն, եթե մենք չպաշտպանենք». դրանից հետո պատվելին ստիպված ասում է. «Այո՛, տաճիկները որոշած են սպաննել ամեն անոնք, որ հեղափոխական են, քեզի խորհուրդ կուտամ, որ զենքդ գետին դնես և հոգիիդ փրկության համար աղոթես...»[101], այսինքն նահատակվել պարանոցը մեկնած բռնակալի սրին, մի բան, որ չարին Վանի այն ժամանակվա երիտասարդները:

Սաադեդդին փաշան սուլթանի պալատում մարզված թուրքական պետության ներքին և արտաքին գործերին քաջատեղյակ մի անձնավորություն էր: Մի քանի օրվա կռվից հետո այս անգամ պահանջեց հանձնել 60 հոգու և զենքը ցած դնելով հնազանդվել: Այդ առաջարկությունը նպատակ ուներ շարքից հանել դիմադրության ղեկավարներին և դրանից հետո դյուրին դարձնել Վանի բնակչությանը ջնջելու իր դիվային ծրագիրը: Նա օտարերկրյա հյուպատոսների միջոցով կռվող երիտասարդներին արեց հետևյալ առաջարկությունները: «1. Մեր տասը պարագլուխները պետք է անձնատուր ըլլային: Անգլիական հյուպատոսը խոստացավ զանոնք ապահով կերպով արտասահման հասցնել: 2. Բոլոր զինված հայերը պետք է զենքերնին հանձնեն հյուպատոսներուն»[102]: Մ. Ավետիսյանը և նրա կողմնակիցները շատ լավ հասկանալով Սաադեդդինի որոգայթը, հյուպատոսներին տալիս են շատ կարճ պատասխան. «Մենք ապստամբներ չենք, այլ պաշտպանողներ մեր ինչքին և ընտանիքներուն, որովհետև կառավարությունը ոչ մեկ քայլ արած չէր հայ անմեղ ժողովուրդը պաշտպանելու թուրք խուժանի վայրագությանց դեմ»[103]: Նրանք միաժամանակ հաստատակամորեն ասացին, որ զենքերը վայր կդնեն այն ժամանակ, երբ կառավարությունը հաստատի խաղաղություն, քա-

100 Նույն տեղում:

101 «Հայրենիք» (Բոստոն), 1906, № 32 (370), 11 օգոստոսի:

102 «Պայքար» (Ամերիկա), 1957, հունիս:

103 Նույն տեղում:

18—467

զաքից հեռացնի քրդական զինված ուժերին, այլապես որոշել են կռվել մինչև արյան վերջին կաթիլը։ Հյուպատոսները բանակցություններից հետո վերադառնում են դիրքերից և «Հիացումով կը պատմեին հեղափոխականներու ճարտար ռազմավարության ու դիվանագիտական թաքթիքը»[104]։ Դրանից հետո Վանի անգլիական հյուպատոսը Թուրքական համազգեստ հագած շրջում է Պողպատի դար և Շան փողոցները, ուսումնասիրում ինքնապաշտպանության դիրքերը և հետո «Թուրքական քընդանոթները փոխադրել տվավ Հայնկոյներու ձորահովիտի հյուսիս՝ Սև Քոան կամ Սև քար կոչված լեռնաբլուրը և այն տեղեն ինքն ճշգրիտ նշանառությամբ ռմբակոծեց և քանդեց հիշյալ թաղերու հայ դիրքերը»[105]։

Քաղաքի ինքնապաշտպանական դիրքերից մի չանիսի ավերումը կարող էր է՛լ ավելի հեշտացնել նրա բնակչությանը ջնջելու Թուրքական ընդհանուր ծրագիրը, ուստի այդ հանգամանքը ստիպեց մարտերի դեկավարներին հայտնել օտարերկրյա հյուպատոսներին, որ իրենք համաձայն են կռվող ուժերը հանել քաղաքից և գնալ Պարսկաստան։ Կռիվները միաժամանակ համոզեցին Սաաեդդինին, որ կռվի դուրս եկածներին այնքան էլ հեշտ չի ընկճել։ Կար մի հանգամանք ևս, որ վախեցնում էր նրան։ Այնտեղ սկսված կռիվները երկարելու դեպքում հնարավոր էր, որ ռուսական միջամտություն լիներ։ Ելնելով դրանից, փաշան ընդունեց այդ առաջարկը և քաղաքի պաշտպաններից 1000 հոգի դուրս եկան Վանից և անցան Վարաչ, նրանց մի մասը բռնեց Պարսկաստանի ճանապարհը։ Օտարերկրյա հյուպատոսները խոստացան ապահովել այդ երիտասարդների ազատ մուտքը Պարսկաստան, սակայն չկատարեցին իրենց խոստումը։

Այսպիսով, վերջացավ Վանի 1896 թ. հունիսյան հերոսական ինքնապաշտպանությունը, որի ժամանակ պաշտպանական շրջայից դուրս դտնվող թաղերում քրդական ուժերը «թալանեցին, սպանեցին, այրեցին կառավարության բարեհաճությամբ և գաղտնի ոստիկանության օժանդակությամբ, նրա զապթիաների և զինվորների աջակցությամբ»[106]։

Քաղաքի պաշտպանությունը այդ օրերին հանձնված էր Հալիմ անունով մի մայորի, որը Սասունի 1894 թ. ապստամբությունը ճնշելիս և Սղերդի հայերի կոտորածի ժամանակ աչքի էր ընկել իր բարբարոսությամբ։ Սաաեդդին փաշան տիրացավ կողոպուտի մեծ մասին, այսինքն՝

---

104 Հ. Ութմյան, նշվ. աշխ., Ա հատ., էջ 363։

105 Նույն տեղում։

106 «Արձագանք», 1897, № 85, 27 (8 օգ.), հուլիսի։

5-ից 10 հազար ոսկի և սուլթանից ստացավ շքանշան, իսկ Հալիմը ստացավ Բեյի տիտղոս և գնդապետ-լեյտենանտի աստիճան[107]։ Քրդական ուժերին Վան հրավիրող Սաադեդինը, կառավարությանը լավ ծառայելու համար թույլատրեց թալանել քաղաքի այն բնակիչների տները, որոնք կոտորածի սարսափներից սարսափած թողել և հեռացել էին, դրանից հետո նրանց հրամայվեց հեռանալ քաղաքից։

1896 թ. Վասպուրականում կազմակերպված կոտորածների ժամանակ սպանվածների թիվը ըստ Վլ. Մաևսկու հասնում էր 2000-ի, որից 500-ը Վանում և մնացած 1500-ը գավառներում, իսկ թուրքերինը՝ 300 հոգու[108]։

Քաղաքի ինքնապաշտպանների հեռանալուց հետո թուրքական ուժերը այնտեղ մեծ թվով սպանություններ ու կողոպուտներ կազմակերպեցին։ Ամբողջովին այրվեց և մոխրակույտի վերածվեց Այգեստան թաղամասը։ Սաադեդինը այդքանից հետո անգլիական հյուպատոս Ուիլիմի հետ հավաքում է քաղաքի 60 երևելիներին և պահանջում ստորագրել մի հեռագիր սուլթանին այն մասին, որ «հոշոտվող ոչխարները գոհ են գիշատիչ գայլերից»։ Հեռագրի մեջ ամբաստանական խոսքեր գրվեցին հայ ազգային-ազատագրական շարժման մասնակիցների հասցեին, որից հետո միայն Սաադեդինը վճռեց ավարտել Վասպուրականի հայության կոտորածը, որի ժամանակ «միայն երկու օր է սահմանված եղեր Եւլդըզեն՝ ըստ հավաստի տեղեկության»[109]։

Վարդգամ Մ. Ավետիսյանը անվեն երիտասարդներից պահանջեց վերադառնալ տները, իսկ մնացածներին բաժանեց խմբերի, որից հետո սկսվեց նրանց երթը Աղբակի վրայով դեպի Պարսկաստան։ Սակայն Մ. Ավետիսյանը և խմբի մնացած ղեկավարները չկտրեցին հեռագրաթելերը, որը և անհնարին կդարձներ Վանից խմբին ջարդելու թուրքական իշխանությունների տրվող հրամանները։ Նորգյուղի մոտ քրդական համիդյեականները հարձակվում են խմբի վրա, սակայն հարված ստանալով, հեռանում են։ Դրանից հետո խումբը շարժվում է դեպի Հնդստան գյուղը, որտեղ նույնպես եղան կռիվներ։ Ապա նրանք շարժվեցին դեպի Պաշգալե ավանը, ճանապարհին հասկացնելով քրդական ուժերին, որ իրենք պետք է անցնեն Պարսկաստան և պետք չէ երկուստեք կորուստներ տալ։ Ջուխ չհասած, սկսվեց քրդական ուժերի հարձակումը խմբի

107 Նույն տեղում։
108 В. Маевский, նշվ. աշխ., էջ 180։
109 Հ. Սրամյան, նշվ. աշխ., էջ 369։

վրա, սակայն խումբը կռվով մտավ Գյոզալդարա կիրճը և այնտեղից դուրս եկավ։ Սկսվեց կռիվը։ Բշնամին կորուստներ տալով նահանջում է, երբ մթնում է, սկսում է խմբի անտանելի և ծանր երթը դեպի Խանասորի դաշտը։ Անցնելով Ջաբ գետը, նրանք մտնում են Խանասորի դաշտը, որտեղ գտնվում էր Բարդուղեմիոս առաքյալի հինավուրց վանքը։ Խմբի ղեկավարը նպատակադրվում է ամրանալ վանքում, սակայն պարզվում է, որ այնտեղ 200 թուրքական զինվորներ են թաքնված և հենց վանքի մոտ սկսվում է խմբի, թուրքական զինվորների և Շարաֆ բեկի քրդական ուժերի անհավասար մարտը։ Տեղացող անձրևախառն կարկուտը ոտքից գլուխ թրջել էր խմբի անդամներին և նրանց ունեցած զենքերն ու վառոդը։ Թուրքական երկուհարյուրանոց զինվորական պահակախումբը միանալով ամեն կողմից դաշտ ներխուժող քրդական ուժերին, սկսում է կռիվը, որն ավարտվում է հայերի կոտորածով և Մ. Ավետիսյանի սպանությամբ։ Այս կռվի ընթացքում հայերը ունեցան 465, իսկ թշնամին՝ 1700 կորուստ[110]։ Խմբի մի փոքր մասին հաջողվեց անցնել Պարսկաստան, իսկ 40 հոգի վերադարձան Վարագ, երբ վանքն արդեն ավերված և հրդեհված էր։ Կենդանի մնացածներից մի քանիսը ճանաչում են Մ. Ավետիսյանի դիակը և թաղում մի բլրի վրա։ Ժամանակակիցները վկայում են, որ այնտեղից անցնող յուրաքանչյուր անցորդ նրա գերեզմանի վրա մի քար էր նետում, որը հետագայում վերածվեց քարերի մի հսկա կույտի։ Մնացած ընկածների դիակներն ամփոփվեցին վանքի մոտ փորված 4 եղբայրական գերեզմաններում։ Նույն վիճակին արժանացան այն խմբերը, որոնց ղեկավարում էին Մ. Սարուխանյանը և Ա. Պետոյանը, որոնք Աբաղայի դաշտով բռնեցին Պարսկաստանի ճանապարհը։ Ջուխում, Գարահիսարում, Գյոզալգարայում և այլուր նրանք շրջապատվեցին քրդական մեծաթիվ ուժերի կողմից և նահատակվեցին։ Այդ կռիվներում ընկան ինչպես Մարտիկը, այնպես էլ Պետոն։

Հ. Սրամյանը գտնում է, որ բոլոր խմբերում նահատակվածների թիվը հասնում էր 800 հոգու[111]։ Հետագայում կատարված ճշգրտումները պարզել են, որ Մ. Ավետիսյանի խմբից նահատակվել են 340 հոգի[112], Մարտիկի և Պետոյի խմբերը փոքր էին, ուստի և նահատակվածների թիվը 800 հոգի լինել չէր կարող։ Վասպուրականի ժողովուրդն իր սրտում պահեց ընկածների հիշատակը։ Նրանց մոտ ստեղծված մի ավանդու-

110 «Պայքար» (Ամերիկա), 1957, հունիս։

111 Հ. Սրամյան, նշվ. աշխ., էջ 371։

112 «Ծիրիտասարդ Հայաստան», 1905, № 21, 11 հոկտեմբերի, էջ 167։

թյան համաձայն նահատակների լերդացած արյան միջից բուսեց Ախպերաց արյուն անունով մի կարմիր ծաղիկ, որի մասին ժողովրդի հորինած մի երգում ասված է. «Ախպերանց արյուն՝ մեջ խաւերուն, դու էր կուլաս կուց կուց արուն[113]։ Մ. Սարուխանյանի հիշատակին է նվիրված Շ. Կուրղինյանի «Հառաջ անվեհեր» բանաստեղծությունը, որի մեջ նա Մարտիկին համարում է արդար կռվի մեջ ընկած մի մարտիկ[114]։

Այսպիսով, վերջացավ Վասպուրականի 1896 թ. ողբերգությունը իր հերոսական և միաժամանակ սրտաճմլիկ պատկերներով, որոնք ժողովրդի կողմից ստացան «96-ի մեծ դեպք» անունը։ Հ. Երամյանի տվյալների համաձայն 1896 թ. Վասպուրականի հայությունը կորցրեց 20 հազար մարդ[115]։ Այդ ժամանակամիջոցում լրիվ ամայացավ Աղբակ գավառը, որը 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ մեծ հարված էր ստացել շեյխ Ջալալեդդինի զինված ուժերից։

1896 թ. Կարճկանի գավառում իր գաղանային արարքներով աչքի ընկավ Մուսա բեկը։ Ամենից վատ էր վիճակը Արճեշ գավառում, որտեղ Հաճի Թեմուր և էմին համիդյեական գնդերի ղեկավարները հայկական մի քանի գյուղերի բնակիչների կենդանի թաղեցին ցորենի հորերում[116]։ 1896 թ. կոտորածներից ազատվածների մի մասը ստիպված թողեցին հայրենի վասպուրականը և հեռացան այլ վայրեր։ Այդ կոտորածի և հետագա գաղթի պատճառով հայ բնակիչների թիվը նահանգում պակասեց։ Այսպես, 1896 թ. դեպքերից առաջ Նորդուզի գյուղախմբում հաշվվում էր 380 հայ ընտանիք, սակայն 1897 թ. մնացել էր ընդամենը 277-ը[117]։ Թուրքական իշխանությունների կողմից կազմակերպված կոտորածների, բնակիչների տեղափոխությունների և հիվանդությունների պատճառով մահացածներին հաշվելով կարելի է ասել, որ արդեն 1897 թ. կոտորածների նախօրյակի հետ համեմատած Վանի վիլայեթի հայ բնակիչների թիվը պակասեց 15—20 տոկոսով[118]։

1896 թ. փարհուարի կոտորածից ղերծ մնացին Մոկս գավառի բնակիչները։ Մոհթուլա բեկը, որը այդ օրերին գտնվում էր Վանում և իմանալով թուրքական իշխանությունների նպատակը, շուտափույթ թողեց Վանը և հասավ Մոկս, արգելելով գավառի հայերի կոտորածը։ Այդ բեկը

---

113 Հ. Աճեմյան, նշվ. աշխ., էջ 695։

114 Շ. Կուրղինյան, Երկերի ժողովածու, 1947, էջ 208։

115 Հ. Երամյան, նշվ. աշխ., էջ 373։

116 Նույն տեղում։

117 В. Маевский, նշվ. աշխ., էջ 104։

118 Նույն տեղում, էջ 105։

հայտարարեց. «Մոկսը Համիդի կոտորածների տեղը չէ»[119]: Նրա մասին հուշերից մեկում կարդում ենք. «Տարօրինակ քուրդ բեյ մըն էր Մուրթուլան: Ան հայախոս էր և ծանոթ՝ մեր գրականության, շատ խելացի էր և գիտեր, թե ինչ կպահանջեն իր շահը»[120]: Ա. Դարբինյանը նրան անվանում է «լուսամիտ, զարգացած անձ մը»[121]: Մի քանի հանդիպումներ ունենալով այդ բեկի հետ ռուսական փոխհյուպատոս Վլ. Մաևսկին գտնում է, որ նա հումանիստ մարդ էր և որ հայերը և քրդերը թշնամիներ չպետք է լինեն: Վաղ հասակից կրթվել է Աղթամարի ժառանգավորաց դպրոցում, ուր «սովորել էր հայոց լեզուն, որ ազատ խոսում և մինչև իսկ նամակ էր գրում: Գրաբար ավետարան էր կարդում և բացատրում»[122]: Բացի քրդերեն և հայերեն լեզուներից տիրապետում էր թուրքերենին և արաբերենին, «ինքնաբոյս փիլիսոփայի մը բնածին տաղանդով ալ օժտված ըլլալով, այնպիսի առողջ դատողություններ կհայտնե ընկերական խոսակցության մեջ, որ դու կսես թե էն դարավերջիկ առողջ փիլիսոփայությունը կլլած ու մարսած է»[123]: Այդ բեկի մոտ ամիսներ շարունակ հյուրընկալված Հ. Օրբելին Ռուսաստանի Հնագիտական ընկերության արևելյան բաժնի նիստում 1912 թ. դեկտեմբերի 20-ին կարդացած իր դասախոսության մեջ նշեց, որ մի տարի եղել է Վանում և Մոկսում, որ «Մոկաց երկիրը հանդիսանում է մի կիրճ Վան քաղաքից դեպի հարավ: Լեռները բաժանում են այդ երկիրը հարևան գավառներից և հաղորդակցությունը գրեթե կատարվում է շատ ամիսների ընթացքում»[124]: Հ. Օրբելին նշում է Մոկսում առևտուրը զարգացած լինելու հանգամանքը և այն, որ նրա բնակիչների կողմից «անմիջական հարաբերություններ կան Մոսկվայի հետ»[125]:

Կոտորածներից համեմատաբար վերծ մնաց Շատախը, որի Թաղ գյուղի բնակիչները ամրացան Տիգրիսի ափին գտնվող Գժիլանց տներում և սկսեցին դիմադրել Շաքիրի ուժերին: 1896 թ. Շաքիրը իր զինված ուժերով հարձակվեց Շատախի վրա և սպանեց 80 հոգու[126]: Թաղի բնակիչների դեմ կռվի ժամանակ վիրավորվեց և նրա ուժերը ցրվեցին, սա-

---

119 «Աղաւնամարտ», 1912, № 982, 24 (6 սեպտեմբերի) օգոստոսի:

120 Աւետ-Թուրեն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, Բ հատոր, Լոս Անճելեսը, 1952, էջ 290:

121 Ս. Դարբինյան, նշվ. աշխ., էջ 77:

122 Ասլան Ստեփանյանի հուշերը..., էջ 76:

123 «Բյուզանդիոն», 1903, թիվ 2198, 8/21 դեկտեմբերի:

124 «Կովկասի լրաբեր», 1912, № 53, 29 դեկտեմբերի:

125 Նույն տեղում:

126 «Արձագանք» 1987, № 45, 23 (5 մայիսի) ապրիլի:

կայն նորից վերադարձավ Շատախ և առանձնակի հաջողություն չունեցավ: Կռիվներում տղամարդկանց կողքին աչքի ընկան նաև Թաղի կանայք, որոնք «վառոդը կը պատրաստեին ու նաև պատուհաննեն կախված թաղիքները կը թրջեին՝ թշնամու գնդակները չեզոքացնելու համար»[127]:

1896 թ. քրդական ուժերը թալանեցին և ավերակների վերածեցին Վարագա վանքը, սպանելով Արիստակես Տեր Սարգսյանին (Տեկանց), 17 միաբանների և մշակների:

Մատենադարանի կաթողիկոսական դիվանում պահպանվում է Արսեն վարդապետ Մարգարյանի «Վիճակագիրք Վանա նահանգին մեջ պատահած կոտորածին և ավերմանց»: Ձեռագիրը ուղղված է Ամենայն հայոց կաթողիկոսին, որտեղ դեպքերի ժամանակակիցն ու ականատեսը նշում է, որ կողոպտվեցին Վան քաղաքի 6 հայկական թաղերը, կողոպտվեց 1514 տուն, սպանվեցին 1365 բնակիչ: Քաղաքի բնակչությանը հասած վնասը կազմեց 42.925 ոսկի, կողոպտված ու վնասված եկեղեցիների գույքի արժեքը՝ 25.000 և 3 դպրոցներինը՝ 2100 ոսկի[128]:

Դեպքից հետո քաղաքի բնակիչների վիճակը օրըստօրե վատացավ: Ժամանակակիցներից մեկը այդ մասին գրում է. «Երեք ամիսե ի վեր տիրող սոսկալի սառնամանիքներու հակառակ՝ գաղթականության հեղեղ մէ, որ կողողե Վան՝ Նորդուզի, Շատախի, Գավաշի, Մոկաց, Սպարկերտի, Կարճկանի, Խիզանի և այլ գավառներեն՝ սովատար ու սլուզատար, մերկ ու բոկ, հիվանդ ու հեագար»[129]: Օգտվելով ժողովրդի տնտեսական ծանր վիճակից, օտարերկրյա միսիոներները ձգտում էին ժողովրդին իրենց կողմը քաշել: Նույն հոդվածագիրը այդ նկատի ունենալով շարունակում է. «Մեր մարդասեր դոմինիկյան հայրերն մանավանդ՝ անհուն հրճվանքով կընդունին մեր սովաբեկներու կրոնափոխությունները...»[130]: Նրանք տառապած ժողովրդին կերակրելու հետ միասին աշխատեցնում էին և այն էլ շատ ցածր վարձատրությամբ: 1898 թ. մարտին ամերիկյան աղքատախնամ ընկերությունը «1200 կիներու և օրիորդներու բուրդ բամբակ մանել կուտա՝ քաշ գլուխ 7—8 դահեկան վարձով, իսկ 1600 անձեռնահասներու՝ ընիկ թե նորեկ գաղթական օրական մեյմեկ հաց կը բաշխե»[131]: Սակայն այդ բոլորը շատ քիչ ազդեցություն էին թողնում ժողովրդի վրա, այդ պատճառով է, որ ինչ որ առիթով Ռեյնոլդսը հուսա-

127 «Հայրենիք» (Բոստոն), 1952, մայիս, № 5 (316):

128 Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 236ա, վավ. 226, թ. 2:

129 «Արևելյան մամուլ», 1898, № 6, 15 մարտի, էջ 212:

130 Նույն տեղում, էջ 213:

131 Նույն տեղում, էջ 23:

հաստված ասել է, թե իրենց տասնյակ տարիների աշխատանքը արդյունքի չհասցրեց «թեև մեր 50 տարվա անհուն զոհողությունք գրեթե ապարդյուն անցան,— ասել է նա, —ուրախ եմ, որ մեր երկսեռ 500 որբեր լավ ապագա կխոստանան նորագյալ քրիստոնյա ըլլալու»[132]:

Դեռևս 1895 թ. ամերիկյան միսիոներները սկսեցին գավառներից եկածներին հաց բաժանել: Այդ օրերին նրանց գործունեության մասին «Մշակում» կարդում ենք, որ ամեն օր «2700 օխա հաց կը տրվի 1200 օխա բնիկ աղքատներուն և մնացածը գաղթականներուն»[133]: Միսիոներները քաղաքում բաց արեցին արհեստանոցներ, որտեղ «բամբակ թել մանելու համար կը գործեն 1000 ճախարակ, կտավ և շալ գործելու համար կը բանեն 200 հոր, հագուստ կարելու համար կաշխատեն 100 ընտանիք, 15 վարպետ հագուստ կը ձևեն, 20 ընտանիք գուլպա կը հյուսեն, 60 անձ բամբակ և բուրդ կը գզեն, 70 անձ կընեն կամ մասրա կը լեցնեն, 10 կին վերմակ կը կարեն, բայց աստի 40 աշխատավոր կա հացի փուռրուն մեջ»[134]:

Միսիոներների վերաբերմունքը և այդ օրերին տարած աշխատանքը ինչ խոսք մարդասիրական էր, սակայն այն արվում էր ամերիկյան քաղաքականությունը հայերի մեջ ամրապնդելու նպատակով: Միսիոներները դրսից ֆինանսավորվում էին, միայն 1896 թ. հունվար ամսին նրանք ծախսել էին 3000 ոսկի, իսկ դրանից հետո Ամերիկայից ստացան 6000 ոսկի: Այդ գումարները ծախսելուց հետո նրանք սկսեցին պրոպագանդել Պարսկաստանի վրայով Ամերիկա գաղթելու խնդիրը, որից հետո մի շարք ընտանիքներ պատրաստվեցին առաջին պատեհ առիթով ընտանիքով անցնել Պարսկաստան և ապա Ամերիկա[135]:

Միսիոներների ամերիկյան ղեկավարը՝ Ռեյնոլտսը ամեն կերպ խոչընդոտում էր հայերի և մնացած ազգերի աղատագրական շարժումներին, նրա «ամենամեծ ջանքը և նպատակը եղած է միշտ մեծցնել բողոքական եկեղեցին Վանա մեջ»[136]: 1896 թ. կոտորածներից հետո նրա համար մեծ ասպարեզ բացվեց և նա սկսեց իր դավանափոխական առաջարկները: Այդ ժամանակ նա Եվրոպայից և Ամերիկայից առատ գումարներ էր ստանում «ի նպաստ անտեր մնացած որբերին», իր քարոզների մեջ այդ

---

132 Նույն տեղում, 1899, № 15, 1 օգոստոսի, էջ 612:

133 «Մշակ», 1896, № 26, 2 մարտի:

134 Նույն տեղում:

135 Նույն տեղում, 12 մարտի:

136 «Հայրենիք» (Բոստոն), 1905, № 41 (327), 14 հոկտեմբերի:

ամերիկացու ամենօրյա բաղձանքն էր «տեսնեմ մի օր ամբողջ Վասպուրականը բողոքական դարձած»[137]: 1896 թ. դեկտեմբերից հետո նրա գործունեության ոլորտը սկսեց տարածվել դեպի գյուղերը, սակայն նրան չհաջողվեց աղգային ղդացումից ղրկել այն երեխաներին, որոնք սովորում էին նրա կազմակերպած ուսումնական հաստատություններում:

Արանն վարդապետի զեկուցագիրը որոշ տեղերում պակասավոր է, սակայն լրիվ պատկերացում է տալիս Վասպուրականի գավառներում 1896 թ. կատարված սպանությունների և թալանի մասին: Ըստ նրա կողոպտվեցին Հայոց ձորի գավառի 32 գյուղերի 1300 տները և սպանվեց 805 հոգի: Գավառի միայն 5 գյուղերում կողոպտվեց 189 գյուղացիների ունեցվածքը, սպանվեցին 150 մարդ և կրոնափոխ եղան 56 հոգի[138]: Ամենից շատ վնասվեց Արճեշ գավառը, որտեղ ավերվեցին, կողոպտվեցին 16 գյուղեր, սպանվեցին 815 տղամարդ, 334 կին և 432 երեխա, առևանգվեցին 200 և դավանափոխ եղան 160 հոգի[139]: Գրականության և արվեստի թանգարանում է գտնվում «Արճեշ գավառի կոտորածների ամենաճիշտ նկարագիրը» զեկուցագիրը, ըստ որի Արճեշի նույնիսկ հարուստ և մեծամեծ գյուղերում «տիրում էր կատարյալ ամայություն և փողոցներում ու դաշտերումը հազարավոր անթաղ դիակաց կուտակություն»[140]: Այնտեղ թուրքական և քրդական ուժերը անջատում էին տղամարդկանց և կողոպտելով սպանում: Միայն Աղսրավ գյուղում նրանց սրին զոհ գնացին 200 հոգի, իսկ Դանձակ գյուղում ջարդարարները մի տեղ հավաքեցին գավառի հոգևորականներին և սպանեցին[141]:

Դրությունը անմխիթարական էր Թիմար գավառում, որի բնակիչները կողոպտվել էին դեռևս 1895 թ. աշնանը, իսկ 1896 թ. նրանք ստիպված ապաստանեցին Լիմ և Կաուց անապատներում[142]: Թիմարում թալանվեցին 17 հայկական գյուղ, Լիմ և Կաուց անապատների դրսի տները, սպանվեցին՝ 271, վիրավորվեցին 52, առևանգվեցին ու բռնաբարվեցին՝ 22 և կրոնափոխ եղան 200 հոգի[143]:

Նույնանման վիճակի առաջ կանգնեցին Վերին և Ներքին Խոշապի բնակիչները, որտեղ սպանվեցին՝ 347, վիրավորվեցին՝ 39, բռնաբարվե-

---

137 Նույն տեղում, № 45 (331), 11 նոյեմբերի:

138 Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 236 ա, վավ. 226, թ. 2:

139 Նույն տեղում, թ. 4—5:

140 ԳԱԹ-ի արխիվ, Հ. Առաքելյանի ֆոնդ, վավ. № 101, էջ 1:

141 Նույն տեղում:

142 Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 236 ա, վավ. 226, թ. 5:

143 Նույն տեղում, թ. 6:

ցին և առևանգվեցին 52՝ և կրոնափոխ եղան 150 հոգի[144]։ Ավելի վատթար էր վիճակը Գավաշում, որը «ամենեն ավելի վնասվող գավառներու մեջ է, բոլոր գյուղերն, առանց բացառության կողոպտված են։ Մնացյալ բնակիչք զանազան տեղեր ապաստանելե հետո, իրենց ավերակ գյուղերու վրա դարձած են այժմ։ Եկեղեցիներն ալ նույնպես կողոպտված են իրենց սրբություններով, անոթներով և սպասներով»[145]։ Գավաշում ավերվեց և կողոպտվեց 15 գյուղ, սպանվեցին 439 հոգի և կրոնափոխ եղան 50 մարդ։ Թալանի ենթարկվեցին Չարդար ս. Նշանի և Իլու վանքերը։ Անգթաբար կողոպտվեց Նարեկա վանքը, խորտակվեց մեծ բանաստեղծ Գ. Նարեկացու գերեզմանի վրա եղած քարը[146]։

Ամփոփելով հավաքած նյութերը, զեկուցագրի հեղինակը գալիս է այն եզրակացության, որ Վասպուրականի գավառներում ավերվեցին, կողոպտվեցին 125 գյուղեր, սպանվեցին 5336 հոգի (որոնցից 33 հոգևոր անձինք), վիրավորվեցին՝ 141, առևանգվեցին և բռնաբարվեցին՝ 301, անհայտ կորան՝ 154 և կրոնափոխ եղան 6176 հոգի։ Չարդարարները վառեցին 8 եկեղեցի և 20 վանք[147]։

Վասպուրականի Արճակ գյուղի բնակիչներից մեկը 1897 թ. օգոստոսի 25-ին ժողովրդի ծանր վիճակի մասին գրում էր. «Թուրքերի և քրդերի մեզ թալանելուց հետո, սովը յուր ճարակը տարածեց երկրի վրա, չմնաց ոչ մի եզ, ոչ մի գրաստ, որով կարողանայինք մեր վար ու ցանքը անել և ոչ հացաբույս, որ ամենից գլխավորն է։ Այդ բոլորից հետո մեզ ինչ է մնում անել, անճարացած հեռանալ մեր սրտին մոտիկ ծննդավայրից, մեր գեղեցիկ դաշտերից, հեռանալ մեր նվիրակ սուրբ վայրերից, գնալ մեզ անծանոթ օտար երկիր մեր թշվառ գոյությունը պահելու համար»[148]։ Հայրենիքից հեռացածների մեծ մասը մինչև ռուսական կամ պարսկական սահմանին հասնելը ընկնում էր թուրքական և քրդական բարբարոս ուժերի ձեռքը, կողոպտվում և ապա աղքատ վիճակում անցնում կամ Պարսկաստան կամ Արևելյան Հայաստան։ Նրանց մի մասը անցնում էր Թիֆլիս, Բաքու, Հյուսիսային Կովկաս և այլուր։

1896 թ. դեպքերից հետո Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաբնակ վայրերում մեծ թվով որբ երեխաներ կային։ Վանում նրանց

---

144 Նույն տեղում, թ. 7։
145 Նույն տեղում։
146 Նույն տեղում, թ. 8։
147 Նույն տեղում, թ. 9։
148 Մատենադարան, Արխիվ Խրիմյան կաթողիկոսի, թղթ. 106, վավ. 588։

թիվը հասնում էր 6000-ի, իսկ այրիներինը՝ 4000-ի։ Այդ ժամանակ Վասպուրականում բացվեցին 4 որբանոց՝ Վարագում, Կարմրավոր, Սալնապատի և Նարեկի եկեղեցիներին կից՝ 120 որբերով, իսկ մնացածները մնացին բախտի քմահաճույքին[149]։ Ամերիկյան որբանոցի տնօրենի՝ Ռեյնոլդսի դպրոց-որբանոցում 1899 թ. կեսերին կար 500 որբ, որոնցից 200-ը՝ աղջիկ և 300-ը՝ տղա[150]։ 1897 թ. Վանի բնակչությունը ծայրահեղ թշվառ վիճակում էր, կանգնած էր սովի առջև, ջարդարարները հափշտակել և տարել էին «երկրագործության օգտակար բոլոր անասունները, եզ, գոմեշ»[151]։ Չնայած 1897 թ. բերքառատ տարի էր, սակայն երկիրը սհ ու սարսափի մեջ պահող ուժերը «խլեցին արդյունքի մի մասը, չնայելով պահանջվող տուրքերին, որոնց հավաքող պաշտոնյաները դիմում էին տմարդի միջոցների, երբեմն իսկ կանանց գրավ էին վերցնում մինչև վճարելը»[152]։

1896 թ. աշնանը Վասպուրականի գյուղերում գյուղացիների անասունների մեծ մասը կողոպտված էր, նրանք հնարավորություն չունեին վար ու ցանք անելու և նահանգի բնակչությունը կանգնած էր սովի վտանգի առջև։ Այդ կապակցությամբ նոր փաշայի մոտ հավաքվեցին թուրք, քուրդ և հայ ազգի վերնախավի ներկայացուցիչները։ Փաշան հանդես նրանց հայ գյուղացիներից խլված անասունները փոխ տալ «պայմանով, որ հունձքի կեսը տրվի իրենց աղաներին»[153]։ Սակայն հարցը միայն քաշող անասուններ ունենալու մեջ չէր, քանի որ գյուղացիները սերմացու չունեին։ Կառավարությունը ստիպված Բիթլիսից ցորեն գնեց և հանձնեց գյուղացիներին։

Գրականության և արվեստի թանգարանի արխիվում պահպանվել է Վանի ռուսական փոխհյուպատոս Վլ. Մաևսկու 1896 թ. գրած մի սովամածավալ հաշվետվությունը, ըստ որի 1896 թ. դեպքերից առաջ և հետո Վասպուրականից հեռացել էին 15-ից 18 հազար բնակիչներ, որոնցից՝ դեպքերից հետո միայն 1500-ը վերադարձան[154]։ Թուրքական իշխանությունները աշխատում էին վերադարձողներին ապահովել հարձակումներից, սակայն ըստ փոխհյուպատոսի, վախենում էին, որ նրանց հետ կարող էն Վան թափանցել հայ ազգային կուսակցությունների ներկայացուցիչ-

---

149 «Լումա», գիրք Ա, 1899, էջ 202։
150 «Բյուզանդիոն», 1899, № 805, 8/20 հունիս։
151 «Արձագանք», 1897, № 85, 27 (8 օգ.), հուլիսի։
152 Նույն տեղում։
153 Նույն տեղում։
154 ԳԱԹ-ի արխիվ, հավաքածու 202, վավ. 131 բ, թ. 1։

նեբը։ Նրա վկայությամբ Վասպուրականում շատ էր կրճատվել բնակիչների թիվը հատկապես Արճեշի, Կարճկանի, Նորգուղի, Շատախի շրջաններում։ Վան քաղաքում կային թափառաշրջիկ և ողորմություն խնդրող հայեր։ Ըստ նրա՝ գյուղացիների հետ զրույցի ժամանակ նրանք հաստատապես պնդել են, եթե հանդարտ վիճակ լինի և իրենց չխանգարեն, ապա հնարավոր կլինի 2—3 տարվա ընթացքում դուրս գալ այդ աղքատ վիճակից[155]։

1896 թ. հունիսյան դեպքերից հետո սկսվեց Վասպուրականի բնակիչների գաղթը դեպի Ամերիկա։ Ժողովրդի մեծ մասի մոտ վերջնականապես կոտրվեց թուրքական կառավարության, նրա աստիճանավորների նկատմամբ հավատը։ Ժողովուրդը այլևս չէր հավատում նրանց սուտ խոստումներին և հաստատապես գիտեր, որ այդ երկրում չկա և չի կարող լինել ինչպես կյանքի, այնպես էլ գույքի ապահովություն։ Հատկապես դեպի Ամերիկա էին ձգտում Վանի ամերիկյան դպրոցների շրջանավարտները։ Ամերիկացի բժիշկ Ռեյնոլտսը այդ օրերին Վանի բնակիչներին ասել է. «Երանի՛ թե բոլոր թուրքահայերը այժմեն իրենց նոր հայրենիք մը ընտրեն Ամերիկայի մեկ ընդարձակ նահանգին մեջ և հոն կազմեն նոր Հայաստան մը, քի Թուրքիայի մեջ դուք ապագա չունիք»[156]։ Ամերիկյան զարգացող արդյունաբերությունը աշխատող ձեռքերի խիստ կարիք ուներ և հայերը ելնելով իրենց ծանր վիճակից համաձայն էին աշխատել ավելի ցածր վարձատրությամբ։ Միաժամանակ ամերիկյան միսիոներները սկսեցին ամերիկյան նոր դպրոցական շենքի կառուցումը։ Այդ դպրոցում ավելի շատ հայ երեխաներ ընդգրկելու նպատակով նրանք իրենց դպրոցական ծրագրում ավելացրին «Հայ աղգային և ընդհանուր աղգաց պատմություն» առարկաները[157]։ Հ. Երամյանի վկայությամբ Վանի ամերիկյան դպրոցներում աշխատող հայ դասատուները շատ չնչին աշխատավարձ էին ստանում, իսկ դոկտոր Ռեյնոլտսը և մյուսները պարտեղների մեջ ուրույն պերճահարդար հարկաբաժինների մեջ «ամերիկյան ճոխ կյանք մը կապրեին՝ բազմաբույրյան խոհանոցներով, ծառաներով, ձիերով, կառքերով և այլն»[158]։

Հայ ժողովրդին իրենց կողմը ներգրավելու ձգտումը հասցրեց նրան, որ ամերիկյան միսիոներները սկսեցին իրենց ծրագրերն ավելի հարմա-

---

155 ՖԱՔ-ի արխիվ, հավաքածու, 202, վավ. 131 բ, թ. 23։

156 Հ. Երամյան, նշվ. աշխ., Ա հատ., էջ 442։

157 Նույն տեղում, էջ 443։

158 Նույն տեղում, էջ 444։

բեցնել հայկական իրականության և աշակերտներին ծանոթացնել հայ եկեղեցու աղոթքների և շարականների հետ։ Խ. Դրուզյանին հաջողվեց ամերիկյան դպրոցների մեջ «հայ եկեղեցվո դասը մտցնել և որբերը ամեն տոնական օրերուն հայոց եկեղեցին կառաջնորդեր»[159]։ 1900 թ. արդեն Վանում էր բողոքականների ղեկավար Կարապետ Շիրինյանը, մինչ այդ կրոնական բոլոր ծեսերը (մկրտություն, հաղորդություն, պսակ, թաղում և այլն) կատարում էր դեկտոր Ռէյնոլտսը։

1890-ական թվականներին Վան քաղաքում ավելացան գերմանական միսիոներները, որոնք նույնպես սկսեցին ժողովրդի մեջ իրենց քարոզները։ Իրենց պրոպագանդան ժողովրդի մեջ ուժեղացրին նաև կաթոլիկները, որոնք 1896 թ. կոտորածներից հետո Վանում հիմնեցին երկու որբանոց (արական և իգական)։ Վանում իրենց աշխատանքը աշխուժացրին նաև ֆրանսիական կրոնավորները, որոնք նույնպես բաց արեցին իրենց դպրոցները։

1898 թ. Վանն ուներ կաթոլիկների իր անդրանիկ առաջնորդը՝ մշեցի Անտոն Ճնոյանը։ Սակայն իրականում օտարերկրացիների պրոպագանդան քիչ ազդեց Վասպուրականի բնակիչների վրա և նրանք այնտեղ քիչ ծխեր արձակեցին։ Վանում հաստատված գերմանացիները որբերին ուսում տալու նպատակով տանում էին Գերմանիա, որոնք դասընթացը ավարտելուց հետո չէին վերադառնում հայրենիք։

Վասպուրականի բնակիչների գաղթը դեպի Արարատյան դաշտ և Էջմիածին սկսվեց 1896 թ. սեպտեմբերին և յուրաքանչյուր օր Էջմիածինը ընդունում էր 500—600 գաղթական։ XIX դարի վերջին Պարսկաստանից Վան անցնող դանիացի Բնգսենը իր հուշերում գրում է, որ Ճանապարհին նա ամենուրեք հանդիպել է «կիսավերակ և ավերակ դարձած հայ գյուղերի, որոնք քանդվել, կործանվել են կառավարության ձեռքով, իսկ ժողովուրդը կոտորվել 90—96 թվականներին։ Գյուղերում մնացած են միայն մի քանի կիսավեր շենքեր, եկեղեցիներ և այլն, կարծես վկայելու համար միայն, որ անցյալում այդ տեղերում բնակություն և շունչ է եղել...»[160]։ Ճանապարհորդի վկայությամբ բնաջնջվել և «ամայի է դարձել այդ դրախտանման երկիրը։ Մնացած գյուղերում էլ, ինչպես Վանի շրջակայքում, այժմ հայերը խառն ապրում են քրդերի հետ, իսկ կան այնպիսիները, որոնց մեջ միայն մի քանի տուն է մնացել, մինչդեռ անցյալում եղել են մի քանի տասնյակ տներ»[161]։

159 Նույն տեղում, էջ 446։

160 «Հնչակ», 1902, 1 ապրիլի, էջ 5։

161 Նույն տեղում։

1905 թ. Աբաղայից Վան գնացող ուղևորները միաբերան հաստատում են, որ դաշտը քրդական բնակավայր էր, բացառությամբ Խաչան և Նազարավան գյուղերից։ Հայերի մեծ մասը 1896 թ. դեպքերից հետո հեռացել էին[162]։ Ամբողջովին քայքայվել էր Նորդուզի գավառը, որտեղ 1890 թ. հայերն ունեին 339 տնտեսություն, որոնցից 1898 թ. մնաց միայն 98-ը։ Նորդուզի հայերի մեծ մասը անցավ Աբաղայի դաշտը, որտեղ քուրդ Կոփ Մահմեդը և Մուստաֆան նրանց վարելու, ցանելու և արդյունքը կիսաբար բաժանելու պայմանով հողեր առանձնացրին, որը «ո՛չ այնքան մարդասիրական, որքան շահադիտական նպատակներով անունց ընդարձակ հողեր հատկացուց իր ամայի կալվածքների մեջ»[163]։ Այդ բեկերի հովանավորության տակ անցածները ազատ էին հարկերից, բեկը վերցնում էր նրանց աշխատանքի արդյունքի կեսը և պետական պաշտոնյաների հետ ինքն էր լուծում հարկերի հարցը։ Նրանք փաստորեն դառնում էին ռայա և «ազատ էին» մնում «պետական կեղեքումներին, քրդական ալան-թալաններն»[164]։ Այդ կարգի գյուղացիները «համարյա կիսազատ էին քրդերի չափ, «Բեդիլ ասքերիե» (զինվորական տուրք) չէին տալիս, աշար չկար, որովհետև գյուղը միշտ ազան էր գնում. աղնամը (ոչխարի տուրք) շատ քիչ էր լինում, որովհետև ազայի վախից պաշտոնյաները չէին համարձակվում գյուղի ոչխարները անձամբ հաշվել, միայն գոհանում էին ցույց տված թվի վրա տուրք դնելով և առնելով»[165]։ Նույն ականատեսը, սակայն, միաժամանակ նշում է, որ Աբաղայի դաշտում ձմեռը քրդական վերնախավի ներկայացուցիչները ձյան վրայով անցնում էին «խզակ» կոչվող նեղ սահնակներով, որոնց «չծակները մեծ մասամբ լինում էին մրիքա հայերը կամ քուրդերը»[166]։

Թուրքական կառավարությունը Վանի հայերին ավելի ղսպված վիճակում պահելու նպատակով 1900 թ. սկսեց քաղաքում հայերի հաշվին զորանոցի կառուցումը։ Պահանջվեց հայերից ձրի գերաններ տալ և զորանոցի կառուցումից հետո, ինչպես նշում է «Հնչակը», «քաղաքս կատարյալ զինվորական շրջայի մը մեջ առնված պիտի ըլլա՝ հայ թաղերուն չորս կողմը զորքերով պաշարված մնալով։ Ասկե զատ, ինչպես

---

162 Մալխաս, ճամբուս վրա, հատ. Ա, Նյու Յորք, 1950, էջ 45։

163 Հ. Ութմյան, նշվ. աշխ., էջ 373։

164 Մալխաս, ճամբուս վրա, հատ. Ա, Նյու Յորք, 1950, էջ 48։

165 Արամը, մահվան հինամյակի առթիվ, Լիբանան, 1968 (Արամի հուշերի բաժինը), էջ 180—181։

166 Նույն տեղում, էջ 211։

կլսենք, կառավարությունը մտադրություն ունի շրջակա քանի մը հարմարավետ բլրակների գլխին մարտկոց զորանոցներ շինելու»[167]։ Այս միջոցառումները, անկասկած, արվում էին Վասպուրականի հայ հատվածի աղատագրական շարժումները ճնշելու նպատակով։

1899 թ. հունվարի 4-ին Վանից Ամենայն հայոց կաթողիկոսին գրած մի նամակում ժողովրդի ծանր ու դառն վիճակի մասին ասված է. «Վասպուրական աշխարհ կենաց ու մահու ամենասոսկալի ճգնաժամու մեջ կը գտնվի։ Նախկին անշափ աղետներե հետո, ահա ճշմարիտ սով մը եկած ու պաշարած է զմեզ։ Սով կանվանենմք իրավամբ, վասնզի թողունք, որ հացահատիկներու գներ անմատչելի են հասարակ ժողովրդին — ցորենի գին լինելով 60—68, բայց ժողովուրդն այնքան աղքատ է, որ դրամ չի կրնար գտնել հացի տալու։ Բշվառությանց ու կարոտությանց մեծություն ճշմարիտ սովիմ կերպարան դառած է իրաց վիճակին և ահա սովամահներ հաջորդաբար կը լինին զանազան գյուղերև ու գավառներե։ Արդեն ժամանակե մը ի վեր ժողովրդյան անունդն էր խաղողի կուտ, կորընկանի սերմ, զոր աղալով հաց կը շինեին. գազի արմատ և այլն այդ տեսակ խոտեր և բույսերու արմատներ, հիմա կերևի թե անոնք ալ լմցած են, իսկ արմատներ ձեռն ներքև թողած»[168]։

Ստանալով այդ նամակը, Մ. Խրիմյանը վան է ուղարկում Ներսես եպիսկոպոս Ասլանյանին, որը ուսումնասիրելով քաղաքի հայ բնակիչների վիճակը, 1899 թ. մայիսի 25-ին «Այցելու հովիվ» սուրբգրությամբ մի տեղեկագիր կազմեց, ըստ որի Վասպուրականի հայկական շատ գյուղեր դատարկված են, իսկ հայ բնակիչների փոխարեն այնտեղ բնակություն են հաստատել քրդական ցեղերը, իսկ «հայ գյուղացվոց վիճակը շատ դառն է և անհանդուրժելի. ասոնց կենդանիները կը հափշտակվին, արտերը քուրդերու վրա կը փոխանցվին, ցորենը և զգեստը, կարասի և գործի կը կողոպտվին։ Առևանգություններ անպակաս են, սպանություններ սովորական են, ինչ որ աստիճան մը ևս կդառնացնե իրենց վիճակը, որ արդեն աննախանձելի էր վերջին դեպքերուն հետևանոք»[169]։ Նույն տեղեկագրում ասված է այն մասին, որ քուրդ բեկերը և Համիդյե գնդերի ղեկավարները առանց վախի գրավում են հայ գյուղացիների հողերը։ Նրանք այնքան անվախ են դարձել, որ շատ դեպքերում, հարկերի փոխարեն հափշտակում էին վանի առաջնորդարանից գյուղացիներին տըր-

---

167 «Հնչակ», 1901, № 5, 20 հուլիսի, էջ 48։

168 ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի ֆոնդ, ց. 1, գ. 177, թ. 1։

169 Նույն տեղում, գ. 172, թ. 1։

ված օգնության գումարները։ Քուրդ բեկերը գյուղացիների պարտքերից օգտվելով, նրանց դարձնում էին մարաբաներ։ Ջևկուցագրում ասված է նաև, որ «կան մաս մը հայեր ալ որ քրդերուն կիսրար (մարապա) եղած են, բայց կիսրարութիյուն բառով և ոչ արդյունքով, դի մեն տասներորդ մասը արդյունքին կը տրվի եղեր՝ իրենց աշխատութիյան փոխարեն, և այս՝ անշուշտ կատիպ այդ գյուղացին, որ անոթի մնա, որ տուն տեղ, արոր և արտ Քողլով պանդխտի, այլուր մուրացկանութիյան ելնելու վատ սովորութիյը ձեռք առնելու»[170]։

1880 թ. մինչև 1904 թվականը Վանի նահանգի բնակիչների թիվը պակասեց 55 հազարով։ Այդ տեսակետից շատ հետաքրքրական է «Աղաւտամարտի» 1910 թ. այդ մասին տպագրված մի հաշվետվությունը, ըստ որի այդ ժամանակամիջոցում հայերի թիվը 200 հազարից հասել էր 145-ի[171]։

* * *

1897 թ. դաշնակցական կուսակցությունը կազմակերպեց Խանասորի հայտնի արշավանքը, որի նպատակն էր պատժել քրդական Մազրիկ ցեղին և նրա ցեղապետ Շերիֆ բեկին, որի ուժերը 1896 թ. Բարդուղեմիոսի առաքյալի վանքի մոտ Խանասորի դաշտում անխնա ոչնչացրին դեպի Պարսկաստան գնացող Վանի մի քանի հարյուր երիտասարդների։ Այդ բեկը ջարդարար էր և գործիք թուրքական իշխանությունների ձեռքում։ Նրա գլխավոր ուժերը հաճախակի հարձակվում էին հայկական գյուղերի վրա։ Ըստ ժամանակակիցների, այդ արշավանքը իբրև թե կազմակերպվեց այն նպատակով, որպեսզի թուրքական իշխանություններին և քրդական վերնախավին հասկացվի, որ 1894—1896 թթ. ջարդերից հետո անգամ հայկական հեղափոխական ոգին չի մահացել։ Առանց որևէ հիմքի դաշնակցական կուսակցության բոլոր գործիչները, առանձին բացառություններից բացի, այդ արշավանքը համարում են «եղակի ձեռնարկ»[172]։

Խանասորի արշավանքը տեղի ունեցավ 1897 թ. հունիսի 25—27-ը ընկած ժամանակամիջոցում։ Այդ օրերին 320 հոգի մեկնեցին կռվի դաշտ նախօրոք Սալմաստում կենտրոնացնելով 300-ից ավելի հրացան,

---

170 Նույն տեղում, թ. 2։

171 «Ազատամարտ», 1910, № 346, 29 հուլիս, 11 օգոստոս։

172 Մալխաս, Ապրումներ, Ա հատ., էջ 153։

112 հաղար փամփուշտ[173]։ Այդ անհաջող արշավանքին մասնակցել են ոչ միայն դաշնակցական կուսակցության և նրան հարող անդամները, այլև մարդիկ, որոնք չէին որդեգրված այդ կուսակցությանը։

Ռ. Տեր-Մինասյանը գտնում է, որ Խանասորի «Մեծ դեպքը լքված հոգիներուն կենդանություն տվավ» և հոգեբանական մեծ ազդեցություն թողեց քրդական ցեղերի վրա, քանի որ նրանք տեսան և զգացին, որ «Հայը կրնա պատժել ղինքը կոտորողը...»[174] և իբրև թե դրանից հետո քրդական ղինված ուժերը հայերի նկատմամբ համեմատաբար ավելի զսպված էին պահում և «եթե կառավարության անմիջական ճնշումը չլիներ, չեղոք դիրք կը բռնեին և երբեմն ալ նույնիսկ կօգնեին փոխադրական գործին»[175]։ Քրդական ցեղերի գործունեության մասին Ռ. Տեր-Մինասյանի այդ կարծիքի հետ ոչ մի կերպ չի կարելի համաձայնվել, քանի որ դրանից հետո նրանք հարձակվեցին Սասունի Գելիեգուղանի վրա, սպանեցին Աղբյուր Սերոբին, ապա ավերեցին Սասունի Սպաղանք հայկական գյուղը և 1904 թ. կռվի ելան սասունցիների դեմ։ Իրականում Խանասորի արշավանքը մի ձախողված գործ էր։

Ուսումնասիրությունից երևում է, որ գտնվել են շատ մարդիկ, որոնք դեմ էին այդ արշավանքին։ Վառնայում հրատարակված դեյթունցի Հ. Չագրյանի «Տավրոս» շարաթաթերթում կարդում ենք, «քիչ շատ լուրջ կարծված անձնավորություններ այդ գաղափարի (արշավանքի— Հ. Պ.) իրականացմանը հակառակ էին» և նույնիսկ Ատրպատականի դաշնակցականները դրանից հետո «հինգեն ավելի ճյուղերեն բաժանված են» և այդ արշավանքը շատ վնաս հասցրեց Սալմաստի հայերին, որոնցից պարսկական իշխանությունները 1000 թուման տուգանք գանձեցին, իսկ քրդական ուժերը Հընմ-Պանավա գյուղից 9 մարդ սպանեցին, ապա հարձակվեցին Վառ անունով հայ-թուրք բնակչություն ունեցող գյուղի վրա, այրեցին և սպանեցին 200 հոգի, որից 15-ը թուրք[176]։ Խանասորի արշավանքից հետո ծանր վիճակի մեջ ընկան Պարսկաստանում բնակված Աղբակի հայ բնակիչները։

1896 թ. Վանի բնակչության կոտորածից հետո իր 40 ընկերներով Վան է գալիս Փարամազը (Մաթևոս Սարգսյան-Փարամազյան)։ Պարսկաստանից մինչև Վան այդ խումբը մի քանի անգամ բախվում է թշնա-

---

173 Նույն տեղում, էջ 166 և 168։

174 Ռուբեն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, Ա հատ., Լոս Անճելըս, 1952, էջ 423։

175 Նույն տեղում։

176 «Տավրոս» (Վառնա), 1898, № 1, 24 հունվարի։

մու ուժերի հետ։ Որոշ ժամանակ Վանում մնալուց հետո խումբը հայտնաբերվում է, բանտարկվում են Փարամազը, նրա ընկերներ Արշակը և Վարդանը, որոնց հետ և 5 տեղացի երիտասարդներ։

Փարամազը պահանջում է օտարերկրյա հյուպատոսներից մասնակցել իր և իր ընկերների դատավարությանը։ 1898 թ. օգոստոսի 1-ին Փարամազը Թուրքական դատարանում արտասանեց իր հայտնի ճառը, թե ինչպիսի ծանր վիճակի մեջ են Արևմտյան Հայաստանի և Վանի վիլայեթի հայ և թուրք բնակչությունը։ Դիմելով դատարանի նախագահին, նա ասաց, որ «դուք մեզ անվանում եք խռովարարներ, սրիկաներ, ավազակ-կողոպտիչներ, ժողովրդի անդորրությունը վրդովողներ, սակայն մենք այդպիսիները չենք, քանի որ այդպիսին լինել «նշանակում է շահագործել ժողովուրդը»[177]։ Այնուհետև նա գտնում է, որ իրենք հեղափոխականներ են և պայքարում են իրենց ժողովրդի աղատության համար։

Այդ ճառում հետաքրքիր փաստեր կան Թուրքիայում գոյություն ունեցող հարկերի և նրանց հավաքելու դաժան ու անմարդկային մեթոդների մասին. «Գյուղերի երեսը,— ասված է ճառում,— վաճառվում է հարուստ կապալառուներին, որով եթե գյուղը պիտի տա 100 ոսկի, կապալառուն ստանում է 200 և ավելի։ Զինվորական տուրքը՝ փոխանակ ստանալու 21 տարեկանից, ստացվում է ծծկերից, դեռ չծնվածից, նույնպես և մեռածներից»[178]։ Փարամազը իր ճառում պաշտպանում է ոչ միայն հայերին, այլև հարստահարվող տաճիկներին, ասելով. «Մեկ արտամերցի տաճիկ ինձ պատմել է. «մեր ծառի տանձը գնահատեցին 20 դուրուշ, իսկ ես ծառը իր վրայի տանձով առաջարկեցի նրանց գնել 10 դուրուշով, որի փոխարեն լավ ծեծվելուց հետո՝ վճարեցի տուրքը»[179]։ Այնուհետև նա խոսում է օսմանյան Թուրքիայի բանտերում տառապողների ծանր վիճակի մասին, որոնցից ծեծի և խոշտանգումների միջոցով են ցուցմունքներ կորզում։ Ըստ Փարամազի հեղափոխականները պահանջում են խղճի, մամուլի, ժողովների գումարման և խոսքի ազատություն «կյանքի, ինչքի ու պատվի ապահովություն»[180]։ Այնուհետև նա շարունակում է. «Որովհետև մեր պահանջները չեն կարող օսմանյան պետության տակ ապահովվել, ուստի մենք հեղափոխականներս մարդկային ամենայն իրավունքով պահանջում ենք՝ Հայաստանի ազգաբնակչության

177 «Փարամազի ճառը, իմ դատավարությունս Տաճկաստանում 1898 թուին», Շիկագո, 1919, էջ 10։

178 Նույն տեղում, էջ 19։

179 Նույն տեղում, էջ 20։

180 Նույն տեղում, էջ 29—30։

բաժանումը օսմանյան պետությունից»[181]: Ճառի վերջում նա անվախ հայտարարում է, որ մենք չենք պահանջում ունենալ հայկական բեգություն և թագավորություն, քանզի «մենք թիու ազգայնամոլներ չենք, մենք աննենգ ժողովրդասերներ ենք» և մենք պահանջում ենք «հայ, քուրդ, թուրք, արաբ, լազ, չերքեզ, ասորի մինչև անգամ մուքթուբ գնչուն իր քվեյով ընտրի իր կառավարիչը և կառավարվի իրենց կարգված մարդերով ու օրենքներով, որը բարութեյան հասնելու կարճ ճանապարհն է: Մենք պահանջում ենք Հայաստանը իր մեջ ապրող ազգաբնակչության համար»[182]:

Դատարանի՝ Փարամազին և Մելքոնին կախելու որոշումից հետո, վլ. Մահսկու միջնորդությամբ Փարամազին և նրա երկու ընկերներին փոխադրում են Կովկաս, որտեղ որոշ ժամանակ անց նրանք ազատվում են բանտից: Փարամազը միշտ հպարտությամբ ասել է. «Հոն, ուր կախաղաններն են ճոճում՝ ազատություն է մանգալիս»[183]:

Այսպես շարունակվեց հայ ժողովրդի արևմտյան հատվածի անագորույն վիճակը մինչև 1908 թ. թուրքական հեղափոխությունը: 1915 թ. երիտասարդ թուրքերի կառավարությունը սկսեց իր հպատակության տակ գտնվող անմեղ հայերի գենոցիդը, որին զոհ գնացին ավելի քան մեկ ու կես միլիոն հայեր: Այդ ժամանակ էր, որ սկսվեց Վանի բնակիչների մեկամյա հերոսական պաշտպանությունը, որը մեր ժողովրդի պատմության մեջ իր արժանավոր տեղն ունի:

---

181 Նույն տեղում:

182 Նույն տեղում, էջ 30:

183 Սիրվարդ, նշվ. աշխ., էջ Ա:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻ ՎԻՃԱԿԸ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Վասպուրականը միջնադարում հանդիսացել է Հայաստանի ամենակարևոր մշակութային կենտրոններից մեկը։ Վան քաղաքից և նրա շրջաններից ծնունդ են առել մեծ թվով մշակույթի գործիչներ, բանաստեղծներ, պատմաբաններ, Անանիա և Գրիգոր Նարեկացիները, Գրիգորիս Աղթամարցին, Քուշակը, Հակոբ Արծկեցին, Ներսես Մոկացին, Թովմա Մեծոփեցին, Թովմա Արծրունին, իսկ XIX դարի երկրորդ կեսին Մ. Խրիմյանը, Գ. Սրվանձտյանցը, Ղ. Փիրղալեմյանը, Ա. Թոխմախյանը, Տևկանց (Տեր-Սարգսենց-Սարգսյանց) եղբայրները (Երեմիա, Արիստակես, Սեդրակ), Գ. Շերենցը և շատ ուրիշներ։

XIX դարի վերջին Վասպուրականում հաշվվում էին ավելի քան 2000 մագաղաթյա ձեռագրեր, որոնց հիշատակարանների հավաքման և հրատարակման գործում մեծ աշխատանք տարան Ղ. Փիրղալեմյանը, Գ. Սրվանձտյանցը, Ե. Լալայանը, Գ. Աղանյանցը և ուրիշներ։ Հատկապես հարգանքի է արժանի Ե. Լալայանի կատարած աշխատանքը, քանի որ ձեռագրերը «1896 թ. Վանի կոտորածի ժամանակ թաքցված են եղել եկեղեցիների գաղտնի պահարաններում, ուր 14 տարի շարունակ անձեռնմխելի մնալով՝ բորբոսնել, փչացել և թերթերը իրար են կպել, որ պ. Լալայանը հանել է ավել, արևի տակ չորացրել, մաքրել և այսպիսով ազատել կորստից»[1]։

Վասպուրականում և նրա վարչական կենտրոն Վանում մինչև 1830-ական թվականները չեն եղել կանոնավոր դպրոցներ։ Այդ շրջանը ուսումնասիրողները, իրավամբ, անվանում են «Քուլհակ-վարժոցի շրջան», երբ Վանի արհեստավորները, ինչպես նաև առևտրականներն իրենց

1 «Ցուցակ ձեռագրաց Վասպուրականի», կազմեց Երուանդ Լալայան, Թիֆլիս, 1915, էջ 5։

աշակերտներին արհեստ և առևտուր սովորեցնելու հետ միասին ուսուցանել են գրել և կարդալ։ Սկսած 1820-ական թվականներից փորձեր են արվում դպրոցներ բաց անելու։ Վանի իշխանապետ Հակոբ Ղարասեֆերյանը Կոստանդնուպոլսից Վան է հրավիրում Կարապետ Մոկացուն, որը «գիտակ էր կրոնական առարկաներու և եկեղեցական երաժշտության»[2] և եկեղեցիներից մեկին կից ստեղծեց դպրոց, որը ուներ մի քանի տասնյակ աշակերտներ։ Քաղաքի այդ անդրանիկ դպրոցը կարճատև կյանքից հետո փակվում է, իսկ նրա ուսուցիչը հեռանում է Լիմ անապատ։ 1826 թ. Հ. Ղարասեֆերյանի տղան՝ Գրիգորը նախկին դպրոցը վերանորոգելով, մայրաքաղաքից Վան է հրավիրում Պետրոս Արտամեցուն, որին ժամանակակիցները անվանել են «երաժիշտ քաղցրանուագ կացեալ մանկանց դաստատու»[3]։ Այս դպրոցը նույնպես կարճ կյանք ունեցավ, քանի որ Գրիգորը հանվեց իշխանապետությունից, իսկ նրա ուսուցիչը՝ Պ. Արտամերացին դարձավ Արարք եկեղեցու քահանան, որին կից բաց արեց մի փոքր դպրոց, որտեղ կարճ ժամանակ սովորեց նաև Մ. Խրիմյանը։

1839 թ. Վան է գալիս Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանի շրջանավարտ Հովհաննես-Պղալ-Ամիրզատյան (Քոլոզ) վարժապետը և նշանակվում է Այգեստանի Նորաշեն եկեղեցուն կից նոր բացված դպրոցի օգնական։ Այդ դպրոցում, որը 100 աշակերտ ուներ, ուսուցանում էին միայն քերական-այբբենարանով և սուրբ գրքերով։ Չի կարելի համաձայնել Հ. Երամյանի այն մտքի հետ, թե քանի որ Վան քաղաքի ժողովուրդը կրոնասեր էր և հաճախ էր այցելում եկեղեցի, ապա նրանց «ականջը այնքան կը լցվեր գրաբարով, որ հետին անգրագետն անգամ կը հասկնար գրաբարը»[4]։ Քոլոզը (1814—1879) ծնվել է Վանում, 6 տարեկան հասակում զրկվելով հորից, ապրում է իր քեռու (Քոլոզի) տանը, որից էլ ժառանգում է այդ մականունը։ Աշակերտելով մի վարպետի, նրանից արհեստ և գրագիտություն է սովորում։ 1829 թ. մեկնում է Երուսաղեմ, մտնում ժառանգավորաց վարժարանը։ 7 տարի սովորելով, ավարտում է լրիվ դասընթացը։ 1839 թ. նա Կոստանդնուպոլսի պատրիարքի մոտ գրագիր էր, գրաբարի հիանալի գիտակ և «Ծեսարանը Վասպուրականի» չափածո պոեմի հեղինակը, որի մեջ ժամանակի իրադարձությունները նկարագրել է «իրեն հատուկ տաղաչափությամբ, հոխ և

---

2 «Վան Տոսպ», 1913, № 38, հոկտեմբեր։

3 Մատենադարան, ձեռ. № 9424, էջ 165։

4 Հ. Երամյան, նշվ. աշխ., էջ 29։

նկարում գրաբար լեզվով»[5]։ Պոեմը գրելուց առաջ տարիների քրտնաջան աշխատանք է տանում, ուսումնասիրելով Վասպուրականի ձեռագրերը և նրանց հիշատակարանները։ Մահից հետո նրա պոեմը, բանաստեղծությունները և արխիվը հանձնվում են Պողոս Մելիքյանին, իսկ վերջինիս սպանությունից հետո՝ Վարդան Ձրվանդյանցին։ Արժեքավոր այդ պոեմի միակ սևագիր օրինակը գտնվում է Երևանի մատենադարանում և այդտեղ է տեղափոխվել Երևանի պետական համալսարանի գրադարանից, որը, հավանաբար, հանձնել են Քոլոզի ժառանգորդները։ «Վան Տոսպի» մի հոդվածում նշված է, որ Քոլոզը հանդիսացել է «ԺԹ դարու ուսուցիչ, պատմագիր և տաղագիր»։ Մեզ չհաջողվեց այդ տաղերը գտնել։ Այդ վարժապետը «գիտակ էր գրաբարի, ճարտասանության և աստվածաբանության» և ըստ Խ. Լևոնյանի տպագրած մի հոդվածի, ունեցել է նաև «մեկ երկու կրոնական գրվածքներ, ամենքն ալ գրաբար և անտիպ»[6]։

Վան քաղաքի դպրոցական կյանքն ավելի է աշխուժանում, երբ 1847 թ. այնտեղ է հրավիրվում քաղաքի ծնունդ Հակոբ Թոփուզյանը, որը սկզբնական կրթությունը Վանում ստանալուց հետո 1816 թ. գնում է Կոստանդնուպոլիս, ուր աշակերտում է Փեշտիմալճյան վարդապետին։ Մայրաքաղաքից անցնում է Երուսաղեմ և ժառանգավորաց վարժարանի սան լինելով, սովորում «բազում շարականս և երգս զարմանալիս»[7]։ Ժառանգավորաց վարժարանը ավարտելուց հետո գալիս է Կոստանդնուպոլիս և դառնում Մշո ս. Կարապետի վանքի նվիրակը։ 1829 թ. Մինաս վարդապետի հետ գալիս է Մշո ս. Կարապետի վանքը, հիմնում դպրոց և «ատանա բազում աշակերտս և ուսուցանեն»[8]։ Մուշում մնում է մինչև 1829—1833 թթ., ապա փոխադրվում Լիմ անապատ, ուր զբաղվում է ուսուցչությամբ և ձեռնադրվում վարդապետ։ Վանից անցնում է Էջմիածին, Թիֆլիս, Կիլիկիա, Կոստանդնուպոլիս։ 1847 թ. Վանի բնակիչ Կըրճիկյան Հակոբի հետ որոշում են «բանալ զվարժարանս ի յեկեղեցիս Վան քաղաքիս և ապա ձեռնարկ անել բացմանն ժառանգավորաց դըպրոցին»[9]։ Այնուհետև Շարան Շաբանյանի հետ գալիս է հայրենի քաղաք, պատրիարքարանից ունենալով «հատուկ հրահանգ բացման դպրո-

---

5 «Վան Տոսպ», 1913, № 38, հոկտեմբեր։

6 Նույն տեղում։

7 Մատենադարան, ձեռ. № 4180, թ. 47։

8 Նույն տեղում, թ. 84։

9 Նույն տեղում, թ. 48։

ցաց»[10], նրանց ջանքերով էլ բացվեցին Վանի վեց ծխական վարժարանները, որտեղ դասավանդում էին ամենագրագետ մարդիկ։

Այդ դպրոցների մասին Քոլոզի պատմում կարդում ենք. «Նախ շինեցին զքաղաքիս բաղում ծախիւք վարժարան, զհղկեալ փայլուն սուրբ տախտակօք զարդարեցին աննման»։ Ըստ նրա այդ դպրոցներից աճեցին «քաջ քերականն», «կարի ճարտասանն», «շատ երաժիշտք կային սրբոյ եկեղեցւոյ քաղցրաձայն» և ապա «ոմանք ի բարձր մուտ գիտութեան ուղին աղնիւ թուաբան, և ոմանք ևս տօմարագետք և աշխարհագետ չափաբան»[11]։ Այդ դպրոցներում աշակերտներին ուսուցանել են ճարտասանություն, երաժշտություն, թվաբանություն, տոմարագիտություն, չափաբանություն, աշխարհագրություն, հին հայ մատենագիտություն և հայոց լեզու[12]։

1848 թ. Վան է ժամանում նոր նշանակված Մահմեդ փաշան, որին Քոլոզը անվանում է «այս խոհեմ խոհագետ», որի հետ էր Շարան Շարանյանը։ Նրանք բերում են Մատթեոս պատրիարքի հորդորագիրը՝ ուղղված Վանի բնակիչներին, տերությանը հնազանդ լինելու և դպրոցներ բացանելու մասին։ Այդ տարիներին դպրոցներ բացվեցին նաև գյուղերում, որտեղ ժողովրդից հավաքված հարկից ուսուցիչները ստանում էին աշխատավարձ, իսկ աղքատ երեխաները՝ ղեկտա[13]։

Բարդուղեմիոս առաքյալի վանքի վանահայր Փիլիպոս վարդապետի 1855 թ. մարտի 14-ին գրած նամակից երևում է, որ այդ տարիներին մեծ դժվարությունների գնով Աղբակում բացվեցին մի քանի դպրոցներ. «Յետ բաղում խրատուց և ղգուշութեանց,— գրում է նա,— կամեցաք հաստատել ՚ի միջի երկրիս երկու երեք տեղիս զվարժարանս կրթութեան մանկանց», որոնց ուսուցիչները հրավիրվել են «՚ի վանայ, հրամանաւ բերեալ զմանկավարժս ուշիմ առ ՚ի մարզելոյ զմանկունս սոցին ի լուսաւորութիւն հաւատոյ և ՚ի գիտութիւն սուրբ գրոց»[14]։

Այսպիսով, 1840-ական թվականների վերջերին Վան քաղաքում հրապարակ էկան առաջին 6 դպրոցները, որոնք կոչվեցին ծխական։ Մատենադարանի արխիվում է գտնվում կազմակերպված մի ընկերության անդամատոմսը, որից իմացվում է, որ 1847 թ. քաղաքում կազմակերպվել է Արծրունյաց ընկերությունը։ Մեզ հասած այդ տպագիր ան-

---

10 Նույն տեղում, թ. 49։

11 Մատենադարան, ձեռ. № 9424, էջ 1 և 2։

12 Նույն տեղում, էջ 3։

13 Նույն տեղում, էջ 6։

14 Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 176, վավ. 46։

դամատոմսի վրա նկարված ծառի ճյուղին նստած արծվի կտուցից կախված ժապավենի վրա գրված է «Ընկերություն Արծրունյաց», այնուհետև՝ «Հաստատեալ ի Վան, 1 օգոստոս 1847» և ապա «Բաժանորդ ընկերության Հայրապետ աղայն Սապոն Սապոնճեանց վճարեց կանխիկ ի նպաստ դպրոցիս վեցամսեա նուէր ղուռուշ 30 տարեկան տուրքն սկսեալ ի փետրուար 18, գանձապետք Արծրունեան ընկերութեան Շարան Շարանեան (ստորագրություն)»[15]: Եվ քանի որ այդ ժամանակ Վասպուրականում տպարան չկար, անկասկած, անդամատոմսը տպագրվել է Կոստանդնուպոլսում:

1850-ական թվականներին Վանի Տիրամայր եկեղեցու բակում սկսեց գործել Հիսուսյան մայր վարժարանը, որտեղ սովորում էին 150 աշակերտ: Վարժարանին կից կար գրատուն: Այդ Վանի առաջին գրավաճառանոցն էր, որը բաց էր արել Մկրտիչ անունով մի մարդ, այն ժողովուրդն անվանեց Թանգարան, իսկ Մկրտչին՝ «Թանգարանճի», այնտեղ կային դրքեր և ընթերցելու և վաճառելու համար ու ամեն ընթերցող «կարող է երկու երեք ժամով հոն երթալ և ուզած գիրքը կարդալ ընկերագրության կանոնով»[16]:

Վան քաղաքի 1830-ականների դպրոցների մասին հետաքրքրական տեղեկություններ կան Ե. Տեկանցի «Տոհմային հիշատակարանի» առաջին հատորում, որի մի գլուխը կոչվում է «Վեցամենի իրան իմ 'ի վարժարան և վիճակ վարժարանաց ժամանակին», որի համաձայն հայրը իր որդիներ Երեմիային և Մելիքսեթին տանում է Հայկավանքի Բաղդոյի Օհաննեսի մոտ և հանձնելով նրան խնդրում, որ «շատ լավ նայի մեղ, շուտով կարդալ սովորեցնի, շատ սաստիկ չծեծի»[17]: Այս տողերը խոսում են այն մասին, որ այդ ժամանակ ծեծը դպրոցներում ընդունված էր, որի հետ հաշտվել էին նաև ծնողները: Ե. Տեկանցը այնուհետև այդ դպրոցի մասին գրում է. «Երկու շաբթի չափ իբր ունկնդիր երթալով գալով հետո մի տախտակի վրա այբբեն գրելով մեր ձեռքը տվավ և քերական դաս առնող տղայոց հրամայեց մեզ այբբեն սովորեցնել, զի վարժարանիս սովորություն այս էր: Վարժապետ միայն նարեկ և շարական ձայնով դաս կուտար, նարեկ գիտցող կտակարան դաս կուտար, ժամագիրք գիտցող սաղմոս դաս կուտար, սաղմոս գիտցող ինքներին, հեքերին գիտցող քերական, քերական գիտցող տախտակի վրա այբբեն»[18]:

15 Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 129, վավ. 41:

16 «Արծուի Վասպուրական», 1858, № 7, էջ 214:

17 Մատենադարան, ձեռ. № 4184, թ. 67:

18 Նույն տեղում:

Ե. Տեկանցի վկայությամբ Բաղդոյի Օհաննեսը «առաջնորդարանն ազգին կամ թաղի ժողովրդին կարգված չէր վարժապետ, այլ ինքն սեփական տան մեջ վարի հարկ միջակ մեծությամբ մի սենյակ, որ յուր ճգնարանն էր, արած էր վարժարան, յուր գովելի պարկեշտության համար բոլոր պարկեշտ իշխանք և ժողովուրդք յուրյանց աղայք այս տիրացու Հովհաննեսին մոտ կխրկեին»[19]:

Ե. Տեկանցը նշում է, որ Բաղդոյի Հովհաննեսը դիտեր նաև նկարել, սակայն սովորեցրել է իր աշակերտներին՝ թե ոչ, այդ մասին չի գրում: Ուսուցիչը նստում էր իր աթոռին, ձեռքին ունենալով մի երկար ձող. երբ աշակերտներից մեկը խախտում էր կարգը, նա «ձողը վերցնելով և աղաչի գլուխն իջեցնել մեկ կներ, օր մեկ երկու աշակերտի գլուխ կոտրելով, արյուն հոսեն ի վրա կուգար»[20]: Հովհաննես վարժապետի մահից հետո Տեկանց եղբայրները սովորում են Ճրկուր վարժապետի մոտ, դրանից հետո մշեցի Կարապետի, ապա տիրացու Սալանի մոտ: Հուշերից երևում է, որ այդ բոլոր «դպրոցներն» էլ եղել են տեր-թոդիկյան տիպի:

Արխիվում է պահվում Գրիգորիս Աղվանյանի «Քերուցք իմ ծերացած հիշողութեննեն» հուշագրությունը, որի մեջ նույնպես հետաքրքրական տվյալներ կան վանի այն ժամանակվա դպրոցների մասին: Հեղինակը Թաղագյուղյան տիրացու Մանվելի դպրոցի մասին ասում է, որ նրա առջև «տասնի չափ աշակերտներ կիսաբոլորակ ձևով չոքած դաս կառնեին»[21]: Այդ դպրոցի նկարագիրը ըստ Գ. Աղվանյանի հետևյալն էր. «Կնսավուր միջոցին վարժապետի հրամանով ամբողջ ուսանողներ ի միասին հանդավոր եղանակով «Հայր մեր» աղոթքն ըսին և ծալապատիկ նստեցին իրենց տեղեր և իրենց հետ տանեն բերած հաց պանիրով և ժաժիկ փաթաթված աղլուխներ (թաշկինակ) բաց արին իրենց առաջ գնտնին վրա սկսեցին ուտել: Աշակերտներեն ոմանք, որ փոքր եղբայրներ ունեին վարժարանի այս կամ այն դասարանին մեջ եկան, մեծ եղբոր մոտ հաց ուտելու»[22]: Դրանից հետո հացն ու պանիրը և ժաժիկը վերակացուն (գալֆան) հավաքում էր մի կողովի մեջ և դասերը վերջանալուց հետո վարժապետի հետ բաժանում էին,— երկու բաժին վարժապետին, մի բաժին գալֆային»[23]: Երբ վարժապետի քունը տանում էր, աշակերտներն իրենց ազատ

19 Նույն տեղում:
20 Մատենադարան, ձեռ. № 4184, թ. 67:
21 ԳԱԹ-ի արխիվ, Գ. Սրվանձտյանցի ֆոնդ, վավ. № 4—1, էջ 2:
22 Նույն տեղում, էջ 3:
23 Նույն տեղում, էջ 5:

էին զբում, սակայն երբ նա արթնանում էր «ձեռքի վարոց (դալար փայտ— Հ. Պ.), որ թիկն ընկած էր յուր ծնկի վրա, նրա հատ ծայրեն բռնելով բարձրացուց ամենի վրա մի սպառնական շարժում ընելով, որի հետ և «շան լակոտներ» հիշոցն և աչքեր խոլորեց տղոց վրա»: Ուսուցիչը փայտն իջեցնում էր հատկապես այն աշակերտների գլխին, որոնք դասը լավ չէին սովորել: Այդ դպրոցում նստարաններ չին եղել և յուրաքանչյուր աշակերտ տնից «մի տնթիկ (փոքր մինտար) բերած նորա վրա կնստեր, որ յուր սեփականությունն էր»[24]:

Վանի այդ կարգի դպրոցների մասին նկարագրություններ է թողել նաև Փ. Թերլեմեզյանը, նրանց անվանելով «Վարժարան սպանդանոց», որտեղ ծեծը սովորական էր: Ըստ նրա ձեռագիր հուշերի, Սվետիս վարժապետը շատ անխիղճ կերպով էր ծեծում աշակերտներին և «պատկած տեղից նստում էր և ձեռքս բռնելով՝ վերցնում էր կողքին դրված սերկևիլի թարմ ճիպոտը (ամեն առավոտ 8—10 հատ բերում էին նրան), սկսում էր խելահեղորեն զարնել փափիկ տեղիս վրա: Ես կարկամում էի ու աղիողորմ արտասվում»[25]:

Փ. Թերլեմեզյանի վկայությամբ մինչև 1870-ական թվականները Վանի դպրոցներում անարգել գործել է ֆալախկան, մի ահավոր գործիք, որը մաշեցնում էր աշակերտներին, սպանելով նրանց մեջ ամեն տեսակ ինքնուրույնություն: Նկարչի ասելով, «երբ ֆալախկայի մեջ պրկված՝ ոտներս բարձրացրած էին օդի մեջ և միայն գլուխս ու վիզս տախտակին էր կպչում, վարժապետը գոռալով «նղովից արմատ առ քեզ խաբել և թաց սերկևիլի ճիպոտն ուժգնությամբ իջավ մերկ ոտներիս տակերին: Ճիչս արցունքներիս առաջ դուրս ժայթքեց և ես գետնի վրա գալարվելով գրկում էի տնտեսի ցեխոտ սոլերը, որ օգնե ինձ: Երբ ազատ արձակեցին, քայլել չկարողանալով, տնտեսը ինձ քարշ տվավ իմ տեղս, ուր հատակի վրա փլված կողբայի»[26]: Քոլոզ վարժապետի մասին նկարիչը գրել է, որ նա «նույնպես զարհուրելի ծեծող էր»[27], միաժամանակ նա նշում է, որ Մ. Փորթուգալյանի 1880 թ. բացած կեդրոնական դպրոցում ծեծ չկար և ուսուցումը տարվում էր նոր մեթոդներով. «Մի օր,— գրում է նա,— հետաքրքրություն գոհացնելու համար, պատերից ցատկելով մտա կեդրոնականի զբոսավայրը: Ի՜նչ տեսնեմ, — ուսուցիչները աշակերտների հետ

---

24 Նույն տեղում:

25 ՀՍՍՀ Պատկերասրահի արխիվ, Փ. Թերլեմեզյանի ֆոնդ (30), Ի 423, թ. 13—14:

26 Նույն տեղում, թ. 15—16:

27 Նույն տեղում, թ. 17:

խաղում էին, աչքերս փակեցի ճմռեցի ու նորից նայեցի, այո՛ ուսուցիչները աշակերտների հետ խաղում էին, տղաներից ոմանք «հակայական քայլերով» թռչում էին, տրապեզի վրա ճոճվում էին և այլն և այլն»[28]: Դրանից հետո ապագա նկարիչը մտնում է այդ դպրոցը, որտեղ աշակերտներին գիտելիքներ տալու հետ միասին դաստիարակում էին նաև հայրենասիրության ոգով: Դպրոցի երիտասարդ դասատու Մ. Թերլեմեզյանը «պատմում է Զեյթունի ապստամբության մասին, ես հուզմունքից փշի վրա նստածի պես շարունակաբար աթոռից բարձրանում ու նորից նստում էի»[29]: Ինքնուս նկարիչը այդ դպրոցում ուսանելու ժամանակ մեծացնում է Գրիգոր Աբծրունու, Բաֆֆիի և Միքայել Նալբանդյանի նկարները[30]:

Վանի 1830—50-ական թվականների դպրոցների վիճակի մասին կատարյալ գաղափար կազմելու համար ցանկանում ենք համառոտակի անդրադառնալ նրանց ներքին կյանքին: Այդ ժամանակի դպրոցների դասագրքերն էին Սաղմոսը, Նարեկը, Ավետարանն ու ժամագիրքը և այլ կրոնական գրքեր: Քոլոզ վարժապետը աշակերտներին ամենից առաջ ուսուցանում էր Սաղմոսից յոթ կտորներ, հավատացնելով, որ եթե հանկարծ նրանց վրա շները հարձակում գործեն, և եթե նրանք կամաց-կամաց արտասանեն սաղմոսները, ապա «շուներ՝ ո՛չ միայն ձեզ չպիտի խածնեն, այլ գլխիկոր էա կը դառնան»[31]: Գավազանական մեթոդներով աշակերտներ «կրթելը» շատ տարածված է եղել Վանի համարյա բոլոր դպրոցներում: Նույնիսկ ծնողներն առաջին անգամ երեխային ուսուցչի մոտ տանելու ժամանակ ասել են. «Վարժապե՛տ, որդիս քեզ կը հանձնեմ: Կաշին քեզի, ոսկորը ինծի, ինչ կուզես ըրե: Կուզես խեղդի, կուզես մորթի, կուզես քերթի»[32]:

Վանի այդ ժամանակների դպրոցների պատժատեսակներից մեկը կոչվում էր ոտքի պատիժ, որի ժամանակ կարգը խանգարողին վարժապետը պարտադրում էր մեկ կամ երկու ժամ կանգնել երբեմն աջ և երբեմն էլ ձախ ոտքի վրա: Այս պատժի ժամանակ աշակերտին ստիպում էին հակառակ ձեռքում պահել մի քար կամ աղյուս: Եթե աշակերտը խախտում էր այդ, ապա վարժապետը իր գավազանով սկսում էր անգթաբար ծեծել նրան:

---

28 Փ. Թերլեմեզյանի հուշերը, թ. 71:
29 Նույն տեղում, թ. 74—75:
30 Նույն տեղում, թ. 77:
31 «Գանձեր վասպուրականի», էջ 147:
32 Նույն տեղում:

Մյուս պատիժը ապտակն էր, մի տարածված պատժաձև, որից օգտվել է ուսուցիչների մեծ մասը: Ականատեսը վկայում է. «Շատ լավ կհիշեմ դասընկերիս անունը, որու աչքերը ապտակեն վնասվեցան և արցունքահոս մնացին տարիներով և բժիշկներու ամեն ջանքեր անկարող եղան բնկերոջս տարիներով մշտահոս արցունքները կասեցնել»[33]: Շատ դաժան է եղել նաև ծունկի պատիժը, որի ժամանակ աշակերտի ձեռքը մի դասագիրք էր տրվում և ստիպում էին նրան ծնկաչոք մնալ դասարանում և երկար ժամանակ դրքին նայել: Հաջորդ պատիժը կոչվել է «տախտակյա ձեռքի պատիժ», որի ժամանակ վարժապետը հատուկ պատրաստված տախտակով հարվածել է աշակերտի ափին և այդ տախտակը «աշակերտի մատաղ մատները կապտուցնելն զատ՝ երբեմն արյուն ալ կը հաներ մատներու ծայրերեն»[34]:

Դպրոցներում տարածված դաժան այդ պատժաձևերի մասին կարդում ենք. «Կը պատահեր երբեմն, որ աշակերտը պատժի ցավերուն ներգործության տակ՝ կը դողար, կը մարեր, դասարանի մեջ իր կարիքը կը հոգար կամ վարժապետի փայտը կը կոտրեր, բայց վարժապետին բարկությունը չէր անցներ»[35]: Մյուս պատիժը կոչվել է «Նրբանի ծեծ (ֆալախկա)», որի ժամանակ աշակերտին պառկեցնում էին տախտակների վրա, հանում նրա կոշիկները և փայտի հարվածներ էին հասցնում նրա բորիկ ոտնատակերին: Այդ պատժի ժամանակ «աշակերտներեն ոմանք՝ կը դիմանային փայտի զարկերուն, ոմանք կը մորմոքեին, ոմանք բարձրաձայն կուչային, ոմանք ալ հաղվադյուտ պարագայի տակ կը մաթեին»[36]:

Պատժատեսակներից մյուսը կոչվել է «ականջի պատիժ», երբ վարժապետը աշակերտի «ականջը կը քաշեր, կոլորեր, կամ եղունդը ականջին մեջ կը խրեր: Երբեմն երկու ականջներեն բռնած այնքան վեր կը քաշեր, որ աշակերտին ոտքերը տախտակամածեն վեր կը մնային...»[37]: Մարմնական պատիժներից բացի դպրոցներում աշակերտներին տրվում էին նաև նրանց արժանապատվությունը վիրավորող ածական անուններ:

Վան քաղաքում և շրջակա գյուղերում ստեղծված ծխական դպրոցները, անշուշտ, հրապարակից հանեցին տներում եղած մասնավոր դպրոցները, սակայն վերջիններում եղած ուսման մեթոդների մի մասը

---

33 Նույն տեղում, էջ 148:
34 Նույն տեղում:
35 Նույն տեղում, էջ 149:
36 Նույն տեղում:
37 Նույն տեղում, էջ 150:

փոխանցվեցին ծխականներին: Ըստ Հ. Երամյանի, մինչև 1860 թ. Վանի դպրոցներում, բացառությամբ Վարագի վարժարանից, ուսուցումը տարվել է գրաբարով և հին մեթոդներով: Այդ դպրոցներում չկար ոչ մի աշխարհաբար դասագիրք, ծեծը ընդունված էր և նրանք «չունեին ո՛չ կրթական հայեցադիր, կամ մանկավարժական ծրագիր, ոչ դասարանական դրույթյուն և ո՛չ ալ ժամանակացույց»[38]: Դպրոցները չեն ունեցել նստարաններ կամ աթոռներ, հաստատուն դասագրքեր, և ոչ էլ գրատախտակ և կավիճ, այնտեղ «աշակերտները շարեշար կը կանգնեին, կամ տախտակամածի վրա ծնկաչոք՝ կիսաբոլոր շրջանակ մը կը կազմեին ուսուցչին առջև, իսկ ուսուցիչը գահու մը կամ թախտի մը վրա բազմած, մերթ ընկողմանած կը լսեր աշակերտաց»[39]: Հ. Երամյանը վկայում է, որ ուսուցիչները հաճախ դասի ժամանակ քնում էին և արթնանալուց հետո աշակերտներին հարցնում «կարդացի՞ք ամենքդ ալ». — «Այո՛, վարժապետ,— «ուրեմն ձեր հաջորդ դասը պիտի ըլլա այսինչ երեսեն մինչև այսինչ երեսը»[40]: Բոլոր դպրոցներում ուսուցանվող երգերն առանց բացառության կրոնական են եղել, միայն Կոստանդնուպոլսից և Ռուսաստանից վան եկած ուսուցիչները սկսեցին առաջին անգամ դպրոցներում աշակերտներին ազգային և աշխարհիկ բնույթի երգեր ուսուցանել:

Դպրոցական գործի առաջընթացին, անշուշտ, օգնում էր նաև այն, որ սուլթանական կառավարությունը 1839 թ. հրապարակեց Հաթթը Շերիֆը, սկզբնավորելով թանզիմաթի ժամանակաշրջանը: Ճիշտ է, այդ հրովարտակը հիմնականում չիրականացավ, սակայն նրանով սուլթանը թեկուզ խոսքով օրենքի առջև ենթակա ազգերի հավասարություն էր հռչակում: Այնուամենայնիվ, հրովարտակից հետո երկրում սկսեց առաջ ընթանալ կրթական գործը:

1856 թ. փետրվարի 6 (18)-ին, Փարիզի դաշնագրից առաջ, սուլթան Աբդուլ Մեջիդը հրապարակ հանեց «Հաթթը Հումայունը», ըստ որի հպատակ ազգերին և ժողովուրդներին խոստումներ էր արվում հավասարության, երջանկության մասին: Սուլթանը հրովարտակով խոստանում էր հպատակ ազգերին արտոնություններ, ազատություններ և պահանջվում էր պատրիարքարաններից Բ. Դուռ ներկայացնել իրենց առաջարկությունները: Ըստ հրովարտակի, ոչ ոք իրավունք չուներ խոչընդոտելու հպատակ ազգերի և ժողովուրդների կրոնական շենքերի, դպրոցների, գե-

38 Հ. Երամյան, նշվ. աշխ., Ա հատ., էջ 51:

39 Նույն տեղում, էջ 51—52:

40 Նույն տեղում:

բեզմանոցների վերանորոգմանը, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատ պաշտելու իր ցանկացած կրոնը: Պետական պաշտոնյաները պետք է ընտրվեին բոլոր հպատակներից, ըստ նրանց ընդունակության, առանց հաշվի նստելու նրանց ազգային պատկանելության հետ և բոլոր ազգերի ներկայացուցիչները իրավունք պետք է ունենային ընդունվելու «առանց խտրության, տերության քաղաքական և զինվորական դպրատունները»[41] այնուհետև «ամեն ժողովուրդ, գիտության, ճարտարապետության, արվեստի դպրոցներ կառուցելու հրաման և ազատություն ունենալով, միայն թե այսպիսի դպրոցաց մեջ ուսման եղանակին և դասատուների ընտրությունը, անդամները իմ թագավորական կողմանես որոշված հասարակաց կրթության խառն ժողովի մը հսկողության ու քննության ենթակա պիտի ըլլա»[42]: Քաղվածքը հաստատում է նաև այն փաստը, որ նոր բացվող և գոյություն ունեցող դպրոցներում ուսման եղանակը և դասատուների ընտրությունը պետք է կախված լիներին թուրքական պետական պաշտոնյաների ցանկությունից:

Հրովարտակը, ճիշտ է, հիմնականում չիրագործվեց, սակայն այն շատ կարևոր էր հետագնաց Թուրքիայի համար: Հրապարակ եկան թերթեր և ամսագրեր, բացվեցին դպրոցներ և հրատարակվեցին ղգալի թվով գրքեր:

Հայ ժողովրդի համար այդ ժամանակաշրջանը կարևոր է նաև նրանով, որ հրապարակ եկան խոշոր գրողներ և բանաստեղծներ: Այդ մի ժամանակաշրջան էր, երբ հանդես եկավ հեղափոխական դեմոկրատ Միքայել Նալբանդյանը: Տպագրվեցին Սայաթ-Նովայի ժողովածուն, Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի»-ն: Այնուհետև՝ Րաֆֆին, Գամառ Քաթիպան՝ իրենց մարտական բանաստեղծություններով և դրվագքներով: 1858 թ. Վասպուրականում, և շատ չանցած Տարոնում, երևացին «Արծուի Վասպուրական» և «Արծուիկ Տարօնոյ» առաջին թերթերը: Սկսվեց գավառահայության նիստ ու կացի, նրա ժողովրդական բանահյուսության ու երգերի հավաքման և հրատարակության գործը: Այդ ժամանակաշրջանում էր, որ շարք մտավ արևմտահայերի Ազգային սահմանադրությունը, որը ինչ որ չափով բարերար դեր կատարեց և խթանեց նաև լուսավորության գործին:

1850-ական թվականներից սկսած Վասպուրականում առանձին դպրոցներում դրվեց աշակերտներին նոր, առաջավոր մեթոդներով կրթելու

41 Մատենադարան, Մ. Իզմիրլյանի արխիվ, թղթ. 14, վավ. 614:

42 Նույն տեղում:

գործը։ Դրանից առաջինը Վարագի դպրոցն էր։ Այդ ժամանակ Վանի Այգեստանում բացվեց Ղուկասյան վարժարանը, ուր 1859 թվականին սովորում էր 100 աշակերտ, որոնց ուսուցանում էին առանց ծեծի, անց էին կացվում տարեվերջյան քննություններ, որից առաջ աշակերտները հոգևոր դասին և ծնողներին դիմավորում էին «պայծառ հանդերձանոք և քաղցր երգերով»։ «Արծուի Վասպուրականում» տպագրված մի հոդվածից երևում է, որ այդ դպրոցում աշակերտները տարեվերջյան քննություններ էին հանձնում՝ քրիստոնեական ուսմունք, սրբազան և ազգային պատմություն, թվաբանություն, աշխարհագրություն, ինչպես նաև թուրքերեն և ֆրանսերեն լեզուներ առարկաներից[43]։ Դպրոցի մեջ առանձին հմայք է ունեցել Արտամետ գյուղի նախկին բնակիչ Մարտիրոս Բյուզանդյանը, Կոստանդնուպոլսում կրթված մի անձնավորություն, որը հմուտ էր հայկաբանության, հունարեն, թուրքերեն և ֆրանսերեն լեզուների մեջ։ 1850-ական թվականների վերջերին Վանից ոչ շատ հեռու, Շահբազի գյուղում սկսեց գործել մի վարժարան և «վարժապետի շահեցողությունն գյուղացիք իրենց վրա առած՝ ըստ կարյաց կը հոգան» գրում է 1859 թ. «Արծուի Վասպուրականին»[44]։

Ապագա մայրերին կրթելու գործը միշտ էլ գտնվում էր Մ. Խրիմյանի և նրա շրջապատի մարդկանց ծրագրերում։ Դեռևս 1852 թ. նրանք փորձ արեցին Վանում աղջիկների դպրոց բաց անել, սակայն չկարողացան և «Վասպուրականի հայ աղչկանց գործը կը ձգվի բախտին»[45]։ Սակայն Մ. Խրիմյանը անսասան էր։ Նրա մեջ հաստատապես այն կարծիքը կար, որ մայրը «լուսո տաճար» է և այդ ի նկատի ունենալով ամենից առաջ պետք է կրթել մայրերին։ 1893 թ. Թիֆլիսի Մայրամյան-Հովնանյան դպրոցի սանուհիների հետ հանդիպման ժամանակ նա ասաց. «Ուսուցիչ դաստիարակը գործեղ մարդ մ է, բայց մայրերն ամենազորեղ էակներն են»[46]։

Մ. Խրիմյանի հորդորներով 1871 թ. Վանում բացվեց Սանդխտյան աղջկանց վարժարանը, որը ստեղծվեց Գ. Սրվանձտյանցի ջանքերով և Կոստանդնուպոլսում ապրող վանեցիների կազմած «Սանդխտյան» ընկերության դումարներով։ Մինչև 1884 թ. վարժարանը սեփական շենք չուներ, բայց այդ տարվանից Մ. Սանասարյանի միջոցներով շենք կա-

---

43 «Արծուի Վասպուրականի», 1859, № 3, էջ 144։

44 Նույն տեղում, № 8, էջ 210։

45 «Յառաջ», 1935, № 2727, 12 փետրվար։

46 «Նոր դար», 1893, № 157, 10 սեպտեմբերի։

ուղվեց և նրա մոր անունով կոչվեց Մայրամյան։ Շատ չանցած ստեղծվեց «Վանուհյաց» ընկերությունը, ապա 1881 թ. բացվեց Շուշանյան, իսկ 1883 թ. Գայանյան օրիորդաց վարժարանները, որտեղ կրթվեցին և դաստիարակվեցին Վանի իգական սեռի առաջին ներկայացուցիչները։ Այդ դպրոցներում անցնում էին հայոց լեզու (գրաբար և աշխարհաբար), կրոն, թվաբանություն, ընդհանուր և հայոց պատմություն, աշխարհագրություն, ձեռագործ, կար ու ձև, երգեցողություն առարկաները։ Այդ ուսումնարանների առաջին շրջանավարտներից 10 օրիորդներ երդվեցին դպրոցին ուսուցչությամբ և նրանցից ոմանք «շարունակաբար վարժուհի մնալով, երկար տարիներով տքնել և աշխատել են իգական սեռի դաստիարակության գործը առաջ տանելու»[47]։ «Վանուհյաց» ընկերությունը աշխատանք էր տանում ամբողջ ժողովրդի մեջ առանց խավերի խտրության։ Նրա անդամները մասնավոր դասեր էին տալիս, կազմակերպում էին հրապարակային դասախոսություններ, այլ միջոցառումներ և ստացված եկամուտը բաժանում էին չքավոր աշակերտներին։ Այդ տարիներին Վասպուրականի Ալյուր, Կուսենց, Կեմ, Խառակոնիս, Գործոթ գյուղերում արդեն գործում էին վարժարաններ։ Ալյուրի դպրոցը բացվեց Մ. Փորթուգալյանի ջանքերով, 1876 թ. նոյեմբերի 1-ին։ Ձմռանը ուներ՝ 200, իսկ ամռանը՝ 40 աշակերտ։ Դպրոցում աշխատում էին երկու ուսուցիչ և մեկ տնտես[48]։

1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմից առաջ կազմակերպվեց Վանի վիլայեթը և նոր նշանակված Հասան փաշան համեմատաբար տանելի վերաբերմունք ուներ հայերի նկատմամբ։ Այդ մասին Ե. Տևկանցը պատրիարքարանին ուղղած իր մի գրության մեջ գրել է. «Կուսակալն մեր դպրոցաց վերջի ամսիճանի խղճությունն տեսնելով ուզեց միայն երկու երեք դպրոցի վարժապետաց 150—200 դահեկան ամսական տալ և դրել Բ. Դուռն»[49]։ Ե. Տևկանցը և նրա շրջապատի մարդիկ խնդրում են կուսակալին վճարել երեք դպրոցների ուսուցիչների աշխատավարձը, սակայն նա հրաժարվում է, քանի որ թուրքական պետությունը հայկական դպրոցները պահելու համար միջոցներ չէր տրամադրում, իսկ Վան քաղաքի բնակչության համեմատաբար ունևոր մասը շատ էր տուժել 1876 թ. հրդեհից ու թալանից և հնարավորություն չուներ իր ուսերին վերցնելու այդ բեռը։ XIX դարի վերջերին Վան քաղաքում կար 7 դպրոց՝

47 Սրբազավորեր, տեղագրություն, աշխատասիրեց Գեորգ Շերենց, Թիֆլիս, 1902, էջ 9։
48 «Արձագանք», 1882, № 14, էջ 214։
49 Մատենադարան, ձեռ. № 4182, թ. 33։

1230 աշակերտ-աշակերտուհիներով, որի մասին պատկերացում է տալիս ներքոհիշյալ աղյուսակը.

№ №	Դպրոցների անունները	Սեռը	Աշակերտների քանակը	Ուսուցիչների քանակը
1	Կեդրոնական վարժարան 6 հիմնական դասարան	արական	100	8
2	Երամյան 6 հիմնական դասարան	«	230	10
3	Աբարուեցի Թագային դպրոց	երկսեռ	400	14
4	Նորաշենի «	արական	100	6
5	Հայնկոյանների «	»	100	6
6	Ս. Հակոբի «	«	40	3
7	Հայկավանքի «	օրիորդաց	230	8
		Ընդամենը՝	1200	55[50]

Շատ չանցած Վանի, Աղթամարի և նրա դպրոցների թիվը սկսեց ավելանալ և հասավ 32-ի, որտեղ սովորում էին 1406 տղա և 182 աղջիկ։ Ամբողջ վիլայեթի հայկական գյուղերում և Վան քաղաքում կար 120 դպրոց՝ 6845 աշակերտներով և 1854 աշակերտուհիներով[51]։ Դպրոցներն ունեին մի քանի առարկաների դասագրքեր։

1860-ական թվականներին արդեն հրատարակի վրա էին վասպուրականի դպրոցների, հատկապես Վարագի ժառանգավորաց վարժարանի շրջանավարտների աշխատությունները, «Արծուի Վասպուրականի» մեջ իր ժամանակին տպագրված ուսուցիչների և աշակերտների հոդվածները, բանաստեղծությունները, բանահյուսության նմուշները և ժողովրդական հուզաթաթավ երգերի գրառումները։ Վարագի տպարանից դուրս եկան Մանուել Արտամերցյանի «Ողբերք Թատերականը» (1860), Մեսրոպ Փափազյանի «Նախաճաշիկ ուսմանցը», Տ. Ամիրջանյանի «Ուսյալ պանդուխտը», «Մրմունջք» և «Ողբերգություն մեծին Վարդանա» գրքերը։

Ժառանգավորաց վարժարանը տվեց այնպիսի շրջանավարտներ, որոնց գրչի արդյասիքը հայտնի է հայ ժողովրդին։ Նրանցից Գ. Սրվանձտ-

50 Ա.-Պօ, նշվ. աշխ., էջ 19։

51 Ջիրունի, Հուշիկք Հայաստանի..., էջ 67։

յանցը գրեց «Մանանա», «Թորոս աղբար» (երկու գրքով), «Համով հոտով», «Գրոց բրոց», «Հնոց նորոց», «Շուշան Շավարշյանա» գրքերը, բազմաթիվ հոդվածներ, բանաստեղծություններ։ Ամենից կարևորն այն է, որ գրչի այդ ազնիվ մշակը առաջին անգամ գրի առավ և հրատարակեց «Սասունցի Դավիթ» էպոսի առաջին տարբերակը և դրանով հիմք դրեց էպոսը գրի առնելու և հրատարակելու հայրենանվեր գործին։ Երեմիա, Արիստակես և Սեդրակ Տեկանցները գրեցին և հրատարակեցին «Հայրենասիրություն հայոց», «Հայրենյաց երգեր», «Պանդուխտ վանցին», «Հայերգ», «Վառարանի մը կայծեր», «Շահեն ի Սիպիր» գրքերը։ Հայկական ՍՍՀ-ի արխիվներում (հատկապես մատենադարանում) են պահպանվում Ե. Տեկանցի բազմահատոր ժառանգության մոտ 5000 էջ կազմող ձեռագրերը, որը Վանի, Բաղեշի, Մշո, Ջմշկածագի, Խարբերդի և այլ վայրերի այդ ժամանակի դեպքերի իրական հայելիներն են։ Մատենադարանում է գտնվում Ղևոնդ Փիրղալեմյանի «Նոտարք հայոց», «Ճանապարհորդություն ի մայր աթոռս» և այլ աշխատությունները։ Ժառանգավորաց վարժարանի սան Արսեն Թոխմախյանը գրեց «Հայրենիքի պահանջները և հայ գյուղացին», «Մասիս լեռների հարավային ստորոտները» գրքույկները և այլն։ Այդ վարժարանի շրջանավարտները «ցրված, շրջակա բազմաթիվ գյուղորեից մեջ, կուսուցանեն զոր ինչ ուսածեն,— կարդում ենք «Մասիսում»[52]։

1870—80-ական թվականներին Վանի դպրոցներում աշխատում էին այնպիսի մտավորականներ, ինչպիսիք էին Մեսրոպ Փափազյանը, Պողոս Նաթանյանը, Դիոնիսիոս (Մանուել) Արտամերցյանը, Մեսրոպ Ճանիկյանը, Ալեքսիս Շաղոյանը, Տիգրան Ամիրջանյանը, Մանուել Անանյանը, Խորեն Խրիմյանը, Մանվել Միրախորյանը, Գևորգ Շերենցը, Մաղաք Պլուզյանը, Դավիթ Շաքարյանը, Մկրտիչ Ավետիսյանը (Թերլեմեզյան), Համբարձում Երամյանը, Մկրտիչ Փորթուգալյանը, որոնք ժամանակի մամուլի էջերում հոդվածներ տպագրելուց բացի գրեցին շատ արժեքավոր աշխատություններ։

1876 թ. Կոստանդնուպոլսում հիմնված «Արարատյան» ընկերության անդամներից մեկը՝ Մ. Փորթուգալյանը նույն թվականին Ալյուր գյուղում ընկերության ծախքերով հիմնեց մի դպրոց։ Երբ սկսվեց պատերազմը, նա գնաց Թիֆլիս, նրա ավարտից հետո վերադարձավ Վան, որտեղ իր և Մարկոս Նաթանյանի ջանքերով, 1879 թ. հունվարի 1-ին բացվեց Վանի վարժապետանոցը, որտեղ սովորում էին 13 տարին լրացած պատանի-

52 «Մասիս», 1885, № 3757, 16 փետրվարի։

նները և առաջին տարին ընդունվեցին 35 հոգի[53]։ Վարժապետանոցում ուսման տևողությունը 4 տարի էր, անցնում էին հայոց լեզու, կրոն, ֆրանսերեն կամ անգլերեն, թուրքերեն լեզուներ, տիեզերական պատմություն, աշխարհագրություն, մատենագիտություն, գեղագրություն, գծագրություն, երաժշտություն (ձայն) և մարմնամարզություն առարկաները։ Վարժապետանոցի տեսուչն էր Մկրտիչ Սարըյանը։ Վարժապետանոցը հայկական դպրոցների համար ուսուցիչներ էր պատրաստում։ 1881 թ. թուրքական կառավարության կարգադրությամբ այն փակվեց։

Վարժապետանոցի փակվելուց հետո Մ. Փորթուգալյանը անցավ Թիֆլիս, ապա նույն 1881 թ. վերադարձավ Վան և Մ. Խրիմյանի ու Կ. Կամսարականի օժանդակությամբ բաց արեց Վանի կեդրոնական հայկական վարժարանը, որը որոշ ժամանակ անց կոչվեց Հայկազյան։ 1879 թ. Ս. Տեկանցը այցելեց Վան և ծանոթանալով Մ. Փորթուգալյանի հետ, նրան անվանեց «անձնվեր», «հաստատամիտ, հավատարիմ յուր պաշտոնին»։ Վարժապետանոցում և Վանի դպրոցներում աշակերտները երգում էին «Ազնիվ ընկեր մեռանում եմ», «Իմ հայրենիք զիս կը կանչե» և «Հիմի է՞լ լռենք» երգերը[54]։ Մ. Փորթուգալյանի դպրոցի ուսուցիչ Մարկոս Նաթանյանը նրա գործունեության մասին հետագայում գրում է. «Կրթական գործեն ավելի հեղափոխական միտումներ և գործունեություն կը ցուցաներ, թե աշակերտաց մտքին մեջ և թե հրապարակային բանախոսություններով ժողովրդյան հոգիին մեջ հեղափոխական սերմեր ցանել սկսելով երբեմն ուղղակի, երբեմն անուղղակի ձևերով»[55]։

Ուսումնարանի աշակերտները տարեկան 20 արծաթ մեջիդյե ուսման վարձ պետք է վճարեին (33 ռ.), իսկ նախակրթականինը՝ 12 արծաթ մեջիդյե (20 ռ.), դրանից հետո նրանք ձրի ստանում էին դասագրքեր, թուղթ, գրիչ, գծագրական նյութեր։ Մ. Խրիմյանի առաջարկով դպրոցի 9-ը և նախակրթարանի 12 աղքատ աշակերտներ ազատվեցին ուսման վարձից։ Դպրոցը ուներ 68 աշակերտ և 16 ուսուցիչ[56]։

Եթե մինչև 1870-ական թվականները թուրքական իշխանություններն քիչ էին հետաքրքրվում դավառներում գտնվող հայկական դպրոցներով, ապա սկսած 1881 թ. նրանք սկսեցին հետևել դրանց։ 1881 թ. մարտի 7-ին էրզրումից ռուսական դեսպանին օբեր Միլլերի գրած մի զե-

---

53 Արարատյան ընկերություն, հաստատեալ ի 15 ապրիլի, 1876, Գ. տեղեկագիր. 1877—78 ամի Կոստանդնուպոլիս, 1879, էջ 12—13։

54 «Արաքս», գիրք Ա, 1893, էջ 60։

55 Հ. Ածեմյան, նշվ. աշխ., էջ 555։

56 «Արձագանք», 1882, № 16, էջ 245։

կուցագրից երևում է, որ վիլայեթի Մուստաֆա փաշան Կոստանդնուպոլսից ստացված մի գաղտնի գրության կապակցությամբ առանց հայ անդամների մասնակցության, խորհուրդ էր հրավիրել և պահանջել հետևել հայերին, արմատախիլ անել նրանց մեջ ազգայինը, ոչնչացնել բոլոր պատմական նկարները, հատկապես Վարդանի և Հայաստանի ավերակների վրա արտասվող կնոջ նկարը (Մայր Հայաստան) և արգելել ուսումնական հիմնարկներում հայոց պատմության դասավանդումը[57]: Նույն վավերագրի ընթերցումից երևում է, որ ուժեղացվելու էր գրաքննությունը, ստուգվելու էին պետության նկատմամբ անբարյացակամ գրքերը, ամսագրերը և նամակները: Վավերագրում ասված է նաև այն մասին, որ սուլթանը պահանջել է քրիստոնյա սպաներին և պետական աստիճանավորներին փոխարինել մուսուլմաններով, վերջիններից ոմանց ստիպել սովորել հայերենը՝ նամակները, մամուլը և գրքերը ընթերցելու համար[58]:

1882 թ. Կոստանդնուպոլսից Վան ժամանեցին երկու պաշտոնյաներ, որոնց հանձնարարված էր հսկողություն սահմանել հայկական դպրոցների վրա: Կազմվեց մի հանձնաժողով՝ երեք թուրք և երեք հայ անդամներով: Նույն թվականին Թուրքիայի հանրային կրթության նախարարությունը հրատարակեց ժամանակի թերթերում մի պաշտոնական հայտարարություն, որով խստիվ արգելվում էր ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ գավառներում «առանց նախապես հրամանագիր առնելու, դպրոց հաստատել, բանալ, շինել կամ որևէ շենք մը դպրոցական ձևի մը վերածել»[59]: Մեկ ու կես ամիս էր տրվում գործող դպրոցների համար համապատասխան կարգադրություն ձեռք բերել, չանելու դեպքում դպրոցը փակվելու էր: Այդ հայտարարությունից երևում է, որ կառավարությունը ոչ միայն խոչընդոտում էր նոր դպրոցների բացմանը՝ այլև հների առաջընթացին:

Վան ժամանած թուրքական այդ պաշտոնյանները հանձնաժողովի կազմում ընտրեցին այնպիսի հայերի, որոնք լուռ համակերպվեցին նրանց ցուցումներին: Հանձնաժողովը կոչվեց «Մարիֆե մեճլիսի» և նրա առաջին գործը եղավ հայկական դպրոցներում պարտադիր դարձնել

---

57 Ռ. Փ. Հովհաննիսյան, *Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը (XIX դ. 70—80-ական թթ.)*, 1965, էջ 342:

58 Նույն տեղում:

59 «Հայրենիք» (Կ. Պոլիս), 1892, № 113, 15 հունվարի:

Թուրքերենի դասավանդումը: Նրա մոլլա անդամներից մեկը շրջելով Վանի հայկական դպրոցները, հայտարարում էր, որ «այսուհետև կառավարության կողմանե որոշվելիք դասագրքերը միայն պիտի գործածվին, և այն դասատուները միայն դաս պիտի տան, որք կառավարական վարժարանների վկայականներ ստացած են...»[60]: Այնուհետև ասել է. «Մեր Երկրի տուրք ավողները մեծամասամբ քրիստոնյաներ են թեպետ, բայց բացված վարժարանաց մեջ միայն Թուրքեր կը հաճախեն, վասնզի հայերեն լեզվի դասախոսություն չկա»[61]:

Օսմանյան կառավարությունը հայ պատրիարքարանին խոստացել էր ժողովրդից հավաքված (եկամտի 2 տոկոսի չափով) կրթական տուրքից հայկական դպրոցների համար մասն հանել, սակայն իր խոստումը չկատարեց և սկսեց անբացատրելի վերաբերմունք ցուցաբերել հայերի՝ սեփական միջոցներով բացված դպրոցների նկատմամբ: Այսպիսով, Թուրքիայում ապրող հայերը չնայած դպրոցական հարկ էին վճարում, սակայն ստիպված էին հայկական դպրոցները պահել ժողովրդի հաշվին: Կառավարությունը հետևելով իր պանիսլամիստական նպատակներից, չէր առարկում հայ երեխաների թուրքական դպրոցներում սովորելուն, սակայն հայերը նրա առաջարկած ուղիով գնալ չէին կարող: Հայկական դպրոցների վրա կառավարության հսկողության ուժեղացումը նպատակ ուներ խոչընդոտել նրանց զարգացմանը, մուտք գործել դպրոցները և այս կամ այն պատրվակով ազատել իրենց համար ոչ հաճելի ուսուցիչներին:

Ժամանակակիցների վկայությամբ Վանի կեդրոնական վարժարանը «ամբողջ Վասպուրականի մեջ միակ պատավավոր կրթական հաստատությունն» էր, իսկ նրա տեսուչ Մ. Փորթուգալյանը «Հանգիստ նստել չգիտեր: Նրա վարժարանը շատ նեղ դրության մեջ է: Շատ քիչ բան հավաքվեցավ ի նպաստ անկարող աշակերտաց»[62]: Այդ դպրոցում անցնում էին կրոն (Գ. Արտամերցյան), հայոց լեզու, թվագիտություն, բնական պատմություն և բնագիտություն (Գ. Ալանյան), հայերեն, ֆրանսերեն, թուրքերեն, պատմություն (Մ. Շերվանյան և Թեմուրզադե Թևֆիք, Մ. Փորթուգալյան), աշխարհագրություն, գծագրություն և գեղագրություն (Հ. Խրիմյան), հողագործություն (Ն. Մադաթյանց), տոմարակալություն, գրահաշիվ, երկրաչափություն, տարրալուծություն, մարմնամարզություն (Կ. Փիլիպոսյան):

---

60 «Արձագանք», 1882, № 23:

61 Նույն տեղում:

62 Նույն տեղում, № 31:

1884 թ. վարժարանը տվեց իր անդրանիկ շրջանավարտները։ Քաջալերելով Մ. Փորթուգալյանի ջանքերը, Մ. Խրիմյանը 1885 թ. իր մի հոդվածում ջերմ խոսքեր գրեց, ասելով, որ նրա տեսուչ Փորթուգալյան Մկրտիչը անձնվեր հայրենասիրական եռանդ ունի։ Ջնայած նա Կոստանդնուպոլսի բնակիչ է, սակայն նրա «բուռն հայրենասիրության ոգին ղինք վարեր է Հայաստան և ինքն իբրև անխոնջ մշակ կը տքնի, կաշխատի մեր հայրենյաց հառաջադիմության համար։ Ուստի ուսումնասեր ազգայնոց նվիրական պարտքն է, որ ձեռն տան, քաջալերեն ղինքն իր ձեռնարկության մեջ, գիտենալով որ կեդրոնական դպրոցը մեր ամենակարևոր հաստատություն և միջոցն է վանա ազգայնոց առաջադիմության»[63]։

Մ. Փորթուգալյանի աշխատանքները գնահատեց նաև «Մասիս» լրագիրը, որտեղ կարդում ենք «ինչ որ ալ ըսեն պ. Փորթուգալյանի թշնամիները, չեն կարող սակայն ուրանալ այդ պատվական երիտասարդի մատուցած թանկագին ծառայությունները մեր կրթական գործին։ Կեդր. վարժարանի աշակերտք արդեն կարևոր տեղ մը գրաված են քաղաքիս ուսուցչական մարմնո մեջ, ծխական վարժարանաց տալով նոր և մինչև հիմա եղածեն տարբեր ուղղություն մը։ Կեդր. վարժարանը միշտ օրինակելի տիպար մէ մյուս վարժարանաց համար։ Նորա աշակերտք առաջին անգամ մեր վարժարանաց մեջ ստացուցին բնական և չափական գիտությունները, մարմնամարզ և այլն»[64]։

Այդ վարժարանի սանների ճնշող մեծամասնությունը նվիրված էր իր հայրենիքին և ժողովրդին։ 1896 թվականի ինքնապաշտպանության ժամանակ նրանք քաջության հիանալի օրինակներ ցույց տվեցին։ Դպրոցի շրջանավարտներ Հ. Ագրիպասյանը, Մ. Ավետիսյանը (Թերլեմեզյան) զոհվեցին թուրքական և քրդական ուժերի դեմ մղվող անհավասար մարտում, իսկ Փ. Թերլեմեզյանը, Գ. Բաղշեցյանը, Ղ. Խանջյանը և ուրիշներ ազնվաբար ծառայեցին իրենց ժողովրդին։

Թուրքական իշխանությունները հատկապես նպատակադրվել էին ամեն գնով ազատվել կեդրոնական վարժարանի Ռուսաստանից եկած ուսուցիչներից։ 1883 թ. հայկական դպրոցների ծրագրերի քննարկման ժամանակ նրանք անհեթեթ կարգադրություններ էին անում. այսպես

---

63 «Քառասուն տարվա աշխատավորը...», էջ 20։

64 «Մասիս», 1885, № 3753, 19 հունվարի։

«Կոստանյանցի ծաղիկաթաղները (որոնց մեջ Եղիշեն, Փարպեցին և այլ հին ու նոր ընտիր մատենագիրների քաղվածքներ կան) վնասակար և հեղափոխական հրատարակություններ համարելով, Կ. Պոլիս ղրկեր և հասարակաց կրթության բարձր պաշտոնեի ուշադրությանը ներկայացուցած է»[65]:

1886 թ. հոկտեմբերի 26-ին Մ. Փորթուգալյանը «Արևելքի» մեջ տպագրեց «Տեղեկագիր Վանա Կեդրոնական վարժարանի» հոդվածը, որի մեջ ջերմ խոսքեր էին ասվել վարժարանին օգնող Մ. Խրիմյանի, Կ. Կամսարականի և Գ. Արծրունու հասցեին: Վերջինս բացման ժամանակ դրպրոցին նվիրել էր 500 և ապա 1050 ռ., որի կեսը հավաքել էին Մոսկվայի համալսարանի հայ ուսանողները: Հոդվածից երևում է նաև, որ պատրիարք Ն. Վարժապետյանը պաշտպանել է Մ. Փորթուգալյանին և նրան առաջադրած «քաղաքական դրպարտություններին հակառակ, հաճեցավ իր հատուկ հանձնարարական նամակով Վանի նահանգապետ վսեմ. Հասան փաշայի հովանավորություն խնդրել մեր բանալիք վարժարանին վրա»[66]: Հոդվածում նա ջերմ խոսքեր է գրում նաև Կ. Եղյանի, բժիշկ Լևոն Տիգրանյանի (Երևանից) հասցեին, վարժարանին մեծ քանակությամբ գրքեր և մամուլի հավաքածուներ նվիրելու կապակցությամբ: Վարժարանը գրքեր էր ստացել նաև Կ. Պոլսից, Մարսելից և այլ վայրերից:

Սկսած 1884 թ. այդ վարժարանում աշակերտներին սկսեցին ուսուցանել հյուսնություն, աստղագործություն, կամ էլ կահագործություն: Ժողովրդի մեջ լուսավորություն տարածելու կապակցությամբ Մ. Փորթուգալյանը գրում է. «Քաջահույս ենք, որ ամեն հայրենասեր հայ ուր որ ալ գտնվի, պիտի հաճի յուր օգնության ձեռքը կառկառել մեզ այս հանրօգուտ գործի հառաջադիմության և հարատևության համար, ասել կուզեմ կրթական գործին ռոմն միայն կախում ունի ազգին զարգացումը: Այս հավատ ունեցած եմ բավական երկար խոհերև և փորձություններե հետո և այժմ հաստատ համոզում գոյացած է իմ մեջ թե ճշմարտապես յուր ազգ սիրող հայը, մեր արդի վիճակին մեջ, պետք է որ ամեն բանե հառաջ կրթություն և դաստիարակություն տարածել մեր հայրենակիցների մեջ»[67]:

---

65 «Արձագանք», 1883, № 33, 19 (3) հուլիսի:

66 «Արևելք» (Կ. Պոլիս), 1886, № 246, 26 հոկտեմբերի:

67 Նույն տեղում:

1885 թ. հուլիսի 3-ին դպրոցներին հսկող Թուրքական հանձնաժողովը ոստիկանների հետ այցելում է կեդրոնական վարժարանը, գիտում աշակերտների գծած քարտեզները և «որոնցմե Վանա ծովի և Նահանգին վերաբերածները կառնեն հետներնին տանելու համար, գոհունակություն հայտնելով աշակերտների հաջողակության մասին: Հետո կը հրամայեն աշակերտները արձակել»[68]: Երբ Կեդրոնականի փակման մասին հարցնում են այդ պաշտոնյաներին, նրանք տալիս են հետևյալ շովինիստական պատասխանը. «Մենք ամենքս ալ թուրք ենք և հավասար, կասե. խտրությունները պիտի վերացվին, ամենքս ալ միասին պիտի ուսանինք, իրարու լեզու պիտի սորվինք»[69]:

Բերված փաստերը խոսում են այն մասին, որ Թուրքական կառավարական պաշտոնյաները անում էին ամեն ինչ հայկական դպրոցները փակելու կամ էլ նրանց աշխատանքը խոչընդոտելու համար: Նրանք պահանջում էին դասավանդել կառավարական ծրագրերով, սակայն այդպիսիք չէին տալիս, բոլոր ուսուցիչներին նշանակել միայն Թուրքական տեսչի համաձայնությամբ, առանց նրա դպրոցները չանվանել որևէ մեկի անունով[70]:

1891 թ. Վանի դպրոցական տեսուչը դպրոցներում հայոց պատմության առարկայի դասավանդումը պարփակել էր «շատ կարևոր դեպքերու ու Թվականներու հիշատակության մեջ միայն»[71]: Հ. Երամյանի վկայությամբ մի անգամ տեսուչը վարժարան այցելելու ժամանակ աշակերտներից մեկի մոտ տեսնելով հայոց պատմության տետրակը, նրան զարմանքով հարցնում է, թե «մի՞թե դուք հայոց պատմություն եք անցնում»: Դպրոցներում արգելված էր հայոց պատմության առարկայի դասավանդումը, Հայաստան բառի արտասանությունը կամ գրելը: Հայերեն չիմացող Թուրք պաշտոնյաները հայկական այբուբենի «Հ» տառի տակ Հայաստան էին տեսնում: Հ. Երամյանի վկայությամբ իր դպրոցը այցելող Վանի Թուրք պաշտոնյաներից մեկը «կը խուզարկեր աշակերտաց գրասեղանները և մատը Հ տառին վրա դնելով՝ «Հայաստա՞ն է այս բառը կը հարցներ: Ո՛չ, էֆենտիմ, հայա, հացագործ, հայրենական, հագուստեղեն և այլն»[72]: Թուրքական տեսուչներից մեկը մի դպրոցում աշա-

---

68 «Արձագանք», 1885, № 1, 9 հուլիսի:

69 Նույն տեղում:

70 Նույն տեղում:

71 Հ. Երամյան, նշվ. աշխ., I հատ., էջ 269:

72 Նույն տեղում, էջ 277:

կերանների մոտ մի քարտեզ տեսնելով հարցնում է, թե այն «Հայաստանի քարտեզ է՞, աշակերտը՝ որ ծանոթ է լինում էֆենդիի տառագիտության հետ,— ոչ, ասում է դա Հունգարիայի քարտեզն է, որովհետև Հունգարիան էլ նույնպես «Հ»-ով է սկսվում»[73]: Տեսուչը առանց հասկանալու հայոց պատմությունը, ասում էր. «Դուք հայերդ անցյալին մեջ Տիգրան մը ունեցած եք միայն և այնուհետև հպատակված եք հաջորդաբար զանազան տերություններու, ուրեմն դուք իսկապես քաղաքական պատմություն մը չունիք»[74]: Հայոց պատմության դասավանդումը արգելելու և հայկական դպրոցներում Թուրքիայի պատմությունը պարտադիր դարձնելու մասին «Արձագանք» լրագրում կարդում ենք. «Բ. Դուռը առաջարկել է հայոց պատրիարքին, որ տաճկական պատմությունը հայ դպրոցներում անպայման պարտավորեցուիչ լինի, սորան հակառակ՝ խոստիվ արգելելով հայոց պատմության դասավանդությունը»[75]:

Դպրոցների նկատմամբ թուրքական իշխանությունների այդ սահմանափակումներն ու գործադրած խստությունները սկսեցին աշխուժացնել միսիոներականների գործողությունները: Դեռևս 1872 թ. Վան եկան ամերիկյան միսիոներները, որոնք իրենց ուսմունքը քարոզելու հետ միասին բացեցին երկսեռ վարժարաններ: Դրանից հետո Վանում երևացին Դոմինիկյան հայրերը, որոնք սկզբնական շրջանում մասնավոր դասեր էին տալիս, սակայն շատ չանցած բաց արեցին իրենց դպրոցն ու եկեղեցին: Այսպիսով, սկսվեց նրանց պայքարը լուսավորչականների դեմ՝ հայերին իրենց կողմը գրավելու համար: Իրար դեմ մրցման էին դուրս եկել կաթոլիկները, ամերիկյան միսիոներները, անգլիական եկեղեցու հայրերը և ուրիշներ: Սակայն նրանցից և ոչ մեկին չհաջողվեց վասպուրականում իրենց կողմը գրավել ժողովրդական մեծ հատվածների և նրանք այնտեղ մնացին որպես վտիտ մարմիններ:

1890 թ. ամերիկյան միսիոներները Վանում ունեին տղաների և աղջիկների մեկական դպրոցներ, որտեղ նրանք անցնում էին լեզուներ, Ամերիկայի աշխարհագրություն և Հրեաստանի պատմություն: Այնտեղ չէին անցնում հին Հայաստանի պատմական աշխարհագրություն և հայոց պատմություն: Այդ դպրոցների նպատակը ազգային զգացումից դուրս մարդկանց պատրաստումն էր, որոնք արևելքում պետք է լինեին ամերիկյան քաղաքականության կողմնակիցները:

---

73 «Նոր դար», 1884, № 136, 24 օգոստոսի:

74 Հ. Երամյան, նշվ. աշխ., I հատ., էջ 269:

75 «Արձագանք», 1889, № 12, 2 ապրիլի:

Չնայած թուրքական իշխանությունների հարուցած խոչընդոտներին, այնուհանդերձ, 1880-ական թվականների վերջին միայն Վան քաղաքում գործում էին 9-ը հայկական դպրոցներ, որտեղ սովորում էին 1370 տղաներ և 220 աղջիկներ[76]: Այդ ժամանակ Հայոց ձորի, Ոստանի և Գավաշի գավառներում կային 12 դպրոցներ՝ 566 աշակերտներով[77]:

XIX դարի վերջում դպրոցների թիվը ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղերում ավելացավ՝ հասնելով 136-ի, որից 30-ը՝ Վանում: Վանի աղջկային վարժարաններից էր նաև Երամյան վարժարանը: Վերջինս ստեղծվեց Հ. Երամյանի ջանքերով և իր գոյության 4 տասնամյակների ընթացքում տվեց 3000 շրջանավարտ: Դպրոցի գոյության 25-ամյակի կապակցությամբ այն կոչվեց իր անփոփոխ տնօրենի անունով՝ Երամյան: Դպրոցը հիմնելու նախօրյակին Հ. Երամյանը որբերին պահելու նպատակով դիմում է «Մշակ» և «Մեղու Հայաստանի» լրագիրներին ու Մ. Սանասարյանին, որոնցից օգնություն է ստանում և ապա սկսում հանգանակություն հավաքել: 1886 թվականին դպրոցը տվեց իր անդրանիկ շրջանավարտները[78]: Վարժարանը բացվեց 1878 թ. հուլիսի 3-ին՝ «Որբանոց» անունով, Վանում գործող «խնամատար» ընկերության ջանքերով: 1886 թ. Հ. Երամյանը բուժվելու նպատակով անցավ Էջմիածին, Երևան, Թիֆլիս, Կոստանդնուպոլիս, ապա Վիեննա, որտեղ սկսեց ուսումնասիրել տեղական դպրոցները: Վիեննայում նա այցելեց Մխիթարյան հայրերին, ծանոթացավ նրանց հաստատության և դպրոցի հետ: 11 տարեկանից տեսողությունից զրկված այդ համառ և հայրենասեր մարդն ուներ «երկաթե կամք, սուր խելացականություն և անվեհեր սիրտ»[79]: Եվրոպայից վերադառնալուց հետո նա սկսեց իր դպրոցում իրագործել միջնակարգ դպրոցի ծրագրերը և հավաքել նկարներ, աշխարհագրական քարտեզներ, բնագիտական գործիքներ, հանքային հանածոների տեսակներ և բացել թանգարան: Վանի դպրոցներից ոչ մեկը մինչև այդ թվականը չուներ ծրագրեր, բացի որբանոցից: Ամեն ուսուցիչ իր դասավանդած առարկան անցնում էր այնպես, ինչպես ինքն էր հասկանում: Այդ մասին «Արևելյան մամուլում» ասված է, որ Վանի դպրոցները «իրոք կրթական ծրագիր, մեթոդ, դասագրքանց ընտրություն, կարգ, կանոն և բարեկարգություն ունեցած չեն ոչ տնտեսական տագնապեն առաջ (1896 թ.— Հ. Պ.) և ոչ վերջ: Տասնևութ տարի առաջ՝ եթե մեր ուսուցիչներն կրթական

76 Գ. Սրվանձտյանց, երկեր, I հատ., էջ 397:

77 Նույն տեղում, էջ 403:

78 Վանի Երամյան վարժարանը, Կ. Պոլիս, 1914, էջ 4:

79 «Արևելյան մամուլ», 1897, № 14, 15 հուլիսի, էջ 498:

ծրագրի անունն լսեին, պիտի կարծեին, թե ծառի վրա կբուսնի այն»[80]։

1913 թ. դեկտեմբերին Թիֆլիսում հայոց բարեգործական ընկերության դահլիճում Հ. Երամյանի կարդացած դասախոսության մասին տպագրված հաղորդումներից երևում է, որ նրա վարժարանը տարեկան 100 ռուբլի է ստացել ռուսական կառավարությունից։ Վարժարանը ունեցել է 4 նախակրթարաններ և 7 հիմնական դասարան։ Նախատեսվել է ունենալ նաև 8-րդը, որին անվանելու էին «Հայկական կոլեջ»։ Քաղաքի ազգային ծխական դպրոցների տարեկան բյուջեն 4140 ռուբլի էր, իսկ նրա 25 հազար հայ բնակիչներից 5600-ը սովորել էին թե՛ ազգային և թե՛ օտար դպրոցներում[81]։

1915 թ. Վանի հերոսական պաշտպանությունից հետո դպրոցի տնօրեն Հ. Երամյանը անցնում է Եգիպտոս, որտեղ գրում և հրատարակում է «Հուշարձան» երկու հատորով, ավելի քան 1000 էջից բաղկացած իր աշխատությունը։ Այն վասպուրականի համար իսկապես մի հուշարձան է, որտեղ շատ արժեքավոր էջեր կան նրա պատմության, աշխարհագրության, սոցիալ-տնտեսական հարաբերությունների, դպրոցական կյանքի, ժողովրդի նիստ ու կացի և բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ։ Հ. Երամյանն իր աշխատությունը շարադրել էր չափածո՝ բաղկացած 10 հազար տողից, սակայն հետագայում լույս ընծայելուց առաջ այն վերածեց արձակի։ Նրան այդ գործում օգնեց Կարապետ Նավասարդը։ Հեղինակը ցավով նշում է, որ իր աշխատանքը ավելի կատարյալ կլիներ, եթե կույր չլիներ և օգտվեր բազմաթիվ աղբյուրներից, «սակայն հոգնած, հիվանդակաս, նյութական միջոցներե զուրկ, միշտ այլոց օգնության կարոտ և արդեն 72 տարիքս թևակոխած, մնկ ոտքս դեպի անդենականը, չկի կրնար ասկե ավելին ընել»[82]։

1882 թ. հոկտեմբերին Երամյան որբանոցը կարմրավոր եկեղեցուց փոխադրվում է Այգեստան։ Այդ ժամանակ էլ դասատու Սաֆար Փեհրիզյանը աշակերտներից ստեղծեց երգչախումբ, որի մասնակիցները դպրոցին նյութապես օգնելու նպատակով արևագալի շարականներ էին երգում եկեղեցիներում։ 1883 թ. սկսած դպրոցն ընդունեց նաև թոշակավոր աշակերտներ և սանների թիվը հասավ 100-ի։ 1908 թ. այնտեղ ուսանում էին արդեն 400-ից ավելի աշակերտներ, որոնց մեկերորդը ուսանում էր ձրի,

---

80 Նույն տեղում, № 11, 1 հունիսի։

81 «Կովկասի լրաբեր», 1913, № 279, 13 դեկտեմբերի։

82 Հ. Երամյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ Բ։

իսկ նրանց մի մասը «դպրոցին կատանային գրենական պիտույք, ոմանք նույնիսկ սնունդ և զգեստ»[83]: Այդ վարժարանի աշակերտները սովորում էին նաև կահագործություն, կոշկակարություն, դերձակություն: Նրա շրջանավարտներից ոմանք ընդունվեցին Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, Գևորգյան և Լազարյան ճեմարանները, նույնիսկ Փարիզի և Բրյուսելի համալսարանները: Այնտեղ անցնում էին կրոն, եկեղեցական և ազգային պատմություններ, ընդհանուր ազգերի պատմություն, անգամ հայերեն, հին և նոր լեզուներ, թուրքերեն, ֆրանսերեն, իսկ վերջին տարիներին ռուսերեն: Դպրոցում անցնում էին նաև բնական գիտություններ, չափական գիտություններ, աշխարհագրություն (հին և նոր Հայաստանի ընդհանուր և քաղաքական), տիեզերագիտություն, համառոտ տոմարագիտություն, գեղագրություն, նկարչություն և գծագրություն, երաժշտություն և մարմնամարզություն[84]:

1908 թ. Կոմիտասի աշակերտ Խոսրով Փախչանյանը կազմեց դպրոցի քառաձայն երգչախումբը: Դպրոցում սկզբում ծեծը թույլատրվում էր, սակայն հետո արգելվեց. ըստ Հ. Երամյանի «Ի սկզբան ծեծի դրության հակառակ չէի. կը խոստովանիմ, որ ես ինքնին առաջին տարիներին ապտակներ կամ խիստ հանդիմանություններ տրված եմ այս կամ այն աշակերտին և այսօր կը խղճահարվիմ. վերջեն ծեծը բացարձակապես արգելված էր մեր դպրոցին մեջ...»[85]:

1890 թ. արդեն Վանում կար ամերիկյան միսիոներների երկու դպրոց, մեկը՝ Այգեստանում, որտեղ սովորում էին 110 տղաներ և 115 աղջիկներ, իսկ մյուսը՝ քաղաքի կենտրոնում, ուր ավելի քիչ աշակերտներ կային: Նյութական միջոցներ ունեցողները վճարում էին 15-ից մինչև 60 ղուրուշ բարձր դասարանների համար: Դպրոցները ունեցել են նախնական, միջին և բարձր դասարաններ, յուրաքանչյուրը 3-ական տարվա տևողությամբ: Այնտեղ անցնում էին անգլերեն, ֆրանսերեն, հաներահաշիվ, երկրաչափություն, բնագիտություն և մարդակազմություն:

Թուրքական պետական պաշտոնյաները դժվարություններ էին ստեղծում նույնիսկ միսիոներների դպրոցների համար և «միսիոներներուն ապսպրած գրքերը ճամբան կը բռնվին կամ ետ կը դարձվին. գիրքերու ընտրության վրա սեղմումներ կը դրվին»[86]: Դպրոցների դասերին ներ-

---

83 Նույն տեղում, էջ 151:
84 Նույն տեղում, էջ 160—161:
85 Նույն տեղում, էջ 167:
86 Ինչ, հատ. 2, էջ 104:

կա լինելով, Լինչը նկատել էր, որ «հայերը լավ կը կարդան, այնքան լավ, որքան Երևանի ռուսական սեմինարիային մեջը կը կարդային»[87]։ Ըստ Հ. Լինչի, XIX դարի 90-ականներին Վան քաղաքում կային 11 դպրոցներ՝ 2180 սովորողներով, որոնցից 800-ը աղջիկներ էին։ Եկեղեցիներին կից կային նաև ծխական դպրոցներ։ Շփվելով հայկական դպրոցների ուսուցիչների հետ Լինչը գտնում է, որ նրանք «գրեթե առանց բացառության աշխարհական են»[88]։ Լինչի մոտ կան տեղեկություններ նաև թուրքական դպրոցների մասին։ Քաղաքում այդ ժամանակ եղել են թուրքական դպրոցների 6 նախակրթարաններ և 3 կրթական հաստատություններ, առաջիններում սովորել են 240, իսկ երկրորդներում՝ 350 տղաներ։ Դպրոցներում աղջիկներ չեն սովորել, իսկ ուսուցիչները զինվորական համազգեստ կրող զինվորական դպրոցների շրջանավարտներ էին և դպրոցների «բոլոր աշակերտները, նույնիսկ ամենեն փոքրը, զինվորական մարզանքներ կնեին»[89]։ Թուրքական դպրոցների աշակերտների մեծ մասը քաղաքի թուրք պաշտոնյաների և վերնախավի երեխաներն էին, այնտեղ անցնում էին ֆրանսերեն, պարսկերեն, արաբերեն, թուրքերեն։

Այդ դպրոցներում աշակերտներին դաստիարակում էին պանիսլամիստական գաղափարներով, ասելով. «Կար ժամանակ, որ մեր նժույգները Դանուբի ալիքներում կը ռանեինք ջրելու» կամ «մեր կրակին տակ կը շողեինք Բալկանները, մեր սուրերը կը պատեին Եվրոպայի քարտեզը»[90]։ 1897 թ. «Արևելյան մամուլը», հրատարակեց «Ծիծեռնիկ» առաքյալ մի հոդվածաշար՝ «Վիճակացույց Վանա կրթական կացության» վերնագրով, ըստ որի Վանում 1896 թ. կոտորածից առաջ կային 12 վարժարաններ։ Այդ դպրոցներում այն ժամանակ սովորել են 3030 աշակերտ, դասավանդել են 80 ուսուցիչ-ուսուցչուհիներ և դպրոցների տարեկան ծախսը կազմել է 1510 ոսկի։ Սակայն վիճակը այլ էր 1897 թ., երբ Վասպուրականի ժողովուրդը ոչ միայն շատ մարդկային զոհեր տվեց, այլև տնտեսապես կանգնեց ծանր վիճակի առջև։ 1897 թ. մայիս ամսին արդեն դպրոցների աշակերտների թիվը կրճատվեց 50 տոկոսով, հասնելով 1530-ի։ Կրճատվեց նաև ուսուցիչների թիվը, որն այդ ժամանակ կազմում էր 59 հոգի, իսկ դպրոցների ծախսը կազմեց 910 ոսկի[91]։

---

87 Նույն տեղում, էջ 105։

88 Նույն տեղում, էջ 107։

89 Նույն տեղում, էջ 111։

90 «Յառաջ», 1933, № 2209, 9 հունիսի։

91 «Արևելյան մամուլ», 1897, № 10, 15 մայիսի։

Հոդվածից երևում է, որ հայկական դպրոցներում շաբաթը 4—8 ժամ թուրքերեն էին անցնում։ Այդ լեզուն հիմնականում դասավանդում էին թուրք ազգի ուսուցիչներ և «ոչ արդո թուրք ուսուցիչք և ուսուցչուհիք հայերեն գիտեն և ոչ երկսեռ հայ ուսանողք՝ թուրքերեն, ինչ որ՝ իհարկե, ըստ ջանք և անօգուտ վաստակ կպատճառե երկուստեք»[92]։ Այնուհետև ասված է այն մասին, որ 1896 թ. դեպքերը աղետաբեր հետևանք ունեցան ժողովրդի տնտեսական կյանքում, սակայն «նույնքան և կործանարար եղավ մեր կրթական, կամ ըստ մեզ՝ մեր միակ կենսական գործին»[93]։

1896 թվականի կոտորածներից հետո ավելացան օտարերկրյա դպրոցների աշակերտների թիվը, քանի որ Վան քաղաքի շատ բնակիչներ հնարավորություն չունեին վճարելու հայկական դպրոցների վարձը և ստիպված իրենց երեխաներին ուղարկում էին միսիոներների կողմից բացված դպրոցները։ Ժամանակակիցն այդ երևույթի մասին սրտի ցավով գրում է. «Ի՞նչ փույթ՝ թե աստ պապական օտարաքաղաքացի մը մանավար վարժարան մը կը բանա ու կը շարունակէ, մինչ երեկ, անդ (Արարք) քսան տարիներե ի վեր ջերմեռանդ բողոքական մը, վեց տարի անընդհատ՝ և այն ամենաբարձր ամսականով, 7—800 երկսեռ հայ մանկտիք կը հալե, կը ձուլե լուտերական կաղապարով...»[94]։

Միսիոներների դպրոցների և նրանց նպատակների մասին Հ. Երամյանի՝ Գր. Չալխուշյանին գրած նամակում ասված է. «Օտար միսիոնարությունները ճարտարորեն կշահագործեն զմեզ ձրի կրթությամբ և արդյունքը ինչ է, գիտե՞ք։ Հեռացում ազգային եկեղեցիե և հայերենի ավանդությունները, տոհմային նկարագրի անկումը, այլասերում և վերջապես գաղթականություն դեպի կլանող մեծ կենտրոններ և մանավանդ Ամերիկա։ Հայաստանը կը պարպվի, կը պարպվի նաև աղքատության, տուրքերու ծանրության և դինվորական հարցի երեսեն, մինչև քանի մը բանքաներու հարստությունը կրնար ահագին կարիքներ դարմանել»[95]։

Վանում գործող միսիոնար, մասնագիտությամբ բժիշկ Ռեյնոլտսը այնտեղ 30 տարի գործունեություն ծավալեց, որի շահավիղը հասնում էր մինչև Մուշ և Սասուն։ Քաղաքի բնակիչները նրան «պատվելի» և «պատվելի հայր» էին անվանում։

---

92 Նույն տեղում։

93 Նույն տեղում, № 11, 1 հունիսի։

94 Նույն տեղում։

95 Գր. Չալխուշյան, *Մտքեր, խոհեր, դեմքեր*, Թիֆլիս, 1914, էջ 211։

Ամերիկայում նա մասնակցել էր քաղաքացիական կռիվներին։ Զավակներ չի ունեցել և «սահման հայերեն կը խոսեր, անշուշտ օտարի շեշտով»[96]։ Ամերիկյան միսիոներների շենքը և դպրոցը գտնվել են Այգեստան թաղամասի արևմտյան մասում։ Նրանց հիմնական նպատակը բողոքականությունը տարածելու միջոցով ամերիկյան ազդեցությունն ուժեղացնելն էր։ 1894 թ. Սասունի ապստամբությունից հետո նա հրաժարվեց Սասուն գնալ վիրավորներին և հիվանդներին դարման անելու, չնայած մի քանի անգամ եղել էր այնտեղ և «Այդ շրջանեն ուներ ազետյալներու պատկերներով ճոխ հավաքածու մը»[97]։

1894—1896 թթ. կոտորածներից հետո Ռեյնոլտսը առատ դրամներ ստացավ Ամերիկայից և Այգեստանում բաց արեց 500 աշակերտի համար երկսեռ որբանոց։ Նա սկսեց դպրոցներ բաց անել նաև Ականցում և մի քանի գավառական կենտրոններում, որտեղ ուսուցիչներ էր ուղարկում իր դպրոցի շրջանավարտներին։ Վանում գտնվող ամերիկյան դպրոցն ուներ 12 դասարան, այնտեղ անցնում էին հին ու նոր հայերեն, թուրքերեն, անգլերեն, կրոն, բնագիտություն, աստղաբաշխություն, տոմարակալություն, հանրահաշիվ, քիմիաբանություն, երկրաչափություն, երգ, մարմնամարզություն, ընդհանուր և ազգային պատմություն, իսկ վերջին տարիներին՝ հայ եկեղեցական պատմություն։ Այդ դպրոցներում անցնում էին հայերեն, եկեղեցական ու հայոց պատմությունները։ Բացի տղաների դպրոցից, կար նաև աղջիկների դպրոց, որը «բոլոր գիտություններ չուներ, բայց աւտր փոխարեն ձեռագործ և կար ու ձև կը սովորեցներ»[98]։ Դպրոցների սաները ու սանուհիները նամակագրական կապերի մեջ էին Ամերիկայում գտնվող իրենց բարերարների հետ և պարտավոր էին նրանց տարեկան մեկական նամակ գրել։ Ամերիկյան միսիոներները բացի Ամերիկայից ստացված միջոցներից, նյութական օգնություն էին ստանում նաև Անգլիայից, Շվեյցարիայից, Շվեդիայից, Դանեմարքայից և Գերմանիայից։ Ռեյնոլտսը Վանում առաջին դեղատունը բաց արեց, սակայն, անկասկած, նա և նրա նմանները Վան էին եկել «մարդոբսության համար, աւտր մեջ ոչ մի կասկած կրնա ըլլալ։ Տոքթ Ռեյնոլդս մարդոբսներեն մեկն էր»[99]։

Սակայն Ամերիկայից եկած նոր սերունդը՝ Գրինը և Ալենը դեմ էին հայ եկեղեցու պատակտման պրոպագանդային։ Չնայած բժիշկ Ռեյնոլտսը

96 «Հայրենիք» (Բոստոն), 1955, № 7 (353), հուլիս։
97 Նույն տեղում։
98 Նույն տեղում, № 8 (354), օգոստոս։
99 Նույն տեղում, № 9 (355), սեպտեմբեր։

Ամերիկայի քաղաքացիական պատերազմի մասնակից էր, սակայն դեմ էր հայ ազգային-ազատագրական շարժումներին։ Դպրոցի այն սանները, որոնք շփվում էին հայ ազգային ազատագրական շարժման ներկայացուցիչների հետ, պատժվում էին, իսկ այդ կարգի միտում ունեցող ուսուցիչները և ուսուցչուհիները դպրոցից հեռացվում էին։

Դարասկզբին, 1903 թ., վանում կար 25 դպրոց, որից 10-ը՝ հայկական, 6-ը՝ ամերիկյան և 9-ը՝ ֆրանսիական։ Այդ դպրոցների մասին տեղեկություն է տալիս «Բյուզանդիոն» թերթի մի հոդվածից քաղված և մեր կողմից կատարված ներքոհիշյալ աղյուսակը.

№ №	Դպրոցների անունը	Աշակերտների թիվը
1	Երամյան	230
2	Սանդիսյան (աղջկանց)	200
3	Նորքաց կեդրոնական	80
4	Աբարուց եկեղեցու (ծխական)	250
5	Դրաբար եկեղեցու իգական	200
6	Նորշենի ծխական (արական)	200
7	Հայնկոյաններ (արական)	180
8.	ս. Հակոբի ծխական	70
9	Հիսուսյան (արական)	170
10	Շուշանյան (իգական)	100
	ընդամենը՝	1680
	Ամերիկյան վարժարաններ	
1	Արական դպրոց	130
2	Արական որբանոց	200
3	Իգական վարժարան	200
4	Իգական որբանոց	180
5	Մանկապարտեզ երկսեռ	40
6	Քաղաքամեջի վարժարան (իգական)	70
	ընդամենը՝	820

Ֆրանսիական վարժարաններ

1	Տղաների որբանոց	30
2	Աղջիկների որբանոց	30
3	Տղաների վարժարան	100
4	Աղջիկների վարժարան	360
5	Երկսեռ մանկապարտեզ	40
6	Կաթոլիկների աղջիկների վարժարան	100
7	Կաթոլիկների տղաների վարժարան	50
8	Կաթոլիկների աղջիկների վարժարան	60
9	—»— տղաների —»—	47
	ընդամենը՝	817[100]

Այսպիսով, եթե մինչև 1896 թ. կոտորածները հայկական դպրոցների աշակերտները մեծամասնություն էին կազմում, ապա 1903 թ. արդեն ամերիկյան և ֆրանսիական կաթոլիկական դպրոցների և առաջին անգամ բացված երկու մանկապարտեզներում գտնվող երեխաների թիվը համարյա թե հավասարվեց: Սակայն կաթոլիկները շատ շուտով զգացին «իրենց համը չառնելը վանա դավանափոխ հայերեն» և տղաների թիվը իջեցրին: Վերջիններս «պաշտոնապես ընդունած են լատինականությունը և լատին տիրացուի համազգեստը ունեին և խաչ կը կրեն իրենց կուրծքերուն վրա, մասնակցելով նաև լատինական ժամասացությեան»[101]: Այս քաղվածքից անշուշտ երևում է, որ նրանք ամեն ինչի գնով ցանկանում էին խտացնել իրենց շարքերը, սակայն նրանց այդ շատ քիչ էր հաջողվում:

Թատերական ներկայացումները վասպուրականում.— Հայտնի է, որ Արտաշեսյան դինաստիայի ժամանակ Տիգրանակերտում և Արտաշատում գործել են հելլենական տիպի թատրոններ և հայ իրականության մեջ տվել են առաջին ներկայացումները: Հայաստանի հանրահայտ կենտրոններից մեկում՝ Վանում եղե՞լ է թատրոն, թե ոչ, այդ մասին մենք տեղեկության չենք հանդիպել: Թումա Արծրունին հաստատապես նշում է, որ X դարում Արծրունիների թագավորության ժամանակ երբ Աղթամար կղզին դարձավ Հայաստանի ամենախոշոր քաղաքական և ռազմա-

100 «Բյուզանդիոն», 1903, թիվ 1997, 15/28 ապրիլ:
101 Նույն տեղում, թիվ 2188, նոյեմ. 26—9 դեկտ[illegible]

կան կենտրոններից մեկը, Գագիկ Թագավորի այնտեղ կառուցած շքեղատեսիլ ամֆիթատրոնում և մրցումների հրապարակներում կազմակերպվել են թատերական բնույթի խաղեր, հնչել են գուսանական երգեր և տեղի են ունեցել ուրիշ այլ միջոցառումներ: Այդ մասին պատմագիրը ասում է. «Բազմեալ երևի արքայ նազելի ճոխութեամբ, շուրջ դիւրեալ ունելով պատանեակս լուսատեսակս, սպասաւորս ուրախութեան, ընդ նմին և դասս գուսանաց և խաղս աղջկանց զարմանալոյ արժանիս. անցէն և սուսերամերկաց հոյլք և ըմբշամարտաց պատերազմունք, անդ և դասք առիւծուց և այլոց գազանաց»[102]:

1915 թ. Վանից էջմիածին փոխադրվեց և 1916 թ. հրատարակվեց «Հաւաքարան անուանց կաթողիկոսաց (Աղթամարայ)» 1824 թ. գրված մի ձեռագիր, որի հեղինակն է Ղազար կամ Նավավար դրիչը: Երկու այլ հին ձեռագրերից միավորված այդ ձեռագրում հետաքրքրական տեղեկություններ կան Աղթամարում Գագիկ Արծրունու կատարած կառուցումների մասին. այստեղ ասված է. «Նախ շինեաց զանառիկ բերդն Հարայու. նոյնպես շինեաց ամուր բերդ մի յՈստան քաղաքին» ապա Աղթամարում կառուցեց հայտնի տաճարը «յերկնահանգետ շքեղաշուք» և կղզում իր պալատը, որը «Արքայարանն է Արծրունեաց»[103]: Ձեռագիրը հավաստում է նաև այն մասին, որ մուտք գործելով կղզի, Գագիկ Արծրունին այնտեղ հավաքեց մեծ թվով մարդկանց, որոնք սկսեցին քարեր տեղափոխել, ընդարձակել կղզին, ապա մի պարիսպ կառուցեց «հրաշակերտ, ահեղակերպ, բարձրաբերձ, լայնանիստ բրգմամբք և բարձրացեալ աշտարակօք զարդարեալ»[104]:

Գագիկ Արծրունին ստեղծեց նաև զբոսանքի տեղ «յորում հանդերձ որդւոք և աղատակուտ ղօրօք միշտ ուրախանայր»[105]: Կղզին ընդարձակվեց, կառուցեցին պարիսպը, շատ շինքեր և շուկա: Տնկվեցին ծաղկանոցներ, պարտեզներ, բուրաստաններ: Թագավորը այնտեղ ուներ «ոսկեզարդ գահոյք» և շրջապատված էր պալատականներով և «ընդ նմին և դասս գուսանաց և խաղս աղջկանց զարմանելոյ արժանիս: Անդ են և սուսերամերկաց հոյլք, որ կռիւ և թրաթափ, և երիտասարդաց և քաջ քաջաց կռիվ և քուշտ ընկերաց պատերազմուք: Անդ է և դասք առիւծոց

---

102 Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 482:

103 Հաւաքարան անուանց կաթողիկոսաց (Աղթամարայ), Մեսրոպ Վ. Մաքսուդեանց, էջմիածին, 1916, էջ 2:

104 Նույն տեղում, էջ 14—15:

105 Նույն տեղում, էջ 15:

և այլոց գաղանաց, և անդ է երամք հաւուց զարդարեալք ի պէս պէս ձրանգով»[106]: Վերը բերված քաղվածքից հեշտ է նկատել, որ կառուցված շինությունները կահավորվել են ըստ արժանվույն: Այդ բոլոր կառույցների դեկավարն էր Մանվել ճարտարապետը և տաճարը այնպիսինն էր, որ «այլազգիք գային և զարմանային»[107]:

Սակայն սելջուկյան և ապա մոնղոլական ավերիչ արշավանքների ժամանակ և նրանից հետո, երբ Վասպուրականի տնտեսական և քաղաքական վիճակը անկում ապրեց, վերևում նշված հանդեսներն առհասարակ չքացան: Ինչպես Հայկական լեռնաշխարհում, այնպես էլ Վասպուրականում, չնայած անկախությունը կորցնելուց հետո թատերական խաղեր և ներկայացումներ չեն եղել, սակայն պահպանվել էին հին հեթանոսական ժամանակներից հայ եկեղեցուն և ժողովրդին փոխանցված թատերական ներկայացումներին նմանվող եկեղեցական և աշխարհիկ ծեսեր: Դրնդեզ (տեառնընդառաջ) ծիսակատարության ժամանակ գյուղերում տարին մեկ անգամ խարույկ էին վառում, որի ընթացքում երիտասարդ հարսներն ու աղջիկները պարում էին, երգում և խարույկի վրայով արագ թռչում: Թատերական ներկայացումների էին նմանվում Հայկական լեռնաշխարհում և Վասպուրականում նշանդրեքների, հարսանիքների, բարեկենդանի և այլ եկեղեցական ու աշխարհիկ տոների արարողությունները, որոնց ժամանակ անթիվ ու անհամար ժողովրդական կատակ-սարեր ու երգեր էին կատարվում, որոնք, անկասկած, հոգեկան մեծ բավականություն էին պատճառում հավաքվածներին: Ամենուր շատ հաճելի է եղել լարախաղացների երևալը, որոնք ճկուն շարժումներ էին կատարում, իսկ ներքևում գտնվող աճպարտեսը (յալանչին) իր ծամածռություններով ու հումորով լի արտահայտություններով ուրախացնում էր հավաքվածներին: Համբարձման տոներին հետաքրքիր էր աղջիկների վիճակախաղը, երբ նրանք յոթ աղբյուրից ջուր էին հավաքում և նրա մեջ լցնում գեղեցիկ ու անուշահոտ ծաղիկներ, ապա սկսվում էր ժողովրդական համերգին նմանվող արարողությունը: Համբարձման տոնը կատարվում էր մայիսյան օրերին: «Սքանչելի է այն տաղը,— գրում է ակահատես Գ. Սրվանձտյանցը, — զոր վիճակի բացման ժամուն կը նվագեն օրիորդները. իղձերով լի տաղ, հորում յուրաքանչյուր ոք կույս յուր ապագան, յուր կյանքը, յուր սերը կ'ամփոփե 'ի մի երիտասարդ, որ լինի ազնիվ ձեռքերով, ազնիվ մարմնով, արի, վեհանձն, հաջողակ, բա-

106 Նույն տեղում, էջ 19:
107 Նույն տեղում, էջ 28:

բեպաշտ, իմաստուն, զոր կը խնդրե բախտեն տալ իրեն համար ամուսին կամ փեսա. և ահա երջանիկ է նա»[108]:

Վասպուրականի ժողովրդական երգերի խառնարանում մեծ թիվ են կազմում համբարձման վիճակի խաղերը, որոնց մեջ լուսաթաթախ և գեղեցիկ աղջիկները միաբերան խնդրում են վիճակ հանողին, թե «հան վիճակն ի բարին» և նա ամանից հանելով նախօրոք գցված իրերից մեկը, նրա տիրոջ բախտի մասին ժողովրդական երգերից խառնված մի քառյակ է արտասանում:

Շատ հետաքրքրական էին Վան-Վասպուրականի հարսանիքները, որոնց մասին իր հուշերում նկարիչ Փ. Թերլեմեզյանը գրում է. «Տակավին թարմ է հիշողությանս մեջ՝ իմ մանկության և պատանեկության ժամանակվա դյուցազնական պարերով հարուստ, զարմանալիորեն ուրախ և հեքիաթային հարսանիքները, որոնք հաճախ տևում էին յոթ օր և յոթ գիշեր»[109]: Երգ արարողություններից ամենագեղեցիկներից մեկը կոչվել է «երգ հարսնության», իսկ նրա շարունակությունն է «Դուվասանք փեսայի և հարսին» երգը, որի մեջ հարսանքավորները փեսային (թագավորին) հարցնում են, թե «թագավոր ինչ բերիմ քեզ նման, քո կանաչ արևի նման», նշելով բազմաթիվ ծաղիկների անուններ, որից հետո նշվում է այն ծաղկի անունը, որը պետք է ծաղկի ընտանիք կազմող թագավորի համար[110]:

Արարողության ժամանակ խոսվում է նաև երկու թունավոր բույսերի մասին, որոնցից երկուսն էլ պետք է քավեին թագավորին չուղող մարդու աչքերին: Երբ հարսին արդեն հասցնում են փեսայի տան բակը, նրան ուրախությամբ դիմավորում է տղայի մայրը, որից հետո հարսանքավորները սկսում են երգել «Թագավորին շատ արև» երգը և պահանջում փեսայի մորից ասել, թե ի՞նչ են բերել նրա համար: Նրանք պահանջում են սկեսուրից տնից դուրս ելնել «քաղցր բաղարջով» և, իհարկե, անպայման «արաղի փարչով»: Երգը ունի իր երգիծական վերջավորությունը, որի մեջ նշված է, որ եթե հարսը չար բնավորություն ունենա, ապա սկեսուրի համար «գլուխ դմփող» կլինի: Այս խոսքերով և ծիծաղով էլ վերջանում է հարսանիքի արարողության այդ երգաշարը:

Վան քաղաքում թատերական առաջին ներկայացումները երևացին 1860-ական թվականներին և բեմ ելան Կոստանդնուպոլսում կրթված

---

108 Գ. Սրվանձտյանց, նշվ. աշխ., էջ 82:
109 Փ. Թերլեմեզյանի հուշերը, թ. 28:
110 Գ. Սրվանձտյանց, նշվ. աշխ., էջ 265:

Սարգիս Գնունու գործերը։ Մինչ այդ թատերական խաղերը նախնական փորձեր էին արվել Մեսրոպ Փափազյանի կողմից։ Հ. Երամյանի վկայությամբ այդ ժամանակ քաղաքում աշակերտների ուժերով բեմադրվել են «Արշակ Բ», «Վարդանանք», «Պապ և Ներսես» պիեսները։ Ս. Գնունին (Բարսեղյան-Տոսպեցի) ծնվել է Վանի էրերին գյուղում, սովորել է Հիսուսյան, ապա Կ. Պոլսի Միջնագյուղի Թարգմանչաց վարժարաններում։ Դեռ աշակերտական տարիներին սկսեց թղթակցել «Մասիս» և «Մեղու Հայաստանի» պարբերականներին, ապա Թումա Պիսյանցի հետ 1861 թ. հուլիսի 1-ից սկսեց հրատարակել «Վարդ Մեսրովբյան» միամսյա հանդեսը, որի մասին Գ. Շերենցը գրում է, որ այն «անուշ հոտով և բուրումներով մի ժամանակ Կ. Պոլսո գրագետների, ավելի դեղարվեստասերների-բանաստեղծների, թատերասերների ուշադրությանն է արժանանում»[111], որին թղթակցում էին այդ ժամանակ Կ. Պոլսում գտնվող Ս. Բոխմախյանը և Տ. Ամիրջանյանը։ Սակայն հանդեսը նյութապես միջոցների պակասի պատճառով ընդամենը երկու տարի ապրեց։ Դրանից հետո Գնունին վերադառնում է Վան և աշխատում Հիսուսյան վարժարանի տեսուչ և «բարեփոխում է ուսումնարանը նոր-նոր ծրագրերով»[112]։ Շերենցի վկայությամբ 1865—1873 թթ. ինքը բախտ է ունեցել այդ վարժարանի «սրահում տեսնել, թատերական բեմ. ներկայացումներ, ողբերգություններ և պավեշտների մի ամփոփ տիպեր»[113]։ Գնունին Վանում կազմակերպեց «Անդրանիկ» անունով մի ընկերություն։ Վանից հետո նրա կյանքը անցնում է Իգդիրում և Վաղարշապատում։ Գնունին «բնական ճարտասան էր, գրչին հետ ուներ և խոսելու, վիճելու ձիրք. հմուտ հայկաբան և տեղյակ էր իր հայրենի կրոնին»[114]։ Ս. Գնունին գրել է կրոնագիտության դասագիրք և մի քանի ողբերգություններ՝ «Ընդդիմախոսութիւն Վարդան սպարապետի Մամիկոնեան ընդ վասակայ մարզպանի աղգուրաց իշխանին Սիւնեաց, հեղինակութիւն Ս. Գնունի Վանեցւոյ, հատոր առաջին, ի Վաղարշապատ, ի տպարանի սրբոյ կաթողիկոսէ էջմիածնի ՌՅւ—1880»[115]։

Այս ողբերգության մեջ հեղինակը ամեն ինչ կապում է կրոնի հետ, այն համարելով ազգը փրկող միակ և ամենահզոր ազդակը։ Ինչպես

---

111 ԳԱՔ-ի արխիվ, Յու. Վեսկովսկու ֆոնդ, վավ. № 455, Գ. Շերենցի «Վասպուրականի գրական գործիչները» ձեռագիր աշխատությունը։

112 Նույն տեղում։

113 Նույն տեղում։

114 Նույն տեղում։

115 Ս. Գնունի, նշվ. աշխ., էջ 1։

Եղիշեի մոտ, ողբերգության մեջ Վարդանը հանդես է գալիս հայ ազգի և քրիստոնեական ուսմունքի պաշտպան, իսկ Վասակը՝ թշնամի։ Մյուս ողբերգության նյութը Սողոմոն Կեսների Աստվածաշնչից վերցված Աբելի մահը պիեսի հայացրած տարբերակն է, որը խաշնարած Աբելի, նրա կին Թերեզայի պատմությունն է, որտեղ հանդես են գալիս Ադամն ու Եվան և եղբայրասպան Կայենը։ Այս ողբերգության առաջաբանում Ս. Գնունին թատրոնը համարում է «Նախակրթարան հասարակաց», որի միջոցով ներկայացվող «նյութն և առարկան պետք է ունենա դեպի բարոյականություն հորդորող միակ նպատակ, որի մեջ իբրև պարզ հայելի՝ յուրաքանչյուր ոք տեսնի յուր անցյալն, ներկան և ապագան, մոլին յուր մոլությունը տեսնի ու գարշի ղվվանքով և առաքինին՝ յուր ուղղության մեջ խրախուսվի»[116]։

Ապա Ս. Գնունին նշում է, որ 1869 թ. թարգմանել է Սողոմոն Կեսների «Աբելի մահը» երկը, որը մի քանի անգամ տպագրել էին Մխիթարյանները և այն աշխարհաբարի վերածելով «զոր մի քանի անգամ Վանա մեջ ներկայացնելու բախտն ևս ունեցա»։ Նշելով, որ Կեսների այդ գործը «թատերագրության ձևի վերածելու համար ավելի ճարտար գրչի և հմուտ թատերերգուի կարոտ էր», սակայն ինքը շատ տեղերում համառոտել է և «երբեմն կամով շեղված եմ բնագրի ընթացքից»[117]։

Ս. Գնունու մյուս ողբերգության նյութը վերցված է V դարի ազատագրական շարժումներից։ Այդտեղ դեպքերը կատարվում են Հաղկերտի պալատում, ապա Մուշկան Նիսալավուրտի և Վարդան Մամիկոնյանի վրաններէ տակ։ Պիեսի առաջաբանում Ս. Գնունին գտնում է, որ ներկայացումներն իրենց նպատակին կհասնեն, եթե նրանց նյութը վերցված լինի «բարոյականության քարոզող վեպից կամ ազգային անցյալ ու ներկա կյանքից ոչ թե հայ ժողովրդյան բոլորովին անծանոթ օտար ազգաց անցյալ կյանքից»[118]։ Ըստ նրա, օտար կյանքից վերցված նյութը իր «վայելուչ ձևերով, հետաքրքիր տեսարաններով, ճարտար ու սահուն ոճով» գրավում է հասարակությանը, սակայն թատրոնը «զբոսավայր կամ խաղատեղի չէ», ոչ էլ շահի միջոց, այլև «հասարակաց նախակրթարան ամենայն հասակի ու աստիճանի, դասարան, դատարան, ամե-

116 Ողբերգութիւն Աբելի, երեք գործողութեամբ, արտատպեալ Յարարատ ամսագրոյ, աշխատասիրեաց, Սարգիս Բ. Գնունի, Վանեցի, Վաղարշապատ, ի տպարանի սրբոյ կաթողիկոսն Էջմիածին, 1884—ՌՅԴ, էջ Գ։

117 Նույն տեղում, էջ Գ և Դ։

118 Ողբերգութիւն ս. Վարդանայ, զորավարաց, չորս գործողութեամբ, հեղինակութիւն ս. Վնունի վանեցւոյ, ի Վաղարշապատ, ՌՅԼ—1881, էջ Գ։

նայն բարոյական կատարելության և պակասության։ Մենք ընդունում ենք դերասանն իբրև ուսուցիչ, կրթիչ, դատախազ, դատավոր, դատելի, ամենայն աստիճանի և հասակի տիպ և գաղափար, ուրեմն և նորա ներկայացրածն պիտի լինի համապատասխանող յուր նպատակին և պաշտոնին»[119]։ Ս. Գնունին գտնում էր, որ թատրոնը պետք է դպրոցի և կրթարանի դեր խաղա և «հայրենասիրության և ազգասիրության նորդորե, անտարբերության խթան է, թմրության քնից զարթնեցնելու հնչող ժամացույց կամ ագաղաղ է, ցրվյալներն ի մի հավաքելու զանգակ է և ավազափող»[120]։

Վան քաղաքում թատերական ներկայացումները նոր փուլ թևակոխեցին, երբ հանդես եկավ Վանի ծնունդ Տիգրան Ամիրջանյանը (1835—1897)։ Սկզբնական կրթությունը ս. Հակոբի թաղում ստանալուց հետո 6 ամիս սովորում է Վարագի ժառանգավորաց վարժարանում, ապա Կոստանդնուպոլսի Արամյան վարժարանում, որտեղ 6 տարի սովորելուց և ավարտելուց հետո զբաղվում է ուսուցչությամբ։ Տիրապետել է հայերենին, ֆրանսերենին և թուրքերենին։ Տ. Ամիրջանյանը երգահան էր, երգիծաբան, թատերագիր, քնարերգակ, ողբերգակ, գրող[121]։ Կոստանդնուպոլսում մոտիկից շփվելով պանդուխտների հետ, գրեց իր հայտնի «Ո՜ղ, ախպե՜ր, ղող» հայտնի ոտանավորը, որի մեջ նշում է, որ նրանք իրենց փոքրիկ ձագերը ղողել են պաղ քոնիրների վրա, ապրում են հայրենիքից հեռու, տաժանելի կյանքով։ Պանդուխտների կյանքի խոսակցն նկարագիրն արտահայտող այդ երգն առաջին անգամ հրատարակվեց 1866 թ., «Միլն Ավարայրի» հանդեսում, ապա՝ 1868 թ. «Քնար Հայկականում»[122]։

1862 թ. Տ. Ամիրջանյանը Զեյթունի ապստամբության լուրը ստանալով մեկնում է Կիլիկիա, որտեղ սարկավագի աստիճան ստանալուց հետո վերադառնում է մայրաքաղաք։ Կոստանդնուպոլսում եղած ժամանակ հրատարակում է քնարական բանաստեղծությունների ժողովածուն, ապա «Վարդան» և «Տրդատ» ողբերգությունները։

1867 թ. Տ. Ամիրջանյանը հայրենի Վանում էր և աշխատում էր Ղուկասյան վարժարանում, որտեղ «կը մտցնե դասատիարակչական նոր մեթոդներ, դասավանդության ցուցակին մեջ կը մտցնե թուրքերենի, ֆրան-

119 Նույն տեղում, էջ 6։

120 Նույն տեղում։

121 «Գանձեր վասպուրականի», էջ 276։

122 «Միլն Ավարայրի», 1866, հունիս, կամ «Քնար հայկական», Ս. Պետերբուրգ, 1868, էջ 180—181։

աշխարհագրության և ազգային պատմության դասեր...»[123]: Նա միաժամանակ ուսուցիչ էր ս. Հակոբի ծխական վարժարանում: Այդ տարիներին էլ նա սկսեց հորինել և աշակերտներին կարդալ իր նոր բանաստեղծությունները: Մինչև 1870-ական թվականները Վանում ժողովուրդը երգել է միայն կրոնական և ժողովրդական երգեր, սակայն այդ ժամանակից սկսած «Կովկասեն կամ Պոլսեն վերադարձող քանի մը ուսուցիչներ ազգային կամ դպրոցական երգեր բերին կամ հորինեցին: Այդ ուսուցիչներեն ամենեն նշանավոր եղավ Տ. Ամիրջանյան»[124]: Տ. Ամիրջանյանին աշակերտող Փ. Թերլեմեզյանը իր ուսուցչին համարել է «կառչառուն և սև մազերով դեմք» ունեցող մի մարդ և «այդ ազգայուն բանաստեղծը և լեզվագետը նոր կարգեր մտցրեց և գրավեց աշակերտներին յուր դասախոսության ձևերով ու բովանդակությամբ: Ֆրանսերենի, թուրքերենի, գեղագրության ու աշխարհաբարի դասեր սկսեց տալ»[125]:

1873—76 թթ. Տ. Ամիրջանյանը աշխատում էր Հիսուսյան վարժարանում, իսկ 1890-ականներին՝ ծխական դպրոցներում:

Տ. Ամիրջանյանը մահացել է 1897 թ. մարտի 27-ին: Նրա մասին «Արևելյան մամուլը» գրեց. «Տիգրան էֆ. Ամիրճանյան, որ երեսուն տարին հետև նահանգիս կրթական գործին մեջ միշտ կարևոր դեր մը ստանձնած էր, տոհմային կենաց այլև այլ երևույթներուն վրա գրական գոհարիկներ արտադրած և՝ իբրև քաջ ֆրանսիագետ և տաճկագետ՝ յոթը տարիներե ի վեր նահանգային թարգմանության պաշտոնը կը վարեր ամենայն հաջողակությամբ, այդ մուսայից հետին առաքյալն ամսոյս 27 օրն հանգավ և 29-րդ օրն վայելուչ հանդեսով ու հուղարկավորությամբ թաղվեցավ իր հարց գերեզմանն»[126]:

1867 թ. Վանում բեմադրվեցին Տ. Ամիրջանյանի «Վարդան Մեծ» և «Տրդատ Մեծ» չափածո ողբերգությունները: 1870 թ. «Մրմունջքը», «Կիկո Մրոո» դավեշտական պիեսը, ապա «Վեց անհամաձայն եղբայրները» և վերջապես «Ուսյալ պանդուխտը»: Այդ երկու ողբերգությունները հրատարակվել էին Կոստանդնուպոլսում, 1862 թ. մի դրքույկ, որի առաջաբանում թատրոնի դաստիարակիչ դերի մասին Տ. Ամիրջանյանը գրում է. «Թատրոնը հասարակաց դպրոց մըն է. ուր հինգ տարու տղային մինչև ութսուն տարու ծեր կրնան աշակերտել: Թատրոնին մեջ ամեն տեսակ վարուց պատկերը իրական կերպով կը տեսնվի, և որոնցմե առաքինին

123 «Գանձեր Վասպուրականի», էջ 277:
124 Նույն տեղում, էջ 278:
125 Փ. Թերլեմեզյանի հուշերը, թ. 18:
126 «Արևելյան մամուլ», 1897, № 10, 15 մայիսի:

միայն գերազանցելով՝ իբրև ադամանդ կը փայլի»։ Ապա շարունակում է. «Թատրոնը ազգի մը հառաջադիմության ամենակարևոր միջոցն է, զի թե և դպրոցք ազգասիրական և առաքինական աշխուժները կվառեն, իսկ թատրոնը կբորբոքե»[127]։ «Վարդան Մեծը» գրված է գրաբարի և աշխարհաբարի խառնուրդով, որի նպատակն էր «թե՛ պոլսեցի, և թե՛ գավառական ազգայնոց հասկանալի ընել»։ Այդ ժամանակ գրաբարով գրելը ընդունված էր և այդ տարիներին նրան տուրք տվող հեղինակը գրում է. «Թե ոտանավոր մը բոլորովին պարզ աշխարհաբար ըլլա, անաղ կերակուրի նման է»[128]։ «Տրդատ Մեծը» գրված է արևմտահայերենով։ «Վարդան Մեծը» 4 գործողությամբ մի ողբերգություն է, որի մեջ Վարդան և Վասակ հակադրությունն է։ Ճակատամարտի վայրը Ավարայրի դաշտն է, որի ավարտից հետո սպարապետի կինը՝ Զարուհին, դիակների մեջ փնտրում է ամուսնուն։ Մ. Նաթանյանի վկայությամբ այդ ողբը ժամանակին երգել են Վանի հայ բնակիչները «տխուր եղանակով մը, որ Ամիրջանյան ինքն իսկ հարմարեցուցած էր, ինչպես ըրած էր շատ մը այլ երգերուն համար»[129]։

Տ. Ամիրջանյանի «Մրմունջքը» տպագրվեց 1873 թ. Վարագում. այն մի չափածո փոքրիկ պատկեր է, որը հեղինակը անվանում է նաև «Ծերգանք»։ Այստեղ հանդես են գալիս թուրքերի կողմից սպանված Միրզա Ֆերճուլյան վարժապետի 4 աղջիկները և մոլլայի կողմից բռնաբարված 8-ամյա աղջիկը։ Ղուկասյան դպրոցի աշակերտներն իրենց ուսուցչին հարցնում են արտասվելու պատճառը, նա պատասխանում է, որ այդ «ցամաքած երկրի վրա» միայն պետք է լաց լինել։ Բացվում է վարագույրը, բեմի վրա երևում են սպանված վարժապետի 4 աղջիկները, որոնք սգում են իրենց հոր մահը, ասելով, որ իրենց «տուն ավրեցավ» և իրենց «հոր կանաչ արև հողով ծածկվեցավ» մնացին անհայր[130]։ Սպանվածի աղջիկները իրենց ուսուցչին խնդրում են մի նամակ գրել Ստամբուլ և բողոքել կառավարությանը այդ դաժան ու անմեղ սպանության առթիվ[131]։ Ապա փակվում է վարագույրը, որի բացվելու հետ միասին դողալով բեմ է մտնում 8-ամյա այծեմնիկի նման մի կույս աղջիկ։ Նրա մարմնի վրա

127 Ողբերգութիւն մեծին Վարդանայ եւ Տրդատայ, յօրինեալ ի պ. Տիգրանայ Ամիրճանեանց աշակերտէ ժառանգաւորաց դպրոցին Վարագայ, տպեալ, 1862, էջ 9։

128 Նույն տեղում։

129 «Հասկ», 1947, № 4, ապրիլ։

130 Մրմունջք, ի տպարանի Վասպուրական Արծուոյն, ի Վան ի Վարագ, 1873, ՌՃՀԲ, էջ 5։

131 Նույն տեղում, էջ 6։

սարսուռ կա, նա նմանվում է աշնան դեղնած սգազդեցիկ տերևի, երբ նրան հարցնում են իր այդպիսի վիճակի պատճառը, աղջիկը արտասվելով պատասխանում է, որ կատարվել է զարհուրելի մի ոճիր[132]։

Հեղինակը գտնում է, որ թուրքական պետության մեջ օրենքն ու խիղճը բերված փաստերի առաջ լուռ են, իսկ բնությունը անզոր՝ միջամտելու.

Ի վրե՛ժ, 'ի վրեժ ո՛ կարիճներ 'ի վրեժ փութանք
սաստկագին,
Այս մեր քույրն է մեր արյունն է, որ ո՛հ այսպես
լկեցին»[133]։

Երկրի մեջ կան ժողովրդի հաշվին հարստացած մարդիկ, որոնք «աղքատին քրտինքով գոռոզացած ճակատներ» են։ Այսքանից հետո սկսվում է ուսուցչի և աշակերտի զրույցը։ Ուսուցիչը գտնում է, որ Հայաստանն ունի հոյակապ ճարտարապետական կոթողներ, սակայն նրա վշտերը շատ են, ապա դիմելով աշակերտին, հարցնում է՝ բաց անեմ այդ վերքերը, թե ոչ։ Աշակերտը խնդրում է բաց անել, որպեսզի իրենք ճանաչեն իրենց հայրենիքի ցավերը։ «Մրմունջքում» նկարագրված է նաև այն թալանը, որ տեղի է ունենում Արևմտյան Հայաստանում։

Նստիր 'ի դաշտ կին ժրաժան մշակին,
Նստիր, երգիր կթոցն 'ի ձեռն սրտապին,
Դառնուկք անմեղ յուր բոլորտիք շար առած,
Կայր սպասու յուր սիրեցյալ հոտակին։
Ահա՛ հասնի (ո՛ սոսկալի գուժաբեր)
Զարկին ոչխարք և ցրվեցան հովիվներ,
Կթոցն իննկալ և կին երկիր փուվեցավ
Եվ գառնուկներ մայեն անտեր և անմայր»[134]։

Վերը նշվածի դեմ պայքարելու, ազգային արժանապատվությունը պահպանելու հղոր գործոնը Տ. Ամիրջանյանը համարում է լուսավորությունն ու կրթությունը և կոչ անում հայ ազգի զավակներին՝ «Կրթի՛նք, կրթի՛նք, շարժի՛նք, շարժինք արձան ձեր, չէ ներելի վայրկյան մը սահել ի նանիր»[135]։

---

132 Նույն տեղում, էջ 7։
133 «Մրմունջք», էջ 8։
134 Նույն տեղում, էջ 11։
135 Նույն տեղում, էջ 13։

Տ. Ամիրջանյանի ամենակարևոր երկը 1873 թ. Վարագում տպագրված 3 գործողությամբ «Ուսյալ պանդուխտն» է, չափածո մի ողբերգություն, որի կրճատված տարբերակը լույս է տեսել Թիֆլիսում, 1903 թվականին։ Հեղինակը բարձրացրել է հայկական կյանքի ամենացավոտ հարցերից մեկը՝ պանդխտությունը և այն առաջացնող պատճառները։ Սա մի ողբերգ է ուղղված հայրենակարոտ պանդուխտներին։ Պանդխտությունը նա համարում է «հայրենյաց ամենասոսկալի աղետ», «բարոյական հրեշ», որի պատճառով ընտանիքները մնում են առանց տղամարդու։ Դեպի անհայտություն մեկնած պանդուխտներից ոմանք իրենց տալիս են «զբոսանաց, խաղուց և անառակ ընկերաց տեսակցությանն»[136] և վատնում են իրենց դառը քրտինքով ձեռք բերած դրամները։ «Ուսյալ պանդուխտի» մեջ հայրենի երկրում կրթված երիտասարդը՝ «Ներսեսը իր ծննդավայրում աննպաստ պայմանների մեջ ընկնելով, չդիմանալով վաշխառուների ճնշումներին, դիմում է օտարության։ Հեղինակը ծաղրում է Ներսեսի վախկոտությունը, որը չսպասելով իր տնկած այգու բերքի հասունանալուն, ցանկանում է հեռանալ հայրենիքից՝ «գուցե խսպառ»։ Հեղինակը Ներսեսին համարում է «մանուկները անտեր ձգող անձ մը»[137], որը ըիտե, որ մոտենալու է ընտանիքից «բաժանման անգութ դահիճը», իսկ կինը՝ Իսկուհին լաց է լինում իմանալով, որ ամուսինը կենդանի է, սակայն իրեն թողնում է տառապյալ այրիի պես։ Ամիրջանյանը գտնում է, որ ժողովուրդը դեռևս թմրած է, իսկ նրա վերնախավը «փորի իշխաններ» են և ի՛րկությունը համարում է ուսումն ու դաստիարակությունը, որն է «կյանք հոգվո, լույս աշխարհի պարծանք մարդկության»[138]։ Տ. Ամիրջանյանը մարդկային իսկական կյանքը համարում է այն, որը անցնում է աղատության և առաջադիմության մեջ և պետք է հետևել աղգի ներկայացուցիչներին (Ներսես, Մեսրոպ և այլք), որոնք «զմարդկությունն բարձրացուցին և զհայրենիք փառավորեցին, ճրագ մը վառեցին և տիեղերք գահավորեցին, հով մը փչեցին և անպատուղ անտառներ տապալեցին»[139]։ Ներսեսը չկրթված մարդկանց համարում է «աղատ գերի», իսկ իր ժողովրդի ծանր վիճակից ելնելով, ասում է. «Ա՛հ որչա՛փ ստրկացած է այս ժողովուրդը»[140]։ Ուսյալ պանդուխտի կինը վիրավորված եղնիկի է

136 Տիգրան Ամիրճանյան, *Ուսյալ պանդուխտ, ողբերգութիւն յերիս արարուածս, ի տպարանի արծուոյն Վասպուրականի ի Վան ի Վարագ, 1873*, էջ Բ։

137 Նույն տեղում, էջ 2։

138 Նույն տեղում, էջ 12։

139 Նույն տեղում, էջ 13։

140 Նույն տեղում, էջ 14։

նմանվում, նրա մազերը թափված են ուսերին և ի՞նչ է խնդրում նա ամուսնուց. «Մի՛ թողուր քո Հայաստան, քո ձագեր, քո օթևան»[141]: Սակայն հայրենիքից դեպի օտար երկիր մեկնող Ներսեսը չի լսում ոչ ոքի, ասելով. «Լավ է պատվավոր պանդխտություն, քան մուրացկանությամբ հայրենիք»[142]:

Տ. Ամիրջանյանը գտնում է, որ պանդխտության մեկնողի առջևում կան «մահաշունչ դևեր, ահագին լեռներ, կատաղի ծովեր, անսիրտ ավազակներ, օտար երկիր, աստրին ծառայության անտանելի լուծը, հիվանդության մեջ անխնամության և ուրիշ սոսկալի դեպքեր»[143]: Ըստ հեղինակի Արևմտյան Հայաստանում թագավորում է «զրկանք, բռնություն, աստրկություն, սուգ, արտասուք, լքումն այրեաց, լալումն որբոց, մերկ կուսանք, հափշտակություն, առևանգություն, կարոտ սիրելյաց, անհավատարմություն բարեկամաց, վնաս՝ ի մերձավորաց, տարաժամ մահ ի տգիտութենն, անզգայություն, համառություն, մեկ խոսքով մարդկության անարժան և հարված բերող ամեն բան»[144]: Հայաստանը գտնվում է շատ ծանր պայմաններում և ողբերգության հեղինակը դիմելով նրան ասում է.

Անունիդ մեռնիմ մայրիկ, այդ ինչ դառն վիճակ,
Անզարդ գլուխդ մատաղ, ուր է քո թագ պսակ:
Շատ մայրեր տեսած եմ քեզ պես թշվառ չկա,
Շատ վերքեր տեսած եմ, այլ քոյդ նման չկա»[145]:

Տ. Ամիրջանյանը դնում է իր ազգի ինքնապաշտպանության հարցը: Ողբերգության վերջին մասում պանդուխտների քարավանի վրա է հարձակվում ավազակների մի խումբ, նրանցից ոչ ոք, բացի Ներսեսից, զենք չունի և երբ նա կրակում է ավազակների վրա և նրանք հեռանում են, դառնում է իր ընկերներին և ասում, որ իր ատրճանակի կրակոցի ձայնը «մարդու հանած ձայն է, մենք էլ մարդ ենք»[146]:

Տ. Ամիրջանյանի ջանքերը հասցրին նրան, որ «Ուսյալ պանդուխտը» վանում բեմ բարձրացավ: Կանանց դերերը կատարում էին տղամարդիկ, իսկ Ներսեսի կնոջ դերը՝ առաջին անգամ բեմ բարձրացած Սաթենիկ Գասպարյանը: Կնոջ, մոր և պանդուխտի երգերի երաժշտությունը հորինել էր

---

141 Նույն տեղում, էջ 24:
142 Նույն տեղում, էջ 25:
143 Նույն տեղում, էջ 55:
144 Նույն տեղում, էջ 55—56:
145 Նույն տեղում, էջ 62:
146 Նույն տեղում, էջ 65:

ողբերգության հեղինակը, որը հետագայում նոտագրեց Վրթանես Փափազյանը։ Այդ երգերը ժամանակակիցների վկայությամբ երգվել են ժողովրդի կողմից։ «Ուսյալ պանդուխտը» առաջին անգամ բեմադրվեց քաղաքամիջի Հիսուսյան վարժարանում, որին մասնակցում էին շատ հյուրեր, ռուսական և անգլիական հյուպատոսները, ինչպես նաև Վանի Հասան փաշան, որի աչքերից արտասուքներ էին հոսում[147]։

Տ. Ամիրջանյանը գրել է նաև բանաստեղծություններ և «Կիկո Մրտո» երգիծական գործը, որի մեջ ծաղրում է գյուղական բնակչության հետամնացությունը։ Չնայած գյուղացիների հագուստները կեղտոտ են, մազերը կարգի չեն բերված, անտաշ են ու կոշտ, սակայն օրն ի բուն աշխատանքի մեջ են, իսկ վերջում նրանց ոչխարները դառնում են աղաներին կերակուր, դառը դատող գյուղացիներին մնում են թանն ու չորթանը։ Նրանց աշխատած ցորենը ուտում է Վանի խոջան, իսկ նրանց բաժին է մնում տարեկան հացը։ Հեղինակը կոչ է անում գյուղացիներին ըմբոստ լինել, հանդես գալ անիրավությունների դեմ և դիմադրել ասելով. «Ցորեն կուտի Վանա խոջին, ու ալյուք իսկի չեք անե ծեն»[148]։ Այդ գործի գլխավոր հերոսը՝ Մուրան կոչ է անում դիմադրել ժողովրդի հարստահարողներին, քանզի աշխարհում «կուտի կորիճ և խելք ճարտար» և դրա համար հարկավոր է, որ գյուղացին վախկոտ չլինի և խորհուրդ է տալիս «Տյուշմընի դեմ մեք ելնի ջուր, էլեք կտրուկ ֆրանկի թուր»[149]։ Տ. Ամիրջանյանը գյուղական կյանքի հետամնացությունը ծաղրելու հետ միասին գյուղացիներին կոչ է անում թողնել բուռ կյանքը, խեղճ չլինել, ալկոհոլին տված դրամով զենքեր առնել և եթե թշնամին նախահարձակ լինի՝ անցնել ինքնապաշտպանության։ Տ. Ամիրջանյանի աշակերտներից մեկը հաստատում է, որ այդ գրվածքի «40—50 օրինակ միայն իր ձեռքով տպագիր տառերով արտագրած էր և ցրված գյուղացի քահանաներուն (անստորագիր), որպեսզի անոնք կարդան գյուղացիներուն և բացատրեն, թե պետք չէ հանդուրժեն ղիրենք հարստահարողներուն»[150]։

Տ. Ամիրջանյանը գրել է Վանի բարբառով մի կատակերգություն, որը վերաբերում է 6 եղբայրների կյանքին և նրանց միջև եղած անհամաձայնությանը։ Եղբայրներից յուրաքանչյուրը հանդես է գալիս մի դերով (իմաստուն, իմաստակ, ազգասեր, ընտանեմոլ, ծույլ, ագահ, գինեմոլ

147 Հ. Երամյան, նշվ. աշխ., Ա հատ., էջ 141։

148 «Գանձեր Վասպուրականի», էջ 288 կամ Հ. Աճառյան, Քննություն Վանի բարբառի, 1952, էջ 213։

149 Նույն տեղում, էջ 290։

150 «Հայրենիք» (Բոստոն), 1936, № 7 (163), մայիս։

և սատանա)։ Այդ գործը ժողովրդի անմիաբանության և նրա մեջ տիրող վատ բարքերի քննադատությունն է։ Կատակերգությունը բեմադրվել է 1900 թ., հեղինակի մահից հետո, Վանի Թարգմանչաց վարժարանում, որի տեսուչն էր Ղևոնդ Ալիշանը[151]։

Տ. Ամիրջանյանը գրել է ծովից վեր խոյացող «Հրաշալի մանուկ» բանաստեղծությունը, որը նա համարել է ապագա Հայաստանի ծնունդը։ Նա գրել է նաև ուրիշ բանաստեղծություններ, 1896 թ. Գյոզալդարայում և Գարահիսարում ընկած երիտասարդների մասին, որոնց ուր գտնվելը ցարդ անհայտ է։ Տ. Ամիրջանյանը, ժամանակակիցների վկայությամբ, հումորով առնցուն մի մարդ էր, պաշտպանում էր Մ. Խրիմյանին և նրա գաղափարակիցներին, հանդես էր գալիս Պ. Մելիքյանի դեմ։ Քաղաքում ներկայացումները տրվում էին շնորհիվ նրա ջանքերի, որի համար նա նյութական ոչ մի հատուցում չի ստացել. նա «ո՛չ հեղինակի և ո՛չ ռեժիսեորի վարձք կը պահանջեր»[152] և հենց ինքը «հորինեց թե պարերգներու և թե ուսյալ պանդուխտի մոր և կնոջ եղանակները»[153]։ Այդ ներկայացումները, անշուշտ, իրենց ազդեցությունը թողեցին նաև գավառների վրա, որոնց ժողովուրդը չգիտեր, թե ինչ է ներկայացումը։ Սակայն Թուրքական խավարամոլ պաշտոնյաներն ամեն ինչի գնով խափանում էին գավառներում սկսված փորձերը։ Այսպես, 1876 թ. Խիզանում կազմակերպված ընկերությունը 4 վարժարաններ բաց անելուց հետո ցանկացավ ի նպաստ վարժարանների «թատերական ներկայացում մը տալ հայերեն լեզվով։ Դրաքննիչն արտոնություն տվավ և ներկայացումն պիտի կատարվեր հինգշաբթի, հանկարծ նույն իրիկուն, ներկայացումեն մի երկու ժամ առաջ, կառավարության հրամանով կարգելվի ներկայացումն, հայերեն կատարելու պատճառով»[154]։

Տ. Ամիրջանյանը Թուրքական 1876 թ. սահմանադրությունը համարում էր «օսմանյան խաբեություն» և երիտթուրքերի մասին մի ինչ որ առիթով ասել է. «Ժեռն Թուրքերը ղուրանին չհավատալով՝ քրիստոնյաները Ալլահեն իրենց վստահված ավանդներ չեն համարեր և ծեր կամ հավատացյալ Թուրքերու կրոնական խիղճը չոմնենալով՝ անխնա պիտի կոտորեն հայ ազգը, եթե երբեք իրենց օրով ընդհանուր եվրոպական պատերազմ մը ծագի և իրենց պատեհություն տրվի հայ տարրը բնաջնջելու,

---

151 «Գանձեր վասպուրականի», էջ 290։

152 Հ. Սրամյան, նշվ. աշխ., էջ 140։

153 Նույն տեղում։

154 «Արձագանք», 1886, № 15, 20 ապրիլի։

որպեսզի դեթ ասիական գավառները իսպառ թրքանալով իրենց մնան»[155]։

Ակսպիսով, Մարտիրոս վարժապետը՝ Մ. Փափազյանը, Ս. Գնունին և Տ. Ամիրջանյանը այն մտավորականներն էին, որոնք 1860-ական թվականներից սկսած Վան քաղաքում բեմ հանեցին առաջին ներկայացումները։

Վասպուրականի հայության ինչպես դպրոցական գործը, այնպես էլ թատերական ներկայացումները ավելի աշխուժացան 1908 թ. թուրքական հեղափոխությունից հետո։ Սակայն այն ընդհատվեց, երբ 1915 թ. Վան քաղաքի և շրջակա գավառների հայ բնակիչները նահանջեցին Արարատյան դաշտ։ Հետագայում, 1918 թ. տեղի ունեցավ վերջին գաղթը դեպի Պարսկաստան—Բաղդադ, որից հետո այդ հսկայական տարածքը զրկվեց հայ բնակիչներից, որով և մարեց դարերի պատմություն ունեցող հայ մշակութային կյանքը։

---

155 Հ. Ներսյան, նշվ. աշխ., էջ 332։

ՑԱՆԿԵՐ

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Աբդուլ Գուդա դերվիշ 259
Աբդուլլահ շեյխ 84
Աբդուլլա 192, 198
Աբդուլ Համիդ 88, 177, 183, 198, 263, 278
Աբդուլ Մեջիդ սուլթան 187, 301
Աբել (աստվ.) 326
Աբովյան Գ. 26
Աբովյան Խ. 12, 72, 85, 302
Ագրիպասյան (Դաբաղյան) Հ. 234—237, 310
Ադամ (աստվ.) 326
Ա-Դո 5, 11, 12, 24
Ազիզ սուլթան 183
Ալեն 319
Ալի բեկ 51
Ալի փաշա 172
Ալի խան 195
Ալիշան Ղ. 109
Ախպեր 243
Ախիկյան Ա. 212
Ահմեդ բեյ 78
Աղաբեկյան Մ. 119, 190, 207, 215
Աղաթոն Մ. 191
Աղաթոնյան 207
Աղայան Ղ. 109, 119
Աղանյանց Գ. 122, 180, 292
Աղբյուր Սերոբ 289
Աղո 243
Աղվանյան Գ. 35, 131, 202, 203, 220, 297
Աճեմյան Հ. 26
Ամիկ 29
Ամիրզատյան Հ. (Վանի Քոլոզ) 29
Ամիրջանյան Տ. 118, 305, 306, 325, 327—335
Այվազովսկի Գ. 103
Այվազովսկի Հ. 135
Աննա 217
Անագյան Հ. 123
Անանիա Նարեկացի 292
Անանյան Մ. 115, 118, 202, 203, 306
Անձևացյաց մելիքներ 32
Ապողոսյաններ 157
Առաքելյան Հ. 134
Ոռեղյան Մ. 46
Ասլան տիրացու 297
Ասլանյան Գ. 309
Ասլանյան Ն. եպս. 287
Ավդալ (Արդալ) խան 31, 76, 77, 81
Ավդալբեկյան Բ. 241
Ավետիս վանահայր 20
Ավետիս վարժապետ 298
Ավետիսյան (Թերլեմեզյան) Մ. 5, 13, 15, 27, 83, 220, 242, 265—267, 269—271, 273, 275, 276, 306, 310
Ավետիսյան Վ. 5
Ավսամատ Ղադի 168
Արարո 243, 244
Արապեան 109
Արխատաեվ 155
Արծրունի Ե. 30, 68, 123, 124
Արծրունի Ս. 114
Արծրունիներ 29, 321
Արշակ 290
Արսեն Բագրատունի 102, 103

Արտամերտցյան (Դիոնիսիոս) Մ. 114, 117, 305, 309
Արփիարյան Ա. 76
Արփիարյան Գ. 81
Աքիլլես 139

Բագրատունիներ 104
Բագրևանդյանց Ս. 259
Բաղիկ 243
Բաղունի (Կայծակ) Հ. վրդ. 167, 197, 262
Բաղդասար 211, 270
Բաղդոյի Հովհաննես (Օհաննես) 296, 297
Բաղշեցյան (Մանուկյան) Գ. 238, 270, 310
Բայրամ աղա 53
Բարդուղիմիոս առաքյալ 19, 87, 98, 198, 265, 276, 288, 295
Բարսեղյան 10
Բեդիրխան բեկ 31, 76—78, 80, 81
Բել (առասպ.) 22
Բզնունյաց մելիքներ 32
Բժշկյան 117
Բյուզանդյան Մ. 303
Բնդսեն 285
Բրաուն միսիոներ 91

Գաբրիել եպս. 53, 99, 112
Գագիկ Արծրունի 7, 322
Գաղազյան Հ. 187
Գազանճյան Լ. 5
Գաթրչյան Հ. 103
Գալաճյան Գ. 188
Գալամքերյան Գ. 115
Գալուստ 205, 211, 218
Գալփակչյան Տ. 114, 117, 142, 144, 145, 149, 150
Գամառ Քաթիպա 302
Գասպարյան Ս. 332
Գեորգի հոգևոր հայր 92
Գլադստոն 254
Գնունի Ս. 118, 326, 327, 335
Գոլոշյան Վ. (Ալեքսանդր) 234—237
Գորե բռնակալ 244, 245
Գորոդեցկի Ս. 37
Գորչակով իշխան 182
Գրավցի Շաքիր 244
Գրիգոր Արծրունի 200, 299, 311
Գրիգոր Լուսավորիչ 174
Գրիգոր Նարեկացի 40, 41, 282, 292
Գրիգորիս վրդ. 68, 142
Գրիգորիս Աղթամարցի 292
Գրիգորյան Ա. 117, 145
Գրիմ եղբայրներ 115
Գրին 319
Գրուզյան Խ. 46, 285
Գուլակսըզյան (Ակնչատյան) Կ. 234, 236—238
Գուլի խան 169
Գուլյան Ս. (Ստեփան) 244
Գուտենբերգ 112, 143
Գևորգ Արծրունի 30
Գևորգ վրդ. 8, 10

Դանկովյաններ 29
Դանկովյան Օհաննես 29
Դավիթ 243
Դավիթ Անհաղթ 144
Դավրիշ բեյ 53, 168, 169
Դարբինյան Ա. 5, 278
Դերե-Դելենլի Ալի Բաշա ցեղ 190
Դյուլորիե Գ. 7
Դյուֆերին լորդ 215
Դոմինիկյան հայրեր 313
Դուրյան Պ. 128, 266

Եզդանշիր 99
Եզյան Կ. 267, 311
Եղնիկ Կողբացի 144
Եկարյան Ար. 5, 266, 270
Եղիա կթղ. 93
Եղիազար եպս. 168, 198
Եղիշե պատմիչ 22, 144, 311, 326
Ենիշեհիրլիզադե Ահմեդ 187
Եվա (աստվ.) 326
Երամյան Հ. 5, 27, 115, 204, 246, 268, 276, 277, 284, 293, 301, 306, 312, 314—316, 318, 325
Երամյաններ 29

22—467

Երեմիա 296
Երվանդյան Տ. 139

Զարուհի 329
Զեքի փաշա 248
Զրվանդյանց Վ. 294

Էմին փաշա 251, 277
Էնգելս Ֆ. 5

Թադեոս վրդ. 123
Թազագյուլյան Մ. 297
Թամիրյան 29
Թամո ռես 260
Թանկարազյան Հ. 270
Թավաքալյան Ա. (Զեքի) 239
Թեմուր աղա 61
Թեմուրզադե Թևֆիք 309
Թեչո 24
Թերեզա (աստվ.) 326
Թերլեմեզյան Գ. 265
Թերլեմեզյան Կ. 265
Թերլեմեզյան Մ. 265
Թերլեմեզյան Փ. 86, 217, 242, 243, 245, 246, 265, 298, 299, 310, 324, 328
Թյութունճյաններ 270
Թոխմախյան Ա. 15, 19, 21—23, 25, 27, 44, 114, 117, 124, 145, 199, 238—241, 246, 292, 306, 325
Թասունյան Դ. վրդ. 239
Թովմա Արծրունի 292, 321
Թովմա Մեծոփեցի 292
Թորամանյաններ 30
Թոփուզյան Հ. եպս. 144, 170, 294
Թոքմաջյան Ի. 117, 161, 168, 170

Իքադուլլահ շեյխ 87
Իսմիրլյան Մ. 256—259
Ինճիճյան Ղ. 6, 7, 24, 47
Իշխանյան Ա. 202
Իանա եպս. 92
Իասիֆ եպս. 87
Իսահակյան Ավ. 109, 135
Իսու Ֆ. 91

Լազարյաններ 112
Լալայան Ե. 5, 43, 48, 85, 90, 91, 292
Լենին Վ. Ի. 5, 61
Լենկթեմուր 105
Լևո 30
Լինչ Հ. 54, 115, 317
Լիվան փաշա 191
Լևոն 244
Լևոնյան Խ. 294
Լևոնյան Մ. տե՛ս Սարուխանյան Մ.

Խանչյան Ղ. 310, 334
Խաչատուր Խան 191
Խաչատուր Մոկացի 165
Խաչատուր Հոգևոր առաջնորդ 8
Խաչատուր կիլղ. 46, 63, 101, 197, 210, 252, 262
Խապայան Ս. 11, 58
Խարաճյան Դ. 184
Խարաճյան Մ. 184, 187
Խիզանցի Պողոս 211
Խլո ռես 79
Խրիմյան Խ. 5, 115, 306, 309
Խրիմյան Մ. 5, 8, 10, 14, 17, 44, 48, 52, 68, 75, 86, 97, 101—141, 143—145, 149—151, 153, 154, 156, 157, 163, 174, 175, 184, 185, 191, 193, 199, 201—203, 214—221, 241, 242, 246, 257, 258, 267, 287, 292, 293, 303, 307, 310, 311, 334
Խրիմյաններ (Կրմոց) 101
Խուդավերդյան Գ. 46

Ծաղո ռես 23, 24
Ծատուրյան 267

Կալիպ փաշա 270
Կալոյան Հ. 180, 181
Կամսարական Կ. 87, 88, 200, 201, 205, 214, 217, 307, 311
Կայեն (աստվ.) 326
Կանայան Ստ. 24
Կաթողիկոս Մոկացի 293
Կարապետ Եավաշարդ 315
Կարապետ (մշեցի) 297

Կեսներ Ս. 326
Կեցանցի Խորեն 211
Կըրճիկյան Հ. 294
Կոմիտաս 316
Կոստանդյան Լ. 5
Կոստանյանց 311
Կորյուն 144
Կռի Մահմեդ 286
Կուրղինյան Շ. 277

Հազկերտ 326
Հալիմ 268, 274, 275
Հակոբ եպս. 168
Հակոբ (Երրորդ) կիլ. 92—95
Հակոբ Արծկեցի 292
Հակոբոս պատրիարք 96, 112
Հակոբյաններ 90
Հաճի Թեմուր 277
Համբարյան Ա. 5, 12
Համզո ավազակ 198
Հայկ (առասպ.) 22
Հայկունի Ա. 157
Հայրապետ աղա 296
Հասան փաշա 189, 190, 193, 196, 197, 254, 304, 311, 333
Հասունյան Ա. 172
Հարո 24, 243
Հարություն պատրիարք 175
Հարություն եպս. 170
Հերվարդ Հյուպատոս 260
Հյուրմյուզյաններ 103
Հովհաննես տիրացու 297
Հովհաննես (Կայծակ) վրդ. 87
Հովհաննես քահանա 93
Հովհաննես Շատախեցի 165
Հովհաննիսյան Աշ. 5
Հովհաննիսյան Ռ. 5
Հովսեփ վրդ. 17, 165, 167, 175
Հուսեյին փաշա 251
Հուսեյին բեկ 253

Ղազար Փարպեցի 311
Ղազար (Նավասարդ) դրիչ 322
Ղազարյան Հ. 5
Ղարաջյան Գ. (Արկոմեդ) 214, 230
Ղարասեֆերյաններ 29, 30
Ղարասեֆերյան Գ. 293
Ղարասեֆերյան Հ. 29, 293
Ղևոնդ երեց 144

Ճանիկյան Մ. 306
Ճեմիլ պեյ 190
Ճըկուր վարժապետ 297
Ճստոյան Ա. 285

Մադաթյանց Ն. 201, 309
Մադաթյան Պ. 144, 145
Մադոյան Ա. (Սեբլեան) 29
Մալխաս (Հովսեփյան Ա.) 5, 15, 16, 27, 32
Մալումյան Խ. 115
Մախմուդով Ն. 99
Մահմեդ Ալի 178
Մահմեդ գնդապետ 188
Մահմեդ 254
Մահմեդ փաշա 295
Մահմեդ Սաղըխ շեյխ 47
Մահմուդ խան 31, 76—79, 168
Մահմուդ 165
Մահմուդ սուլթան 187
Մամրրե վերծանող 144
Մամիկոնյան Ս. 145
Մամիկոնյաններ 29, 79
Մամուրյան Մ. 10, 58, 128, 157
Մանօղլի Ստ. (Աստղ) տե՛ս Մանոյան Ստ.
Մանոյան (Մանօղլյան) Ստ. 79, 82
Մանվել ճարտ. 323
Մանուկ (Արծափի) 32
Մանուկյան Ա. 5
Մատթեոս պատրիարք 78, 81, 82, 295
Մարգար վարժապետ 244
Մարգարյան Ա. վրդ. 279, 281
Մարթա 89
Մարշիմոն 80, 86—92
Մարտիկ տե՛ս Սարուխանյան Մ.
Մարտիրոս 46
Մարտիրոս վարժապետ տե՛ս Փափազյան Մեսրոպ
Մարտիրոս Վանեցի 144

Մարտիրոսյանց Տ. Հարություն-Դանիել-յանց 120
Մարքս Կ. 5, 56
Մաքսուդյան Սեպուհ 184
Մաքսուդյան Սիմոն 158
Մաքսուտ աղա 254
Մաևսկի Վլ. 12—14, 91, 261, 268—270, 275, 278, 283, 291
Մելիք Գասպար 179
Մելիք Դադայան Հ. 239, 240
Մելիք Հովհաննես 179
Մելիք Մարտիրոս 179
Մելիքյան Պ. 65, 115, 119, 134, 157—164, 172, 174, 211, 212, 221, 246, 252, 256, 294, 334
Մելիքսեթ 296
Մելքոն 187, 291
Մեջիդ սուլթան 88
Մեսրոպ Մաշտոց 140, 144
Միլլեր 307
Մինա էֆենդի 187
Մինաս (Առբերումյաց) 32
Մինաս վրդ. 294
Միրախորյան Մ. 39, 306
Միրզա աղա 85
Միրզաբեկ 85
Մխիթարյան Հ. 139
Մխիթարյաններ 103, 112, 326
Մխիթարյան հայրեր 314
Մխո Շահեն 243
Մկրյան Հ. 203
Մկրտիչ վրդ. տե՛ս Խրիմյան Մ.
Մկրտիչ (Մարտիկ) տե՛ս Ավետիսյան Մ.
Մկրտիչ (Թանգարանճի) 296
Մհեր (Շատախի) 79
Մյունիֆ փաշա 159
Մոկացյան Մ. 124
Մոհթուլա բեկ 277, 278
Մովսես Խորենացի 124, 143, 144
Մուխթար փաշա 213
Մուհամեդ 80
Մուղդուսի Սախո 244
Մուշեղ (Մուռ) 79
Մուշկան Նիսալավուրտ 326
Մուսաբեկ 24, 277
Մուստաֆա բեկ 77, 82, 263, 286, 308
Մուրադ V 183
Մուրատյանց Գ. 119

Յաժբույան 184
Յուսուֆ 172

Նազարբեկյան Ա. (Նազարբեկ) 230, 231
Նազըմ փաշա 262, 263
Նազլուխան խաչատուր 167
Նաթանյան Մարկոս 68, 220, 269, 306, 307, 329
Նաթանյան Միքայել 212
Նաթանյան Պ. 306
Նալբանդյան Մ. 157, 162, 163, 299, 302
Նար-Պեյ Խորեն 213
Ներսես Աշտարակեցի 8, 10, 80, 86, 92—95, 164, 166
Ներսես Մոկացի 292
Ներսես Պարթև 39
Ներսիսյան Մ. 5, 178
Նշան առաքյալ 92—95

Շահեն 172
Շահպազյան Հ. 28, 29, 31
Շաղոյան Ավ. 306
Շաշո ռես 243, 260
Շատվորյաններ 255
Շատվորյան Մ. 255
Շատվորյան Ռ. 212
Շարան պեյ 188, 189
Շարանյան Շ. 294—296
Շարաֆ բեկ 253, 276
Շաքարյան Դ. 306
Շաքիր ավազակապետ 245, 254, 262, 278
Շեյխ ուլ Իսլամ 73, 219
Շերենց Գ. 5, 132, 292, 306, 325
Շերիֆ բեկ 288
Շերո 242, 243, 245
Շիշմանյան Հ. (Ծերենց) 200
Շիտանյան Մ. 239
Շիրինյան Կ. 285
Շիրինյան Հ. 184
Շիրոյան Ա. 189

Շիրոյան Գ. 166
Շիրոյան Հ. 167—177
Շիրվանյան Մ. 309
Շիրվանյան Ն. 180, 181
Շոաստ Ատոմ (Մոկաց) 79
Շվոտ Մ. (Արամյանց) 71
Շքոտրալի Հասան փաշա Ալբանացի տե՛ս Հասան փաշա

Ոզմանցի 79

Զազրյան Հ. 289
Զաքո 242, 245
Զալխուշյան Գր. 109, 318
Զալկատրյան Հ. 79, 82
Զաման խան 253
Զամուռճյան (Տերոյենց) Հովհ. 157, 162, 163
Զեռնիշևսկի Գ. 240
Զերբեղ էմին 268
Զերբեղ Մահմուդ 168
Զիլինգարյան Կ. 269
Զիլինկիրյան Գ. 117, 157
Զիլաշև Պ. Ա. 72
Զոպանյան Ա. 75, 76
Զուխաջյան Մ. կթղ. 119

Պալասանյան Ստ. 115
Պալեարյան Հ. 184, 186
Պալյան Կ. 108
Պալյան Ն. 108
Պալյաններ 108
Պահրի 255, 256
Պապ (Հռոմի) 89, 173
Պասկևիչ 85
Պատխոյան Ավ. 238
Պարոնենց (Պոլսեն) տոհմ 80
Պարսամյան Վ. 5, 50
Պելլերյան Տ. 204, 205
Պետո տե՛ս Պետրոսյան Ալ.
Պետոյան Ա. տե՛ս Պետրոսյան Ալ.
Պետրոս վրդ. 261
Պետրոս (Ալաշկերտի) 32
Պյուլպյուլյան Պ. 166—175
Պյուլպյուլ կթղ. տե՛ս Պյուլպյուլյան Պ.

Պետրոս 243
Պետրոս Արտամերտցի 293
Պետրոսյան Ալ. (Սանդալ) 239
Պետրոսյան Ալ. (Արճակեցի, Կարիպ) 264, 270, 276
Պետրոսյան Պողոս 138
Պերպերյան Ա. 78, 82
Պիսյանց Բ. 325
Պզտիկյան 184
Պլուզյան Մ. 306
Պոզիկյան Գր. 212
Պողոս դրաշար 116
Պողոս վրդ. տե՛ս Մելիքյան Պ.
Պողոսյաններ 134, 157
Պոչովյաններ 30, 31
Պոյան Կարապետ 30

Ջալալեդդին շեյխ 19, 20, 52, 192—194, 198, 277
Ջալալյան Ս. Հասան 119
Ջնդի 254
Ջրբաշյան Մ. 230

Ռաշիդ փաշա 70
Ռեյնոլտս Հյուպատոս 37, 269, 273, 279, 280, 283—285, 318, 319
Ռշտունյաց մելիքներ 32
Ռուբեն 184
Ռուբինյան Մ. 114, 117
Ռուսինյան Ն. 107

Սաահեդդին փաշա 261—263, 268, 269, 271, 273—275
Սահակ Պարթև 140, 144
Սահակ Պետենց 270
Սամի փաշա 191
Սայաթ-Նովա 302
Սանասարյան Մ. 201, 303, 314
Սանդենց Հովհաննես տե՛ս Սրվանձտյանց Գ.
Սանոյան 272
Սանասուն բեկ 254
Սապոնճեանց Ս. 296
Սարգիս 124
Սարգիս եպս. 168

Սարգիս Գնունի (Բարսեղյան-Տոսպեցի) 325
Սարգսյան Ե. 5
Սարբյան Մ. 220, 307
Սարուխանյան Մ. (Մարտիկ) 264, 265, 270, 276, 277
Սելիմ փաշա 78, 178
Սեյիդ փաշա 232
Սեֆիլյան Մ. 211
Սոլսբերի 188
Սողոմոնյան 221
Սպարթելյան Հ. 184
Սվաճյան Հ. 10, 115, 116, 121, 157, 160, 161
Ստեփան եպս. 173
Ստեփանյան Ա. 26
Ստեփանոս Սյունեցի 144
Սրվանձտյանց Գ. 5, 11, 27, 47, 110, 114, 117, 121, 122, 124, 126, 127, 131, 139, 141, 142, 144—147, 149, 152, 180, 217, 218, 241, 292, 303, 305, 306, 323
Սուլիգես 186
Սունդուկյան Գ. 135
Սևիկյան Հ. 114, 117, 124

Վալի փաշա 244
Վասակ 326, 329
Վասիլաքի 186
Վարդան 290
Վարդան Մամիկոնյան 308, 326, 329
Վարդանյան Մ. 200
Վարժապետյան Մ. 200
Վարժապետյան Ն. 14, 134, 193, 200, 221, 311
Վիշենյան (Սերվիչե) 107
Վորոնցով Մ. փոխարքա 95

Տատյան Ա. 158
Տատյան Հ. 108
Տեր-Բարսեղենց ցեղ 30
Տեր-Հակոբյան Ա. 15
Տեր-Հովսեփյան Ն. 124
Տեր-Մեսրոպյան 117
Տեր-Մինասյան Ռ. 289
Տեր-Պողոսյան Ա. 27
Տեր-Պողոսյան Մ. 97
Տեր-Սարգսյան Հ. 114
Տիգրան 313
Տիգրանյան Լ. 311
Տրդատ ճարտ. 104
Տրդատյան Վ. 221
Տրետեր դեներալ 87
Տուրյան Կ. 109
Տևկանց Ա. (Տեր-Սարգսյանց Ա.) 5, 46, 159, 279, 292, 306
Տևկանց Ե. 5, 15, 16, 25, 40, 41, 42, 47, 52, 61, 96, 97, 166, 168, 174, 175, 182, 189, 193—195, 205 292, 296, 304, 306
Տևկանց Ս. 5, 43, 292, 306, 307
Տևկանց (Տեր-Սարգսենց-Սարգսյանց) Եղբայրներ 242, 292, 297

Ռաֆֆի 15, 27, 44, 86, 89, 109, 113, 133, 143, 157, 163, 193, 299, 302

Ուլիան Հյուպատոս 272, 275

Փադիշահ 84
Փախչանյան Խ. 316
Փանոյի Հովհաննես 245
Փանոս ուստա 203
Փարամազ (Սարգսյան-Փարամազյան) Մ. 289, 290, 291
Փափազյան Գ. 117
Փափազյան Մանվել 117
Փափազյան Մարտիրոս 114, 117
Փափազյան Մեսրոպ (Մեսրոպը) 124, 146, 151, 305, 306, 325, 335
Փափազյան Ստ. 115
Փափազյան Վ. 5, 197, 242, 333
Փեհրիզյան Ս. 315
Փեչով Մկո տե՛ս Խրիմյան Մ.
Փեշտիմալճյան վրդ. 294
Փիլիպոս վրդ. 98, 295
Փիլիպոսյան Կ. 239, 309
Փիրղալեմյան Ղ. 5, 10, 39, 145, 292, 306

Փիրղալեմյան Ն. 114
Փիրումյան Տ. 239, 240
Փոխտնյան Ա. 114
Փոխիկ 243
Փորթուգալյան Մ. 204, 205, 214, 217, 221, 224, 227—232, 234—236, 238, 265, 298, 304, 306, 307, 309—311

Քանբանյան Հովհ. 212
Քնգնամ փաշա 99
Քելեշ աղա 168
Քինն Ջ. Մ. 28
Քիննէյ Վ. 12, 14
Քիրաճի Մեսրովբ 244
Քյամիլ կառավարիչ 78
Քոլոզ (Հովհաննես-Պղալ-Ամիրզատյան) 77, 97, 118, 119, 134, 176, 293—295, 298, 299
Քոլոզ, քեռի Քոլոզի 293
Քուշակ 292
Քուրդ Հուսեյին աղա 195

Օսման փաշա 81, 82, 168
Օտյան Գ. 107, 130, 212
Օրբելի Հ. 278
Օրմանյան Մ. 211, 257

Ֆերճուլյան Մ. 329

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ, ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Աբաղայի դաշտ 20, 32, 49, 250, 253, 276, 286
Աբրահամենց թաղ 26
Ագուլիս 124
Ադանա 184
Ադիլչևազ (Արծկե, Ալչավազ) գավառ 6, 7, 12, 21, 22, 47, 250
Ադրիանապոլիս 42, 184
Ալաշկերտ գավառ 20, 32, 48, 236
Ալբանիա 190
Ալեքսանդրապոլ 41, 102, 116, 139
Ալյուր գյուղ 18, 35, 41—43, 217, 239, 304, 306
Ալչավազ տե՛ս Ադիլչևազ
Ախվանք 42, 177
Ախտա 119
Ախուրյան գետ 139
Ականց (Արճիշահովիտ) գյուղաքաղաք 9, 21, 35, 51, 53, 319
Ախրակ (Ալպաք, Հնքիպրի) գավառ 6, 19, 20, 67, 192, 195, 199, 275, 277, 289, 295
Աղթամար կղզի 9, 23, 31, 40—42, 53, 63, 67, 103, 104, 106, 107, 112, 164—177, 197, 210, 278, 305, 321, 322
Աղթամար վանք 46, 52
Աղխովիտ գավառ 9
Աղսրավ գյուղ 281
Աճրա գյուղ 251, 252
Ամարա վանք 139
Ամենաշատ գյուղ 43
Ամերիկա 33, 135, 181, 226, 230, 265, 269, 273, 280, 284, 313, 318—320
Ամիրբեկենց բերդ 26
Ամկու բերդ 35
Այգեստան (Էգեստար) թաղամաս 7, 18, 35, 38, 68, 101, 104, 260, 271, 275, 293, 303, 315, 316, 319
Այտըն 184
Աննավանք 42, 43
Անգլիա 319
Անգղ գյուղ 17, 52, 180
Անգղագետ (Խոշապ) 6, 7, 17, 22, 199
Անդրկովկաս 91, 92, 117, 119, 240
Անի 102, 104, 140
Անձուխանց թաղ 26
Անձևացյաց գավառ տե՛ս Նորդուզ
Աշան-Գոլա գետակ 20
Աշտարակ 102
Ապառանջաներ աղբյուր 113
Ապարան 53
Առաքելոց վանք (Մուշում) 236, 244
Առեղ (Առեն) գյուղ 25, 50, 250, 254
Առնոս լեռ 24, 26
Առտեր կղզի 41

Աստղիան բերդ 113
Աստվածածին գյուղ 43
Ավանց գյուղ 38, 39, 42, 104, 141
Ավարայրի դաշտ 104, 329
Ավետնոց դաշտ 37
Ավոյի դար 18, 37
Ատիս գյուղ 43
Ատրպատական 267, 289
Արաբկիր 28
Արախ գետ 36
Արամյան վարժարան 327
Արարատ լեռ 114, 214
Արարատ նահանգ 147
Արարատյան աշխարհ 102
Արարատյան դաշտ 102, 103, 146, 285
Արարուց հրապարակ 37
Արարք եկեղեցի 77, 293
Արգինոց գյուղ 261
Արծափ 32
Արծկե տե՛ս Ադիլջևազ
Արծկե քաղաք 22
Արծվագիր վանք 52
Արծրունիների թագ. 11
Արծրունյաց նախարարություն 6
Արճակ գավառ 19, 67
Արճակ գյուղ 19, 253, 282
Արճակ լիճ 17, 19
Արճեշ (Էրճիշ) գավառ 6, 7, 12, 21, 23, 29, 47, 52, 188, 198, 250, 259, 260, 277, 281, 284
Արճեշ գետ 40
Արճեշ նավահանգիստ 39
Արմենիա տե՛ս Հայաստան
Արմշատ գյուղ 25
Արտամետ գյուղ 17, 36, 41, 77, 104, 303
Արտամետի փողոց 193
Արտաշատ 104, 321
Արտաշեսյան դինաստիա 321
Արտեր կղզի 22
Արտոս լեռ 9, 18, 24
Արևելյան Հայաստան 102, 103, 116, 117, 139, 282
Արևելյան Տիգրիս 24
Արևմտյան Հայաստան 7, 24, 28, 33, 48, 53, 61, 71, 111, 112, 118, 124, 130, 141, 143, 148, 152, 156, 165, 176—178, 182, 200, 205, 212—214, 224, 229, 235, 236, 240, 241, 245, 248, 253, 259, 261, 282, 290, 330, 332
Աֆրիկա (Աֆրիկա) 148

Բաբերդ 260
Բագրևանդ գավառ 78
Բազ աշիրեթ 85
Բաթման 102
Բալկաններ 317
Բալու (Բելու) 66, 81
Բայազետ 7, 28, 178, 211
Բայազետի սանջակ 16
Բաղդադ 99, 335
Բաղեշ տե՛ս Բիթլիս գավառ
Բաղիշու Շատախ գավառ 24
Բաշկալե ավան 17, 19
Բաշկալե գյուղ 82, 199
Բաշկալե դաշտ 32
Բաշկալե վանք 19
Բառա գյուղ 26
Բարադոտիկ լեռնակատար 24
Բաբեր Հայք 49, 50, 52, 64, 147
Բաքու 282
Բեռլին 14, 57, 205, 213, 221
Բերա թաղ 131
Բերդակ գյուղ 41
Բերթ գյուղ 43
Բերկրի (Պարկիրի Առբերանի) 6, 7, 9, 12, 20
Բերկրի ավան 20, 21
Բերկրու գետ (Առևստ, Բանդի մահի) 17, 20
Բերկրի դաշտ 32
Բզնունյաց գավառ 9, 52, 194
Բիթլիս գավառ 7, 15, 17, 23, 28, 32, 39, 40, 55, 64, 76, 81, 99, 148, 178, 190, 235, 236, 283, 306
Բիթլիսի վիլայեթ 27, 28
Բիկանց գյուղ 261
Բլուրմակ գյուղ 21
Բողաղ Քյասան 260
Բողանիս գյուղ 167, 176
Բոյենց թաղ 36

Ռոսֆոր 112, 130, 132
Ռքիտանիա 259
Ռրյուսել 316
Ռրչն Ռալաք բերդ 76
Ռուժոնիք գավառ 6
Ռուլանըխ գավառ 15, 236
Ռուլղարիա 202, 226, 230
Ռուխարենտ 177

Գաբոյենց Ռաղ 36
Գալիլեյա կատար 113
Գաղիա 259
Գանձակ 122, 281
Գանձասար վանք 139, 148
Գավաշ (Ռշտունիք) գավառ 6, 9, 12, 13, 22—24, 42, 76, 167, 168, 175, 178, 194, 279, 282, 314, 322
Գարահիսար 276, 334
Գելիեգուզան 289
Գերմանիա 259, 285, 319
Գյալի լեռնահովիտ 113
Գյավառ կապ 12
Գյավար գաշտ 32
Գյոզալդարա կիրճ 276, 334
Գյումրի բերդ 26
Գյումուշ-Մատեն 81
Գողթն գավառ 11
Գոմս գյուղ 43
Գործոթ գյուղ 20, 194, 304
Գրգուր լեռ 17, 18
Գրիգորի վանք 235
Գոմ Գաբու 108

Դալի-չայ 21
Դամասկոս 212
Դանեմարքա 319
Դանուբ 317
Դաշտի Ռաղ 26
Դավարոյին հրվանդան 23
Դատվան նավահանգիստ 39
Դարման գյուղ 250
Դեզ աշիրեթ 85
Դելոզ գյուղ 261
Դիտրբեքիր 3, 20, 25, 65, 76, 92, 184
Դիլիջան 119
Դռլաշեն գյուղ 43

Եգիպտոս 230, 259, 315
Ելոբզ Քյոշկ (Քեոշկ) 248, 259, 275
Եկմալ գյուղ 43
Եղանաձոր վտակ 24
Եղեգիս գյուղ 23, 66
Եվրոպա 101, 107, 111, 131, 181, 188, 254, 280, 314, 317
Եստիքիլիսե (յոթ եկեղեցի) տե՛ս Ներքին Վարագ
Երզնկա 28
Երկաթներ լեռնագագաթ 19
Երնմի գյուղ 50
Երուսաղեմ 57, 58, 105, 121, 170, 220, 293, 294
Երևան 41, 43, 119, 123, 124, 146, 180, 182, 195, 202, 294, 311, 314, 317
Եփրատ 129

Զեյթուն 124, 203, 204, 299, 327
Զըրըխան գավառ 7
Զիլանձոր 21
Զիրաքլի գյուղ 251
Զմյուռնիա 117

Էնկուր վայր 187
Էջմիածին 30, 45, 46, 93—96, 102, 104, 119, 122, 123, 127, 145, 146, 148, 167, 170, 174, 182, 237—240, 257, 260, 285, 294, 314, 322
Էրևրի գյուղ 35, 43, 250, 325
Էրզինջանի սանջակ 16
Էրզրում 8, 28, 34, 78, 205, 214, 220, 307
Էրզրումի էյալեթ 28
Էրզրումի նահանգ 16, 174
Էրզրումի վիլայեթ 28
Էրզրումի սանջակ 16
Էրզրումի փաշայություն 7
Էրմանիստան տե՛ս Էրզրումի էյալեթ

Ընձաքար (կապուտկող) լեռ 18, 194

Թաիր աշիրեթ 80, 85
Թալամազ գյուղ 265
Թաղ գյուղ 25, 44, 45, 80, 244, 278, 279

Թանդուրեք լեռնաշղթա 17, 20, 36
Թավրիզ 92, 124, 266
Թավրիզի դուռ 37
Թարգմանչաց վանք 105
Թիմար գյուղ 12
Թիմար (Տոսպ) գավառ 18, 19, 34, 47, 199, 281
Թիֆլիս 30, 42, 45, 94, 95, 102, 103, 112, 116, 119—122, 140, 147, 149, 180, 182, 183, 192, 235, 240, 242, 282, 294, 303, 306, 307, 314—316, 331
Թլորանց գյուղ 45
Թխում աշիրեթ 80, 85
Թորոման թաղ 268
Թուրքահայաստան 223, 225
Թուրքիա 5, 8, 13, 28, 29, 44, 56—61, 63—67, 73, 82, 87, 90, 99, 104, 118, 130, 142, 146, 160, 165, 176, 178, 183, 188, 205, 207, 213, 214, 217, 223, 224, 227, 228, 230, 233, 236, 238, 240, 257—259, 261, 265, 282, 284, 290, 303, 308, 309, 313

Ժնև 230

Իդիր 325
Իշմիր 187
Իլու վանք 282
Իմերեթիա 119
Իրիշատ գյուղ 21
Իրիշատ գետակ 21

Լամզկերտ գյուղ 35
Լեզք գյուղ 35, 41
Լեհաստան 147
Լիմ անապատ 10, 40, 43, 61, 67, 99, 102, 144, 158, 189, 281, 294
Լիմ կղզի 41
Լոնդոն 37, 215, 237, 267

Խանասորի դաշտ 243, 276, 288, 289
Խազան գյուղ 20, 286
Խաչ Փողան փողոց 38
Խառակոնիս գյուղ 19, 253, 304
Խառակոնիս գետակ 19
Խաս գյուղ 102
Խավենց գյուղ 43
Խարապաշհիր (Խլաթ) գավառ 7, 9
Խարբերդ 8, 65, 81, 190, 306
Խարկևն գյուղ 21
Խեբբեղ գյուղ 180
Խիզան (Հիզան) գավառ 7, 9, 19, 20, 23, 24, 27, 42, 52, 53, 260, 279, 334
Խժլևկ գյուղ 43
Խնոյի գետակ 19
Խնուս գավառ 15
Խոյ 8
Խորգոմ գյուղ 22
Խորվիրապ 104, 140
Խրոտենց գյուղ 261
Խումար գյուղ 80, 243

Ծաղկանց (Ալադաղ) լեռներ 17, 21
Ծաղկոցաց ձոր 139
Ծառնոց գյուղ 45
Ծիծանց գյուղ 245
Խրոտենց գյուղ 261
Ծվատան գյուղ 41

Կազպի գյուղ 25, 51
Կազպի վտակ 24
Կաղազիս գյուղ 25
Կաճնտ գյուղ 25, 51, 242
Կայնեմիրան գյուղ 25
Կապան-Մատեն 81, 82
Կառկառ (Գարգար) գավառ 6, 9, 17, 27, 42
Կարաբուլաղ լիճ 24
Կարին 40, 65, 81, 142, 148, 149, 158, 170, 181, 184, 186, 188, 191, 196, 211, 220
Կարճկան (Կորդիք, Կորդուք) գավառ 9, 12, 23, 24, 27, 36, 42, 47, 63, 66, 89, 194, 261, 277, 279, 284
Կարճկան գյուղ 23
Կարմրակ վանք 42
Կարմրավոր եկեղեցի 283, 315
Կարս (Քարս) 7, 28, 78
Կարսի սանջակ 16
Կեմ գյուղ 53, 304

Կենտրանց գյուղ 23
Կեղլու գյուղ 43
Կեսարիա 82, 106
Կես-կես-գալեսի տե՛ս Կառկառ
Կեցան գավառ 10
Կըզըլջա գյուղ 19
Կիլիկիա 90, 105, 106, 121, 124, 148, 294, 327
Կլոր դար թաղ 18, 268, 270
Կոթուր գյուղ 253
Կոպալ (Մահակ) գետ 32
Կոռովանք 25
Կոստանդնուպոլիս 11, 16, 17, 20, 30, 31, 42, 46, 54, 55, 57, 58, 64, 68, 79—81, 83, 93—95, 99, 101—103, 106—109, 111, 112, 114, 116, 117, 121, 125, 127, 128, 131—133, 137, 138, 147, 150, 152, 157, 158, 160, 162—165, 170—173, 175, 178, 181—184, 186, 189, 195, 198, 201, 203, 211, 212, 215, 216, 218—221, 232, 233, 235, 237, 238, 248, 255, 256, 261—263, 265, 293, 294, 296, 301, 303, 306, 308, 310, 311, 314, 324, 325, 327, 328
Կովկաս 25, 33, 40, 41, 114, 136, 145, 147, 180—182, 205, 211, 226, 236, 241, 268, 291
Կտուց անապատ 40, 43, 52, 61, 67, 102, 158, 159, 281
Կտուց կղզի 41, 42, 251
Կրետե կղզի 81
Կուռաբաշ գյուղ 35, 41, 252
Կուռաբաշ գետակ 38
Կուսենց գյուղ 304

Հադամակերտ տե՛ս Հնբիարի-Պաշկալե
Հազարա վայր 36
Հալեպ 184, 187, 259
Հախտ գյուղ 261
Հաղպատ 148
Համիդյե կազա 12
Հայաստան 5, 6, 22, 24, 28, 30, 54, 89, 103—105, 108—112, 115, 116, 120, 121, 126, 128, 129, 131, 136—140, 143, 146—151, 153, 154, 156, 186, 190, 213, 214, 216, 221—225, 228, 229, 232, 258, 267, 284, 290, 292, 308, 310, 312, 313, 316, 318, 321, 330, 332, 334
Հայկական լեռնաշխարհ 323
Հայկական Վենետիկ (Վարագ) 118
Հայկավանք թաղ 36, 268, 270, 296
Հայնկոյսներ թաղամաս 36, 101, 108, 274
Հայնկոյսներ դետակ 38
Հայոց ձոր գավառ 9, 12, 22, 32, 42, 47, 50, 53, 174, 194, 199, 261, 281, 314
Հառեղ գյուղ 180
Հառնանց գյուղ 26
Հարավային Հայաստանի նահանգ տե՛ս Վանի նահանգ
Հարութիւն գյուղ 51
Հաֆիվան գյուղ 235—237, 266
Հնբիարի սանջակ 11, 12, 15, 47, 90
Հնբիար քաղաք 28
Հնբիար կազա 12
Հնբիարի-Պաշկալե 6
Հընճ-Պանավա գյուղ 289
Հինգի գյուղ 51
Հիննենց գյուղ 51
Հյուսիսային Կովկաս 282
Հյուսիսային Հայաստանի նահանգ տե՛ս Էրզրումի նահանգ
Հյուսքուտար (Իսքյուբար) 111, 131
Հնդկաստան 33, 147, 259
Հնդստան գյուղ 50, 180, 275
Հովհաննես Մկրտչի վանք 93
Հորոտենց գյուղ 180
Հոխիսխանի տաճար 104
Հռոմ 89, 173
Հրազդան գետ 146
Հրեաստան 313
Հունգարիա 313

Ձախող գյուղ 261
Ձմեն լիս 24
Ձորավանց 36

Ղազախ 122
Ղարաթաղ 122, 139
Ղարաքիլիսա 119
Ղզլար 201

Ճանիկ գյուղ 36
Ճավշին թաղ 36
Ճերնավիք վայր 36
Ճիղիե 81
Ճոշ Քևնդրլի ջուր 37
Ճուլամերկ գավառ տե՛ս Ջուլամերկ

Մալավու գետակ 19
Մակվի խանություն 240
Մահմուդյե (Խոշապ) գավառ 7, 12, 22, 84, 199
Մամիեր գյուղ 18, 34, 42, 43
Մամիեր գետ տե՛ս Սև, Բուխ գետ
Մամռոտանք գավառ 9, 10
Մամուրիեդ կազա 12
Մայրավանք 106
Մանազկերտ գավառ 15
Մանչեստր 201
Մասիս լեռ 104, 222
Մարաստան 82
Մար-Իշո վանք 89
Մարսել 201, 221, 224, 227, 230, 265, 311
Մեյդան 119
Մերկարիպ գյուղ 43
Մերձավոր Արևելք 53
Մեքքա 198
Միջին դուռ 37
Միջկանց գյուղ 261
Միջնագյուղ 325
Միջնաբերդ թաղ 36
Միրվանե վայր 36
Մխկրներ գյուղ 19, 62
Մշո (Մշու) դաշտ 18, 48
Մոխրաբերդ 42
Մոխրաբերդ գետակ 22
Մոկաց գավառ 20, 26, 194, 243, 279
Մոկաց գետ 26
Մոկս գավառ 6, 9, 12, 19, 25—27, 30, 36, 42, 47, 76, 77, 79, 81, 199, 265, 277, 278
Մոկսի գետակ 17
Մոկս գյուղաքաղաք 26
Մոկսի լեռներ 242
Մոկք (Մոքուս) գավառ տե՛ս Մոկս
Մոնպելյե 230
Մոսկվա (Մոսկոֆ) 5, 95, 188, 205, 235, 278, 311
Մոսուլ 50, 76, 80, 85
Մուլք-Գիճի գյուղ 261
Մուշ գավառ 7, 17, 28, 29, 32, 40, 46, 50, 64, 76, 79, 127, 148, 178, 182, 190, 235, 236, 243, 244, 294, 306, 318
Մուշի սանջակ 15, 16

Յաոջնու գյուղ 26

Նազարավա գետակ 20
Նազարավան գյուղ 286
Նազիկ (Փրխուս) լիճ 17
Նախիջևան 11, 123
Նավահանգիստ դուռ 37
Նարևկ գետ 17
Նարևկ գյուղ 23, 261
Նարեկա վանք 22, 42, 117, 165, 171, 175, 282, 283
Նեճիրա գյուղ 194
Նեմրութ լեռ 18
Ներքին Խոշապ 281
Ներքին Վարագ 6, 113
Նյու Յորք 91, 265
Նոր դուռ 37
Նորաշեն եկեղեցի 293
Նորավանց գյուղ 43
Նորգյուղ 23, 42, 275
Նորդուզ (Անձևացյաց) գավառ 14, 25, 42, 44, 179, 199, 277, 279, 284, 286
Նորշեն գյուղ 43, 250
Նորշեններ թաղ 36
Նուխի 205, 221

Շադոսեն գյուղ 261
Շահգելդի գյուղ 43, 50
Շահպազի (Շահրազի) գյուղ 35, 41, 197, 303

Շահունի Ծովք-Շատախ գավառակ 24
Շամախի 116
Շամդինան գյուղ 12, 47, 87
Շամիրամ գետ 17
Շամիրամ Քաղ 35
Շամիրամի ջրանցք 22, 38, 41, 111
Շամպանիե Քաղ 36
Շան փողոց 274
Շանոյի դար 18, 268
Շապին Գարահիսար 165
Շատախ (Բասենդաշտ) գավառ 9, 12, 14, 24—26, 30, 33, 36, 42, 44, 45, 50, 51, 79, 80, 179, 199, 235, 242—244, 254, 278, 279, 284
Շեխադի վայր 85
Շեմդինան կազա 12
Շեմշիկ աշիրեթ 254
Շերոյի այր 243
Շիրակ 102
Շիրվան 36
Շիցան գյուղ 25
Շվեդիա 319
Շվեյցարիա 115, 319
Շուշանց գյուղ 35, 62, 113
Շուշի 139, 264

Ոզմ գյուղ 26, 27
Ոչխանանց գյուղ 50
Ոսկեփակ (Ոսկեպակ) գյուղ 68, 250
Ոստան գավառ տե՛ս Գավաշ
Ոստան գետակ 22

Ջարդար (Ջարհար) 22, 52, 282
Ջըլդր 7, 28
Ջըլդրի սանջակ 16
Ջինաստան 33
Ջմշկածագ 306
Ջուխ 275, 276
Ջուխի լճակաշղթա 22
Ջուխկեսիկ կիրճ 234

Պախվանց գյուղ 99
Պայազիտ տե՛ս Բայազետ
Պաշգալե ավան 275
Պատահանց գյուղ 261
Պատնոս շրջան 250
Պարսկաստան 11, 19, 20, 30, 33, 35, 39, 40, 44, 47, 92, 104, 114, 212, 214, 226—228, 234, 235, 237, 240, 253, 259, 265, 267—269, 274—276, 280, 282, 285, 288, 289
Պեշիկթաշի գերեզմանոց 219
Պեշպողան Քաղ 36
Պետերբուրգ 80, 93, 264, 267
Պզտիկ գյուղ 195
Պկուց վանք 52
Պողպատի դար Քաղ 18, 274
Պրուսա 184

Ջանիկ գյուղ 43
Ջելու աշիրեթ 85, 86
Ջեզիրե (Ջեզիե) Բոհտան 50, 76
Ջերմաձոր տե՛ս Շատախ
Ջիլոստան (Ասիայի Ջերնոգորիա) տե՛ս Ջուլամերկ
Ջիրաշեն գյուղ 34, 43
Ջլջու լեռնագագաթ 19
Ջուլամերկ 7, 12, 24, 80, 86, 88—92
Ջուղա 235

Ռշտունյաց գավառ 9, 32, 77, 167, 174, 199, 243
Ռշտունյաց նախարարություն 22
Ռշտունյաց լեռներ 104
Ռոդոս կղզի 81
Ռոտոսթո 42
Ռումինիա 230
Ռուսաստան 33, 44, 76, 78, 85, 88, 90, 92, 116, 122, 136, 146, 156, 167, 177, 181, 187, 192, 198, 213, 214, 217, 227, 228, 241, 249, 257, 278, 301, 310
Ռուսիա տե՛ս Ռուսաստան

Սագ գյուղ 51
Սաթմանս գյուղ 178
Սալախա գյուղ 262
Սալմաստ 8, 124, 234, 235, 237, 266, 267, 288, 289
Սալնապատ եկեղեցի 283
Սանահին 148
Սան-Ստեֆանո 57, 205, 221

Սասնո Շատախ գավառ 24
Ս. Աստվածածնա վանք (Անդղում) 52
Սասուն 50, 79, 90, 236, 257, 267, 274, 289, 318, 319
Սավուղ Սու գետակ 20
Սարա գյուղ 195, 254, 260
Սարայ դաշտ 32
Սարաֆ գյուղ 251
Ս. Գևորգ վանք (Մեյդանում) 119
Ս. Գևորգ վանք (Խիզանում) 53
Ս. Գևորգ վանք (Փուլիկում) 42
Սեբաստիա 148, 184
Սըպակի (Սիվակի) գյուղ 25, 51, 243
Սրվաղ 55
Ս. Սիոն եկեղեցի-մզկիթ (Վանում) 7
Սիս 105, 106, 170, 171, 177
Սիվակ վտակ 24
Սիվտկա գետակ 44
Սիրիա 80
Սիրվան վայր 36
Սիփան (Սուփան դաղ) լեռ 6, 22
Սիփան-Նեխ Մասնիկ լեռ 18
Ս. Խաչ վանք (Աղթամարում) 42
Ս. Խաչ վանք (Խիզանում) 52
Ս. Խաչ վանք (Վանի Ապարանում) 53
Ս. Խաչ եկեղեցի (Կ. Պոլսում) 138
Ս. Կարապետի վանք (Խիզանում) 53
Ս. Կարապետի (Գլակա) վանք (Տարոնում) 46, 125—127, 244, 294
Ս. Հակոբ Բաղ 268, 327
Ս. Հակոբ վանք (Կապուտկողում) 194
Ս. Հակոբ եկեղեցի (Վանում) 219
Ս. Ղազար կղզի 107
Սղդահ գյուղ 18, 38, 41, 62
Սղգայու Ջաղդեն ճանապարհ 18
Սղգայու Ջաղդեն արվարձան 101
Սղերդ (Սերտ) 28, 39, 76, 93, 94, 178, 194, 274
Սմբոն գյուղ 261
Ս. Նշան վանք (Զարղարի) 22, 52, 282
Սոլխու մեհն (Սոլախյաններին անտառ) 37
Սոսրաթ գյուղ 43
Սորբ գյուղ 23, 261
Սորփ Նավահանգիստ 39
Սպահան լեռ 20
Սպաղանք գյուղ 289
Սպարկերտ (Իսպեք, Սպարկիր) գավառ 6, 10, 27, 260, 279
Ստամբուլ 329
Սևանա լիճ 40, 222
Սևանա վանք 148
Սև, Թալխ (Գարա սու) գետ 6, 17, 40
Սև Քոան (Սև քար) 274

Վաղարշապատ 104, 140, 325
Վան 6—15, 17, 18, 23—25, 28—38, 40—42, 44—49, 53, 54, 62, 65, 67, 68, 76—79, 81, 82, 84, 86—90, 92, 96—99, 101, 102, 104, 106, 107, 111—113, 115—119, 122, 126, 129, 131, 133, 143, 149, 157—162, 164—170, 173, 174, 176, 178—183, 188—194, 196, 198—200, 202—212, 214—221, 226, 227, 230, 232—241, 243—246, 250—253, 255, 256, 259—275, 277—280, 282—301, 303—322, 324—329, 333—335
Վան դաշտ 32
Վանի կուսակալություն 10
Վանա լիճ (Բզնունյաց ծով) 8, 9, 12, 17, 18, 20, 22, 23, 32, 40, 41, 44, 61, 90, 96, 99, 104, 112, 114, 117, 202, 222, 312
Վանա Բաղ-Շատախ գավառ 24
Վանի բերդ 29, 30, 78
Վանի նահանգ 15, 16, 32, 47, 48, 66, 90
Վանի սանջակ 11, 12, 20, 21, 47
Վանի վիլայեթ 5, 11, 12, 14—18, 27, 28, 33, 50, 85, 90, 208
Վան-Տոսպ գավառ 18, 22, 41
Վանք գյուղ 43
Վառ գյուղ 289
Վառնա 202, 289
Վասպուրական նահանգ 5—11, 14—17, 19, 21, 24, 28—32, 34, 36, 39, 42, 44—48, 50, 52—54, 64, 65, 70, 71, 76—78, 82, 84, 89, 101—104, 107, 111—112, 115, 116, 118, 119, 121, 124—128, 132, 135—137, 141, 143,

145, 148, 152, 156, 157—160, 163—166, 168, 177—179, 182, 189, 190, 192, 195—200, 203—207, 209, 210, 212, 214, 217, 234—236, 239, 241—243, 245—247, 250, 252, 253, 259, 261, 262, 267, 268, 275—277, 281—285, 287, 292—294, 296, 302—305, 309, 313, 315, 317, 321, 323, 324, 335
Վասպուրականի լեռներ 17
Վարագ 67, 112, 124—126, 215, 217, 221, 239, 240, 256, 274—276, 301, 303, 305, 327, 329, 331
Վարագա լեռ 18, 47, 68, 104, 113, 135—137
Վարագա լիճ 68
Վարագա վանք (Եոտիքիլիսե) 6, 10, 15, 40, 52, 68, 108, 112—118, 127, 134—137, 139, 143, 149, 181, 201, 202, 235, 236, 279, 283

Վարենց գյուղ 261
Վենետիկ 102, 103, 112
Վերին Խոշապ 281
Վերին Սարին 261
Վերին Վարագ 113
Վիեննա 103, 201, 213, 314
Վրաստան 119

Տաթև 139, 148
Տալանից թաղ (Մոկսում) 26
Տապ գյուղ 261
Տարապեկ գյուղ 43
Տաճկաստան 10, 147, 153, 214
Տավրոսյան լեռներ 106, 124, 125
Տարոն 25, 78, 90, 105, 111, 125—128, 133, 140, 148, 235, 240, 243, 302
Տարոնի Արջք Շատախ գավառ 24
Տեհ գյուղ 79
Տենիս գյուղ 26
Տերսիմ 28
Տիար-Տխուպ 88
Տիգրանակերտի վիլայեթ 10
Տիգրանակերտ 81, 94, 95, 321
Տիգրիս գետ 26, 44, 242, 278
Տիրամայր եկեղեցի (Վանում) 296
Տմորիք գավառ 89
Տոսպ գավառ 9
Տրապիզոն 34, 50, 65, 112, 256
Տուրկա-Բասառ գյուղ 26

Ուղուց գյուղ 261
Ուրանց գյուղ 23, 24
Ուրբաթ առու 113
Ուրմիա գավառ 91
Ուրմիա լիճ 91, 222

Փայաջուկ գյուղ 124
Փայխներ գյուղ 261
Փարիզ 230, 301, 316
Փիշավկանք գյուղ 261
Փշավանց գետակ 22
Փշավանք գյուղ 169, 171, 175
Փոթի 201
Փոքր Ասիա 53, 54
Փրխուս գյուղ 23
Փութկու գյուղ 26, 42

Քաջբերունյաց գավառ 9, 21, 194
Քեավաշ տե՛ս Գավաշ
Քեշիշ գյոլ (Երիցալիճ) 38, 68
Քիշինև 93
Քողանի գյուղ 35, 43
Քոզեր գյուղ 51
Քոչանիս ավան 87, 91, 92
Քրդի թաղ 26
Քրդստան (Քուրդիստան, Քյուրդիստան) 28, 30, 70, 80
Քուրիկ լեռ 44

Օշական 102, 104
Օրտեկ նահիյե 12
Օրորան գետ 17, 21
Օրորան գյուղ 21

Ֆրանսիա 227

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակի կողմից 5
Գլուխ առաջին, *Վասպուրականի աշխարհագրական միջավայրը, վիճակագրությունը* 6
Գլուխ երկրորդ, *Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Վասպուրականում XIX դարի երկրորդ կեսին* 28
Գլուխ երրորդ, *Հայ-քրդական և հայ-ասորական փոխհարաբերությունները Վասպուրականում* 70
Գլուխ չորրորդ, *Մ. Խրիմյանի գործունեությունը Վասպուրականում (1850—1860)* 101
Գլուխ հինգերորդ, *Հասարակական բախումները Վանում* 157
Գլուխ վեցերորդ, *Ազատագրական շարժումները Վասպուրականում 1870—1880 թվականներին* 173
Գլուխ յոթերորդ, *Ինքնապաշտպանական կռիվները Վանում 1896 թվականին* . 246
Գլուխ ութերորդ, *Լուսավորության գործի վիճակը Վասպուրականում XIX դարի երկրորդ կեսին* 292
Յանկեր 336

ՀԱՅԿԱԶ ՄԱՆՈՒԿԻ ՊՈՂՈՍՅԱՆ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1850—1900)

Հրատ. խմբագիր Ա. Հ. Շաղգամյան
Նկարիչ Կ. Կ. Դաֆադարյան
Տեխ. խմբագիր Հ. Գ. Հմայակյան
Սրբագրիչ Գ. Ս. Սահփանյան

ИБ № 1241

Հանձնված է շարվածքի 27. 07. 1987 թ.։ Ստորագրված է տպագրության 24. 03. 1988 թ.։ ՎՖ 08548։ Չափը 60×84¹/₁₆, թուղթ № 2։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական», բարձր տպագրություն։ Պայմ. 20,46 մամ., տպագր. 22,0 մամուլ։ Ներկ. մամուլ 22,46։ Հրատ.-հաշվարկ. 20,5 մամուլ։ Տպաքանակ 20 000։ Հրատ. № 7171։ Պատվեր № 467։ Գինը 2ռ. 40 կոպ.։

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24 գ.։
Издательство АН Арм.ССР, 375019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24г
ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24։
Типография Издательства АН АрмССР, Ереван, 375019,
пр. Маршала Баграмяна, 24.

A II 76908